Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆ

ԵՐԿԵՐ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ,
ԵՐԵՎԱՆ– 1981

ԳՄԴ 84. 21
Դ 99

Կազմեց,
առաջաբանը, ծանոթագրությունները և
բառարանը գրեց Ա. Ս. ՇԱՐՈՒՐՅԱՆԸ

Դուրյան, Պ.
Դ 99 Երկեր — Եր.: Սովետ. գրող, 1981. 456 էջ.— (Հայ դասականների գ.-ական).

Ժողովածուն ամփոփում է Պետրոս Դուրյանի գրական ժառանգությունը։ Այն ընդգրկում է գրողի տաղերը, թատերգությունները, հրապարակախոսությունը և նամակները։

Ժողովածուի հիմքում ընկած է գրողի երկերի գիտական հրատարակությունը՝ բնագրային մասնակի ճշգրտումներով։

Դ $\frac{4702080100\ (153)}{705\ (01)\ 81}$ 5 81 «Տ» ԳՄԴ 84. 21
Ap 1

© «Սովետական գրող» հրատարակչություն, կազմողի և առաջաբանի համար, 1981։

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆ

(1851—1872)

«Այնքա՜ն սիրած, այնքա՜ն լացած եմ իրեն համար, իմ երիտասարդության առաջին տարիներուն իր ցավովը ցաված և իր տառապանքովը տառապած եմ երկարորեն. իր տենդերը, իր գանգատները, իր հիվանդ կուրծքին հևքը և մրմունջները տարիներուն մեջեն եկած հասած են ինծի, ու կարծես մատներովս դպած եմ անոնց և ականջովս լսած. ինչպե՜ս պիտի ուզեի իր ժամանակին հասած ըլլալ ու գտնալ իր նվիրական հյուղակին ճամփան ու բռնել իրեն, թե ինչպես իր ցավերը կերկարաձգվին և կը թրթռան իմ հոգվույս մեջ...»։

Սա միայն Զապել Եսայանի խոստովանությունը չէ։ Սա նաև սերունդների խոստովանությունն է։

Երևի քիչ գրողներ կան, որոնց ճակատագիրն այնքան տխուր լիներ, որքան Պետրոս Դուրյանինը։ Նա հեռացավ կյանքից քսանմեկը չբոլորած, հեռացավ երազելով իր տաղերի փոքրիկ ժողովածուի «արև տեսնելը», հեռացավ նույնիսկ առանց լուսանկար ունենալու։ Եվ, այնուամենայնիվ, դարձյալ քիչ գրողներ կան, որոնք այնքան պաշտված լինեն, որոնց ետմահու ճակատագիրն այնքան յուրովի երջանիկ լինի, որքան Պետրոս Դուրյանինը։ Տասնամյակներ շարունակ Սկյուտարի ազգային գերեզմանատանը, Պաղլար Պաշիի պոդոտայի վրա, Պետրոս Դուրյանի շիրիմը դարձել էր ուխտատեղի։ Տղաներն ու աղջիկները նրա նվիրական գերեզմանի մոտ են շշնջացել առաջին սիրո երդումները, ծերունիներն ու երիտասարդները երկյուղած համբույր են դրոշմել քանաստեղծի մահարձանին, մարմարե տապանաքարը ծածկվել է սքանչացումի այսպիսի անպաճույճ տաղերով.

«Պաշտելի հիշատակիդ, ո՜վ Դուրյան նվիրական»։
«Կաթիլ մի արտոսր ի շիրիմ Պ. Դուրյանի»։

«Արցունքս և հառաչանքս հիշատակիդ, ո՜ պաշտելի իմ Դուրյան»։
«Հանգիր ի շիրմաց՝ պարծանք քերթողաց»։
«Պետրոս Դուրյան, հանճար մեծ. պսակ քերթողաց Հայոց»։

«Հանգչի՜ր քերթող, ի շիրմիդ,
Հանգչի՜ր ի սառ դամբանիդ,
Հանգչի՜ր հոգի մելամաղձ,
Թո՜ղ քեզ ատեն սիրտք նախանձ»։

Արցունքներն ու անձրևը սրբել են դրանք, բայց ամեն անգամ եկել են նորերը և գրել արտասվախառն նոր տողեր: Տարիների հետ մեծացել է գրողի հմայքը: Ամենուրեք, հայրենիքում և գաղթօջախներում, հրատարակվել են բանաստեղծի «արցունքոտ տողերը», ամբողջությամբ կամ մասնակի դրանք թարգմանվել արևմուտքի և արևելքի տասնչորս լեզուներով, պատանի հանճարով հիացել են Ջոհրապն ու Մեծարենցը, Վարուժանն ու Թումանյանը, Տերյանն ու Չարենցը: Ահա արդեն մոտ իրը տասնամյակ է, ինչ Դուրյանի ստեղծագործությունը գրավել է հայ ուսումնասիրողների ուշադրությունը: «Սկյուտարի սոխակը» գրականագիտական խորհրդածություններին նյութ է տվել նաև Յուրի Վեսելովսկուն, Վալերի Բրյուսովին, Արթուր Լայստին, Ալֆրեդո Վիոլանտեին, Ջիան Պիետրո Լուչինիին և այլազգի ուրիշ հեղինակների:

Դուրյանը մեծացավ կարիքի ու թշվառության մեջ: Սկյուտարի եմարանում, որի ծրիավարժ աշակերտն էր, ունևոր ընտանիքի զավակները գնում էին հաշարան: Իսկ Պետեկը (այսպես էին անվանում նրան տնեցիները) հնարավորություն չունենալով նախաճաշ բերելու, փակվում էր դասասենյակում, հանում կանխավ հետը վերցրած որևէ գիրք և կարդում էր, գրում: Գրում էր նաև տանը՝ դպրոց մեկնելուց առաջ և երեկոները՝ մինչ խոր գիշեր: Պատահում էր, որ խստակրոն հայրը արթնանում էր կեսգիշերին և, տեսնելով կանթեղի աղոտ լույսի տակ գրքի կամ թղթի վրա հակված որդուն, սաստում էր. «Մո՛, տահա նստե՞ր ես, լույս կը վառես»: Աղքատի տանը հրազը վառ թողնելը շռայլություն էր: Եվ մի՞թե հայրական օջախում առկայծող կանթեղը չէր, որ պատանու երևակայության մեջ ուրվագծեց խրճիթի ու դղյակի անշքրպետը, ներշնչեց նշանավոր ընդհանրացումները,

Տրնակին մեջ մարի առկայծ կանթեղն հող,
Այն մութին մեջ նոթի տրղեկք կը հեծեն,
Դղյակըն խրախ մինչև լույս շահք կը հյուծեն...

Ինչե՜ր չարեց կարոտյալ ընտանիքին օգնելու համար. եղավ դեղագործի աշակերտ, դարձավ սեղանավորի գրագիր, զբաղվեց դերասանությամբ, սակայն մխիթարանք գտավ գրելով: «Ստակը չեմ ատեր, բայց գրիչը կը սիրեմ, սփոփ մ'է նա ինձ այս անձուկ կացությանս մեջ»,— խոստովանել է ընկերոջն ուղղած նամակներից մեկում: Այո՛, Դուրյանը սիրում էր գրիչը, և ապրել է ստեղծագործական բուռն կյանքով, ունեցել գրական բազմազան հետաքրքրություններ: Նա կատարել է թարգմանություններ, փորձել ուժերը վիպասանության մեջ, զբաղվել հրապարակախոսությամբ, հեղինակել թատերախաղեր ու տաղեր:

Ճեմարանական տարիներին Դուրյանը ֆրանսերենից թարգմանել է ութ թատերախաղ, որոնցից հայտնի են Հյուգոյի «Թագավորը զվարճանում է» դրաման և Շեքսպիրի «Մակբեթ» ողբերգությունը: Դրանցից բացի նա հայացրել է նաև Հյուգոյի «Ջանել աղջիկ» բանաստեղծությունը: Բոլոր այս թարգմանությունները չեն պահպանվել: Բայց, ինչպես հաստատում են ժամանակակիցները, Դուրյանը թատերախաղեր թարգմանելիս առաջնորդվել է դրանց լեզուն ժողովրդին հասկանալի դարձնելու մտահոգությամբ, դրսևորել է լեզվաշինական, բառաստեղծական ունակություններ:

Մեզ չեն հասել նաև գրողի վիպական փորձերը: Գիտենք միայն, որ գրել է երկու վեպ. մեկը սիրային բովանդակությամբ, մյուսը՝ ինքնակենսագրական բնույթի՝ «Վոսփորյան գիշերներ» խորագրով, որոնք մնացել են անավարտ:

Դուրյանը մեծ նշանակություն է տվել հրապարակախոսությանը: 1871-ի մայիսին նա գրել է. «Գաղափարի սվին՝ գրիչ շարժել կարենալես ի վեր, հոգվույս ծալքերը մեկուսի թղթատելե ավելի կը սիրեմ հրապարակական ձայնարկություններ: Չեմ ուզեր նմանիլ անոնց, որոնք իրենց հոգվույն կայծերովը աստղերուն հետ կընդհարին անձայն»: Նա իր հրապարակախոսական ելույթները տպագրել է «Օրագիր ծիլն Ավարայրվո» թերթում թե՛ բուն ստորագրությամբ, թե՛ «Նորայր», «Արմենակ» ստորագրություններով: Դուրյանին խորապես հուզել է հայ թատրոնի վիճակը: «Խոսարան» և «Թատրոն» հոդվածներում նա ընդգծել է թատրոնի «քա-

դամակրթական և բարոյական օգուտները», կրքոտությամբ դատապարտել կեղծ բարոյական պատկերացումները: Նա կարողացել է վեր բարձրանալ անձնական ցավ ու կսկիծից, ապրել հայրենիքի ու աշխարհի հոգսերով: Այս իմաստով ուշագրավ է «Բանասիրական» ընդհանուր վերնագրով հոդվածը: Այս ելույթը ցույց է տալիս, որ պատանի հանճարը հետևում էր աշխարհում կատարվող իրադարձություններին, իր փոքրիկ սենյակում լսում ավարտված ֆրանս-գերմանական պատերազմի թնդանոթների որոտը, տեսնում Փարիզի սալահատակներին հեղված կոմունարների արյունը, նրա ականջներում դեռ հնչում էր Հյուգոյի՝ պատերազմի թեժ օրերին արձակած հզոր կոչը՝ բոլոր ժողովուրդները ազատ ու հավասար եղբայրներ են:

Պետրոս Դուրյանը թատերգություններ սկսել է գրել ուսումնառության վերջին տարվանից՝ 1867-ից: Ինչպես ցույց է տալիս «Թատրոն» հոդվածը, նա թատրոնի մասին ուներ բարձր կարծիք: «Թատրոնը,— կարդում ենք այնտեղ,— հայելի մ'է, որուն մեջ մարդս կրնա իր ճշմարիտ պատկերը տեսնել և որով իր վրա նըշմարած անհաճո տեսքերը անհետացնել և մաքրել»: Նա մեծում էր թատրոնը զբոսատեղի դիտելու մտայնությունը և պաշտպանում ազգային թատրոնի պահանջը:

Անցյալ դարի 60—70-ական թվականներին արևմտահայ թատրերգության մեջ տիրապետողը պատմա-հայրենասիրական և կրոնական թեմաներն էին: Սակայն Դուրյանը սկզբնապես, Սկյուտարի հեմարանում գրեց ոչ թե պատմական ողբերգություններ, այլ «Ծարագիր ի Սիպերիա» և «Վարդ և Շուշան կամ Հովիվք Մասյաց» թատերախաղերը, որոնք թեև սկսնակի հեղինակություններ են, բայց յուրովի հետաքրքիր են:

«Ծարագիր ի Սիպերիան» այլաբանական ողբերգություն է և ուշագրավ է գաղափարական առումով: Հայտնի է, որ Միքայել Նալբանդյանը գաղափարական վիթխարի ազդեցություն է ունեցել արևմտահայ դեմոկրատիայի վրա: Իր ողբերգությամբ պատանի Դուրյանը գալիս էր ապացուցելու, որ ինքը ևս Նալբանդյանի խստադատ երկրպագուներից էր, որի համար «Ազատության» հեղինակի գործն ու անունը նվիրական արքություն էր:

Թատերական մի նամակում Դուրյանը «Վարդ և Շուշանը» համարել է «սիրային թատրերգություն» և ավելացրել. «Ասի տասնհինգ տարեկան հասակի սիրո և հանճարի հանդուգն փրթում մ'է»: Թատերախաղի նյութը ողբերգական մի սիրավեպ է: Երկու հովիվները՝ Վարդը և Շուշանը, կարող էին երջանիկ լինել, բայց նրանց սերը ունենում է ողբերգական վախճան: Սիրո կործանման պատճառը սոցիալական գործոնը չէ, այլ Սուրմակը՝ վերացական չարը մարմնավորող մի ավազակ: Վարդը և Շուշանը նույնպես վերացական բարու կրողներն են: Դաժան չարը պատժվում է, իսկ անօգնական բարին մխիթարվում երկնային երջանկությամբ: «Երկիրս փշոտ վարդ մ'է, իսկ երկինքն անփուշ վարդ»,— ասում է Շուշանը և սփոփում Վարդին: Չարի ու բարու այդ պայքարը, բարոյախոսական անսքող միտումը հատկանշական է հենց մելոդրամային: Բայց պատանու ստեղծագործության մեջ կա խոսքի այնպիսի հուզական հագեցվածություն, բնության քնարական ընկալում և սիրո իսկական պաշտամունք, որ հազվագյուտ էր ժամանակի հայ թատրերգության մեջ: «Վարդ և Շուշան»-ում, առավել քան Դուրյանի արդեն այլ երկում, բնությունը լցված է սիրով, նա բարի է ու գեղեցիկ: «Տե՛ս, Վարդ,— ասում է Շուշանը,— բոլոր բնությունը սիրով կը խայտա... Լուսինը սեր կը ցողե, ծաղիկը սեր կը բուրե, հոգմիկը սեր կը շնչե, թռչունը սեր կը գեղգեղե, ոտերևը սեր կը առապիկ, առվակը սեր կը մրմնջե, ո՜հ, ամեն ինչ սե՛ր, սե՛ր...»:

Դուրյանի բուն ստեղծագործական կյանքն սկսվեց հեմարանն ավարտելուց հետո միայն: Մինչև 1871-ը նա հիմնականում նվիրվեց թատրերգության, ընդ որում շարս տարում գրած բոլոր թատերախաղերը, բացառությամբ «Թատրոն կամ թշվառներ»-ի, պատմական են:

Ինչո՞վ բացատրել գրողի հակումը դեպի պատմական թեմատիկան: Թերևս նա համակերպվե՞լ է ժամանակի հաշակին և ոգուն: Հանրահայտ իրողություն է, որ արևմտահայ թատրոնի բեմահարթակ կարող էին բարձրանալ առաջին հերթին պատմական ողբերգությունները: Ողբերգությունը դարձել էր և՛ հեղինակի, և՛ թատրոնի, և՛ դերասանի հաջողության կանխապայմանը:

Պատմական ողբերգությունները ծնվել են ժամանակաշրջանի պահանջով ու ստիպմունքով: Արևմտահայության մեջ թատրերգությունն ու թատրոնը ազգային-ազատագրական շարժման արձագանքն ու զենքն էր: Ու եթե 1868—1870-ին Դուրյանը հեղինակում էր պատմական թատերախաղեր, ապա դա ապացույց էր, որ նա ևս սկսել էր ապրել արդիականության հոգսերով, ժողովրդի

ճակատագրով: 1871-ին, երբ գրողն արդեն հրաժեշտ էր տվել պատմական ողբերգություններին, խոստովանել է, թե ինքը կամեցել է «թատերաբեմի մը միջոցավ հայրենյաց հսկա դարերու ավերակաց մոխրոտ շունչն» լինել, որ այդ ողբերգությունները իր հոգու բոցերն են: Բնութագրական է, որ հիշյալ եռամյակում նրա բերվածները, սակավ բացառությամբ, հայրենասիրական են: Ուրեմն, անցումը «Վարդ և Շուշան»-ից պատմա-հայրենասիրական թատերախաղերին աշխարհայացքի հասունացման արտահայտություն էր:

Դուրյանի պատմական թատերախաղերից հայտնի են չորսը՝ «Սև հողեր կամ Ետին գիշեր Արարատյան», «Անկումն Արշակունի հարստության», «Ասպատակությունք Պարսկաց ի Հայս կամ Ավերումն Անի մայրաքաղաքին Բագրատունյաց»: Մի առիթով գրողն իր պատմական ողբերգությունները որակել է «երևակայության հեղեղներուն արտադրած կաթիլներ»: Իրոք, առաջին պահ կարող է թվալ, թե նրա այդ թատերախաղերում պատմական քիչ բան կա: Որպես կանոն, չեն նշված ոչ գործողության ժամանակը, ոչ էլ վայրը, հերոսների անձնական-սիրային փոխհարաբերությունները ասես ենթադրում են պատմական իրողությունների վրա: Բայց դա խաբուսիկ տպավորություն է: Դուրյանի հումար գլխավորը գաղափարներն են, բայց պատմական նյութը, դեպքերն ու դեմքերը նույնպես պարտավորեցնող են: Նա, առավել քան իր նախորդներից ու ժամանակակիցներից որևէ մեկը, մտահոգվել է պատկերվող դարաշրջանի ճշմարտացի արտացոլմամբ, ունեցել է պատմահայեցողություն, որ վերջին թատերախաղերում վերանել է որոշակի կոնցեպցիայի:

Իր ողբերգություններում հեղինակը պաշտպանում է ավանդական մի մտայնություն. նա համոզված է, որ հայ ժողովրդին բաժին ընկած անցյալ ու ներկա աղետների միակ պատճառը անմիաբանությունն ու մատնությունն են: Բայց դրա հետ միասին գրողի պատմական թատերախաղերում առկա են դեմոկրատական տրամադրություններ: «Արտաշես Աշխարհակալ»-ում զինակիր Արշեզը սովորական մի վրիժառու չէ: Նա կգերադասեր ապրել «գեղջկական կյանքով». «Ա՜հ, երանի թե գեղջուկ մ'ըլլայի և հայր ու մայր ունենայի, արտ մը՝ պատերազմի դաշտի տեղ, ծառի մը շուք՝ մեծաշուք հաղթանակաց տեղ, խրճիթ մը՝ պալատի տեղ, փոքր ընտանիքի մը տեր ըլլայի՝ բյուրավոր զորաց հրամանատարության տեղ»: Նրան գգվեցրել է ռազմիկի վիճակը. «Զա՛րկ, որ թագավորդ պարծի, մեռի՛ր, որ թագավորդ ապրի»: Սրանք պատահմամբ ասված խոսքեր չեն: Սա Դուրյանի մտածողություն է, որ ամբողջական ու համակարգված տեսք ընդունեց «Անկումն Արշակունի հարստության» ողբերգությունում: Անհա ինչպես է հասկանում թագավորի պարտականությունները Արտաշիրը. «Եվ ի՞նչ է թագավորելը, եթե ոչ հրամայել և զբոսնուլ, թագավորը սուր կուտա և ժողովուրդը կը զարնե կամ կը զարնվի. դրոշակ կուտա և զինվորը կը կանգնե կամ իրեն պատանք կընե...»: Պալատական Սմբատը խորհուրդ է տալիս թագավորին. «Ժողովուրդին ձայնը շուտ կը խեղդվի արյան մեջ... Դյուրի՞ն է միթե գահ մը տապալել, որն կը հսկեն բանտ, ախոռ և սուր»: Ներ զինվորի դուստրն ասում է. «Աղքատն իր տնակին մեջ շոր և նեխոտ հացով կը գոհանա, իսկ հարուստին ապարանը նոր խորտիկներ կը հնարվին... Զինվորը պատերազմի փողին գոռումեն կը սարսռի, վասնզի իր սիրելիեն պիտի բաժնվի, թագավորը անդին կույս աղջիկ մը կ'առևագնե մորը գրկեն... Ի՜նչ սոսկալի են ասոնք... Ո՞ւրչափ կը տարբերվին իրարմե հյուղակն ու պալատը... Երկուքին մեջտեղ վիհ մը կա, որուն մութին մեջեն շահ ի ձեռին կ'արձանանա արդարությունը. հյուղակը հովեն կը սարսի, իսկ պալատը՝ ոնիրներեն...»: Այս և նման մտքեր ընթերցողը կգտնի նաև Դուրյանի այլ ստեղծագործություններում, հատկապես «Սիրեցե՛ք զ'միմյանս» նշանավոր բերվածում: Հետևաբար կարելի է պնդել, որ սոցիալական անհավասարության գաղափարը Դուրյանի աշխարհընկալման ընդհանրական գիծն է և արտացոլվել է նրա թե պատմական և թե ժամանակակից երկերում: Դուրյանի ողբերգություններն իսկապես *պատմական* են և իրենց գաղափարական ու ստեղծագործական սկզբունքներով մնում են նշանակալի երկեր: Ոչ միայն այդ: Գրողի թատերգություններն մեզանում ըստ էության *իսկական ռոմանտիկական դրամայի առաջին նմուշներն են:* Մինչև Դուրյանը հայ ռոմանտիկական դրաման իր ճանապարհը հարթել էր: Այն, ինչ սկսել էին Մկրտիչ Պեշիկթաշլյանը, Սրապիոն Հեքիմյանը, Արմենակ Հայկունին, Թովմաս Թերզյանը, Սարգիս Վանանդեցին կամ Խորեն Գալֆայանը, ավարտի հասցրեց պատանի Պետրոս Դուրյանը:

Սակայն ինչո՞ւ Դուրյանը ստեղծագործական կյանքի վերջին տարում ոչ միայն չգրեց նոր ողբերգություններ, այլև կիսատ թող-

դեց «Տիգրան Թ», «Կարծանումն Հռոմայ» և «Շանառակութիւնք Հայոց» թատերախաղերը, որ ձեռնարկել էր 1870-ին: Պատճառը հիվանդությունը չէր (այդ թվականին նա դեռևս առողջ էր): Դուրյանը ոչ թե *չի հասցրել*, այդ *չի ցանկացել* շարունակել անաժարտ թատերախաղերը, քանի որ իրեն այլևս *չէին գոհացնում պատմա-հայրենասիրական ողբերգությունները*: Նույն թվականից գրողին այդ բնույթի թատերախաղի միտքն էր զբաղեցնում: Այդ ստեղծագործությունը «Թատրոն կամ Թշվառներ»-ն էր, որ Դուրյանն անվանեց «ժամանակակից թատերախաղ»: «ժամանակակից». հայ թատերգությանն այնքան անհրաժեշտ այս բառը մեր գրականության մեջ առաջիններից մեկը հայանագործեց հանճարեղ պատանին: Դուրյանը հասկացավ, որ միակողմանի հրապուրանքը պատմական անցյալով շեղում էր ժողովրդի ուշադրությունը արդիականության սուր ու ցավոտ խնդիրներից և առաջադրեց ժամանակակից թեմատիկայի կարևորության և առաջնության պահանջը:

Նոր թատերգության խնդիրները Դուրյանն արծարծել է «Թատրոն կամ Թշվառներ»-ի «Հառաչաբան»-ում, որ ըստ ամենայնի գրական ուշագրավ վավերաթուղթ է, ինչպես նաև բուն թատերախաղում՝ մի քանի երկրորդական գործող անձանց միջոցով: Նա խոստովանում է, որ իր «ժամանակակից թատերախաղը» «դժվարին» և «հանդուգն» մի ձեռնարկում է, որ նպատակ ունի դրանով «օրինակ ըլլալ ուրիշ թատերագրաց, որ ավելի արդի բնականեկան անցքերը պարունակող բառոյլից թատերախաղեր ճոռիելու աշխատին, որով ավելի օգուտ կրնան ընծայել հայ հասարակության, քան թե ազգային հին դյուցազնությունքը ողբերգության վերածելով»: Գրելով այս տողերը, նա հարկավ չգիտեր, թե Դաբրիել Սունդուկյանն արդեն խիզախել էր, և 1863-ից նրա արդիական կատակերգությունները բեմադրվում էին, ծանոթ չէր Հակոբ Պարոնյանի «Երկու տերով ծառա մը» (1864) և «Անամնաթույծն արևելյան» (1868) կատակերգություններին: Անցումը պատմական թեմատիկայից արդիականին, այսպիսով, ոչ միայն լիովին գիտակցված էր, այլև՝ օրինաչափ: Դուրյանը «Թատրոն կամ Թշվառներին» նախապատրաստվել էր իր պատմական թատերախաղերով, քանի որ վերջիններս այսպես թե այնպես ունեին սոցիալական հնչողություն, իսկ «Անկումն...»-ը պատմա-սոցիալական ողբերգության էր: Դուրյանը ժամանակակից հասարակության մեջ նույնպես տեսավ ազգասոցում, անիրավում ու բռնություն: Նոր թատերախաղը ազգասության առաջացման պատճառների մասին չէ, այլ դրա բարոյական ու հոգեկան հետևանքների: «Ընտանեկան անցքեր» ասելով, հեղինակը նկատի ուներ հենց նշված պարագան, թատերախաղը բուն էության առավելապես *հոգեբանական դրամա է*: Դուրյանը շարունակում էր ոսմանական մնալ նաև այս ստեղծագործության մեջ: Նա նախընտրում է գործողությունների զարգացման հանկարծակի բնթացքը, արտասովոր դեպքերը, կերպարի բացահայտման բացառիկ ու ծայրաբևեռային փիսիքները:

Երբ ծանոթանում ենք «Թատրոն կամ Թշվառներ»-ի գաղափարական բովանդակությանը, երբ միշտ ենք լինում «Հառաչաբան»-ում և դրամայում թատրոնի ու թատերգության մասին արտահայտված մտքերին, հասկանալի է դառնում, թե ինչու Դուրյանի ամենամերձավոր ժամանակակիցները 1872-ի ժողովածուի առաջաբանում նրան համարում էին «ազգային թատեր վերանորոգիչ»: Այո՛, գրողը փորձեց նոր ակոս բանալ թատրոնի ու թատերգության համար: Եվ եթե դա չհաջողվեց, մեղավորը ժամանակն էր: Այդ «ժամանակակից թատերախաղը» երևույթ էր արևմտահայ թատերգության մեջ և կարող էր հիրավի հեղաբեկիչ դեր խաղալ, եթե վերահաս իրադարձությունները, Թուրքիայում բանձրացող ֆաղմական ռեակցիան չխափանեին հայ թատրոնն ու չխաթարեին թատերգության զարգացումը: Այն, ինչ արեց պատանի հանճարը, ստեղծագործական խիզախում էր: Չի կարելի չհամերաշխել Գր. Զոնրապի անկողմնակալ գնահատականին, որ նա ավելի է «Թատրոն կամ Թշվառներ»-ին՝ վերջինիս բեմադրության (1893) առիթով. «Այդ խաղին հղացումը միայն գյուտ մրն է, որ Դուրյանին անգամ պատիվ կը բերե. ոնը կրնա պակասություններ ունենալ, տեսարանների բաժանումները կրնան բարեփոխություններու կարոտիլ, բայց շենքը հաստատ և գեղեցիկ է, ամեն պարագայի մեր նորելուկ թատերգության նման անշան խոստացողության շարք մը չէ Դուրյանի գործը»:

«Սկյուռաբի առխակի» ասերերը ինքերգություն էր:

Երբ խոսում ենք Դուրյանի բերքվածների ժամանակագրական տախտակը, պարզվում է մի հետաքրքիր պատկեր. բանաստեղծը 1867—1868-ին գրել է մեկական, 1869-ին՝ ութ, 1870-ին՝ երկու, իսկ 1871-ի մի քանի ամիսներին՝ 26 տող: 1867-ին հեղինակած միտք տաղը («Իցի՛վ թե») ինքերգական է: Ամենամերձինը՝

«Երեկոյան բալն կը սողար բարդիլ խավ», որ չկարողացավ ավարտել, նույնպես բնական է: Այն, որ Դուրյանն սկսել ու ավարտել է բնական բանաստեղծությամբ, անշուշտ բնութագրական է: Բայց Դուրյան-բնաբերգակի ձայնն ամբողջ ուժով ճնշել է 1871-ին, իսկ մինչ այդ նա ստեղծել է առավելապես բաղամացիական երգեր: Չորս տարում (1867—1870) գրված տաղերից չորսն են միայն «անձնական»: Սա «բնական ճգնաժամ» չէր: Պարզապես Դուրյանի ստեղծագործությունը զարմանալի ամբողջական է ու միաձույլ: 1867-ին «Վարդ և Շուշան» բնական մելոդրամայի հետ ծնվեց «Իցի՜վ թե» տաղը, իսկ եթե մտաբերենք, որ մի ամբողջ եռամյակ (1868—1870) գրողը բացառապես հորինում էր պատմական թատերախաղեր, ապա հասկանալի է դառնում, թե ինչու նրա բնարն առաջին հերթին արձագանքում էր ազգային ու հասարակական խնդիրներին, թե ինչու նկատելիորեն թուլացավ բնականը: Ճիշտ է, ստեղծագործական կյանքի մայրամուտին նա չմոռացավ բաղամացիական-հայրենասիրական նվագները («Նոր սև օրեր»), բայց ընդհանուր առմամբ 1871-ն էր իսկական բնական տարի: Ուրեմն կարող ենք պնդել, որ Դուրյանի բանաստեղծությունն ընթացել է բաղամացիականից բնաբերգականին անցնելու ճանապարհով, զարգացման ընդհանուր միտումն այդպիսին է:

Փաստ է, որ Դուրյանը պատմա-հայրենասիրական մի բերթված ունի՝ «Երգ մարտին Վարդանանց», որ նրա ամենադժգույն երգերից է: Բայց փառա է նաև, որ թե Դուրյանի և թե մեր մյուս բանաստեղծների «արդիական» գործերում անգամ պատմական անցյալն առկա է: Դուրյանը չմոռացավ անցյալը, այլուայլ առիթներով մտաբերեց Հայաստանի երբեմնի «վառ թագը» («Վիշտ Հայուն»), «ազատ» ու «փառաց օրերը» («Իղձ առ Հայաստան»): Թատերագիր Դուրյանի նման թատերգակ Դուրյանը նույնպես պատմությունը չէր վկայակոչում միայն անցած փառքն ու երանելի օրերը երազելու համար: Իր օրերի դժբախտությունների պատճառները նա որոնում էր վաղնջական ժամանակներում, վասակների վարագծում, ժողովրդի տգիտության կամ անմիաբանության մեջ: Հայրենիքի վերքերը դարմանելու համար հարկավոր էր նաև դասեր քաղել պատմությունից, խախտել ժողովրդի դարավոր նիրը, ստիպել նրան շարժվել ու գործել: Սա ոչ միայն Դուրյանի, այլև հայ ռոմանտիկների ընդհանրական մտայնությունն էր, որ լուսա-

բանչյուրի ստեղծագործության մեջ արտահայտվում էր յուրովի: Մասնավորաբար, դժգոհելով իրականությունից, Դուրյանը թեև փարվեց պատմությանը, բայց երբեք չարգացրեց «դրախտավայր» Հայաստանը, ներկան չգնահատեց անցյալի դիրքերից: Լավագույն հայրենասիրական երգերում հեղինակը երբեմն կարողանում էր հասարակականը տոգորել անձնականով, ինքն էր դառնում դրանց բնական հերոսը՝ հայրենիքի ու ժողովրդի ճակատագիրը դիտելով սեփական «ես»-ի պրիզմայի միջով: Այդպիսի գործերում էլ, իհարկե, առկա է հռետորական պատվիրանը կամ կոչը, բայց բնական տարրը դրանք դարձնում է «ապրված»: Եվ հենց այն պատճառով, որ Դուրյանի բաղամացիական տաղերը, անկախ այն բանից, բնականությամբ ողողուն են, թե ոչ, պատգամում են այս կամ այն դրույթը, կարելի է դրանք համարել ծրագրային: Այդ ծրագիրը ամենայն որոշակիությամբ արտահայտված է «Իղձ առ Հայաստան» բանաստեղծության հետևյալ տողերում.

Հարուստն ու կղեր թե ազգ ըզգան ու վառին,
Թե «լույս և սեր» Հայ սրտերուն մեջ թառին,
Թե լուսո դարն երկնե «ազատ զավակներ»,
Թ'եղբայրության, սիրո վառին կըրակներ,
Թեև ըլլամ ես մեռել,
Դամբանես դուրս կ'նետվիմ ԱՋԱՏ Հայն տեսնել:

Դուրյանը իր ժամանակի զավակն էր, և հենց այդ ժամանակաշրջանն էլ նրա մեջ պատրանքներ ծնեց: 1868—1870-ի հայրենասիրական տաղերում նա ազգային իդեալների իրագործման ամենահուսալի միջոց էր ճանաչում բարոյական գործոնները: «Նվագ է. տարեդարձի ազգային սահմանադրության» բերթվածում նա դարձյալ կրկնում էր.

Զինվո՛ր Սիրո, դրոշդ ծալ ծալ ծրփացո՛ւր.
Սորվինք խաչվդ սեր, քան թե փայլել սուր:

Համընդհանուր սիրո գաղափարը, որ քարոզում էր Դուրյանը, իր հիմքով քրիստոնեական էր: «Նվագ...»-ի մեջբերված տողերը, «Մանուկն առ խաչ» բերթվածում «սիրո արև» Հիսուսին փարվելը ու նրանից դարձյալ «հավատ, սեր, հույս» սովորելու խնդրանքը դրանում ոչ մի տարակույս չեն թողնում: Ռոմանտիկ մտածողությունը, աշխարհընկալումները ու բանականությունը ստիպում էին Դուրյանին հավատալ, որ քրիստոնեական սերը ի վիճակի է փրկել

ոչ միայն հայ ժողովրդին, այլև համայն մարդկությանը: Բայց կյանքը նրան այլ բան էր ասում. նա տեսնում էր, որ ամենուրեք թագավորողը առելությունն է, անգամ «սիրո պաշտոնյաները»՝ հոգևորականները, թշնամության ու ախի սերմանողներն էին: Ու այս ամենը ներհակ զգացումներ էին ծնում նրա մեջ, երկատում միտքը, մորմոքում սիրտն ու հոգին: Այդ տառապանքների ամենաուժեղ արտահայտությունը եղավ «Սիրեցե՛ք զ'միմյանս» քերթվածը՝ ժամանակի հայ քաղաքացիական պոեզիայի ամենահետաքրքրական ստեղծագործություններից մեկը:

Դուրյանի քնարական ամենամեծ արժեքներն ստեղծվեցին կյանքի վերջին տարում՝ երբ կրծքի տակ արդեն բույն էր դրել «մշանջենավոր վերքը» հյուծախտը: «Գերեզմանի հակած» քսանամյա պատանին չհանձնվեց հակատագրի տնօրինությանը, քմբռնացավ մահվան դեմ, վրեժ առավ «սև հակատագրից»: Նա շտապեց, իր իսկ խոսքերով ասած, «անդուլ կերպով թոթվել քնարը»՝ մրմնջալով բանաստեղծական «մնաք բարև»-ները: Սա յուրատեսակ սխրանք էր, պարտքի ու պատասխանատվության գիտակցում ժամանակի ու սերունդների առաջ, որին ի զորու են միայն մեծ հոգիները:

«Սկյուտարի սոխակի» քնարական տաղերը քիչ բացառությամբ *իր* մասին են: Այս ասելով, նկատի ունենք ոչ միայն այն, որ հեղինակը խոսում է իր «ես»-ի անունից, արտահայտում իր մտորումներն ու հույզերը, այլև այն, որ հաճախ առանձին տողեր ու պատկերներ ուղղակիորեն վերարտադրում են գրողի կյանքի պարագաները: Այսպես, երբ «Դրժել»-ում գրում է. «Ցուցի իրեն հակատս գունատ, Կուրծքս զոգած, մարն իմ աչքին», կամ «Վնակ»-ում դժգոհում. «Շատերը զ'իս մերժեցին, «Քնար մ'ունի ասկ ըսին»: Մին՝ «դողդոջ է, գույն չ'ունի,— Մյուսն ալ ըսավ— կը մեռնի՞», ապա սրանք անշուշտ ինքնակենսագրական ատաղձ ունեն: Դուրյանը իր տաղերի բնորդն է, բայց դա այն բնորդն է, որին կարող է փոխարինել ամեն մի մերժված ու չհասկացված, զգացող ու տառապող էակ: Այլ խոսքով՝ նրա տաղերը միայն մի անհատի՝ թոթափտավոր ու դժբախտ պատանու սիրտ, տառապանքների, խոցերի գրանցումները չեն, այլև ունեն հասարակական և, ինչու չէ, նաև հայամարդկային արժեք:

Սիրե՞լ է արդյոք «Սկյուտարի սոխակը»: Հարցս հանախ է մատնոցել դուրյանագետներին, դրա պատասխանը ոտնել են գրողի համակներում, վկայակոչել նրա այն խոսքերը, թե կինը եղել է իր «երևակայության տիրուհին», երազի «երփներանգ ատաղը» կամ «հանանչոտ ծաղիկը», «շողերի ու բույրերի թագուհին»: Այս տողերը բառացի մեկնելու դեպքում կարելի է մտածել, որ պատանին չի ապրել այդ «գեղեցիկ կյանքը», ունեցել է, ինչպես վկայել են անձամբ հանանչողները, սոսկ «պլատոնական սեր»: Սա խնդրի կենսագրական կողմն է: Ասենք, որ բանաստեղծի սիրտ տարկայի հարցը առեղծված էր մերձավոր ժամանակակիցների, անգամ եղբոր՝ Եղիշե Դուրյանի ու դասընկերների համար: Դրան սպառիչ պատասխան տալն այսօր պարզապես աննարին է: Բայց թոթափտավոր ու սիրատենչ պատանուց բացի կա նաև Դուրյան-բանաստեղծը: Այս վերջինը կենդանի և, նա նաև մեր ժամանակակիցն է, ու նրա «վկայությունները» չափազանց պերճախոս են: Մի՞թե այն կույսը, որին Դուրյանը երկրպագել է, անիրական է, մի՞թե նրա հիրավի մեծ պաշտամունքն ու տառապանքները սիրուց չեն ծնվել: Ոչ մի «պլատոնական զգացում» կամ «անորոշ իղձ», ոչ մի երևակայություն, որքան էլ հարուստ ու շքեղ լինի, չի կարող ծնել այն իսկական սերն ու խորունկ տառապանքը, որ գտնում ենք գրողի քերթվածներում: Գուցե և իսկապես չի եղել այն «ուսանող կույսը», որի ականջին, ինչպես պատմում է կենսագիրը, Պետրոսը շշնջացել է սիրո խոսքեր և գրել «Ի՞նչ թե»-ն, գուցե և չեն եղել ոչ «Սև՞, սև՞»-ում հիշված այն կույսը, որին կուլ է տվել գերեզմանի «սև փոսը», ոչ էլ «Զ'նե պաշտեմ»-ի «...Պ»-ն, գուցե և պարզ ենթադրություն է ծանոթներից մեկի հիշատակած «Ս.» անվամբ օրիորդը: Մենք չգիտենք նրա անունը միայն, բայց նա եղել է, նա իրոք «երազի ու բույրերի թագուհին» էր: Անկասկած, մեր բանաստեղծը ևս ունեցել է իր Լաուրան կամ Կասանդրա Սալվիատին, Ամալյան կամ կոմսուհի Վորոնցովան, որովհետև նրա քերթվածները հույնքան ապրված ու զգացված են, որքան Պետրարկայինն ու Ռոնսարինը, Հայնեինն ու Պուշկինինը:

Սիրերգակ Դուրյանը տարբերվում է մեր մյուս բանաստեղծներից. նա հախտոն է, պոռկուն, նրա քնարը Մեծարենցի հիանալի բնութագրմամբ «բունդ» է: Այս պարագան դիտել ու արժեքավորել է նաև Վ. Բրյուսովը. «Պատանի Դուրյանը մնում է հայ պոեզիայի պատմության մեջ որպես վառ, հրաշեկ շտրիխ. ի թիվս մյուս, ավելի հանդարտ բանաստեղծների, նա ցույց տվեց, թե ինչ է նշանակում ստեղծագործության մեջ «ավյունը», անմիջական

ապրումների ուժը, որոնք հաճախ ոչ միայն փոխարինում են «դրպրոցին», «տեխնիկային», այլև անչափ վեր են բարձրանում դրանցից: Սրանում է Դուրյանի ստեղծագործության պատմական նշանակությունը...»:

Սովորաբար, Դուրյանի բնաբերգության մեջ առանձնացնում են նաև այսպես կոչված բնության երգեր: Բայց նա բուն իմաստով այդպիսիք չունի: Բանը միայն այն չէ, որ չի գրել բնությանը ձոնված ոչ մի բերված, այլև այն, որ նրա տաղերում (բացառությամբ «Երեկոյան բալն կը սողար...»-ի) առնասարակ չկա բնության պաշտամունք, ոչ էլ փիլիսոփայական ընկալում, որպիսիք գտնում ենք հետագայում Թումանյանի, Իսահակյանի, Մեծարենցի ստեղծագործություններում: Դուրյանն էլ, իհարկե, ինչպես մի առիթով ցույց է տվել Վարուժանը, «կզգա բնությունը, ստեղծում է սմանչելի բնապատկերներ» («Պետք է մեռնի՞լ», «Սիրեցի բեզ» և այլ տաղերում), բայց դրանց պաշտոնը էապես ուրիշ է: Աշնանային դժգույն գիշեր է նկարագրում, թե արևագալն իր շաղ ու շողով, միևնույն է, ոչ մի տաղում բնությունն ու մարդը ներդաշնակ չեն, մարդն ավելի բարձր է կանգնած: Եթե անհրաժեշտ է խոսել պաշտամունքի մասին, ապա պետք է ընդունել, որ Դուրյանի բերթվածներում առկա է միայն մարդու պաշտամունքը: Բնությունն ինքը մարդկային հոգեվիճակների արտացոլումն է կամ կրողը: Հենց բնության նկատմամբ ունեցած այս վերաբերմունքով էլ նա տարբերվում է մյուս բանաստեղծներից: Մինչև Դուրյանը «յարի», «գյոզալի» կամ կույսի գեղեցկության չափանիշը բնությունն էր ու նրա պես-պես հրաշալիքները: «Սկյուտարի սոխակը» դարձավ իսկական ավանդախախտ: Նա կույսի գեղեցկությունն ու հմայքը չէր նժարում բնության, երկրային ու երկնային սմանչելիքներով: Բանաստեղծի ըմբռնմամբ մարդն ու կույսը ոչ թե իրենք են ձգտում բնությանը, այլ բնությունն է ձգտում նրանց, ազդվում, ներշնչվում նրանցից: Բնության գեղեցկությունները կարող են սիրելի դառնալ լոկ այնքան ու այն չափով, որքան ու որ չափով հիշեցնում են մարդուն ու կույսին: Այդ առումով խիստ բնութագրական է «Նե»-ն.

Վարդը գարնանի
Թե կույսին տիպար
Այտերուն չ'ըլլար՝
Ո՞վ կ'հարգեր զ'անի։

Թե չը նմաներ
Գապույտն եթերաց
Կույսին աչերաց՝
Երկինք ո՞վ կ'նայեր։

Թե կույսը չ'ըլլար
Սիրուն ու ամբիծ,
Աստվածն այն երկնից
Մարդ ո՞ւր կը կարդար։

Եթե մանիշակը համանուն բերթվածում սգավոր է ու գլխիկոր, ապա հեղինակը դա բացատրում է նրանով, որ կույսի աչքերի նմանությամբ իր աչքերը մութ է գտել: Բանաստեղծը մխիթարում է մանիշակին. վարդն էլ է շիկնել, երբ տեսել է *ներա* այտերը, շուշանը դժգունել է տեսնելով *ներա* ձեռքերը: Դուրյանի ընկալմամբ կույսը ոչ բնության զարդն է, ոչ էլ տիրակալը, այլ ինչ-որ զորավոր, առեղծվածային մի էակ: Իսկ եթե այդ էակն այնուամենայնիվ ապրում է երկրի վրա, ապա դրա համար պետք է եղել աստծո հատուկ միջամտությունը: Աբարչի համար մի առանձին օր է պահանջվել գծելու իր սիրած կույսի հոնքերը: Երբ այդ կույսը սիրում է, նրա հետ ոչինչ չի կարող բաղդատվել.

Լուսինը ո՞չ ներա վարդն,
Եվ ոչ ալ վարդը ունի
Ճառագայթումը ներա,
Ճառագայթո՞ւմ սիրողի։

Բանաստեղծը ծարավ էր մեծ սիրո, բայց մահն անխուսափելի է, արդարև, տխուր է առանց սիրո մեռնելը: Նա կարող էր գերեզմանում անգամ հանգիստ զգալ, եթե համոզված լիներ, որ կույսը չի մոռացել իրեն («Իմ հանգիստը»): Դուրյանը հանախակի է մտաբերում մահն ու գերեզմանը: Անցողակի մոտեցմամբ զրողին կարելի է անվանել հոռետես ու մահերգակ: Հենց այդպես էլ վարվել են ուսումնասիրողներից ոմանք: Մահվան ու գերեզմանի ամեն մի հիշատակում և նույնիսկ փափագ, դեռևս հոռետեսության նշան չէ: Մինչդեռ Դուրյանի բնարական հերոսը սիրում է կյանքը, նա ուզում է երջանկության հասնել այս աշխարհում, ուզում է սիրվել, իսկ երբ նրան զլացել են սերը, երբ ծաղրել են, երբ թաշնել են տենչերն ու մոխրացել երազները, այնժամ միայն գերեզմանի «լուռ փոսը» դարձել է անձկալի: Թատրերգակ Դուրյանի հերոսները նույնպես

նախընտրում էին մահը, քանի որ աշխարհը «սև» էր ու երկիրը՝ «փշոտ վարդ»: Դուրյանն էլ ահա «անհար ցավ» ուներ և «անհար հիվանդ» էր: Բայց դա միայն անձնական ցավ ու հիվանդություն չէր: Անթույլատրելի է բացարձականացնել անձնական կամ դրժբախտ հանգամանքների դերը այս ու այն արվեստագետի ստեղծագործության համար: Մի՞թե անլուրջ չէ բայրոնյան տիեզերական թախիծը բացատրել հանհարեղ անգլիացու ոտքի կարճությամբ: Մի՞թե Տերյանի, Մեծարենցի համապարփակ վշտի աղբյուրը անձնական ցավն է: Անշուշտ անձնական պարագաները հետք են թողնում գրողի ստեղծագործության վրա, բայց դրանք նրա, տվյալ դեպքում՝ Դուրյանի տաղերը չեն դարձնում անձնական ցավերի, տառապանքների կամ հիվանդությունների չափածո պատմություններ: «Սկյուտարի սոխակի» ստեղծագործության մեջ մահվան ու գերեզմանի գաղափարները ստանում են նաև փիլիսոփայական ու հասարակական իմաստավորում: Նա հարկադրված է արտասանում «մահը լավ է, քան կյանքը» խոսքերը: Եթե «Ի՞նչ կ'ըսեն»-ում բանաստեղծը պատրաստ էր գնալ «երկրորդ սև մոր» գիրկը, ապա նրա համար, որ հույս ուներ թերևս այնտեղ գտնել *«վարդեր, թրթռում, թռիչ ու աստղեր»*: Ընդգծված բառերը սոսկական փոխաբերություններ չեն: Դրանք խորհրդանշում են մարդկային տենչերն ու երազները: Մի ուրիշ բերթվածում («Ան Մայիս») Դուրյանը խոսում է իր հոգու ծաղկի մասին, ընդ որում «ծաղիկը» գրում է գլխատառով («Է՞ր չը բերիր Ծաղիկն հոգվույս»), արդեն նշան է, թե դա սովորական «բանաստեղծական» բառ չէ, այլ ունի առանձնահատուկ իմաստ, սիմվոլ է: Դուրյանի հոգու ծաղիկը չէր կարող աճել այդ աշխարհում: Սրա հաստատում է նաև «Հեծեծմո՛ւմ»-ը: Հայ բանաստեղծությունը չգիտե մի ուրիշ գործ, որտեղ անձնականն այնքան ներծծված լինի հասարակականով, ունենա այնպիսի խորը ենթաբնագիր, որքան այս բերթվածը: Դարձյալ ու դարձյալ Դուրյանը աշխարհը համարում է «միշտ տաղտուկ», «ցավերու մեծ մայր», որովհետև իմն ու մտերիմ ընկերը՝ Վարդան Էլիբֆյանը, որի մահվան կապակցությամբ է գրված «Հեծեծմո՛ւմ»-ը, այստեղ՝ երկրի վրա, միայն սև ու անհատնում ցուզ են ծծել, խմել գերեզմանի «սև կաթը»՝ անհաստությունը: Ու հիմա, երբ չկա Վարդանը, Դուրյանն ուզում է իմանալ, թե «երկնից ազնվույն որդին» գոնե այն աշխարհում երջանի՞կ է.

Ո՜հ, եթե հոգ ծառի մը ջուր
Կա՝ ի նորա քով մեկ վրտակ,
Եթե կա հոգ ան՝ ր անապակ,
Կան ազատ օգ, ազատություն։

Ո՜հ, կը թոթվեմ ես այս աղտոտ
Ջորձն հոգվույս՝ կյանքս՝ մինչ իսկ այսօր,
Հոգ կը հագնիմ, հո՜ղ սրգավոր...
— Ա՜հ, ուզածներս, Վա՜րդան, կա՞ն հոգ...։

Այս տողերում ամենայն որոշակիությամբ բացահայտված են Դուրյանի ցավի հասարակական արմատները: Իհարկե, այդքան հանախակի զգվելով գերեզմանին, կյանքը համարելով «ապտա ձորձ», նրա տաղերը ինչ-որ չափով պարուրվում են միստիկ շղարշով: Անկախ դրանից, մահվան ու գերեզմանի գաղափարները գրողի ստեղծագործության մեջ հանդես են գալիս որպես ներկայի դեմ բողոքի կրքոտ ու տառապալի արտահայտություններ: Ռոմանտիկները առհասարակ դժգոհ էին իրականությունից: Իսկ ինչի՞ էր ձգտում Դուրյանը: «Հեծեծմո՛ւմ»-ում նա գրել է.

Մեր հոգիքը նոճիներու
Թաղ թիթեռներ էին տրտում,
Սև՜ ծրծեինք՝ սա՜ղ անհատնում,
Նայեինք միշտ երկրես հեռու։

«Նայեինք միշտ երկրես հեռու»: Ահա՛ Դուրյանի պատասխանը: Մեծ դժգոհն ու տառապյալը չէր գնում դեպի անցյալը, չէր ամփոփվում սեփական «ես»-ի խխունջում, ոչ էլ «ուզածներն» էր գտնում բնության մեջ: Նրա անվերջով միտքը թևածում էր ժամանակի մշուշոտ հեռուները՝ մարդկության համար երազելով մի ուրիշ, «քաղցր» աշխարհ, հավատալով հավատում էր այդ աշխարհին: Ընկերներից մեկին գրած նամակում կան այսպիսի տողեր. «Միշտ ձանձրալի է այժմյան աշխարհը, անոր համար, որ ուղեղին մեջ ջահ մ'ունի. աշխարհի քաղցրությունը վայելելու համար այն դարին մեջ շնչելու է, որ քուրձ կը հագնի և կը սիրե. փիլիսոփա աշխարհը ըսել կուզեմ, որ արդեն ուղեղներու մեջ կը սաղմնի...»: Այժմյան աշխարհը ձանձրալի է, որովհետև ուղեղի մեջ ջա՞հ ունի..., Դուրյանի մտածողությամբ «ջահ մ'ունի» նշանակում է «զգացմունք չունի», «սիրտ չունի», «սեր չունի», և հետագա շարադրան-

ֆը հենց դրա հաստատումն է. «այն դարին մեջ» մարդիկ արդեն սիրելու են միմյանց: Նորայր իշխանի («Սև հողեր...») երազանքը՝ «Ա՜հ, երբ պիտի ջնջվի աշխարհիս վրայեն թագը, փառքը և միայն եղբայրությունը իր մանշակներովը մարդոց ճակատը պիտի պճնե փոխանակ դափնիի», նաև իր՝ Դուրյանի երազանքն էր, տեսնելի տեսնչը: Զուր չէր, որ հրապարակախոս Դուրյանը նույնպես տագնապալի հարցնում էր.

Ահ, մինչև ե՞րբ մարդիկ թույն ու խավար պիտի շնչեն։
Ե՞րբ պիտի լոե թնդանոթը։
Ե՞րբ պիտի սիրե կղերն ալ։
Ե՞րբ տիեզերք համեղբայրության վառարան մը պիտի ըլլա։
Ե՞րբ պիտի ծավալի համայն աշխարհ իր ամբողջությամբը ԼՈՒՅՍԸ։
Ե՞րբ։
Արդյոք դեռ շատ դարե՞ր կան հոլովելիք։

Նա սպասում էր աշխարհի երկունքին, չէր ուզում հավատալ, թե աշխարհը կարող էր «այս երազները հեղեղած միջոցին ալեորի և լուսածամ աստղերուն վարսերը թափթփին»: Դուրյանի գեղագիտական իդեալը չէր պարփակվում իրականության պրոկրուստեսյան մահնում:

Իդեալի ու իրականության անհամապատասխանությունը, անձնական ու անանձնական ցավերը միայն տառապանքներ չէին ծնում: Դուրյանը բոլոր հայ ֆնարերգակներից ամենարմբոստն էր: Խռովքն ու կասկածը, հակառակումն ու ընդվզումը փոթորում էին նրա միտքն ու հոգին, մորմոքում ու ճչում էին թե՛ տաղերում, թե՛ թատերախաղերում, թե՛ հոդվածներում և թե՛ նամակներում: Իսկ «Տրտունջք»-ում հրաբխվեց բանաստեղծի երեք հոգին, որոտաց ու հեծեծաց այնպես ուժգին ու տառապալի, որպիսին իտալացի ֆենադատ Ֆրանկո Նիտտի Վալենտինիի խոստովանությամբ «երբեք չեն համարձակվել ո՛չ Լեոպարդին, ո՛չ Մյուսեն, ո՛չ Կատուլը»: Դուրյանն, ինչ խոսք, հավատում էր աստծուն, բայց դա կույր հավատ չէր: Նա անսահմանորեն սիրում էր կյանքը և ուզում էր համոզվել, որ աստված նույնպես բարի էր: Իսկ եթե նա ոխերիմ է ու չար, ապա թո՛ղ ուրեմն անիծվի այդպիսի աստվածը: Այստեղից էլ այն մեծ, շատ մեծ, հիրավի հարեկացիական տառապանքը, որ ապրեց նրա գերզգացիկ հոգին և որի հանճարեղ ու գիտակցված արտահայտությունը եղավ «Տրտունջք»-ը: Դա տառապանք էր խոր-

հող ու զգացող մարդու համար, նրանց համար, ովքեր «վսեմ երազներ» ունեին, բայց որոնց բաժին էր ընկել «սև հակատագիրը», դա տառապանք էր Վարդանի, իր, բոլոր չհասկացվածների ու մերժվածների համար: Առանց հասկանալու այդ խորունկ սերն ու տառապանքը, անհնար է հասկանալ թե Դուրյանի ընդվզումներն ու զոչանքները, ըմբոստացումներն ու աղավանքները և թե նրա՝ որպես մտածողի խառնվածքը:

Մտածող Դուրյանը մտահոգված էր ոչ միայն Հայաստանի ու իր ժողովրդի, այլև բովանդակ աշխարհի ու մարդկության բախտով: Նա իր «թշվառ» հայրենիքը դիտում էր «հեք Մարդկության մեկ ոստը գոս» («Իմ ցավը»): Նման լայնախոհ ըմբռնումներն ապացուցում են, որ հանճարեղ պատանին ոգեշնչված ու ազդված էր ֆրանսիական լուսավորիչներից, քանի որ հենց վերջիններս էին, որ հանդես էին գալիս «ոչ թե որպես որևէ առանձին դասակարգի, այլ ամբողջ տառապող մարդկության ներկայացուցիչների դերում» և ուզում էին «միանգամից ազատագրել ամբողջ մարդկությանը» (Էնգելս):

«Մեր նախորդ շրջանի բանաստեղծները» անավարտ աշխատության մեջ Հովհ. Թումանյանը խորհուրդ էր տալիս նայել Դուրյանի «ներսը», տեսնել «վաղամեռիկ հանճարի» «ծանր հոգեկան կռիվն» ու «դրաման»: Հենց «ներսը» թափանցելու դեպքում է պարզ դառնում, որ Դուրյանը տառապանքի բանաստեղծ է, համամարդկային տառապանքի:

Հիրավի վիթխարի են հայ ֆնարերգությանը մատուցած Դուրյանի ծառայությունները: Նա իսպառ հրաժարվեց կլասիցիզմից, խուսափեց պատմողականությունից, բանաստեղծությանը հաղորդեց զգացմունքային անհատակ խորություն, հոգեբանություն և արվեստի բացառիկ ինքնատիպություն: «Սկյուտարի սոխակը» հայ նոր ֆնարերգության մեծագույն սիրերգակներից անդրանիկն էր: Նա էր, որ վերականգնեց մեր միջնադարյան շենչող ու առինքնող ֆնարերգության հետ պատմականորեն խզված կապը: Գրողի համբավավոր նախորդներն ու ժամանակակիցները՝ ո՛չ Ղևոնդ Ալիշանը, ո՛չ Մկրտիչ Պեշիկթաշլյանը, ո՛չ Թովմա Թերզյանը, ո՛չ Մկրտիչ Անեմյանը, չխիզախեցին վերջնականապես հրաժեշտ տալ գրաբարին, մինչդեռ հանճարի բնազդով ի սկզբանե այդ արեց պատանի Դուրյանը: Նա չգրեց նմանողական ոչ մի տող, մնաց ժամանակի այն հազվագյուտ բանաստեղծը, որ Արշակ Չոպանյանի

արտահայտությամբ «զարգացար ու բնություն իր սրտին մեջ փրճտրեց»: Հազար անգամ իրավացի էր Պարույր Սևակը, երբ Դուրյանին համարում էր «մեր քնարերգության Վահագնը»՝ գրելով. «նա է մեր նոր քնարերգության *առաջին մեծը* և միշտ կմնա վերջինի կողքին, որովհետև նա չի հնանում, ինչպես չեն հնանում ժայռն ու հառաչը, ծիծաղն ու հեծկլտացը...»:

Հրատարակության համար Դուրյանն ընտրել էր 38 տաղ, որ նրա բանաստեղծական հիմնական ժառանգությունն է: Սա քիչ չէ Դուրյանի տարիքի մի գրողի համար, մանավանդ, եթե նկատի ենք առնում, որ ստեղծագործեց կյանքի դժնդակ պայմաններում: Մյուս կողմից հայտնի նշմարտություն է, որ քանակային խնդիրը գրողի մեծության իսկական ցուցանիշը չէ: Հովհ. Թումանյանը սիրում էր հիշել Հայնեի մի միտքը, թե «մեծ բանաստեղծը նա է, որի յոթ երգից մինը լավն է»: Իսկ այս իմաստով «Սկյուտարի սոխակը» ոչ միայն մեծ, այլև մեծագույն բանաստեղծ է, քանի որ նրա քերթվածների գրեթե երեք տասնյակը մեր բանաստեղծության մշտահնչա գանձերն են: «Սիրել»-ն ու «Դրժել»-ը, «Լճակ»-ն ու «Տրտունջք»-ը, «Թրքուհին» ու «Հեծեծմո՛ւնք»-ը բոլոր ժամանակների հայ քնարերգության ամենաբարձր գագաթներն են: Առանց «Լճակ»-ի ու «Տրտունջք»-ի կորուստներ կունենար նաև համաշխարհային բանաստեղծությունը:

Պետրոս Դուրյանի սույն ժողովածուի հիմքում ընկած է գրողի երկերի երկհատորանի գիտական հրատարակությունը, որ լույս է տեսել Երևանում (1971—1972): Ներկա հրատարակության մեջ մտցված են մասնակի փոփոխություններ և կատարված են բնագրային նշգրտումներ:

Ա. ՇԱՐՈՒՐՅԱՆ

ՏԱՂԵՐ

ԻՂՁՔ ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Երբոր ցողին փաղփուն շիթերն գիշերվան
Խոտի, թերթի, ծաղկի վերա կը շողան,
Երկինքն երբոր աստղեր փալփլին գիշերը՝
Ցայտեն արցունք, կայծ իմ ցաված աչերը.
Ի՜նչ, Հայաստա՜ն, քեզ մոռնա՜լ...
Երբե՜ք, այլ սև նոճի մ՚ըլլալ, քեզ շո՜ւք տալ։

Ջիս աստղազարդ երկին սփոփել չ՚է կարող,
Մասյաց սարին արտասվալից է նա քող,
Ձեր հիշատակն ինծի համար հեշտագին՝
Նրման կուսին սիրո առջի արցունքին.
Դամբա՜նք, ավե՜րք, Ձեզ մոռնա՜լ...
Երբե՜ք, այլ ուղխ մ՚արցունք ըլլալ, Ձեզ թա՜ց տալ։

Երկաթ, շղթա, գնդան, անդունդք ու վիհեր,
Ամպրոպ ու շանթ, մահվան զանգակ ու ջահեր,
Չ՚է, չ՚են կարող պահ մը Ձեր վառ հիշատակ
Ծածկել սևի ու սոսկումի՝ վեմի տակ.
Ազա՜տ օրե՜ր, Ձեզ մոռնա՜լ...
Երբե՜ք, այլ հուր մ՚ըլլալ և Ձեզ Հայո՜ւն տալ։

Զվարթ բնության այն կամարներն ծաղկահյուս,
Բույր, կայծ ու գեղ, նայվածք, ժըպիտ սիրուհվույս,
Անուշ հավեր, արծաթ ալիք վրտակին
Ձեր հուրն սրտես պահ մը առնել չը կրցին.
Փառա՜ց օրեր, Ձեզ մոռնա՜լ...
Երբե՜ք, պատրույգ մ՚ըլլալ այլ Ձեզ, ու լա՜յս տալ։

Արշալույսին ժժգույն աստղեր երբ փալփլին,
Գողտրը գեղգեղն վարդակարոտ բուլբուլին,
Բնության դաշնակք, ո՜հ չ՝են կրնար նրվաճեր
Ձեր հառաչներն որով մոռնչեն նոճիներ.
Սև՛ սև՛ օրեր, Ձեզ մոռնա՜լ...
Երբե՛ք, արյուն մ՝ըլլալ և Ձեզ կարմի՛ր տալ։

Թերևս ժպտին Մասյաց մրթին սարերը,
Կամ արտասվին Սիպերիո սառերը,
Բայց սև հոգիք ու սև ճանկեր չ՝են կրնար
Խեղդել իմ ձայնս, փշրել փըշոտ իմ քնար.
Արդարությո՛ւն, քեզ մոռնա՜լ,
Երբե՛ք, այլ սուր մ՝ըլլալ, սրտեր քեզ մուտ տալ։

Մինչ ց՝ե՞րբ գոչեմ, ձայնըս մեկը չը լըսեր,
Հայն յուր ժանգոտ շղթան երբե՛ք չը սարսեր...
Վայրկյան մ՝ինձ հետ դեռ իրավունք չ՝թոթովեց,
Հայն զ՝իս ծաղրեց, և ձայն մը զ՝իս չը թովեց.
Դեռ կը գոչեմ Ձեզ, Հայե՛ր,
Որ դամբանիս մեջ չը լըսեմ Ձեր վայեր։

Հարուստն ու կղեր թե ազգ ըզգան ու վառին,
Թե «լույս և սեր» Հայ սրտերուն մեջ թառին,
Թե լուսո դարն երկնե «ազատ զավակներ»,
Թ՝եղբայրության, սիրո վառին կըրակներ,
Թեև ըլլամ ես մեռել,
Դամբանես դուրս կ՝նետվիմ ԱՁԱՏ Հայն տեսնել։

1869

ՍԻՐԵՑԵ՛Ք Զ՝ՄԻՄՅԱՆՍ

Վարդակարմիր Գողգոթային վեհ գագաթ
Միշտ փալփըլող, սիրո անշե՛ջ ճառագայթ,
Դեռ կըսպասե՞ս թափել սրտից քու սըլաք.
Ջ՝ո՞վ կը հըսկես, վիհ և անդո՞ւնդ, թե կըմախք.

Մ՞ր սև ժայռից մեջ մարեցավ այն բեկբեկ
Բարբառն վըսեմ, թե «ըզմիմյանս սիրեցե՛ք»։

Ծածկե ամպով կարմիր կողերդ, Գողգոթա՛,
Եվ թող խայտան ցավոտ ոսկերք սև Հուդա...։
Ժանգոտ ու գուլ թուրերն առին կարմիր փայլ,
Նոր կրոնին հետ արյան հեղեղն առավ քայլ...
Թնդանոթին առջի բոմբյունն խեղդեց սեգ
Ձհագադրն քաղցր, թե «ըզմիմյանս սիրեցե՛ք»։

Մարդազոհով Վատիկանի մըխացին
Ծխնելույզքը, կամարքը «փա՜ռք» գոռացին,
Փոխ-Քրիստոսք խաչն ըրին դաստակ կացինի՝
Սև դըրոշ մը ատելության արյունի.
Դարուց մոխրեն կամ ամպերեն հուսա հեք
Ձրկյալն լըսել, թե «ըզմիմյանս սիրեցե՛ք»։

Տնանկին դամբանը կ՝անհետի ոտնակոխ,
Տընակին մեջ մարի առկայծ կանթեղն հող,
Այն մութին մեջ նոթի տըղեկք կը հեծեն,
Դղյակըն խրախ մինչև լույս ջահք կը հյուծեն,
Հարուստին կառք ժխորով կ՝անցնի սըրարշավ,
Հեքին դագաղն իր գերեզմանն լուռ իջավ...

Գեթսեմանին իջնող հրեշտակն դալկահար,
Որ գեղ, ծաղիկ, արցունք ու փառք չը ճանչնար՝
Նորա ցուրտ գոգն աղքատը սոսկ կ՝ըսփոփի,
Ճոխն ու տընանկ պատանին մեջ կ՝ըլլան մի.
Կայծակնաթև թե մըռընչեն մրըրիկներ
Թե «սիրեցե՛ք զ՝իրար», հեքն հոս չեն սիրեր։

1869

ՊԵՏՔ Է ՄԵՌՆԻ՞Ղ

Ծժգույն գիշեր մ՝էր քաղցրաբույր աշնային,
Երկինքն աստղեր զերթ «սիրո վերքք» ցոլային.

Դեղնած ու շոր թերթից՝ լուսինն իր բեկբեկ
Շողքը ցողեր ամբան վաքսիցն աղեբեկ.
Շամբերուն մեջ կը սողոսկեր ուղխ մ՝անհետ,
Կայծեր, աստղեր կը խաղային ալյաց հետ.
Սյուքը խաղար տերևներուն հետ թեթև,
Կը շոյեր գլուխս՝ այրած ճակատս վառե թև,
Նա իր շնչովն իս գոհ ընել կը կարծեր,
Բայց կ՝արծարծեր, ո՜հ, իմ սիրուն բյուր կայծեր...
Ոգի մ՝անցավ սրտես՝ թողուց հոն ըստվեր,
Աստեղց բույլ մը... միայն գիտեն զ՝այս աստղեր...։
Համբույրի մը հիշատակն էր սյուքին շունչ,
Իր դողդոջ ձայնն՝ տերևներուն սա շշունջ.
Գունատ ճակտին տխրիկ պատկերն այս լուսին...
— Ո՜հ, կյանք պետք է տալ՝ սիրտ տրվի թե կուսին։
Կը սիրե նե, նայվածքին մեջ կը թառմի.
Ո՜հ, ինչ է նե— ձյունով շաղված մի անդրի,
Վրսեմ ճակտին վրրա զույգ մը աստղեր վառ՝
Եթե սիրե՝ հալի, թ՝ատե՝ կորի աստ...։
Լոկ հուր աչեր, ժրպիտ, արցունք տեսի նախ,
Կուրծս ուռուցիկ լանջ մը ըզգաց սիրաբախ,
Սիրո մրմունջ, հառաչ լսեցի բեկբեկ խոսք,
Դողդոջ ու գիրգ՝ պաղ ձեռք մ՝ըզգաց ձեռքս սոսկ.
Թևերուս մեջ լույս մը, հով մը մարեցավ.
Էակ չ՝էր նե, այլ սեր, հուր, շունչ, ժրպիտ, ցավ.
Գոհար աչեր, վարդ ատ, այլ ինքն էր թախիծ.
Այն գիսավոր աստղեն «քար մը» մընաց ինձ...
Հիշատակ մը, գերեզման մը... սո՛ւրբ սափոր,
Ուր հեկեկով սիրտս կ՝ընե միշտ թափոր...։
Երանի՜ թե ըլլամ ես շիթ մ՝արտասուք
Եվ անհետիմ դամբանիդ քով սիրասուգ.
Իցի՜վ թե խոտ մ՝ըլլամ ու ես ցամքիմ հոդ,
Ծաղիկ կ՝ըլլամ, բայց առանց քեզ չ՝ունիմ հոտ.
Լույս թե մութ, քուն, շուքդդ պիտի չ՝անհետի,
Հառաչելով ուշ պիտ՝ըլլամ ոսկր ու դի,
Շիրմիդ վարդը չը թոռմած քեզ գրկեմ ես...
«Կյանք կուտաս՝ սիրտ թե տաս» ըսեն ետևես։

1908

Ի ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԸՆԾՈՒԹՅԱՆ ԱՄԵՆ. ՀԱՅՐԻԿԻՆ

Այն սրգալի սև սև նռնյաց ետևեն
Արշալույսին շողք մեզի «Լո՜ւյս» կավետեն,
Խուսեց խավարն, փողփողե լույս արևուն
Հայոց կարմիր մարգաց սառուտ սարերուն.
Փրլատակաց մրթին խորքեն կուգա ձայն—
Հայե՛ր, Հայե՛ր, դեռ Հայաստան չ՝է՝ կործան...
Ձայն տրվողը չ՝է՝ ըստվեր,
Հուր ներշնչողք չ՝ե՛ն աստղեր,
Եղբայրության է հուր, ձայն,
Հայը սիրող Հա՛յն է այն։

Նա գիշերվան հետ ազգ խոկաց ու լացավ,
Եվ արևուն ալյաքաց հետ կրակ դարձավ,
Հողմոց թևով միշտ սրլացավ Հայկարան,
Տիգրիսի հետ թրջեց ավերք տխրական.
Հայաստանի, եղբայրության սիրահար
«Հա՜յ» գոչելով շուրթերն եղան դալկահար։
Ավարայրի նա վարդին
Սոխակն եղավ տրտմագին,
«Վարդա՜ն» գոչեց նա, անդեն
Վասա՜կն ելավ դամբանեն։

Նա իրավո՜ւնք, ազատությո՜ւն գոչեց հար,
Փոշոտ ու խոնջ ոտքերն նետեց ուր Հայ կար,
Ուր որ Հայ կար ջերմ համբուրեց նա այն հողն,
Ուր Հայն շնչեց՝ հառաչ և հուր ղրկեց հոն.
Բոցաթրոիչ Հայե ի Հայ նա թրռավ,
Հարված, ցավ, դավ՝ սերն խեղդելու չ՝եղան բավ։
Այս հայկազնը չ՝ուներ սուր,
Այլ կուրծն ուներ Հայ, խաչ, հուր.
Կը հագներ սեր և գրգյակ,
Նա գո՜ւթ ուներ, ո՜չ քրսակ։

Ազա՜ւ սիրեց, ազա՜տ գոչեց, չը թովեց.
Հայն զ՝այն ատեց, Հայ մը ձեռքը չը թոթվեց.
Բանտ, կախաղան, աքսոր, Սիպիր և սուսեր
Չը կրցին ձայնն մարել, խեղդել իր հույսեր.
Միշտ «Հա՜յ» կանչեց, բարձն էր գլխուն Մասյաց սար.
Նա սիրտն ըրավ հայրենահուշ գոռ քընար.
Արդ հայրենյաց մեր շնչիկ՝
Հով մը կուգա անուշիկ՝
Վառ ճակատուց այցելու,
Հայուն աչերն սրբելու։

Բա՜ց են թևեր, բա՜ց են սրտեր, բա՜ց ճակատ,
Եկո՜ օգնել տրկար Հայուն ապաբախտ,
Հո՜ւր հայրենյաց, եղբայրության դու հագա՜գ,
Քընարահար Հայու մը իղձ քեզ հրեշտակ.
Վեռ Վոսփորին ալիք ըզբեզ բարևեն.
Ցրվե՜ սև ձեռք՝ սև ամպ Հայոց արևեն.
Արտոսր ու քիրտդ թող փալփլին՝
Ջերթ աստղեր Հայ երկնքին,
Եվ սորվեցուր Հայուն դու
Սիրե՜լ, օգնե՜լ իրարու։

Արտասվաթոր՝ քե՜զ կը նային Հայ աչեր,
Սև շղթաներ քեզ ցույց կուտան գոռ քաջեր,
Մըշո կտրիճք՝ աղչիկք ի քեզ ապաստան
Հայն ու դամբանն, տաճարն, հյուղակն՝ Հայաստան։
Թո՜ղ փլատակաց մոխրեն հառնեն հիշատակք,
Մութ մենաստանք վերափայլե՜ն նախնի փառք...
Լո՜ւյս, լո՜ւյս տեղան ամեն տեղ,
Գիտությո՜ւն, լո՜ւյսն Հայ աստեղ,
Լո՜ւյս հյուղակին, լո՜ւյս վըհին,
Լո՜ւյս Հայ փառաց շեջ ջահին։

Ահա սրանա մեզ ապագա բոցագեմ,
Մեր հայրենի ավերակաց տալ լույս վեռ.
Հարկ չ՝են մեզի նիզակ և սուր ու վառոդ.
Իրավունքի, սիրո, լուսա ենք կարոտ.

Եղբայրությա՜ն Հայն կը հենու, ո՜չ թագի,
Բռնե ձեռքեն, որ շունչ առնե և հոգի.
Եվ ալ մոռնա հայկաղն հեք
Հին հարվածներն ու խոր վերք.
Եվ սիրտք ի տրոփ որոտան
— Կյա՜ց միշտ, ՀԱՅՐԻ՚Կ ԽԸՐԻՄՅԱՆ։

1869 <Սեպ. 27>

Ի ԴԻՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ

ԱՄԵՆ. ՀԱՅՐԻԿԻՆ

Ո՞վ է որ գա մեզ ճեղքած օդն, ալին,
Ճակտին վրա գոհարք, աստեղք կը փայլին.
Թագավո՞ր մ՝է Հայ, որ ցատկեց շիրմեն,—
Ո՜չ, դեմքը վառողք արցունք՝ ըսպի են.
Նա կ՝արհամարհե ծիրանի, փառքեր,
Նա սև է հագեր։

Նա մեր Հայ եղբարց արցունքն է քավեր,
Ցույց կուտա մեզի արյուն ու ավեր,
Դյուցա՞զն մ՝է, որ դո՜ւրս թըռավ դամբանեն,
Ո՜չ, թուր չ՝է՝ ձեռքն, այլ խաչ բռներ արդեն,
Չը ցայտեր աչքեն շանթեր, այլ սե՜ր, գո՜ւթ.
Դողա անկե Քուրդ։

Նա կուգա Հայոց կարմիր մարգերեն,
Ազատեց Քրդեն հեք Հայ գերիներն,
Խաչափայտով մը պանծացավ հաղթող,
Հնչեցուց ի Հայս ազատության փող,
Տեսե՜ք, քուրձ հագեր, կարծես ինք դիակ,
Բայց սիրտն է կըրակ։

Գա Մասյաց սարեն, նա ձախն ու աջը
Մովսեսի քընարն՝ Ղևոնդի խաչը,
Աստղի մը նայվածք, քընարի մը ձայն,

Աղյաց խորեբեն կը սիրե նա Հայն.
Դեռ չը ճանչցա՞ք զ՝այն, ճակա՛տք վըշտակոծ,
Հրեշտակն է Հայոց։

Ահա կը հնչե նորա հեշտ սըրինգ,
Արձագանք կուտան Հայոց դաշտք, լերինք,
Երթանք իր շուրջը, Հայե՛ր արտալած,
Չը խաբեր, մատներ նա մեզ օտարաց,
Չը սիրեր ոսկի, փառք ու վատ մարդիկ,
Հայուն է Հայրիկ։

Գլխիկը դըրած սըգավոր սըքեմ,
Չը թափիր ճակտեն դեռ ալիք վըսեմ,
Բայց իր դիմաց վրա կանուխ են փթթած
Անցքի ու վշտի խորշոմներ միշտ թաց.
Միակ վարձք մ՝ունի՝ այն է կոչել զ՝ինք
«ԽԸՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ»։

1869

ՀԱՅՐԻԿՆ ՀԱՅՈՑ

Փութա՛, հովվապե՛տ, սիրող հար ազատ՝
Հարազատ,
Փարատի՛ սև ամպ, փայլի՛ արդ արև
Արդարև,
Փողփողի՛ն դաշտեր, ազատ առնե՛նք քայլ,
Առ նենգ գայլ
Ցըցո՛ւր ցուպդ, Հայերն կանչե՛ յ՝արոտ մի՝
Հար հոտ մի։
Ճանկեր արյունոտ կուրծ մեր թափ առինք,
Թափառի՛նք,
Եկո՛, հովվե՛ մեզ, սիրածդ, ազգասե՛ր,
Ապդ ա՛ս էր։
Դու գրթոտ նըման երկնի հայրիկին՝
Յ՝այր՝ ի կ՚ին՝

Յ՝օրոց և յ՝ալիս սփռե՛ լույս և սեր,
Լո՛ւյս եւս, է՞ր
Ցավի, չը զարթնու հրճված յ՝այգուն յ՝այն
Յա՛յ, քուն Հայն։
Սոխակ մ՝էիր մերթ ի նոճս, ե՝երգերդ՝
Վերքերըդ
Առած բյուրավոր՝ դեռ դու կանչեցիր,
Կա՛ն, չ՝է՛ցիր
Երգերդ միշտ մեր սիրտ, սիրտ, հոգվո ձա՛յն,
Յ՝ոգվոց Հայն
Հանեց, վառեցավ ձայնեդ, իմացավ
Հիմա ցավ.
Քե՛զ խնդրե Հայն արդ, ամբոխ ամբոխ չ՝է՛,
Ամբողջ է.
Արդ ըսե՛ Հայուն, ըրե՛ ազդ անոր
Աստանոր.
— Ես կարոտ եմ վառ սրտից, ձեռքերի,
Ձեր գերի
Եղբարքն ազատե՛լ, լո՛ւյս տալ ՝ի Մասիս,
Ի մաս յ՝իս
Առնել իմ նախնյաց արյուն արտսուքեն.
Արդ սուգեն
Ելնեն Հայք՝ օրհնեն սիրով հավետ իս՝
Յ՝ավետիս.
Ցանկամ որ Հայք ինձ ըսեն ա՞հ, յամայր
«Ահա՛ մայր».
Այս իմ վերջին տենչ, միշտ ճետք Հայկա կա՞ն
Հայկական։

1869

ԵՐԳ ՄԱՐՏԻՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ

Արի՛ք, որդի՛ք Արարատյան,
Նըսեմ ճակատք ցայտե՛ն թող շանթ,
Դողդոջ ձեռաց մեջ սուր ցոլա՛ն,
Արդար վրիժուց ժամն հասավ արդ,

Փշրի՛ Պարսկին անդուլ կացին,
Հայք բա՛վ լացին.
Մեռնի՛նք Մասյաց շուքերուն տակ,
Հավերժ կանգնե՛նք հաղթանակ.
Օ՜ն, ազա՛տ ըլլանք
Եվ Հայաստան մեր,
Թող տա՛ն արձագանք
Մասիք անվեհեր.
Մեռնի՛նք յ'Արտազ՝ Տղմուտի մոտ,
Ուսկից ծագի մեզ առավոտ։
Մեր սուսերց փայլեն
Սասանին Սասանք,
Մեր ամեն քայլեն
Ծագի հաղթանակ։

1869

ՆԵ

Վարդը գարնայնի
Թե կույսին տիպար
Այտերուն չ'ըլլար՝
Ո՞վ կ'հարգեր զ'անի։

Թե չը նմաներ
Կապույտն եթերաց
Կույսին աչերաց՝
Երկինք ո՞վ կ'նայեր։

Թե կույսը չ'ըլլար
Սիրուն ու ամբիծ,
Աստվածն այն երկնից
Մարդ ո՞ւր կը կարդար։

1871

ԱՌ ԿՈՒՅՍՆ

Ո՜հ, մինչև ց'ե՞րբ, ըսե՛, ո՛ կույս, հոգիս ըլլա գեղույդ գերի,
Եվ մինչև ց'ե՞րբ թրթռան աղիք ցաված սրտիս և քնարի,
Լոկ համբուրիկ մ'ուզեցի քաղել այտեդ մեկ թարմ վարդ,
Ճառագայթ մը խնդրեցի աչերեդ երկնազվարթ,
Զըլացար դու, անգո՜ւթ, վարդ մը տժգույն ճակտիս,
Եվ ճառագայթ մ'այն անդունդին խոր սրտիս.
Ո՛չ, ես չ'եմ կրնար ապրիլ զուրկ գրկեդ,
Ծիծառնիկն ապրի դուրս բույնեն գեթ.
Տրտմալար քնարս զարնեմ ջախջախ,
Գոցեմ սիրտըս սիրաբախ...
Մնայք բարով, կո՛ւյս և քնա՛ր,
Կույսին տեղ լա՛ց, քա՛ր,
Ճակատս նըսեմ
Հանգչեցնեմ
Մաշող
Հող։

1871

ՎԻՇՏՔ ՀԱՅՈՒՆ

Փոխանակ քաղցր օրորներու, հայրենի՛ք,
Օրրանիս քով մայրիկս ըզքեզ միշտ ողբաց,
Համբույրին հետ շիթ մ'ըզգացի արտասվաց,
Աչերս տեսան արցունքներու լոկ երկինք։
Ավերակաց ծաղկանցըդ սոսկ այցելու
Ձեփյուռն չ'եկավ նժդեհ ճակատս շոյելու.
Փառաց դարեր ծընող՝ ընկնող հայրենի՛ք,
Մամռոտ ավերք և դամբարան զորավիգ
Արարատյան հսկայից,
Ուր ծոր ճակտով վիրալից
Հեծե ոգին հայկական...
Բայց ի զո՜ւր. ողբ, վայ, կական
Եվ արտասուք ու հառաչ
Քեզ ըսփոփել չ'են կարող,

Այլ վեհ ճակատ գրոնաշող
Ի՛արյունաբուխ կող ու լանջ։

Մոխիր հագած, արյուն ծրծած սև հողի՛ր,
Ուր կը տիրեն սոսկում, տրխուր հիշատակք։
Ալ ծոցեդ թռեր են հուստ քաղցր հրեշտակք
Եվ արյունոտ դափնի մ՚անգամ չ՚են թողեր...։
Սև շղթաներ եզան ինծի խանձարուր,
Մրթության մեջ սրրտիս վրրա հակեց սուր,
Միթե Հա՞յ եմ՝ մինչդեռ չ՚ես իմս, Հայաստա՛ն,
Եվ հոյակապ, վեհ կոթողներդ պատվանդան
Օտարաց, գահդ՝ հիշատակ,
Եվ ճակատդ կրես պըսակ
Արդ փրշահյուս, սև նոճի...
Ալ չկա՞ վառ թագդ առջի,
Որուն ականց տեղ անգին՝
Դառնաթախիծ մրտածմանց
Քրտունքներ սառ՝ քար կտրած՝
Կնճռոտ ճակատդ պճնեցին։

Երբոր տեսավ արյունլրվա վարդին ծոց՝
Վարդատարփիկ բուլբուլն դողով թուչեցավ,
Սուգին փափկիկ թևքն արցունքով թրջեցավ՝
Սիրատրոփ լանջք կուսից տեսավ երբ սրախոց...
Լրռեցին քնար, համբույր, գեղգեղ և մրմունջ,
Հրաժե՞շտ տիրեց... և սիքակաթ շուրթեր մոնջ
Համբուրեցին սև հողեր, ժայռ և ալիք,
Բույլ բույլ, բյուր բյուր ոգիք թռան տրտմալիք.
Մասյաց մուսայք դողահար՝
Թողուցին պսակ և քընար.
Դաշտեր, ձորեր և սարեր,
Ալիք, ժայռեր և սառեր,
Հե՛ք հայրենիք Հայաստա՛ն,
Ըզքե՛զ, ըզքե՛զ ողբացին,
Որ ուրացողք քեզ բացին
Բյուր բյուր՝ սև սև գերեզման։

Հայն էր, որ թագդդ գրլորեց փայլարձակ,
Եվ ալևոր ճակտիդ բարդեց սև ամպեր,
Հետո վայեց, երբ գերեզման կըշտապեր,
Այլ շնչասպառ էր՝ չ՚ուներ ձեռքը կայծակ,
Որ այն ամպերն փոթորկաբեր փարատեր,
Եվ հայրենիքն շղթաներե ազատեր.
Նոճյաց խորքը մահվան շոնչը սոսափեց,
Սոսկմամբ ցնորած Հայն իր երկրեն խուսափեց.
Թողուց ավեր և արյուն,
Թաղեց հոն փառք և ավյուն.
Արդ կը տեսնե բոթաբեր
Ներկայն՝ ճիգ մը չը թափեր,
Հայաստա՛ն, քեզ փրկելու,
Անզգա դարձած դարե դար՝
Չը հիշեր քեզ, չը փութար
Քեզ անձկանոք գրկելու։

1868

ԿՈՒՏՅՈՆ ԼՔՅԱԼ

Հալեց սառեր գարնան արև,
Ոսկի մատամբք ծաղիկ, տերև
Ցանեց, ցրվեց ամպ ու բալ փուչթ,
Պարզեց աստեղց կամարն կապույտ.
Ո՜հ, ինչո՞ւ կուսին
Նայվածքն է մրթին։

Ոսկի սփռեց լերանցն ստվերն,
Ծիծաղեցավ լուսինն յ՚ալի,
Կա՞յծ ու ծիծաղ, ծաղիկք համբուն,
Թերթեր, ուր տեր կարդա զվարթուն.
Ո՜հ, ինչո՞ւ գունատ
է կուսին ճակատ։

Բուլբուլն թառեր թավուտ թփին՝
Գեղգեղե գե՞լ աղիոք սրտին.

Թռչունք մըթին անտառաց խոր
Զայնակցին, հեշտ սիրո ժըխո՜ր...
Ո՜հ, ինչո՞ւ լինի
Լուռ կույս լեզվանի։

Ալիք սիրո ցույց տան կայծ, նետ,
Մրմունջ, նայվածք տանելով հետ,
Ջըրել կերթան ծաղկոտ մարմանդ,
Թոթվե խոտեն հովն ադամանդ.
Ո՜հ, ինչո՞ւ արտսուք
Թափե կույսն ի սուգ։

Ի դրանց ոսկի արևելքին՝
Թռչտելով սյուքեր հեշտին՝
Ծաղկանց, ալյաց, թերթից համբույր
Տալով՝ սահին թողլով համ, բույր.
Ո՜հ, ինչո՞ւ հառաչ
Հանե կույսին լանջ։

Ո՛, կույս, ինչո՞ւ այսպես տրտում
Սամույր հոպոպքդ արտասվաթուրմ
Դեմքըդ սիրուն ծածկեն, վերցո՛ւր
Ճակատդ, շնչե սեր, լույս ու բույր.
Անկողինդ ծաղկունք,
Աստղեր քեզի շուք։

— Սիրեի ես աստղերն երկնի,
Ալին զ՝իս ցույց տար գեղանի,
Վայլեր ծաղիկ ճակտիս անսուգ,
Զեփյուռն ուներ հեշտ փըսփըսուք.
Մատնելու զկուսիկ
Հրապո՜ւյրք խաբուսիկ։

1870

ՆԱՅՎԱԾՔ ՄԸ

Ամրան տապեն ես խոնջած՝
Թավուտքի մը բյուր բյուր կայծ
Տերևներուն շուքն ինկած՝
Ո՜րչափ սիրեմ շունչն հովտաց՝
Մեղմիկ
Հողմիկ։

Արշալույսին կանուխկեկ՝
Ո՜րչափ սիրեմ՝ ոտքըս մերկ
Կոխելով մարգ ծաղկաներկ՝
Լըվացվելու գտնել մեկ
Հստակ
Վըտակ։

Երբ միայնակ ես գամ ման,
Ո՜րչափ սիրեմ կրակներս այն
Ներշնչելու սերս անձայն՝
Հոտոտելու կույսի նման՝
Քաղցրիկ
Ծաղիկ։

Երբ հովանի աստղազարդ
Ըլլա երկնից գմբեթարդ,
Որչափ սիրեմ ի սազարթս
Երբ կը հյուսե երգ ի վարդ
Թրթրակ
Սոխակ։

Բայց ասոնք չ՝եմ փոխեր բնավ
Մեկ նայվածքին հետ անբավ՝
Թե յուղարկե ինձ հեշտյավ
Իր աչերեն վառ ու սյավ՝
Լուսիկ
Կուսիկ։

1871

ՆՎԱԳ

Է ՏԱՐԵԴԱՐՁԻ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ

Պատուեր են Հայոց դաշտերն արյունոտ,
Հայկազն հրսկայից կրմախք կայթեն յ'ոտն,
Մոխրոտ ու մամռոտ ավերակք խայտան,
Մասիս բարձեր է վեհ ճակտեն պատան.
Հիշատակն Հայն կը կանչե,
Հայն Հայաստան կը կանչե։

Զինվո՛ր Սիրո, դրոշդ ծալ ծալ ծրփեցո՛ւր,
Սորվինք խաչովդ սեր, 'քան թե փայլել սուր,
Հեշտ արցունք թափեն ատոք Մասյաց սարին՝
Երբ Հայեր աննենգ իրարու փարին.
Հայաստանը դեռ ողջ է՝
Թե Հայն միշտ Հայը կանչե։

Հայրենյաց տրխուր մեջ ավերակաց՝
Հուր հոգի մ'ըսկեր, կանթե՛ղ սիրակայծ,
Միշտ դեպ 'ի հեք Հայն տաներ քայլ հառաջ,
Նա աղյաց խորն Հայն՝ կուրծն էր գամած խաչ.
Ըսին թե Հայն ջայն կանչե,
Սե՛ր է, նոճյաց լոկ ձայն չէ։

Սովե՛զր, որ սիրտ նախ ավիր արձագանք,
Արյուն չը ծրծած հողդ, չը թաղած գանկ,
Բաժակք հնչեցին՝ ո՛չ ան թնդանոթ,
Հյուսեցան կամարք դափնյաց սիրահոդ.
Սև վեռ չափունգ թե հնչե,
Հեք Հայն եղբայրն կը կանչե։

Դառն են արցունքով մեր սիրտ բաժակք,
Սիրտ դրոշք՝ մեր քերց արցունքոտ լաշակք,
Թե չերդնումք, եղբա՛ր, հիշել զՀայաստան,
Արյամբ ես պահել պատիվն Հայոց տան,
Կը տառապի՞ Հայրենիք,
Կամ Հա՛յ ըսվինք կամ մեռնինք։

1870

ՀՍՏՅՈՒՆՔ

Երբոր վարդի փունջք հայեցի՝
Ծլան տժգույն ճակտիդ վերև,
Խոնարհեցիր աչերդ արև,
Քեզ այն օրեն ես սիրեցի։

Թերթեր հուզող սյուքի մը պես՝
Թրռար սրտիս ծալքերն թոթվել,
Քընարի մը կըրակե թել՝
Քեզ ձըգեցիր դու աղիքես։

Արդ կը փախչիս ինձմե սյուքի
Պես, շուքդ տաս լոկ քընարիս,
Գիսաստղի պես հեռուն կ'նազիս՝
Հովին տըված մազերդ ոսկի։

Երբ աստղալույց գիշեր է զով,
Շրջագայիս Պաղլար-Պաշի,
Գիտե՞ս թե սիրտս ո՞րչափ մաշի՝
Շրջազգեստիդ լոկ շրշյունով։

Գա սյուքն ազատ քեզ այցելու,
Նային քեզի աստղերն ազատ,
Ըստվերին մեջ մինակ ու զատ՝
Ես կը դողամ քեզ մոտելու։

Ո՜հ, թող երբա՛ սյուքն իր ծաղկոց,
Նայի՛ն ատեղք թող յ'Օվկեան,

Եվ թող մեկ մ'ե՛ս ալ թալկանա՛մ
Քու նայվածքիդ մեջ կրակուրոց։

Մահիկն երբոր շառագունած՝
Իջնե լեռնեն ի հորիզոն,
Ալ կ'անհետիս, չ'ես շրջիր հոն՝
Կազին, հովին, աստղին դիմաց։

Գերեզմաննոցին ցուրտ ծառեր
Կը փրսփրսան մեռելոց հետ,
Շրջազգեստիդ շրշյունին գեթ
Ինձ արձագանք մահահրավեր։

Նրվաղած են լույս ու ժրխոր,
Դադրած շրշյունք կանանց՝ անմռունչ
Արդ կը թաղվին համբույր, մրմունջ՝
Աստեղազարդ անդունդին խոր։

Շրջազգեստիդ խշրտուքն հար
Կը փրսփրսա դեռ ականջիս,
Հեծկլտալով իջնե հոգիս
Արտոսրալից անդունդ մ'ի վար...։

1871

ՁՈՆԻԿՔ

Մինակ էր.
Վարդ մ'ըզգոն
Մատուցի
Ներա ձոն։

Շիկնեցավ
Նե զրվարթ՝
Կ'ընդուներ
Երբ իմ վարդ։

Ներա քով
Վարդն ո՞րչափ
Էր անշուք՝
Գունաթափ

Նույնպես ձոնս
Համբույրին
Զ'որ տրվավ՝
Զ'էր քեռավ գին։

1871

ՄԱՆՈՒԿՆ ԱՌ ԽԱՉ

Ո՛վ խաչափայտ
Դու քառաթև,
Որո ճակատ
Սիրո արև՝
Գամված Հիսուս,
Փրչեց խոնարհ
Հոգի և լույս
Սեր ընդ աշխարհ,
Ընդունե՛ ե'իմ հոգիս հեզիկ փառաճաճանչ
Թևերուդ տակ և սորվեցո՛ւր ինծի հավատ,
Սեր, հույս, որով միշտ բաբախե իմ փափուկ լանջ,
Եվ փարատե՛ լուսովդ խավարն սրտես վրհատ.
Սորվիմ աղոթք
Բառնալ քեզի,
Երբ խութից ոտք
Իմ հանդիպի
Սև Սատանին,
Որ ճգնի միշտ
Դյութել զ'հոգին
Ի մութ, ի վիշտ։

1871

ԻՑԻ՞Վ ԹԵ

Ո՜հ, ի՞նչ ես դու, սե՞ր, երկնի հուր կամ ժըպի՞տ...
Չ՝ունի երկին աչացդ կայծերն ու կապույտ,
Վարդը չ՝ունի քու լանջդ անբիծ, լուսափթիթ,
Չ՝ունի լուսինն վարդերն շիկնոտ այտերուդ։

Գիշերն երկնի կայծից, լուսնույն սխրադեմ,
Ցերնչն ալյաց, ծաղկանց ժպտիս... մեկո՞ւն գեթ...
Իսկ քեզ համար ես արցունքով կ՝ազոթեմ,
Դու չ՝ես շնորհեր նայվածք մ՝ինձ հուր աչերեդ։

Արդյոք էա՞կ մ՝ես թե երկնի զըվարթուն,
Կը նախանձին փայլիդ վրա վարդ, լուսնակ.
Զայնիկդ ապշած լըսելով քաղցր ու թրթրուն՝
Նոճերու մեջ կ՝սրգա լռիկ լուսինյակ։

Մնեի իցի՞վ թ՝հևացող հով մ՝անուշիկ,
Եվ գգվելով երազք ճակտիդ այդ անսուգ՝
Տայի շունչըս շուրթերուդ մեջ ես հուշիկ,
Լոկ սրբելով՝ եթե շողար աչքդ արտասուք։

Պարտեզդ իցի՞վ թե փթթեի վարդ լացող,
Եվ երբ գայիր այգուն շաղին ժպտով պերճ՝
Գունովս ներկել այտերդ, թափել գոգդ իմ ցող,
Թոռմեի գիրգ ձեռքդդ տալի կյանքիս վերջ։

Բիսեի ես իցի՞վ թ՝առու մը վըճիտ,
Եվ երբ հուշիկ նստած մատ իմ եզեռքին,
Ցոլանար իմ հայելվույն մեջ քու ժըպիտ՝
Պղտորելով կապույտ ալիքս՝ ցամքեին։

Ա՜հ, իցի՞վ թե լիներ ես ճառագայթ,
Շողշողայի դեմքիդ վըրա վայրիկ մի,
Խաբեի քեզ թ՝ես ավելի գեղազարդ,
Ի՝անուշաբույր մազերուդ մեջ մարեի։

Այլ ո՜չ, անգո՜ւթ, եթե տըվիր մեկուն սեր,
Իցի՞վ թ՝անոր գերեզմանին քարն ինքիմ,
Եվ դու թոշնած գաս շնչե՜լ շուրջս... արտասվե՜լ...
Քեզ հըպելու համար հարկ լոկ գալ շիրիմ...

1867

ՍԻՐԵՑԻ ՔԵԶ

Շաղի, շողի ժամք էին.
Վարդից հրդեհ կար յ՝երկին՝
Փոխան ամպոց հուր հյուսքի.
Տեղա՜ր մարգրիտ և ոսկի։

Թավուտքի մը խոր ծաղկոտ
Ընկողմանած նըվաղկոտ՝
Կը հևայիր դու տժգույն,
Ամրան սյուքի մը հանգույն։

Աչերդ սիրո Ատրուշա՜ն...
Եվ մատներովդ գերթ շուշան՝
Կը փետտեիր ծաղիկ մի,
Հառած շողից աչքդ երկնի։

Հիանայի թե ի՞նչպէս
Փետտել թերթեր վարդին վես՝
Եվ թափթըփել քու գիրգ գիրկ
Կը զորեին մատներդ գիրգ։

Եվ նըվաղկոտ այդ աչեր
Նըշուլեին նո՜ր եթեր,
Եթեր մ՝աստեղց ուր փոխան
Հրաշեկ սլաքք կը շողան։

Ըրիր աչացդ մեկ կայծին
Եվ մեկ վանկիդ գ՝իս գերին,

Շղթայեցիր զ՝իս, անգո՛ւթ,
Նշույլներովն վեհ հոգվույդ։

Թո՛ղ սիրտս, ինձմե գնա հեռի,
Ջ՝ուզեմ հոգվույս թագուհի
Քեզ, որուն կուրծն վարդի թերթ,
Այլ կըրանիտ սիրտն է գեթ։

Դու, որ գիտես լոկ բուրել,
Գիրգ սրտերու վերք փորել,
Եվ կը սիրես, երբ կարի՞
Քեզ պաշտող սիրտն արյունի։

Թավուտքի մը շուք նըստեմ
Երբոր մենիկ արտասվեմ,
Հոն ես դու, կը գտնես զ՝իս,
Տերևներե՞ն կը խոսիս։

Երբ առավկին մեջ փաղփուն
Կ՝ուզեմ մոռնալ դեմքըդ, դուն
Դարձյալ հոն կը գտնես զ՝իս,
Ալիներե՞ն կը ժպտիս։

Երբ կը փախչիմ ժայռ ու սար՝
Ջախջախել սիրտս և քընար,
Հովին մեջեն միշտ մնչես՝
Թե դու բնավ զ՝իս սիրած չ՝ես։

Գրկեմ սրտովս արդ ցուրտ հող,
Ի՝ալ չը դիպիմ քեզի թող.
Կույս մ՝է նաև գերեզման...
Կա՞ խորունկ սիրտ մ՝անոր նման...։

1869

ՍԻՐԵԼ

Բույլ մը նայվածք, փունջ մը ժըպիտ,
Քուրա մը խոսք դյութեց իմ սիրտ։

Ես ուզեցի լուռ մենանալ,
Սիրել փըթիթք, խորշեր թավուտ,
Սիրել կայծերն երկնի կապուտ,
Առտըվան շաղն, իրիկվան բալ,
Ճակատագրիս սև գիծ կարդալ,
Խոկալ, սուզիլ, ըզմայլիլ սուտ։

Ո՜հ, խուրձ մը վարս, եդեմ մը շունչ,
Շրջազգեստ մը շրշեց իմ շուրջ։

Ես ուզեցի լոկ ու մինակ
Սրտակցիլ ջինջ վըտակին հետ.
Հիշատակի չ՝ունի նա հետ,
Սի՜րտ մ՝որուն մինչ սուզիմ հատակ,
Գտնեմ զ՝իս հոն տժգույն, հստակ,
Գաղտնի՜ք մ՝ունի— այն՝ անթիվ վետ։

Եթեր մը տրոփ սրտի լսեցի,
Հծծեց.— կ՝ուզե՞ս սիրտ, ե՛կ ինծի։

Ես ուզեցի սիրել զեփյուռ,
Որ երկնքեն թռչի բեկբեկ,
Նա չը սիրեր խոցել երբե՛ք,
Հոգի՜ մ՝որուն գաղտնիքն է բույր,
Գիտե շոյել երազներ բյուր,
Երկնի բույրն յ՝ուշ կ՝ածե առ հեր։

Ո՜հ, փունջ մը բոց փըսփըսաց ինձ,
— Կ՝ուզե՞ս պաշտել հոգի մ՝անբիծ։

Ես ուզեցի քընարով մի
Լոկ սիրել հոս, հոս դալկահար,

Պաշտել, գրկել մեկայն քընար,
Սիրող էակ ճանչել զ՝անի,
Ըստ իմ քրմաց լարել ազի,
Եվ սրտակցիլ սիրողաբար։

Նե մոտեցավ հուշիկ, ըսավ,
— Քնարդ է ցուրտ սիրտ և սեղբդ ցավ։

Թոթվեց թևերն հոգիս մոլար,
Ճանչեց ըզնե գեղ ու կրրակ,
Սիրտն անապակ՝ ինչպես վրտակ,
Անմե՛ղ՝ ինչպես սյուք դալկահար,
Հավատարի՛մ՝ ինչպես քընար,
Հրաժեշտ տրվավ կյանքի մենակ։

Բույլ մը նայվածք, փունջ մը ժրպիտ,
Քուրա մը խոսք գյուրեց իմ սիրտ։

1871

ԳՐԾՆԼ

Փունջ մը կնճիռ, բույլ մը կայծակ,
Դժոխք մ՝անեծք խոցեց հոգյակս։

Ես ուզեցի պաշտել ըզնե,
Սիրել ժպիտքն՝ փրթի՛թք անհուն,
Սիրել աստղերն սև աչերուն
Եվ այն խոկումն, որ մրթագնեն
Պայծառ ճակատը՝ այն ամպն է
Որ կ՝ըշպարն դեմքը լուսնուն։

Դիրքը մը սուգ, անդունդ մ՝հառաչ՝
Հուզեց ներս հոգին ու լանջ։

Ես ուզեցի միշտ քովն ըլլալ,
Մըտիկ ընել թնդյուն սրտին,

Շնչել, խրմել ներս հոգին,
Եվ շոշափել լոկ ձյունափայլ
Սոծորակին վրա ծալ ծալ
Թափող վարսից ալյակք ծրփին։
Օվկեան մը տրտունջ լսեցի.
«Ջ՝իս կը նեղե՞ս»— հծծեց ինծի։

Ես ուզեցի քընար մ՝ըլլալ
Ներս ձեռքին տակ հնացող,
Ներս հոգվույն խորն հիացող
Թեթև պատկեր մ՝ըլլալ շարժյալ,
Մոռնալ զիս, լոկ ըզնե՛ խոկալ,
Կ՝վառե երազ մ՝որուն մեկ շող։

Ամպրոպ մը սաստ ցնցեց հոգիս,
Գոչեց — սիրել չ՝ես կրնար զ՝իս։

Ի զո՞ւր սիրտս մրխաց առջին՝
Խնկարկելու սիրտն անապատ.
Ցուցի իրեն ճակատս գունատ,
Կուրծքս գոգած, մարն իմ աչքին,
Ի զո՞ւր շուրթերս դողդոջեցին,
Ջ՝ինքը սիրելս հծծեցին յայտ։

Նե հեռացավ ինձմե, ըսավ,
— Բա՞վ սիրեցի քեզ, մնաս բարյա՞վ։

Որոտացին խոկմանցս ամպեր,
Կայծակնահար ըրին հոգիս,
Մոխիր դարձան երազներս յ՝իս,
Ճակատագիրս խնծղաց ի վեր,
Խորշ մը կար որ զ՝իս չը ծաղրեր,
Այն լուռ փո՞սն էր գերեզմանիս...։

Փունջ մը կնճիռ, բույլ մը կայծակ,
Դժոխք մ՝անեծք խոցեց հոգյակս...։

1871

ԼՃԱԿ

Ինչո՞ւ ապշած են, լըճա՛կ,
Ու չ՚են խայտար քու ալյակք,
Միթե հայլվույդ մեջ անձկավ
Գեղուհի՞ մը նայեցավ։

Եվ կամ միթե կըզմայլի՞ն
Ալյակքդ երկնի կապույտին,
Եվ այն ամպոց լուսափթիթ,
Որք նըմանին փրփուրքիդ։

Մելամաղձոտ լըճա՛կդ իմ,
Քեզ հետ ըլլա՛նք մըտերիմ,
Սիրեմ քեզի պես ես ալ
Գրավվիլ, լըռել ու խոկալ։

Որքան ունիս դու ալի՝
Ճակատս այնքան խոկ ունի,
Որքան ունիս դու փրփուր՝
Սիրտս այնքան խոց ունի բյուր։

Այլ եթե գոգդ ալ թափին
Բուլլքն աստեղաց երկնքին,
Նըմանիլ չ՚ես կրնար դուն
Հոգվույս՝ որ է բոց անհո՞ւն։

Հոդ աստղերը չ՚են մեռնիր,
Ծաղիկներն հոդ չ՚են թոռմիր,
Ամպերը չ՚են թրջեր հոդ,
Երբ խաղաղ եք դու և օդ։

Լըճա՛կ, դու ես թագուհիս,
Ձի թ՚հովե մ՚ալ խորշոմիս,
Դարձյալ խորքիդ մեջ խըռով
Ջ՚իս կը պահես դողդղալով։

Շատերը զ՚իս մերժեցին,
«Քընար մ՚ունի սոսկ»— ըսին.
Մին՝ «դողդոջ է, գույն չ՚ունի»,—
Մյուսն ալ ըսավ — «Կը մեռնի՞»։

Ոչ ոք ըսավ — «Հե՞ք տըղա,
Արդյոք ինչո՞ւ կը մըխա,
Թերևս ըլլա գեղանի,
Թե որ սիրեմ, չը մեռնի»։

Ոչ ոք ըսավ — «Սա տըղին
Պատռե՛նք սիրտը տրտմագին,
Նայինք ինչե՞ր գրված կան...»
— Հոն հրդեհ կա, ո՛չ մատյան։

Հոն կա մոխի՞ր... հիշատա՛կ...
Ալյակքդ հուզի՛ն թող, լըճա՛կ,
Ձի քու խորքիդ մեջ անձկավ
Հուսահատ մը նայեցավ...։

1871

ԹՐՔՈՒՀԻՆ

Երեկո է. բոցավառ է հորիզոն.
Կառք մը կ՚անցնի դագաղի պես համբընթաց,
Գեղուհի մը ընկողմանած տրուփե հոն,
Վերջալույսի աղջի՞կ մ՚է սա, ո՛վ Աստված.
Եթե նայի՛,
Կ՚ըսես — հի՛մա կը մարի։

Մեղրամոմե անդրիանդի մ՚է հանգույն.
Ի՞նչ դալկահար... կարծես հաջաղը վառե
Պատան մ՚է նուրբ ներա վարդիցը տժգույն,
Աստված ըզնե զույգ մ՚աչերովն կը վառե.
Եթե ժպտի՛,
Կ՚ըսես — ո՞հ, հի՛մա կ՚անցնի։

Նայիլ կ'ուզե, բայց ա՜վելի կ'նրվիզի,
Սիրտը խունկի պես կը մրխա՝ սիրավառ,
Նե շողերու, բույրերու է թագուհի,
Խոնջ թիթեռնիկ մ'որ կը խնդրե ծաղիկ թառ.
Եթե շարժի՛,
Կ'ըսես — հի՛մա կը թռչի։

Լանջն է հուզյալ Օվկեանի մը նման.
Կ'ուզե սիրե՛լ... համբույրի մ'հետ նրվազիլ,
Մաշիլ, խամրիլ, խոնջած ընկնիլ գերեզման,
Քամել սիրո կրակե բաժկին հուսկ կաթիլ.
Եթե շիկնի՛,
Կ'ըսես — հի՛մա կը բռնկի։

Սրտի մեղո՜ւ, ինչպես կոչեց Լամարթին,
Որուն ծրծած ծաղիկը՝ սիրտ, մեղրն է սեր,
Ես կոչեմ զնե կո՛ւյս, որուն սիրտն է երկին
Անհուն սիրտ, որ հորիզոն չ'ունի դեռ.
Եթե խոսի՛,
Կ'ըսես — հի՛մա կը հատնի։

Նե կը վառի, մի՜շտ կը վառի, չը հատնիր
Տրնանկ կրնոջ տաճարն վառած ճրագին պես,
Աստղերու նման գիշեր սիրե՝ փողփողի՛լ.
Կրակ մ'է փրթած կողեն սիրտ բոցագես...
Թե իսկ մեռնի՛,
Կ'ըսես — հի՛մա կը ծընի։

1871

ՆԵՄԱ ՀԵՏ

Համբույր մ'առի ներանե,
Համբո՜ւյր մ'անհուն դարերի,
Որ կարմիր շողք մարերին
Հորիզոնին վերեն։

Զեռքս տարավ կուրծքին՝ հոն
Սիրտ երկին մ'ուրտատար։

Թոչենցա գիրկն ես իբրև
Համբույր մ'անհուն, դալկահար։

Նե զ'իս իր քով նըստեցուց
Գորգի վրրա դալարյա.
Հուսկ ճաճանչ մը կ'պլպլար
Ներա դիմացը վրրա։

Թոթովեցի... դողացի...
Առի համբույր անհամար.
«Խոսի՛նք» ըսավ — ո՜հ, խոսի՛լ,
Հատնիլ է լոկ ինձ համար։

Աչերու բոցն երբ մարի,
Դաղրի տըրոփն երբ սրափն,
Լոկ այն ատեն հարկ է որ
Անգոր շուրթերը խոսին։

Հուր հորիզոնն մարեցավ,
Երկինքն աստղեր փթթեցան,
Համբույր մ'առի դարձյալ ես
Հ'անուն աստեղց ցիրուցան։

Նե թողուց որ վարագն ազատ
Մյուքը դեպ յ'իս բերելով
Միշտ հովահրե բըռընկած
Ճակատս զով բույրերով։

Ո՜հ, այս ժամը ոսկեզօծ
Անշուշտ սահած, թրռած է
Ճակատագրին անողորմ
Սև ձեռքերեն երկաթե։

Մեր համբույրներն պահեցին
Տերևները խարշափամբ,
Եվ շողերու տրվին շուք
Աստղերն երկնից այն անամպ։

Զեռք վերցուցինք աստղերուն,
Սեր ուխտեցինք իրարու,
Դողդըղացին աստղերն ալ
Մեր երդումեն ահարկու։

Լըսեց երկինք մեր ջերմ ուխտ,
Աստղեր սրսկեց ի գորով,
Բնությունն եղավ պըսակիչ,
Մեզ պըսակեց աստղերով...։

1871

ՏՐՏՈՒՆՋՔ

Է՜հ, մընաք բարով, Աստված և արև,
Որ կը պըլպըլաք իմ հոգվույս վերև...։
Աստղ մ'ալ ես կ'երթամ հավելուլ երկնից,
Աստղերն ի՞նչ են որ, եթե ո՛չ անբիծ
Եվ թշվառ հոգվոց անեծք ողբագին,
Որք թըռին այրել ճակատն երկնքին.
Այլ այն Աստուծույն՝ շանթերո՜ւ արմատ՝
Հավելուն զենքերն ու զարդերն հըրատ...։
Այլ, ո՜հ, ի՞նչ կ'ըսեմ... շանթահարե զ'իս,
Աստվա՛ծ, խոկն հըսկա, փշրե հյուլեիս,
Որ ժպըրհի ձգտիլ, սուզիլ խորն երկնի,
Ելնել աստղերու սանդուղքն ահալի...։
Ողջո՜ւյն քեզ, Աստված, դողդոջ էակին,
Շողին, փըթիթին, ալվույն ու վանկին,
Դու որ ճակտիս վարդն և բոցն աչերուս
Խըլեցիր թրթռումս շրթանց, թռիչն հոգվույս,
Ամպ տըվիր աչացս, հևք տըվիր սրտիս,
Ըսիր մահվան դուռն ինձ պիտի ժպտիս,
Անշուշտ ինձ կյանք մը կազմած ես ետքի,
Կյանք մ'անհուն շողի, բույրի, աղոթքի.
Իսկ թե կորնչի պիտի իմ հուսկ շունչ
Հոս մառախուղի մեջ համր անշըշունջ,
Այժմեն թո՛ղ որ շանթ մ'ըլլամ դալկահար,

Պլըվիմ անվանդ մռնչեմ անդադար,
Թող անեծք մ'ըլլամ քու կողդ խըրիմ,
Թող հորջորջեմ քեզ «Աստված ոխերիմ»։

Ո՜հ, կը դողդոջեմ, տժգույն եմ, տժգո՜ւյն,
Փըրփըրի ներսըս դըժոխքի մ'հանգույն...։
Հառաչ մ'եմ հեծող նոճերու մեջ սև,
Թափելու մոտ չոր աշնան մեկ տերև...։
Ո՜հ, կայծ տըվե՛ք ինձ, կայծ տըվե՛ք, ապրի՜մ...
Ի՜նչ, երազե վերջ գրկել ցուրտ շիրի՜մ...
Այս ճակատագիրն ի՜նչ սև է, Աստվա՛ծ,
Արդյոք դամբանի մրուրո՞վ է գծված...։
Ո՜հ, տըվե՛ք հոգվույս կրակի մի կաթիլ,
Սիրել կ'ուզեմ դեռ ւ՝ապրիլ ու ապրիլ.
Երկնքի աստղե՛ր, հոգվույս մեջ ընկե՛ք,
Կայծ տըվե՛ք, կյա՜նք՝ ձեր սիրահարին հեք։
Գարունն ո՛չ մեկ վարդ ճակտիս դալկահար՝
Ո՛չ երկնի շողերն ժըպիտ մ'ինձ չ'են տար։
Գիշերն միշտ դագաղս, աստղերը՝ ջահեր,
Լուսինն հար կուլա, խուզարկե վըհեր։
Կ'ըլլան մարդիկ, որ լացող մը չ'ունին,
Անոր համար Նա դըրավ այդ լուսին.
Եվ մահամերձն ալ կ'ուզե երկու բան,
Նախ՝ կյա՜նքը, վերջը՝ լացող մ'իր վըրան։
Ի զո՜ւր գըրեցին աստղերն ինծի «սե՜ր»,
Եվ իզո՜ւր ուսուցց բուլբուլն ինձ «սիրել»,
Ի զո՜ւր սյուքեր «սե՜ր» ինձ ներշնչեցին,
Եվ դիս նորատի ցուցուց ջինջ ալին,
Ի զո՜ւր թավուտքներ լըռեցին իմ շուրջ,
Գաղտնապահ տերևք չ'առին երբե՛ք շունչ,
Որ չը խըռովին երազքս վըսեմ,
Թույլ տըվին որ միշտ ըղնե երազեմ,
Եվ ի զո՜ւր ծաղկունք, փըթիթնե՜ր գարնան,
Միշտ խնկարկեցին խոկմանցըս խորան...
Ո՜հ, նոքա ամենքը զ'իս ծաղրեր են...
Աստուծո ծաղրն է Աշխարհ ալ արդեն...։

1871

ՉՂՋՈՒՄ

(Օր մը վերջը)

Երեկ երբ պազ քրտանց մեջ
Սև մըրափ մը կ՚առնեի,
Եվ թոշնած զույգ մը վարդեր
Այտերուս վրա կ՚այրեին,
Անշուշտ ճակտիս վրա մահու
Դալկութիւն մը կը պլպլար,
Եվ մահու թռիչ մ՚ունեի,
Լրսեցի մորս հեծեծում...
Բացի աչերքս խոնջած,
Մորքս արտասրը տեսի՞...
Ո՞հ, ճշմարիտ գոբովի
Մարգարիտներ սուտ ու կեղծ...
Մայրքս անհո՞ւն ցավ մ՚ուներ,
Այն սև ցավը ե՞ս էի...
Ա՞հ, գըլուխքս փոթաբկեց...
Այս սև հեղեղն տըվի դուրս...
Ո՞հ, ներե՛ ինձ, Աստված իմ,
Մորքս արտասրը տեսի...։

1871

ՉԵՆ ՊԱՇՏՈՒՄ

Ճառագայթի ու վարդի
Փթթումներով զեհատաճծ՝
Ես չը սիրեմ սա գեմքը
Սիրո ժպտով մը օծած։

Ես չը սիրեմ, երբ կույսի մ՚
Աչերը ղ՚իս բուրմունքն՝
Ջերթ հուր ամպոց զույգ մը հյուս
Հոնիցը սակ մեղմարեն։

Գիսաստղի պես հերաբեակ՝
Ես չը սիրեմ սա վրճիտ
Կույսն, ոյր՝ գեմքեն կը փթթին
Լուսնի դալուկն ու ժըպիտ։

Ես չը սիրեմ՝ հանդիպիմ
Երբ կույսի մը հեզանազ,
Որ եղեմ մը կը բուրե,
Կ՚վառե երկինք մը երազ։

Ես չը սիրեմ սա կապույտ
Զույգ մ՚երկինքներն* գինովցած,
Ոյր մեկուն մեջ պաշտի նա,
Եվ մյուսին մեջ ալ Աստված։

Ես չը սիրեմ սա օտար
Ժըպիտները հուսաշող,
Որք ծաղիկներ են սուտ սոսկ
Սրտի անդունդը ծածկող։

Ես կը պաշտեմ ղ՚իմ Պ...
Ինձ կը բավե իր սրտին
Մեկ ճառագայթը միայն,
Եվ մեկ վարդն իր ժըպիտին։

Թեև սև աչքն հեղեղեն
Անթիվ աստեղց միշտ բույլեր՝
Իր սև հոնից շուքին տակ՝
Ջ՚որս ուր օրն է Նա գրծեր։

Լուսինը ո՛չ նեղա վարդն,
Եվ ոչ ալ վարդը ունի
Ճառագայթումը ներա,
Ճառագայթո՛ւմ սիրուդի։

---

*՝ Աչքի նմանությամբ առնված>

Ես դողդողամ իր վրա,
Նե իմ վրա գորովի,
Իսկ թե մոռնա՞ զ'իս օր մը...
Ա՜հ, այն օրը քա՜ր կտրի...։

1871

ԿՈԿՈՆ — ԾԱՂԻԿՔ ԿՈՒՅՍԻՆ

Լուսափրթիթ ւ'անարև
Զույգ մ'աշխարհներ ես տեսի
Ճառագայթից, բույրերու
Եվ փափկության ու լույսի։

Ո՜հ, չ'է՛ նոցա պես անբիծ
Իտալական վեհ երկին,
Եթե չ'ունին աստեղց բույլ,
Ամպ ու կայծակ ալ չ'ունին։

Ո՜հ, հավիտյան միշտ կոկոն
Կարծես զույգ մը ծաղիկ են,
Բայց նման կույս սրտերու՝
Կարի քաղցրը կը բուրեն։

Ձեռք կարկառել ս'աշխարհաց
Ակնախրտիղ ու անտես՝
Հանդուգն ըլլալ է լոկ քան
Ջ'աշխարհակալն Արտաշես։

Ի՞նչպես արդյոք կերտեց Նա*
Լուսագունդներս այս դողդոջ,
Նա աշխարհի քան ըզկերտ՝
Մտածեց ոգի տալն կընոջ։

Կը դողդողան իմ շուրթեր
Հրպիլ սիրո այդ խրոով

<* Այսինքն Աստված։>

Կոկոն — ծաղկանց՝ խամրելու,
Արատելու երկյուղով։

Այլ որ շուրթերն հանդգնի
Հրպել հրաշից այդ լույսե,
Կ'երդնում յ'աշխարհն աստեղաց,
Թե նա դա՜ր մը կը ծրծե։

1871

ՍԵ՜Վ, ՍԵ՜Վ

Երբեմն հոգիս աստղի մը բոց
Եվ թիթեռնի մ'ուներ թևեր.
Վերջալույսի նման ամպոց
Երազներ հո՜ւր ճակատս վառեր։

Արդ սառույցներ դառն արտոսրի
Կը քարանան կուրծիս ներքև,
Եվ բարդք ամպոց սևաթորմի
Կ'ուզեն խեղդել սիրտս ու արև։

Հազիվ քանի մ'օրերն կյանքիս
Ոսկեզօծեց իմ բախտը վատ,
Որո՜նք եղան լոկ օվասիս
Մեղմող կյանքիս դառն անապատ։

Մենանայի օրեր ցրվերջ
Երբեմն՝ հովտի ծաղկանց ւ'երկնի
Ջյունափրթիթ ամպերուն մեջ,
Կյանքի մրրուրն ես թափեի։

Ծրծեի սե՜ր, ծրծեի կյա՜նք,
Մինչ վերջալույսն կը հրրահրեր,
«Մնաս բարովի» սա կարմրորակ՝
Տրխուր կրրակ ւ'երկնի բոցեր։

Ունեի ես երբեմն առատ
Վարդեր, առատ աստղեր նույնպես,
Ճակատագիրս սև տեսավ շա՜տ,
Բրցուց, քաղեց ղ՝անոնք սրտես։

Ունեի ես իմ սիրուհին,
Որո թեպետ աչքն էին սև,
Սակայն սրգալ չը գիտեին...
Հրեշտակ մ՝էր նե, հրեշտակ անթև։

Սև երազ մը օր մը դողդոջ
Մըղեց զ՝իս սև՛ փոսի մ՝առջին,
Ուր քար կտրած՝ սիրտ ի թնդոջ՝
Դագաղի մ՝աչքս հառած էին։

Ավա՜ղ ներա վարդքն ու աստղերն
Լուռ պիտի տար կուլ այն սև փոս,
Յուրտ համբույր մը առի ճակտեն,
Ներա վերջին ձոնն էր ափսո՜ս։

Եվ լըսեցի յայնժամ՝ թի թի
Սև սև հողեր կոշտ թնդեցին
Տըխուր քողքին վըրա փայտի...
Դըժոխք մ՝անեծք այն սև՛ օրին։

Այն ցուրտ հողերն յ՝ իմ դատարկ սիրտ
Լըցուցին, փոան գոցելնուն հետ՝
Եվ այս աշխարհն ալ անժըպիտ
Գոցեցին իմ առջև հավե՜տ...։

1871

ԱՌ ՄԱՅԻՍ

Ծաղիկներու մայրի՜կ դու կույս՝
Ո՜վ իմ Մայի՜ս ծաղկահանդերձ,
Սա երիվներանս փաղփոքդ հանդերձ
Է՞ր չը բերիր Ծաղիկն հոդվույս։

Ո՜հ, միթե դա՞ այլ գըվարթուն
Մայիս հոգվո Ծաղիկներու.
— Նա փողփոդն վերև գլխու,—
Մի գոլկահար Մայիս անհուն։

1871

ՄԱՆԻՇԱԿ

Ո՜վ մանիշա՜կ, մանիշա՜կ,
Ինչո՞ւ այդպես գլխիկոր
Նայիս հողին սրգավոր...
Ո՜հ, ինչի՞ այդ նըշանակ։

Միթե դու կո՞ւյս մը տեսար,
Որուն աչաց քով կապուտ՝
Ըզքեզ գըտար այնչափ մութ,
Որ կը սրգաս սևահար։

Եթե դու ալ վարդին պես
Ունենայիր դույզն բոսոր,
Կը շիկնեիր, ինչպես որ
Շիկնեցավ այն վարդը վեռ,

Երբ տեսավ օր մը ներա
Վարդեքն անբիծ այտերուն։
Շուշանին պես դալկությունն
Եթե ըլլար քու վըրա,

Դժգունեիր որպես նա,
Ինչպես որ օր մը շուշան
Դժգունեցավ աննըշան՝
Տեսավ ձեռներն երբ ներա։

Եվ դեռ ըսե՞մ... օր մ՝երկին
Ամպոտեցավ... է՞ր արդյոք...
Ներքոր կ՝ըներ նե աղոթք,
Վերն հառած աչքն ու հոգին։

1871

ԻՄ ՀԱՆԳԻՍՏԸ

Եթե մոտի հողակույտիս,
Թուխ — մոխրագույն ե՛աչեր ներա
Թե ջուխտ մարգրիտ թափին իմ վրա,
Չը ցավագնիր ոսկերոտիս.
Ա՛յս իմ հանգիստ.
Իմ լրանիստ
Ա՛յս օթևան
Խաղաղության։

1871

ՆՈՐ ՍԵՎ ՕՐԵՐ

Մինչ բռնության՝ ընկա՞ն արյան դարերը,
Աշխարհ մը կա արցո՞ւնք թափող սարերը,
Արյամբ պղտո՞ր դեռ գետերուն ափունքը.
Չը դադրեցավ դեռ այս երկրին սև սուգը.
Ավերակույտն այս ահարկու,
Աշխարհ մոխրոց ու նոճերու։

Հայ դյուցազանց, որ հոն ընկան ի վաղուց՝
Ոսկերոտիքն՝ արմատնե՞րն այն վըրիժուց
Ա՜հ, դեռ բողբոջ մը չ՚արձրկած հո՞ղ դարձան...
Ուրեմն հիմա աղիք չ՚ունի Հայաստան...
Ա՜յ, դալկահար դու հայրենիք...
— Եվ դեռ Քրդի՞ն ալ խոնարհինք։

Մառախուղ են հագեր դաշտքն ու լերինքը,
Չը գեղգեղեր Հայ հովվուհվույն սըրինգը,
Հայուն համար չը փալփըլիր աստղիկը,
Արցունքներով թոռմեր հոգվույն ծաղիկը.
Դադրեր անմեղ խինդ, թինդ ու պար,
Շողա ազա՞տ Քրդին տապար։

Դողդոջ մտնե առագաստը գիրգ հարսը,
Արտասվաթոր՝ դեմքին ծածկած հույլ վարսը՝
Որ չ՚ըլլա թե հանկարծ սիրո մրմունջը
Խափանե վատ Քրդին տոփոտ մըռունչը.
Սերը փեսին արյամբ կարմրի,
Հարսը Քրդին կ՚երթա գերի...։

Մի՛շտ կը ցանե Հայն, չը հնձեր... անոթի՞...
Իր դալկահար դեմքեն երկու շիթ կաթի,
Արտոսր ու քիրտ միանգամայն... ո՞վ Աստված.
Նա ճաշակե տրտմած սրտով ցա՛վ ու հաց.
Այս տարաբախտ ազգն է Հա՛յը,
Մեր արյո՞ւնը, մեր եղբա՞յրը։

Ա՜հ, ոտնակոխ Հայուն սիրտը և տաճար
Հրացանն յ՚ուս սա կոշտ Քրդին անդադար,
Եվ մեր ներսը չ՚եռա՞ր կարմիր մեկ ալին
Կամ մեկ փրփուրն հայրենյաց սուրբ երակին,
Որ սառույցի գերթ որդիներ՝
Մեր աղիքները չ՚ենք թոթվեր։

Ի՞նչ սիրտ է այս, որ հոս գամեր է Աստված,
Մինչ չը սիրեր նա հայրենիքը ցաված...
Ջ՚ունի ներսը Հայն իր նախնյաց տըրոփը,
Լըքե՞ր է զ՚ինք ճակատագրին Սերոբը.
Երես դարձուց Հայն սուսերեն,
«Սև» ժառանգեց լոկ պապերեն։

Սառե աչեր, քարե լեզու, ա՞յս մընաց
Բյուր փառքերեն մեր գոռ ու պերճ հայրենյաց,
Սևագըլուխ խումբ մը ագռա՞վ մընաց լոկ՝
Կամ խումբ մը կույր խըլուրդ՝ ըստրո՞ւկ փառքի սոսկ.
Ա՜հ, այն արծիվ ժողովրդեն,
Որ հարվածվի արդ կոշտ Քրդեն։

Ի՞նչ, սև ձեռքեր հըպին վրճիտ ճակատին
Հայ կուսիկին նըվիրական լաչակի՞ն,

Դրժոխք մը տաբփ թոշնեն վարդը կուսութեան,
Կարծես ծաղիկ մը կոխկռտեն — ղ՝այս կըզգան,
Ինչպես որ Հայ մը մորթեն,
Կարծեն թե հավ մը մորթեն։

Է՜հ, մի՛ վախեք, ասեղ մ՝անգամ պետք չ՝է մեզ,
Այլ հայրենի սոսկ ըզգացում մ՝աղեկեզ.
Ժանգոտ սուր մը, պատռած դրոշ մը թե չ՝ունինք,
Կուրծերնուս տակ տըրոփող սի՞րտ մ՝ալ չ՝ունինք.
Օ՜ն, ատքերնիս զարնե՛նք գետին,
Հայտնե՛նք մեր ցավը ահագին։

Մեր քերց վարդերն և արևներն մեր եղբարց՝
Մեր տաճարաց խաչերն՝ պատի՛վն հայրենյաց
Մենք պահանջենք, բարբարությո՜ւն մեր ազգին.
Ջ՝ա՛յս պահանջե՛նք՝ ղ՝ա՛յս Սուլթանեն տրտագին,
Մեր պատիվն ու Քուրդը կ՝ուզե՛նք,
Եվ կամ նորա գենքին դեմ ելե՛նք։

1871 <Հոկտեմբեր 1>

ԻՄ ՑԱՎԸ

Սարբ տենչերով լոկ ծարաված՝
Ցամաք գոնե՛լ աղբերքն յամայր,
Ցամքի՛լ ծարփ հատակի մեջ,
Ո՜հ, չ՝է այնչափ ցավ ինձ համար։

Ջերմ համբուրով մը գեռ չ՝ապրած
Ես ցաբրտ Ճակատդ գալկահար՝
Հանգչիցունե՛լ հոգն բարեփ,
Ո՜հ, չ՝է այնչափ ցավ ինձ համար։

Դեռ չը պրկած ձակ — փունջ մը
Ժպտե, գեղե, հուրե շաղյալ՝
Գրկե՛լ ես ցուրտ հոգեվարքդ,
Ո՜հ, չ՝է այնչափ ցավ ինձ համար։

Քաղցր երազով մ՝հզդի մրափ մը
Ջ՝անդորրած գլուխս մըրկահար՝
Ննջե՛լ հոգի վերմակի տակ,
Ո՜հ, չ՝է այնչափ ցավ ինձ համար։

Հագնի՛լ հյուղին մուր-անունը,
Ծրծե՛լ նորա մըրուր — օդն հար,
Միշտ ցավի՛լը միանգամայն,
Ո՜հ, չ՝է այնչափ ցավ ինձ համար։

Հեք մարդկության մեկ ոսոր գոս՝
Հայրենիք մը ունիմ թըշվառ,
Ջ՝օգնած անոր՝ մեռնի՛լ աննշան,
Ո՜հ, ա՛յս է սոսկ ցա՜վ ինձ համար։

1871

ՆՎԵՐ ՀԻՇԱՏԱԿԻ
ԱՌ Պ. Հ. ՃԱՆՖԵՍՃՅԱՆ

Ձո՜ղք

Սա խաղաղ Մայր — Օվկիանին,
Ուր փոքրիկներն ավազք ոսկի՝
Մեր եղբայրց վաստականքն՝
Թ՝ելրեն՝ վարգից մեջ ամբոխի
Երբ արևը շողշողե,
Դու իմ սիրտ միշտ հիշե՛։

Թռչունքն մը կանչաչ ու մարդ
Որոց շաղը սիրեինք միշտ
Նստիլ, խաղիլ շրթամբք փոքրիկ,
Ծրծել անհագ թարթու սիրտ,
Երբ տերև մը խարշափե,
Դու իմ մրմունջքը հիշե՛։

Առավոտներն գարնանային,
Ո՜հ, հորիզոնն ալ վարդավառ՝

Յ՚այց ելնելուդ ծաղկած մարգին,
Ուր կը գտնես մորչ չոր մացառ՝
Երբ թռչնիկ մը ճրուվողն,
Դու իմ իղձերը հիշե՛։

Պաղլար-Պաշի ելած ատեն՝
Եվ կամ սա՛րը Զամլըճային՝
Սիրո՛ւն վայրեր ուր միշտ արդեն
Ճեմել հոգիք մեր սիրեին՝
Երբոր զեփյուռ մը փըշէ,
Դու իմ հոգին միշտ հիշե՛։

Եվ առօրյա աշխատանքե
Վաստակաբեկ վերադարձիդ՝
Եվ կամ սիրո արշավանքե
Դարձած ատեն տըրոփ ի սիրտ՝
Երբ հորիզոնն հրդեհե,
Դու իմ կրակները հիշե՛։

Ամրան գիշեր մ՚երբոր գտնես
Աստղերն առատ գլխուդ վըրա՝
Եվ լուսինը լապտեր ընես
Դողդոջ քայլից դեպ 'ի Մոտա,
Երբ շրջազգեստ մը շրշե,
Իմ մաշած սիրտը հիշե՛։

Տրտում նստած դու պատուհան՝
Հառած երկնից այն սևերես՝
Սև մըտածմանց լոկ վառարան
Տժգույն ճակատդ և աչերդ վես՝
Տըխուր կոչնակ մ՚երբ հնչե,
Մըտերմիդ մա՛հը հիշե՛։

1871 <Հոկտ. 6>

Ի ԳԵՐԵԶՄԱՆՆ
ԱՄԵՆԱՍԻՐԵԼԻՎ ՎԱՐԴԱՆ ԼՈՒԹՖՅԱՆԻ

Հեծեծմո՛ւնք

Ո՛հ, երկնքի ժապավեններ՝
Ճառագայթնե՛ր՝ միացուցած
Էին սրտերը մեր միմյանց՝
Մեր սրտերը սիրանըվեր։

Նոքա միմյանցս համար քանի՞
Էին անհո՛ւն բա՛ց մատյաններ,
Հոն ամեն բառ խորք մը ուներ
Իր ներքևը սիրո, ցավի։

Ո՛հ, կը հիշե՞ս, Զամլըճայի
Սարը նստած լո՛ւռ մըխայինք,
Ուր շուք տային մեզի նոճիք՝
Սև հովանոցք վշտահարի։

Ըսթամպոլի կապույտ գոտվույն՝
Վոսփորի ծուփը դիտեինք,
Ուսկից և մերթ զ՚անամպ երկինք.—
Ո՛, ախորժնե՛ր լուռ մեր հոգվույն։

Այն հյուսկենները երկնքին՝
Այն ամպերը ձյունաթորմի՝
Մինչ երեկո, ո՛հ, մի առ մի
Մեր նայվածքը գըրավեին։

Չ՚էինք խոսեր, խոսքն մեր հոգվոց
Անհունությունը կը պղծեր,
Մենք զերթ երկու տժգույն բոցեր
Իրարու մեջ կ՚այրեինք սոսկ։

Մեր հոգիքը նոճիներու
Թուխ թիթեռներ էին տրտում,

Սև՛ ծրծելինք՝ ա՜խ անհատնում,
Նայելինք միշտ երկրա հեռու։

Անհուսությո՜ւն, գերեզմանի
Այդ սև կաթը շատ ըմպեցինք,
Քեզ հափրեցուց այդ ըմպելիք,
Եղար երկնից ժժգույն որդի։

Քու դալուկըդ՝ զիս ցավցուց շա՜տ,
Եվ նայվածքդ վերջին նըվաղ՝
Զ՝որ ուղղեցիր ինծի, ավա՜ղ,
Բևեռացուց յ՝իս հիշատակդ։

Երջանի՞կ ես հոդ թե թշվառ,
Զվարթնո թևով լուր մ՝ինձ ղրկե,
Ա՜հ, այս աշխարհն միշտ տաղտուկ է...
Ցավերու մեծ մայր մ՝է աշխարհ։

Ո՜հ, եթե հոդ ծառի մը շուք
Կա և նորա քով մեկ վըտակ,
Եթե կա հոդ սե՜ր անապակ,
Կան ազատ օդ, ազատություն։

Ո՜հ, կը թոթվեմ ես այս աղտոտ
Զորձն հոգվույս՝ կյանքս՝ մինչ իսկ այսօր,
Հող կը հագնիմ, հո՜ղ սրգավոր...
— Ա՜հ, ուրածնեքա, վա՜ղդան, կա՞ն հոդ...։

1871

ԻՄ ՄԱՀԸ

Եթե ժժգույն մահու հրեշտակ
Անհուն ժպտով մ՝իջնե իմ դեմ...
Շոգիանան ցավքս ու հոգիս,
Գիտցե՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթե ճակտովս արտոսրաղօծ
Զ՝իս պատանի մեջ ցուրտ ձերթ վեմ
Փաթթեն, դընեն սև դագաղը,
Գիտցե՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթե հընչե տրխուր կոչնակ՝
Թրթռուն ծիծաղն մահու դժխեմ,
Դագաղս առնե իր համբը քայլ,
Գիտցե՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթե մարդիկն այն մահերգակ,
Որք սև ունին ու խոժոռ դեմ՝
Համասրփռեն խունկ ու աղոթք,
Գիտցե՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթ՝ հարդարեն իմ հողակույտ,
Եվ հեծեծմամբ ու սրգալեն
Իմ սիրելիքը բաժնըվին,
Գիտցեք որ մի՜շտ կենդանի եմ։

Իսկ անընջան եթե մընա
Երկրի մեկ խորշն հողակույտն իմ,
Եվ հիշատակս ալ թառամի,
Ա՜հ, այն ատեն ես կը մեռնի՜մ...։

1871

ԻՆՁԿԸՍԵՆ

Ինձի կ՝ըսեն. «Ինչո՞ւ լուռ ես»
«Ո՜հ, միթե բառ կամ խոսք ունի՞
Արշալույսը, որ կը բոնկի,
Չի անհուն է այլ՝ ալ ինչ պես»։

1867

Ինծի կ'ըսեն. «Միշտ տխուր ես».—
«Ի՞նչպես չըլլամ, մեկիկ մեկիկ
Թոթափեցան գլխուս աստղիկք...
Արշալույս մը չ'անցավ սըրտես»։

Ինծի կ'ըսեն. «Կրակոտ չ'ես,
Լըճակի մը պես ես մեռած,
Դալկահա՜ր դեմքդ ու հայեցված»։—
«Ո՜հ, հատակն են իմ փրփուրներս»։

Ես ինձ կ'ըսեմ. «Ժամդ է հասեր,
Քու երկրորդ սև մորդ գընա գոգ,
Գերեզմա՜ն, հո՜ն գտնես դու գոգ
Վարդեր, թրթռում, թռիչ ու աստղեր...»։

1871

Ա.

Երեկոյան բալն կը սոզար բարդիլ խավ,
Աստեղազարդ անդունդն հյուսիլ լուռ ու սյավ,
Տըխո՜ւր ըստվեր, զոր կը ձրգեր իր ետև
Լուսափրթիթ օրն սիրայնոց կարճատև։
Կը նըշմարվեր հազիվ երկնի կապուտակ
Գմբեթին խոր փալփլող ս'ալվույն ջինջ հատակ
Անդրադարձող գիշերվան աստղն անդրանիկ,
Զոր գրկեցին շուտ Վռափորյան ջինջ ալիք։
Մառը մտնող արփվույն մարեր հուսկ շառայլ
Սառնամանուտ սարերու վրա քայլ առ քայլ,
Ինչպես հյուծյալ կույսի մ'ակնարկ առ դամբան,
Ուր պարեն ցուրտ ծիծաղք սիրո դառնության,
Ինչպես և իմ դյությալ ակնարկս առ արտ,
Զոր մըթագնեց մառախուղ մի նախանձոտ,
Ի՞ալ չը կրցի ընդնշմարել էակն ան,
Զոր գգվեին ճանճանչ, զեփյուռ իրիկվան.
Հողմածածան իր շրջազգեստն ու հոպոպք

Դեղձան վարնից գիրգ ուլան շուրջ ոսկի ծոպք,
Կարծես ծաղիկ ե՞ր երապի հիասքանչ,
Կը կոխկըռտեր այն ծաղկալից մարգաց լանջ.
Թողե՛ք կոխել զի կը փթրթե ավելի.
Երբոր հովիկն իր այտեն գույն գեղանի
Եվ իր անբիծ լանջեն առած քիչ մը հոտ՝
Տանի սփռե անապատներն ավազոտ,
Ի՞ահա փթթին ծաղիկներ բլուր առավել.
Անոր համար ի՞նչ է ծաղիկ փթթեցնել,
Մինչդեռ սիրո կես դիակներ կը հառնեն՝
Երբ սև աչքեն սըլաք մ'ուղղե բոցեղեն։

Լուսինն արդեն կը քողազգեր՝ պըճներ զինք
Նուրբ ամպիկով, ուսկից ուսան թրքուհիք
Ծածկել իրենց դեմքն հաջաղով նրբաթել,
Անոր նըման տժգույն ըլլալ և դյութել։
Լուսի՜ն, գրտիր լույս ցողելու ցածուն հյուղ,
Ուր գեթ ցամքած է կանթեղին առկայծ յուղ.
Մի՜, մի՜ սորվիր գաղջ արևեն ձըմեռվան
Մոռնալ հյուղն, ուր ամայի է վառարանն,
Եվ լոկ սրտերն հոն կը մրխան հուսահա՜ռ...
Ծագե հյուղին այն՝ բանաստեղծն ուր աղքատ
Ինք լույս, կըրակ ոչ մեկն ունի գրրելու.
Սարն իր աստեղց թո՜ղ, դըղյակն ալ ջահերու,
Գընա՜ ցողել լույս տընակին այն ցածուկ,
Ուր մայր մը դիրկն առած կայտառ մի մանուկ՝
Ցույց տալ կ'ուզե քեզ Աստուծո զերթ պատկեր,
Դու որ միայն սիրահարաց ես լապտեր։

Տերևներուն մեջեն արծաթ լի լուսինն
Կը դիտեի՝ ինչպես որ դեմքն հարս կուսին՝
Երբ կը ծածկե քողն հիմենյան ոսկեթել,
Բայց ոա վարդի վոխան գիտե լույս փթրթել,
Ալ աստղն աղոտ և կարծես թե ավելի
Երկընքի լուրթ խորը առազած կը փալփլի,
Եվ վեղարուն ալ կը մաքի որ դեռ հոն
Հրդեհի նման բոցավազեր զհորիզոն։

Եվ դուք՝ կրա՜կք սիրտ, մարիք շուտ և դուք,
Տևեք ինչպես վերջալույսն այս բոցաշուք...։
Արդյոք արևն այսօր ո՞րքան սիրաբույր
Կուսից լույս դեմքն այրեց, ուսկից մեղմ համբույր
Քաղել դողաս, կը վախնաս թե կը թոշնի
Իր այտերուն վառ վառ վարդեր գեղանի։
Թավուտք այսօր շուքերնուն մեջ առանձին՝
Խորհրդավոր ի՞նչ փրսփրսուք լրսեցին,
Ի՞նչ խոստումներ, ի՞նչ մրմունջներ սրտմաշուք,
Իսկ դո՞ւք, մացա՜ռք, հովանոցա՜կք, ա՜հ, իսկ դուք.՞.՞.՞։
Ո՜հ հովանի՜ք, թավո՜ւտք, խորշե՜ր անմարդի՝
Ուր դայլալիկ թռչնո, խորշյուն սաղարթի
Եվ երբ լրսվի շրջազգեստի մը շրշյուն
Զոր տերևոց վրրա՝ սրփռե զորս աշուն,
Երբ շուքին տակ կույս մ՝առանձին ընե մանչ,
Եվ տերևոց ետև դողամ անոնց նման,
Որ չըլլա թե դիպիմ աչքին բոցեղեն,
(Պե՞տք է դողա միթե տերևն արևեն)
Երբ ծիծառնուկն ինձ հետ հեծե աղեկեզ,
Ո՞րչափ ատեմ քաղքին ժխորն, սիրեմ Զեզ։

(Հիվանդությանս պատճառով ընդհատված)

1871

ԱՅԼ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* * *

Ահա սրանայ օրն երջանիկ՝
Ի յիշատակ ոսկեղենիկ,
Յորում լրցան հեք հոգւոյս իղձք
Ետուն տեղի սրտէս թախիծք,
Թարմացան հոյլ վարդք ուկեփունջ
Կենացս պատեաց բուրում զիմ շուրջ,
Եվ կարէ ոչ սրտիկն իմ վառ՝
Գոլ գոհ, յագիլ լոկ 'ի կիթառ,
Զհոգիդ ըզսիրտ եւ ըզբարիս,
Դու որ յարտօսր զհիքօք փարիս,
Փրկչին մերոյ արձան տիպար՝
Փոյթ թշուառաց 'ի մըխիթար,
Դու որ սփռես զդամբանօք վարդ,
Տաս ցոյց զերկին յակնարկ զբարթ,
Երգես սոխակ 'ի գիշերի,
Ո՜հ, ի գեղգեղդ սոսկումն ցըրեմ
Գերեզմանաց խոլ արհաւիրք,
Պարզես զբարեաց զյաւէրժ երկինք։
Քե՛ւ, քե՛ւ շնչեմ ես յայս յաշխարհ,
Եւ քոյդ 'ի շունչ մըխիթարար
Սիրելեացս խոր փակեցան փոսք,
Աստեղք յերեւ գան լուսահոսք,
Ցորչափ են թիւ՝ կեա՜ց առ յապա
Աստեղաց վառ՝ ցորչափ նոքա,
Եւ ի յալիսրդ ձիւնափառ
Ըսփոփես զհէքս հոգեբարբառ,
Եւ ի դամբանս եկ առ ի գութ՝
Ըզփրրկութեան մնչել զաղօթ։

Գարնանային կենդանս մեջ
Սիրո ծաղկունք մինչ փթթեին
Սիրտս վառված սիրովն անշեջ
Առաքինվույն եվ գեղեցկին,

Մահագուշակ խորշակն անդեն
Հասավ տիրեց սրտին բոլոր,
Թառամեցան ծաղկունք ամեն
Ծլած փթթած սրտիս մեջ նոր։

Այն, որ տրվավ երկրիս գարուն,
Ծաղկունք, մարգերն ալ զարդ նորին
Եվ մարդկային վեհ սրտերուն
Ուսույց սիրել գեղն ու բարին։

Ինչո՞ւ արդյոք խորշակահար
Կ՚ընե ծաղկունք դեռափթթիթ,
Ինչո՞ւ արդյոք Նա սիրահար
Սրտերն զեղու արտասվոք միշտ։

Ահա կիջնեմ, ո՞հ, ես այժմեն
Առջևս բացված գերեզման խոր,
Բայց սա տրխուր տեսարանեն
Ի՞նչ կա արդյոք հաճույք մ՚Անոր։

<1864>

ՀԱՅՈՒՀԻՆ

Աշնան մեջ էր, երեկո մը
Վերադարձիս յՅուսկյուտար,
Օդը պարզ էր, հրդմը մեղմիկ,
Ծովուն ջուրերն ալ հանդարտիկ։

Շոգենավին սպասվանքը
Նրստած անկյան մ՚ առանձնակն

Ուշադրությամբ ես ետյն ծրիան
Լրրագիրները կարդայի։

Մեկ մ՚ալ հանկարծ սանդուկեն
Վեր ելնելու ոտնաձայն մը
Շրփոթեց զիս և աչերս
Դարձուցի դեպ այն կողմը։

Հայուհի մ՚էր վեր ելնողն,
Բարձրահասակ և գեղադեմ.
Անցավ մոտես նե սիգաճեմ,
Նստավ անկյուն մ՚ինձ դեմ առ դեմ։

Ո՞հ, կարծես թե նե երկնային
Զբվարթուն մ՚էր վար իջած՝
Լույս սփռելու, սեր բուրելու,
Խրոովելու սրտերն այրած։

Այլ չըգիտեմ թե ինչո՞ւ
Կրկին աչերս հառած՝
Իմ թերթիկիս վրրա միշտ՝
Սիրտս էր ամբողջ խրոոված։

Մինչև մեկ մ՚ալ նավաստին
Խոպոտ ձայնով մը գալով մոտ,
Ըսավ. «Հասանք յՅուսկյուտար,
Ալ ի՞նչ նստեր ես դու հոդ»։

Վեր վերցուցի աչերս,
Ոչ ոք տեսի մեջ նավին,
Մինակ էինք երկուքնիս,
Մեկ մ՚ես, մեկ մ՚ալ... նավաստին։

ՄՆԱՍ ԲԱՐՅԱՎ

Առտու մը դեռ մթնշաղ
Կը ծավալեր շարաշարաշ
Ծաղկանց մեջ քեզ տեսա ծոց
Կը ժպտեիր լուսնո պես։

Աչերդ սիրո ատրուշան,
Մատներդ էին գիրգ շուշան,
Այտերդ վարդի նոր թերթեր,
Նայվածքդ ծներ՝ նոր երթեր։

Սիրտըս թըռավ ոտքիդ տակ,
Սիրեցի քեզ, իմս հրեշտակ...
Սիրով եղան ձյուն մազեր,
Ըսին՝ կյանքը երազ էր։

Մինչդեռ դու չես սիրեր զիս,
Մ'իշխեր գոնե տկար ստրուկս.
Ուր որ երթամ դեմքդ ինձ հետ՝
Նայվածք չէ այդ... մահո՜ւ նետ։

Երբ անտառին խորն նըստիմ
Կերթամ լալ՝ լուռ մենաձեմ,
Դարձյալ հոն կը գտնես զիս,
Տերևներեն կը խոսիս։

Երբ առավոտին եզերքը
Նըստիմ սփոփել իմ վերքը՝
Դարձյալ դու կը գտնես զիս,
Ալյաց մեջեն կը ժպտիս։

Երբ լեռները կը փախչիմ,
Որ չը տեսնեմ քեզ, հանգչիմ,
Հողմույն մեջեն կը խոսիս,
Թե՝ դու բնավ չե՜ս սիրեր զիս։

Լուսնի լուսով գիշերը
Երբ ցողեն իմ աչերը,
Դարձյալ դու կը գտնիս զիս,
Աստղերուն մեջ կը ժպտիս։

Իսկ գերեզման երբ մտնեմ,
Քեզ հոն պիտի չը գտնեմ...
Մնաս բարյա՜վ... Հայուհիս,
Անգո՜ւթ, արցունք մ'ալ չունիս։

ԹԱՏՐԵՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐԴ ԵՎ ՇՈՒՇԱՆ
ԿԱՄ
ՀՈՎԻՒՔ ՄԱՍԵՑՈՑ

Թատերգություն երգախառն ի չորս արարվածս

Սկյուտար, 1867

ԱՆՁԻՆՔ

ԳԱՐԵՏ, ազատակալպետ
ՎԱՐԴ, որդին
ՇՈՒՇԱՆ, Գարեթի որդեգրուհին
ՄԱՐԻԱՄ, մուրացիկ կին
ՍՈՒՐՄԱԿ, ավազակ
ՏԻՐԱՆ, բարեկամ
ԳՈՒՐԳԵՆ, երկրագործ
ԳԵՂԱՄ, Սուրմակու որդին
ՀՈՎԻՒՔ ՄԸ

ԱՐԱՐՎԱԾ Ա

Գիշեր է.— Դաշտավայր մը.— Խորը լուսնով լուսավորված անտառ մը.— Տեսարանին աջ կողմեն առվակ մը կը սահի, ձախ կողմը փոս մը կա։

Տեսիլ Ա

Սուրմակ (առանձին)

Ահա գեղեցիկ գիշեր մը, որ ոճրագործին համար վայրկենական զմայլելի երազ մ'է, իր խիղճը արթնությունն է, որ այն երազը կը փարատե. խիղճը, կ'ըսեն, թե այս երջանիկ գիշերը անմեղներուն համար է. երկնից սիրուն թագուհին անգամ հայրասպան եղեռնագործին դատավոր մը կը թվի, իսկ անմեղին համար՝ սիրո Աստվածուհի մը... ո՞ւր գացիր մանկությո՜ւն, վաղանցուկ արշալույս մ'էիր, որ սահեցար և կենացս երջանիկ օրերն ալ քեզի հետ խավարեցան... Մանկությանս ատեն կյանքն ու մահը, երկուքն ալ լուսաթև հրեշտակներ էին, երկուքն ալ կը ժպտեին երեսս, երբ երիտասարդությունը հասավ, մահվան դեմքը փոխվեցավ և սոսկալի կերպարանք մ'առավ, մահն ատեցի և կյանքը սիրեցի... աղետալի սեր մը ծնավ սրտիս մեջ՝ տուփանք մը, որ իբրև սև պատվար մը կը տարածվի խղճիս առջև... ամեն բան կը լմննա... խելքս գլուխս կու գա, տեսնեմ ոտիցս տակ անմեղ կին մը, գունատ և խոժոռ դեմք մը և կը լսեմ անե՛ծք մրմնջող ձայն մը... ի՞նչ է եղեր ուրեմն հեշտությունը. զեփյուռ մը որ հրատապ սիրտ մը զովացնելով և իր հետքին վրա արցունք սփռելով կը սահի, որուն զովությունը մանրերկրորդ մը կը տևե... բայց որչափ ալ տևե դարձյալ այն զեփյուռին կը տենչանք... ուրեմն կը սիրեմ ես և թող սիրվիմ... ոտնաձայն մը կա... անշուշտ ճամփորդ մ'է... քաշուիթյո՜ւն։

Տեսիլ Բ

Սուրմակ և Գեղամ

ԳԵՂԱՄ.— (աջ գալով) *Ո՜հ, այո՛, դառն է այս սերը։*

ՍՈՒՐՄԱԿ.— (դաշույն ի ձեռին, մոտենալով) *Քսակդ կամ կյանքդ...*

ԳԵՂԱՄ.— *Ի՞նչ քսակ կը խնդրես ինձմե, խեղճ ավազակ... ես միայն վշտահար սիրտ մ'ունիմ...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Ես անանկ բաներու ականջ չեմ կախեր... քսակդ կամ կյանքդ...*

ԳԵՂԱՄ.— *Ուրեմն մեռցո՛ւր զիս... բայց գիտցիր, որ բան մը չունիմ... եթե որբ, խղճալի ու թափառական երիտասարդի մը արյանը ծարավի ես՝ խողխողե զիս և իմ արյունլվա դիակս տարածե անոր առջևը, զոր ես կը սիրեմ ի բոլոր սրտե։*

ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի) *Խե՜ղճ տղա, յուր խոսքերը սիրտս կը շարժեն, չեմ համարձակիր ձեռք վերցնել իր վրա, կարծես թե աներևույթ ձեռք մը զիս կը բռնե։*

ԳԵՂԱՄ.— *Ի՞նչ վճռեցիր, ո՜վ ավազակ...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Գնա՛, կը գթամ քեզի...*

ԳԵՂԱՄ.— *Կը գթա՞ս... ո՜հ, շնորհակալ եմ, վասնզի դեռ հուսո փոքրիկ նշույլ մը ունիմ խավար երկնքիս երեսը, որն որ ամպե սյունի մը պես զիս լեռնե լեռ կառաջնորդե. ա՜հ, Աստուծո սիրույն համար ըլլա, եթե Մարիամ անուն հեռարձակ կին մը տեսնես, որ որդի մը կը փնտռե Գեղամ անվամբ, ըսե իրեն, թե իր որդին թշվառ է և քիչ ատենեն պիտի մեռնի՝ անիծելով միշտ յուր հայրը, ինչպես որ ինքը պատվիրած էր ինձ։*

ՍՈՒՐՄԱԿ.— (սարսափած, մեկուսի) *Ո՜վ երկինք, որդիս է... քիչ մնաց որ որդվույս արյունն ալ պիտի թափեի* (բարձր) *գնա՛, գնա՛, խեղճ տղա, բայց մի՛ անիծեր քու հայրդ...* (մեկուսի) *քու հայրդ ալ թշվառ է, բայց անիծապարտ։*

ԳԵՂԱՄ.— *Շուշա՛ն, Շուշա՛ն, քեզի համար է որ մեռնիլ կուզեմ։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Շուշա՛ն ըսիր։*

ԳԵՂԱՄ.— *Այն քաղցր հովվուհվույն անունն է, զոր ես կը սիրեմ։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Որդիս իմ հակառակո՜ղդս* (բարձր). *ա՜հ, հեռացիր շուտ այս տեղեն, վասնզի կրնա ըլլալ որ վտանգ մը պատահի քեզի* (Գեղամ տխրությամբ կը հեռանա)։ *Ո՜հ, ի՞նչ եմ ես աշ-*

խարհիս վրա. անիծիր նգատակ մը, ամենքը զիս կանիծեն... բայց դարձյալ սիրուս չը դողար ոճիրներ գործելու... ոտքի ձայն մը կա... ուրիշ ճամբորդ մ'է անշուշտ, այս անգամ պահվըտիմ... (Կը պահվըտի)։

Տեսիլ Գ

Սուրմակ (պահվըտած) և Տիրան

ՏԻՐԱՆ.— (Ձախ կողմեն կերևա, շորս դին կը զննե և Սուրմակը չի տեսներ) Դեռ չէ եկեր, զինքը պիտի մատնեմ... ատենե մը ի վեր է, որ իր հորը Վահրամ նախարարին սպաննիչը կը փնտռեին, չը գիտեն, թե իր հարազատ որդին է։ Դատարանը մեծ գումար մը կը խոստանա զայն մատնողին... պատրաստ սատակ ո՞վ չուզեր ձեռք բերել։

ՍՈՒՐՄԱԿ.— Երդմնազանց վատ, զքեզ ճշմարիտ բարեկամ մը կը կարծեի։

ՏԻՐԱՆ.— (Մեկուսի) Ինքն է... մատնվեցա...

ՍՈՒՐՄԱԿ.— Տիրա՛ն, ստակի համար քու վաղեմի բարեկամդ մատնե՞լ... միտքդ բեր Անիի հազար ու մեկ եկեղեցիներուն վրա ըրած երդումդ, դու ալ իմ ոճրիս գործակից ես, մանավանդ որ դու դրդեցիր զիս... եթե կ'ուզես ինծի հետ բանտարկիլ կամ մեռնիլ կ'ուզես՝ մատնե՛ զիս։

ՏԻՐԱՆ.— (Կեղծ) Հիրավի ճշմարիտ բարեկամ մ'ես եղեր, ես այս առթիվ զքեզ փորձել ուզեցի, թե տեսնեմ ոչինչ խոսքի մը համար բարեկամիդ կենացը կը դավե՞ս... այս բանը գիտնալու։

ՍՈՒՐՄԱԿ.— Մատնվեցա՛ր, անմիտ, (բարձր) բարեկամ մը ինքն է իմ թշվառությանս պատճառը... եթե դու չըլլայիր, Տիրան, ես հիմա հանգիստ քուն կը քնանայի, դու զիս ոճրագործ ըրիր քու հանգստյանդ համար... մինչև անգամ ալ ավազակություն ընելու ստիպեցիր զիս, ուսկից շահ մ'ալ չկա, և վերջապես իմ կյանքս քովինդ հետ զոգակշիռ ըրիր... հիմա երկինք գլխուս վերև դահիճ կը թվի ինձ և ամեն քայլափոխիս կը կարծեմ, որ դժոխք բացվելով զիս պիտի լափեն... ծագիկն անգամ ինծի համար թունավոր է... նենգավո՛ր, քու դրդմամբ էր, որ հայրս սպաննեցի և անկե ժառանգած հարստություններս քեզի հետ կեր ու խումի և մոլության ոտի. ապերա՛խտ Տիրան, ես քեզի համար օրհնության տեղ հորս անեծքն ընդունեցի... ուստի թշվառ եմ և թշվառ պիտի ըլլամ, վասնզի ապերախտի մը համար հայրասպանություն ըրի... երբեմն նախարարի մը զավակ էի, իսկ հիմա՝ ավազակ։

ՏԻՐԱՆ.— Զգե՛ սա ոչինչ խոսքերը, քաջասիրտ եղի՛ր, տղայամիտ մի՛ ըլլար, գիտցիր որ այս աշխարհս ոճրագործին և անմեղին համար նույնն է. երջանկությունն ամենուն սրտին ալ կը տեղա, ինչպես փշոտ ու ծաղկավետ հովիտ մը, զոր առհասարակ կը թանա առավոտյան ցողը, և արևը իր լուսովը զայն կը կենդանացնե... գիշերը կը թառամի, առավոտուն կը թարմանա, մարդույս կյանքն ալ այսպես է, այսօր թշվառ է, վաղը երջանիկ... վերջապես կյանքը գետի մը կը նմանի, որ երբեմն ծաղիկներու և երբեմն ալ ժայռերու մեջեն կը սահի։ Հիմա մեր գործին նայինք, ի՞նչ էր մեր ժամադրության նպատակը։

ՍՈՒՐՄԱԿ.— Պարետի որդեգրուհին՝ Շուշանը հիմա անպատճառ պիտի առևանգենք։ Պարետի որդին՝ Վարդ, զայն կը սիրե և սովորապես լուսին եղած գիշերները շրջագայելու կելնեն։ Ձեռնարկությունիս քիչ մը դժվար է, բայց ես մինչև անգամ մահն աչքս առեր եմ... մեկ մը Շուշանը թևերուս մեջ գտնեմ։

ՏԻՐԱՆ.— Անհոգ եղի՛ր, հուսամ որ վտանգ մը չի պատահիր, առանց ձայնի կը լմննա գործը, արդեն դուն ալ իմ ճարտարությանս տեղյակ ես... քաջալերությո՛ւն. ես եկած ատենս մարգերուն մեջ շրջագայություն կընեին և բավական հեռու էին իրենց բնակարանեն։

ՍՈՒՐՄԱԿ.— Երջանի՛կ լուր, վերջապես ձեռացս մեջն ես, Շուշա՛ն, այն արհամարհոտ նայվածքդ ժպիտի պիտի փոխեմ, և իմ սրտիս հետ քաքախել պիտի տամ բընությամբ քու սիրտդ ալ։

ՏԻՐԱՆ.— Կեցի՛ր... ինծի հատուցում պիտի հանե՞ս...

ՍՈՒՐՄԱԿ.— Անշուշտ. (Մեկուսի) քու հատուցումդ մահն է այս դիշեր, եթե հաջողի։

ՏԻՐԱՆ.— Երթանք ուրեմն... երդնություն չուզեր, անկեղծ պիտ, ճարտար հարկավո՞ր...

ՍՈՒՐՄԱԿ.— Երթանք անմիջապես... սպանությունը քեզի, հսկողությունն ինծի։ Կեցցե՛ս Տիրան, եթե հաջողիս...

ՏԻՐԱՆ.— Կը տարակուսի՞ս (մեկուսի), կասկածը փարատեցինք... (բարձր) օ՜ն, այս կողմեն, զգուշություն, գուցե դիմացնիս ալ ելնեն... սա լուսինն ալ ի՞նչ աղեկ մեր գործին կուգա. եթե ճշմարտությունը փնտռես, ինքն ալ մեզի մեղսակից է, եթե ըրածնիս կրնա մեղք համարվիլ։

ՍՈՒՐՄԱԿ.— (երթալով, մեկուսի) Անմիտը կը կարծե, թե մատնության խոսքը իբրև ոչինչ անհետացավ. թող այնպես կարծե. (ձախ կողմեն կը հեռանան.— Տեսարանը պաբապ կը մնա պահ մը)։

Տեսիլ Դ

Վարդ և Շուշան (ձեռք ձեռքի աջ կողմեն կը մտնեն)

ՎԱՐԴ.— Հոգնեցար, սիրելի Շուշանս... եթե կուզես, սա առվակին քով նստինք քիչ մը։

ՇՈՒՇԱՆ.— Քանի որ քու հետդ եմ, սիրելի Վարդս, գիտես որ երբեք չեմ հոգնիր։

ՎԱՐԴ.—Շուշա՛ն, երբ առաջին անգամ սերը փափկիկ մատներովը կուրծքս բախեց, ես միայն այն ատեն կերևակայեի գիրկ մը և քնքուշ թևեր... կըսեի ինքնիրենս. «Ե՞րբ պիտի գա այն երջանիկ վայրկյանը յորում սիրուհվո մը հեշտ ձայնը պիտի մրմնջե ինծի, «գրկե զիս, Վա՛րդ». և ահա քու գիրկդ եմ, Շուշան, երջանիկ է այն ծաղիկը, որ քու շրթանցդ վրա կը թառամի, երջանիկ է այն հողմիկը, որ քու ճակատդ կը շոյե, երջանիկ է այն ճառագայթը, որ քու մազերուդ մեջ կը նվաղի և ամենեն ավելի երջանիկ է այն, որ զքեզ կը սիրե ի բոլոր սրտե։

ՇՈՒՇԱՆ.— Ա՜հ, հիրավի, ի՞նչ քաղցր է սերը, Վարդ, սերը կենաց գարունն է, որ մեր սրտին մեջ կը փթթի և համբույրն անոր զեփյունն է, որ մեր սիրաբորբոք սրտերը կը զովացնե... տե՛ս, Վա՛րդ, բոլոր բնությունը սիրով կը խայտա... լուսինը սեր կը ցողե, ծաղիկը սեր կը բուրե, հողմիկը սեր կը շնչե, թռչունը սեր կը գեղգեղե, տերևը սեր կը սոսափե, առվակը սեր կը մրմնջե, ո՜հ, ամեն ինչ սե՛ր... սե՛ր...

ՎԱՐԴ.— Շուշա՛ն, որչա՛փ քաղցր ես, քու սրտիդ ծալքերը շուշանա թերթերուն պես անբիծ են, քու նայվածքդ արշալուսույն առաջին ճառագայթին նման քաղցր է, քու շունչդ առավոտյան հողմույն չափ հեշտալի է... ո՜հ, եթե դու չըլլայիր, փուշերով ծածկված վարդ մը պիտի ըլլայի ես և դեռ չը բացված պիտի թառամեի։

ՇՈՒՇԱՆ.— Գիտցավ Արարիչը, որ մենք առանց իրարու չի պիտի կարենայինք ապրիլ, զմեզ իրարու գիրկ նետեց, և հիմա սեր կը շնչենք միատեղ։ Այնպես չէ՞, Վարդ, միշտ պիտի սիրենք զիրար, ինչպես որ ծաղիկն ու զեփյունը միշտ զիրար կը սիրեն... ո՜հ, տես ի՞նչպես ուժգին կը բաբախե սիրտս. կարծես թե սիրտս կուրծքս ծակելով՝ քու սրտիդ քով թռչիլ կուզե. մոտեցի՛ր ինձ, սիրելիդ իմ Վարդ, միշտ գրկե՛ զիս... տես, լուսինը ի՞նչպես կը ժպտի մեզի, կարծես թե նա ալ աստեղազարդ կամարեն մեր գիրկը թռչիլ կուզե, նա ալ զմեզ կը սիրե, մեր վրա կը հսկե, մենք ուր որ կերթանք, ինքն ալ մեր ետևեն կուգա... Ո՜վ լուսնակ, միայն կենդանի եղած ատեննիս չի պիտի լուսավորես զմեզ, այլ երբ մեռնինք՝ մեր շիրմերուն վրա ալ պիտի ծագիս... (առ Վարդն) և այն ատեն սիրո տեղ արցունք պիտի ցողե մեր շիրմերուն վրա... քանի որ մեր երջանկությանը ատեն կը ժպտի, անշուշտ մեր մահվանը ատեն ալ պիտի տխրի։

ՎԱՐԴ.— Մի՛ այդ խոսքերը, ո՜հ Շուշան, ինչո՞ւ մեռնինք. ավելի աղեկ չէ՞ որ միշտ այսպես զիրար սիրելով հավիտյան երջանիկ ըլլանք... Միթե չգիտե՞ս, թե որչափ քաղցր ես ինծի համար... դու իմ կյանքս ես, վասնզի այն ժպիտը, որ դու առաջին անգամ ինձ ուղղեցիր, կենացս արշալույսն էր այն։

ՇՈՒՇԱՆ.—Եվ դու, այն սիրտը զոր բաբախելով, զոր դու իմ լանջքիս մոտեցուցիր սիրո քնար մ'էր այն, որ իմ սրտիս խորեն նորափթիթ սերը արթնցուց... և ես ալ դեռ զքեզ չը ճանչցած՝ չը գիտեի, թե ի՞նչ է կյանքը... Մնողքես զրկվելես հետո՝ իրենց ձգած դույզն ժառանգությամբը կապրեի և կը կարծեի որ ալ թշվառ էի ես հավիտյան, բայց խաբվեցա... քու առաջին նայվածքդ սրտիս առջև պատած տխրության քողը փարատեց... դեռ ես զքեզ չը ճանչցած՝ բոլոր օրը հովիտներու և անտառներու մեջ տրտմության ժամեր կ'անցնեի, և անհամբեր երկոյան կսպասեի... և երբ վերջալույսը կոսկեզօծեր հո-

րիզոնը՝ սիրտս կը զվարթանար, վասնզի կը կարծեի որ կշանքս այն վերջալուսին հետ պիտի վերջանար... Երբ Արշալույսը կը ծագեր՝ կանիծեի ես զայն... Ներե՛ ինձ, սիրեցյա՛լդ իմ, դեռ չէի ճանչընար զքեզ այն ատեն, դեռ չէի զգացեր քու քաղցրիկ սերդ... ո՜հ, ի՜նչ անխելք եմ եղեր այն ատեն, որ կ'ուզեի մեռնիլ։

ՎԱՐԴ.— Կը կարծես, Շուշան, որ եթե ուրիշներն ալ մեզի պես սիրեին զիրար, այն ատեն ծաղկունք անգամ նախանձելով չի պիտի թառամեին և այն ատեն ի՞նչ բան պիտի ըլլար Շուշանա սիրտ նվեր։ Թռչունները նախանձելով չի պիտի երգեին, և ո՞վ պիտի արթնցներ զմեզ այն ատեն, որ արշալույսը իր ճառագայթները ծավալած ատեն, մենք ալ մեր համբույրները իրարու տանք... այն ի՞նչ աստիճան քաղցր է այն վայրկյանը։

ՇՈՒՇԱՆ.— Կարծեմ գիշերը բավական տարաժամեցավ։ Ալ կամաց կամաց մեր բնակարանը ճամբա ելնենք, Վարդ, որպեսզի առտուն կանուխ ելնելով ոչխարներնիս առած՝ Մասյաց արոտները երթանք...

ՎԱՐԴ.— Շատ աղեկ, Շուշա՛ն, բայց այս ի՞նչ ձայն է, մտիկ ըրե... (հեռուեն հետևյալ երգը կը լսվի)։

ՈՂԲԵՐԳ

Ո՞վ դու գիշեր, գիշեր լռիկ, լուսավառ,
Որ կը շնորհես ինձ ժամանակ, իմ թշվառ
Կյանքիս վրա արցունք թափել վշտահար,
Միայն զքեզ գտա ցավուս մխիթար։

Եվ դուք, երկի՛նք, երկինք զքեզ զորություն
Տրվե՛ք գոնե այս իմ շրթանց գողգողուն,
Ակնե՛ք կաթդալ անոր, որ զիս արտասվաց
Մատնեց խաբեց դեռևացուցց հույսս կենաց։

Թշվառ եմ ես, թշվառությանս վերջ չկա,
Որ բեմն անենք թափին զլխուն Սուրմանդա
Ինձի նաև ինձ՝ որ եկա վատ սիրաղրուժ,
Երկինք, զքա՛ ինձ և արցունքներս բեր դու հուշ։

ՇՈՒՇԱՆ.— Ինչ ողորմագին ձայն է այս... Ո՞վ է արդյոք...

ՎԱՐԴ.— Անշուշտ թշվառ կին մ'է, ո՞վ գիտե, ի՞նչ աղետքի գանդիպեր է։

ՇՈՒՇԱՆ.— Դու կու՛ լաս, Վա՛րդ... բայց ինչո՞ւ, ըսե՛, կաղաչեմ։

ՎԱՐԴ.— Այս ձայնը... այս ձայնը սրտիս խորը թնդաց, և չգիտեմ, ակամա արցունք հոսեցին աչքերս։

ՇՈՒՇԱՆ.— Ա՜հ, խեղճ կին, արդյոք ի՞նչ է իր վիշտը, միթե դարման կրնա՞նք տալ իրեն, Վարդ։

ՎԱՐԴ.— Գուցե... ի՞նչ ծանր է արդյոք իր վիշտը, զոր այսպես ողբերով թեթևցնել կ'ուզե, կերևա մեկը չունի, որուն իր ցավը հայտնե և ստիպվեր է գիշերային լռության հայտնել և սփոփանք գտնել... Թշվա՜ռ կին։

ՇՈՒՇԱՆ.— Ի՞նչ գորովագին սիրտ մը ունիս, Վա՛րդ, ի՞նչ շուտով արտասվեցին անուշ աչքերդ... (ձեռքն անոր սրտին դնելով) ո՞րչափ ալ ուժգին կը բաբախե սիրտդ... հանդարտե՛, սիրելի՛դ իմ, անշուշտ կրնանք մեր ձեռքեն եկած ձեռնտվությամբը զինքը մխիթարել։ Դեպի այն կողմը երթանք...

ՎԱՐԴ.— Կեցի՛ր... Ահա համր ոտնաձայն մը կը լսվի... Կերևա որ ինքն է... սպասենք։

ՇՈՒՇԱՆ.— Բայց կաղաչեմ, հանդարտե՛։

Տեսիլ Ե

Նույնք և Մարիամ

ՄԱՐԻԱՄ.— (ձախ կողմեն մտնելով) Իզո՛ւր կաղաղակեմ... ձայնս լսող չկա, Աստված անգամ երես դարձուցեր է ինձմե... Թշվառ եմ ես, խելացնոր մը, որ ուր երթալը չը գիտեր և իր ոտիցը տակ միշտ գերեզման կը փնտռե... Մա՜հ... Մա՜հ, ինչո՞ւ կը դանդաղիս... ալ հույս չունիմ ես... Թշվառության չկա վերջ... Սուրմա՛կ, անիծյա՛լ ես դու Հավիտյան և թո՛ղ իմ անեծքս միշտ քու կյանքդ խռովե։

ՇՈՒՇԱՆ.— Ի՞նչ ունիս, կին դու, ի՞նչ աղետք պատահեցավ քեզ... Միթե դո՞ւ էիր հիմա ողորմագին արտասվողը...

ՄԱՐԻԱՄ.— Բայց ո՞վ ես դու, սիրուն աղջիկ... գիշեր ատեն ի՞նչ բան ունիս հոս։

ՇՈՒՇԱՆ.— Ես այս գյուղեն որբ հովվուհի մ'եմ, բարի երկրագործի մը որդեգիրը և շրջապատյալ ելեր ենք այս եղիտասարդին հետ... զիրար կը սիրենք։

ՄԱՐԻԱՄ.— Զիրար կը սիրե՞ք։ Ուրեմն երջանիկ եղիք և թողե՛ք որ ես իմ թշվառությունս ողբամ առանձին, դուք չը գիտեք, թե ի՞նչ է թշվառությունը։

ՎԱՐԴ.— Քաշալերվե՛, թշվառ կին, պատմե մեզ աղետքդ և պիտի տեսնես, որ մեր ձեռքեն եկած օգնությունը չի պիտի զլանանք քեզմե...

ՇՈՒՇԱՆ.— Գիտցիր, որ ես ալ քեզ նման թշվառ էի, խեղճ ու մինակ մնացեր էր աշխարհիս վրա և այս աղնիվ երիտասարդը զիս իր տունը ընդունեց և իր սիրովը երջանիկ ըրավ զիս։

ՄԱՐԻԱՄ.— Եվ եթե պատմեմ իմ աղետքս՝ պիտի տեսնեք թե ասոր պատճառը սերն է։

ԱՄԵՆՔԸ.— Սե՞ր...

ՎԱՐԴ.— Մի՞թե սերը թշվառության պատճառ կրնա՞ ըլլալ։

ՇՈՒՇԱՆ.— Բայց ըսե, ի՞նչպես սիրեցիր և թշվառացար։

ՎԱՐԴ.— Այո՛, ըսե՛, կաղաչենք։

ՄԱՐԻԱՄ.— Եվ եթե պատմեմ, չի՞ պիտի անարգեք զիս։

ԱՄԵՆՔԸ.— Ո՜հ, ոչ, երբե՛ք։

ՄԱՐԻԱՄ.— Ասկե 19 տարի առաջ այս գյուղիս մեջ երկրագործի մը հետ ամուսնացա, երկուքնիս ալ փոխադարձաբար զիրար կը սիրեինք... ժամանակին միածին կայտառ զավակ մը ունեցանք և բավական ատեն երջանիկ ապրեցանք... Օր մը... ո՜վ օր աղետալի... հովտի մեջ ժուռ կուգայի... երեկոյան հեշտալի ժամերն էին... արևը մարը կը մտներ... եռանդուն սիրտս սիրո հեղեղի մը մեջ կը ծփար. քանի մը վայրկյաններ ալ անցան և արևը աներևութացավ... ոսկեփայլ լուսինը հորիզոնեն վեր կը բարձրանար. ընտանյացս միության ժամը մոտեցեր էր... Բնակարանիս ճամբան բռնեցի՝ գետնեն ծաղիկ ժողվելով... Երջանի՜կ օրեր... Հանկարծ ձայն մ՚առի, որ իմ անունս կուտար... դողացի... դեպի ձայնին եկած կողմը դարձա, և մեկը չըտեսա... սիրտս ուժգին թունդ առավ. և դարձյալ ճամբաս շարունակել սկսա. նորեն այն ձայնը լսեցի, դարձա և տեսա երիտասարդ մը, որ քիչ մը անդին ծունր եկած զիս կը կանչեր...

Ճանչցա զինքը, ճանչցա այն, որուն սերս խոստացեր էի, երբ աղջիկ մ՚էի... Սարսուռ մը եկավ վրաս և չը կրցա ճամբաս շարունակել... Սերը բռնեց զիս... Ակամա քանի մը քայլ ուղղեցի իրեն... վայրկենե մը տեսա զինքը բազկացս մեջ... փրտս լուր ուրեն վրա կը բաբաներ... սիրած էի զինքը... Սե՜ր աղետաբեր... Վերջապես բաժնվեցանք իրարմե... Քանի մը տխրության օրեր անցան... փափագած ժամս հասավ և իրեկ հեղ այս լեռներուն մեջ փախանք... ա՜հ... Ցոն գետցա արդանք թափեը և վշտանալ անդամ եղեռնագործեն մը ձեռքեն... զավակ մը ունեցա Գեղամ անուն և զայն տարած այն ոճրագործեն հեռացա և զավկիս հետ միատեղ բավական ատեն ապրեցանք... Հիմա ամիս մ՚ալ կա, որ կորսնցուցի զավակս, այնուհետև՝ ոչխարներս, որով կը սնանեինք, և անկե ի վեր է, որ թշվառ կյանք մը կանցնեմ, մինչև անգամ մուրալու ստիպվեցա՝ գյուղե գյուղ, անտառե անտառ, լեռնե լեռ թափառական շրջելով... շատ զղջացի երբեմն վրա, այլ ի զո՜ւր... Ա՜հ, քանի որ ստիպեցիք զիս որ գաղտնիքս ըսեմ, ուրեմն հանցավոր եմ, ներեցեք ինծի։

ՎԱՐԴ.— Կը ներենք քեզի, խե՜ղճ կին։

ՇՈՒՇԱՆ.— Եվ կը պաղատինք Աստուծո, որ ինքն ալ ներե։

ՎԱՐԴ.— Բայց ո՞վ է քու առջի ամուսինդ, անշուշտ կը ճանչնանք զինքը, եթե այս գյուղը կը բնակի։

ՄԱՐԻԱՄ.— Պարետ երկրագործն է. զինքը չեմ ճանչնար, եթե հիմա տեսնեմ, վասնզի զինքը թողելես ի վեր 17 տարի է։

ՎԱՐԴ.— Պարետ երկրագործն ըսի՞ր... Ո՞վ երկինք...

ՇՈՒՇԱՆ.— Որդի ունի՞...

ՄԱՐԻԱՄ.— Բայց ինչո՞ւ խռովեցաք... այո՛, Վարդ անուն որդի մ՚ունի...

ՎԱՐԴ.— Տե՛ր Աստված, ի՞նչ կը լսեմ... Ուրեմն մայրս ես դու, զոր մանկությանս ատեն կորսնցուցի։

ՄԱՐԻԱՄ.— Քու մայրդ... Ա՜հ...

ՎԱՐԴ.— Այո, մայրի՜կ, Վարդն եմ ես, քու որդիդ և դեռ կը սիրեմ զքեզ։

ՄԱՐԻԱՄ.— Եվ ներեցիր քու մորդ այնպես չէ՞ (զիրար կը գրկեն)։

ՇՈՒՇԱՆ.— Ի՜նչ անակնկալ դիպվածներ։

ՎԱՐԴ.— Ալ երջանի՜կ ես, մա՜յր իմ, վասնզի քու որդիդ գիրկդ է։

ՄԱՐԻԱՄ.— Այո՛, երջանիկ եմ... Որդյակ իմ...

ՎԱՐԴ.— Երբոր զքեզ հորս քովը տանիմ, ալ չի պիտի վշտանաս, այնպես չէ՞...

ՄԱՐԻԱՄ.— Հո՜րդ... Ա՜հ, ո՜չ, ո՜չ աբժանի չեմ եր քաղցր սի-

բույն և հարգանացը... Եվ գուցե հիմա նա կատե դիս, և եթե երթամ՝ կը վռնտե իս իր քովեն։

ՎԱՐԴ.— Կը սխալիս, մա՛յր իմ, ինքը դեռ զքեզ կը սիրե, ինքը չգիտե քու պատմությունդ, այլ զքեզ անհետացած կը կարծե, հիմա եթե զքեզ իրեն տանիմ, ինքը պիտի բանա քեզ յուր գիրկը։

ՄԱՐԻԱՄ.— Իսկ եթե գաղտնիքս իմանա, պիտի...

ՎԱՐԴ.—Ներե՛ քեզի... Շուշա՛ն, դու ալ գրկե մայրս... Քանի մ՚օրեն, մա՛յր իմ, գու ալ մեր հարսանյաց ներկա պիտի ըլլաս, դու ալ պիտի օրհնես մեր երջանիկ միությունը...

ՋԱՅՆ ՄԸ.— (հեռուն) Օգնությո՛ւն... Օգնությո՛ւն...

ՎԱՐԴ.— Ո՜հ. տղու մը ձայնն է... Երթամ, տեսնեմ, ի՛նչ կա (կերթա)։

ՄԱՐԻԱՄ.— Կեցի՛ր... Կեցի՛ր... Վտանգ մը չըլլա (ետևեն կերթա)։

ՇՈՒՇԱՆ.—Ի՞նչ խոսք էր որ Վարդի բերնեն թռավ... Հարսանի՞ք, ո՜հ, քիչ ատենեն Վարդ իմ ամուսինս պիտի ըլլա... քիչ ատենեն ալ ամուսինս պիտի կոչեմ զինքը... Ի՞նչ երջանիկ միություն... գողտրիկ զավակներ պիտի ունենաք... և անոնք «մայրիկ» պիտի թոթվեն ինծի...

Տեսիլ Զ

Շուշան և Գեղամ

ԳԵՂԱՄ.— (տխուր գալով և Շուշանա պատանելով) Շուշա՛ն է... (ծռմռ կուգա)։

ՇՈՒՇԱՆ.— Երիտասարդ մը դիմացս ի՞նչ ունի... ստրկ ելիր և ըսե՛, ի՞նչ կը խնդրես ինձմե (ոտքի կը հանեն)։

ԳԵՂԱՄ.— Նայվա՛ծք մը... ժպի՛տ մը... բա՛ռ մը...

ՇՈՒՇԱՆ.— Չեմ հասկնար ըսածդ, բացատրե՛ միտքդ։

ԳԵՂԱՄ.— Եթե ըսեմ... լեզուս հատաց չերթար... ո՜հ, կը սիրեմ զքեզ, Շուշա՛ն։

ՇՈՒՇԱՆ.— Ակո՛ւր, Վարդ։

ԳԵՂԱՄ.— Ո՜հ, լեռ՝ լեռ՝ կաղաչեմ, գթա՛ ինծի...

ՇՈՒՇԱՆ.— Ջոյց կը զարհուրեցնեն զիս, դու խոսքերդ կը հասկնամ որ...

ԳԵՂԱՄ.— Ո՜հ, մտիկ ըրե՛... Ոտքերուդ տակ սիրտ մը կը կոխկըռտես, և այն սիրտը ամեն մեկ քայլափոխիդ մեյ մեկ կաթիլ արյուն կը հեղու... Սիրտ մը ունիմ՝ քեզ կը նվիրեմ և դու կը նախատես զայն և կ՚արհամարհես... Ուրեմն ծակե այս սիրտը, որ նոր ամեն մեկ վայրկյան քեզի համար կը բաբախե և ավրե՛ դաշույնով մը այն անունը, զոր սերը իր կրակե գրիչովը սրտիս խորը գրեց։ Թո՛ղ թառամին այս շրթունքները, որոնք ամեն վայրկյան քու անունդ կը մրմնջեն... Եթե անարժան եմ քու սիրուդ... դեռ «չեմ սիրեր» չըսած՝ խողխողե զիս կաղաչեմ... Ո՜հ, անգութ ես եղեր, Շուշա՛ն, ես կարծեցի որ պիտի գթաս վրաս... բայց խաբվեր եմ... այո՛ կամ ո՛չ. պիտի սիրե՞ս զիս... Դու կուլա՞ս... Ուրեմն հավատա՞մ, որ կը սիրես զիս դու... Ո՜հ, ինձ դարձուր նայվածքդ, խոսե՛, սիրտս մի՛ հատցներ...

ՇՈՒՇԱՆ.— (մեկուսի) Այո՛ կու լամ վրադ, խեղճ երիտասարդ, վասնզի գիտեմ, թե ի՞նչ է սիրելը և չը սիրվիլը։

ԳԵՂԱՄ.— Ի՞նչ կը մտածես, պիտի սիրես զիս, այնպես չէ՞... Ո՜հ, գրկե զիս, և երջանիկ ըլլանք, գիրկս հանգչած՝ հնչե՛ սրտիս քու սիրո խոսքերդ և հուսահատությունս փարատե, ինչպես որ սոխակը անտառին խորը թառած իր առավոտյան երգովը բնության վրա տիրած գիշերային արհավիրքը կը փարատե...

ՇՈՒՇԱՆ.— Չեմ կրնար սիրել զքեզ... խե՛ղճ պատանի, ես յերկինս միայն Վարդս սիրել ուխտեցի և ի՞նչպես դրժեմ ուխտ մը. ո՛չ, ո՛չ, չե՛մ կրնար թողուլ իմ սիրուն Վարդս օտարականի մը համար, որ նոր կրնա ուրիշ մը սիրել... երբ իմ Վարդս...

ԳԵՂԱՄ.— Ուրեմն մահս վճռեցիր... Ո՜հ, գիտցիր որ այսուհետև չկա ինծի համար երջանկություն, հանգիստ, կյանք և սեր, կյանքն ինծի վիշտ պիտի ըլլա, սերն ինծի դահիճ պիտի ըլլա, քու հիշատակդ մինչև գերեզման պիտի հալածե զիս, և «Շուշա՛ն, Շուշա՛ն» հառաչած տանեն փոշիդ պիտի փթթին սրտիս վրա, և ամեն մեկ հառաչանքիս՝ մեկ մեկ ոտք գերեզմանին հատակը պիտի իջնեմ։ Վերջապես ցավոք ծներ եմ և ցավոք պիտի մեռնիմ... խանձարուրվես մինչև գերեզման փշալից ճամբա մը պիտի ունենամ... Ուրեմն ուզեցիր որ ասանկով մեռնի այն՝ որ զքեզ հոգիեն ավելի կը սիրե... գոնե՞ որ մեռնիմ ես. Շուշա՛ն։

ՇՈՒՇԱՆ.— Չե՛մ կրնար սիրել զքեզ (փովեն կը հեռանա)։

Տեսիլ Է

Վարդ և Շուշան և Գեղամ

ՎԱՐԴ.— (մտնելով) *Երթանք, Շուշա՛ն... Մայրս հոս մեզի կսպասե։*

ՇՈՒՇԱՆ.— *Ի՞նչ եր այն օգնության ձայնը...*

ՎԱՐԴ.— *Տղա մը լճին եզերքը զվարճացած ատեն՝ դիպվածով մեջը ինկեր է։*

ՇՈՒՇԱՆ.— *Ազատեցի՞ր զինքը։*

ՎԱՐԴ.— *Այո՛ և իր մոտակա բնակարանը տարի։*

ՇՈՒՇԱՆ.— *Ը՜հ, Վարդ, պահապան հրեշտակ մ'ես դու...* (կերթան աջ կողմեն)։

ԳԵՂԱՄ.— *Ո՜հ* (ճուսահատ հեռանալով)։

Տեսիլ Ը

Սուրմակ և Տիրան (ձախ կողմեն կուգան)։

ՍՈՒՐՄԱԿ.— *Որչա՜փ պտտցուցիր զիս և դեռ չը գտանք... միթե խաբեցի՞ր զիս։*

ՏԻՐԱՆ.— *Ինչո՞ւ պիտի խաբեմ... Թշվառականները եկած ատենս կը շրջագայեին։ Այս բարկությանս ատեն եթե գտնեմ՝ այնպիսի հարված մը պիտի տամ ինծի դեմ դնողին, որ երկու կտոր պիտի ըլլա։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Լռե՛, պոռոտախո՛ս, զանոնք գտնելու է հիմա, վասնզի կես գիշերվան մոտ է... Ա՜հ, գուցե բնակարաններին դարձած ըլլան։*

ՏԻՐԱՆ.— *Ուրեմն ձեռնարկությունիս վաղ գիշերվան ձգենք, վաղ գիշեր անպատճառ կը կատարենք և ալ կը հաջողի։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Միթե վաղը մտատանջության և կարոտանաց դա՞ր մ'ալ պիտի անցնեմ ես. Ո՛չ, ո՛չ, չեմ կրնար այս սիրույն դիմանալ, միթե չգիտե՞ս, թե ի՞նչպես կայրե սիրտս... դու, որ երիտասարդությանս ատեն իմ կրքերս արթնացրիր, ուրեմն դու պիտի և հագեցնես զանոնք քու միջոցներովդ... Այս գիշեր փորձ մը ընենք և հուսամ, որ կը հաջողենք...*

ՏԻՐԱՆ.— *Քիչ մը առաջ սա կողմը ոտքի և խոսակցության ձայն մը կար, արդյոք անո՞նք էին, մեկ մը երթամ դիտեմ, դու հոս կեցիր. եթե անոնք ըլլան՝ կանչեցիր։ Եթե անոնք ըլլան՝ կանչեցիր հարկ ըլլա, ես նշան կընեմ և իսկույն հասիր։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Ուրեմն գնա՛, Տիրա՛ն, պարապ չը դառնաս* (Տիրան աջ կողմեն կը հեռանա)։

Տեսիլ Թ

Սուրմակ (առանձին)

ՍՈՒՐՄԱԿ.— *Մոլեգի՛ն կիրք, դեռ չի՞ պիտի մարիս։ դեռ քու դժուխային բոցերդ պիտի լափե՞ն. այս քանի՞ անգամ է, որ այս անողորմ ձեռքը անմեղներու արտասուք և մինչև անգամ հոր մը արյունը սփռեց քու բոցերուդ և դեռ դու չը մարեցար. սի՛րտ իմ, միթե չը լսեցի՞ր քիչ մը առաջ անոր ձայնը, որուն ողբական եղանակը դու սորվեցուցիր. նա միայն անմեղություն և սեր գիտեր, դու անոր սորվեցուցիր, թե ի՞նչ է վիշտը, ի՞նչ է ոճիրը... Դեռ իր ձայնը սրտիս խորերը կը թափառե, դեռ իր տեսքը հոգիս կը խռովե, և դեռ իր անեծքը սարսուռ կաղդե ինձ, անձ մ'եմ ես, որ արեգական լուսին մեջ երկյուղով կը պտտիմ՝ վախնալով որ չըլլա թե արտասվաթոր և հերաթձակ կույսեր ելնեն դիմացս և զիս վագրերու նման հոշոտեն... Գիշերը ինձ համար թանձր քող մ'եմ ըրեր, որ իմ ոճիրներս ծածկե... Արշալույսին քաղցր ծագումը, որ անմեղներու զվարթություն կը ցողե, ընդհակառակը զիս կը զարհուրեցնե, կը փախչիմ ես անոր տեսքեն անտառներու թավուտ խորերը և իմ ոճիրներուս վրա կը խորհիմ... Ոտքի ձայն մը կա... մեկը կը վազե* (աջ կողմեն նայելով), *Տիրանն է... Հաջողեր է... Շուշանն է իր գրկացը մեջ* (մեկուսի) *քաջալերությո՛ւն... մի՛ դողար, բազուկնե՛ր, պետք է որ Տիրան մեռնի և այս փոսը անոր խոր գերեզման մը ըլլա, ուսկից անկարելի ըլլա ելնել... որպեսզի իմ գաղտնիքս գիտցող չըլլա և բախտիս ալ ընկեր չունենամ։*

Տեսիլ Ժ

Սուրմակ, Տիրան, Շուշան (մարած)

ՍՈՒՐՄԱԿ.— *Կեցցե՛ս, Տիրան... քաջ ես եղեր...*

ՏԻՐԱՆ.— (Շուշանը գիրկը) *Շունչս կտրեցավ... Հոգնեցա...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Մարա՞ծ է Շուշան։*

ՏԻՐԱՆ.— *Այո՛։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Ի՞նչպես հաջողեցար։*

ՏԻՐԱՆ.— *Երբ հոսկե բավական հեռացա՝ տեսա, որ առջևես կերթային. աղեկ մը վերարկուիս մեջ պլլվեցա չը ճանչցվելու համար. քիչ մը մոտեցա և տեսա որ Մարիամ, կինդ ալ հետերնին կը խոսակցեր։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Մարիա՞մ, կի՞նս... Ի՞նչ կը խոսակցեին...* (սոսկալով)։

ՏԻՐԱՆ.— *Ականջ չըդրի... խսկույն Վարդի վրա հարձակեցա և դաշույնի հարվածով մը զայն գետին տարածեցի։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Մահացո՞ւ էր հարվածը։*

ՏԻՐԱՆ.— *Ո՛չ... բայց խորունկ... Հետո Շուշանը գիրկս առած երբ կուգայի՝ տեսա, որ ձեռք մը զիս կը բռներ և «որդի՛ս» կաղաղակեր... Դարձա և տեսա, որ Մարիամն էր, ուժգին կից մը տվի և զայն շնչասպառ գետին փռեցի, առանց արգելքի հասա հոս... օ՜ն, ուրեմն ի՞նչ պիտի ընենք... շուտ, վտանգ մը չը պատահի։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Գիրկս տուր* (Շուշանը մեկ թևին վրա առնելը և դաշույնով մը Տիրանը զարնելը մեկ կըլնե). *դու մեռի՛ր, որ ինչ ընելիքս աղեկ մը խորհիմ։*

ՏԻՐԱՆ.— *Ա՜հ, ապերա՜խտ... նենգավո՜ր...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Մատնե՛ զիս հիմա... Հանդարտե՛ սիրտ իմ, ալ մատնիչ չկա, հանգիստ կյանք վայելե։*

ՏԻՐԱՆ.— *Այս մարդը հայրը՝ Վահրամ նախարարն սպաննեց...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Խե՜ղճ Տիրան, քեզի մեկայն գիշերային լուռթյունը կը լսե...*

ՏԻՐԱՆ.— *Աստված մը կը լսե* (կը մեռնի. Սուրմակ՝ Շուշանը գիրկը, երթալու կելլա)։

ՄԱՐԻԱՄ.— (դրսեն) *Ա՜հ... ո՞վ զարկավ զավակս...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Ո՞վ երկինք, ենքն է... մի՛ կթողիք, ծունկե՛ր, հապաղ գացեք... Եվ դու, վա՜տ կիրակ, ինչո՞ւ կը զարհուրիս կնոջմե մը, դու որ այսչափ եղեռն գործելե չը զարհուրեցար... Հանդարտե՛...*

Տեսիլ ԺԱ

Նույնք և Մարիամ

ՄԱՐԻԱՄ.— (ներարձակ գալով) *Մարդասպա՜ն, ի՞նչ ըրիր զավակս։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Մարիա՜մ, բավական է, թո՛ղ զիս, ինձ խոչընդոտ մի՛ ըլլար, ապա թե ոչ կսպաննեմ զքեզ ալ։*

ՄԱՐԻԱՄ.— *Այս ձա՛յնը... այս ձայնը պիտի ճանչնամ ես... Ո՞վ ես դու...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Մի՛ հարցներ անուս... Քու հիշատակդ բավական հալածեց զիս, գիշեր ցերեկ ձայնդ ականջես չդադրեցավ... ալ բավական անիծեցիր զիս...*

ՄԱՐԻԱՄ.— (ֆովը երթալով և դիտելով) *Սուրմա՜կ...* (ճիչ մ'արձակելով) *Ա՜հ... մարդասպա՜ն, դարձյա՞լ դու ես... Սուրմա՜կ, դարձյալ կ'ըսեմ, անիծյա՜լ ըլլաս հավիտյան...* (հուսահատ ծունր կիյնա, Սուրմակ Շուշանը գիրկը առած կը հեռանա։ Վարագույր)։

(Վերջ Ա արարվածին)

ԱՐԱՐՎԱԾ Բ

Արշալույս.— Պարեստա տանը պարտեզը.— Քարե աթոռակներ.— Աջ կողմը Պարեստա տունը։

Տեսիլ Ա

Պարեստ և Գուրգեն (տեսարանը մտնելով)

ՊԱՐԵՍՏ.— *Ի՞նչ է խնդիրքդ, խոսե, ծերունի՛դ Գուրգեն, գիտես որ երբեք քու խնդիրքներդ մերժած չեմ...*

ԳՈՒՐԳԵՆ.— *Գիտե՛ս ի՞նչափ քաղցր է զավակ մը...*

ՊԱՐԵՏ.— Անտարակույս, զավակ մը հոր մը կյանքն է...

ԳՈՒՐԳԵՆ.— Եվ զավկի մը արցունքը...

ՊԱՐԵՏ.— Կարծես թե հոր մը մահվան փոսը կը փորե, ինչպես որ ինձ ալ պատահեցավ... Որդիս այն գիշերվընե ի վեր, յորում դու ճամբուն վրա վիրավորյալ տեսնելով հոս բերիր, այն գիշերվընե ի վեր միշտ կարտասվե իր սիրուհվույն Շուշանին համար, զոր որբ ճանչելով մանկութենե ի վեր իմ տունս կը պահեի։ Շիտակը ըսելով, ես ալ կուլամ այն անմեղ աղջկանը կորստյանը վրա, զոր զավկի պես կը սիրեի, և քանի մը շաբաթե ետքը զինքը իմ որդվույս հետ ամուսնացնելու միտք ունեի... Բայց, ավա՜ղ...

ԳՈՒՐԳԵՆ.— Քանի որ գիտես, թե որչա՜փ դառն է այս վիշտը, ուրեմն մտիկ ըրե... Երեկ դաշտեն տնակս դարձա, աղջիկս զիս տեսնելուն պես գիրկս նետվեցավ։ Ես չի նշմարեցի բնավ, թե իր այտերն արտասվաթոր էին. քիչ ատենեն սրտիս վրա թացություն մը զգացի. վեր առի աղջկանս գլուխը և տեսա, որ հուշիկ մնջիկ կարտասվեր... «Ի՞նչ ունիս, դուստր իմ»,— ըսի սոսկմամբ։ Իսկ նա... «Թշվառ եմ, հայրի՛կ»,— պատասխանեց։ Այս խոսքը զիս խռովեց, կուրծքիս վրա սեղմեցի յուր անուշիկ դեմքը և «խոսե, ի՞նչ ունիս» հարցուցի... Ինքը «Կը սիրեմ» բառը արտասանեց և արտասուքն իր խոսքն ընդմիջեցին... Վերջապես իր բերնեն առի, թե քու որդիդ՝ Վարդը, կը սիրե եղեր։

ՊԱՐԵՏ.— Իմ որդի՞ս...

ԳՈՒՐԳԵՆ.— Այո, «Եվ եթե չը կրնամ իրեն ամուսինն ըլլալ, հայրիկ, միշտ թշվա՜ռ պիտի ըլլամ»,— ըսավ նա.. Ո՜հ, աշխատեցա զինքը համոզելու, բայց չը կրցա իր դիտավորութենեն շրջել. ինչ ընելիքս չեմ գիտեր, միայն կը մտածեմ, որ եթե իմ դուստրս թշվառ ըլլա, ի՞նչ պիտի ընեմ ես... Բոլոր հույսս քու վրդ է, ո՜վ առաքինիդ Պարետ, դու միայն կրնաս աղջիկս իրեն սպառնացող թշվառութենեն ազատել, թող ես մեռնիմ և աղջիկս երջանիկ ըլլա... Ես միայն աղջկանս համար կապրիմ, աղջկանս ժպիտներուն մեջ է իմ կյանքս... Այս մտքերը, որ մեկ մեկ վշտով հերմկցեր են՝ փեսատելով յուր ոտիցը տակ կը սփռեմ՝ եթե ապանկով իր երջանկությունը ստանալս գիտնամ։ Ով ամեն վայրկյան մտատանջություն մեջ եմ, որ չըլլա թե դժգույն շրթունքներս աղջկանս շիրմին ցրտություն զգան։

ՊԱՐԵՏ.— Մխիթարվե՛, ծերունի՛դ Գուրգեն, մի՛ հուսահատիր այդպես. անշուշտ երկինք ալևոր հոր մը վրա կը գթան և չեն թողուր, որ նա իր անմեղ աղջկան արտասուքը տեսնե... Տե՛ս, ես ի՞նչպես կը համբերեմ իմ միակ որդվույս սրտաճմլիկ հառաչանացը, որ իր հայրը թողած՝ գիշեր ցորեկ առանձնության մեջ արտասուք կը թափե... Ա՜հ, անիծյալ ըլլա այն, որ իմ զավակս այսպես թշվառ ըրավ. ահա մեր երկուքին վիճակն ալ միևնույնն է... Հիմա ես որդվույս կառաջարկեմ քու աղջկանդ սերը, և եթե ընդունի, թե դու երջանիկ կըլլաս և թե ես...

ԳՈՒՐԳԵՆ.— Ո՜հ, օրհնյալ ըլլաս, առաքինիդ Պարետ, որչա՜փ բարեսիրտ ես... Հիմա ժամանակն անցած է. ես դաշտ կերթամ, իրիկունը կը տեսնվինք... Մնաս բարյա՜վ (ձախ կողմեն կը հեռանա)։

ՊԱՐԵՏ.— Երթաս բարյա՜վ (խորեն կը հեռանա)։

Տեսիլ Բ

Վարդ (առանձին)

Երբ արշալույսը կը ծագի, կը կարծեմ որ Շուշան գիրկս է... և կը խաբվիմ միշտ... Անձկանոք և հուսով՝ առավոտյան սիրո սուրհանդակ զեփյուռին կսպասեմ, որ գուցե Շուշանես ողջույն մը կամ համբույր մը բերե ինձ. իսկ նա լռիկ մնջիկ կը սահի և իր հետքին վրա կարծես թե սուգ կը ծավալե. ուրեմն մեռա՞վ Շուշան, պատասխան տվեք, անտառք և հովիտք, թոռմեցա՞վ այն քնքույշ ծաղիկը... Գուք կը լռեք և պատասխան չե՞ք տար... ա՜հ, հասկցա, անիծյա՜լ ըլլա այն գիշերը... Նորածին լուսին մը բոլորեցավ, ի զո՜ւր սիրտս հույսով կը խայտա դեռ... Գուցե ինքը, երկինքն է հիմա, ինձ կսպասե, որ երթամ գրկեմ զինքը. երթամ համբուրել այն շրթունքները, որոնք հավիտենական սեր մրմնջեցին... չեմ կրնար դիմանալ եռ այս կարոտուն, կենացս օրերը, սրտիս խորերը վիշտ տպավորելով կանցնին. առավոտյան ցողի կաթիլները մեկ մեկ արտասուք են աչացս և ծաղկունք՝ մեկ մեկ տխուր հիշատակներ... Սիրուհվո մը հիշատակը միշտ կը տանջե զիս... Միայն շիրիմը պիտի կարենա սիրտս վշտերե ար-

գերալ (գաշույնը կը հանեն). ...ատ թող այս գաշույնը ծակի սիրտս, ալ թո՛ղ մեռնիմ ես... (ֆնֆգինը զարնելու կելլա, Պարեսն վրա կը հասնի և կը բռնե):

Տեսիլ Գ

Վարդ և Պարեսն

ՊԱՐԵՍ.— Կեցիր, ի՞նչ կընես, որդյա՛կ, կը մոռնա՞ս քու խղճալի հայրդ, չե՞ս գիտեր ի՞նչ կընես իրեն...

ՎԱՐԴ.— Ա՜հ, թո՛ղ որ մեռնիմ ես, հա՛յր իմ, թո՛ղ որ երթամ իմ անձկալիս գրկեմ։

ՊԱՐԵՍ.— Ուրեմն քու ալեւոր հորմե՞դ ավելի կը սիրես զինքը։

ՎԱՐԴ.— Ո՜չ, հա՛յր իմ, բայց առանց իրեն չի պիտի կարենամ ապրիլ ես։

ՊԱՐԵՍ.— Եվ դու մեռնիս և երջանիկ ըլլաս. ի՞նչ ընե հայրդ այն ատեն մինակ՝ աշխարհիս վրա, զո՞վ իբր սփոփանք՝ յուր գրկացը մեջ սեղմե. միայն զքեզ ունի, դու ես իր միակ զավակը. այն ատեն որո՞ւն գրկացը մեջ հանգչեցնե իր ալեւոր ճակատը... համբերե՛, որդյա՛կ իմ, գուցե դեռ կապրի Շուշան, թերևս օր մը գա զքեզ գտնելու... և եթե զքեզ մեռած գտնե, այն ալ թշվառ պիտի ըլլա. համբերե՛, անշուշտ երկինք օր մը կը լսեն մեր աղաչանացը... բայց, որդյա՛կ իմ, եթե կը սիրես քու հայրդ, ջնջե՛ սրտեդ Շուշանա հիշատակը և պիտի տեսնես որ դու և ուրիշներն ալ երջանիկ պիտի ըլլան։

ՎԱՐԴ.— Ի՞նչպես...

ՊԱՐԵՍ.— Գուրգենա աղջիկը զքեզ կը սիրե և գիշեր ցորեկ քեզի համար կարտասվե եղեր, դու գիտես թե ինչ գեղեցիկ և պարկեշտ աղջիկ մ՚է։

ՎԱՐԴ.— Կը ցնորի՞ս, հա՛յր իմ, ե՞ս ջնջեմ սրտես Շուշանա հիշատակը և ուրիշ մը սիրե՛մ... Եվ այն ատեն հոգիներն ու անատաներն լեզու պիտի ելնեն և «սիրադրո՜ւժ» աղաղակելով նախատանաց փուշեր պիտի նետեն ոտիցս ներքև... Այն լուսինը, որ մեր սիրույն վկայն եղավ, ամպերու ետև պահվըտած, ամելություն պիտի մտուցանե ինձի դեմ... Ո՜հ, ո՜չ, չեմ կրնար մոռնալ զինքը և իր սերը... Ինչո՞ւ արգիլեցիր դիս մեռնելե, հա՛յր իմ, այս վայրկենին գուցե մեր հոգիները զիրար կը գգվեին, գուցե Շուշանա գիրկն էի ես հիմա։

ՊԱՐԵՍ.— Եվ քու հա՞յրդ... Եվ այն ատեն քու ալեւոր հորդ վշտահար սիրտը գերեզմանիդ ցրտասարսուռ քարին վրա սառիլ սկսեր էր... Ո՜հ, հիմա կը հասկնամ, որ զիս չե՛ս սիրեր եղեր, Վարդ։

ՎԱՐԴ.— Ա՜հ, ո՜չ, կը սիրեմ զքեզ, հա՛յր իմ, ուզե արյունս՝ կյանքս կուտամ, բայց մի ուզեր սիրտս. թո՛ղ որ այս սիրտը Շուշանա սիրույն համար հալի և մաշի... Չեմ կրնար ուրիշ մը սիրել... Շուշանա տխուր ձայնը ականջես չը դադրիր, «միշտ սիրե զիս»,— կը մրմնջե... Չե՛մ կրնար, եթե Շուշան կենդանի է, թշվառության բաժակը մատուցանել անոր, իսկ եթե մեռած է՝ զինքը իր գերեզմանին մեջ խռովել... Եթե ուրիշի մը գիրկն ըլլամ, իր հառաչանքներն ականջիս քովեն պիտի սլանան, քնույս ատեն յուր արտասուքը ականջիս քով պիտի մրմնջեն... Իր արտասվաց ամեն մեկ կաթիլը մեկ մեկ խղճի խայթ պիտի ըլլա սրտիս... Շուշանա շրթունքներեն, ուսկից միայն համբույր կը բխեր, այն ատեն անեծք պիտի թոթափին... Իր աչացը մեջ, ուր միայն ժպիտք կը խայտային, այն ատեն ատելության շանթեր պիտի փայլատակին... Ո՜հ, ի՞նչպես ուրիշ մը սիրեմ, հա՛յր իմ։

ՊԱՐԵՍ.— Եթե ուրիշ մը չե՛ս սիրեր, ուրեմն դադրե՛ ալ հառաչելե, որպեսզի քու հայրդ ալ դադրի վշտանալե. չե՛մ բռնադատեր զքեզ, որդյա՛կ իմ, որ ուրիշ մը սիրես, այլ կը փափագիմ, որ ալ հուսահատ ու տխուր չի տեսնեմ զքեզ... Եթե արտասվաց կաթիլ մը շողշողե աչացդ մեջ, եթե խղդուկ հառաչանք մը թռչի շրթունքներեդ այսուհետև, գիտցիր որ քու ծերունի հայրդ ալ պիտի սկսի գերեզմանին աստիճանները չափել...

ՎԱՐԴ.— (արտասվալից) Ո՜հ, անկարելի է, հա՛յր իմ... Եթե այդպես է, ուրեմն կը թողում ես այս անակը և լեռնե լեռ կը թափառիմ, որպեսզի դու իմ հուսահատությունս չը տեսնես... կը հեծեմ միայնակ գերեզմանոցներուն խորերը, ինչվան որ արտասուքս և հառաչանքս դադրին... և սև հողեր ծածկեն իմ գլուխս։

ՊԱՐԵՍ.— Ո՜հ, չէ՛, որդյակ իմ, իմ գիրկս եղի՛ր, իմ գիրկս հեծե՛, ես ալ քեզի հետ պիտի հեծեմ... Դու արտասվոքդ թրջե այս ալեւոր ճակատը և ես ալ իմ արտասվախառն համբույրներովս

ծածկեմ քու քաղցր դեմքդդ... Ո՜հ, մի՛ զատվիր իմ գրկեն, ա՜հ, երբե՛ք, երբե՛ք զավակս...

ՎԱՐԴ.— Չէ՛, չէ՛, հա՛յր իմ... Դադրե՛... Ես միշտ քու քովդ պիտի ըլլամ...

ՊԱՐԵՏ.— Օրհնյա՛լ ըլլաս, իմ սիրուն զավակս... Բայց խոստացիր, որ ես քու քովդ չեղած ժամանակդ ալ չի պիտի լաս։

ՎԱՐԴ.— Կը խոստանամ, հա՛յր իմ, ապահով եղիր...

ՊԱՐԵՏ.— Շատ աղեկ, որդյա՛կ իմ, այդպես քու հայրդ ալ երջանիկ կընես (տանը դռնեն ներս կը մտնե). Խե՜ղճ Գուրգեն...

Տեսիլ Դ

Վարդ (առանձին)

Խե՜ղճ հայրիկ... Որչա՜փ վշտացուցի զինքը... Շուշա՛ն, տես քու սիրույդ համար հորս ցամքած աչքերեն արցունք հոսեցուցի... Ո՜հ, դիտեմ որ դու հորմես քաղցր ես ինծի, երբ հուշիկ մնջիկ գիրկս կը ննջես... երբ «կը սիրեմ զքեզ» խոսքը միշտ ականջիս կը կրկնես... Շա՜տ քաղցր ես դու, ո՜հ... շա՜տ քաղցր... (ձեռքին երեսը ծածկած աթոռակի մը վրա կը նստի ճուսահատ):

Տեսիլ Ե

Վարդ (Սուրմակ աղքատի զգեստով ձախ կողմեն կը մտնե)

ՍՈՒՐՄԱԿ.— Տեսնենք քիչ մ՚ալ այս արհեստը ձեռք առնենք, ավազակությունը դժվար է և վտանգավոր, իսկ այս արհեստը՝ դյուրին և անվտանգ... թեպետև Շուշան կը սիրե զիս, բայց դարձյալ ուզիեն չեմ կրնար բաժնվիլ... Քանի մը ժամանակի վեր է որ վրաս տարօրինակ ագահություն մը տիրած է (Վարդը տեսնելով), կարծեմ Վարդն է սա... որչա՜փ թշվառ է... օ՜ն, պաշտոնս կատարենք։ Վարդ բավական հարուստ է... Հիմա լալ ձևացնելու և ցավալի դիպված մը հորինելու է. այն ատեն ոչ միայն դիմացինս յարատևուն կը շարժեմ, այլ քսակն ալ կը պարպեմ։ Ահա երջանիկ արհեստ մը, որով մարդ ստակի տեր կըլլա առանց չարաչար հոգնելու... (կը մոտենա):

ՎԱՐԴ.— Ինչո՞ւ համար եկեր ես հոս, բարի մարդ, ի՞նչ կը խընդրես...։

ՍՈՒՐՄԱԿ.— (լալ կեղծելով) Եթե զիս աղեկ մը դիտես՝ կը հասկնաս հոս գալուս պատճառը...

ՎԱՐԴ.— Կարծեմ աղքատ ես և ողորմություն խնդրելու եկած ես...

ՍՈՒՐՄԱԿ.— Տե՛ս, ողորմած մարդը, ինչպես կը հասկնա թշվառի մը վիճակը... սիրելի՛ որդյակ, երեք հատ փոքրիկ տղաքներ ունիմ առանց մոր, երկու երեք օր կա որ դժբախտությամբ աջ թևս կոտրեցավ և աշխատությամբ սնունդ հայթայթելու անկարող եմ, երկու օր կա որ ես անոթի, տղաքս անոթի՝ թշվառության մեջ կը տառապինք... Փոքրիկ խեղճերը բոլորտիքս ժողվված «Հայրի՛կ, անոթի ենք» ըսելով կուլան կողբան... Ո՞ր հոր սիրտ կը դիմանա ասանկ ողորմելի տեսարանի մը... Քանի մը անգամ հուսահատությենես ինքզինքս սպաննել ուզեցի, բայց տղայոցս ապագա վիճակը նախատեսելով՝ ետ կեցա դիտավորությենես և սկսա տուն տուն ողորմություն խնդրել. շատերը վռնտեցին զիս, հազիվ քիչ մը ստակ ժողվեցի, և ան ալ տուն տարած ատենս ավազակները կողոպտեցին... ա՜հ, գոնե դուն, գթած զավակ, հանուն սիրելվույդ ըլլա, մեկ ողորմություն մը շնորհե և ազատե թշվառ ընտանիք մը։

ՎԱՐԴ.— Խե՜ղճ մարդ, առ սա քսակը և գնա շուտ տղաքդ խնամե... սա քսակը, որ քեզ կուտամ, իմ բոլոր հարստությունս է (քսակ մը կուտա):

ՍՈՒՐՄԱԿ.— (առնելով) Շնորհակալ եմ ազնի՛վ զավակ... Աստված զքեզ սիրելյացդ գրկեն չի բաժնե... Մնաս բարյա՜վ։ (Գացած ատեն) Խե՜ղճ Վարդ, իր սիրուհին հափշտակելես զատ քսակն ալ առի. գործերնիս աղեկ սկսավ... Տեսնենք... (երթալու ատենը Մարիամ դիմացը կելնե, Սուրմակ զայն տեսնելով կանգ առնե և Մարիամ սոսկման ճիչ մը արձակելով կը նվաղի):

Տեսիլ Զ

Վարդ և Մարիամ

ՎԱՐԴ.— Ի՞նչ եղավ այս կինը, պիտի ճանչեմ ես զինքը... Մա՜յրս, այո՛, մա՜յրս է... Ի՞նչ խորհրդավոր տեսարան... այս մարդը

ո՞վ էր արդյոք (զայն գրկելով) *մա՛յր իմ... մա՛յր իմ... ի՞նչ եղար հանկարծ... խելքդ գլուխդ բեր, խոսա...*

ՄԱՐԻԱՄ.— (սթափվելով և զայն դիտելով) *Աստվա՛ծ իմ... ո՞վ կը տեսնեմ...*

ՎԱՐԴ.— *Մի վարանիր, մա՛յր իմ, քու որդիդ՝ Վարդն է գրկացդ մեջ։*

ՄԱՐԻԱՄ.— *Կը խաբես զիս, միթե չը մեռա՞վ Վարդ այն սև գիշերը։*

ՎԱՐԴ.— *Ո՛չ, ո՛չ, ազատեցավ Վարդ այն նենգավորին տված հարվածեն... Բայց իցի՞վ թե այն գիշերը մեռներ... այլ ըսա, մա՛յր իմ, ո՞վ էր այն աղքատը... խնչո՞ւ իր տեսքը խառնեց զքեզ։*

ՄԱՐԻԱՄ.— (մենքոսի) *Խե՜ղճ տղա, յուր հակառակորդը չի ճանչեր...* (բարձր) *Ծարդաղեմ հրեշ մ'է նա, որ այս ողորմելի կերպարանքը...*

ՎԱՐԴ.— *Հրե՜շ մը... Ճշմարի՞տ կըսես...*

ՄԱՐԻԱՄ.— *Ինչո՞ւ համար եկած էր հոս...*

ՎԱՐԴ.— *Ծկամ, «խղճալի եմ» ըսելով քսակս առավ գնաց։*

ՄԱՐԻԱՄ.— *Անօրե՜ն... Միթե չի վախցա՞ր այս տեղն ալ ոտք կոխելու, ուր անեծք կսպասեին քեզի... ա՜հ, այն անմեղներուն անեծքը չը փշրեցի՞ն քու գլուխդ, երբ զիրենք իրենց սիրելյաց գրկեն հափշտակեցիր. գերեզմանն անգամ կը գարշի քեզնե... Մեկ ոտքդ քանի մը անմեղներու դիակաց վրա կեցած է և մյուս ոտքդ դժոխոց բերանը կը նայի, և դեռ՝ առանց սարսափելու երկնից շանթերեն, ըրած ոճիրներուդ վրա կյանք կը շնչես, անզգա՜...*

ՎԱՐԴ.— *Քու խոսքերդ սոսկումն կազդեն ինձ, մա՛յր իմ... ի՞նչ ըսել կուզես, չեմ հասկնար...*

ՄԱՐԻԱՄ.— *Ըսել կուզեմ, որ ես ալ քիչ առաջեն այն անօրենին ոտքը պատվանդան եղող դիակներեն մեկն պիտի ըլլամ... Անօրեն մ'է նա, նա է որ քու մայրդ գրկեդ հափշտակեց, նա է որ քու սիրուհիդ գրկեդ հափշտակեց...*

ՎԱՐԴ.— *Ա՜հ, Շուշանս հափշտակե՞ց...* (ձախեն վազելով)։

ՄԱՐԻԱՄ.— *Կեցի՛ր, կեցի՛ր... Ո՜հ, գնաց* (ինքզինքին գալով) *արդյոք ստուգիվ որդի՞ս էր որ տեսա, եթե ոչ՝ գերեզմանեն փախած անհանգիստ ոգիներ մը, որ սիրուհին ալ գնուն։*

Տեսիլ Ե

Պարետ և Մարիամ

ՄԱՐԻԱՄ.— *Վա՜րդ, չըլլա՜ որ սպաննե զինքը, ի՞նչ ըրի ես...*

ՊԱՐԵՏ.— *Ջավա՜կս սպաննե... Ի՞նչ կըսես, կին դու...*

ՄԱՐԻԱՄ — *Ջավակս մարդասպանի մը գիրկը կը վազե, ազատենք։*

ՊԱՐԵՏ.— *Ի՞նչ պատահեցավ տե՜ր Աստված, բայց ո՞վ ես դու...։*

ՄԱՐԻԱՄ.— (արտասվալից) *Ծուր մայրը...*

ՊԱՐԵՏ.— (զարմացմամբ) *Մարիա՜մ...*

ՄԱՐԻԱՄ.— *Որ ամուսնուն ծնկացը կը փարի* (վարագույրը կիջնե)։

(Վերջ Բ արարվածին)

ԱՐԱՐՎԱԾ Գ

Ծաղկազարդ հովիտ մը.— Ձյ կողմը բլուր մը.— Ծառը լեռներ, որոնց ստորոտը ժայռերուն վրայեն շրվեժ մը կը ասհի։

Տեսիլ Ա

Վարդ (առանձին)

Մինչև ցե՞րբ իմ հայրենի՛ անապա Թոզած պիտի թափառիմ շնչասպառ քեզի համար, Շուշա՜ն, զքեզ հափշտակող ավազակին ետևեն, պիտի գտնեմ զքեզ... Ո՜հ, եթե յերկինս թռար, ցցուր անգամ մը գոնե քու լուսատիպ դեմքդ ամպերուն ետևեն... Տեսնեմ և մեռնիմ, գամ և զքեզ գտնեմ... Ա՜հ, սե՜ր, սե՜ր, երանի թե ոչ քու քաղցրությունդ և ոչ ալ քու վշտերդ զգայի... Ա՜խ ի՞նչ կըսեմ ես... Սիրեցի Շուշանը և պիրս համար են համբույր, ժպիտ, հառաչանք և արտասուք... Բայց երբ միտքս կուգան այն օրերն, երբ մենք Շուշանա հետ իրարու գիրկ՝ իրարու շնչով կապրեինք, հիմակվան՝ իրմե հեռու անցուցած վայրկյաններս մեկ մեկ փոթորկալից գիշերներ են առանց արշալույսի... Ո՜վ հրեշտակդ գթության, թո՛ր երկ-

նից կամարեն և այս արտասուքս քու թևոցդ վրա ժողվելով Ամենակալին տար, ըսե՛ իրեն, թե վայրկյան մը չեմ մոռցած զինքը...

Տեսիլ Բ

Վարդ և Գեղամ (նիհար, դեղնած և կթոտ կերևի)

ՎԱՐԴ.— (Գեղամը տեսնելով, որ հուսահատ և համրաքայլ կուգա) Ահա, հուսահատ երիտասարդ մ՝ալ... կարծես թե նա ալ ինձ նման սիրուհին կորսնցուցած է... Նա ալ ինձ նման թշվառ է... և հառաչելով ուրվական մը դարձեր է։

ԳԵՂԱՄ.— Քիչ մ՝ալ թող զիս, ո՛վ անողորմ հիշատակ, ալ բավական գերի եղավ քեզ սիրտս... բայց դու ինձ մտիկ չես ըներ... Դու զիս չի պիտի թողուս ինչվան որ աչքերս չը մթագնին... Ո՛վ սեր, մինչև ցե՞րբ օձի պես սրտիս արյունը պիտի ծծես... ե՞րբ պիտի հագենաս... Շուշա՛ն, երանի՜ թե աչքերս զքեզ տեսած չըլլային բնավ...

ՎԱՐԴ.— (մեկուսի) Շուշա՛ն... Ո՛վ երկինք... Ի՞նչ անուն էր որ լսեցի օտարականի մը բերնեն (անոր մոտենալով). այն աղջիկը որուն անունը թռավ հիմա շրթունքներեդ, կը ճանչե՞ս... Տեսա՞ր զինքը, խոսե՛, շուտ խոսե՛...

ԳԵՂԱՄ.— Այն աղջի՞կը... Ա՜հ... Կը սիրեմ ես զայն։

ՎԱՐԴ.— Կը սիրե՞ս... Իսկ ի՞նքը։

ԳԵՂԱՄ.—Մերժեց իմ սերս...

ՎԱՐԴ.— Ո՜հ... բայց ո՞ւր և ե՞րբ տեսար զինքը...

ԳԵՂԱՄ.— Ամիսե մը ավելի է, որ գիշեր մը անտառի մը եզերքը տեսա զինքը, հոն հայտնեցի իմ սերս և նա մերժեց, ուրիշ մը կը սիրեր, Վա՜րդը... Միշտ «Վարդ» կը թռեր իր բերնեն։

ՎԱՐԴ.— Ո՜հ, Շուշա՛ն, ես գիտեի, որ դու յամենայն սրտե կը սիրես զիս...

ԳԵՂԱՄ.— Ի՞նչ... Զքեզ կը սիրե՞ միշտ... ուրեմն Վա՜րդն ես դու... Բայց ո՞ւր է ինքը... Ա՜հ, շնորհք ըրե, գոնե վերջին անգամ մը տեսնեմ յուր դեմքը, թեպետ նա զիս չը սիրեր... Ո՜հ, վերջին անգամ գեթ... Կը տեսնես որ ալ պիտի մեռնիմ...

ՎԱՐԴ.— Եվ դու ալ իմ արցունքներս կը տեսնե՞ս։

ԳԵՂԱՄ.— Ա՜հ... Մեռա՞վ։

ՎԱՐԴ.— Ո՜չ, հափշտակեցին։

ԳԵՂԱՄ.— Հափշտակեցի՞ն։

ՎԱՐԴ.— Հիմա ես ալ տեսնել կուզեմ յուր դեմքը, գոնե վայրկյան մը. այլ չի կա՜։

ԳԵՂԱՄ.— Ուրեմն առանց զինքն անգամ մ՝ալ տեսնելու, պիտի մեռնի՞մ։

ՎԱՐԴ.— Եվ պիտի անիծե՞ս իմ Շուշանս, որ քու սերդ մերժեց...

ԳԵՂԱՄ.— Ո՜հ, ո՜չ, զինքն օրհնելով պիտի մեռնիմ... վասնզի դեռ կը սիրեմ զինքը... Պիտի անիծեմ այն օրը՝ յորում զինքը տեսա հովտի մը մեջ, որ առվակի մը եզերքը հանգչած կը դիտեր թե ի՞նքն ավելի անբիծ է եթե առվակը...

ՎԱՐԴ.— Ո՜հ, Շուշա՜նս... Եվ միթե առվակեն անբիծ չէ՞ր...

ԳԵՂԱՄ.— Այո՜... Վերջին հարված մը կը պակսեր... Պիտի մեռնի՞մ... (բլրին ետևեն կանհետանա):

Տեսիլ Գ

Վարդ (առանձին)

Քունն արտևանացս վրա կը ծանրանա... Երեք օր է որ աչքս չեմ գոցած... Ա՜հ, հոս քիչ մը նիրհեմ... գուցե երազիս մեջ տեսնեմ Շուշանս և կարոտս առնում... Շուշա՜ն, մի՛ մոռնար զիս բնավ... (ծառին կրթնած քնանալու կըլլա, իսկույն հետևյալ երգը կը լսվի՝ զոր մատաղոն և ապշած մտիկ կընե):

ՍԻՐԵՐԳ

Ա՜հ, արշալույս քաղցրածավալ,
Ցողե՛ յերկիր ցող և նըշույլ,
Տես յանտառին նսեմաստվեր
Լսվին թըռչնոց քաղցր երգեր։

Արի, զարթի՛ր, դու, վա՛րդ փութով,
Յանտառս, հովիտս Արարատյան,
Օ՛ն, սիրտ ի սիրտ և թև ի թև
Մինչ երեկո առցուք մեք ման։

Համբույր հազար հողմույն ընդդեմ,
Եվ անդանոր սգել զսեր
Ի շուրթն ի սիրտ և ի հոգի
Ուխտել ըզսեր հավերժական։

Այս ե՞րգը... այս ձա՞յնը... պիտի հիշեմ ես, կը գողա՞մ... սիրտս կը տրոփե... Այո՛, Շուշանա ձայնն է... Բայց ո՞ւր եմ ես... Երկի՞նքն եմ եթե ոչ երկրի վրա... այո՛, այո՛, այն երգն է, զոր արշալույսին անկողնույս քով նստած կերգեր նա... Երկի՛նք և երկի՛ր, պատասխան տվե՛ք ինձ, ո՞ւր է Շուշանա... ուսկի՞ց եկավ յուր ձայնը... Շուշա՛ն, հոս եմ հոս... իսկ դու ո՞ւր ես, գրկեմ զքեզ... սեղմեմ ձեռքդ սրտիս վրա (ձախ կողմեն շտապավ կը մեկնի)։

Տեսիլ Դ

Պարետ և Մարիամ (աջ կողմեն կուգան)

ՊԱՐԵՏ.— Ա՜հ, ո՜րչափ հոգնեցա... Այս ո՞րչափ քալեցինք, ե՞րբ պիտի գտնենք զինքը... արդյոք Վարդ թողո՞ւց զմեզ, իմ սիրելի որդյակս, որ իմ միակ հույսս և իմ ծերությանս նեցուկն էր...

ՄԱՐԻԱՄ.— Համբերե՛, սիրելի ամուսինս...

ՊԱՐԵՏ.— Համբերե՞մ... Այո՛, համբերեմ... Բայց այս քանի օր է որ իր հայրենի տնակը թողուց, հեռացավ և իր ալևոր հայրը հուսահատության մեջ ձգեց... Որդվույս այս բաժանումը կենացս փոթորիկն էր, որ պայթեցավ և կարծեմ միայն մահվան առջև պիտի խաղաղի... Այս խոցը միշտ պիտի կրկնեմ. որդի մը հորը մահվան վրա քանի մը արցունք կը թափե, իսկ հայր մը որ որդվույն կենացը ամեն մեկ վայրկյանին մեն մի արցունք կը նվիրե... Ո՜հ, չը գիտեն որդիք հոր արժեքը... Վա՜րդ, Վա՜րդ, որչափ ապերախտ գտնվեցար քու ծերունի հորդ, որ ամեն մեկ վայրկյան քու երջանկությանդ համար կը մտատանջեր, և դու սիրուհվո մը համար մոռցար զինքը...

ՄԱՐԻԱՄ.— Սիրելի՛ ամուսինս, դու չը գիտե՞ս թե սերը որչափ ազդեցություն ունի 17 տարեկան երիտասարդի մը սրտին վրա, յորում դեռ նոր կը փթթին սիրո առաջին ծաղիկները և որուն առջև շատ անգամ կը նվազի հայրական սերը, այսուամենայնիվ շատ անգամ հոր մը կաթիլ մը արտասուքը կարող է մարել այն սերը... համբերե, անշուշտ կը գտնենք զինքը և տնակնիս կը դառնանք խաղաղ կյանք վարելու համար. (մեկուսի) իսկ իմ որդիս Գեղամս... Առանց անոր՝ ես չի պիտի կարենամ երջանիկ ըլլալ։

ՊԱՐԵՏ.— Այո՛, համբերեմ... Բայց եթե չը գտնենք երբեք զինքը, ի՞նչ պիտի ընեմ ես... Ո՜հ, արդյոք հուսահատութենեն ինքզինքն սպաննե՞ց... Սոսկալի կասկած... Արդյոք ո՞ր գետը քշեց տարավ իր ցուրտ դիակը, ո՞ր վայրն արդյոք իր արյամբը կաթմբեցավ. Վա՜րդ, Վա՜րդ, արդյոք մահվան շունչը խամրեցո՞ւց զքեզ, ինչպես ձմռան հողմը վարդը կը խամրեցնե... Ո՜հ, մեկը չի գար ծերունի հոր մը ավետելու թե՝ «Քու որդիդ կենդանի է և պիտի գտնես զինքը...»։ Կարծես թե բնությունը հուշիկ մնջիկ որդվույս վրա կը սգա... (ձախ կողմեն նայելով) ի՞նչ կը տեսնես... Ահա մեկը անտառին խորը կը թափառի... արդյոք Վա՞րդս է... Ո՜հ, ի՜նչ ուրախություն, եթե ինքն ըլլա (կերթա)։

ՄԱՐԻԱՄ.— Գնա՛, գնա՛, կարելի է որ ինքն ըլլա։

Տեսիլ Ե

Մարիամ (առանձին)

Բայց իմ Գեղամս ո՞վ պիտի դարձնե իմ գիրկս... Թեպետ ինքն ուխտազանցության մը կամ ոճիրի մը հիշատակն է, սակայն կը սիրեմ զինքը. երկու զավակներս ալ կորուսի. մին գտնելով՝ գուցե մյուսին հիշատակը մոռնայի... Բայց գիրկս երկուքեն ալ զուրկ է... խե՜ղճ ամուսինս, ո՜րչափ թշվառ է... արդյոք հիրավի Վա՞րդն էր տեսածը (ձախեն կերթա)։

Տեսիլ Զ

Գեղամ (աչքերովը մեկը փնտռելով)

Գացեր է... Պիտի մեռնիմ... ահա մահը հիրանները բաց ցած՝ կապատե որ երթամ գրկեմ զինքը... Այս ծաղկանց տակ

թող թաղվին հույսս և սերս... Ի՞նչ եղա ես, ողբաձայն թել մը դարձա... Աներևույթ ձեռք մը գերեզման մը կը ցուցնե ինձ անդադար, զոր սերն իր արյունլվա մագիլներովը ոտքերուս տակ փորեց. Հո՜ն պիտի իջնեմ ես, Շուշա՜ն, վասնզի չափազանց սիրեցի զքեզ... Գերեզմա՜ն, թող հատակդ խոր ըլլա, որպեսզի գիշերվան լռության մեջ աշխարհիս երեսեն սլացող սիրո խոսքերուն և համբույրներուն մրմունջը չըլլա որ գերեզմանիս թափանցե և իմ վշտահար ստվերս յուր խոր քունեն արթնցնելով՝ աչքերեն արցունքի սառած կաթիլներ հոսեցնե... Ո՜վ սեր, դահի՛ճ երիտասարդաց, դու սրեցիր տապարդ... Մնաք բարյա՜վ, անտառք և հովիտք և ամենայն զբոսավայրք մանկության... Մնաս բարյա՜վ, մա՜յր իմ, այսուհետև ինծի համար թափած արցունքներդ գերեզմանիս վրա ժողվե... Կարողություն չի մնաց վրաս, ոտքերս կը դեղևին (ֆիչ ֆիչ կը տկարանա և վերջապես կիյնա) Ա՜հ, Շուշա՜ն... Մա՜յր իմ...

Տեսիլ Է

Նույն և Մարիամ (մտնելով)

ՄԱՐԻԱՄ.— Ի՞նչ ձայն է որ լսեցի... մեկը «Մայր իմ» կաղաղակեր (կը տեսնե Գեղամը, ֆովը կը մոտենա, աղեկ մը կը դիտե և ճիչ մը կարձկե) ո՜հ, Գեղա՜մ։

ԳԵՂԱՄ.— Մա՜յր իմ... դո՞ւ ես...

ՄԱՐԻԱՄ.— Ե՛լ, ե՛լ, մայրդ գրկե, զավակս...

ԳԵՂԱՄ.— Ո՜հ, չեմ կրնար։

ՄԱՐԻԱՄ.— Ի՜նչ նիհար և դալկահար դեմք... ի՜նչ կթոտ ծունկեր... Բայց ի՞նչ եղար, զավա՜կս։

ԳԵՂԱՄ.— Սիրեցի աղջիկ մը և նա մերժեց սերս։

ՄԱՐԻԱՄ.— Դարձյալ սեր...

ԳԵՂԱՄ.— Ես ալ ինքզինքս լեռները նետեցի, բան մը չէի ուզեր ճաշակել, շունչ մը չէի ուզեր շնչել... Իզո՜ւր ուզեցի զինքը մոռնալ, քեզ մոռցա, մա՜յր իմ, զինքը չը կրցա մոռնալ... Իր հիշատակը դահճի մը պես կը հալածեր զիս... սրտես գունդագունդ հառաչանքներ հանել կուտար, զիս ուժե կը ձգեր... մայր իմ... այնպես որ հիմա մորս վերջին մնաս բարով մը ըսելու անգամ կարողություն չի մնաց վրաս։

ՄԱՐԻԱՄ.— Որդյա՜կ իմ, պիտի զրկվիմ քեզնե, չի պիտի կարենամ խորտակել այն դռները, որոնք զիս քեզնե պիտի բաժնեն... որոնք որդի մը արտասվալից մոր մը գրկեն պիտի զատեն։

ԳԵՂԱՄ.— Մի՛ այդպես թրջեր այրած արտասվոքդ սիրտս, մա՜յր իմ, որոնք սրտիս կրակը փոխանակ մարելու, ավելի կը բորբոքեն... Գոնե թող որ կենացս վերջին վայրկյաններուս քու մայրական ծոցդ թափեմ արցունքներուս վերջին մնացորդը, որոնք չեն նմանիր մանկությանս ատեն թափած արտասվացս, որք մարգրտի պես կը սահեին այտերուս վրայեն... իսկ այս կաթիլ, կաթիլ վազածը սրտիս արյունն է, որ աչքերես դուրս կը ժայթքե, վասնզի ալ արցունքս ցամքեցավ։

ՄԱՐԻԱՄ.— Ո՜հ, ա՞յս է կյանք ըսվածը... ա՞յս է զավակ ունենալը... Մայր մը զավակ մը ունենալու համար՝ պետք է որ անհուն սիրտ մը ունենա... ա՜հ, որդյակ իմ, արև մ'էիր դու երկնքին երեսը, և եթե դու աներևութանաս կենաց հորիզոնեն, սև գիշեր մը պիտի պատե զիս...

ԳԵՂԱՄ.— Ուրեմն ինչո՞ւ ծնար զիս, եթե դու և ես այսպես թշվառ պիտի ըլլայինք։

ՄԱՐԻԱՄ.— Կը տեսնես, որ սերը կսպառե քեզ։

ԳԵՂԱՄ.— Ո՜հ, սերն առաջին անգամ ինծի սիրուն հրեշտակ մը երևցավ, ես ալ յուր զմայլելի տեսքեն հրապուրված՝ գրկեցի զինքը... Բայց հետո տեսա, որ ալ նույն հրապույրը չուներ... Տեսա, որ սերը դահիճ մ'է եղեր, որ տապար ի ձեռին զիս կը հալածեր կատաղաբար... Վերջապես հասավ ինձ... հարվածեց և զիս գետին տարածեց... Բայց, օրհնյալ ըլլա երկինք, խեղճ երիտասարդ մը յուր սիրեցյալ մորը տեսութենեն չի զրկեց... Ուրիմն վերջին անգամ մ'ալ սրտիդ վրա գրկե զիս, մա՜յր իմ։

ՄԱՐԻԱՄ.— Ա՜հ, կը թողո՞ւս մայրդ, որդյա՜կ իմ...

ԳԵՂԱՄ.— Աչքերս կը մթագնին... մահվան ստվերը դիմացս կեցած ինձ կսպասե... Մնա՜ս բարյավ, մա՜յր իմ... (կը մեռնի)։

ՄԱՐԻԱՄ.— Օգնությո՜ւն, օգնությո՜ւն, զավակս կը մեռնի... Ա՜հ, մեռավ... դիակնացա՜վ... ա՜հ, ալ կենդանի չէ իմ Գեղամս... Իմ կյանքս ալ նորա գերեզմանին վրա արտասվելով պիտի սահի։

Տեսիլ Ը

Մարիամ և Պարեհ

ՊԱՐԵՀ.— (հոգատանջ եւ ելելով) *Ի զո՜ւր... Ինքը չէր...*
ՄԱՐԻԱՄ.— (Պարեհը տեսնելով) *Ա՜հ...*
ՊԱՐԵՀ.— *Ո՞վ է այդ... Վարդը չէ՞...* (մոտենալով):
ՄԱՐԻԱՄ.— *Ջավա՜կս է...* (վարագույրը կիջնե):

(Վերջ Գ արարվածին)

ԱՐԱՐՎԱՆ Գ

Կամարակապ մութ քարայր մը.— Խորը խոռոչ մը.— Կամարե մը կախված կանթեղ մը կը պպզա։

Տեսիլ Ա

Սուրմակ (նստարանի մը վրա կը մրափե). Շուշան (խոռոչին մեջ կը քնանա)

ՍՈՒՐՄԱԿ.— (խռոված կարքնա, շորս կողմը կը նայի, խոռոչը կը դիտե և կը ճանդարտի) *Դեռ ազատ և երջանիկ եմ, դեռ Շուշան ձեռքս է... Ա՜հ, ի՞նչ սոսկալի երազ էր որ տեսա... սիրտս զարհուրած՝ դեռ կը բաբախե, դեռ բոլորովին դողի մեջ եմ, ինչո՞ւ համար հանդարտ չեմ կրնար սիրել... Անգո՜ւթ երգինք, ինչո՞ւ համար հանգիստս խլեցիք սրտես... Գիշերները՝ մեկ մեկ սեռզգեստ դահիճներ են, որ գլխուս վերեն կանցնին առանց զիս սպաններու՝ սպառնալից նայվածք մը միայն ուղղելով ինձ, որո մեջ հայելվո պես անցելույն հիշատակները կը նշմարեմ... Ցերեկներն ալ հանգիստ չեմ, վասնզի ալեոր հորս ստվերն՝ իր պաղ ձեռքը կուրծքիս վրա դրած սիրտս կը ճնշե... միշտ այն սոսկալի գիշերը միտքս կուգա, այն սև գիշերը յորում դողդոջելով անկողնես ելա, զարհուրած շորս կողմս նայեցա, հետո երկինք վերուցի աչքերս և տեսա որ լուսինը խոժոռադեմ զիս կը դիտեր... Արձանի մը պես պաղած մնացի, հառաջ գացի և վարանեցա, միտքս բերի սիրուհիս և քաջալերվեցա, վասնզի կը հուսայի հետը ապրիլ և ձեռացս մեջեն ոսկվո հեղեղներ թափել... Հորս սենեկին դուռն տեմին վրա հասած էի... ներս մտա... անեղծուն քով ծունր եկա... խղդուկ հառաչանք մը սլացավ սրտես... պաղ քրտինք մը հոսեց մարմնես... ամեն բան լմնցեր էր... խեղդամահ ըրի հայր մը, որ իմ ամոթալից գործքերուս խոչընդոտն կելլար... Դեռ իր վերջին նայվածքը աչացս առջևն է։*

ՇՈՒՇԱՆ.— (քանդագուշելով) *Որչա՜փ կը սիրեմ զքեզ...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Այս անուշ ձայնը առածիս պես կը զվարթանամ... Երբ Շուշանա գիրկն եմ ամեն բան կը հանգարտի... Քանի մը անգամ բռնադատեցի զինքը, բայց երբ օգնությո՜ւն պոռաց, ետ կեցա դիտավորութենես՝ վախնալով որ չելլա թե հորս ուրվականը իր գերեզմանեն գուրս ելնե անոր օգնելու համար... Բայց վերջապես... օր մը այսպես քնո մեջ էր... մարած էր... վայրենի փափագս լցավ... այնուհետև ատեց զին և աբատասվեց... Բայց հիմա զիս կը սիրե և վրաս կը գուրգուրա... Որչա՜փ ալ սիրուն է... Կարծես թե հրեշտակ մ՚է, որ սիրտս համար երկինքը թողով՝ աշխարհք եկած է։*

ՇՈՒՇԱՆ.— (նույնպես) *Ե՞ս սիրեմ Սուրմակը, այն անօրենը. երբե՛ք... Կատեմ ես զայն, սիրել կը կեղծեմ, որպեսզի վրաս վստահելով այս խավարչտին քարայրեն հանե զիս...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Թշվառակա՜ն, մատնվեցա՜ր... ուրեմն քու ժպիտներդ խաբեպատիր են... Այդ խոստովանությունը շատ սուղի նըստավ քեզի...*

ՇՈՒՇԱՆ.— (կարքնա, կը տխրի, ճետո սթափելով՝ Սուրմակա կը մոտենա) *Դեռ գիշե՞ր է, Սուրմակ... Բայց կարծեմ արշալույսը կը ծագի, վասնզի թռչուններուն ձայնն է, որ հեռուեն կառնում։ Դու ըսիր, որ այսօր պիտի տեսնեմ արեգական ծագումը, յորմե բավական ատենե ի վեր զուրկ եմ... Որչա՜փ բարեսիրտ ես, Սուրմակ, և որչա՜փ կը սիրեմ զքեզ։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Թո՛ղ զիս, նենգավո՛ր շողոքորթ, դու կը խաբես զիս, կը հաճեցնես. այդ աչացդ մեջ փայլող ժպիտներն ատելությանդ շանթերն են, ապերա՜խտ, ես կը սիրեմ զքեզ, և դու այդ սերն արհամարհանաց ժպիտներով կը շողոքորթես...*

ՇՈՒՇԱՆ.— *Ի՞նչ կըսես, Սուրմա՜կ, կը ցնորի՞ս թե փատակ կընես...* (մեկուսի) *Աստվա՜ծ իմ... Չեմ հասկնար, ի՞նչ եղած է արդյոք...*

ՍՈՒՐՄԱԿ.— Ո՛չ, ո՛չ, ըսածս գիտեմ և կը լսեմ այդ հառաչանքները, որոնք լռութեան մէջ կը սահին, կը տեսնեմ ես այդ արցունքները, որոնք խավարին մէջ կը հոսին, վերջապես սրտիդ հուզմունքները՝ դեղնած դեմքիդ վրա հայելվո մը պես կը տեսնեմ... Ուրեմն մի՛ հուսար, որ այսուհետև քու կեղծ սիրովդ պատրես զիս։

ՇՈՒՇԱՆ.— Կը մեղանչես դու, Սուրմա՛կ, կը մեղանչես իմ սիրույս վրա այսպես կասկածելով. գիտե՞ս որ այդ խոսքերը սիրտս նետի պես կը խոցեն...

ՍՈՒՐՄԱԿ.— Եթե այդպես է, երդվի՛ր որ ճշմարիտ սիրով կը սիրես զիս... Դու լո՞ւռ կը կենաս... Այս խոսքը քեզ սոսկումն կը պատճառե, ուրեմն դեռ շնչե՛ այս խավարը, արտասվոքդ թրջե՛ այս քարերը և հառաչանքներովդ թնդացո՛ւր այս կամարները... Ոչ ոք պիտի լսե քեզ և պիտի գթա. միայն Սուրմակ կա հոս...

ՇՈՒՇԱՆ.— Ա՜հ, չարաչար կը տանջես զիս... Սուրմա՛կ, ո՞վ իշխանություն տվավ քեզի մատաղ սիրտ մը այսպես խոցելու... Ո՜հ, մինչդեռ նոր սկսած էի սիրո պարտեզեն ծաղկունք քաղել և անոնցմով փունջ մը կապել, դու այն փունջը հափշտակեցիր իմ ձեռքես և անոր փոխարեն փշո փունջ մը դրիր ձեռացս մեջ... Մինչդեռ նոր սկսած էի կապուտագեղ և աստեղազարդ կամարի մը տակ սիրել և ժպտիլ, դու վիհ մը բացիր առջևս և զիս հոն քաշկռտեցիր, և հիմա խավարամած կամարի մը տակ կը հեծեմ... Այո՛, կատեմ զքեզ, Սուրմա՛կ... Թո՛ղ այս խավար լռության մեջ լռիկ մնջիկ սահին արտասուքս, թող մեկը չի գթա իմ վրաս։

ՍՈՒՐՄԱԿ.— Մի՛ այդ խոսքերը, Շուշա՛ն, սիրե՛ զիս և երջանիկ եղի՛ր, գիտցիր որ երբ սիրո անկեղծ ժպիտ մը ծագի այտերուդ վրա, այս խավարչտին քարայրն ալ պիտի լուսավորվի, այն ժպիտը արև մը պիտի ըլլա ինծի և քեզի համար... Երբ կիս սիրես, այս քարայրը դրախտ մը պիտի ըլլա... Երբ ժպտիս, այս սև կամարները պիտի ոսկեզօծին... Երբ աչքեդ ուրախության կայլակներ հոսեն, յուրաքանչյուրն իբրև ծաղիկ պիտի փթթի հոս, իսկ երբ շրթունքներդ համբույր տան, անոնց մրմունջն իբրև քնարի քաղցրաձայն նվագներ պիտի զբոսցնեն զմեզ. ուրեմն ասկե ավելի ի՞նչ բանի կը փափագիս...

ՇՈՒՇԱՆ.— Բանի մը միայն, զոր պետք չէ գիտնաս դու...

ՍՈՒՐՄԱԿ.— Բայց երբ դու ճշմարտիվ սիրես զիս, ես ոչ եթե յուր գերեզմանը այլ զինքն իսկ կը ցուցնեմ քեզի...

ՇՈՒՇԱՆ.— Վարդս կենդանի ըլլա՞... Ո՛չ, անկարելի է այդ, միթե դու չսպաննեցի՞ր զինքը... անդո՛ւթ, միշտ կը տանջես զիս, միշտ սրտիս խորը թաղված տխուր հիշատակները կարթնցընես... Դու կը խաբես զիս, կենդանի է կըսես, որպեսզի զքեզ յուր սպաննիչը չի կարծեմ...

ՍՈՒՐՄԱԿ.— Կերդնում, որ եթե զիս սիրես, պիտի տեսնես զինքը...

ՇՈՒՇԱՆ.— Ո՛չ, չե՛մ հավատար քու երդմանդ... Եթե իսկ զինքը տեսնեմ, պիտի ըսեմ, թե խաբեպատիր երազ մ՝է կամ յուր ստվերն է (հուսահատ՝ դեմքը ձեռքը ծածկելով կերթա, կը նստի):

ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի) Պետք է որ մինակ թողում զինքը, որպեսզի հուսահատության և երկյուղի մեջ դարձյալ գրկե զիս և երթամ քիչ մը ուտելիք բերելու։

Տեսիլ Բ

Շուշան (առանձին)

Գացեր է... Դարձյալ առանձին մնացի խավարի և լռության մեջ... Շատ աշխատեցա այս սոսկալի տեղեն փախչելու, այլ չի կրցա ելք մը գտնել... Իզո՞ւր ասդին անդին գացի, գլուխս միշտ կամարներու զարկի, բայց հուսահատութենես ու վախես ետ կեցա... Ա՜հ, որչա՜փ թշվառ եմ, եթե գիտնայիր, Վա՛րդ, որ կաթիլ կաթիլ արտասուք կը հոսեն սիրո քնարիս թելերուն վրայեն, որ երբեմն զվարթ եղանակներ կը նվագեր. քանի որ այս խավարին մեջ եմ, հուսո նշույլ մը չեմ նշմարեր. ուրեմն ինչո՞ւ ապրիմ ես. մահն արագաթռիչ թևեր պիտի տա ինձ և անոնցմով յերկինս պիտի սլանամ... Հոն պիտի փնտռեմ Վարդս և պիտի գտնեմ զինքը դրախտին մեջ, որ ծաղկանց վրա հանգչած՝ ինձ համար կարտասվե, պիտի սրբեմ յուր արցունքը և հավիտյան պիտի սիրենք զիրար, վասնզի հոն թշնամի չիկա... Պիտի հեռանամ այս դժոխային բնակարանեն՝ արհամարհելով այս քարերը, որոնք իմ արցունքս ծծեցին, արհամարհելով այս կամարները, որոնք հուսահատ հառաչելու ատենս իրենց տված արձագանքովը կար-

Ֆեռ թե վրաս կը խնդային... (ռամբ դաշույնի մը գալով) *Ի՞նչ է այս* (առնելով) *ո՜հ, ահա՛ գործիքս ալ գտա. հեռացե՛ք մտքես, երջանկության հիշատակներ, հեռացե՛ք աչացս առջևեն, բնության հրաշալյաց ստվերներ, իզո՞ւր կը հրապուրեք զիս, երկիրս փշոտ վարդ մ'է, իսկ երկինքն անփուշ վարդ մը... ոտքի ձայն մը կա... Ինքն է... Ո՜հ, չը տեսնեմ մեկ մ'ալ յուր դժոխային դեմքը* (դաշույնով ինքզինքը կը զարնե):

Տեսիլ Գ

Վարդ և Շուշան

ՎԱՐԴ.— (խարխափյալ գալով) *Այս խավարը և լռությունը սոսկալի է... Շուշա՛ն... Շուշա՛ն... Ո՞ւր ես...*

ՇՈՒՇԱՆ.— *Աստվա՜ծ իմ... Այս ձայնը... Կը ցնորի՞մ... Կերազե՞մ արդյոք...*

ՎԱՐԴ.— *Շուշա՛ն, ձայն տո՛ւր ինձ, Վարդն եմ ես։*

ՇՈՒՇԱՆ.— *Երկի՞նք, պիտի խենթենա՜մ հիմա... Բայց դարձյալ կը խաբվիմ, մեռած է նա...*

ՎԱՐԴ.— *Շուշա՛ն...* (մոտենալով) *Ո՞ւր ես.. Ա՜հ* (կը գրկե)։

ՇՈՒՇԱՆ.— (զայն դիտելով) *Ո՜հ, ճշմարտիվ դո՞ւ ես իմ գիրկս։*

ՎԱՐԴ.— *Մինթե չե՞ս ճանչեր զիս... Մոռցա՞ր զիս... Շուշա՛ն...*

ՇՈՒՇԱՆ.— *Ո՜չ, ո՜չ, մոռցա երկնից և վարդին գույնը. այլ քու դեմքդ չեմ մոռցած... բայց այս խարեպատիր երազ մ'է, վասնզի Վարդս սպաննվեցավ։*

ՎԱՐԴ.— *Հանդարտե՛, Շուշա՛ն, դեռ ես կյանք կը շնչեմ. ազատեցա Սուրմակա հարվածեն... Բայց երթա՛նք, Շուշա՛ն, հեռանանք այս սոսկալի տեղեն։*

ՇՈՒՇԱՆ.— *Բայց ի՞նչպես մտար հոս... ի՞նչպես գիտցար թե ես հոս էի...*

ՎԱՐԴ.— *Քանի մը օր առաջ, երբ արտասվահառաչ այս անմատչելի լեռները կը թափառեի, հանկարծ երգի մը ձայն առի, և նայեցա որ այն ձայնը քուկդ էր. խենթի պես ասդին անդին վազեցի և իզուր փնտռեցի. սրտիս ցավը կրկնապատկեցավ. վերջապես նախախնամության օգնությամբն այս քարայրին բերանը գտա երեկ. ականջ դրի, լսեցի խորունկեն Սուրմակա և քու ձայնդ, ուրախությամբ քարայրես հեռու՝ մացառներու մեջ պահվեցա՝ սպասելով որ Սուրմակա քարայրեն ելած ատեն ներս մտնեմ, բայց չելավ... Գիշերը հոն անցուցի, արշալուսույն կանուխ ելա և աշալուրջ հսկեցի, տեսա որ Սուրմակ դուրս կելներ, ուզեցի վրան հարձակիլ. բայց նշմարելով որ զինյալ էր, չը համարձակեցա, վախնալով որ երկրորդ անգամուն գուցե սպաննվեի և զքեզ չը կարենայի ազատել. ուստի թող տվի որ բավական հեռանա, շատ դժվարությամբ հոս մտա և ահա քու քովդ եմ... Բայց ինչո՞ւ չես աճապարեր, երթա՛նք, բայց այս ի՞նչ խոնավություն է... Այս ի՞նչ դաշույն է...* (սոսկման ճիչ մը կարձակե) *Աստվա՜ծ իմ... կը զարհուրեցնես զիս, Շուշա՛ն... հեծկլտա՜նք, ո՜հ, ըսե, ի՞նչ կա, ի՞նչ եղար... Կը խենթենամ... Կը սարսափիմ... Ա՜հ, արյուն կը վազե սրտեդ... ի՞նչ ըրիր, Շուշան, օգնությո՜ւն, օգնությո՜ւն...։*

ՇՈՒՇԱՆ.— *Ամեն ճիգ ընդունա՜յն է, Վա՛րդ, հարվածը սրտիս վրա է...*

ՎԱՐԴ.— *Ա՜հ, գոնե այդ դաշույնը տուր, որ ես ալ քեզի հետ մեռնիմ...*

ՇՈՒՇԱՆ.— *Ո՜չ, ո՜չ, դու պիտի ապրի՜ս...*

ՎԱՐԴ.— *Եվ ինչո՞ւ համար...*

ՇՈՒՇԱՆ.— *Վրեժս լուծելու համա՜ր...*

ՎԱՐԴ.— *Մինթե Սուրմակ... այն հրեշը...*

ՇՈՒՇԱՆ.— *Նենգությամբ հափշտակեց ինձնե գանձ մը, զոր միշտ քեզի կը պարտեի...*

ՎԱՐԴ — *Ի՞նչ կը խոսիս, Շուշա՛ն, մինթե զիս ողջ ողջ գերեզմա՞ն դնել կուզես... Այդ խոսքը մահվանե ավելի սարսափեցույց... սառեցույց զիս...*

ՇՈՒՇԱՆ.— *Եվ ահա ասոր համար մեռնիլ ուզեցի, վասնզի գիտեի որ քու սիրույդ արժանի չը պիտի ըլլայի, գիտեի որ զիս այսպես պիտի նախատես... Բայց եթե գիտենայիր, Վա՛րդ, որչափ ցավ քաշեցի քեզնե հեռու. առանց արևու նշույլ մը տեսնելու, առանց անուշիկ զեփյուռ մը շնչելու... Ուրեմն կատե՞ս զիս, Վա՛րդ, չե՞ս գթար... չե՞ս ներեր ինձ...*

ՎԱՐԴ.— *Ո՜չ, ո՜չ, չեմ կրնար ատել զքեզ, Շուշա՛ն. այլ միայն կանիծեմ այդ անձը, որ զքեզ և զիս թշվառ ըրավ... Ա՜հ, եթե դու մեռնիս, ի՞նչ պիտի ընեմ ես մինակ աշխարհիս վրա... Ես ալ կուզեմ մեռնիլ...*

ՇՈՒՇԱՆ.— *Չէ՛, չէ՛, Վա՛րդ, դու ինչվան մահդ լերանց վրա մինա-*

վոր պիտի աղոթես քու և իմ հոգվույս համար... որպեսզի յերկինս երկուքս ալ երջանիկ ըլլանք հավիտյան... Բնավ մի՛ լար ինծի համար... այլ գիտցիր, որ երբ յերկինս թռչինք, երկինքի հրեշտակք իրենց փափկիկ թևերովը պիտի սրբեն մեր արցունքը, հոն միշտ պիտի ժպտինք և պիտի հարցնենք իրարու, թե ի՞նչ է արտասուքը... Ծաղկանց մեջ պիտի ննջենք հանգիստ, զի հոն չիկա մեկը, որ մեր մեջ սուր նետե։

ՎԱՐԴ.— Բայց կենացս օրերն առանց քեզի իբրև մեն մի արցունք պիտի սահին. դու յերկինս երջանիկ պիտի ըլլաս. իսկ ես երկրի վրա՝ թշվա՛ռ... միշտ թշվա՛ռ։

ՇՈՒՇԱՆ.— Ես պիտի աղոթեմ հանապազ Ամենակալին աթոռին առջև ծունր դրած, որ զքեզ շուտով իմ գիրկս դարձնե, միշտ պիտի երազիդ մեջ գամ զքեզ մխիթարելու, և դրախտին ծաղիկներովը արցունքդ սրբելով՝ այն արտասվաթորմ փունջն Ամենակալին պիտի ներկայացնեմ...

ՎԱՐԴ.— Բայց այն քաղցրիկ երազոցդ արթնությունը խիստ դառն պիտի ըլլա ինձ. ուրեմն ես ալ միշտ ննջեմ, որ անդադար զքեզ երազեմ...

ՇՈՒՇԱՆ.— Ի՞նչպես պիտի զատվիմ քեզնե, Վա՛րդ, ահավասիկ կենացս հետին վայրկյանը կը մոտենա. այս արյունոտ և բաբախուն սիրտը վերջին անգամ սեղմե՛ կուրծքիդ վրա, վասնզի քիչ ատենեն պիտի սառի նա, մոտեցուր ճակատդ շրթանցս, որոնք քիչ ատենեն պիտի թառամին... Վերջին համբույր մը, սիրելի Վարդս. վայրկյան մը անգամ զիս մտքեդ մի՛ հաներ, եթե ոչ այն վայրկյանը ինձ համար տխրության գիշեր մը պիտի ըլլա. միշտ քու գիրկդ երևակայե զիս, շրթունք շրթունքի, աչք աչքի, ինչպես երբեմն կը ննջեինք միատեղ... մի՛ թողուր զիս... Վա՛րդ, դեռ գրկե զիս... Մնա՛ս բարյավ... (կը մեռնի)։

ՎԱՐԴ.— Ա՜հ... Մեռա՞ր, Շուշա՛ն... վերջապե՛ս թառամեցար, ո՞վ սիրուն ծաղիկ... աչքերդ գոցեցիր հավիտյան... Ո՜հ, վերջին անգամ մ՚ալ բա՛ց աչքդ, վերջին անգամ մ՚ալ տեսնեմ դեմքդ քու սևորակ աչքերուդ մեջ... Իզո՞ւր կաղաղակեմ. այսուհետև չը կա այն նազելի Շուշանը, այլ անզգա և ցուրտ դիակ մը, որուն շրթանց համբույրները մահը ջնջեց պաղ ձեռք... Կը հուսահատեցնես զիս, դիակդ Շուշանա... Սիրուս ալ չզգար այն արիությունը, որով քիչ մը առաջ սիրտս կը խայտար... կարծես թե մահվանս ցուրտ ստվերն իմ վրաս ալ կը տարածվի... Ոտքի ձայն կա, ո՞վ են արդյոք...

ՀՈՎԻՎ.— (դրսեն) Այո, այս քարայրն է, իրեն հոս մտնելը ես աչքովս տեսա... ես կը ճանչեմ Վարդը...

ՎԱՐԴ.— Ո՞վ կը փնտռե զիս...

Տեսիլ Դ

Նույնք, Պարետ, Մարիամ, Հովիվ մը (ջահով)

ՊԱՐԵՏ.— Այս կողմը բռնե ջահը... այս կողմը։

ՎԱՐԴ.— Հա՛յր իմ...

ՊԱՐԵՏ.— Ի՞նչ... Ձայն մը լսեցի՞ք...

ՄԱՐԻԱՄ.— Այո՛, այս կողմեն ձայն մը եկավ։

ՎԱՐԴ.— Ես եմ... Հոս եմ... Հա՛յր իմ... մա՛յր իմ...

ՊԱՐԵՏ.— Այո՛, որդվույս ձայնն է (մոտենալով և գրկելով). ո՜հ, վերջապե՛ս գտա զքեզ, սիրելի որդյակս։

ՄԱՐԻԱՄ.— Ի՞նչ բան ունիս այս խավարշտին բանտին մեջ, որդյա՛կ իմ։

ՎԱՐԴ.— (դիակը ցուցնելով) Տեսե՛ք։

ԱՄԵՆՔԸ.— Շուշան մեռա՞ծ...

ՎԱՐԴ.— Անոր վրա կարտասվեի...

ՀՈՎԻՎ.— Սա կողմը ոտնաձայն մը կա... Մեկը կուգա։

Տեսիլ Ե

Նույնք և Սուրմակ (մտնելով)

ՍՈՒՐՄԱԿ.— Մա՜հ և անե՜ծք... Ո՞վ կա հոդ... ո՞վ կը հանդգնի իմ քարայրս ոտք կոխել...

ՄԱՐԻԱՄ.— (մեկուսի) Ի՞նքն է։

ՎԱՐԴ.— (հառաջ գալով) Քու վրեժխնդիրներդ. այս դիակն արյուն կը խնդրե քեզնե, վատարա՛նց։

ՍՈՒՐՄԱԿ.— Շուշան մեռա՞ծ... (դիակը տեսնելով) վա՛յ ձեզ, թշվառակա՛նք (դաշույն ի ձեռին Վարդին վրա հարձակելու

կրկնա, Մարիամ գեղեցիկ դաշույնը կառնե և Սուրմակը կը զարնե):

ՄԱՐԻԱՄ.— Կեցի՛ր, անօրե՜ն...

ՍՈՒՐՄԱԿ.— Կորսվեցա՜... (ձեռքը կուրծքին կը տանի) Վերջապես վրեժդ առիր (թավալգլոր կիյնա):

ՎԱՐԴ.— Մա՜յր իմ...

ՊԱՐԵՏ.— Ի՞նչ ըրիր...

ՍՈՒՐՄԱԿ.— Հանցավոր չէ ինքը... Անիծյա՜լ եմ ես (կը մեռնի):

ՎԱՐԴ.— Ո՜հ, ահա՜ երկնից հրեշտակները ժպտելով հոս կը թռչին և պիտի տանին Շուշանս... զի՜ս ալ տարեք, զի՜ս ալ... (վարագույրը կիջնե):

Վերջ

ՏԱՐԱԳԻՐ Ի ՍԻՊԵՐԻԱ

Ողբերգություն ի մի արարված

ԱՆՁԻՆՔ

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼՊԱՆՏՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ
ՍԻՊԵՐԻԱ
ԺԱՄԱՆԱԿ
ՄԱՀ
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

(Վարագույրը կը բացվի, Նալպանտյան հետևյալ երգը կերգե տխուր եղանակավ)

ԵՐԳ

Ո՛չ երեկո՝ ո՛չ առավոտ՝
Ոչ ցող՝ բուրումն և ոչ հողմիկ,
Հոս միշտ խավար ու մահվան հոտ,
Գետին սփռած արյուն՝ աղիք։

Այս ամայի տեղն է Սիպի՛ր...
Հոս կաքսորվին անշըշունչ
Ազատություն ու ազգ սիրողներ,
Ավա՜ղ, Հայոց անտերո՜ւնչ...

Հոս ո՛չ գարուն և ոչ ամառն,
Ո՛չ ալ ծաղկունք ու դալարիք,
Այլ հանապազ ձրմեռն ու սառն
Ցուրտ, և ահեղ մերթ փոթորիկ։

Հոս տարագիրք միշտ յողբ ի կոծ՝
Անքուն հեծեն մինչ կմախք դառնան,
Հետո մահվան դիմեն ի ծոց,
Եվ կը գլորին ի գերեզմա՜ն...

Տեսարանին խորը Սիպերիո լեռները կերևին և անոնց ետև՝ Սառուցյալ օվկիանոսը

Տեսիլ Ա

Նալպանտյան առանձին՝ տժգույն, կթոտ և խոկուն կերևա, ձեռքերը՝ սրտին վրա խաչաձև

Տարագիր ի Սիպերիա... Ազատություն գոչեցի և իմ երիտասարդության եռեակայությամբը կարծեցի որ ազատության

թևերուն վրա հանգչած, դեպի հայրենիք կը թռչեի՝ իրեն ազատության ավետիսը տալու համար, բայց երբ աչքերս բացի, չորս կողմս նայեցա և տեսա սառնապատ լեռներ ու անապատներ, այլ ոչ թե տխուր ավերակներ. նայեցա որ տեսածս հայրենիքս չէր. սոսկացի և զգացի որ սիրտս ուժգին կը բաբախեր. ի՞նչ ունիս, սի՛րտ իմ, գոչեցի, և նա Սիպերիա՜ պատասխանեց... սարսափեցա, ողբացի հայրենյացս բախտը, արդարություն աղաղակեցի հուսահատ, և Սիպերիա տարածելով մոնչեց վախնալով որ չըլլա թե ձայնս իր քարացյալ սառնամանիքներեն թափանցելով Ամենակալին ականջին թընդա։ Ուզեցի լռիկ մնչիկ արտասվել միայնակ՝ ազգիս վրա, այլ անգութ Սիպերիան սառեցուց աչացս մեջ արցունքը և ինչվան հիմա սիրտս հառաչանքներով մաշեցավ և հալեցավ։ Հայրենիքս կը փնտռեի և Սիպերիո մեջ մոլորեցա և հիմա հոս տառապանք և մահ կը պատեն զիս՝ երկու անագին թշնամիներ։ *Եվ երբ երկինք կը վերցնեմ ցավագին աչքերս, Սիպերիա կայծակներ կը ցոլացնե գլխուս վրա. Սիպերիո երկինքը անգամ անողորմ է, բնությունը կարծես թե խանգարված և քունն անգամ արգիլված է հոս, միա՛յն թե գերեզմանին մեջ կը տիրե. Սիպերիա եթե կարող ըլլա այն մահվան քունն ալ պիտի արգիլե իր երկրեն, որպեսզի իր բռնության համբավը իր զոհերուն գերեզմաններուն վրա և բոլոր ազգաց սրտերուն մեջ սոսկումով անմահանա՜...։* Անգամ մը ալեվոր մը տեսա, որ անծանոթ գերեզմանի մը վրա կարտասվեր, խորհրդավոր մեկը երևաց ինձ այդ ծերունին, բայց չը համարձակեցա զինքը հարցաքննել, հետո ոտքի ելավ, աչքերը ինձ դարձուց և աներևութացավ. անշուշտ թշվառ հայր մ'էր որ իր որդվույն գերեզմանը իր արտասվոքը կը թանար. այլ ես սիրելի մը չունիմ որ մեռնելես հետո գերեզմանիս վրա կաթիլ մը արցունք թափե: Ազատությունը սիրեցի, այլ ինքը բնավ չերեվցավ ինձ: *Ա՜հ, ազատությո՜ւն, ո՞ւր ես,* տեսնեի մեյ մը զքեզ՝ համբուրեի վեհ ճակատդ և քու անույշ գրկացդ մեջ անշնչանայի մինչև վերջին շունչս, քու անունդ մրմնջելով *և զքեզ օրհնելով։* Կը տեսնե՞ս *քու սիրույդ համար կը մեռնիմ ես ահա, քու անունդ գոչելու համար Սիպերիո սառնամանյաց խորերը կը հեծեմ. ատեն ատեն Սիպերիո այս լեռներուն վրա ելնելով հայրենյացս սգապատ ավերակները կը դիտեմ, կը տեսնեմ Հայաստանյայց*

ոգին, որ իր սև թևերովք իր ամայացյալ աշխարհին վրա սավառնելով կը թափառի, իսկ ազատն Այրարատ տրտում ախուր նստած՝ արտևանունքը կնճռած կը մտածե միշտ. մերթ իր ճայվածքը շուռ կուգամ և մերթ յերկինս դարձունելով կը հառաչե միշտ. իր հառաչանքներն են Հայաստանի երկնից երեսը թանձրացուցած ամպերը և իր արցունքներն են իր կոպերեն վազած ողբամբոնջ գետերը, այն ամպերը փարատելու համար կայծակ, այն կայծակը մարելու համար Սիպերիոն տուտերը և այն Սիպերիան ոչնչացնելու համար ժամանակ պետք է։ (Այս վերջին խոսքեն լույս մը կը ծագի): Ո՞ւր եմ ես... երկինք թռա՜... (Ազատությունը կերևա ապխոակազգեստ և գլուխը ծաղկյա պսակ):

Ցեսիլ Բ

Նալպանտյան և Ազատություն

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— *Ջնատված կը տեսնե՞մ... երկինքն ե՞մ։*

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ.— *Թշվա՛ռ պատանի, ո՛չ, ո՛չ, տե՛ս, Սիպերիոն մեջ եմ, իսկ տեսածդ ազատությունն է։*

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— *Սիպերիա՜... ազատությո՜ւն... ո՜վ երկինք* (ծունր կիյնա):

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ.— *Ոտքի ելիր, դիտե դիս աղեկ մը, երկնից դուստր և քու ցանկալիդ Ազատությունն եմ ես, թշվա՛ռ պատանի..., այն ազատությունը, որուն կը ճվիրեն մարդիկք սիրտ և կյանք, սիրտը ապազայն արթնցնող ճեար մ'է և կյանքը ապազայն լուսավորող արև մը. ահա այս թախտին արժանացավ Նալպանտյան։*

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— *Այո՛, թշվառ են Թուրքս Հայերը, եթե անոնցմե ազգասեր մը մտքեն ազատության խորհուրդ մը անցնե, ինքզինքը Սիպերիոն լեռներուն մեջտեղը կը գտնե, ո՞վ մատնեց զինքը. իր բարեկամներեն կամ ազգականներեն հայ մը... այսպես մատնությամբ հայրենյաց ազիքները կը կտրտին. եթե Հայերը զիրար մատնելով միայն մեկ հայ մը մնա, ան ալ ինքզինքը պիտի մատնե որպեսզի հայ եմ բռնելով բռնո՛ր ազգաց աչքն պարծենա. եթե Թուրքս բոլոր Հայերը մեկ քարան «ազատությո՜ւն» գոչեն, Ռուսիա պիտի գոգար, ապ տվա՜ղ, Հայը իր ձեռքովը ընկզմելիք անգունգը կը փոքեն։* (Դեմքը ձեռացը մեջ կառնե):

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ.— *Ո՛չ, ո՛չ, Հայերը զիրար կը սիրեն, եթմա աոջի Հայերը չեն. իրենց անունը մատնիչ ելնելուն համար է որ իրարու խորհուրդ հայտնելու կը վախնան որպես թե իր բարեկամը մատնիչ մը չըլլա։ Համբերե պատանի, թող չը կասկածին իրարմե Հայերը, ամենքն ալ համապրա հայրենիքնին կը սիրեն. իսկ ան որ մատնիչ է, երկինք վերցնե թող մեկ մը աչքերը և դոզա՛։ Համբերե պատանի ազատասեր, գուցե կը թնդա ականջիդ սառնամանյաց խորերը եղած ատենդ սա ձայնը՝ «ալ ազատ են Հայերը». սթափե՛, գիտցիր որ ան իմ ձայնս է և պիտի գամ զքեզ քու ալևոր հայրենյացդ գիրկը պիտի դարձնեմ և Մասյաց մուսայները գլուխդ ծագկյա պսակներով պճնելով ոսկի քնարներուն թելերուն վրա քու անունդ պիտի անմահացնեն, դարեր պիտի անցնին և դեռ Նալպանտյանի անունը քնարներու և շրթանց վրա պիտի խայտա. եթե Հայոց ազատության ժամանակեն առաջ մեռնիս, պիտի գամ և քու անմահ շիրմեդ պիտի գոչեմ. «ցնծացե՛ք ոսկերք Նալպանտյանի, Հայոց ազատության արշալույսը ծագեցավ» և այն ցանկալի ոսկրները հայրենյացդ գիրկը պիտի լեցնեմ։*

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— *Ա՜հ, քաղցր է ինձ այդ ավետիսը քան թե իմ կյանքը. ահա գոհ կը մեռնիմ, շիրիմն անգամ վարած մարմնույս բեռ մը չի պիտի ըլլա, թող ծանրանան վշտեր տկարացած գլուխիս վրա և զայն մինչև գերեզմանին եզերքը խոնարհեցնեն. երջանիկ եմ, որովհետև հայրենիքս և ազատությունը կը սիրեմ, մահվան տեսքը դիս չի պիտի զարհուրեցնե և աներկյուղ իր ցուրտ գիրկը պիտի նետվիմ՝ վերջին անգամ «հայրենիք և ազատություն» մրմնջելով. թող Ռուսիա չուրախանա, Նալպանտյանի հոգին յերկինս պանապով Ամենակալին աթոռին առջև աներկյուղ «արդարություն» պիտի աղաղակե։*

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ.— *«Վրեժ» պիտի որոտա Աստուծո ահեղ ձայնը և երկինք երկիր դղրդելով արձագանք պիտի տան, արդարության սուրը Սիպերիոն խրոխտ գլխուն պիտի շողա. պիտի զարհուրի Սիպերիա իր անկմանը վրա, վասնզի իր աստղ կայծակը ասուպ մ'էր որ սահեցավ և պիտի ժպտի Հայաստան իր վրիժառությանը վրա, պիտի վայեն Ռուսաց ստվերները, պիտի պարեն Հայոց ստվերները, Ռուսիոն հորիզոնին վրա վերջալույս մը պի-*

տի տեսնվի և անոր պիտի հաջորդե Հայաստանի արշալույսը, և այն ժամանակ ազատությունը պիտի թեավորե Հայաստանի պայծառ երկնքին երեսը սեր և միություն հոդելով Հայոց սրտերուն մեջ, պիտի ավաղեն այն ատեն մատնիչ և ազգուրաց Հայերը։

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— Սիպերիա չգիտե՞ միթե որ գլխուս վրա աթոռ մը դրված կա և անոր վրա կը բազմի վրեժխնդիր Աստված մը... Սիպերիա այնչափ անգութ է որ վայրկյան մը քուն չղրկեց աչքերուս, որպեսզի չըլլա թե քնույս ատեն հայրենյացս ազատությունը երազելով ժպիտ մը խայտա նվաղյալ աչացս մեջ, ժպիտ մը զոր արթնությունը կը փարատե. եթե մեռնիմ՝ դարձյալ աչքս չի պիտի գոցել տա. ինչվան որ մարմինս իր սառերուն տակ հալի. ա՜հ, վայրկյան մը միայն, Ազատությո՛ւն, քու կաթոգին գրկացդ մեջ վշտակոծ գլուխս հանգչեցնեմ, և պարծենա թող բոլոր ազգաց անցավոր կյանքս թե Սիպերիոյ մեջ քուն վայելեց վայրկյան մը. ա՜հ, աչքերս զքեզ դիտելե չեն կշտանար, ի՜նչ քաղցր դեմք։

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ.— Եկո՛ւր, սիրելի՛ պատանի, այս գիրկը միայն գիս սիրողներու գլխուն բարձն է։ (Նալպանտյան գիրկը ներվելու կըլլա—հանկարծ որոտմունք և կայծակք)։

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— Ի՞նչ է այս... (Սիպերիա խրոխտապանծ կերևա)։

Տեսիլ Գ

Նույնք և Սիպերիա

ՍԻՊԵՐԻԱ.— Սիպերիա՜ն է... դողացեք ձայնես և տեսքես, ցամա՛քք և ծովք։

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ և ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— (միատեղ) Սիպերիա՜...

ՍԻՊԵՐԻԱ.— Ազատություն գոչող ձայնը թո՛ղ դադրի, ազատություն երգող քնարը թո՛ղ փշրի, ազատության նվիրյալ կյանքը թո՛ղ խավարի, Սիպերիան եմ ես, սարսռեցեք իմ անունես, ա՛զգք և ազինք, խոնարհեցեք իմ առջիս, թագավո՛րք և իշխանք, և դո՛ւ, Ազատություն, գիտցիր որ հոս Սիպերիա է, Սիպերիոյ սրտին մեջ միայն բռնություն և մահ կը թագավորե, հոս ոտք կոխող մարդուն միայն շունչը կազատի։

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ.— Մի՛ խրոխտար այդպես, Սիպերիա՛, քու ձայնդ զորավոր երկնային ձայն մը կա, որ գլխուդ վերև կորոտա, ձեռք մը որ ամենուն բախտը իր մեջը կը բռնե, աչք մը որուն նայվածքը լեռներ կը կործանե, ականջ մը, որ մարդուս մըտքինը կը լսե, շունչ մը որ աստղերը կը մարե, Աստված մը որուն հրամանեն Սիպերիաներ կը դողան։

ՍԻՊԵՐԻԱ.— Հանդո՛ւգն, գիտցիր որ Սիպերիա քու ձայնդ ալ իր սառնամանյաց տակը կը խեղդե, կանհետացնե ազատության անունը և բոլոր աշխարհի կը տիրե և կը հրամայե, Սիպերիա ոտիցը տակ կառնու բոլոր ազգաց սիրտն ու պարանոցը, Սիպերիոյ սկզբունքն է աշխարհակալություն և փառք, իր օրենքն է բռնություն և մահ։ Եվ դու, անմի՛տ պատանի, ի՞նչպես ազատությունը կը կոչես երբ կը տեսնես որ հույսը սարսափելով կը նայի Սիպերիոյ լեռներուն. քանի մը անգամ մոնչեցի և դու ականջ չը տվիր, կայծակներ հանեցի և չը զարհուրեցար, ուրեմն մեռի՛ր։

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— Արդեն պատրաստ եմ ես, հա՛յ է իմ անունս, չեմ վախնար ես քու սպառնալիքներեդ, թող իմ մահս վրեժխնդրություն սերմանե Հայոց սրտերուն մեջ և ավելնա Սիպերիոյ թշնամի ազգ մ՝ալ, որոնք ջանան անոր գլուխը իրենց ուժգին հարվածներով փշրել, պատերազմին կյանք կյանքի դեմ, ստվեր ստվերի դեմ, հիշատակ հիշատակի դեմ, քիչ ատենեն ես ալ կերթամ ահա ստվերներուն կարգը։

ՍԻՊԵՐԻԱ.— Անմի՛տ, շուտով կը պապանձի այդ մեծախոս բերանը, տեսնեմ որ Սիպերիոյ ծոցը բնակող մահը տեսնելու ատեն չը զարհուրիս։ Եվ դո՛ւ, Ազատությո՛ւն, զատվե ալ Սիպերիոյ հողեն և ալ անոր օդույն մեջ թեավորելու վախցիր. Սիպերիա զքեզ կատե, կանարգե և կարհամարհե։ Այո՛, անգութ և անարդար է Սիպերիան, թող ամեն ազգք գիտնան, վասնզի ասանկով կը զորանա և ավելի արյուն թափելով իր քարացյալ սիրտը կը զովանա, Սիպերիոյ բարձրացուցած գլուխը աներկյուղ է, բոլոր աշխարհի վրա խրոխտաբար և արհամարհանոք կը նայի, Ազատությո՛ւն, ի բաց ասկե։

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ.— Հանդարտե՛, ահա կերթամ ես հավիտյան, անշուշտ պիտի գա ժամանակը որ դո՛ւ, Սիպերիա՛, արհամարհանաց և գերության շղթայներու տակ պիտի հեծես, ի զուր ողորմագին ձայներ ազատություն պիտի գոչեն, ի զուր շղթայներու շառաչյուններ պիտի բարձրանան, ի զուր Սիպերիա

ծունր եկած գթությո՛ւն պիտի աղաղակեմ։ Ահա ես կը հեռանամ, մնաս բարյավ, սիրելի՛ պատանի, քաջասրտություն և հույս։

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— Ա՜հ, կը հեռանաս, քաղցրի՛կ Ազատություն, զիս մինակ կը թողուս դարձյալ այս անգութ հրեշին ձեռացը մեջ, որուն ծոցեն մահ կը բուրե, կը սարսափիմ քենե, Սիպերիա՛։

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ.— Քաջալերվե՛, միտքդ բեր այն ավետիսը, զոր քեզի պիտի բերեմ։

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— Ա՛լ չեմ վախնար, երթաս բարյավ, քաղցր Ազատություն, մի՛ մոռնար զիս։

ՍԻՊԵՐԻԱ.— Ալ բավական եղավ, բաժնվեցեք իրարմե, դո՛ւ՝ ի բաց, դու՝ ի մահ, կը հրամայեմ ձեզի։ (Ազատությունը կը հեռանա.— առջի պես խավար)։

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— Աստվա՜ծ իմ, այս ի՞նչ մահաշշուկ խավար մը պատեց դարձյալ, Ազատությո՛ւն... Ազատությո՛ւն...

ՍԻՊԵՐԻԱ.— Լռե՛, հանդո՛ւգն, եկուր, Մա՛հ...

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— Ա՜հ, Ազատությո՛ւն... (սարսափելով ետ ետ կերթա. մահը կերևա Սիպերիո, հարգանոք կը խոնարհի.— Սիպերիա խրոխտաբար կանգնելուքանա)։

Տեսիլ Դ

Նալպանտյան և Մահ

ՄԱՀ.— Այս դարերուս բավական սով քաշեցի, շնորհակալ եմ Սիպերիայեն որ զիս միշտ կը խնամե, քանի որ նա զիս կը խնամե, ինքն ալ հավիտյան կը բարձրանա, վերջապես Ասիո մեջ երջանիկ եմ, բայց դարձյալ առաջվան պես հանգիստ չեմ, բավական ժամանակ Ամերիկայի մեջ արյուն խմեցի, բայց բավական ժամանակ ալ համբերեցի։ Ամեն ազգե արյուն կը խմեմ, բայց Հայուները չափը անցավ, ժամանակ մը Հայաստանի մեջ կանգնեցի աթոռս և հանգիստ ապրեցա, անա դարձյալ հայ մը որուն արյունը պիտի խմեմ ես հիմա։

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— Մա՜հ, Մա՜հ, կը վախնամ քենե, ինչո՞ւ այդպես ահարկու ես մարդկային աչաց։

ՄԱՀ.— Ո՜չ, ո՜չ, մի՛ վախնար ինձմե, աստվածային հրաման մ'եմ ես՝ այս սոսկալի կերպարանաց տակ. ոճրագործին համար սանդարամետ մ'եմ իսկ անմեղին համար՝ հրեշտակ մը, իմ անունդս է արյուն, բնությունը այսպես տնօրինած է, տեսքես կը զարհուրիս, բայց իմ շունչս անուշահոտ զեփյուռ մ'է անմեղ օրհասականին ճակտին, իսկ ոճրագործին ճակտին տապակեզ շոգի մը, վերջապես երկնային հույսն եմ ես, հավիտենականության դրանց պահապան, միայն վատը ինձմե կը վախնա, և հիրավի իրավունք ալ ունի, վասնզի գիտե երթալիք ճամբան, դեպ ի դժոխս։

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— Քու գերիդ եմ, Մա՜հ, բայց կաղաչեմ խնայե գեթ այն Հայերուն, որոնք Հայաստանի պսակներ հյուսել կը խոստանան, խնայե գեթ այն թշվառ Հայերուն, որոնք իրենց հայրենիքը ազատելու համար կը տքնին։

ՄԱՀ.— Երկրի վրա խոնարհ ծառա մ'եմ, մինչև անգամ մանուկի մը հրամանին կը պարտիմ հնազանդիլ. աշխարհի բոլոր աստիճաններուն վրա իմ ճիրաններս բաժնված են. ով որ ան ճիրաններուն մեկուն դպչի, անոր արյունն իմս է, թագավոր կամ հովիվ երկուքն ալ հավասար են առջևս, երկուքն ալ կը վախնան ինձմե, երկուքն ալ առջիս ծունր կը չոքին, երկուքն ալ կը սառին, երկուքն ալ գերեզմանին քարը կը համբուրեն և երկուքին ալ հոգին դեպ ի յերկինս կը թռչին։

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— Ա՜հ, չունիս դու գութ, չես գթար այն իմաստուն երիտասարդներուն վրա, որոնց արյունը անհագաբար կը լափես, և որոնց հիշատակին վրա արցունք կը սփռես։

ՄԱՀ.— Ո՛չ սիրտ ունիմ և ոչ ալ ինչ, ստվեր մ'եմ, տեսիլ մ'եմ, շունչ մը զոր եթե փչեմ, մարդուս զգայարանքները կը քաղվին, և հոգին կը զատվի. եթե հիմա վրադ փորձեմ, կը տեսնես մահվան ի՞նչ ըլլալը։

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— Ո՜հ, պիտի մեռնիմ ես, հայրենիքս այսպես թշվառ վիճակի մը մեջ թողլով։

ՄԱՀ.— Է՜հ, ինչո՞ւ կը դժկամիս, երանի՜ թե ես ալ քեզ նման արարած ըլլայի, ապրեի և մեռնեի, քան թե այսպիսի անարգ անուն մը կրեի և մարդկանց արյունն խմեի. ոչ սկիզբս գիտեմ և ոչ վախճանս. հազարավոր դարեր անցան և ես դեռ նույնն եմ. ամենևին փոփոխություն մը կրած չունիմ... պատրաստվե՛, պատանի՛, ժամանակը եկավ, մի՛ զարհուրիր ինձմե բնավ։

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— (ծունր գալով) Աստվա՜ծ իմ, ներե իմ երկչոտությանս, այո՛, չեմ փափաքիր մեռնիլ, կը դժկամակիմ, վասնզի

երբ մանուկ էի, կը հուսայի և կուրախանայի որ երիտասարդությանս ատեն հայրենյացս գոնե մեկ արցունքը պիտի սրբեի, այլ ավա՜ղ, որ իմ մահվամբս արցունք մ'ալ պիտի ավելնա Հայաստանի ցավագին աչացը մեջ և վիշտ մ'ալ պիտի ծանրանա իր սրտին վրա. ա՜հ, պիտի մեռնիմ ես և ազատության հույսը գերեզմանիս մեջ թաղված պիտի հալի իմ մարմնույս հետ ինչվան որ ավետավոր ձայն մը զայն արթնցնե... Ահա՛ վերջին անգամ կը գոչեմ՝ Աստված, Հայրենիք և Ազատությո՜՜՜ն...

ՄԱՀ.— *Աստծո շունչը մարդուս մարմինը կենդանացուց, մահվան շունչն ալ զայն կը մեռցնե։* (Նալպանտյանի կը մոտենա, որ աչքը յերկինս հառած է, դեմքին կը փչե) *մեռի՛ր...* (Նալպանտյան կանշնչանա, մահը վայրկյան մը առջին կարձանանա, հետո համրահայլ անհերևույթ կըլլա.— քանի մը վայրկյան խոր լռություն):

Տեսիլ Ե

Նալպանտյանի դիակը և Հայաստան

(Ցնցոտազգյաց և մտախոհ)

(Առանց դիակը տեսնելու): *Երկրե երկիր կը թափառիմ, միշտ հայու հառաչանք կը լսեմ, երկրե երկիր կը թափառիմ և միշտ ոտքերուս տակ հայու դիակ՝ հայու գերեզման կը տեսնեմ, ուրեմն Հայաստանի ճակատագիրը միշտ ողբ ու արցո՞ւնք է. ալ ողբալե ձայնս մարեցավ, արտասվելե աչացս աղբյուրները ցամքեցան, հառաչելե սրտիս տախտակները քակվեցան, Հայաստանի աչացը մեջ արցունք չկա, արյուն կա, Հայաստանի որովայնը պատռեն, աղիք չկա, ճապաղիք կա, թշվառությունը Հայաստանի թոքը քանի մը դարե ի վեր է որ կը կրծե, հիմա թոքն ալ հալած է, թոքացավ է Հայաստան... Գերեզմանի մոտեցեր եք, Հայե՛ր, սթափեցեք, վերջին ճիգ մ'ալ...։ Իսկ դո՛ւ, Սիպերիա, ի՞նչ կուզես ինձմե, ի՞նչ թշնամություն տեսեր ես ինձմե, այս քանի՞ անգամ է որ քու անողորմ սառնեղեն ձեռացդ մեջ հայրենասեր որդվոցս փափուկ պարանոցը կը խղդես։* (Նալպանտյանը տեսնելով) *Ա՜հ, ահա հայ մ'ալ կը քնանա կարծեմ,* (ոտքը կերթա) *Նալպանտյա՜նն է* (թեր կը բռնե) *սառե՜ր է, մեռե՜ր է... ավա՜ղ...։ Սիպերիա՜, Սիպերիա՜, վախցիր հուսահատ և օրհասական Հայաստանի վերջին հարվածեն. և դուք գոնե, ստվե՛րք դյուցազանց, շիրի՛մք հայկազանց, պաշտպանեցեք զիս, մի՛ հուսաք, հիմա հայ չկա, անուն կա, հայ չկա, մատնիչ կա, հայ չկա, օտար կա, հայ չկա, դիակ կա.* մահ կա, ծնունդ չկա, գերեզման կա, խանձարուր չկա, սեր չկա, ատելություն կա, *և ամենեն ավելի միություն չկա... Օրհասական է։ Հայաստանի* ավերակաց վրա թափառաճած թոչտող հայության անունը հանգչելու տեղ մը չը գտնելով և վերջապես հոգնելով ավերակաց տակ հոգին պիտի տա... Վա՜հ պիտի ջնջվի ուրեմն Հայության անունը՜՜՜...:

(հուսահատ ծունր կիյնա.— ժամանակը կերևա):

Տեսիլ Զ

Հայաստան և Ժամանակ

ԺԱՄԱՆԱԿ.— *Ո՛չ, չի պիտի ջնջվի, մի հուսահատիր, Հայաստան, դադրեցուր ողբդ։*

ՀԱՅԱՍՏԱՆ.— (ձայնին դառնալով ու ոտքի ելնելով) *Ո՞վ ես դու, ծերունիդ, Հայկա ստվե՞րն ես որ ձայնես արթնցար։*

ԺԱՄԱՆԱԿ.— *Քաջալերվե՛, ժամանակն եմ որ քու աղետքներդ դարերե ի վեր կարձանագրեմ, այն աղետքները զորոնք քու որդիքդ գլխուդ վրա նետի պես տեղացուցին.* քու տված ձայնովդ հայը քեզի հայհոյեց, *քու տված սրտովդ հայը զքեզ ատեց, քու տված բազկովդ հայը քու գլուխդ ջաղխեց, քու տված արյամբդ հայը օտարին կյանքը ազատեց, ժամանակը այն ատեն անզգա կեցավ՝ տեսնելով որ Հայաստանի թշնամիքը իր հարազատ որդիքն էին, Այրարատայ գագաթեն իջնող հրեշտակադեմ մանկունքը, հետո մեյ մեկ արյունարբու հրեշներ դարձան։*

ՀԱՅԱՍՏԱՆ.— *Ո՜հ, միթե ցավերս արթնցնելո՞ւ համար եկար, ժամանա՛կ, ատենե մը ի վեր է որ Մասյաց մուսայից քնարներուն թելերը խորտակելով՝ չեմ լսած Հայաստանի վրա հյուսված*

աղքերը, դու եկար և իմ մտացն մեջ սոսկալի հիշատակներ զարթուցիր, միթե դու ալ թշնամի՞ ես Հայաստանի, դո՞ւ ալ կարհամարհես թշվառ Հայաստանը։

ԺԱՄԱՆԱԿ.— Մտածե՛, բարեկա՛մ, ժամանակը զքեզ չարհամարհեր բնավ, միայն զքեզ արտմեցնելու չի գար նախատելով ազգուրաց որդիքդ, այլ սփոփելու համար քու վշտալի սիրտդ, գովելով այն Հայերը, որոնք հիմա լուսավորությամբ կը մարտընչին՝ ինպես որ քու նախնի դյուցազունքդ զորությամբ կը պատերազմեին, նախնի Հայերը բազուկ ունեին, արդի Հայերն ալ հանճար ունին, մի՛ վախնար ալ, մատնիչ չկա, Հայերը մատնության ու անիրաբանության ոգին առաթուր կոխելով անշնչացուցին, միությունը իրենց սիրտը հրավիրեցին և արդեն Հայաստանի ավերակացը վրա ուխտած և երդվեցած են հայրենիքնին միաբան սիրելու, Հայաստանի համար քրտինք և արյուն թափելը միևնույնն է անոնց մեջ, սիրտ, կյանք և հոգի քեզի նվիրած են։ Ուրախացի՛ր, Հայաստան, քու հառաչանքներդ ինչվան Ամենակալին աթոռույն առջև թանձրացան, քու արցունքդ գթության հրեշտակը ժողվելով Անոր ներկայացուց և ձայն մ'ի որոտաց, «ժամանա՛կ, ժամանա՛կ, ալ գթացի Հայաստանի վրա»։ (Այս խոսքին՝ Նալպանտյանի դիակը կը ժպտի մինչև վերջը)։

ՀԱՅԱՍՏԱՆ.— Ա՜հ, ի՞նչ կը լսեմ, ի՜նչ քաղցր ավետիս է այս, ուրեմն ալ չի՛ պիտի վշտանա Հայաստան, ալ որդիքը իր գըրկացը մեջ ազատաբար պիտի սփոփե՛, կմախք չեմ, դեռ պիտի ապրի՛մ ես ուրեմն... (դիակը դիտելով) այս անշնչացյալ մարմինը անգամ կը ժպտի սույն ավետիսին վրա, (դիակը գիրկը առնելով) կենդանացի՛ր, դիա՛կդ անշունչ, բա՛ց այս նվաղյալ աչքերը և տես Հայաստանն է որ զքեզ կը գրկե, քու ցանկալի հայրենիքդ. (դիակը կը ճամբուրե և կամացուկ մը գետին կը դնե), բայց երազ է այս... խաբեպատիր երազ մը... կը խաբվիս, սի՛րտ իմ, կը խաբվիք աչքերս...։

ԺԱՄԱՆԱԿ.— Սթափե՛, Հայաստա՛ն, ժամանակն է որ քեզի կավետե, այն ժամանակը որն որ աշխարհի երջանկություն և թշվառություն կը ղրկե, տիեզերք ժամանակին ճակտին վրա արձանագրյալ են, ժամանակով այս աշխարհը ստեղծավ և ժամանակով պիտի վերջանա. հույսը ժամանակին դուստրն է. բախտը ժամանակին բարեկամն է, վերցուր աչքդ, տե՛ս երկնքին երեսը պայծառ աստղ մը կա. ան ալ Հայաստանի բախտն է։

ՀԱՅԱՍՏԱՆ.— (աչքերը ուրախությամբ դեպի երկինք ճառելով) Վրե՜ժ, վրե՜ժ, (Նալպանտյանի դիակը դեռ կը ժպտի, Սիպերիոն լեռները կը տատանին, վարագույրը կիջնա)։

(ՎԵՐՋ)

ՍԵՎ ՀՈՂԵՐ
ԿԱՄ
ՀԵՏԻՆ ԳԻՇԵՐ ԱՐԱՐԱՏՑԱՆ

Ողբերգություն երգախառն յ'երիս արարս եվ 'ի մի վերջաբան

Սկյուտար, 1868

ԱՆՁԻՆՔ ԹԱՏԵՐԱԽԱՂԻՆ

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ, ինֆնակալ Թաթարաց
ՆՈՐԱՅՐ, իշխան Սեբաստիո
ՆԱՁԻՆԻԿ, Նորայրի դուստրը
ԵՐԱՆՅԱԿ, Վաշեի կինը
ՎԱՐԴԱՆՈՒՇՇ, Վաղինակի աղջիկը
ՎԱՂԻՆԱԿ, Նորայրի փեսայն՝ զորապետ Հայոց
ՎԱՉԵ, զորապետ ուրացող
ՁԱՐՄԱՂԱՆ, զորագլուխ Թաթարաց
ՎԱՀՐԱՄ, Նազինիկի խնամակալը
ՆԵՐՍԵՀ, Վաշեի հայրը
ՀԱՅ ՁԻՆՎՈՐ ՄԸ
ԹԱԹԱՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՄԸ
Զորապետք, թիկնապահք, զինվորք,
ժողովուրդ, դեվք և այլն:

ԱՆՁԻՆՔ ՎԵՐՋԱԲԱՆԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆ
ՀՈՒՅՍ
ՍԵՐ
ԱՆՄԻՈՒԹՅՈՒՆ
ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐՎԱԾ Ա

ԱՐՇԱՎԱՆՔ

Արշալույս.— Նորայրի ապարանքին մեջ փառավոր սենյակ մը.— Խորը դուռ, երկու կողմը պատուհան.— Աջ կողմի խորը սենյակ մը, ուր Նազինիկ կը քնանա։

Տեսիլ Ա

Նազինիկ (մինակ. քնացած)

Վաղինա՜կ... (իբրև մեկը կը գրկե և արթնալով հանկարծ կը տխրի) *Դարձյալ երա՜զ... կը ծագիս արշալույս և զիս մխիթարելու կուգաս, այլ իզուր. ես քու տեսքիդ վրա զմայլած՝ չեմ մխիթարվիր, վասնզի Վաղինակիս ժպիտը քու ծագումեդ ավելի քաղցր էր... Ի՜նչ սփոփանք կրնան ազդել ինձ այս աստեղազարդ և կապուտակ երկինքը, մինչդեռ իր կապույտ աչքերն այս աստղերեն ավելի շողշողուն էին, իր դեմքը նորեկ գարունե մը ավելի գեղեցիկ էր... վերջապես անհուն դրախտ մ'էր իր սիրտը, և ես հոն զվարթ թիթեռնիկ մ'էի. իսկ հիմա արտասվալից վհի մը փոխակերպեցավ և ես՝ հոն հեծկլտող ստվերի մը... Վաղինակ, ե՞րբ պիտի գաս զիս գրկելու... Այլ ի՜նչ հույս ունիմ ես... Կը հաակնամ, մահվան ցուրտ ձեռքն զքեզ հավիտյան բաժնեց ինձնե... բախտը մեր երկուքին մեջ գերեզման մը դրավ... Ի՜նչ թշվառություն, դանդաղ տարիներ արցունք սփոթելով անցան և դեռ չեմ տեսեր ես զքեզ, ես որ վայրկյան մը չէի ուզեր հեռանալ քեզնե...* (երեսը ձեռացը մեջ առած կուլա):

Տեսիլ Բ

Նազինիկ և Վահրամ

ՎԱՀՐԱՄ.— Նազինիկ, դարձյալ կուլաս, միթե նորե՞ն երազիդ մեջ տեսար զինքը...

ՆԱԶԻՆԻԿ.— Այո՛, և առջինեն ավելի քաղցր էր յուր նայվածքը... Ա՜հ, ինչո՞ւ ես ալ իրեն հետ չը վազեցի պատերազմի դաշտը, ես ալ դյուցազնուհվո մը պես ամուսնույս գրկացը մեջ հայրենյացս կը ձոնեի աչյունս և չէք հեծեր այսպես գերեզմանեն խռոված սովերի մը նման...

ՎԱՀՐԱՄ.— Իսկ Վարդանույշ, այն անմեղ դստրի՞կը։

ՆԱԶԻՆԻԿ.— Արդեն որ կողմ որ դառնաս՝ երկինք արցունք սփռած է հոն. ուրեմն, ո՜վ մահ, եկո՛ւր քու սառ ձեռքերովդ գոցե այս աչքերը և թող աներևութանա առջևես այս նախանձոտ աշխարհը, ուր սիրս քաղցրությունը դեռ չը ճաշակած, սիրս դառնությունը կը խմեմ։ Վաղինակ, փշալից է եղեր այն պսակը, զոր սերը ժպտելով մեր գլխուն բոլորեց և իր հեշտ ամպերովը զանոնք մեր աչքեն ծածկեց... Երանի՜ թե այն գիշերը, յորում առաջին համբույրներն զգացին մեր շրթունքը՝ զգային նաև մահվան դալուկը, երկուքիս գրկախառն իշնեինք այն սև գերեզմանը... Վահրա՜մ, եթե հիմա զավակ չունենայի, հազար գերեզման ունեցած էի...

ՎԱՀՐԱՄ.— Մի՛ հուսահատիր այդպես, Նազինիկ, անշուշտ կը գթա երկինք անմեղին վրա... Հուսա՛, միանգամայն ինքզինքդ զվարթ ցցո՛ւր, վասնզի կուզե՞ս տեսնել անմեղ աղջկանդ արցունքը։

ՆԱԶԻՆԻԿ.— Ինչո՞ւ։

ՎԱՀՐԱՄ.— Երբ հիմա անկողնես ելա, հեծկլտալու ձայն մ'առի, քովս դարձա և տեսա, որ Վարդանույշ կուլար... Հարցուցի, թե ինչո՞ւ կուլա, ինքն ալ վերջապես պատասխանեց. «Վասնզի մայրիկս միշտ կուլա»։

ՆԱԶԻՆԻԿ.— Ի՞նչպես չարտասվե զավակ մը, որուն աչացը վրա իր մորը համբուրին հետ մեկտեղ արցունք կաթեց... Ուրեմն, Վահրամ, ե՞րբ պիտի գթա երկինք մեր վրա, մինչդեռ անմեղ մ'անգամ կը վշտացնե... Մի՛, մի՛ գոցեր տիրուս պատիր հույսերով, գիտեմ գերեզմանին սև պատվարները բաժնեցին ինձնե ամուսինս. ես որ այնչափ կը պաշտեի այն գողտրիկ սիրտը... անարգ թշնամյաց ոտիցը կոխան եղավ... Հայաստան դյուցազն մը կորսնցուց և Նազինիկ՝ պահապան հրեշտակ մը, որուն հաղթական ճակատը ցուրտ և արյունոտ մարմարյա դափնիներով պսակեց մահն անշուշտ։

ՎԱՀՐԱՄ.— Բայց դու ընդհակառակը հրճվելու ես, Նազինիկ, որ քու ամուսինդ անհուն Հայեր փրկեց իր մահվամբը, որոնց արյունը պիտի ծծեր թշնամվույն անխնա սուրը... Թող մեռնի ամուսինդ և ապրի Հայաստան, վասնզի կը գտնես հեռու ամուսինդ երկնից մեջ, իսկ Հայաստանը երբեք չես գտներ... Դու չես գիտեր, թե այս դողդոջուն բազուկը որչափ թշնամվույն արյամբը կարմրեցավ... Երկու որդի ունեի, երկուքն ալ պատերազմին մեջ ինկան մեռան, իսկ ես հրճվեցա, որ հայրենյաց ազատության համար մեռան... Եթե հայրդ զքեզ իմ խնամակալությանս հանձնած չըլլար, ես հիմա դուցե դիտապաստ ինկած էի դաշտին վրա և կատաղի վագեր նման թշնամվույն արյունը կը խմեի. չը գիտես դու ի՞նչ զվարճություն է այն... Կողբամ զքեզ, Նազինիկ, որ հայրենյաց հուրը չես զգար դու... Ջը տեսա՞ր միթե հայրդ, որ հոգիեն ավելի կը սիրեր զքեզ, հայրենյաց սիրույն համար թողուց հոս և ինքը օլացավ պատերազմի և ազատության դաշտը յուր ճերմակ մորուքն արյամբ ներկելու... և արժանացավ իսկ նահատակության լաստեղեն թագին. Նազինիկ, աշխարհիս վրա երջանկություն աշնան պարզ երկնքին կը նմանի, զոր զմայլած դիտելու ատենդ հանկարծ թուխ ամպերով կը ծածկվի։

ՆԱԶԻՆԻԿ.— Ո՜հ, մի՛ արթնցներ մտացս մեջ հոս մահվան տխուր հիշատակն ալ. գարձյալ կըսեմ, պետք է մեռնիլ, վասնզի միայն մահը, այն ատուած և տխուր հրեշտակը կրնար վշտահարս միխիթարել՝ հավիտենական տխուր հանգստարան մը, գերեզման մը շնորհելով, որուն ցուրտ դրանը առջև կը դողդոջեն զգալի հիշատակներ... Վահրամ, երբ կը տեսնեմ, որ վարդը կը ժպտի՝ կուզեմ վարդ մը ըլլալ, ժպտիլ վայրկյան մը և թառամիլ... (Ի ծանր և ձեռքն երկնքի վերցուցած) Հա՛յր իմ, դու գոնե խորհուրդ մ'ապրեր թշվառ աղջկանդ։

Տեսիլ Գ

Նույնք և Վարդանույշ

ՎԱՐԴԱՆՈՒՅՇ.— (մորը գիրկը վազելով) *Մայրի՛կ... դարձյալ կուլա՞ս...*

ՆԱԶԻՆԻԿ.— *Ո՛չ, աղջիկս...* (զայն սրտին վրա կը սեղմե):

ՎԱՐԴԱՆՈՒՅՇ.— *Ի զո՞ւր կը ջանաս զիս խաբել, ահա կը տեսնեմ այդ արցունքները, որոնք տաք տաք սրտիս վրա կը կաթին... Ինչո՞ւ համար կուլաս, ըսե՝ որ ես ալ արցունքս քուկինիդ հետ խառնեմ, սիրուն մայրիկս։*

ՆԱԶԻՆԻԿ.— *Խե՜ղճ զավակ, դառն կորստյան մը տխուր հիշատակ, քեզի համար կուլամ, վասնզի թշվառ ես։*

ՎԱՐԴԱՆՈՒՅՇ.— *Այո՛, թշվառ եմ, վասնզի աչքս բանալես, մայրս ճանչնալես ի վեր միշտ զինքը տրտում տեսա. գոնե անգամ մը չը ժպտեցար ինձ, անգո՛ւթ մայր։*

ՎԱՀՐԱՄ.— (մեկուսի) *Տարաբախտ տղա։*

ՆԱԶԻՆԻԿ.— *Եկո՛ւր գիրկս, մի՛ սրդողիր, զավակս, այսուհետև միշտ պիտի ժպտիմ քեզի, թեպետև սրտես արյուն ալ պոռթկա։*

ՎԱՐԴԱՆՈՒՅՇ.— *Պիտի ժպտի՞ս ինծի... մա՛յր իմ. Վահրա՛մ, կը տեսնե՞ս, ժպիտ խոստացավ մայրս... Ուրեմն այսուհետև միշտ երջանիկ պիտի ըլլամ։*

ՆԱԶԻՆԻԿ.— *Եվ ալ անգութ չի պիտի կոչես մայրդ, այնպես չէ՞։*

ՎԱՐԴԱՆՈՒՅՇ.— *Երբե՛ք... Ներե՛ ինծի, մա՛յր իմ, վասնզի խիստ վշտացած էի. երեկ իրիկուն, երբ պարտեզը կը շրջագայեի, տեսա երփներանգ թիթեռնիկ մը, որ ծաղկե ծաղիկ կը թռչտեր զվարթաբար... Աչքերս լեցվեցան... ինկա մարգագետնին վրա և սկսա դառնագին լալ, ըսելով ինքնիրենս «Ես որ մայր ունիմ, թշվառ եմ, և պանդուխտ թիթեռնիկն անգամ ինձնե ավելի երջանիկ է»... Վերջապես ելա և նախանձով վառված՝ արյունքրտինք թափելով հաջողեցա զանի բռնել և սպաննել... Խեղճ թիթեռնիկ... Հետո որչափ սիրտս կտոր կտոր եղավ... Մինթ ոճրագործությո՞ւն էր ըրածս, մա՛յր իմ։*

ՆԱԶԻՆԻԿ.— *Ո՛չ, դու հանցանք չունիս, աղջիկս... Հանդարտե... Ալ այսուհետև իմ միակ մտածմունքս դու պիտի ըլլաս։*

ՎԱՐԴԱՆՈՒՅՇ.— *Բայց ի՞նչ ձայն է այս, մտի՛կ ըրե, մա՛յր իմ...* (Դուրսեն թեռնյալ տխուր երգը կը լսվի):

ՈՂԲԵՐԳ

Երկինք, ցոլոլ աչացրս լույս...
Գեթ նշույլ մը յաչս եղկելույս,
Որ ի խավար օրերն ճամբուն
Սիրտն ի սուգ, վիշտ հեծե անքուն...

Ո՜վ նազենիդ իմ Նազինիկ,
Ո՜վ իմ արև, իմ հույս քաղցրիկ,
Քայլամոլար շրջիմ ի զո՞ւր...
Քեզ կը ծածկե դամբան տրխուր։

Ջկա ինծի երբեք հույս լույս,
Դու ես սփոփանք իմ ցավերուս,
Ո՜վ դու դամբան, լրոիկ դամբան,
Շրթունքս զքեզ միշտ կը կարդան։

ՆԱԶԻՆԻԿ.— *Ո՜հ, այս ձայնը տխուր տպավորություն մը ազդեց ինձ... Ո՞վ է այդ երգողը, Վահրամ։*

ՎԱՀՐԱՄ.— (պատուհանեն նայելով) *Ցնցոտիներ հագած կույր զինվոր մ'է* (Վարդանույշ կերթա պատուհանեն նայելու):

ՆԱԶԻՆԻԿ.— *Վահրա՛մ, գնա՛, կաղաչեմ հոս բեր այդ զինվորը, գուցե նույն պատերազմեն դարձած ըլլա և լուր մը տա մեզ ամուսնույս վրայոք.* (Վահրամ կը մեկնի) *Ո՜հ, արդյոք պիտի կարենա՞մ հաջող լուր մը առնել Վաղինակես, եթե ոչ հուսա այն նշույլը, զիս կը մխիթարեր, պիտի խավարի մահվան ստվերին տակ... Անողո՞ք բախտ, մինչև ե՞րբ սիրտս հուսահատության թուխ կոհակաց խաղալիք պիտի մատնես...*

ՎԱՐԴԱՆՈՒՅՇ.— (մորը վազելով) *Մա՛յր իմ, Վահրամ կույր զինվորին թևեն բռնած հոս կը բերե... Ահա եկան...*

Տեսիլ Դ

Նույնք, Վաղինակ, Վահրամ (թևեն բռնած կը բերե, որն որ կթոտ և դեղնած է)։

ՎԱՂԻՆԱԿ.— *Ինչո՞ւ զիս հոս բերիք... Մինթ զիս բանտարկե՞լ կուզեք, որպեսզի փողոցներուն մեջ այսպես աստանդական թշվառությունս չը նվագեմ ողբաձայն... Ա՜հ, ազատ թողեք զիս, թողեք որ ողբամ ես իմ վիճակս, վասնզի իմ միակ մխի-*

Թարանքս իմ ձայնիս արձագանքն է, ինծի այնպես կը թվի թե սիրելիքս ինձ կը պատասխանեն։

ՎԱՀՐԱՄ.— Ապահով եղիր, խեղճ զինվոր, զքեզ արգիլող չկա, աղատ ես երթալու... Բայց ներե՛ հանդուգն հարցմանս... Ինչո՞ւ այսպես փողոցները կը թափառիս ողբագին... Միթե ընտանիք չունի՞ս...

ՎԱՂԻՆԱԿ.— Ո՛չ, արդեն երիտասարդությանս ատեն որբ մնացած էի, ետքը ամուսին մ՚ունեցա... որուն վրա միայն դրեր էի կենացս հույսը, բայց երբ այսպես պատերազմեն կուրացած կը դառնայի, գուժեցին ինձ, որ կինս լուր առնելով թե ես պատերազմի ատեն մեռած էի, նա ալ ինքզինքը թունավորեր էր. ալ այնուհետև գերեզման փնտռեցի, ինչպես ծարավյալն աղբյուրը... կը շնչեմ... բայց մեռած եմ։

ՎԱՀՐԱՄ.— Բայց ո՞ր պատերազմին համար կըսես...

ՎԱՂԻՆԱԿ.— Ասկեց 5—6 տարի առաջ Սեբաստիո մերձականները Հագարացվոց դեմ եղած սոսկալի պատերազմը։

ՆԱԶԻՆԻԿ.— Քա՛ջ զինվոր, ահա ատոր համար բերինք քեզ հոս... Գիտցիր որ հոս ալ քեզ նման թշվառ կին մը կա իր ամուսինը կորսնցուցած, որ սույն միջոցին քեզնե ուժ և հույս կակնկալե...

ՎԱՂԻՆԱԿ.— Թշվա՜ռ մը... ո՜հ, կը սիրեմ ես զայն... Բայց ես ի՞նչպես կրնամ ուրիշ մը մխիթարել, մինչդեռ ես իսկ կարոտ եմ... Եթե կարենամ մխիթարել զայն, այդ ինձ համար աննման սփոփանք պիտի ըլլա... Ա՜հ, տարօրինակ բարիք մ՚է թշվառության անողոք ճիրաններեն մեկն ազատելը։

ՆԱԶԻՆԻԿ.— Ուրեմն անշուշտ կը ճանչնաս Վաղինակ զորապետը, որ հիշյալ պատերազմին Հայ զորաց աջ գնդին հրամանատարություն կրներ։

ՎԱՂԻՆԱԿ.— (տատամսելով) Այո՛...

ՆԱԶԻՆԻԿ.— Գիտե՞ս արդյոք, մեռա՞վ նա պատերազմին մեջ թե կենդանի է դեռ։

ՎԱՂԻՆԱԿ.— Կենդանի է (ապշած)։

ՆԱԶԻՆԻԿ.— Կենդանի՞... Եվ ո՞ւր է հիմա... գիտե՞ս...

ՎԱՂԻՆԱԿ.— (եռանդյամբ և շփոթած) Բայց... չեմ հանկնար։

ՆԱԶԻՆԻԿ.— Ամուսինս կենդանի՞... Իմ մոտս... Բայց ո՞ւր է...

ՎԱՂԻՆԱԿ.— (քոթակելով) Հոս եմ... Նազինիկ...

ՆԱԶԻՆԻԿ.— Վազինա՜կ... (կը գրկվին)։

ՎԱՀՐԱՄ.— Վերջապես գթացի՛ր... երկինք...

ՎԱՂԻՆԱԿ.— Ճշմարի՞տ է որ կը գրկեմ զքեզ, Նազինիկ իմ Նազինիկ... եթե ոչ երկուքնիս ալ խաբուսիկ երազով մը կսփոփվինք։

ՆԱԶԻՆԻԿ.— Ո՛չ, ո՛չ... Բայց ո՞ւր են անուշ աչքերդ... Ի՞նչ դալկահար դեմք... ի՞նչ դողդոջուն ծունկեր... ո՞ւր է նայվածքդ։

ՎԱՂԻՆԱԿ.— Հայրենիք մը ազատելու քիչ է այս կուրությունը, հինգ վեց տարվան հալումաշը... և սիրելվո մը միայն տեսքեն զրկվիլը։

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— Մա՜յր իմ, ո՞վ է այդ աղքատ մարդը որ կը գրկես։

ՆԱԶԻՆԻԿ.— Եկո՛ւր դու ալ գրկե... Հայրիկդ է... աղջիկս։

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— Այն ի՞նչ գծուծ մարդ է, ես կը վախնամ գրկելու։

ՎԱՂԻՆԱԿ.— Զավա՜կ մը... աղջի՜կ մը... ո՜հ, եկո՜ւր գիրկս, թշվառ հայրդ եմ ես... (զայն կը գրկե) Երկի՜նք, լո՜ւյս, լո՜ւյս խավար աչքերուս, տեսնեմ մեկ մը ամուսինս և զավակս վայրկյան մը միայն և թող դարձյալ խավարին... Զավակս, զքեզ չեմ տեսած...

ՆԱԶԻՆԻԿ.— Մխիթարվե՛, ամուսինս, բավական է որ Հայաստան կույր չըլլա դյուցազնի մը համար... Աչքերը զիրար տեսնելն ավելի գեղեցիկ են, երբ սրտերը իրարու մոտ բաբախեն. արդեն խամրած են սիրո ազգու նայվածքները և սրտերը կը սիրեն։

ՎԱՂԻՆԱԿ.— Դժբախտ զավա՜կ... յուր կենացը զվարթ արշալուսին սկսավ թշվառության բաժակը քամել, և իր հորը աչացը հետ իր կենացը պայծառ օրերն ալ խավարեցան... Նազինիկ, ինչո՞ւ ծնար այս զավակը, մինչդեռ իր հայրը ամեն քաղցրիկ դեմքը հավիտյան չը տեսնելու պիտի դատապարտվեր... մինչդեռ հայրական սերն անոր սիրուն աչացը մեջ պիտի չը կարդար... Անիծյալ է եղեր այն օրը, Նազինիկ, յորում ես քու զրկեդ բաժնվեցա... Անիծյալ է եղեր այն հաղթությունը, որով հրճվեցավ Հայաստան։ Նազինիկ, երբ հաղթանակավ պատերազմեն կը դառնայի, նույն ատեն, երբ գնդես բաժնված էի քանի մը անձանց հետ, խումբ մը կատաղի Հագարացվոց հանդիպեցա, որոնք հանկարծ վրաներս հարձակեցան և ընկերներս սպաննելով, զիս ալ խողխողել ուզեցին, բայց զորագլուխին հրամայեց, որ միայն աչքերս հանելով թողուն զիս... Մինչև հիմա հինգ վեց տարի է այսպես վշտահար ու թափառական շրջեցա, մուրացի, միշտ գոչելով, երկինք, լո՜ւյս, լո՜ւյս խա-

վար աչքերուս... Այլ ի զուր... Ահռելի գույժ մ'առի, թե մեռած էիր...

ՎԱՀՐԱՄ.— (մեկուսի) Սոսկալի ճակատագի՜ր։

ՎԱՂԻՆԱԿ.— Խավարն ինձ գերեզման մը կը թվեր և ես հոն ողջ ստվեր մ'էի, սերը սիրտս կրծող իժ մ'էր և կյանքն անողոք դահիճ մը. հույսը ինծի նոր կյանք մ'էր, մահը՝ ինծի համար հրեշտակ մը և անցուցած գեղեցիկ օրերս երազ կը թվեին ինձ... Բայց վերջապես փարատեցավ այն երազը... Նազինիկ, դարձյալ գիրկս համբույր կը ձոնե դեղնած ճակտիս, իսկ անգութ երկինք դեռ լուսո նշույլ մը չը ցողեր խավար աչքերուս։

ՆԱԶԻՆԻԿ.— Կաղաչեմ, Վաղինակ... ալ բավական է...

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— (ճայրը գրկելով) Ա՛լ սիրով կը գրկեմ զքեզ, հա՛յր իմ, վասնզի դու ալ ինծի պես թշվառ ես եղեր և կուլաս։

ՎԱՂԻՆԱԿ.— Թշվա՞ռ ես կըսես, աղջիկս... բայց ինչո՞ւ...

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— Վասնզի միշտ կուլար մայրս... Բայց հիմա երջանիկ եմ, վասնզի թե մայրիկս ժպտել խոստացավ և թե հայրիկ մը ունեցա։

ՆԱԶԻՆԻԿ.— Վարդանույշ, ահա այդ հորդ համար էր որ կուլայի անդադար։

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— Ուրեմն ալ երջանիկ պիտի ըլլանք, վասնզի հայրս ալ գտանք։

ՎԱՂԻՆԱԿ.— Իսկ հայրդ ի՞նչպես երջանիկ ըլլա, մինչդեռ աչքերը կորսնցուցեր, չը տեսներ քու քաղցրիկ դեմքդ, այլ միայն հավիտենական խավարի մը խորերեն կը լսե քու անույշ ձայնդ՝ քու մրմնջած «հայրիկ» բառդ...

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— (զայն գրկելով) Խեղճ հայրիկ...

ՎԱՂԻՆԱԿ.— Ա՞յս է գթություն դ, ո՜վ երկինք։

ՆԱԶԻՆԻԿ.— Բայց հանդարտե, սիրելի ամուսինս, քու կնոջդ և զավկիդ գգվանքները պիտի մոռցնեն քու վշտալից անցյալդ... Քու աղջկանդ սերը տենչացած լույսեդ ավելի քաղցր պիտի թվի քեզ. հիշե մեր անցուցած սիրո օրերը, դարձյալ նույնն ենք մենք, միայն թե դու չես տեսներ զմեզ, քեզ այնպես թող թվի, որ մեր գիրկը կը նիրհես։

ՎԱՂԻՆԱԿ.— Նիրհե՜լ... Բայց վերջապես չե՞ս ուզեր արթննալ, երբեք չե՞ս կարոտնար սիրելվույդ դեմքը... երանի՜ քեզի որ չես գիտեր իմ թշվառությունս... չը գիտես թե ի՞նչ է կույր մը, որ կը սիրե։

ՆԱԶԻՆԻԿ.— Ո՜հ, մի՛ հեգնահատեցներ զիս, Վաղինակ... Ուրեմն դու զիս չես սիրեր, որ այսպես անօգուտ կը համարես իմ սիրալիր համբույրներս։

ՎԱՂԻՆԱԿ.— Ո՜չ, ո՜չ, կը սիրեմ և պիտի սիրեմ զքեզ հավիտյան, Նազինիկ... Ալ չի պիտի վշտանամ... ալ զվարթ պիտի ըլլամ, ո՜հ, բա՛ց թևերդ և գրկացդ մեջ հանգչեցնեմ քիչ մը վշտակոծ ճակատս... Եկո՛ւ և դու զավակս ալ... (կը գրկվին)։

Տեսիլ Ե

Նույնք և Նորայր

ՆՈՐԱՅՐ.— (ծունր դնելով) Օրհնյալ ըլլա երկինք, որ երկաթե բանտերեն և շղթաներեն ազատեց ծերունիս և դարձուց իմ անձկալի հայրենիքս, իմ քաղցր ընտանյացս գիրկը։

ՆԱԶԻՆԻԿ.— Ո՞վ երկինք, ո՞վ է արդյոք այս ծերունին...

ՎԱՀՐԱՄ.— (մոտենալով) Աստվա՜ծ իմ... Նորայր իշխանը... Հայրդ է, Նազինիկ։

ՆԱԶԻՆԻԿ.— Հա՜յրս... (գիրկը նետվելով) Հա՜յր իմ... Ի՜նչ ուրախություն մեկ վայրկյանի մը մեջ... Բայց երազ չըլլա տեսածս... վասնզի քու մահդ գուժեցին։

ՆՈՐԱՅՐ.— Ո՜չ, ո՜չ սիրեցյալ դուստրս, երկինք դարձյալ չուզեց իմ մահս և քու գիրկդ դարձուց զիս... Դեռ պիտի ապրինք։

ՎԱՂԻՆԱԿ.— Ի՞նչ պատահեցավ... (բարձր) Նազինի՜կ...

ՆՈՐԱՅՐ.— Դուստր իմ, ո՞վ է այդ կույր զինվորը։

ՆԱԶԻՆԻԿ.— Չե՞ս ճանչնար... Ամուսինս է, հայր իմ։

ՆՈՐԱՅՐ.— Ո՜վ երկինք (գրկելով) Վաղինա՜կ... դեռ կը զարնե բազուկդ, որուն կրթնեցավ Հայը, ո՜վ արի դյուցազն, դեռ կզգամ բազուկը սրտիս վրա, որ թշնամյաց գլխուն անհուն հարվածներ թոթափեց։

ՎԱՂԻՆԱԿ.— Ո՜հ, դո՞ւ ես, դյուցազն հայր, ես ալ կը համբուրեմ այն բազուկը, որն որ ծերության մեջ չը դողդոջեց սրույս տակ... Բայց չեմ տեսներ...

ՆՈՐԱՅՐ.— Ալևոր Հայաստանի օրհնությունը լսե։

ՆԱԶԻՆԻԿ.— Ի՞նչ տարօրինակ դեպք, հայր իմ, երկուքնիդ մեկ օր հեռացաք հոսկե և երկուքնիդ մեկտեղ դարձյալ եկաք գիրկս...

ՆՈՐԱՅՐ.— Նազինիկ, ո՞վ է այս մանկիկը։

ՆԱԶԻՆԻԿ.— Աղջիկս է...

ՆՈՐԱՅՐ.— Աղջի՜կդ... Եկո՜ւր զքեզ ալ գրկեմ լվա՛ զավակ. դու որ մանկութեանդ առեն վշտահար մայր մը ունեցար. անմեղ հրեշտակ, դու որ վիշտ քաշելու համար երկինքը թողուցիր աշխարհ եկար... դու որ արտասվաթուրմ վարդ մը փթթեցար աշխարհիս վրա... Երկինք սև ամպերով իր ճառագայթները քեզնե ծածկեց։ Վաղինա՜կ, ահա՜ քու աչերուդ լույսը, ահա՜ քու դագաղիդ վարդը... Ալ թող արյունոտ դափնիները և այս գեղեցիկ ձիթենիին շուքին տակ հանգստացիր, բավական լույս ու արև թափեցիր հայկական ազատության փշոտ ճամբուն վրա. ուրեմն հրճվինք, որ հայրենյաց համար վշտացանք։

ՆԱԶԻՆԻԿ.— Եվ դու, հա՜յր իմ, ինչվան հիմա դու ո՞ւր էիր։

ՆՈՐԱՅՐ.— Վեց տարի ես ալ Եգիպտացվոց տերության բանտերուն խորերը ծանր շղթաներու տակ հեծեցի անոք և անմխիթար, բայց բանտապահիս և իմ մեջ այնպիսի սերտ բարեկամություն մը հառաջ եկավ և այնչափ սիրելի եղա իրեն, որ ինքզինքը մահվան վտանգի մեջ ձգելով՝ ազատեց զիս... Երբ այն բանտերեն դուրս ելա՝ կարծեցի թե նոր աշխարհ մը մտա, երբ հայրենյացս հողերը կոխեցի՝ Հայաստանիս հովը հայրենասիրության նոր ոգի մը ներշնչեց ինծի. ես որ բանտերու խորերը գերեզմանին սև եզերքները դողդոջող ծերունի մ'էի, ահեղ տյուժ մը դարձա... Բայց երբեք չէի հուսար, որ ընտանիքս այսպիսի փոփոխ և երջանիկ վիճակի մեջ գտնեմ, միայն թե Հայաստանի վերջին հառաչները սիրտս կը բեկբեկեն, երբ մարին հայոց որոտացող շանթերը։

ՎԱՂԻՆԱԿ.— Նորա՜յր, մի հուսար որ Հայուն ասողը առնես, այլ բոլոր Հայաստան թշվառ պիտի թավալի կոբսայան վիհը, ինչպես որ կործանեցավ իր գահը... Երկինք ալ բարկացյալ աչոք կը նայի Հայաստանի. այն անխիղճ Եգիպտացիները, Թաթարները, Հազարացիները, ամենքն ալ երկնավրեժ հրեշներ են, որոնք անխնա Հայաստանը կը հարվածեն... Օ՜ն, ակնարկ մը ձգե հայրենյացդ վրա և կարծեմ գերեզմաններե և ավերակներե զատ ուրիշ շենք մը չի պիտի գտնես... Մարդիկ ըրե և պիտի տեսնես որ Հայոց աշխարհին գիշերային լուությունն անդամ միշտ որոտալոյն հեծեծանքներե կընդհատի. ինչո՞ւ... տարտալի...

Հայաստան, վասնզի Հայոց մեջ մատնիչներ կան, ինչպես որ մեր պատերազմին մեջ ալ գանվեցան... Այսպես մատնությամբ Հայերը զիրար կենդանրավ ընելե ետքը, եթե միայն Հայ մը մնա, այն ալ ինքզինքը պիտի մատնե, որպեսզի «Հայ եմ» ըսելով՝ աշխարհի առջև պարծենա... Հայերն ի քուն են, իսկ մատնիչներն՝ արթուն...

ՆՈՐԱՅՐ.— Քիչ ատենեն գուցե Սեբաստացիք գույժ պիտի առնեն որ թշնամիք աշխարհավեր բանակավ Սեբաստիս վրա կը թափին։

ԶԱՅՆ ՄԸ.— Քաղաքացիք, արի՜ք, զենք առե՜ք։

ԱՄԵՆՔԸ.— (սարսափած) Ա՜հ... (լռություն)։

ՎԱՂԻՆԱԿ.— Կը լսե՞ս, Նորայր։

ԶԱՅՆ ՄԸ.— Սեբաստացի՜ք, արի՜ք, զենք առե՜ք։

ՆՈՐԱՅՐ.— Վահրամ, գնա՜, շուտ հոս բեր այդ մարդը (Վահրամ կը մեկնի) քաջալերությո՜ւն... Դեռ այս գողդոջուն բազուկը կարող է սուր շարժել և թշնամյաց գլուխները թափել... Դեռ ողջ է Հայաստան, դեռ ողջ է հայրենասիրության ոգին։

ՆԱԶԻՆԻԿ.— Ո՜վ երկինք, գթա՜ մեր վրա...

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— Մա՜յր իմ, ես ալ կը վախնամ։

ՎԱՂԻՆԱԿ.— Եկուր գիրկս, զավակս... մի՜ վախնար։

ՆՈՐԱՅՐ.— Քաջալերությո՜ւն, դուստր իմ, ողբալու ժամանակ չէ։

Տեսիլ Զ

Նույնք, Վահրամ, Զինվոր մը

ԶԻՆՎՈՐ.— (մեկուսի) Նորայր իշխանը կենդանի՞ և Սեբաստիս մե՜ջ... (զարմացած)։

ՆՈՐԱՅՐ.— Խոսե՜, մթթե նոր թշնամի՞ք կարշավեն Սեբաստիս վրա։

ԶԻՆՎՈՐ.— Այո՜, վեհա՜ն տեր, Լանկթիմուր՝ Թաթարստանի բռնավորը՝ Հայաստանը գրեթե հիմնահատակ ընելե հետո՝ սև ամպերու բանակով հոս կը գալնա սուրե թեսերով։

ՆԱԶԻՆԻԿ.— Ո՜հ, մթթե շատ մո՞տ են մեզ, Աստվա՜ծ իմ...

ԶԻՆՎՈՐ.— Ո՜չ, վաղ առավոտյան դեմ հազիվ հոս կը հասնին։

ՆՈՐԱՅՐ.— Ուրեմն թող քաղքին բոլոր գռները փակվին, ազնվականք և ռամիկք ամենքն ալ զենք առնեն... Իմաց տուր Սե-

բաստացվոց՝ թե Նորայր իր գերության շղթաներեն ազատելով իր հայրենիքը դարձեր է, իմաց տուր նաև բոլոր զորապետաց և զորաց, որ շուտով հիմա Նորայրի ապարանքը գան ժողովվին... Թող ամեն եկեղեցյաց զանգակները հնչվին՝ այս գույժը բոլոր քաղքին մեջ շուտով տարածայնելու համար... Օ՜ն, ուրեմն տված պատվերներս փութով թող կատարվին, քա՜ջ հայկազն։

ՋԻՆՎՈՐ.— Անհոգ եղիր, վեհազն տեր, ջանք և կյանք հայրենյացս նվիրելու պատրաստ եմ ես։

Տեսիլ Է

Նույնք (բացի Զինվորեն)

ՆՈՐԱՅՐ.— Արի զինվոր, երանի թե ամեն Հայ քեզի պես զգար, այն ատեն Լանկթիմուր սարսափելով կը նայեր Հայաստանի դափնեզարդ սարերուն և կը սոսկար իր խրոխտ քայլը Հայաստանի հողին վրա դնել, ուր եթե մատնիչներ իրենց մոր կաթը չը խմեին, ուր եթե վատեր և ազգատյացներ նախնի փառաց հիշատակաց քանդակներն իրենց նախատական քայլերուն տակ չը ջնջեին, ուր եթե Հայերը ձեռք ձեռքի «միաբան մեռնինք» գոչեին... Ա՜հ, ե՜րբ պիտի ջնջվի աշխարհիս վրայեն թագը, փառքը և միայն եղբայրությունը իր մանիշակներովը մարդոց ճակատը պիտի պճնե փոխանակ դափնիի. բայց դու, Հայաստան, դու միշտ փուշեր պիտի տեսնես..

ՆԱԶԻՆԻԿ.— Ե՞րբ խաղաղություն պիտի գտնենք մենք այս աշխարհիս վրա, հա՜յր իմ։

ՎԱՂԻՆԱԿ.— Նաղինիկ, չկա երբեք հանգիստ Հայուն համար, մինչդեռ անմիաբան է և օտար է իր սրտին հայրենասիրության բառը, ինչպես գութն օտար է երկաթե թուրին։

ՆՈՐԱՅՐ.— Իսկ հետո շատ պիտի զղջա, ճակատը կոծելով շատ պիտի վայե Հայը, բայց ինքզինքն անհատակ անդունդի մը գահավեժ բերանը պիտի գտնե, ուսկից անկարելի է ազատիլ... Խիստ վերջը պիտի սթափի Հայը և պիտի ըսե, թե ես ազգ մ՝եմ. բայց պիտի տեսնե, որ ձեռքերը ամուր շղթաներով կաշկանդված են, մինչդեռ բախտը յուր առջև կը թռչտի... (դրսեն ոտնաձայն մը կը լսվի)։

ՆԱԶԻՆԻԿ.— Այս ի՞նչ ոտնաձայներ են... Աստվա՜ծ իմ։

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— Պաշտպանե՜ զիս, մա՜յր իմ...

ՆՈՐԱՅՐ.— (խորեն նայելով) Բան չկա... Զորապետներս և զինվորներս են, որ հոս կուգան... Քաջալերվե՜, սի՜րտ իմ... Երկի՜նք, զորացո՜ւր դողդոջ թևերս։

Տեսիլ Ը

Նույնք, Վաչե, Զորապետք, Զինվորք

ՆՈՐԱՅՐ.— Կեցցի՜ք, ա՜ռք հայկազունք, որ հայրենիքը պաշտպանելու համար փութով եկաք հոս ժողվվելու... Օ՜ն անդր, ժամանակ չը կորսնցունենք և զենքով ու սիրով վառված հառաջ խաղանք, զի ահա վրեժխնդրության ժամը հնչեց... Եթե չը խայտա մեր երակացը մեջ դյուցազն Հայկա արյունը, եթե եռանդ ի սիրտ և սուր ի ձեռին չը պաշտպանենք հայրենիքնիս, վա՜յ մեզի, կորստյան տխուր ժամն ալ պիտի հնչե, ուրեմն հաղթենք և մեռնինք և թող մեր զավկրները դափնիներ սփռեն մեր գերեզմաններուն վրա, թող մեկ մեկ հաղթության կամարներ ըլլան մեր շիրիմները և թող մեր արյունը խաղաղություն սփռե մեր զավակաց ընտանյացը վրա... Մեռնինք կըսեմ ամենքնիս և ալ երբե՜ք անձնատուր չըլլանք այն անգութ և վատազգի մարդոց։ Եվ թող Լանկթիմուր մեր ցուրտ դիակացը վրայեն անցնի ամոթահար... Կերդնո՞ւք ամենքնիդ ալ մինչև վերջին շունչերնիդ պատերազմին դաշտին վրա սպառելու և մինչև ձեր արյան վերջին կաթիլը հայրենյաց ծոցը ցողելու...

ԱՄԵՆՔԸ.— Կերդնո՜ւմք...

ՆԱԶԻՆԻԿ.— Պետք է երդնուլ, եղբարք, և ի՞նչպես մեր կյանքը հայրենյաց չը ձոնենք, ի՞նչպես արյուններս անոր չը պարտինք, մինչդեռ հայրենիք իր գրկացը մեջ ծնավ և սնույց մեզ. մեր կուրծքերն անոր պարիսպ պիտի ըլլան և մինչև որ դիտապաստ չը գլորինք, մեր սուրերն իրենց պատյանը չի պիտի դառնան... Վատ է այն, որ ավելի կյանքը կը սիրե՝ քան թե ազգը։

ՎԱՂԻՆԱԿ.— Երանի ձեզ, Հայե՜ր, որ դեռ կը վառի սրտերուդ խորերը հայրենասիրության կայծը... Ա՜հ, իմ արյունս՝ ալ կե-

ռա... Սուր մ՛ալ ինծի տվեք, և թող վեհերոտ երիտասարդները տեսնեն ալևորը և կույրը պատերազմի արյունաշաղախ դաշտին վրա և ամոթահար ըլլան։

ՆՈՐԱՅՐ.— Հապ՝ օ՜ն, մերկացուցեք սուրերնիդ, հրաժեշտ տվեք աշխարհի, օ՜ն անդր, Սեբաստիո պարսպացը վրա, հաղթությունը մեզ կսպասե՜... Դողա՜ Լանկթիմուր, Հայերը ձեռք ձեռքի տվին...

ԵՐԳ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Վրե՜ժ կը գոռան շիրմաց խորեն
Գոռ դյուցազանց ստվերքն ահեղ,
Վրեժ կը մրժոան արդ տխրորեն
Մեր հեք եզբարց արյան հեղեղ.
Մասյաց ժեռուտ սարն բոցավեժ
Մեր սրտերուն խոր ժայթքե վրեժ...
Օ՜Ն, անվեհեր վանենք զրկանք,
Որ Հայաստան առնե նոր կյանք.
Թյուր սուր, հուր, մահ
Ջազդեն մեզ ահ...
Արդ քաշալանք՝
Նետվինք հառաջ,
Սուր մեր հագուրդ,
Վատ և անգութ՝
Թող թշնամվույն
Խմե արյուն...։

ՆՈՐԱՅՐ

Կայծակնահար թող կորնչին
Որք կը մատնեն հայրենիքնին։

<(Վարագույրը կիջնե)>

ԱՐԱՐՎԱԾ Բ

ՄԱՏՆՈՒԹՅՈՒՆ

Արշալույս.— Դաշտակ մը.— Խորը Սեբաստիո պարիսպները. կիրեկին — Զին[illegible] [illegible] անգին քնացած են.— Ձենքեր, դրոշակներ [illegible]

Տեսիլ Ա

Վայե և Զորականք (քնացած)

Մի՛ ծագիր, արշալույս, թող գիշերն իր թուխ թևերովը երկնից երեսը սքողե... Թող գիշերն իր խավար ծոցին մեջ ծածկե մատնությունս... մատնություն մը, որ իմ սրտիս երջանկություն պիտի բերե... Ա՜հ, ինչո՞ւ կույր զգուրայն գլորիմ դերեզմանը, մինչդեռ կենացս գարունը ժպտելով վարդե պսակներ կը բոլորե ճակտիս, ինչո՞ւ զանոնք մահվան ցուրտ ոտիցը տակ նետեմ... Ի՜նչ հիմարություն, հայրենասիրություն ըսված անիմաստ բառի մը պոհել աշխարհիս փառքն ու հաճույքը և բանդագուշանաց ծնունդ հանդերձյալ երջանկություն մը վայելելու հուսով չարաչար սատակել... Հիմար չեմ ես, դեռ խելքս գլուխս է... Ահա Սեբաստիո պարիսպները կը տատանին և պիտի տապալին վերջապես, ես ալ փոխանակ անոր ավերակացը տակ ջախջախելու, քանի որ թշնամին կյանքս շնորհելեն զատ վարձք ալ կը խոստանա ինձ, ուրեմն անոր գիրկը կը դիմեմ և զայն կը գտնեմ ինձ ապաստանարան... Թող վայե և ողբա հայրենիք, հայրենիք՝ որ բոլոր տիեզերաց աղետիցը պատճառն է... Հիմա հարկ է որ զորքերս համոզեմ... Բայց ապահով եմ, որ անոնք ալ ինձ պիտի հետևին, վասնզի Հայ են և ես իրենց հայրենասիրությունը փորձեցի արդեն... Բայց եթե չը համոզվին ամենքը մեկտեղ և ալեկոծի գունդս, «ես զձեզ փորձեցի» ըսելով մինակ թշնամվույն կողմը կանցնիմ... Բայց շուտ ընեմ, վասնզի հիմա արևը կը ծագի... (փողը կը ճնշեցնե):

ԶՈՐԱԿԱՆՔ.— (ճանկարծ ցատկելով) Ի՞նչ կա, զորապետ, ի՞նչ կա...

ՎԱՉԵ.— Ահա արշալույսը կսկսի ծագիլ և քիչ մը ետքը Սեբաստիո պարիսպները սարսել. դուք քնացաք, բայց ես անքուն ձեր վրա հսկեցի, գիշերվան աղջամուղջը խորհուրդներ հղացավ մտացս մեջ... Ես՝ որ այսչափ ատեն սոսկալի պատերազմներե խրոխտ ճակատով վերադարձա, կը հետևի՞ք ինծի։

ԱՄԵՆՔԸ.— Միշտ քեզի հետ ենք, զորապետ։

ՎԱՉԵ.— Ուրեմն ձեզի հարցում մը ունիմ այսօր... Մեռնի՞լ կուզեք, թե վաղը ապրիլ... Պատասխա՛ն տվեք։

ՋԻՆՎՈՐ ՄԸ.— Մեռնի՞լ ի սեր հայրենյաց...

ՋՈՐԱԿԱՆՔ.— Այո՛, մեռնի՞լ ի սեր հայրենյաց...

ՎԱՉԵ.— Իրավունք ունիք, պետք է մեռնիլ... բայց այն ատեն՝ երբ մեր արյամբը հայրենյաց ազատությունը կարենանք գնել... Իսկ պե՞տք է որ մեռնիմք կուրորեն, երբ մեր հայրենիքը չը կրնալ ազատելեն զատ՝ հայ և հոգի ըլլալե դադրինք... որովհետև տեսաք և լսեցիք, որ Լանկթիմուր, այն աշխարհավեր ճիվաղը, ինչպես Պարսկաստանը, Ասորեստանը և մեր խեղճ Հայաստանը յուր խրոխտ գարշապարացը տակ ջախջախեց... Ուրեմն մենք ի՞նչպես կրնանք դեմ դնել, մենք որ Սեբաստիա մ'ենք, մենք որ այս մեծամեծ տերությանց քով հյուլե մը կը համարվինք։

ՋԻՆՎՈՐ ՄԸ.— Կը սխալիս, քաջդ զորապետ, հայրենասեր Հայու մը դիմաց տասը կատաղի Թաթար քիչ են... վասնզի անոնք արյան մեջ հողդողդ փառք մը կը փնտռեն, իսկ մենք՝ սեր... Կրնաս հիշել Մամիկոնյան Վահանը և ուրիշ դյուցազներ։

ՎԱՉԵ.— Այս մարդը վտանգավոր է, պետք է հայրենյացը, զոհել... (բարձր) Ասիկա անխելք է... Արդեն ես գիշերն ի բուն՝ անքուն խորհեցա, քաջ զորականք, և թշնամյաց կողմ անցնելով մեր կյանքը ապահովելե զատ ուրիշ լավ միջոց չը գտա. Լանկթիմուր այնպիսի կատաղի հրեշ մ'է, որուն դժոխային սուրեն կիյնան հայրենասիրություն և քաջություն։

ՋՈՐԱԿԱՆՔ.— Արդեն մենք ալ քեզի հետ ենք, զորապետ։

ՋԻՆՎՈՐ ՄԸ.— Ի՞նչ կընեք, ընկե՛րք. հայրենիք մատնե՞լ...

ՎԱՉԵ.— Ով որ քաջ է և իմաստուն՝ թող ի՛նձ հետևի... (Բանի մը քայլ կառնե և մյուսներն ալ ետևեն)։

ՋԻՆՎՈՐ ՄԸ.— Ուրեմն ես ալ կերթամ ձեր մատնությունը Նորայր իշխանին իմաց տալու։

ՎԱՉԵ.— Զորականք, թո՛ղ մեռնի այդ ժպիրհ մատնիչը։

ՋՈՐԱԿԱՆՔ.— (սուր ի ձեռին վրան հարձակելով և ներս մղելով) Մեռի՛ր, մեռի՛ր։

ՋԻՆՎՈՐԸ.— (ներսեն) Ազգուրաց հրեշներ... (կովելով) Ա՜հ... (կը մեռնի)։

ՎԱՉԵ.— Ի՞նչ ըրիք, աղեկ մը սպաննեցի՞ք...

ՋՈՐԱԿԱՆՔ.— (գալով) Այո՛, զորապետ...

ՎԱՉԵ.— Կեցցե՛ք, քաջ զորականք, դուք որ գիտցաք ձեր կենաց արժեքը՝ երջանիկ պիտի ըլլաք... Օ՜ն, խոհեմություն և քաջություն... (երթալով) Երթանք քաղքին դռները թշնամյաց առջև բանալու և թշնամյաց ու կենաց գիրկը նետվելու։

Տեսիլ Բ

Վաղինակ (մինակ՝ մյուս կողմեն գալով)

Երանի՜ քեզ, Սեբաստիա, որ դեռ Լանկթիմուրի երկաթներուն տակ չինկար... Երանի՜ կըսեմ, որ քու հողերուդ վրա մատնիչ չես սնուցեր... Ո՜հ, իցիվ թե վայրկյան մը միայն բացվեին հանկարծ այս սև սև աչքերս և տեսնեի անգութ Թաթարաց արյամբը կարմրած դաշտերդ... երբ հաղթության բառը քու խրոխտ պարսպացդ վրա որոտա... Ա՜հ, երկի՜նք, դու զորացո՛ւր թշվառ Հայուն բազուկը և մեղմացուր անդութ թշնամվույն սիրտը... Գթությո՜ւն, գթությո՜ւն. միթե չսպառեցա՞ն կայծակներդ զորս անդադար տարաբախտ Հայաստանի ալևոր ճակտին թոթափեցիր... Ա՜հ, եթե Լանկթիմուր իր արյունոտ ոտքերը Սեբաստիո հողույն վրա դնե՝ Սեբաստիա Հայաստանի սև գերեզմանը պիտի ըլլա... Ո՜վ երկինք, եթե Հայաստանի համար վերջին կայծակ մը պատրաստեր ես, զի՛ս զարկ, զի՛ս... Հայե՛ր, զիս ալ ձեր բանակին մեջ առեք, ես ալ սիրտ ու սուր ունիմ, կուզեմ մեռնիլ և արյունս Հայաստանի երակացը տալ (սուսերամերկ վազելու կըլլա)։

Տեսիլ Գ

Վաղինակ և Նազինիկ

ՆԱԶԻՆԻԿ.— (հանկարծ դիմավորելով և գրկելով) Ո՜հ, մեռնի՜լ կըսես, Վաղինակ...

ՎԱՂԻՆԱԿ.— Նազինիկ... Դու իմ գիրկս ես դարձյալ...

ՆԱԶԻՆԻԿ.— Այո՛, միշտ քու գիրկդ և ալ չի պիտի զատվիմ... Ես ալ քեզի հետ պիտի մեռնիմ, քու քաղցր գրկացդ մեջ պիտի տամ վերջին շունչս...

ՎԱՂԻՆԱԿ.— Դու մեռնի՞ս, Նազինիկ, այսպես գեղեցիկ և երիտա-

սարդ... Վա՜յ քեզ, գողտրիկ շուշան, քու գարնանդ մեջ խորշակ մը եղավ քեզի Վաղինակ, քու արևդ ծածկող սև ամպ մը եղավ իր սերը... Այնպես չէ՞, Նազինիկ... Ո՜հ, կարծեմ կուլա՜ս... վասնզի ջերմ կաթիլներ կզգամ սրտիս վրա։

ՆԱԶԻՆԻԿ.— Այո՛, կուլամ, Վաղինակ, մեր ցավալի վիճակին վրա կուլամ... Կ'ողբամ Հայը, որ երբեք չի վայելեր ընտանեկան սեր և խաղաղություն... Մինչդեռ այս ժամուս վարդենյաց մեջ մեկու մը գիրկը կը ժպտի, հետևյալ ժամուն սգալի նոճիի տակ նստած՝ տխուր կորստյան մը վրա կուլա... Փոթորիկ մը գարձավ Հայաստան... Մեկ կողմեն անողորմ թշնամին իր տուրը և մյուս կողմեն անհագ սովը իր սև թևերը տարածած՝ միշտ մա՜հ կսպառնան Հայոց... Մա՜հ... Մա՜հ... և բարերար ձայն մը չը գոչեր՝ «ա՜լ բավական է»։ Վաղինա՜կ, սիրելի՜ս, մենք ես հոս բանտի մը մեջ ենք. քիչ ատենեն պիտի գան արյունռուշտ դահիճներ և մեզ խողխողելով՝ մեր դիակներովը հաղթության կոթողներ պիտի կառուցանեն և մեր արյամբը հաղթություն պիտի գրեն Սեբաստիո մթին փլատակացը վրա...

ՎԱՂԻՆԱԿ.— Ա՜հ, սոսկալի է այդ... Եվ այն ատեն նախատալից պիտի ըլլան ամուսնույդ ոսկորները, եթե սուր ի ձեռին չը մեռնի... Նազինիկ, երբ այս գիշեր անկողնույն մեջ անքուն՝ հայրենիքս, քեզ և զավակս կը մտածեի, հանկարծ սպառնալից ձայն մը որոտաց ականջիս. «Արի՜, դո՛ւ ալ զենք առ և կռվե, ինչպես որ քու եղբարք կը կռվին»... Հանկարծ սարսափահար ցատկեցի, մոռցա հորդ և քու պաղատանքդ և զավկիս ողբը, դուրս նետվեցա իսկույն և իզուր խավարին մեջ թշնամի փընտռեցի այն ձայնին զոհելու համար։

ՆԱԶԻՆԻԿ.— Եվ չը մտածեցի՞ր անգամ մը, որ երբ ամուսինդ և զավակդ զքեզ չը գտնեն իրենց քով՝ ի՜նչ սոսկալի ժամ մը պիտի ըլլա այն...

ՎԱՂԻՆԱԿ.— Նազինիկ, դու որ այնչափ սիրելի ես ինծի, քու ձայնեդ ավելի ազդու էր այն ձայնը... Կարծես թե մորիկ մ'էր, որ զիս հառաջ մղեց։

ՆԱԶԻՆԻԿ.— Վաղինակ, ահա արևն իր վարդե ճառագայթները կը տիրե հորիզոնին վրա. հիմա Վարդանույշ արթնցած՝ հայրն ու մայրը կը փնտռե, երթա՛նք, գութ ունեցիր այն տնմեղին վրա...

ՎԱՂԻՆԱԿ.— Երթի՛նք, դու ալ նույնպես գութ ունեցիր Հայաստանին վրա... (կը մեկնին... Հեռուեն պատերազմի փողեր կը ճնշվին)։

Տեսիլ Դ

Նորայր, Զինվորք

ՆՈՐԱՅՐ.— Ահա, պատերազմի պատրաստության փողերը կը հընչեն... Վա՜յ անոնց՝ որոնց սրտին հրճվանք չազդեր այս փողերուն ձայնը... Ուրախացե՛ք, քա՜ջ զորականք, պիտի տեսնեք, որ քիչ ատենեն Լանկթիմուր Սեբաստիո խրոխտ պարսպացը տակեն ամոթահար պլլսի անցի... Պիտի հիանա բոլոր Ասիա, թե ի՜նչպես Սեբաստիա Լանկթիմուրի սպառնացյալ նայվածքին դեմ չը դողաց.— միությամբ և քաջությամբ—միությունը, միությունն է ազգի մը զենքն ու կյանքը... Հայե՜ր, երկնից երեսը հույս չի փնտռենք, մեր հույսը թող ըլլա մեր սիրտը և մեր սուրը... Ե՜լ, ե՜լ, արև, այսօր դու հորիզոնը իջած ատենդ՝ կամ Հայաստան քեզի հետ մեկտեղ գերեզման պիտի իջնա և կամ յուր աստղը գիշերային առաջին աստղին հետ պիտի շողշողա, բայց ես տարակույս չունիմ, որ վերջինը պիտի ըլլա, այո՜, Հայաստանի աստղը պիտի փայլի, մինչդեռ ամեն Հայ՝ միաբան զենք առեր է և զենքն իր ձեռացը մեջ չը դողար... Այո՜, պիտի հաղթանակե Սեբաստիա... Ո՜վ Սեբաստուհիք, դափնյա պսակներ պատրաստեցեք ձեր զինվորական եղբարցը։

Տեսիլ Ե

Նույնք և Պատգամավոր

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.— Դո՞ւ ես, Նորայր, Սեբաստիո իշխանը...

ՆՈՐԱՅՐ.— Այո՛... քաջդ պատգամավոր։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.— Լանկթիմուր տիեզերակալ՝ Աբքայն Թաթարաց, որ բոլոր Ասիան նվաճեց, տեսնելով Սեբաստացվոց անօգուտ ընդդիմակալությունը, կ'երդնու յերկինս, որ եթե Սեբաստիա

անձնատուր ըլլա, երբեք սուր չի պիտի շողացնե Հայոց գլխուն վրա։

ՆՈՐԱՅՐ.— Իսկ եթե անձնատուր չըլլա՞։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.— Թե բոլոր բնակիչները անխնա սրո ճարակ պիտի մատնե և թե Սեբաստիան հիմնահատակ պիտի կործանե...

ՆՈՐԱՅՐ.— Ուրեմն եթե այդչափ վեհանձն է Լանկթիմուր, թող զենքով հաղթանակե, փոխանակ սուտ երդումներով աչք շլացնելու. Սեբաստիո համար նախամեծար է պարտյալ մեռնիլ, քան թե անձնատուր...

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.— Մտածե՛ Նորայր, հետին զղջումն անօգուտ է... Դարձո՛ւր աչքդ Հայաստանի ավերակացը վրա, Սեբաստիայեն ավելի ամրապարիսպ քաղաքաց բնակիչներն ալ այդպես ըսին, բայց իրենք ալ իրենց քաղաքաց փլատակացը տակ թաղվեցան անշշունջ...

ՆՈՐԱՅՐ.— Ո՛չ, ո՛չ, Լանկթիմուր չի կործանեց այն քաղաքները, այլ Լանկթիմուրեն զորավոր ոգի մը՝ անմիությունը, որ Հայաստանի արևը մարեց... Ո՞վ պատգամավոր, մի՛ կարծեր, որ Հայերը քաջ չեն. եթե Հայերը իրենց քաջությանը չափ միություն ալ ունենային, Լանկթիմուրը չը պիտի համարձակեր իրենց երկրին մեջ ոտք կոխելու անգամ և այն երկիրն ավերել մտաբերելու։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.— Ի՛շխան, հիմա Հայությունը ողբալու ժամանակ չէ, այլ ազատելու. գիտցի՛ր որ գոռոզ սնափառության մը կը զոհես Սեբաստիո մեջ ապաստանած Հայության մեկ մասը... Մտածե՛... Դու ծերունի մ'ես և մեկ ոտքդ արդեն գերեզման իջած է, իսկ անդին անթիվ Հայեր կան, զորս դու անխոհեմությամբ կորստյան վհի մը եզրը կը թողուս։

ՆՈՐԱՅՐ.— Ո՞վ պատգամավոր, այնչափ տգետ չէ Նորայր, որ իր ազգը մատնե՝ վստահելով Լանկթիմուրի մը երդմանը, որ ո՛չ խիղճ ունի և ո՛չ ալ գութ... Գնա՛ ըսե՛ ինքնակալիդ, որ Սեբաստիա պատրաստ է իր ծարավը հագեցնելու... Եթե այդչափ հզոր է ինքը, ի՞նչ փառք կակընկալե Սեբաստիան կործանելով։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.— Հարկ է որ տկարը խոնարհի հզորին։

ՆՈՐԱՅՐ.— Եվ վատ է այն, որ սուր ունի և ինքզինքը չը պաշտպաներ փառասերի մը անիրավ պահանջմանց դեմ, չը մեռնիր անարգ գերի ըլլալու համար։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.— Բայց գիտցի՛ր, որ եթե աշխարհակալ Լանկթիմուր իր ոտքերը Սեբաստիո հողույն վրա դնե, քար քարի վրա չի պիտի թողու։

ՆՈՐԱՅՐ.— Այլ ավերակները սևի տեղ կարմիրով կը ներկվին։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.— Հայկական շունչ մ'անգամ չի պիտի թողու։

ՆՈՐԱՅՐ.— Իսկ Հայոց դիակները չեն կարմրիր։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.— Քանի որ մեռնիլ կը փափագիք, ապերախտ Հայեր, ուրեմն մահվան պատրաստվեցեք... Քիչ ատենեն պիտի տեսնեք, որ հաղթականն Լանկթիմուր Սեբաստիո կործանյալ պարսպացը վրայեն իր վրեժխնդիր սուրը տարածած մահ կսպառնա...

ՆՈՐԱՅՐ.— Ո՞վ պատգամավոր, գիտցիր որ Սեբաստացիք երբեք անձնատուր չեն ըլլար, եթե մեկ անձ մ'ալ մնա... Կը մեռնին՝ վատ չապրելու համար։

ՋՈՐԱԿԱՆՔ.— Այո՛, պատերա՛զմ... Կեցցե՛ Հայաստան։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.— Մի՛ խրոխտաք այդպես, Սեբաստացիք, քիչ ատենեն պիտի վայելեք (սպառնալից կը հեռանա):

ՆՈՐԱՅՐ.— Կը տեսնե՞ք, քա՛ջ Հայեր, որ Պարսկաստան և Ասորեստան նվաճող սոսկալի բանակը ձեր մահատարափ նետերեն զարհուրած՝ դեսպան կը ղրկե, որ անձնատուր ըլլաք... Քաջալերվեցե՛ք, Հայե՛ր, եթե հաղթենք՝ Սեբաստիա Հայաստանի երկրորդ խանձարուրքը պիտի ըլլա, և Հայաստան դարձյալ իր կիսակործան ավերակացը մեջեն աներկյուղ իր գոռոզ գլուխը պիտի բարձրացնե... Ուրեմն կեցցե՛ն Հայք և կեցցե՛ Հայաստան...

ՋՈՐԱԿԱՆՔ.— Կեցցե՛ն Հայք և կեցցե՛ Հայաստան... (ճանկարծ աղմուկ մը կելնե):

ՆՈՐԱՅՐ.— Ի՞նչ ձայներ են ասոնք... (ժողովուրդը սարսափած խուրեն կը վազե) Ի՞նչ պատահեցավ... Ինչո՞ւ սարսափահար կը փախչիք։

ԺՈՂՈՎՈՒՐԴ.— Մատնությո՛ւն... Մատնությո՛ւն... Լանկթիմուր Սեբաստիան կոխեց։

ՆՈՐԱՅՐ.— Սոսկալի հարվա՛ծ... (դողդոջուն նվաղելու կըլլա, բայց ճանկարծ կսթափի) Օ՜ն անդր... Քա՛ջ զորականք դեռ սուրերնիս չէ փշրած ձեռքներուս մեջ... Հապ՝ օ՜ն, մեռցնենք և մեռնինք՝ դարձյալ գոչելով «կեցցե՛ Հայաստան...»։

ՋՈՐԱԿԱՆՔ.— Կեցցե՛ Հայաստան... (սուսերամերկ կը սլանան):

ՁԱՅՆԵՐ.— (դրսեն) Կեցցե՛ Լանկթիմուր։

Տեսիլ Զ

Լանկթիմուր, Զինվորք, հետո Զարմաղան

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Քաջ զորականք, ահա ձեզի արյան ասպարեզ մը... Կատաղի վագրերու նման հառաջ նետվեցեք, ահա նոր գլուխներ ձեր սուրերուն կսպասեն. երբեք մի՛ գթաք, զարկե՛ք, մի՛շտ զարկեք. ձեր այսօրվան զբոսանքը թող այս ըլլա. եթե հոգնելով ծարավիք՝ ծարավնիդ հագեցնելու համար զոհերնուդ արյունը խմեցե՛ք... Ինչվան երեկո ձեզի ժամանակ կուտամ. եթե երեկոյին Հայ մը տեսնեմ՝ վա՛յ ձեզի... Եթե գտնեմ ձեր մեջեն մեկը, որուն սրեն արյուն չը կաթեր՝ վա՛յ անոր... հապ՝ օ՜ն յասպարեզ, կրակ, կայծակ, վա՛յ և մահ թափեցեք Հայոց գլխուն... (զորքերը ատտեռամերդ կը վազեն):

ՋԱՐՄԱՂԱՆ ԵՎ ՋՈՐՔ.— (դրսեն) Կեցցե՛ Լանկթիմուր, կործանի՛ Հայաստան (տեսարանը կուգան):

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Կեցցե՛ս արիր զորավար Թաթարաց, դու որ միշտ ինքնակալիդ կամակատար գտնվեցար, դու որ քու քաջութիւններովդ Լանկթիմուրի ճակտին փառաց դափնիներն ավելցուցիր։

ՋԱՐՄԱՂԱՆ.— Քաջդ ինքնակալ, եթե քաջութիւն գործեց Զարմաղան տիեզերատարած Լանկթիմուրի անվամբը գործեց, անոր նվիրած տրուվը թշնամին դողացուց և անոր ճաճանչավոր արեվուն մեկ ճառագայթովը ինքը կյանքը վայելեց... Երանի կուտամ ձեզ, Թաթարք, որ Լանկթիմուրի նման թագավոր մը ունեցաք, որ իրեն և ձեր անունը բոլոր ազգաց օրտերուն խորերը սոսկումով տպավորեց, որ իրենց և ձեր զորությունը մեծամեծ աշխարհաց փլատակացը վրա արյան հեղեղներով հիշատակեց, զորս ժամանակին երկաթյա ձեռքերը չի պիտի կարենան ջնջել. ահա, աստեղապարդ երկինք անգամ նախանձելով ձեր ինքնակալին կրած թագին վրա, կը սգա, որուն շողշողուն ակունքն իր հաղթահարած ազգերուն աստղերն են, զոր նոքը հափշտակեց քաջությամբ։

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Քա՛ջդ Զարմաղան, կը լսե՞ս այս ազգասիրական հեծեծանքները, այս ալ Հայաստանի վերջին հառաչանքն է, և դարձյալ Լանկթիմուրի տիեզերակալ ձեռքն է, որ անոր արեանը կը ծածկե։

ՋԱՐՄԱՂԱՆ.— Ո՜վ խեղճ Սեբաստացիք, ինչո՞ւ այդպես ողբերով երկնից վամարը կը թնդացնեք, դուք որ քիչ մը հառաջ կը խրոխտացիք Լանկթիմուրի մը դեմ... դուք որ պարսպաց ետևեն նախատինք կը թափե՛ք... Ո՜վ կատաղություն, Լանկթիմուրը նախատե՛ք...

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Ա՛յդ՝ ան... արյուն թող թափվի և Լանկթիմուրի ու բոլոր Թաթարաց վրեժխնդրության տպին թող արյամբ հագենա. տեսանեն, թե մկայն վայրկյան մը կրնա՞ն Լանկթիմուրի դեմ խրոխտալ, գիտնան, թե քանի որ Լանկթիմուր աշխարհի վրա կը շնչե՝ բոլոր թագավորաց գահերուն մեկ ոտքն անդունդի մը վրա կը նայի... Մի՛ պարծենաք ձեր փառքին վրա, ո՜վ թագավորք, վասնզի քանի որ ողջ եմ ես՝ այդ գահը ձեր դագաղը պիտի ըլլա. մի՛ խրոխտաք, վասնզի պիտի տեսնեք, որ ձեր ատող կարծած բախտը ասոպ մ'է եղեր, որ պիտի սահի, խավարի... Ինչպես որ շատերուն հանդիսատես եղա և հրճվեցա... Ողբա՛ և դու ալ, Սեբաստիա, որ իմ սիրտս խայտա... Լա՛ց որ իմ սիրտս զովանա... վասնզի քու կարողություններդ վեր հանդիսնեցար... Քաջդ Զարմաղան, ի՞նչ կընե Հայոց ուրացյալ գունդը...

ՋԱՐՄԱՂԱՆ.— Քաղքին դռներուն հսկողություն կընե, քա՛ջդ ինքնակալ։

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Քեզի կը պատվիրեմ որ երբեք չը վստահիս այն մարդոց, վասնզի այն, որ իր բնիկ ազգը կը մատնե՝ անշուշտ օտար ազգ մ'ալ կը մատնե... Թող բոլորն ալ ջարդվին և դու գնա միայնակ իրենց զորապետը շղթայակապ հոս բեր... Կրկին պատվիրե զորաց, որ հաջողին առանց վերք մը տալու Սեբաստիո իշխանը ձերբակալ ընելով ինծի բերել...

ՋԱՐՄԱՂԱՆ.— Կը հնազանդիմ, վեհափա՛ռ տեր։

Տեսիլ Է

Լանկթիմուր (միայնակ). Փիրապարհ

Ահա վակոին դիակաց բլուրներ ձևանալ և արյան գետեր մանչմամբ սահիլ... Լանկթիմուր, ա՛լ բավական արյուն թափեցիր, բոլոր աշխարհ արյան ջրհեղեղ մը դարձուցի... Բայց

դեռ սրտիս խորը այնպիսի կրակ մը կը վառի, կը բորբոքի, զոր այսչափ արյուն չը կրցան մարել... Փառասիրությունը «քալե՛, դեռ քալե» կը մռմռա ականջիս և ոտքերուս տակ արյունաներկ ծաղիկներ, թագեր սփռելով, կը ցցունե ինձի աշխարհիս ծայրը ոսկեզեղն լեռան մը գագաթը տիեզերական գահ մը, և սիրտս թևավորյալ արյան ծովերու վրայեն սահելով կուզե թռչել հոն, հոն՝ ուր դեռ չէ կոխած մահկանացուի ոտքը... Եվ այն ատեն երկինք և երկիր պիտի հիանան, երբ Լանկթիմուր իր ձեռքը այն ատեն փառաց արև մը պիտի ըլլա և իր դափնեզարդ ճակատը միայն մահվան առջև պիտի խոնարհի... Անիծյալ գերեզման, որ գեղեցիկ երազի մը արթնության նման թագակիրը կը սառեցնե... Մի՛ մոտենար ինձի, ո՜վ մահ, մինչև որ ես այս փառաց կատարը բարձրանամ և այն ատեն իմ անհուն զոհերուս արյամբը կշտացիր։

Տեսիլ Ը

Նույնք; Վաչե, Զարմաղան

ՎԱՉԵ.— Ո՜վ մեծդ ինքնակալ, այս երկաթե շղթանե՞րն են ուրեմն իմ վարձքս, ասո՞նք են իմ դափնիներս։

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Ի՞նչ ըսել կուզես, զորապետ, կը կարծե՞ս թե ատկեց ավելի վարձքի մը արժանի ըլլա մատնիչ մը, կը կարծե՞ս թե այնչափ անմիտ ըլլա Լանկթիմուր, որ մատնիչ մը վարձատրե... Ո՜չ, ո՜չ Լանկթիմուր երբեք վատաբար և անիրավ չը գործեր։

ՎԱՉԵ.— Եվ ինչո՞ւ վարձք խոստանալով, իր երդմանը դեմ գործեց։

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Ո՜չ... Բնավ Լանկթիմուր իր ըրած երդումն ալ չը դրժեր... Այո՛, քիչ վարձք խոստացա, այլ ավելի արժան համարեցի երկաթե շղթաներով վարձատրել մատնությունդ՝ ապահով ըլլալով, որ բոլոր աշխարհ այս դատապարտության իրավունք պիտի տա։

ԶԱՐՄԱՂԱՆ.— Այո՛ և մինչև անգամ մահու արժանի է այն, որ իր շահուն իր եղբայրքը կը մատնե վատաբար։

ՎԱՉԵ.— Այդպես չէ՛, քաջ զորապետ, լավ գիտեի, որ մեծն Լանկ-

թիմուր պիտի կործանե Սեբաստիան, ես ալ փոխանակ զուր տեղը իր սրուն ճաթակ ըլլալու, նախամեծար համարեցի՝ փութացնել կործանումն և ասով ազատել կյանքս։

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Ուրեմն, վա՜յ քեզի, որ կյանքդ հայրենիքեդ ավելի կը սիրես... Ի՞նչ ես դու աշխարհիս վրա. հրեշ մը, որուն սրտին խորերը մարեր է հայրենասիրության կայծը... Նախատինք քեզի, որ սուր կը կրես ձեռքիդ մեջ և չես ուզեր զայն ի սեր հայրենյաց շարժել... Ուրեմն ի՞նչպես հանգիստ պիտի ըլլայիր դու, երբ վարձատրեի զքեզ, մինչդեռ բոլորտիքդ բյուրավոր արենակցացդ դիակները դիզվեր են... Ի՞նչպես քու կյանքդ չի պիտի խռովեր եղբարցդ հեծեծանքներեն և առ քեզ ուղղած անեծքներեն, մինչդեռ դու անոնց կորուստը պատճառեցիր վատաբար.— ա՜հ, այսչափ ազգեր նվաճեցի ես և չը տեսա Հայեն ուրիշ ազգ մը, որուն մեջ գտնվին ուրացող մատնիչներ... Դուք շուտ կը կործանիք Հայեր, մինչդեռ այսպես անմիաբան եք։

ՎԱՉԵ.— Ո՜վ մեծդ ինքնակալ, եթե մատնեցի հայրենիքս՝ քու փառքդ ավելցուցի, քու վրեժխնդրությունդ հագեցուցի... Ուրեմն ինչպե՞ս արժան կը համարիս նախատանոք վարձատրել զիս, ես որ քու հաղթությունդ հայրենյացս փրկութենեն ավելի նախամեծար համարեցի... Վա՜յ քեզ, Վաչե՜, որ ինչ որ ալ գործես, բախտը խոժոռ կը նայի քեզ։

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Ո՜վ ուրացող, երբեք Լանկթիմուրեն հատուցում մի՛ հուսար, թեպետև քաջն Զարմաղանի ըսածին պես մահվան կը դատապարտեր քեզ իրավունքը, սակայն ես կը ներեմ քեզի... Կը շնորհեմ կյանքդ, վասնզի վրեժխնդրությանցս գործիքը եղար դու։

ՎԱՉԵ.— Ո՜հ, գոնե հրաման ըրե, որ այս շղթաները քակվին։

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Երբե՛ք... Այդպես շղթայակապ թափառե գործած ավերակներուդ վրա, քանի որ եղբարցդ դիակները շղթաներուդ շառաչյունը լսեն, նախատինք կարդան քեզ իրենց գերեզմաններուն խորերեն... Թափառե՛ եղբարցդ արյամբը կարմրած դաշտերուն վրա, մինչև որ գտնես քու գերեզմանդ ալ... Մի՛ ըսեր, ազգե՛ր, թե անիրավ է Լանկթիմուր, այո՛, անգութ է, բայց կը ճանչնա իրավունք (կը մեկնի.— մյուսներն ալ ետևեն)։

Տեսիլ Թ

Վաչե (առանձին)

Ի՞նչ ըրի ես... Ահա այս շղթաներն են եղեր մատնության վարձքը և կամ հավիտենական նախատինքս... Ես որ փառաց դափնիներ կերևակայեի, Լանկթիմուր նախատանաց փուշերով պսակեց ճակատս... Ո՜հ, ո՞ւր փախչիմ հայրենյացս արյունլվա ծոցեն... Ուր որ ալ երթամ՝ կայծակը գլխուս վերև, անդունդք՝ ոտիցս ներքև և դիմացս՝ միշտ Հայաստանի սպառնալից նայվածքը... Դադրեցե՛ք, աղեկտուր ձայնե՛ր, ո՜հ, մթթե զի՞ս կանիծեք, զիս, հայրենյաց դահիճս... Կարծես թե Սեբաստիո պարիսպները վրաս պիտի փլին՝ անխնա ջախջախելու համար զիս... Ա՜հ, ո՞վ պիտի քակե այս շղթաները, որ ազատ փախչիմ... Ո՜չ ոք՝ ամենքն ալ կը նախատեն զիս... Ուրեմն բնավ չի պիտի քակվին այս շղթաները, մինչև որ գլուխս չը ջախջախեն... Ո՜վ անիծյալ գիշեր, ինչո՞ւ սրտիս խորն արհավիրք չը թափեցիր, երբ մթությանդ տակ կը խորհեի այս վատ մատնությունը... Ա՜հ, «անե՜ծք... վրեժ...» կը մռնչեն ականջես, երկինք և երկիր, և դժոխք ծափ զարնելով զիս ծաղր կընեն... Խնդա՛, ո՜վ Սանդարամետ, որ Վաչեն քու ծուղակդ գլորեցիր... խնդա՛, որ քու հաղթությանդ սուրն ըրիր զիս։

Տեսիլ Ժ

Վաչե և Ներսեհ

ՆԵՐՍԵՀ.— (դրսեն) Օգնությո՜ւն... Օգնությո՜ւն...

ՎԱՉԵ.— (սարսափած) Ո՜վ երկինք... Ի՞նչ կը լսեմ... Հորս ձայնն է, կարծեմ կը խողխողեն զինքը...

ՆԵՐՍԵՀ.— (դրսեն) Ա՜հ... (վիրավորյալ տեսարանը կուգա) Սիրտս... Զարնվեցա առանց զարնելու...

ՎԱՉԵ.— Այո՛, հայրս է... Ո՜հ, արյունը որտեղ կը վազե... Ո՞ւր փախչիմ, բացվեցե՛ք անդո՛ւնդք, և զիս ձեր խորությանը և խավարին մեջ ծածկեցեք...

ՆԵՐՍԵՀ.— (զայն տեսնելով զարմացմամբ) Ի՞նչ կը տեսնեմ... Վաչե հոս, շղթայակապ... Մթթե արդար երկի՞նք շղթայեր են զինքը... Ո՜հ, հեռացի՛ր, ինչո՞ւ կուգաս վերջին վայրկյանս խառվելու, անօրեն զավակ...

ՎԱՉԵ.— Ա՜հ, կը սարսափեցնես, հա՛յր իմ, այդպես ակնապիշ մի՛ նայիր աչացս մեջ... Ծածկե՛, ծածկե՛ արյունահոս վերքդ։

ՆԵՐՍԵՀ.— Ա՜ռ, ալևոր հորդ արյունն ալ առ և կշտացիր, վա՜տ մատնիչ։

ՎԱՉԵ.— Ո՜հ, գթությո՜ւն, հայր իմ, գթությո՜ւն...

ՆԵՐՍԵՀ.— Ո՜չ, ո՜չ, քեզի համար չկա գթություն, այլ...

ՎԱՉԵ.— (ի ծունր պաղատանոք) Հա՛յր իմ...

ՆԵՐՍԵՀ.— Անե՜ծք... Անե՜ծք... (թավալգլոր կիյնա և կը մեռնի)։

ՎԱՉԵ.— (սարսափած) Ա՜հ... (վարագույրը կիջնե)։

(Վերջ Թ արարվածին)

ԱՐԱՐՎԱԾ Գ

Սեվ հողեր

Սև հողեր դաշտը.— Ասդին անդին ցրված դիակներ.— Արևը դեռ նոր հորիզոնեն վեր կը բարձրանա։

Տեսիլ Ա

ԵՐԱՆՅԱԿ.— (վարագույրը բացված ատեն առանձին, ճերարձակ, զավկին դիական ֆով ծնրադրած կուլա, ճեռռ կելնե)

Գնա՜ց արտասվաթոր թևերով սև գիշերը, և ահա արևը զարթուրած կսկսի իր լույսը Հայոց արյունլվա ավերակացը վրա սփռել... Ամեն տեղ սգապատ լռություն մը կը տիրե և միայն մերթ ընդ մերթ խղդուկ հառաչանքներ սև նոճիներուն մեջեն սահելով այս լռությունը կը վրդովեն... Կը նիրհե ահա Հայաստան շնչասպառ փլատակաց տակ և հուսահատ կարտասվե... (առ դիակն) Խե՜ղճ որդյակ, եթե դու ալ կենդանի եղած ըլլայիր, քու կյանքդ միայն հայրենյացդ աղեկտուր

վիճակին վրա սոսկալով պիտի մաշեր... Դու ալ ամոթահար պիտի զարհուրեիր, երբ տեսնեիր, որ համայն Հայերը կանիծեն քու հայրդ, հայրդ՝ որ Հայաստանի գերեզմանը փորեց, հայրդ՝ որ զքեզ այսպես սառած Սև հողերու վրա տարածեց... Երկինք այնպես վճռեր է, որ դեռ մորդ մեկ ժպիտ մը չը ցցուցած՝ անիծյալ հայրդ այսպես զքեզ գերեզման գլորե... Ուրեմն դու ալ անիծե՛ այն՝ որ հայրդ և միանգամայն դահիճդ եղավ։

Տեսիլ Բ

Երանյակ և Վաչե

ՎԱՉԵ.— (ցնորած գալով) *Ո՜հ, դարձյալ այս Սև հողերը... Թո՛ղ զիս, թո՛ղ զիս, անողոք ստվեր, թո՛ղ որ վայրկյան մը ազատ ըլլամ սպառնալից նայվածքեդ, թո՛ղ որ քիչ մը հանգչիմ... Այլ դու մտիկ չես ըներ, արյունոտ ճերմակ մազերդ ճակտիդ վրա ցցած զիս խողխողել կսպառնաս... Ո՜հ, մի՛ սրսկեր ճակտիս վերքերեդ հոսող արյունը... Ա՜հ, կը սարսափիմ ես քեզնե...* (զարհուրած վազելու ատեն Երանյակի կը դիպչի սարսափած) *Երանյա՜կ... Զավակս... Ա՜հ...* (ձեռքերովը աչքերը կը ծածկե)։

ԵՐԱՆՅԱԿ.— (նույնպես սարսափած ոտքի ելնելով) *Վաչե՜... հեռացի՛ր ասկե, դահի՛ճ, մի՛ վրդովեր թշվառ մոր մը խղճալի օրհասը... Մի՛ մոտենար զավկիդ դիակին քով, որուն դալկահար շրթանց վրա անեծք կը փայլատակեն։*

ՎԱՉԵ.— *Դարձյա՛լ անեծք... Անշունչ դիակներն անգամ կանիծեն զիս... Ո՜հ, զավակս... Դու գոնե մի՛ անիծեր հայրդ, դու գոնե գթա իր վրա, վասնզի որչափ մեղապարտ ըլլա, դարձյալ քու հայրդ է։*

ԵՐԱՆՅԱԿ.— *Սոսկա՛ զքեզ հայր կոչելու, մատնի՛չ... Փախիր հայրենյացդ արյունահոս ծոցեն... Ահա Հայաստանի հառաչանքները՝ երկնից երեսը թանձրացած այս սև ամպերը կայծակներ կսպառնան արյունոտ ճակտիդ... Երբ շղթաներդ կը շառաչեն՝ դժոխք ծափ զարնելով կը խայտան և երախտաբաց երկնից մեկ ակնարկին կսպասեն, որ իսկույն լափեն զքեզ... Փախի՛ր...*

ՎԱՉԵ.— *Ո՞ւր փախչիմ... Ազատ չեմ ես, մրրկե մղված սև ամպ մ'եմ, հոն կառաջնորդեն զիս քայլերս, ուր որ կը մղե Հայաստանի վրեժխնդիր ստվերը. եթե անդունդներու հատակն ալ գահավիժեմ՝ դարձյալ ետևես պիտի գա և «անե՜ծք» պիտի գոռա ականջիս... Ո՜հ, ո՞ւր ապաստանիմ... Անմեղ զավկիս մը գիրկն ունեի մինակ ապաստանարան, նա ալ դալկահար տարածվեր է... Եթե կենդանի ըլլար, անշուշտ նա ալ նախատանոք զիս իր գրկեն ետ պիտի մղեր, նա ալ զիս իրեն հայր չի պիտի ընդուներ... վասնզի հայրենադրուժ մ'եմ ես։*

ԵՐԱՆՅԱԿ.— *Վաչե՜, երբեք աշխարհի վրա ապաստանարան մի՛ փնտռեր, ուր որ ալ երթաս միշտ աչացդ առջևեն պիտի սահին եղբարցդ թափած արյան հեղեղները, միայն դժոխք զքեզ կընդունի, ուր հավիտենական տառապանք կսպասեն քեզ, փոխանակ այն մատնությանդ, որով ողբաց Հայաստան, որով նվաղեցավ բոլորովին կարմիր Հայաստանի հուսո լուսապառ աստղը... Ինո՜ւնդ դժոխոց, չը մտածեցի՞ր անգամ մը, թե ի՞նչ կը գործես... Միտքդ չը բերի՞ր մեկ մը Վասակն ու Մերուժանը, որոնց մեկուն ճակատը փոխանակ թագի՝ որդերով պսակեցավ և մյուսին ճակատը՝ հրաշեկ շամփուրով... Եղո՜ւկ ինձի, որ անօրենի մը... մատնիչի մը կին ըլլալու բախտը և նախատինքն ունեցա...*

ՎԱՉԵ.— *Երանյա՜կ... Ա՛լ հերիք նախատես զիս... Եթե կը տեսնես որ ձեռքերս շղթայակապ են, գիտցիր որ այս շղթաներն ալ դեռ կրնան զայրույթս և վրեժս հագեցնել. եթե գիտնամ որ երկինք վրաս պիտի փլին՝ դարձյալ կը հարվածեմ զքեզ, մինչև որ քեզ ալ հոգեսպառ այս Սև հողերուն վրա տարածեմ... Ալ չեմ սոսկար մարդասպանութենե, քանի որ դժոխոց գատապարտյալ թշվառական մ'եմ արդեն... Դողա՜, դողա՜ ինձնե, Հայաստանի ժանտախտն եմ ես, Հայոց աշխարհին խորշակն եմ ես և դեռ կրնամ կենաց ծաղիկներ խամրեցնել... Երանյակ, արդեն ես տիվ և գիշեր անքուն կը տանջվիմ, և դու որ իմ կինս ես, զիս մխիթարելու տեղ՝ ամենեն ավելի դու կը նախատես զիս։*

ԵՐԱՆՅԱԿ.— *Այո՜, ամենեն ավելի ես պետք է որ նախատեմ և անիծեմ զքեզ, վասնզի տիվ և գիշեր ավերակաց մեջ հեծող բուն մը ըրիր զիս... Թափե՛ վերջին սպառնալիքդ ալ իմ վրաս և զավկիս հետ զիս ալ խողխողե. օ՜ն, իմ արյունս ալ խմե եթե այլևս արյուն չը կրցան քու դժոխային սիրտդ զովացնել...*

Բայց գոգա ֆերկնիք, ժանտա՛խտա<դ> Հայաստանի, վասնզի օր մը պիտի ելնես գերեզմանեդ և ոճրագործությանդդ հաշիվը պիտի տաս Ամենակալին գահույթին առջև... Այն գարրիելյան փողին գոչյունը այս արյան հեղեղներուն մոնչյունեն ավելի սոսկալի պիտի ըլլա... Նախատի՛նք և անե՛ծք քեզի...

ՎԱՉԵ.— Երանյակ... կը զայրացնես զիս, պիտի լռե՞ս, ապա թե ոչ...

ԵՐԱՆՅԱԿ.— Չէ՛, չե՛մ վախնար քու սպառնալիքեդ և կը կրկնեմ դարձյալ. նախատի՛նք և անե՛ծք քեզի։

ՎԱՉԵ.— Ա՜հ, ալ չեմ կրնար կնոջ մը նախատանացն հանդուրժել (ղղթաներով կնոջը վրա կը հարձակի կատաղաբար.— հանկարծ երկմեն կայծակ մը սրանալով վրան՝ թավալգոր կգգետնե զայն) երկնային վրեժխնդրությո՛ւն...

ԵՐԱՆՅԱԿ.— (սարսափած) Աստվա՛ծ իմ... Չըլլա որ երկինք զիս ալ կայծակնահար ընեն մատնիչի մը կինն ըլլալուս... փախչի՛մ... (դոդով կը հեռանա.— պատկերը փոխվելով դժոխք կը ներկայանա, ուսկից սև ոգիներ կելնեն և Վաչեի դիակը ի դժոխս կը քաշկոտեն.— պատկերը դարձյալ կիջնե):

Տեսիլ Գ

Վաղինակ (վիրավոր)

Հայաստա՜ն... քաղցր հայրենիք... Իմ արյունս ալ ընդունե քու անձկալի գիրկդ... Որչափ սիրելի է ինձ այս մահը, երբ կզգամ, որ հայրենյացս հողերը կը ծծեն արյունս և դարձյալ հայրենյացս հաղերը պիտի ծածկեն ոսկերքս... Արդյոք գերեզմանիս խաչերը պիտի թափանցե՞ երբեք հուսալից ձայն մը. «Ցնծացե՛ք, ախուր ոսկերք Վաղինակա, Հայոց ազատության արշալույսը ծագեցավ...»։ Արդյոք դարձյալ պիտի վերականգնի՞ս, Հայաստան, եթե ոչ մահաբեր է վերջդ... Սոսկալի կասկած... Հայե՜ր, օ՜ն, օգնության հասեք, չըլլա որ օրհասական ըլլա Հայաստան.— այլ Հայ մը չը պատասխաներ ձայնիս... Ամեն տեղ դիակ և ավերակ. անե՛ծք և վա՜յ այն վատին, որ հայրենիքը մատնեց։ Եվ դուք, լերի՛նք Հայաստանյայց, արձագանք տվեք այս ձայնին և թող լսեն այն վատերը, որոնք իրենց եղբարցն արատավոքն ու արյամբը օտարներեն երջանկություն գտնել կը հաճեցին... Ինչո՞ւ ծնար այդպիսի որդիներ, Հայաստա՜ն, որոնք սուրերնիս ապերախտությամբ քեզի դեմ դարձուցին՝ փոխանակ զքեզ պաշտելու և պաշտպանելու... Ա՜հ, ծնկերս կոկսին կթոտիլ, քիչ մը հանգչիմ հոս... Երկի՛նք, միշտ նայվածքդ Հայաստանի վրա թող ըլլա... (կը ճատի.— հեռուեն հետեյալ երգը կը լսվի, զոր նազիթիկ կերգե):

ՁՈՂԵՐԴ

Դեռևս գիշերն անցավ ու ցույտ արևուն
Ծագեց կարմիր Հայաստանիս ուրախություն...
Դարձյալ մինակ զուրկ սիրելյացս գրկերեն,
Հեծող բաբեր միայն ինձի ընկեր են։
Ո՜, դու, անգո՜ւթ Սև հողեր,
Սիրելիքս ծո՞ցդ ես թաղեր։
Զեփյուռներեն երջանիկ մի խանդրեմ լուր...
Այլ անուշ այ ուրիշն քովնա տխուր, լուռ,
Ծաղկունք թոռմեր և լուր է ալ սոխակ,
Մա՜հ կը հոտի, մա՜հ... Հայաստան ավերակ։
Ո՜, դու, անգո՜ւթ Սև հողեր,
Սիրելիքս ծո՞ցդ ես թաղեր։
Երկի՛նք, գթա՛ յիս, տա՛ր զիս ի ծոց սիրելյացս,
Եվ կամ ցցո՛ւր իրենց դամբանն սգազգեցս,
Եվ թող հոն, հոն, ցամքին արցունքս ոչ արյուն,
Ո՜հ, հոն վերջ տամ կենացս սև օրերուս։
Ցցո՛ւր, անգութ Սև հողեր,
Իմ սիրելյացս դամբանները։

ՎԱՂԻՆԱԿ.— Ի՞նչ քաղցր ձայն... Աստված իմ, պիտի ճանչնամ ես այս ձայնը... Այս ձայնը քաղցրիկ հիշատակներ կը զարթուցանե սրտիս մեջ... Նազինիկիս ձայնն է... այո՛, անոր ձայնն է... (հանկարծ ոտքի կելնե դոդոջուն) Նազինիկ... եկա՛ր... հո՛ս է Վաղինակ... հո՛ս...

Տեսիլ Դ

Վաղինակ, Նազինիկ

ՆԱԶԻՆԻԿ.— Երկի՛նք, մինչև ե՞րբ պիտի թափառիմ այսպես միայնակ ու արտասվալից. կամ սիրելյացս և կամ մահվան ցուրտ գիրկը մղեցեք զիս։

ՎԱՂԻՆԱԿ.— Նազինիկ... Նազինիկ...

ՆԱԶԻՆԻԿ.— Աստվա՜ծ իմ... Ի՞նչ ձայն է այս, ո՞վ կը գոչե զիս...

ՎԱՂԻՆԱԿ.— Նազինիկ, եկո՛ւր... հոս է Վաղինակ...

ՆԱԶԻՆԻԿ.— (զայն տեսնելով և դեպի անոր վազելով) Վաղինա՜կ...

ՎԱՂԻՆԱԿ.— Նազինիկ... Դո՞ւ ես... Դարձյալ գրկացս մեջ կը գտնեմ զքեզ, ես որ հուսահատ գերեզմանին սև եզերքները կը թափառեի, ես որ զքեզ մեռած կը կարծեի... Ո՜հ, գրկե՛ զիս և կարոտնիս առնենք, վասնզի քիչ ատենեն դիակ մը պիտի գտնես թևերուդ մեջ... վասնզի քիչ ատենեն շրթանցս ցրտությունը պիտի զգան շրթունքդ... պիտի բաժնվինք իրարմե...

ՆԱԶԻՆԻԿ.— Պիտի բաժնվի՞նք, ի՞նչ կըսես, Վաղինա՜կ... Ա՜հ... Աստվա՜ծ իմ, այս ի՞նչ արյուն է, որ սրտեդ կը հոսե... Անգո՜ւթ, կը հեռանաս, կը փախչիս գրկես... Ա՞յս է մեր սերը... Անդադար հառաչանքներ ու արցունքներ խամրեցուցին մեր կենաց և սիրո գարնան վարդերը... Արդյոք մեր միությանն օրեն ի վեր քանի՞ ժամ հանգիստ իրարու գիրկ ժպտեցանք։

ՎԱՂԻՆԱԿ.— Եվ ահա այն զվարթ ժամերն ալ սոսկալի տարիներով փոխանակեցան... Այս է եղեր մեր ճակատագիրը...

ՆԱԶԻՆԻԿ.— Անիծյալ ճակատագիր...

ՎԱՂԻՆԱԿ.— Նազենիկ, ո՞ւր է Վարդանույշ։

ՆԱԶԻՆԻԿ.— Ա՜հ...

ՎԱՂԻՆԱԿ.— Ինչո՞ւ այդպես աղեկտուր հառաչեցիր... Խոսե՛, կը սարսափեցնես զիս...

ՆԱԶԻՆԻԿ.— Ավա՜ղ... Թշվառ ենք միշտ...

ՎԱՂԻՆԱԿ.— Աղջի՜կս... աղջի՜կս... Ըսե՛... միթե այն ալ մեռա՞վ...

ՆԱԶԻՆԻԿ.— Զը գիտեմ, բայց եթե թշնամվույն ձեռքն ինկավ... Ո՜հ, արդյոք արյունակաթ սուրը տեսած ատեն ի՞նչպես «մայրիկ, մայրիկ» աղաղակեց... Հարցուր Հայաստանի անգութ երկնքին և տե՛ս, թե անոր մահվանն ալ հանդիսատես եղա՞վ։

ՎԱՂԻՆԱԿ.— (ցնորելով) Բայց ահա աղջիկս է, որ ավերակաց մեջ արտասվելով կը թափառի... Վարդանույշ, եկո՛ւր, թշվառ հայրդ եմ ես... Զայնս լսեց... ժպտալով հոս կը վազե... Գիրկս ինկավ, ո՜հ, երջանիկ վայրկյան... Հիմա կը տեսնեմ զքեզ, որչափ սիրուն ես եղեր, Վարդանույշ, արշալույսն անգամ քեզնե գեղեցիկ չէ... շուշանն անգամ քեզնե գողտրիկ չէ... Զավա՜կս, քու ժպիտդ և համբույրնիդ կյանքեն ավելի քաղցր կը թվին ինծի։

ՆԱԶԻՆԻԿ.— Վաղինակ... սիրտս կտոր կտոր կընես։

ՎԱՂԻՆԱԿ.— (սթափելով) Ո՞վ է գիրկս... Նազինիկ դո՞ւ ես... ինչո՞ւ կուլաս...

ՆԱԶԻՆԻԿ.— Կը թողո՞ւս զիս...

ՎԱՂԻՆԱԿ.— Թողո՞ւմ զքեզ, անկարելի է որ զույգ մը աղավնիներ իրարմե բաժնվին...

ՆԱԶԻՆԻԿ.— Բայց եթե անգութ որսորդը անոնցմե մեկը զարնե... միթե մյուսը կրնա՞ ապրիլ։

ՎԱՂԻՆԱԿ.— Մեռնիլ կըսես, Նազինիկ... Միթե չը գիտե՞ս, որ անիծյալ է անձնասպանը։

ՆԱԶԻՆԻԿ.— Վաղինա՜կ... Իբր ավերակներու մեջ բու մը կուզես թողո՞ւլ զիս միայնակ և տխուր...

ՎԱՂԻՆԱԿ.— Ո՜հ, որչա՜փ կը սիրես զիս Նազինիկ, ուրեմն վերցուր զիս գերեզմանին եզերքեն և քու գիրկդ առ... Ապրիլ կուզեմ ես քեզի հետ մեկտեղ... Բայց մխիթարվինք, Նազինիկ, եթե Տերը մեզի երկրի վրա այսչափ ցավ քաշել տվավ... եթե մեր սիրո զվարճագեղ հովիտն արցունքով լեցուց... անշուշտ մեզ համար հավիտենական երկինք մը պատրաստած է, ուր մշտնջենավորապես պիտի ժպտինք, հո՜ն պիտի գտնենք նաև մեր սիրելի Վարդանույշը...

ՆԱԶԻՆԻԿ.— Մա՜հ, մա՜հ, սիրելի են ինձ քու ճիրաններդ. այս ժամուս ես ալ մեռնիլ կուզեմ... Ի՞նչ կըլլաս, Վաղինակ, շրթունքդ կը կապուտնան...

ՎԱՂԻՆԱԿ.— Եվ դեռ բոլորովին չը սառած, համբույր մը, երկրորդ և վերջին համբույր մը...

ՆԱԶԻՆԻԿ.— Ո՞ւր կերթաս...

ՎԱՂԻՆԱԿ.— (երկինք ցուցնելով) Վարդանույշ զիս կը կանչե... երթամ...

ՆԱԶԻՆԻԿ.— Ե՜ս ալ... (դաշույնը անոր մեջքեն կառնե)։

ՎԱՂԻՆԱԿ.— Ա՜հ, ի՞նչ կընես, Նազինիկ...

ՆԱԶԻՆԻԿ.— Մեկտեղ երթանք... (ինքզինքը զարնելու կըլլա)։

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— (դրսեն) Մայրի՜կ... մայրի՜կ...

ՆԱԶԻՆԻԿ.— (դաշույնը ձեռքեն ձգելով) Ա՜հ... Աղջիկս...

ՎԱՂԻՆԱԿ.— Վարդանո՜ւյշ...

Տեսիլ Ե

Նույնք և Վարդանույշ

ՆԱԶԻՆԻԿ.— (խորը վազելով) *Հոս եմ, Վարդանույշ։*

ՎԱՐԴԱՆՈՒՅՇ.— *Մա՛յր իմ... Մա՛յր իմ...* (գիրկը կիյնա) *Իսկ ո՞ւր է հայրս, միթե...*

ՎԱՂԻՆԱԿ.— *Եկո՛ւր գիրկս, Վարդանույշ...*

ՎԱՐԴԱՆՈՒՅՇ.— *Ո՜հ, ի՞նչ ցավալի վիճակի մեջ կը տեսնեմ զքեզ, հա՛յր իմ...* (գիրկը կիյնա լալով)։

ՎԱՂԻՆԱԿ.— *Լա՛ց, լա՛ց, Վարդանույշ...*

ՎԱՐԴԱՆՈՒՅՇ.— *Բայց այս որչա՞փ լացի, ալ ցամքեցավ արցունքս և արյուն կը հոսին աչքերես... Ալ լալով աչացս լույսն անգամ նվաղեցավ։*

ՎԱՂԻՆԱԿ.— *Խեղճ աղջիկ... Բայց դու ի՞նչպես ազատեցար այն բյուրավոր սրերեն։*

ՎԱՐԴԱՆՈՒՅՇ.— *Վահրամ ազատեց զիս և ավա՜ղ որ ինքն ալ վիրավորվելով մեռավ զիս օրհնելով...*

ՆԱԶԻՆԻԿ.— *Մեռա՜վ... Խե՜ղճ Վահրամ...*

ՎԱՂԻՆԱԿ.— *Եվ դեռ ցավ քաշելու համար երկինք շնորհեր են քու կյանքդ։*

ՎԱՐԴԱՆՈՒՅՇ.— *Հայր իմ, ինչո՞ւ դեմքդ կը սառի... ինչո՞ւ ձայնդ կը մարի։*

ՆԱԶԻՆԻԿ.— *Վաղինա՜կ...*

ՎԱՂԻՆԱԿ.— *Ահա մահը սառած ձեռքերը կուրծքիս վրա կը դնե... մնաք... բարյա՜վ...* (զառանցելով) *Ո՞վ է այս տխուր ծերունին, որ դեմս արձանացեր է... ձեռքերը շղթայակապ... գլուխը փշապսակ... սիրտը վիրալից... և իր դեմքին խորշոմներուն մեջեն արտասվաց հեղեղներ կը թավալին... ծունր շոքեց... թևերը բացավ... զիս իր գիրկը կը կանչե... Հայաստանս է... ո՜հ, Հայաստանս է...* (ճեռվելով կիյնա կը մեռնի)։

ԵՐԿՈՒՔԸ.— (ասկմամբ) *Ա՜հ...*

ՆԱԶԻՆԻԿ.— *Մեռա՞վ...*

ՎԱՐԴԱՆՈՒՅՇ.— *Ուրեմն ի՞նչ ընենք, մայր իմ...*

ՆԱԶԻՆԻԿ.— *Մենք ալ մեռնինք...* (գայն կը գրկե)։

ՎԱՐԴԱՆՈՒՅՇ.— *Այս ի՞նչ ոտքի ձայներ են... Թաթարնե՞րն, մա՛յր իմ, փախչինք...*

Տեսիլ Զ

Նույնք, Նորայր (շղթայակապ), Զարմաղան, Զորք

ՆԱԶԻՆԻԿ.— (ճայրը տեսնելով) *Ո՜հ, հայրս է...* (ամոր վազելով) *Հա՛յր իմ, ո՞ւր կը տանին զքեզ...* (կուզե գրկախառնել, բայց զորքերը հրելով թող չեն տար)։

ՆՈՐԱՅՐ.— *Նազինիկ... Ա՜հ, թողե՛ք, անգո՛ւթ դահիճներ, որ վայրկյան մը գոնե գրկեմ աղջիկս... Պիտի մեռնիմ...*

ԶԱՐՄԱՂԱՆ.— *Այո՛, պիտի գրկես... բայց յուր ցուրտ դիակը...* (սուրը քաշելով) *Ի ծունր, իշխանուհի, Լանկթիմուրի հրամանը մահ է... Հայկյան շունչը պիտի սպառի։*

Տեսիլ Է

Նույնք, Լանկթիմուր և Թիկնապահք

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— *Կեցի՛ր...*

ԱՄԵՆՔԸ.— *Լանկթիմո՞ւր...*

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— *Իմս թող ըլլա այդ գեղանի Հայուհին... Թո՛ղ ապրի...*

ՆԱԶԻՆԻԿ.— (ճոր գիրկը իյնալով) *Հա՛յր իմ...*

ՆՈՐԱՅՐ.— *Ո՛չ... Թո՛ղ իմ գիրկս մեռնի...*

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— *Ո՞վ նազելի Հայուհիդ, տիեզերակալ ա՞յր մը կուզես՝ եթե դատապարտյալ հայր մը։*

ՆԱԶԻՆԻԿ.— *Հայրս...*

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— *Կենդանում, օր շնորհեցի յուր կյանքը... Իմս եղիր։*

ԶԱՐՄԱՂԱՆ.— *Սեբաստիո իշխանն է...*

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— *Սեբաստիո իշխա՞նը...* (առ Զարմաղան) *Զորապետ, երդում ըրի։*

ՆԱԶԻՆԻԿ.— *Իրեն հետ կը մեռնիմ։*

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— *Իսկ հա՞յրդ կուզես՝ եթե հայրենիքդ։*

ՆԱԶԻՆԻԿ.— *Հայրենիքս...*

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— *Քաջ Հայուհի, քեզի թող ըլլա հայրդ ալ, հայրենիքդ ալ... Քակե հորդ շղթաները, իշխանգ Սեբաստիո, խոսք մը զքեզ ազատեց... Հայուհի մը սիրտս շարժեց...*

ՆՈՐԱՅՐ.— (գրկելով) Աղջի՜կս... (Նազինիկ շղթաները կը քակէ)։
ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Զորականք, ալ թող դաղրին հարվածները... Հեռանանք Հայաստանեն... Հայ աղջիկ, մի՛ անիծեր Լանկթիմուրը, որ հայրենիքդ հարվածեց, հիշե՛ միշտ զինքը, որ գթաց քեզի... Մնաս բարյա՜վ (կը մեկնին Թաթարները)։
ՆՈՐԱՅՐ.—Եվ ես, գերեզմաններու և փլատակաց պիտի տիրե՞մ։
ՆԱԶԻՆԻԿ.— Կբավե, որ շղթա չունինք, հա՛յր իմ, ազատ ենք...
ՆՈՐԱՅՐ.— Ալ չը մնաց Հայ մը...
ՆԱԶԻՆԻԿ.— Մենք Հայ ենք։ (Վարագույրը կիջնե)։

(Վերջ Գ արարվածին)

ՎԵՐՋԱԲԱՆ

Գիշեր.— Լուսին.— Ավերակ վայր մ'է.— Ասդին անդին շիրիմներ.— Հայաստան շղթայակապ և փշեպսակ գլուխը կուրծքին ծռած հուսահատ նստած է.— Թշվառությունը մեկ ձեռքը սև դրոշ մը, մյուս ձեռքը տապար մը Հայաստանի գլխուն վերև կանգնած է.— Գահ։

Տեսիլ Ա

Հայաստան և Թշվառություն

ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— Վերջապես թշվառության սև դրոշը քու վրադ ալ ծածանեցավ, Հայաստա՜ն, ուրեմն այսուհետև դիր գլուխդ փոխանակ թագիդ այս փշյա պսակը և շքեղ ծիրանվույդ տեղ՝ այսպես ցնցոտիներ հագիր... Օ՜ն, արթնցի՛ր և լա՛ց, թշվառությունը քու շորս կողմդ արցունք և սուգ, անեծք և մահ սփռեց և ոտքերուդ տակ սև սև գերեզմաններ փորեց... Ե՛լ, կանգնե՛, շորս կողմդ նայե՛ և ալ չի՛ պիտի տեսնես գեղազվարճ դաշտերդ, այլ՝ արյան համատարած ծով մը, որուն մեջ կը լողան կիսաշունչ դիակներ, չը մնաց ծաղիկ մը՝ որ արցունքով չը թրջի, չը մնաց ալիք մը՝ որ արյամբ չը պղտորի... Անգամ մ'ալ դարձուր աչքդ յերկինս. տե՛ս, աստղդ յուղասպառ կանթեղի նման կը դլպլա և մոտ է խավարելու... Այո՛, ահա կը խավարի Հայաստանի պերճ բախտը։

ՀԱՅԱՍՏԱՆ.— (հուսահատ ցատկելով) Ա՜լ հեռացիր քովես, անգութ Ոգիդ Թշվառության, դու խեղճ Հայաստանը շղթայակապ գտար և կը ծաղրես... Ա՜հ, շանթեր թոթափեն այն Հայերուն գլխուն, որոնք իրենց հայրենիքը շղթայեցին այսպես, և թշվառությունը եկավ իր սև դրոշը կանգնեց գլխուս վերև և փուշերով պսակեց ալևոր ճակատս... Ա՜լ բավական է, ճիվաղդ անողորմ, ալ բավական Հայաստանի արյունը թափեցիր... Ե՞րբ պիտի փշրի այդ անխնա տապարը...
ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— Քու կուրծքիդ վրա միայն պիտի փշրի... Մի՛ նախատեր զիս, երկնից արդարադատ բազուկն եմ ես... Ուր որ չկա լույս և ոգի՝ հոն է թշվառությունը... Ինչո՞ւ կործանեցավ Արարատյան գահը. վասնզի Հայը տգետ էր, վասնզի Հայաստան մարած սրտերու մենաստան մ'էր. վասնզի իր վերջին թագավորը կրոնամոլ, անարդ և օտար էր. լեռները ողբացին, գետերն արտասվեցին, մինչդեռ Լևոն Զ Կապան բերդին մեջ ապաստանած էր, բայց վերջապես ինքն ալ շղթա կրեց, փոխանակ պատերազմի դաշտին վրա իյնալու... Խեղճ Հայեր, իրենց ընկերմելիք անդունդը ձեռքնին կը փորեն և երբ անդունդին եզրը ըլլալնին կզգան՝ կսկսին օգնություն աղաղակել, բայց իզուր... Խեղճ Հայ, որ ընդ երկար կը լռե... վերջապես կորոտա և իր հանած կայծակեն նախ ինք կը սարսափի։
ՀԱՅԱՍՏԱՆ.— Լռե՛... Ամոթահար պիտի կորնչի Հայաստան և ոչ ոք պիտի գթա իրեն և պիտի օգնե, վասնզի թշնամին ու դահիճը իր զավակն է... Ո՞ւր եք Հայկ, Արամ, Արտաշես, Տրդատ, Տիգրան, քաջ դյուցազունք, ահեղ առյուծք Արարատյան, ելե՛ք ձեր դարավոր շիրիմներեն, տեսե՛ք ցնցոտիներ հագեր է, շղթայակապ է Հայաստան... Արթնցեք մեկ մը և պիտի տեսնեք, որ ձեր շիրիմներն անգամ ձեր թոռանցն արյամբը կարմրած են... Ուրեմն, դուք ալ ձեր դամբանաց խորերեն անե՛ծք մռնչացեք մատնիչ Հայերուն, դուք ալ վա՜յ և եղո՜ւկ կարդացեք թշվառ Հայաստանի...
ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— Իզո՜ւր կավաղես, Հայաստան, գիտցիր որ այդ արտասվաց հեղեղներն անկարող են որդվույդ ճակտին դատակնիքը ջնջելու, և այդ հառաչանաց մրրիկները չեն զորեր քու աստղդ ծածկող ամպերը փարատելու. այսուհետև հոս միայն սև նոճիներ պիտի պատեն... Երբ աչքերդ երկինք

վերցնես՝ ամպամած պիտի տեսնես զայն. երբ ջանանք ի գետին խոնարհես՝ փշապատ պիտի գտնես զայն. փշտահար պիտի թափառիս փլատակաց մեջ, պիտի չի գտնես կոթող մը, որուն վրա կարդաս հիշատակդ, պիտի չի գտնես ծաղիկ մը, որուն վրա կարդաս երջանկութիւնդ, վերջապես պիտի չը գտնես Հայ մը, որուն նայվածքին մեջ կարդաս հուսդ... Պիտի հեծես միշտ՝ մինչև որ քու խոր գերեզմանդ փորեմ... Քու որդիքդ պիտի մղեն տգիտաբար քեզ հան՝ կարծելով թե գահ է այն, և ծառրք փուշեր պիտի սփռեն դամբանիդ վրա, միմիայն նախնյաց ստվերներն արցունքով պիտի թանան այն փուշերը։ Ահա բացի քու առջիդ ապագային մութ վարագույրը։

ՀԱՅԱՍՏԱՆ.— Ա՜հ... սոսկալի վհիս... Լսեցե՛ք ուրեմն, Հայեր և զարհուրեցեք... Ո՞վ երկինք, չը պիտի ջնջես ճակատս այս անեծքը... Միթե սպառեցա՞ն կայծակներդ՝ երբ կարդը զանոնք մատնչաց ճակատին թոթափելուն եկավ... Ի՞նչ կը լսեմ... Հայաստան պիտի ջնջվի... Հեռացի՛ք, գուժկան ոգի... Ողբեր հյուսեցե՛ք, Հայ օրիորդներ, արցունք թափեցե՛ք, երիտասարդներ, և դուք ալ, ծերեր, ձեր գերեզմանը փորեցե՛ք... Հայաստան պիտի ջնջվի՜... Խնդացե՛ք, Պարսիկք և Հույնք, Եգիպտացիք և Թաթարք... և դու ալ երկնադրացիդ Մասիս, դու ալ ամպերու մեջեն որոտագոչ ձայնե. «Հայաստան պիտի ջնջվի...» (հանկարծ կարմիր լույս մը կը ծագի) Ի՞նչ լույս է այս... Արդյոք Հայաստանի բա՞խտն է, որ ծագեցավ։

Տեսիլ Բ

Նույնք և Սեր

ՍԵՐ.— Այո՛, Հայաստան պիտի ջնջվի...

ՀԱՅԱՍՏԱՆ.— (սարսափած) Ո՜հ, մահվան հրեշտա՞կն է այս։

ՍԵՐ.— Ո՛չ, զքեզ ողբալու կուգամ, Հայաստան... Չե՞ս ճանչեր զիս...

ՀԱՅԱՍՏԱՆ.— Այո՛ կը ճանչեմ զքեզ, հրեշտակդ խաղաղության։

ՍԵՐ.— Ո՞վ է այդ ճիվաղը, որ գլխուդ վերև կանգներ է՝ մեկ ձեռքը տապար մը, մյուս ձեռքը սև դրոշ մը բռնած... Անշուշտ կը ճանչես նաև զայն... Կը տեսնե՞ս որ քայլերուն տակ արցունք կը սփռե և սիրտ պես ծաղկունք չի սփռեր... կը տեսնե՞ս

որ ուր չկա սեր, հոն չկա խաղաղություն. վա՜յ ձեզ, Հայեր, որ ձեր նախնի փառաց կոթողները գուք ձեռքնիդ կործանեցիք և ձեր արյամբը զովացուցիք Սանդարամետի սև ճակատը... Թո՛ղ ուրեմն հագենա Թշվառության տապարը...

ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— Այո՛... վասնզի երբեմն թշվառութենեն կը ծնանի վերականգնումն... Բայց թող գիտնա Հայաստան, որ երբեք թշվառության տապարը չը հագենար. միշտ կը հարվածե՝ մինչև որ ձայն մը գոչե. «Ա՛լ բավական է»։

ՀԱՅԱՍՏԱՆ.— Եվ ե՞րբ պիտի լսվի այդ ձայնը։

ՍԵՐ.— Երբ Հայը սիրե իր եղբայրը։

ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— Առանց այն ձայնին, եթե բոլոր աշխարհ աղերսարկու ծունր դնե առջիս՝ դարձյալ կը հարվածեմ... միշտ կը հարվածեմ։

ՍԵՐ.— Կը լսե՞ս, Հայաստան, ճանչցի՛ր դահիճդ, ճանչցի՛ր հրեշտակդ. երբեմն սիրո ժպիտն էր Հայաստանի արևը... խակ հիմա քու ապերախտ զավակներդ ատեցին և զարկին սերը... Ինկավ նա և ինկավ Հայաստան. արտասվելով անցավ Հայաստանեն Սերը և ուր որ հոսեցին յուր արցունքը, հոն փուշեր բուսան... Թո՛ղ հաղթանակե ուրեմն Անմիությունը, թո՛ղ հաղթության կոթողներ, շիրիմներ և սգալի նոճիներ կանգնե... և Թշվառության տապարը թո՛ղ անխնա հարվածե Հայաստանը. թո՛ղ փուշերով պսակվի իր կնճռոտ ճակատը՝ ինչպես որ նա փոխանակեց սիրո նվիրած ձիթենիները։

ՀԱՅԱՍՏԱՆ.— Ա՜լ բավական է. անեծք մը միայն մնաց, այն ալ գերեզմանիս վրա կարդա. ես որ քեզնե սփոփանք կակնկալեի, դու նախ կը դատապարտես զիս... Բայց ո՛չ, իրավունք ունիս, վասնզի ես արցունք քամեցի քու արև աչերուդ։

ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— Հայաստա՜ն, միթե Թշվառությունը անգութ գտնելով՝ Սերե՞ն կակնկալես գութ, գիտցիր որ Սերն ինկավ քու գահեդ և միայն Անմիությունն ու Թշվառությունն են անոր իշխողները... Չե՞ս տեսներ որ Հույսը սարսափով կը նայի Արարատյան սառնապատ սարերուն... Մինչև անգամ Ասքանազյան քաջերուն ոսկերքը գերեզմաններուն մեջ կը քստմնին, կը դողան լերինք, կողբան ալիք, կուլան ծաղիկք, կը հեծեն զեփյուռք, կը հնչեն ահա կոչնակաց մահաշշուկ զանչյունները. դեռ կը հուսա՞ս, Հայաստան, ամեն տեղ օրհասական հեծեծանքներ կը լսվին... Ամեն տեղ մահ սփռեց Անմիու-

թյունը, մինչև անգամ գերեզմանաց հանգիստը խռովեց, և դու դեռ կը հուսա՞ս, խեղճ Հայաստան (որոտմունք և կայծակ):

ՀԱՅԱՍՏԱՆ.— (սոսկմամբ) Ա՜հ... Հուր և կործանում։

Տեսիլ Գ

Նույնք և Անմիություն

ԱՆՄԻՈՒԹՅՈՒՆ.— (խրոխտապանծ գահն ելնելով) Ողբացե՛ք, Հայեր, ձեր ողբերն իմ հաղթությանս դրվատիքն են, և օ՛ն, արտասվաթորմ ծաղիկներե հաղթական պսակներ հյուսեցեք Անմիության խրոխտ ճակտին... Հաղթություն կրկնեցեք ողբաձայն, ձորք և լերինք Արարատյան, Անմիությունն եմ ես, սեր գոչող ձայնը թո՛ղ մարի, սեր հնչող քնարը թո՛ղ փշրի, սեր տածող սիրտը թո՛ղ խորտակի... Անմիությո՛ւնն եմ ես... Սարսեցե՛ք անունես, շիրի՛մք դյուցազանց... Դողա՛ և սոսկա՛ ինձնե դու ալ, Հայաստա՛ն, վասնզի ալ իմ գերիս ես... Եվ դու ալ, Սեր, պարտությանդ վրա ամոթահար՝ հեռացիր Հայաստանեն. թո՛ղ որ ես ալ տիրեմ Հայաստանի... Խե՜ղճ Հայեր, չը գիտեի՞ք միթե, որ իմ գահս է գերեզման և թագավորական գավազանս է սուր, և հիմա զոչալով կը հեծեք։

ՍԵՐ.— Ոգի՜դ Անմիության, այո՛, հաղթեցիր ինձ վատ մասնիչներու զենքերովը, որոնք եղբարց, որդվոց, ծնողաց և նաև իրենց գլուխը Թշվառության տապարին մատուցին... Ո՜վ ողբալի ժողովուրդ, արդյոք ե՞րբ պիտի արթննաս և պիտի գիտնաս, թե քու երջանկությունդ, կյանքդ, արևդ սերն է միայն։

ՀԱՅԱՍՏԱՆ.— Նախատի՜նք... Այս է ահա Հայաստանի ապագայն... ո՜վ երկինք, դուք գոնե գթության կաթիլ մը ցողեցեք թշվառ ճակտիս վրա, դուք գոնե հուսո նշույլ մը սփռեցեք խավար հորիզոնիս վրա։

ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— Դեռ կը հուսա՞ս, Հայաստան։

ԱՆՄԻՈՒԹՅՈՒՆ.— Կը մթագնի հորիզոնդ։

ՍԵՐ.— Մի՛ խրոխտար այդպես, Ոգիդ Անմիության, անշուշտ դեռ չէ մարած բոլորովին սիրո կայծը Հայոց սրտերուն մեջ. պիտի գա անշուշտ ժամանակ մը, որ երբ տգիտության մռայլը խուսափի, Հայաստան իր թմրած գլուխը բարձրացնելով պիտի սթափի և սպառնալից նայվածքով մը զքեզ դժոխոց ծոցը պիտի գլորե, և դարձյալ ես կը գրկեմ ու գգվեմ այն ատեն տառապյալ Հայերը, և իմ մազերովս կը պատեմ իրենց վերքերը։

ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— Սեր, կը տեսնե՞ս այս տապարը. գիտցիր որ խիստ սոսկալի է այն, որ իր ձեռքը տապար և անմիությունն ունի...

ԱՆՄԻՈՒԹՅՈՒՆ.— Եվ նաև անկարելի է մեռյալը գերեզմանին մեջ կենդանացնել... Սեր, ալ բավակա՛ն է, հեռացի՛ր Հայաստանեն ամոթահար, անցիր զարհուրած նույն արտասվալից դաշտերեն, կարդա՛ Մասիսի ճակատը դրոշմված սա արենագիծ տառերը. «Հայաստան պիտի ջնջվի», ե՛լ հետո անոր գագաթը և պիտի տեսնես, որ սեր ու հաղթանակ նվագող մուսայից մատունքն իրենց սառած աչքերեն կաթած արցունքովը կը հնչեն ոսկի քնարներուն թելերը, և գոռոզն Մասիս իր դեմքը ամպերուն ետև ծածկած կը հառաչե... հետո անցիր Հայաստանի կործանյալ պարիսպներեն... ակնարկ մը ձգե ետևդ և պիտի տեսնես ավերակ, լուռ և տխուր երկիր մը և նույնպես սև ու անարև երկինք մը և երկուքին մեջտեղը Անմիության ստվերը խրոխտապանծ կանգնած...

ՍԵՐ.— Սթափեցե՛ք, թշվառ Հայեր, գրկեցե՛ք զիս, և դարձյալ ես կը վերականգնեմ ձեր ավերակ երկիրը... Մնաս բարյա՜վ Հայաստան... (տխուր ու համրաձայն կը հեռանա. առջի պես խավար):

ՀԱՅԱՍՏԱՆ.— Ա՜հ, այս ի՜նչ մահաբույր խավար պատեց... Հեռացար ինձնե քաղցրիկ Սեր, զիս մինակ թողուցիր այս ճիվաղներուն քով, որոնց ծոցեն մահ կը բուրե և որոնց բերանեն դժոխք կը ժայթքե, դարձի՛ր, դարձի՛ր, տառապյալ Հայաստանի գիրկը... Հայե՛ր...

ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— Ա՛լ մի հուսար, Հայաստան։

ՀԱՅԱՍՏԱՆ.— (ձեռքերը գլխուն զարնելով) Ավա՜ղ...

ԱՆՄԻՈՒԹՅՈՒՆ.— Լացե՛ք, հրեշտա՛կք երկնից... խնդացե՛ք, հրեշք դժոխոց, և դուք ալ, երկի՛նք և երկի՛ր, միաձայն կրկնեցեք. «Հայաստան պիտի ջնջվի...», արցունք թափեցեք, Արարատյան սառնամանիք։

ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— *Հայաստան պիտի ջնջվի՞...* (սպառնալից կը հեռանան):

ՀԱՅԱՍՏԱՆ.— (հեռին հուսահատությամբ ծունր իջնալով) *Անե՜ծք, անե՜ծք...* (խավարումն լուսնի.— աղմուկ.— սավերներ կամաց կամաց գերեզմաններեն կելնեն և հետևյալ երգը կերգեն սխոտ ու միակերպ):

Տեսիլ Դ

Հայաստան և Սավերք

ՈՂԲԵՐԳ ՍԱՎԵՐՈՑ

Մինչ ե՞րբ գլուխդ պիտի ծեծես՝
Շղթայակապ այդպես հեծես,
Հեգ Հայաստան շիջելարև,
Ե՞րբ սոխտիք սրբատարա
Նոճիներեն շուտ տալով խուլ,
Պիտի երգե վարդ, արշալույս։

Եղո՜ւկ քեզի, հեք հայրենիքդ,
Որ շորթելով շքեղ դարմանիքդ՝
Որդիքդ անխիղճ գլխատ վատած
Թալորեցին և նոճ ու փուշ...
Ա՜հ, վրեժխնդիր շանթեր ճայթին
Հայրենագրուժ Հայոց ճակատն։

(սավերները կսկսին կամաց կամաց իրենց գերեզմանը մտնել):

Տեսիլ Ե

Հայաստան (առանձին)

Օ՜ն, գերեզմաննիդ մտեք, ստվե՛ր դյուցազանց... Ձեր ողբերովը չե՞ն քակվիր այս շղթաները, դուք որ կաշկանդյալ եք հավիտենականության շղթաներով. հեռացե՛ք. ձեր ողբերը միայն նոր խոր փառաց հիշատակներ կը զարթուցանեն ավերակաց մեջեն... խավար է Հայաստանի ճակատագիրը... Ա՜հ, երկինք, վերցուր գլխուս վրայեն վրեժխնդրության հրացայտ սուրը, որուն վրա հայելվո մը պես, ահա միշտ փշապատ գերեզմանս կը նշմարեմ... Ո՜հ, այդ սրովդ խորտակե այս շղթաները և քու բարկությանդ կայծակովը այրե՛ ճակտիս փուշերը... Դեռ չսպառեցա՞վ վրեժխնդրությունդ... Չը տեսա՞ր միթե որչափ արյուն ծծեց այն Ան հոգերը, մինչև անգամ արևը զարհուրեցավ իր լույսը սփռելու... Դեռ կը գոռա ականջիս այն ահռելի ձայնը. «Հայաստանը պիտի ջնջվի՞», դեռ աչացս առջև է Թշվառության արենակաթ տապարը... (ծունր գալով) Ձայն տվե՛ք, երկի՞նք, պիտի քակվի՞ն այս շղթաները, ձա՛յն տվեք, դեռ շա՞տ պիտի հեծե Հայաստան...

Տեսիլ Զ

Հայաստան և Հույս

ՀՈՒՅՍ.— *Մի՛ հուսահատիր, Հայաստան... Դեռ կրնան խորտակիլ այդ շղթաները... դեռ աստղ մը ունիս։*

ՀԱՅԱՍՏԱՆ.— *Ա՜հ... Օրհնյալ ըլլան երկինք... Բայց ո՞վ ես դու... Ըլլա որ մահվան հրեշտակն ըլլաս...*

ՀՈՒՅՍ.— *Հույսն եմ ես, որ գերեզմանին ցուրտ դուռն առջև իսկ՝ թագին և դագաղին երեսին կը ժպտիմ։*

ՀԱՅԱՍՏԱՆ.— *Եվ ի՞նչ կը բերես ինձ, թա՞գ թե դագաղ։*

ՀՈՒՅՍ.— *Թա՜գ... եթե Հայը սիրե եղբայրը, Հայաստան պիտի վերականգնի...* (Հայաստան ուրախության շարժում մը կրնե) *Հայաստան չի պիտի վշտացնի, այլ պիտի ժպտի* (գլխուն փշյա պսակը կը նետե): *Հայաստան գերի չէ, այլ ազատ պիտի ըլլա...* (շղթաները կը քակե) *Օտարությունը Հայուն գլուխն հարվածող լախտն է, անմիությունը Հայաստանի ժանտախտն է, սերն ու լույսը Հայոց դրախտն է... Եվ քիչ ատենեն երկնից երեսը նոր աստղ մը պիտի ցոլա՝ այն ալ Հայաստանի բախտն է* (հանկարծ քաղցր լույս մը կը ծավալի):

ՀԱՅԱՍՏԱՆ.— *Ողջ է Հայաստան... Ծափ զարկեք, Հայեր...* (Անմիության գահին կործանումը):

ՍԵՐ.— (երևալով) *Ձե՜ռքդ, Հայաստան։*

ՀԱՅԱՍՏԱՆ.— *Ահավասիկ...* (կը գրկախառնին):

ՀՈՒՅՍ.— *Ուրեմն պիտի վերականգնի Հայությունը։* (Վարագույրը կիջնե)։

ՎԵՐՋ

ԱՐՏԱՇԵՍ Ա. ՇԽԱՐՀԱԿԱԼ

Թատերգություն
Երգախառն ի հինգ արարս եվ ի մի պատկեր

<1 հոկտ, 1869>

ԱՆՁԻՆՔ ԹԱՏԵՐԱԽԱՂԻՆ

ԱՐՏԱՇԵՍ Ա, արքա Հայոց
ՏԻԳՐԱՆ Բ, արքա Հայոց
ԿՐՅՈՒՍՈՍ, արքա Լյուդացվոց
ՄԻՀՐԴԱՏ, բդեշխ Վրաց՝ փեսա Արտաշիսի
ՎՐՈՒՅՐ, սպարապետ Հայոց
ՎԱՐԱԺ, զինավարժ Տիգրանա
ԱՐՇԵՂ, զինակիր Արտաշիսի
ԽՈՍՐՈՎ, դեսպան Հայոց
ՎԱՀՐԱՄ ՎԱՀՈՒՆԻ, քրմապետ Հայոց
ԿԱՄԱԴՐՈՍ, մտերիմ Կրյուսոսի
ՊՅՈՒԹՈՍ, քրմապետ Լյուդացվոց
ՈՐՄԶԴՈՒԽՏ, սիրուհի Արտաշիսի

Թիկնապահք, զորապետք, զինվորք, պահապանք, պալատականք, դահիճք, քուրմք, նավաստիք:

ԱՐԱՐՎԱԾ Ա

Պալատ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Կեցցե՜ն հավերժ արիք Հայկյան,
Ցոլան սուր, թագ, փառք ու հույսեր,
Օտար ազինք ափ ի բերան
Թողուն գողգոջ ծանգոտ սուսեր։

Կեցցե՜ հավերժ վեհն Արտաշես՝
Օտար ափանց նախանձ սարսափ,
Կեցցե՜ Տիգրան՝ նոր բոցագես
Արքայն. լեռ, ձոր՝ զարնեն թող ծափ։

Տեսիլ Ա

Արտաշես (ի գահ) Միհրդատ, Վրույր, Արշեզ, Խոսրով, Վարաժ, Քրմապետ, Նախարարք, Թիկնապահք.—

ՏԻԳՐԱՆԸ թուզավորական հանդիսին կը բերեն և կերգեն:

ԱՐՏԱՇԵՍ.— Ժողովուրդք Հայաստանյայց, ահա ճանչցե՛ք այսուհետև ձեր թագավորը. Արտաշես ծովերու, անապատներու և բոլոր տիեզերաց թագավոր կոչվելու կերթա, թող իր փառքը ցոլա նաև Արևմտյան հորիզոնին վրա և ազգերու փառաց վերջալույսն հանդիսանա. թագերու ներքև խրոխտ ճակատները տժգունին ու խոնարհին, լա՜ն փառք երազող բռնավորները. Ասիո խորերեն՝ Այրարատա դաշտեն մրրիկը կը մռնչե. «Թագակիրներ արյան ծովերե և արտասվաց գետերե անցնելով՝ թող գան շղթայակապ խոնարհին Արտաշեսի առջև և դողդոջուն ձեռքով դափնիներ բոլորեն իր ճակտին»... Կը կարծե՞ք որ կերաղե Արտաշես; ա՜հ, բավական երազեցի օրրանիս մեջ,

հորս գրրկը, զինուց աղմուկին մեջ, որսի ճերմակ երիվարիս վրա... Մանկութեանս ատեն գահ մը կը պակսեր, ահա այն գահին վրա կը գտնեմ ինքզինքս և անոնք որ երազ էին, հիմա կապույտ քողի մը ետևեն ինձ կը ժպտին... Ագռավը արծիվ չեղավ, այլ արծվի ձագին թևերուն փետուրները հղկվեցան, թռչելու ժամանակն է, կուզե՞ք որ թռչի...

ՄԻՀՐԴԱՏ.— Տեր արքա, քանի որ Արտաշես աշխարհի իշխե՝ նախարարներն ալ մեյ մեկ թագավորներ կը համարվին։

ԱՐՏԱՇԵՍ.— Կը հասկնամ, քաջ բդեշխ, և Միհրդատ ալ Պոնտոսի իշխանը կըլլա։

ՄԻՀՐԴԱՏ.— Կընդունիմ, վեհափառ տեր, արքայական այդ մեծ շնորհքը, Պոնտոսի իշխանը ու Արտաշեսի հպատակն եմ։

ԱՐՏԱՇԵՍ.— Երդվի՛ր որ Հայոց արքային միշտ հնազանդ և օգնական պիտի գտնվիս։

ՄԻՀՐԴԱՏ.— Կերդնում յերկինս, Աստվածոց և սրույս վրա։

ԱՐՏԱՇԵՍ.— Երդվի՛ք և դուք, ավագանիք Հայաստանյայց։

ԱՄԵՆՔԸ.— Կերդնումք։

ԱՐՏԱՇԵՍ.— Եվ դու որդյակ իմ թագավոր, երդվի՛ր որ պիտի սիրես ազգդ հոգվույդ չափ և պիտի նվիրես արյունդ իր փառացն ու ազատությանը համար։

ՏԻԳՐԱՆ.— Կերդնում յերկինս և Աստվածոց, թագիս և սրույս վրա, որ պիտի սիրեմ ազգս և թագս, և առանց հորս փառքեն նշան մը կորսնցունելու՝ պիտի ջանամ ավելի փայլեցնել, իր արիության ստվերը և իր փառաց արձագանքն ըլլալու պիտի ճգնիմ։

ԱՐՏԱՇԵՍ.— Ո՞վ քաջդ Վարաժ. դու, որ իմ որդիս քաջագործության վարժեցուցիր, զքեզ չեմ ուզեր անվարձ թողուլ, արքունի որսապետ կը կարգեմ և կը շնորհեմ քեզ Հրազդանի անման ափունքը։

ՎԱՐԱԺ.— Երախտապարտ սրտիվ կընդունիմ, վեհափառ տեր։

ԱՐՏԱՇԵՍ.— Որդյակ իմ, ահա կը թողում ես Հայաստանն իր փառացն համար, կը թողում այս գեղեցիկ հայրենիքը, ուր թագավոր ծնա և կերթամ օվկիանոսի կոհակաց հետ մռնչելու, թագը մեկդի ձգելով՝ սաղավարտ կրելու։ Թագը սաղավարտեն ավելի ծանր է և դժվարակիր. գիտցի՛ր որ այս լեռները, ժայռերը, ձորերը և գերեզմանները ձայն ունին թագավորի մը դեմ, որ անիրավություն կը գործե, քահիդ ոտքերը պիտի ըլլան Հայրենիք և Իրավունք, Պատիվ և Արիություն,

ասոնցմե զուրկ տեղը անդունդ կա. նայե՛ որ սուրդ չի ժանգոտի իր պատյանին մեջ, թագավոր և միանգամայն զինվոր եղիր, զարկ, մի՛ զարնվիր, մեռի՛ր, մի՛ հաղթվիր, ջանա՛ որ թշնամիք հակա Մասիսի կնճռոտ ճակտին չի թքնեն, այն պիտի մնա դարերով Հայուն արձան և հիշատակ, այն պիտի լա Հայկազն դյուցազանաց դամբաններուն վրա։ Գիտցիր որ Արտաշես երբ իմանա, թե Տիգրան պատերազմի դաշտին վրա հաղթվեր է՝ սուրը պիտի փշրի իր փառաց և հույսերուն վրա։

ՏԻԳՐԱՆ.— Հա՛յր իմ, աշխարհակալությենե դարձած ժամանակդ, թագավորներ կառդ պիտի վարեն, թագավորներ՝ զորոնք Տիգրան գերի պիտի վարե։ Ես ալ Արտաշեսի նման չեմ երազեր. Արևմուտքը քեզի, հայր իմ, Արևելքն ալ ինծի, ես ալ՝ Արտաշեսի որդին. գրկվինք հայր և որդի, գրկվինք երկու զորոց աշխարհակալներ, մա՛հ և կործանո՛ւմն աշխարհի։

ԱՄԵՆՔԸ.— Կեցցե՛ն Հայկազն Աշխարհակալք, կեցցե՛ Ասքանազյան թագավորություն։

ԱՐՏԱՇԵՍ.— Կեցցե՛ս, որդյակ իմ, այո՛, իմ որդիս, իմ արյունս ես, Արտաշես չը գիտե պարտվիլ։ Տիգրան ալ պիտի հաղթե, Արևելք քուկդ, Արևմուտք՝ իմս։

ՎՐՈՒՅՐ.— Ուրեմն թո՛ղ բոլոր Ելլադա մոխիրի վրա նստի, իր Աստվածները օգնության կանչե՛ զոհերու ճենճերով օդը մթագնեցնե՛, լա՛ իր բախտը, դրոշներովը արցունքը սրբե՛, ժանգոտ սուրը ժայռերու զարնե՛... Հեծե՛, Ելլադա՛, Արտաշես մութ բանակավ դեպի քեզ կը քալե, այս սուրը կամ քու ավերակացդ և կամ իմ կուրծքիս վրա պիտի փշրի... Քա՛ջդ աշխարհակալ, հրաման տո՛ւր սպարապետիդ, որ զորքերը ժողվե. քալե՛նք, քալե՛նք դեպ 'ի նախանձոտ Ելլադան։

ԱՐՏԱՇԵՍ.— Կը հրամայեմ, քաջդ Վրույր, օ՜ն պատրաստվե՛ փութով, զարնենք Ելլադան։

ՎՐՈՒՅՐ.— Կը հնազանդիմ, վեհափառ տեր (կը մեկնի)։

Տեսիլ Բ

Նույնք, բացի Վրույրեն

ԱՐՏԱՇԵՍ.— Քաջդ դնարան, վաղը արշալույսը չը ծագած ճամբա պիտի ելնես դեպ 'ի Լյուդիա, իմացուր Կրյուսոսի, որ Ար-

տաշես անթիվ բանակով և նավերով դեպ 'ի իրեն երկիրը պիտի քալե, կամ անձնատուր ըլլա կամ՝ հաղթվի, կամ գահը ընտրե և կամ՝ մահը։ Իսկ եթե չի զիջանիր խոնարհիլ Արտաշիսի՝ թող սուրը ամուր բռնե ձեռքին մեջ, որ Հայոց՝ նետաձգությամբ արևը մթագնեցնող բանակը տեսած ատենը դողդոջելով չիյնա. եթե չի խնայեր ազգին՝ թող կուրծ դնե։

ԽՈՍՐՈՎ.— Կը հնազանդիմ, տեր, արդեն լյուդիա շատ փոքր է Արտաշեսի դեմ խրոխտալու համար։

ՔՐՄԱՊԵՏ.— Տեր արքա, ամեն բան կարգադրվեցավ, երթանք մեհյանը Աստվածոց փառաբանություն տալու և իրենց գութն ու օգնությունն հայցելու, Արտաշես չէ զորավորը, Աստվածներն են։ Երթանք մեհյանին բեմին վրա սուրերը սրելու, երթանք Աստվածոց մեծաց օրհնությունը վայելելու համար։

ԱՐՏԱՇԵՍ.— Այո՛, երթանք ամենքնիս ալ Աստվածոց երկրպագելու, որ մինչև հիմա Հայաստանը պաշտպանեցին և Հայկյան բանակը զորացուցին, անոնց զորեղ բազկացը տակ դեռ հավերժ պիտի մնան Հայք և Հայաստան (կը մեկնին)։

Տեսիլ Գ

Արշեղ, Որմզդուխտ (կերևա և մտիկ կընե հետո)

ԱՐՇԵՂ.— Արտաշես աշխարհակալելու կերթա, Տիգրան թագավոր կըլլա և պաշտոնատյարց շնորհքներ կը բաշխվին, իսկ ես այսչափ ատեն Արտաշեսի հետ կը պատերազմեմ, աղջիկը սիրեցի, իր ամուսնությունը մերժեց և զայն Վրացի Միհրդատին տվավ, վերջապես ամենուն երկրներ շնորհեց և ինձ ափ մը հող չի տվավ, որ խոնջյալ ճակատս հանգչեցնեմ. շատ անգամ կըսե. «Արշեղ, դու քաջ ես, և պետք է որ քովս գտնըվիս»։ Այո՛, քաջ եմ, բայց վատ պիտի ըլլամ, եթե վրեժ չառնեմ, հեռն ու ոխը սիրտս կը կրծեն, քինախնդիր որբ մ'եմ... Ա՜հ, երանի թե գեղջուկ մ'ըլլայի և հայր ու մայր ունենայի, արտ մը՝ պատերազմի դաշտի տեղ, ծառի մը շուք՝ մեծաշուք հաղթանակաց տեղ, խրճիթ մը՝ պալատի տեղ, փոքր ընտանիքի մը տեր ըլլայի՝ բյուրավոր զորաց հրամանատարության

տեղ. զիս այս դժոխքը արդյոք ո՞ւր անգութը նետեց, որուն բոցերն են փառք, երազ, նախանձ և վրեժ։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (մեկուսի) Ես... որ Արտաշեսը սպաննեմ։

ԱՐՇԵՂ.— Ա՜հ, ոչ թագավոր ըլլալ, այլ վրեժ առնել կուզեմ... (Որմզդուխտը տեսնելով) ուրվակա՜ն...

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (հառաջանալով) Վրեժդ պիտի առնես։

ԱՐՇԵՂ.— (մեկուսի) Կին մը... Մատնվեցա (բարձր) ո՞վ ես գնչուհի, որ թագավորին պալատը մտնելու կը համարձակիս։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (անոր ավելի մոտենալով) Մի՛ անարգեր զիս... Պիտի ճանչնաս...

ԱՐՇԵՂ.— Բայց ինչո՞ւ կը մոտենաս ինծի... Գնա՛, կորսվե՛։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Հանդեսեն առաջ եկած գաղտագողի՝ քեզ կսպասեի։

ԱՐՇԵՂ.— Ես քեզ չեմ ճանչնար... Պահա՜...

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (ընդմիջելով) Արշե՜ղ...

ԱՐՇԵՂ.— (մեկուսի ապշած) Անունս ալ գիտե... (բարձր) Բայց, ո՞վ ես դու, ի՞նչ կուզես ինձմե։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Ես քեզի վրեժխնդրության սուրը կը բերեմ։

ԱՐՇԵՂ.— Ի՞նչ վրեժխնդրության։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Վատ ես, եթե քիչ մը հառաջ ըրած ուխտդ մոռցար։

ԱՐՇԵՂ.— Բայց ես ի՞նչպես կրնամ արի Արտաշեսե մը վրեժ առնել, որուն չորս կողմը կը հսկեն հսկաներ, խուռն բանակ մը։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Եվ այն հսկաներեն մեկն ալ դու ես... Կին մը քեզի յուր թևը կուտա... Կը վստահի՞ս... Տուր ձեռքդ։

ԱՐՇԵՂ.— Առանց զքեզ ճանչնալու չեմ կրնար ձեռքս տալ, գուցե այդ ձեռքը, որուն հետ պիտի միավորի իմս ալ՝ անիրավ և կաշառաբեկ սրտի մը սուրն եղած ըլլա։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Եթե մորդ անբիծ և վրեժխնդիր ձեռքն եղած ըլլար։

ԱՐՇԵՂ.— Մայր չունիմ ես։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Եթե ունենայիր, զինքը շատ կը սիրեի՞ր։

ԱՐՇԵՂ.— Հոգիես ավելի, ես հիմա իրեն հետ գեղջկական կյանք մը կը վարեի... Ալ զզվեցա պատերազմիկ գերի ըլլալե. զա՛րկ, որ թագավորդ պարծի, մեռի՛ր, որ թագավորդ ապրի։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Եվ մորդ համար թագավորդ կը զոհեր։

ԱՐՇԵՂ.— Բայց ի՞նչ հարաբերություն ունիս դուն թագավորին հետ, դուն գեղջկուհվո մը կը նմանիս... Պալատը նոր կը տեսնես։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Այո պալատը նոր կը տեսնեմ, [illegible]

առջևս ծունր եկած պաղատալիս տեսեր եմ... Ի՞նչ, միթե դեռ գեղեցիկ չե՞մ։ Արտաշես երբեմն գերիս էր, մի՛ զարմանար, պիտի ճանչնաս զիս։

ԱՐՇԵՂ.— Չեմ կարծեր որ հիմար եղած ըլլաս։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Ես ալ զքեզ քիչ մը հառաջ հիմար կարծեցի, վրեժխնդիր մը հիմարի մը պես կը խորհի ու կը խոսի, բայց հիմարի մը պես ուժգին է հարվածը, զիս կը ծաղրես, բայց ես ալ զքեզ պիտի ծաղրեմ, երբ սուրը ձեռքիդ մեջ դողդոջես... Արտաշես իր աղջիկը քեզմե խլեց և ուրիշ աղջիկ մ'ալ աշխարհքեն... Երկուքնիս ալ վրեժխնդիր ենք... Տո՛ւր ձեռքդ։

ԱՐՇԵՂ.— Չեմ ճանչնար զքեզ։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Ուրեմն մտիկ ըրե... Արտաշես դեռ թագավոր չեղած օր մը որսի ելած ատենը գեղանի Պարսիկ աղջիկ մը կը տեսնե, որ իր տնակին առջև կաղոթեր. Արտաշես վայրկյան մը կը կենա և զայն զմայլած կը դիտե և աղջիկը տնակը փախած ատենը՝ մտրակելով ձին սրարշավ կանցնի կերթա. հետևյալ օրը միևնակ որսի ելած ատենը նույնպես աղջիկը տնակին առջև կը գտնե և ձեռքի մատանին անոր կը նետե. աղջիկն աղքատ՝ բայց շընդունիր. սակայն ամեն օր հաճախելով Արտաշես՝ աղջկան սիրտը կը գրավե. աղջիկը վերջապես ալ անկե չի փախչիր, երկու շունչեր իրարու կը մոտենան, երկու թևեր զիրար կը գրկեն... Աղջիկը հոգվույն չափ սեր կուտա արքաորդվույն, բավական ժամանակ կանցնի այսպես, աղջկան ծնողքը անտեղյակ կըլլան այս անցքին, Արտաշես կը խոստանա զայն իրեն թագուհի ընել, երբ թագավոր ըլլա, բայց քիչ քիչ կսկսի իր տեսությունը ընդհատել և վերջապես դադրեցնել։ Թագավոր կըլլա, տարի կանցնի՝ չերևար, շատ օրեր խեղճ կինը Արտաշեսի ճամփուն վրա կսպասե, բայց իզո՞ւր... դեռ կը սիրե... Թր մ'ալ Արտաշես որսի ելած ատենը, հեռուեն կին մը կուգա փութաքայլ, ուժգույն ու հերարձակ, և գրկի տղան Արտաշեսի երիվարին առջև դնելով. «Առ այս տղան.—կաղաղակե—Արշեղ է անունը, քու զավակդ է, ասոր համար ծնողքես հեռու կը թափառիմ, չունիմ հաց՝ որ իրեն տամ...» (Արշեղ զարմացական շարժումներ կրնե) Արտաշես եղեսը դարձուցած թիկնապահաց կը հրամայե, որ տղան առնեն և կսկսի սրընթաց հեռանալ, կինը հուսահատ կիյնա. վայրկյան մը ապառավալեն կարթե... Ալ այնուհետև կատե,

և վրեժխնդրության ասուպ մը կըլլա իր սիրտը։ Վերջապես կը մեռնին հայրն ու մայրը, կը գտնե առիթ, կը գոտեպնդի, և ահա այսօր կը հասնի պալատը, կը հարցնե Արշեղը, կը գտնե իր վահանը, կը ճանչնա իր զավակը... Այն կինը ես եմ, այն կինը քու մայրդ է...

ԱՐՇԵՂ.— Մա՛յրս (կը գրկվին), բայց Արտաշես... Իմ հա՛յրս...

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Բայց դու իրեն գերին... Տիգրա՞նն է թագավորը, դու չես թագավոր... տո՛ւր ձեռքդ...

ԱՐՇԵՂ.— Չեմ ուզեր թագավոր ըլլալ...

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Դահիճ եղիր... Մայր ունիս... Տո՛ւր ձեռքդ...

ԱՐՇԵՂ.— Ահավասիկ։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Երդվի՛ր...

ԱՐՇԵՂ.— Սրույս վրա։ (Վարագույրը կիջնե)։

<(Վերջ Ա արարվածին)>

ԱՐԱՐՎԱԾ Բ

ՊԱՏԱՏ

Տեսիլ Ա

ԿՐՅՈՒՍՈՍ.— (Մենակ՝ զարհուրած տեսարան կուգա, խռովյալ նայվածքով շուրջ կողմը կը զննե, հետո կը հանդարտի)։ Երա՜ղ... այս իմ պալատս է... ես՝ Կրյուսոսն ու ողջ եմ դեռ... Ահա կը տեսնեմ արևուն նորասփյուռ ճառագայթները, որ ինձ կյանք կավետեն... Ահա գահս, թագս, սուրս. ձեռք մը զանոնք չէ տապալեր, չէ փշրեր... Երազ էր այն... Սակայն որոտմունքը կայծակին հարվածը կը գուժե, այս երազը որոտմանքն էր, կայծակը պիտի ճայթի...։ Ո՞վ դիք, միթե կատա՞կ կընեք ինձ հետ, եթե ոչ՝ բարկության կրակ պիտի ժայթքեք գահիս... Եվ ո՞վ պիտի բազմի անոր մոխրին վրա... օտար մը՝ գոռոզն Արտաշես՝ իր փառաց հիշատակարաններուն մեջ անոր աճյունն ալ ամփոփելու և Կրյուսոսի արցունքն ու արյան կաթիլները թվելով հեշտանալու... Գթությո՞ւն, ո՞վ դիք, Կրյուսոս մը ծունր կուգա, կը հեծե... աչքերը արցունքով կը փալփլին իր փառաց աստղերուն հետ... Ուսեք կյանքս, բայց ոչ թագս, կուզեմ մեռնիլ՝ քան թե գահիս աստիճան մը խոնարհիլ...

Միթե ձեր բարկությունը մարելու համար Կրյուսոսի արյո՞ւնը կուզեք, արյուն մը որ փառք կը մռնչե... Իր կմախքը գերեզմանեն ետքը պիտի ողբա փառքն ու Լյուդիան... այո՛, Կրյուսոս չը պիտի մեռնի... Ինչո՞ւ կը լռեք, ստվերք նախնյաց։

Տեսիլ Բ

Նույն և Կամադրոս

ԿԱՄԱԴՐՈՍ.— Տեր արքա։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Դո՞ւ ես, Կամադրոս։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Այդ ի՞նչ այլայլյալ դեմք... Ծունկերդ կը դողդոջեն, տեր իմ։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Կյանքիս մեջ առաջին անգամ կը դողամ, Կամադրոս։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Կրյուսոսն ես դու, տեր արքա, գլուխդ՝ թագ, մեջքդ՝ սուր, Կամադրոս՝ քովդ, Լյուդիա՝ փառացդ ծափահար, ի՞նչ բան կը դողաս ուրեմն։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Աստվածներեն։

ԿԱՄԱԴՐՈՍ.— (զարմացած) Աստվածներե՞ն։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Այո՛, մեր Աստվածները գուցե ինծի դեմ բարկացեր են և կուզեն գահս տապալել և գուցե՝ բոլոր Լյուդիա համաջինջ կործանել։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Ո՞վ երկինք... Ո՞վ աղետից...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Սոսկալի է այս... Կրյուսոս մ'ալ խաղալիք կըլլա... Թո՛ղ ըլլա Աստվածներ... Ուրեմն Աստված մ'ըլլալ պետք է՝ անարգել և աներկյուղ խրոխտալու համար։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Տեր արքա, հանդարտե, գուցե Աստվածները փորձել կուզեն զքեզ։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Բայց խիստ սոսկալի է, երբ փառասեր սիրտ մը հուզե հզոր ձեռք մը... Կը կարծե՞ս որ փառասերը հանգիստ ըլլա երբեք... Միշտ տղու մը պես արթուն կերազե նա, կը հառաչե սիրատարփի մը պես, ամեն րոպե անդունդե անդունդ կը թավալի... աստղե աստղ կը թռչի... միշտ աչացն առջև տեսիլք... գահը կը շրջապատեն խումբ մը ճիվաղներ, կանայք ծիրանին կուզեն պատռել... վերջապես գինքը կը պատեն աղմուկ, երկյուղ, երազ, ճաճանչ... Փառքը՝ այն անհագ հրեշը, միշտ աշխարհի ճախճախուտ անդունդները արյունաներկ ծաղիկներով կը ծածկե... Փառասերին համար գեղեցիկ ասպարեզ մը... մեղկ ձեռքովը զայն հառաջ կը մղե. քալե՛, քալե՛, մինչև որ ոտքդ սայթաքի. բայց զորութենե՝ մրրկե մը բռնված ես՝ միշտ պիտի քալես... Մինչդեռ երեկ գիշեր Արևելք կերազեի, ահա այս գիշեր Արևելքեն գիշերվան մեջ սպառնացյալ նետի մը դռնչյունը կը լսվի։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Բայց ի՞նչ պատահեցավ, տեր արքա, չեմ հասկնար, ո՞վ կը գրգռե Աստվածոց շանթերը։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Չեմ գիտեր... գուցե Կրյուսոսի փառքը... Բայց կզգամ, որ ինձ հետ կատակ կընեն։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Բայց կաղաչեմ, տեր արքա, հանդարտե՛ ու պատմե՛ ինչ որ պատահեցավ, գիտես որ Կամադրոս իր կյանքը կուտա իր թագավորին և հայրենյաց մեկ կայծին համար... Եվ եթե Աստվածները բարկացեր են, կերթամ սուրս և վիպս կը նետեմ անոնց սեղանին վրա և կըսեմ՝ «Թող ապրին Կրյուսոսն ու Լյուդիան»։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Կեցի՛ր, դու քաջ ես, Կամադրոս, և ես որ վատ չեմ՝ ինչո՞ւ պիտի դողամ... Ահա սիրտս չը զարներ, չեմ դողար, երեկվան գոռոզ Կրյուսոսն եմ... ահա պալատս, գահս և ահա Լյուդիա... ահա սուրս և ահա Աստվածները... (սուրը կը քաշե)։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Ի՞նչ կընես, տեր արքա... Սուրդ կը շողա... Շանթեր...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ա՜հ, մեղա՜... Գթություն... (ծունր կիյնա, հետո ոտքի կելնե բարկացած), բայց ի՞նչ ըրի... Ծունր եկա...

ԿԱՄԱԴՐՈՍ.— (անոր առջև ծունր գալով) Ներե՛, քու գերիդ եմ, տեր արքա, հանդարտե՛ կաղաչեմ... Պատմե ինչ որ պատահեցավ։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Մտիկ ըրե, այն Հայկազն Արտաշեսը, որուն գոռոզ հռչակը արդեն լսեցինք... Սոսկալի երազ մը տեսա այս գիշեր...

ԿԱՄԱԴՐՈՍ.— Սակա՜յն...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Մտիկ ըրե... Գիշեր էր, լուսինը Ալյուս գետին վճիտ ալյացը մեջ կը շողար, ես այն ատեն գետեզրին վրա կը շրջագայեի, սիրտս ուրախությամբ զեղված մտիկ կընեի փառաց ներդաշնակավոր դրվատիքները, որոնք սիրտս կօրորեին...

Անծանոթ կամ դիցուհյաց ձայներ էին... որոնց մեջեն երբեմն «Կրյուսոս» անունը մրմնջող հաղթական եղանակ մը կը լսեի... Սիրտս այն ձայներուն հետ կը թրթռար... հանկարծ դափնեզարդ քնար մը տեսա քովս, ուզեցի փառքս ինքնին ալ գրվատել, և աչսպիսի բուռն եռանդով մը կը հնչեցնեի, որ լարերը խորտակեցին, լռեցին այն անծանոթ մրմունջներն ալ և խոր լռություն մը տիրեց, ակամա դողացի՝... Դառն ծիծաղ մը այս լռությունը խանգարեց և զիս սարսռեցուց. դարձա այն կողմը, տեսա որ հաղթահատակ ռազմը գետին դիմացի եզերքը արձանացած՝ հեգնական ժպիտով մը զիս կը դիտեր... Վրաս ծիծաղողն այն էր... Ձայրությեա աչքերես բոց կը ցայտեին... «Ճանչցա՞ր զիս,— ըսավ այն մարդը,— ես Արտաշեսն եմ»... Այս անունը լսելուս՝ սուրս քաշեցի... նա աղ ակընթարթի մեջ սուրը քաշեց, գետին ասդիի կողմը ցատկեց... Սուրերնիս շառաչեցին... Բավական ժամանակ տևեց... Ուժս սպառեցավ... Հարվածն ընդուներ էի... Հոգեսպառ գետը ինկա... Նա հաղթական նայվածք մը ձգեց վրաս... «Լյուդիա, դու իմս ես»,— ըսավ և սրացավ... Հետո աղեկոտուր հեծեծանքներ լսեցի... գետին մեջեն հյուծյալ աչքերով վերջը Սողոնը տեսա, որ զիս կողբար... Աչքերս գոցեցի, հալիտենական կոհակ մը վրաս թավալեցավ... և զգացի, որ գետին հոսանքը զիս քշեց տարավ...

ԿԱՄԱԴՐՈՍ.— Բայց մի՛ հուսահատիր, տեր արքա... Ջոհ մատուցվին Աստվածոց։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ո՜հ, բոլորովին մոռքս կաշկանդվեր է... Ջիս ուշաբերեցիր, Կամադրոս... Այո՛ ողջակե՛զ... Փոխանակ Լյուդիա զոհ ըլլալու, Աստվածները գթած են... Ո՞վ կա հոդ... Պալատակա՛նք... (պալատական մը ներս կը մտնե) գնա՛ շուտ մեհյանը և ըսե՛ քրմապետին, որ հիմա անթիվ ողջակեզ մատուցանե Աստվածոց իրենց հաշտությունը հայցելու համար և թող քարոզե համայն Լյուդացվոց, որ ամենքն ողջակեզ մատուցանեն Աստվածոց բարկության շանթերը արգելելու (պալատականը կը մեկնի)։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Բայց թող չես տար, տեր արքա, որ ես զոհ ըլլամ Կրյուսոսի համար, եթե իմ արյամբս Լյուդիո ազատությունը գնելուս հաճին դիր։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Դու զիս չը պիտի թաղուս... Լսեցիր քիչ մը առաջ այն սոսկալի երաղը։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Բայց ներե՛, տեր արքա, եթե երբեք ես Կրյուսոս մ'ըլլալու վեհ ճակատագիրն ունենայի՝ չէի վախնար Աբատաշեսի մը հոչակեն... Հարցուր մեկ մը թագավորներուն, թե առանց սարսուռի կրնա՞ն քու անունդ արտասանել։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Հանդուգն խոսեցար, Կամադրոս... Ես միայն Աստվածներեն դողացի։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Աստվածները պիտի հաշտվին, տեր արքա։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ուրեմն Կրյուսոս ալ չը դողաց, այլ երազեց... և եթե վայրկյան մը դողաց՝ անցելույն հիշատակարանաց և ապագա փառաց վրա ուրախության սարսուռ մ'էր այն... Հիմա դարձյալ Կրյուսոսն եմ... Փառք կամ բոթ... երկուքեն ալ չեմ դողար։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Մեհյանը երթանք, տեր արքա։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ո՜չ, հա կաղոթենք... Վայրկյան մը առաջ Աստվածոց դեմ գայրացա... Պիտի զղջամ... Ազոթեցե՛ք ինձ հետ, սուվե՛րք թագավորաց...

ԿԱՄԱԴՐՈՍ.— Ահա զոհերուն ճենճերը երկինք կը բարձրանա, տեր արքա... Ահա կը լսվի քուրմերուն մեղեդին... Անշուշտ շանթերու տեղ արփիք պիտի ցոլան։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ուրեմն ծունկ գանք... այսօր է որ ծնրադրել սովորեցա...

ԿԱՄԱԴՐՈՍ.— Եվ հաշտության ավետյաց ձայնին սպասենք... (ծունր կուգան, հեռուեն աղմուկով խառն աղոթքի ձայներ կը լսվին, որ բավական կը տևեն)։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ձայները լռեցին... Ճակատագիր մը կորոշվի... վճիռ մը կորոտա անշուշտ... Ա՜հ, ակամա սիրտս կը տրոփե... Ա՜հ, ձայն մը... Այս լռությունը սոսկալի է...

ԿԱՄԱԴՐՈՍ.— Տեր արքա...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ձա՜յն մը...

ՁԱՅՆ ՄԸ.— Հաշտությո՜ւն... Հաշտությո՜ւն...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ահ, գեղեցիկ բարբառ։

Տեսիլ Գ

Նույնք և Քրմապետ

ՔՐՄԱՊԵՏ.— Արքա, Աստվածներն հաշտվեցան։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Օրհնյալ ըլլան դիք։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Օրհնյալ ըլլաս և դու, պատգամդ Աստվածոց... Այսօր վերածնեցավ Կրյուսոս, և առաջինեն ավելի ահեղ, երազի մեջ երազ մը տեսավ և այսուհետև կյանքեն փառք պիտի քամե. կյանքին մեջ վայրկյան մը դողաց և այն վայրկյանին փոխարեն աշխարհ պիտի դողացնե, քանի որ իրեն հետ հաշտ են Աստվածները։

ՔՐՄԱՊԵՏ.— Ուրեմն, արքա, պե՞տք է որ միշտ արդարությամբ և խոհեմությամբ իշխես Լյուդիո, որպեսզի արդարադատ դիք երբեմն զայրանալով չը խռովեն թագավորությունդ։ Գիտցիր որ այն ատեն Աստվածներեն զատ ոչ ոք կրնա գահդ սարսել, երբ անոնց զորեղ բազուկները տարածվելով շուք տան Լյուդական գահին և իրենց գոհ ժպիտներուն ճաճանչովը ականակապ թագդ ցոլացնեն. լողան Լյուդացիք փառաց հեղեղի մը մեջ, հիանա համայն տիեզերք Լյուդական դրախտին վրա... Մե՞ծ են Աստվածները և իրենց սիրելի ժողովրդյան փառաց՝ նախանձախնդիր և Կրյուսոս ալ՝ Աստվածոց ճետը։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Գեղեցիկ խոսեցար, Պյութոս, Կրյուսոս Աստվածոց արժանի ճետը պիտի ըլլա, անոնց փառացը պիտի զոհե սուր, կյանք և տիեզերք։

Տեսիլ Դ

Նույնք և Խոսրով

ԽՈՍՐՈՎ.— (մտնելով) Ողջույն ձեզ, արքայդ և ավագանիք Լյուդացվոց։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ո՞վ ես դու։

ԽՈՍՐՈՎ.— Արևելյան հրեշտակ մը։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Ո՛չ, Արևելյան սատանա մը, որ հանդգնաբար Կրյուսոսի պալատը կը մտնե առանց երկրպագելու անոր վեհափառությանը։

ԽՈՍՐՈՎ.— (առ Կրյուսոս) Արքա...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Կը տեսնեմ որ շատ հանդուգն ես։

ԽՈՍՐՈՎ.— Ես ալ կըսեմ, թե աշխարհակալն Արտաշես չը հանդուրժեր երբեք իր դեսպանը օտար թագավորի մ՚առջև խոնարհած տեսնել։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Արտաշե՞ս...

ԿՐՅՈՒՍՈՍ.— (մեկուսի) Նույն ինքն է...

ՔՐՄԱՊԵՏ.— Կը դթամ քեզ, ո՞վ դեսպան, որ Արևելքեն կը խլբրտիս հոս անխոհեմությամբ Կրյուսոսի դեմ գուցե պատերազմ հռչակելու, որուն հետ դեռ հիմա Աստվածները հաշտվեցան։

ԽՈՍՐՈՎ.— Լավ կընես, քրմապետ, եթե երթաս Աստվածոցդ օգնությունը հայցելու, որ սին հուսով մը գոտեպնդեն Կրյուսոս և իր բանակը։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Բա՛վ է... բա՛վ խրոխտացիր, հանդուգն, և հիմա ալ մեր Աստվածները կը նախատես... Հիմա հուր կը պոռթկա գլխուդ։

ՔՐՄԱՊԵՏ.— Երկայնամիտ են դիք, տեր արքա։

ԿԱՄԱԴՐՈՍ.— (մեկուսի) Կրյուսոսի դողը սկսավ... Երազը իրականության կը կերպարանափոխի։

ԽՈՍՐՈՎ.— Ուրեմն վերջ տանք այս անօգուտ բարբաջանաց, և լսեցեք աշխարհակալ Արտաշեսի հզոր պատգամը։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Կը հրամայեմ քեզ, ո՞վ դեսպան, որ Այրարատյան բարձրերեն չորոտաս. դիմացդ որ կտեսնես՝ Կրյուսոսն է... գուցե համբերությունը սպառելով կրակ թափե գլխուդ։

ԽՈՍՐՈՎ.— Եվ դու, արքա, օվկիանոսի կոհակաց տակեն մի՛ մոնչեր, դուրս հանե՛ գլուխդ և տես մեկ մը քու հակառակորդդ... Օ՞ն, վերջացնենք, պետք է որ հիմա զենք և թագ, գանձ և երկիր թափին Արտաշեսի լիազոր դեսպանին առջև... Ո՞վ Կրյուսոս, եթե գոնե անշուք կյանքը կը սիրես... խոնարհե... իսկ եթե կը համառիս՝ մեռի՛ք, մեռի՛ք... ամենքնիդ ալ... Թե որ կը խնայես ժողովրդյանդ՝ անձնատուր և հպատակ ըրե զանոնք մեծին Արտաշեսի և անոր փառացը ծափահար։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Չեմ կրնար հանդուրժել... Երկինք և երկիր...

ԿԱՄԱԴՐՈՍ.— Ո՞վ կատաղություն...

ՔՐՄԱՊԵՏ.— Արդա՞ր դիք...

ԽՈՍՐՈՎ.— Օ՞ն, պատասխան մը... Գահ կամ մահ...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Համբերություն կպատի... Ժամանակ ունինք խորհելու համար...

ԽՈՍՐՈՎ.— Խորհեցե՛ք... Թագ կամ դագաղ։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Ի՞նչ ծայրահեղ հանդգնություն։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Բայց հանուն թագավորիդ, հանուն Աստվածոցդ՝ մեկնե՛, որ առանձին խորհինք։

ԽՈՍՐՈՎ.— Լա՛վ, խորհեցեք։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Գալատականք, սենյակ մը տարեք զինքը և պատվեցեք։

ԽՈՍՐՈՎ.— (Ելքային) Կրյուսոս, դաժան կըսեմ, ընտրե՛ անշուք կյանքը։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ալ բավակա՛ն է (բարկության նշան մը կընե.— դեսպանը կը մեկնի)։

Տեսիլ Ե

Նույնք, բացի Խոսրովեն

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ա՜խ, եթե Աստվածներեն պատկառանք չզգայի և իրմեն ետքը եկող Արտաշեսը չը մտածեի, զինքը հիմա ջախջախած էի...

ԿԱՄԱԴՐՈՍ.— Բայց քաջալերվե՛ մեր աքքա, մինչև վա՞տ են Լյուդացիք։

ՔՐՄԱՊԵՏ.— Եվ մինչև արդարացատ չե՞ն դիր... Անշուշտ պիտի ջախջախեն մեր ոսոխին գլուխը, որ հանդգնաբար գիրենք և զիս և համայն Լյուդիան նախատեց։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Սուրի դեմ սուր, տեր աքքա... Մեկը կը փշրի... մյուսը կը հարվածե... Կը հաղթանակե պայծառ ճակատագիր մը... Մինչև հիմա ուսկի՞ց դողացիր կամ հաղթվեցար, տեր իմ... Փրփրագեզ կոհակ մ'էիր անհնարն հարվածներու դեմ, որ առանց վիրավորվելու դարձյալ կը մոնչե... Ո՞վ կրնա օվկիանոսը կլլել... Տեր աքքա, գլուխդ վեր առ և տես փառաշարդ ճակատագիրդ...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ես անշուք կյա՞նքն ընտրեմ... Երբե՞ք... Պիտի մաքառիմ... Արտաշեսի դեմ Կրյուսո՛ս, փառքի դեմ հաղթանակ,

սուրի դեմ սակր, զորությանց դեմ Աստվածք... Արտաշես չի՞ պիտի գողա։

ՔՐՄԱՊԵՏ.— Ցնծա՛, արքա... Հիմա վայրկյան մը աչքերս գոցվեցան և Աստվածները պատգամ ազդեցին սրտիս... Այո՛, հաղթական ձայն մը մրմնջեց. «Կրիւսոս, անցեալ ընդ Ալիւս գետ՝ քակեսցէ զիշխանութիւնս»... քաջալերություն, արքա, Աստվածոց ճետ մը կարելի՞ է որ պարտությամբ ամոթահարի։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Օրհնյալ ըլլան դիք, որ միշտ կը պաշտպանեն Լյուդիան... Պիտի հաղթենք... դեռ Ալյուս գետեն անդին ալ... Արտաշեսը կա... Պիտի խորտակի անոր իշխանությունն ալ... Վայրկյան մը առաջ ուրացա զիս և փառահեղ անցյալս... ապագային մեջ Արտաշեսի վերջին հառաչանքը կը լսեմ... Այրարատյան առյուծը կը տապալի։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Հիմա կը ճանչնամ Մեծն Կրյուսոսը...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Զարակա՛նք, թող գա, պետությունը... (Խոսրով կերեա)։

Տեսիլ Զ

Նույնք և Խոսրով

ԽՈՍՐՈՎ.— Ի՞նչ բրիր, տեր աքքա, ես խոնարհ ճանկատ մը տեսնել կուզեի և խրոխտ ու խոժոռ դեմք մը կը տեսնեմ... Ի՞նչ վճռեցիր, մեռնի՞լ, եթե՞ խոնարհիլ...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Հաղթել...

ԽՈՍՐՈՎ.— Կը գթամ, Կրյուսոս, եթե սուրդ փշրի... Արտաշես չը գթար։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Է՜հ, պատերազմը կսկսի... զգուշացի՛ր։

ԽՈՍՐՈՎ.— Խնայե՛ ժողովրդյանդ, արքա։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Ո՛չ, տնոնք կը տրքեն ոսոխին դեմ մեռնիլ։

ՔՐՄԱՊԵՏ.— Պաշտպան են Աստվածներդ։

ԽՈՍՐՈՎ.— Ուրեմն մեռնիլ և Լյուդիան կորսնցանել կուզեք։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Այո՛, հաղթել և Լյուդիան հավերժացնել։

ԽՈՍՐՈՎ.— Դու չես ճանչնար Հայն ու Արտաշեսը։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ալ բավական է, սոսկ պատանեկան մեջ կը խայտա։

ԽՈՍՐՈՎ.— Զղջա՛, Կրյուսոս, գուցե Արտաշես խիստ մոտ է... Գուցե Առյուծը խիստ մոտեն կը մոնչե։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Պատերազմը կսկսինք։
ԽՈՍՐՈՎ.— Ուրեմն՝ մեռի՛ք... (կը մեկնի) (վարագույրը կիջնե)։

<(Վերջ Բ արարվածին)>

ԱՐԱՐՎԱԾ Գ

ԲԱՆԱԿԵՏԵՂ

Տեսիլ Ա

Արտաշես (մինակ)

Վարագույրը բացվելուն Արտաշես կը մրափե վրանին մեջ.— Զորքերը ցիրուցան տարածված կը քնանան.— Արտաշես արթննալով դուրս կելնե։

Դեռ առավոտ չէ ծագեր... Ահա լուսինը և աստղերը որ կը փալփլին... Ես չեմ կրնար ննջել, այնպիսի բոց մը կը վառի կուրծքիս տակ, որուն կայծերը այս աստղերեն ավելի բյուրավոր են, կայծեր՝ որոնց յուրաքանչյուրը մեկ մեկ գահ յաճյուն պիտի փոխեն... Ո՞վ գիշեր հեշտ և տխուր, ամպ և երազ. փախի՛ր... Դու որ այս նսեմաստվեր անտառին խորը թագս, սուրս և սաղավարտս չես ցոլացներ, չես վառեր ղիս ճաճանչներով, չունիս հաղթության ձայներ, զինուց շառաչներ, ծափեր և թագեր. կը ծածկես սև թևերուդ տակ Արտաշեսն ու յուր փառքը... Գերեզմանական ստվեր մը ունի... Այս հովը, ալին ու տերևն ալ թող մահվան մրմունջ մը ունենան... Բայց ես չեմ ուզեր մեռնիլ ցուրտ քարի մը վրա, այլ փառաց հեղեղի մը մեջ խեղդվիլ. պիտի իյնամ շնչասպառ գահերու աճյունին վրա միայն և վերջին շունչս մառախուղ մը, փոթորիկ մը, սուգ մը, սարսուռ մը պիտի տարածե համայն աշխարհ... Ես եմ Արտաշեսը, իշխանությանց ժանտախտը, բռնավորաց սարսափը, դյուցազանց նախանձը, Հայաստանի փառքը... Դեռ չեմ մեռներ, ճերմակ մորուքի մը տակ կուզեմ փառքս երիտասարդ տեսնել (Որմզդուխտ կերևա, որ կամաց կամաց Արտաշեսի կը մոտենա)։

Տեսիլ Բ

Նույն և Որմզդուխտ

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (մեկուսի) Ինքն է...
ԱՐՏԱՇԵՍ.— Գեղեցիկ է փառքը, միայնության մեջ երազ, բայց աղմուկի մեջ՝ ճանանչ։
ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Կանցնի փառքը և կմախք մը կը մնա... կը սխալիս... ո՞վ թագավոր։
ԱՐՏԱՇԵՍ.— Ո՞վ ես դու։
ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Նախ կին մը... երիտասարդություն, սեր, ստվեր, հիշատակ և...
ԱՐՏԱՇԵՍ.— Չեմ հասկնար։
ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Մի՛ խռովիր, մահվան հրեշտակ մը չեմ և եթե ըլլայի ալ՝ կը գթայի քու վրադ...
ԱՐՏԱՇԵՍ.— Ուրեմն ի՞նչ կուզես ինձմե...
ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Վասնզի կուզեմ քեզ փառաց երազներու մեջ տեսնել միշտ։
ԱՐՏԱՇԵՍ.— Դու որ այդպես հանդուգն կը խոսիս՝ կամ խելագար մ'ես և կամ չես գիտեր որո՛ւ դեմ ըլլալդ։
ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Անշուշտ... վասնզի դուն ալ զիս չես ճանչնար։
ԱՐՏԱՇԵՍ.— Ես ոչ քեզի պես կնոջ մը հետ պատերազմ ըրած և ոչ ալ երբեք ճանչցած ունիմ... Ես Արտաշեսն եմ...
ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Երիտասարդության վրա խոսինք, Արտաշես, (Արտաշես կը սարսռի) կը տեսնես, որ առջի պես գեղեցիկ չեմ... Երբ բնության գեղեցիկ ավանդ մը խորշոմներու և ալեխառն մազերու տակ կը նվազի... սերը դեպ յանմեղություն և փառքը դեպ յարյունահեղություն կը քալե... Արյան մեջ ձայն մը կա, դու որ սիրույդ մեջ սխալեցար՝ փառքիդ մեջ պիտի տուժես... Ճանչցա՞ր զիս հիմա...
ԱՐՏԱՇԵՍ.— (մեկուսի) Կը ճանչնամ... (բարձրեն) երբե՛ք...
ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Ա՜... Չե՞ս ճանչնար։
ԱՐՏԱՇԵՍ.— Բայց պիտի ըսե՞ս վերջապես, ի՞նչ կուզես ինձմե։
ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Թագուհի ըլլալ կուզեմ։
ԱՐՏԱՇԵՍ.— Ա՜հ, բոլորովին հաստատեցիր, թե խենթ ես։
ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Դարձյա՛լ խենթ։
ԱՐՏԱՇԵՍ.— Միայն շղթա մը չեն կապեր պարանոցդ։
ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Կը տեսնեմ, որ թագը շղթայով փոխանակել կուզես։

ԱՐՏԱՇԵՍ.— Միշտ թա՜գ... Թագը դատարկ ձեռքով չստացվիր, թագը հզոր սուրի ծայրն է, հիմար կին։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Երբեմն ալ համբույրի մը կամ լեզվի մը ծայրն էր... կը տեսնեմ, որ սիրտդ լայն է Արտաշես, պատիր խոստումով մը անբիծ լանջք մը պղծեցիր... Ա՜հ, ես թագե մը ավելի գեղեցիկ էի։

ԱՐՏԱՇԵՍ.— Կը զառանցես, կին դու։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Անունս տուր։

ԱՐՏԱՇԵՍ.— Բայց։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Որմզդուխտն եմ։

ԱՐՏԱՇԵՍ.— Ատանկ անուն մը չեմ հիշեր։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Սիրտդ ժայռ է, սառ է, Արտաշես, խնչպես կը կոխկռտես արմատն թռփած ծաղիկ մը։

ԱՐՏԱՇԵՍ.— Բայց բավակա՛ն է, ալ գնա՛, գիշեր ատեն անհանգիստ մի՛ ըներ զիս։ Ուրվականի մը պես պառկ ես։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Սակայն միտքդ քեր երիտասարդության որսերդ... կը հիշե՞ս գյուղը, իմ տնակս, մեր հովանիե ու ծաղիկե կանաչ անկողինը, այն արցունքները, զոր լանջքիս վրա կը թափեիր և ես կը համբեի, բաժանումդ, որ զիս սառեցուց, հանդիպումնիս վերջին անգամ, որ Արշեզը քեզի տվի, կը հիշե՞ս։

ԱՐՏԱՇԵՍ.— Բայց երբեք չեմ ճանչնար քեզ և բան մ՚ալ չեմ հիշեր ըսի... Պիտի մեկնի՞ս։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Հապա՜ բա ես, Արտաշես...

ԱՐՏԱՇԵՍ.— Եվ դու ալ համբերություն կսպառես։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Թագավո՛ր, դողա՛ Պարսկաստվո մի վրեժխնդրություններն... Կամ մեռցո՛ր զիս և կամ՝ մեռի՛ր։

ԱՐՏԱՇԵՍ.— Եթե կնոջմե մը դողայի՝ Արտաշես չէի ըլլար, վատ կըլլայի, թագավոր չէի ըլլար՝ գահիճ կըլլայի... Բայց ես իմ դահճուհիվույս կըսեմ՝ «միշտ ազատ եմ»...

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Մի՛ վստահիր... Արևը հորիզոն մը և կյանքը գերեզման մը, աստղը անկում մը և բախտը անիվ մը ունի... Ծաղկին ծոցը արցունք, տերևին մեջ հառաչ, կոհակին մեջ մահ, խոտի մը մեջ թույն և ափ մը հողին մեջ գանգ մը կամ թագ մը կա... Մի՛ վստահիր, կըսեմ, փառքիդ և զորությանդ վրա, եթե առանձին գտնես ինքզինքդ՝ քու գոռոզ հրամանդ ու հռչակդ վսպասի վիհերու և լեռներու, անտառներու և դաշտերու անհունության մեջ և ձայներու արձագանքն իսկ զքեզ

կը ծաղրե... Ես ալ գեղեցիկ էի և կը խրոխտայի, գեղեցկությունս անցավ, կուզեմ տեսնել քո փառացդ վերջին ցոլմունքն ալ... Արտաշես, ծերությենես ավելի կատեմ զքեզ. շատ անգամ գեղեցիկ ծաղիկները թույն ունին... Սրտերը խունկի կը նմանին, որ չայրած՝ անուշ և հեշտ հոտ չեն բուրեր, հեռ, ոխ, վրեժ, ատոնք են որ սիրաս կը վառեն, ատոնք սիրո վերջին բոցերն են՝ կը մարեն, բայց ամյուն մը կը թողուն... Կնոջ արյունը կոհակ կոհակ կեռա, կնոջ դաշույնը կաթիլ կաթիլ արյուն կը քամե... Օձի մը պես կը սողա... Առյուծը կը գողա։

ԱՐՏԱՇԵՍ.— (սուրը նետելով) Առ Արտաշեսի սուրը, որ մեկ հարվածի մը ունի, և տեսնեմ Պարսիկ և վրեժխնդիր կնոջ մը հարվածը... Գիտես որ արծիվը օձեն վախ չունի, թեև թույնը կը գերազանցե։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Ետ առ սուրդ, ես դաշույն ունիմ, կինը մթության մեջ կսպաննե, որպեսզի օրհասական ոսոխին միայն իր աչերուն փաղփյունը ցուցնե... կը մարի, կիյնա... բայց հարվածը հաջողված է։

ԱՐՏԱՇԵՍ.— Ահա գիշեր, ահա խավար։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Քու աչերդ լույս ունին։

ԱՐՏԱՇԵՍ.— Ա՜հ, հանդարտ սիրտ կուզե՞ս հարվածել։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Եթենը չը հեշտանար թշնամվույն վերջին հեծեծանքներովը... Մի՛այն անոր մարմինը սառած, աչքերը գոց, սիրտը դադրած և վրեժը մարած տեսնել կուզե... Կնոջ մը սերը խիստ քաղցր է և ոխը՝ խիստ դառն։

ԱՐՏԱՇԵՍ.— Երբեմն զիս սպաննե՞լ, թե երազել կուզես։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Զքեզ սպաննե՞մ... խոցե՞մ այն սիրտը, որ երբեմն իմ լանջքիս վրա կը բաբախեր, ո՜չ, սիրո հիշատակը արցունք մը ունի, արցունք մը կինը կուժաթափե, կը հաղթե... մի՛ խռովիր Արտաշես, ահա կը բաժնվիմ քեզմե, փառք կսպասե քեզի, իսկ մահ՝ ինծի։

ԱՐՏԱՇԵՍ.— Ճիշտ հիմար մ՚է (բարձր) այն, որ չը վախնար՝ կը վախցնե։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Թագավորին և գեղջկուհվույն մեջ սուր մը, թագ մը կամ վիհ մը կա, տեր արքա, քիչ մը հառաջ վրեժխնդիր մ՚էի, հիմա կին մ՚եմ... Թագուհի չեմ, դարձյալ գեղջկուհի մ՚եմ... մնաս բարյա՜վ... (մեկնուսի) կը տեսնվինք... գուցե քիչ մը ետքը... Արշեզ կամ ես... Ե՜ս... (կը մեկնի)։

Տեսիլ Գ

Արտաշես (մինակ)

Վայրկյան մը դողացի, կնոջ մը աչերուն փաղփյունը սոսկալի է... Որմզդուխտն է, կը սիրեի զինքը... Վեհանձնություն կը վիրավորի, երբ կին մը զարնեմ, տկար ու դողտր արարած մը... Եվ ինչո՞ւ պիտի կասկածիմ. աղեկ գիտեմ, որ խենթացած է, սիրո հիմար մը. կը խոսի, այլ չը խորհիր... Բայց դեռ առավոտ չըլլար, և ես չեմ կրնար ննջել... Խոսրով դեռ չերևցավ... Գուցե հիմա բանակը եկած ըլլա... (կը մեկնի):

Տեսիլ Դ

Արշեզ (մինակ)

Ի՜նչ թշվառական մ'եմ ես, հայր չեղած դահիճ պիտի ըլլամ... Բայց մայր ունիմ, պետք է որ երդումս գործադրեմ և երթամ մորս հետ գեղջկական կյանք մը վարելու։ Ի՜նչ սուղ է այդ կյանքը... Երեք օր պայմանաժամ տվավ. առտու ըլլալուն միջոցը պիտի լրանա... Վատ մը պիտի ըլլամ... Ահա վրանը, գլուխ մը որ մեկ հարվածիս կսպասե... Նա իմ հայրս չէ, այլ զույգ մը տատրակի որսորդ... Թեպետև քույրս էր, սակայն զինքը կը սիրեի... Արտաշամա՜ն... մայրս չը տեսա, որ պայմանաժամը հապաղեի, բայց ստիպված եմ օր մը Արտաշեսի տժգույն գլուխը իրեն ներկայացնելու... Թող այս գիշեր ըլլա... (դեպի վրանը կը մոտենա և մտիկ կընե) *ձայն չկա, կը քնանա անշուշտ... Կը դողամ...* (ներս կը մտնա, վայրկյան մը լուռ կը դիտե) *ա՜հ, հոս չէ, հիմա Արևը կը ծագի...* (նվաղյալ բազմոցի մը վրա կիյնա) *Արտաշամա՜... անգո՜ւթ մայր...* (գլուխը ձեռքերովը կը ծածկե և կընկողմանի. վայրկյան մը տեսարանը պարապ):

Տեսիլ Ե

Նույն և Որմզդուխտ

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Բոցեղեն մրրիկ մը զիս հոս կը նետե միշտ... Արտաշեսի արյունը դաշույնս կը քաշե, մե՜ղք է Արշեզ. թող մարդասպան չըլլա, ո՞ւր է հիմա արդյոք... կը խոկա... Միթե վրա՞ն է թագավորը, կը նիրհե՞... Զիս ծաղրեց, խենթ կարծեց, անցյալը ուրացավ, նախատեց, վրե՜ժ, արյո՜ւն... թող թավալի հույսերու պատրանքին կամ պատանքին մեջ... Փառք և սեր իրարու ոսոխ հանդիսացան... Վայրկյան մը գոց աչքերը ինձ համար բավական են... (վրանին կը մոտենա և մտիկ կընե) *քնո շնչառություն մը կը լսեմ... վերջինը պիտի ըլլա...* (զգուշությամբ ներս կը սպրդի) *ահա կը քնանա... Ինքն է, Արտաշես... Հարված մը...* (կը զարնե):

ԱՐՇԵԶ.— Ա՜հ... (կսթափի և խոժոռ մայրը կը դիտե) *Անիծյալ* (կը մեռնի):

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Արշե՜զ... (սարսափած կարձանանա) *Զավա՜կս...* (կը գրկե) *Մեռա՜վ զիս անիծելով... վրեժխնդրությանս համար աղոթք մը չը մրմնջեց... Սոսկալի է այս... Ահա վրեժխնդրության բոց մ'ալ... կը պապակիմ, ծարավի եմ... կաթիլ մը արյուն ոսոխիս սրտեն... Ոխերիմ բախտ, զավակիս արյունը չուզեցի...* (ճակատը սրբելով) *Ըլլա որ ճակտիս ցայտե... ջնջեմ որդեսպան անունը... զինքը վրեժխնդրության համար սնուցի, եթե ոչ կը ջնջեի սիրադրուժի մը հիշատակը... Բայց դեռ ես կյանք և վրեժ կը շնչեմ... դեռ կրնամ սպաննել Արտաշեսը։*

ԱՐՏԱՇԵՍ.— (դրսեն) *Ուրեմն չեն խոնարհիր...*

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Ինքն է... Բա՜խտ և խավա՜ր, ինձ կրթնեցեք... (կը մեկնի):

Տեսիլ Զ

Արտաշես, Խոսրով

ԽՈՍՐՈՎ.— Երբե՜ք, տեր արքա, չը կրցա վերջապես քու փառացդ ճաճանչներովը Կրյուսոսի աչքը շլացնել։

ԱՐՏԱՇԵՍ.— Լա՛վ, լա՛վ, արյուն կուզեն։

ԽՈՍՐՈՎ.— Սուրին շողյունեն չեն զգուշանար, տեր արքա, պետք է որ հարվածը զգան իրենց կուրծքերը... Ժայռի մը վրայեն խաղաղ օվկիանոսը կը դիտեն անտարբեր, պետք է որ հուպին կոհակները և այն ապաստանարանը ողողեն, մա՜հ անխոհեմներուն...

ԱՐՏԱՇԵՍ.— Ահա արշալույսը կը ծագի, կը տժգունին աստղերը՝ Կրյուսոսի պարտությունը նախազգալով, և լուսինը շառագունած արևմուտքը կը խոնարհի գույժ տալու... Ահա սոխակներն առաջուց Հայկյան հաղթությունը կը նվագեն... Հիմա Արևը կը ծագի... պիտի քալենք... (փողը կը հնչեցնե. գորմերը ֆեերեն ցատկելով կը պատրաստվին և տեսարանին վրա կուգան կը շարվին):

Տեսիլ Է

Նույնք, Վրույր, Զորականք և այլն

ՎՐՈՒՅՐ.— Տեր արքա...

ԱՐՏԱՇԵՍ.— Կրյուսոս աքյան մեջ կը փնտռե հաղթությունը, Վրույր...

ՎՐՈՒՅՐ.— Զը խոնարհելու կը հանդգնին... Մի՛ զարմանար, տեր իմ, Կրյուսոս սարսափելի գոռող մ'է։

ԱՐՏԱՇԵՍ.— Ես ալ գոռոզները կը ջախջախեմ... Օ՜ն անդր, զորականք, մերկացուցե՛ք սուրերնիդ Կրյուսոսի կենացը, լարեցե՛ք ձեր արևասքող նետերը Լյուդիո փառացը... Օ՜ն, փառաց գրու մեջ կը ցոլաք. ճանչցուցեք աշխարհի թե Հայ եք... Հոկա Մասիսի հսկա զավակներ, սարերեն բխող հսկա կոհակներ... արձանացե՛ք սպառազեն... Նեցուկ է մեզի բախտը, մեր թշնամյաց գլխուն կսպառնա լախտը... Հայ ընենք Արևմուտքը, Հայ ընենք տիեզերքը, Հայ քնենք Հայաստանը... Հայ հաղթենք, Հայ պարծինք, Հայ սիրենք, Հայ մեռնինք... Մեր վրա կը տարածվին ահա Մասյաց շուքերը... Միթե ձեր աղիքներուն մեջեն չեք զգար անհաղթելի զորություն մը, բուռն հարված և հաղթանակ։

ՎՐՈՒՅՐ.— Տեր արքա, Հայուն պատերազմի մեջ ապառաժ սիրտը

չը հանդուրժեր այս ժամուս և փառաց գագաթեն կուզե թավալիլ անհուն թշնամյաց գերեզմանի վիմ ըլլալու։

ԽՈՍՐՈՎ.— Հայուն սիրտը կը փշրի, տեր արքա, բայց սուրը՝ երբեք։

ՋՈՐՔ.— Հաղթե՛նք, հաղթե՛նք։

ԱՐՏԱՇԵՍ.— Սուր և հարված, սիրտ և քաջություն... օ՜ն անդր, հառաջ... կորյունք Այրարատա...

ԵՐԳ ԳԱՏԵՐԱՋՄԻ

Ի փառագոռ փանդռանց ի շրինդ
Թորգոմյան գոռ գրոհին ի թինդ
Սարսռասարսափ տան արձագանքք
Ծառ ափունք, դողդոջեն գանգք։

Ճանանչք բյուր թրոց, հանչյան նետից,
Աբեսաքող փոշիք հետից
Բավ են ի մահ ոսոխաց վատ,
Տեղի տուք Հայ զընդին անհաղթ։

(Վարագույրը կիջնե)

<(Վերջ Գ արարվածին)>

ԱՐԱՐՎԱԾ Դ

ՄՈՎԵՍՐ

Տեսիլ Ա

Կրյուսոս, Կամադրոս, Զորավարք, Զորականք, Նավաստիք։

ԵՐԳ ՄՈՎԵՍՅԻՆ

Ահա արևն ոսկեվարսիկ
Կը փոքփոքե զալյոք ծըփին,
Եղբա՛յրք հաղթ քաջ. ինչո՞ւ սարսինք
Մեր թշնամիքն ալ սիրտ ունին։

Մեր երակներն ունին արյուն,
Մեր սուրերը՝ մահու հարված,
Մեզ համար է փառք, հաղթություն,
Թշնամին մեզ չնչել չանաց։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Տեր արքա, ահա կսկսի երկինքը ամպոտիլ, հեռավոր հորիզոններեն ցոլմունք կը տեսնվին, փոթորիկը պիտի պայթի, Պոսիդոն մեզի հետ է, օ՜ն, թշնամիները պիտի շանթահարե։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Կամադրոս, այս սև ամպերն Արտաշեսի բանակին ստվերն են և այս լույսերն ու ձայները Արտաշեսի ծիծաղները... Խնդացե՜ք, ո՜, Հայեր, քիչ մը ետքը պիտի լաք, Լյուդական ալիները ձեր արցունքը պիտի ծծեն և կարմիր կոհակներ պիտի թավալին Լյուդական եզերքուն վրա հեծկլտալու... Արտաշես չզգար, որ Կրյուսոս մը կա, Կրյուսոս մը, որ Արևմուտքը դողացուց, Արևելյան փառասեր մ՚ալ իր թագը փառաց զոհելու կուգա... Թող գա... Երկու թագերու մեջ արև մը կա, մինչդեռ երկու սուրերու մեջ՝ ճաճանչ մը... կը հաղթահարե այն, որ սիրտ ու սուր ունի, կը լսե՞ք. Լյուդացիք, Կրյուսոսի փառքը ձերն է, եթե յուր ճակատը դափնյա պսակով մը կը պճնվի՝ հյուսողը դուք եք... Իմ թագս և ձեր սուրը ահեղ զորությամբ մը իրարու միացած են, մեկը՝ պատկառ, մյուսը՝ սոսկում... Զարնե՛նք, հարվածե՛նք՝ մինչև որ ճակատագիր մը որոշվի... Հույսը անվրեպ և աննկուն հարված ու հաղթանակ կենթադրե... Աստվածները մեզ հույս տվին. մեր վահանը ա՛յն է, մեր նախնիքը մեզ սուր տվին. մեր ուժն ա՛յն է. արյան վերջին կա՛թիլն անգամ թափել. մեր հաղթությունն ա՛յն է. եթե քայլ մը ետ երթանք՝ այն քայլ մը տեղը ձեր անձուկ գերեզմանն է, վա՜յ անոր, որ չը սիրեր հայրենիքն ու սուրը, վա՜յ անոր, որուն սրույն վերա կը ցամքին արյան կայլակները և վա՜յ անոր, որ առանց սպաննելու կը զարնվի, Լյուդացի չէ, վա՜տ է այն։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Տեր արքա, ահա կոհակները կը բարձրանան և դեռ թշնամյաց նավերը չեն երևար, անշուշտ Պոսիդոնի անդունդները լափեցին զանոնք։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Նայե՛ սա կողմը, ծովուն վրա արծվի երամ մը կեռա, անոնք Արտաշեսի նավերն են, կը քալեն դեպի մեզ երկաթե թևերով։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Բայց խիստ բազմաթիվ են, տեր իմ։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Արիությո՜ւն, Կամադրո՜ս, քիչ մը առաջ զիս կը քաջալերեիր։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Սիրտս չը զարներ, ո՜վ Կրյուսոս, սուրս կը զարնե։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Պաշտպանենք գահս և Լյուդիան... Չըլլա որ այս կատաղի կոհակները զմեզ ոչնչության օվկիանոսը թավալեն. պատմության էջերը չողբան Լյուդիան, այլ արցունքի տեղ մարգարիտներով դրվագվի Լյուդիո ճակատագիրը... Թող Արտաշես ալ վայրկյան մը վարանի իր ճակատագրին վրա... Ա՜հ, եթե մեկ մը մինակ գտնեի զինքը դիմացս՝ երազ չէր ըլլար, հաղթություն կըլլար, մեկ մը այս նավին բարձրեն տեսնեի իրեն կոհակաց մեջ սուզիլը՝ Արևելք իմս կըլլար... եկե՛ք, եկե՛ք, երկու փոթորիկներ իրարու թող զարնվին։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Ամպերուն ետև պատրաստ են Աստվածոց շանթերը, տեր արքա, երբ երկու գունդեր իրարու զարնվին՝ այն ատեն պիտի պոռթկան...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ի՞նչ է սա, որ կոհակե կոհակ կը գլորի... Հոն... Կամադրո՜ս։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Նավակ մը, դեպի այս կողմը կուգա կարծեմ։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Չըլլա որ մեր մարդիկներեն ըլլա։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Գուցե Արտաշեսի կողմեն պատգամավոր կուգա։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Բայց աղեկ դիտե մեջը նստողը... Կին... Այո՜, կին մ՚է կարծեմ, այնպես չէ՞ Կամադրոս։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Այո՜, տե՜ր իմ... տե՜ս կոհակներու սոսկալի գոտի մը նավակին կողին կսպառնա։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Նայե՛, թևերը բացած մեր օգնությունը կաղերսե։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Ա՜հ... Կոհակը ծածկեց նավակը... Ամեն բան անհետացավ...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Տե՛ս, գլուխ մը կերևա ալիքներուն մեջ... նույն կինն է, դեպի հոս կը հառաջանա լողալով։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Ի՞նչ արիություն, ո՜վ երկինք... Քիչ քիչ կը մոտենա։

ՁԱՅՆ ՄԸ.— Օգնությո՜ւն, օգնությո՜ւն, ես Արտաշեսի թշնամին եմ։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Կը լսե՞ս, Կամադրո՜ս, Արտաշեսի թշնամին... Ազատե՞նք։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Բայց չըլլա որ կեղծ խոսքով մը ազատի։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Սակայն կին մ՚է, ի՞նչ կրնա ընել մեզ... Ազատենք։

ՁԱՅՆԸ.— Ազատեցե՛ք վրեժխնդիր կին մը... Կը խեղդվիմ...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Նավաստի՞ք, օ՜ն, ազատեցե՛ք այդ կինը... (նավաստիները ծովը կը նետվին և քիչ մը ետքը Որմզդուխտը ազատելով նավը կը բերեն):

ԿԱՄԱԴՐՈՍ.— Շո՛ւտ ըրեք, խեղճ կնոջ բազուկները թուլցան։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Մրցեցե՛ք, այլակերպ ձուկեր։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Ահա կը հասնին... բռնեցին... Ազատեցավ, տեր արքա։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Զարմանալի է այս, Կամադրո՛ս։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Դավադրութենե մը միայն կը վախնամ, տեր իմ։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Քիչ մը ետքը ճակատագիր մը կորոշվի, ի՞նչ դավ կըլլա, զորապետ... Բայց ո՞վ է այս կինը... Արտաշեսի թըշնամին... արդյոք Արևելյան թագուհի մ'է։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Ես ալ ատոր վրա կը զարմանայի, բայց բավական է որ Արտաշեսի թշնամին ըլլա։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ա՜հ, եթե հաղթության գաղտնիք մը բերեր իր հետը։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Մեր սուրը, տեր արքա, հաղթության գաղտնիքն է, մեր հարվածներն ալ՝ հաղթություն... Արտաշեսի նավե՞րը...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Դեռ հոն են... բայց մէջտ կը մոտենան։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Ահա այն կինը, տեր աքքա։

Տեսիլ Բ

Նույնք և Որմզդուխտ

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (ծունր գալով) Ո՜վ թագավոր, ազատեցիր կին մը, որ միայն վրեժխնդրության համար կը շնչե, ուրվական մը, որ բոցավառ շունչ մը և կայծակի հարված մ'է, սիրտ մը, որուն անցյալն է սեր և աղոթք, ներկայն՝ հեռ և վրեժ... Դու փրկեցիր գերեզմանին բոցերեն վրեժխնդիր կին մը, կին մը, որ Արտաշեսի արյան վտակին մեջ կուզե տեսնել անցեալին հիշատակները և իր որդվույն պատկերը, իր վերջին արցունքը խառնել այն կարմիր ալիներուն զովանալ և մեռնիլ... Օրհնյա՛լ ըլլաս, ո՜վ թագավոր, ընդունե՛ քու հաղթության և փառաց դրոշակիդ տակ զինվորական կին մ'ալ... Թե որ զինու

Տեսե՛ք, կը մոտենա Արտաշես... Սակայն չը դողաք... պիտի հաղթեք, անոնք ալ սիրտ, դուք ալ սիրտ, անոնք ալ սուր՝ դուք ալ սուր, անոնք ալ թագ՝ դուք ալ թագ, անոնք ալ մահ՝ դուք ալ մահ, և երկուքնիդ ալ միանգամայն երկինք ունիք, բայց Կրյուսոս իր անհուն բանակին մեջ ավելի զինվոր մ՚ունի։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Կին դու, եթե երկնից աստղերը և այս կոհակներն ալ զինվին մեզի դեմ, Կրյուսոս և իր բանակը դարձյալ զենք և զրահ կը ցոլացնեն անոնց դեմ... Արյո՞ւն փառաց համար, ինչվան հիմա շատ ազգեր զինվեցան մեր դիմաց, բայց իրենց դիակներն ու սուրերը իրեցան Լյուդական եզերքներուն վրա առանց իրենց ետևեն հեծեծանք մը ձգելու։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Պատասխան տվեք, երկի՛նք և երկի՛ր, Արտաշես մեռնելո՞ւ կուգա։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Իր դահիճը պատրաստ է սուր ի ձեռին։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Իր գերեզմանը՝ ամեհի կոհակ մը։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Զայն տվեք, Աստվածնե՛ր, Արտաշես հաղթելո՞ւ կուգա։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Արդեն հաղթության պատգամ որոտացին Աստվածները, տեր։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ճշմարիտ է, Կամադրո՛ս... Օ՛ն, կը մոտենա թշնամին, միշտ կը քալե դեպ ի մեզ, շողա՛ն սուրերը, չը դեղնեն ճակատները, չը դողդոջեն թևերը... Զորակա՛նք, հարված և հաղթանակ... Վախը ձեր վատ դահիճն է, ի բաց վանեցե՛ք սրտի ծալքերեն... Հույսը ձեր երկրորդ կյանքն է... կը պարզեն ահա թշնամիք իրենց դրոշակները, պարզենք մենք ալ մեր ճակատն ու սրտերը։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Զինվորական կինը չը դողար, իսկ դո՞ւք, արի՛ Լյուդացիք։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Երբե՛ք։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Տեսե՛ք... Հոն թշնամին, հոս մենք. երկու գնդի մեջ՝ երկու ազգաց փառաղարդ ստվերները կը մենամարտին, գերեզման և անմահություն... չը տապալի անմահությունը... Ով որ կը սիրե զայն՝ թող մեռնի հայրենյաց բաբախուն ծոցը... Լյուդացիք, այսօր չը հաղթվինք Հայեն, վաղը՝ մեռնինք։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Արտաշեսի գերեզմանին առկայծյալ ջահերուն հետ թավալիլ... կը սիրեմ...

ԵՐԳ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՅՈՑ

(Նախ ճեռուեն կը լսվի և կը շարունակվի մինչև որ տեսարանը մտնեն)

Հայկյան արի հրսկայք, արիք,
Հելլենական կուլան ալիք,
Նոցա նվազ գրծուած բանակ
Մեզ կավետեն փառք հաղթանակ։

Արդ թող սոսկան թե մեք Հայ եմք.
Ազատ Մասյաց քաջ հսկա եմք.
Թող ծածանի փառաց դրոշակ,
Խմենք, քամենք արյան բաժակ։

Տեսիլ Գ

Նույնք, Արտաշես, Վրույր, Խոսրով, Զորապետք, Զինվորք և այլն

(Սույն երգը երգելով նավերով տեսարանը կը մտնեն.— Պատերազմի սկսելու նշաններ կրլլան,— երգը ինչվան վարագույրը գոցվելուն կը շարունակվի.— Որոտմունք, կայծակք և խավար) (Վարագույրը կիջնե)։

<(Վերջ Դ արարվածին)>

ԱՐԱՐՎԱԾ Ե

ՊԱԼԱՏ

Տեսիլ Ա

Արտաշես, Վրույր, Խոսրով, Թիկնապահք, Զորք (տեսարան կը մտնեն)

ԱՐՏԱՇԵՍ.— Վերջապես Լյուդիո փառաց վերջալույսն ալ գեղազարդեց Հայկական թագը և Արևմուտքեն հուսո աստղեր բարևեցին Արտաշեսի հսկա քայլերը, խորտակեցան բանակները՝ ինչպես կատաղի կոհակներ, որ սեպացյալ ժայռի մը

ստորոտը փշրելով տխուր մրմունջ մը կը թողուն իրենց ետևեն... Լյուդիա վերջին հառաչանք մը ուներ, թնդաց նա գերեզմանաց և ամայի պալատներու կամարներուն տակ... Զարհուրեցա՞ք և դուք, ստվե՛րք թագավորաց Լյուդիո, որ հոդ սպառազեն քանդակված արձանացեր եք... Կործանեցեք՝ եթե ամոթ կզգաք, լացե՛ք՝ եթե արցունք ունիք, հեծեցեք՝ եթե շունչ ունիք... Դեռ երեկ թագավորներ ձեր ստվերին տակեն կանցնեին պատկառանոք, այսօր խրոխտ ճակատ մը կը խնդա ձեր վրա և ձեր հիշատակը ձեր կոթողներուն ավերակին և գահերուն աճյունին ներքև կը թաղե... բայց ինչո՞ւ կուշանա Կրյուսոս՝ ալ շղթայակապ իր նախնյաց ստվերներուն առջև ծնրադրելու դահճին տապարին տակ։

ԽՈՍՐՈՎ.— Տեր արքա, Կրյուսոս խնդրեց, որ զինքը մեհյանը տանին վայրկյան մը աղոթելու կամ գուցե իր անցելույն վրա գաղանի արտասվելու համար... Այն թևերը որ վարժված են կեղեցիկ և վսեմ առարկաներ գրկելու հիմա երկաթե շղթաներ կը կրեն, այն գլուխը որ միայն փառաց ու ծաղկանց մեջ կը հանգչեր՝ քիչ առեն անարգ երկաթի մը հարվածը պիտի զգա, վերջապես այն որ կյանք ու մահ կը հրամայեր՝ արդ ստրուկ պիտի մեռնի... Միթե չողբա՞ս, տեր արքա, միթե չարտասվե՞ս։

ԱՐՏԱՇԵՍ.— Թո՛ղ լա... Փառաց մեջ նշույլ և աբցունք միանգամայն կը շողշողան... Ես փառասեր չեմ, այլ փառասերները կը ջախջախեմ... Այս սուրը թագերե փառքը չը քամեր, այլ Հայաստանի ազատ ապագայն կը քաղե... Քաջդ Վրույր, այս հաղթությունը քայլ մ'էր դեպի տիեզերք. Հայաստանի պիտի դարձնեմ բոլոր աշխարհ։

ՎՐՈՒՅՐ.— Եվ Հայաստան ալ իր փառքը քու քայլերուդ և գերեզմանիդ մեջ պիտի ամփոփե, ո՞վ թագավորաց վեհագույնը... Հայաստան իր անտառներուն մեջ չունի քու հաղթությանցդ հավասարելու չափ դափնի, Հայաստանի երկինը չունի քու փառքդ վարձատրելու չափ աստղ, այլ Արտաշես՝ փառաց մեջ և փառք՝ Արտաշեսի մեջ։

ԱՐՏԱՇԵՍ.— Արշեզը հիշեցուցիր ինձ, Վրույր, նա ալ այսպես կը խոսեր հաղթութենե վերջը... Բայց կը զարմանամ, թե ի՞նչպես հանկարծ աներևույթ եղավ իմ քաջ զինակիրս։

ՎՐՈՒՅՐ.— Վեհափառ տեր, այն ոիշերը, որ անտառին մեջ բանակ-

նիս իջևանած էր, զինքը արյան լճակի մը մեջ անշնչացած գտանք Արքունի վրանիդ մեջ, քովն ալ արյունոտ դաշույն մը։

ԱՐՏԱՇԵՍ.— Ո՞վ երկինք...

ՎՐՈՒՅՐ.— Եվ գաղտուկ փոսի մը մեջ թաղեցինք զինքը՝ զգուշանալով թագավորիդ իմաց տալու, որ կրնար շատ ցավ զգալ։

ԱՐՏԱՇԵՍ.— Ճշմարի՞տ կըսեք։

ՎՐՈՒՅՐ.— Անշուշտ, տեր իմ։

ԱՐՏԱՇԵՍ.— (մեկուսի) Դեռ կը սիրեր Արտաշաման... (բարձր) Ուրեմն չորացավ Արտաշեսի ճակտին մեկ դափնին, վերջապես կորսնցուցի այն սուրը, որ պատերազմի դաշտին վրա անխոնջ կուրծս կը պաշտպաներ... Խե՜ղճ Արշեզ... (մեկուսի) Ջավա՜կս... (բարձր) Արդ, բոլոր Լյուդիա հուսամ խաղաղեցավ, այնպես չէ՞, քաջդ Վրույր։

ՎՐՈՒՅՐ.— Այո՛, տեր իմ, գրեթե դիակ և գերի, ողբ և արյուն, սուրի բեկորներ և փլատակ, միայն ասոնք մնացին Լյուդիո երկընքին տակ։

ԽՈՍՐՈՎ.— Եվ միանգամայն ստրուկ ու դատապարտյալ թագավոր մը։

ԱՐՏԱՇԵՍ.— Ա՜հ, ինչո՞ւ կը փախչիս հորիզոնին տակ, Արե, ինչո՞ւ կը տանիս նախանձոտ ճառագայթներդ, կեցի՛ր քիչ մ'ալ և թագավորի մը դիակին վրա վերջին ճաճանչ մը՝ վերջին նայվածք մը ձգե, դեռ վայրկյան մ'ալ կրակ դառնան ճակտիս դափնիները քու կարմիր ճաճանչիդ տակ և օրհասական Կրյուսոսի քինախնդիր նայվածքը այրեն... Կեցի՛ր դեռ, ուրիշ տիեզերք մը հանդիսատես չի պիտի ըլլա այսպիսի փառավոր հաղթության և գլխատման... Կրյուսոս դեռ չերևար...

ԽՈՍՐՈՎ.— Ոտքի ձայներ կը լսվին, արքա քաջ։

ՎՐՈՒՅՐ.— Ահա կը բերեն, տեր արքա։

Տեսիլ Բ

Նույնք, Կրյուսոս, Որմզդուխտ, զերիք շղթայակապ։

ԱՐՏԱՇԵՍ.— (մեկուսի) Որմզդո՜ւխտ...

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (մեկուսի) Կը զարմանա... Դամ չէ տեսեր, գամ մեռած կը կարծեր։

ԱՐՏԱՇԵՍ.— Հառաջ եկո՛ւ, ո՛վ Կրյուսոս, նախնյացդ ստվերները արյանդ հեղեղը տեսնել կուզեն, անոնք կատեն զքեզ և կողբան Լյուդիո բախտը... Չես համարձակիր նայիլ, քու ցասկոտ նայվածքդ կը հաղթվի անոնց քարե նայվածքեն, Լյուդիո հառաչանքը գերեզմանի քարե մը ավելի ծանր և որոտընդոստ թավալեցավ կթոտ ծնկացդ վրա... Շղթայիցդ շառաչյունը արթնցուց նախնյացդ կմախքները հավիտենական փոսերեն, որոնք հեծկլտան փլատակաց խորշերը... Մորիկներ կը վանեն Լյուդիո հողեն գահույթեցդ աճյունը... Վերջապես Լյուդիո դամբաններն ու օրրոցները կատեն զքեզ և պիտի ատեն հիշատակդ... Սակայն սիրտ առ, Կրյուսոս, մի՛ դողար մահվանե, ժպտե՛ գոռոզաբար ինչպես երբեմն գահիդ վրա... Այլ ո՛չ... Միթե գա՞հ է վատին համար գերեզմանը։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Շղթա կրողը վատ չըլլար, Արտաշես, գուցե գահին վրայեն զայն ծաղրողը... Մի՛, մի՛ խրոխտար, ո՞վ թագավոր, այդ գահն ալ դագաղ կըլլա, երբ մթության նենգության կամ հաղթության մեջ բաղուկներ չորս ոտքերովը կրեն զայն օդին մեջ... Մինակ ես չէ, այլ այդ սիրտն ալ կուլա՝ այսպիսի անակընկալ հարված մը երբ զգա, հարված մը, որ ինքնակալը վայրկյանի մը մեջ թագե, փառքե և կյանքե կը զրկե։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (ցած՝ առ Կրյուսոս) Սիրտ ա՛ռ, ո՛վ թագավոր, քենե ետքը վրեժ մ՚ունիս, դեռ չը մեռած զիս առանց շղթայի պիտի տեսնես։

ԱՐՏԱՇԵՍ.— Եվ դու կը մոռնաս, որ ես Արտաշես եմ։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ես ալ Կրյուսոս էի... Ձեռքս մական ունեի երբեմն, արդ շղթա կը կրեմ։

ԱՐՏԱՇԵՍ.— Այլ ես իմ թշնամիս արթուն, զորավոր և սուր ի ձեռին հաղթեցի։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Սակայն գուցե քենե տկար մը օր մը զքեզ անշշունչ գահիդ գամե փոքր դաշույնով մը՝ գողտր ձեռքով մը...

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (մեկուսի) Այն անծանոթ դահիճը ես պիտի ըլլամ...

ԱՐՏԱՇԵՍ.— Վա՛տ է այն։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Սակայն կսպաննե, մութի մեջ դեմքը չես տեսներ։

ԱՐՏԱՇԵՍ.— Ո՛վ Կրյուսոս, գեղեցիկ երազներով օրհասդ ամոքե՞լ կուզես, կը տեսնե՞ս դահիճը (կը ցուցնե) պատրաստ եղիր...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Գթությո՛ւն, ո՛վ թագավոր, շնորհե՛ կյանքս։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (ցած առ Կրյուսոս) Սիրտ առ... Դեռ թագավոր ես։

ԱՐՏԱՇԵՍ.— Ի՞նչ պիտի ընես կյանքը... Հո՞ւյս մը կը նշմարես։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Սակայն... չեմ ուզեր... կը տեսնե՞ք ով իմ հարցս ուրվականները, կը լսե՞ք... Ինչո՞ւ լուռ և անշարժ արձանացեր եք։ Ձեր նայվածքները կարծես թե կենդանի են, իսկ ձեր սուրերը չեն փայլատակեր, գոնե ինկեք, կործանեցեք հափշտակչին գլուխը ջախջախելու... Ձեր ստվերին տակ դահիճ մը կը պահեք, որ այս նվիրական պալատը Լյուդիո վերջին թագավորին արյամբը պիտի ողողե և Լյուդիո հետին շունչը այս կամարներուն և ձեր շուքին տակ հեկեկելով պիտի սպառի։ Ելե՛ք, զե՛նք առեք, ստվե՛րք դյուցազանց, վրե՛ժ ժայթքեցեք անոր դափնեզարդ գլխուն, որ հաղթական քայլերով ձեր դամբանները կը կոխկոտե... Կրակ թափեցե՛ք՝ եթե նայվածք ունիք, մահ սփռեցե՛ք՝ եթե շունչ ունիք, ձայն տվե՛ք՝ եթե ձայն ունիք... Ո՛վ դիք, ո՞ւր են ձեր կայծակները... Ա՜հ, մեկը սուր մը, հույս մը չը բերեր ինձ... Ուրեմն Աստվածք և ստվերք, անիծյա՛լ ըլլաք։

ԱՐՏԱՇԵՍ.— Դեռ սպասե՞ դահիճը. ո՛վ Կրյուսոս... ահա արևը աներևութացավ արդեն, վաղը իր առաջին ճառագայթը գերեզմանիդ վրա պիտի ցողե... Կը դողա՞ս մահվանե։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Արդեն այս շղթաները և այդ ծիծաղները մահեն ավելի սոսկալի են... Թույլ տուր օրհասականին, Արտաշես, որ խոսի... կը մտածեմ, թե դեռ ո՞վ մնաց ատելու և անիծելու համար... Ի՞նչ ընեմ... Պիտի մեռնիմ... պիտի մեռնիմ գերեզմանիս վրա արյունոտ սև շղթա մը, փոխանակ ծաղկանց և ջահերու... Ա՜հ, կզգամ որ մեկը միայն մնաց օրհնելու համար, Աստվածները անշուշտ անոր անմեղ արյան վրեժը լուծեցին... Զքեզ Սողո՞ն, Սողո՞ն, գեղեցիկ խոսեցար...

ՎՐՈՒՅՐ.— Տե՛ր իմ, նոր Աստված մը կը կանչե։

ԱՐՏԱՇԵՍ.— Ո՞վ է այդ Սողոնը, Կրյուսոս...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ո՛վ Արտաշես, այս վայրկենիս միայն Սողոնը և դահիճը կը սիրեմ։

ԱՐՏԱՇԵՍ.— Քեզի կը հարցնեմ, Կրյուսոս, թե ո՞վ է այդ Սողոնը, որ կօրհնես։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Գոռոզներու թշնամին, Արտաշես։

ԱՐՏԱՇԵՍ.— Խոսե՛։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ես ալ երբեմն այդ գահին վրա էի, շղթայակապ թագավորներ, հաղթության ճոխություն, փառք և գեղեցկություն

կը պատեին զիս, կը ցոլայի լուսնո մը պես անթիվ աստղերու մեջ... Օր մը Սողոնը կանչեցի և ըսի իրեն. «Սողոն, ինձմե ավելի երջանիկ մարդ կա՞ աշխարհի վրա». Նա ալ պատասխանեց. «Ո՞վ թագավոր, մարդուս երջանկությունը անհիմն է»... Կրակ կարեցա այս կարծր պատասխանին վրա և իր մահը որոտացի... Մեռավ նա... գերեզմանը անհետացավ, բայց իր վրեժը վառ մնաց ճակտիս վրա Աստվածային շանթի մը պես, փառաց հեղեղը զիս անոպա ժայռերու վրա նետեց... Ժայռերը սիրտ չունին... Արտաշես, ո՞ւր է դահիճդ։

ԱՐՏԱՇԵՍ.— Չի պիտի մեռնիս։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Մի՛ ծաղրեր զիս անգթաբար, Արտաշե՛ս, կուզեմ մեկ հարվածով մը մեռնիլ... Այդ կատակներդ գալ սուրերու հարվածներ են։

ԱՐՏԱՇԵՍ.— Կաղատեմ զքեզ մահվան ճանկերեն, ուսկից շատ կը դողաս։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ալ բավակա՛ն է... Ո՞ւր է դահիճդ...

ԱՐՏԱՇԵՍ.— Դեռ չի պիտի մեռնիս։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Բայց ո՞ւր է դահիճդ։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (ցած առ Կրյուսոս) Դեռ սպրե...

ԱՐՏԱՇԵՍ.— Զորակա՛նք, զինքը ստորերկրյա բանտ մը տարեք, նույնպես այս բոլոր գերիներն ալ ուրիշ բանտեր։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (նույնպես) Քեզ գահդ կը տանին... Գնա՛... (ամենքն ալ կը տանին)։

Տեսիլ Գ

Նույնք, բացի Կրյուսոսեն

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (շուզելով մյուսներին հետ բանտ երթալ) Ո՞վ թագավոր...

ԱՐՏԱՇԵՍ.— Քակեցեք այդ կնոջ շղթաները և ազատ թողեք, նախատինք է մեզի կնոջմե մը վրեժ առնել, որուն հարվածը վարդ մ'անգամ չը կրնար փթթեցնել (շղթաները կը քակեն)։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (մեկուսի) Դեռ կը տեսնվինք, Արտաշե՛ս... (կերթա.—տեսարանին վրա կոկսի քիչ քիչ մութը կոխել)։

Տեսիլ Դ

Նույնք, բացի Որմզդուխտեն

ԱՐՏԱՇԵՍ.— Օ՜ն ուրեմն, դուք ալ, հաղթական զինակիցք իմ, գացեք հանգչելու դափնյա անկողնոց վրա, զոր հաղթությունը ձեզ համար հարդարեց. ահա եկավ գիշերը իր տնհուն աստղերով ձեր հաղթական ճակատներուն գեղեցիկ հովանի մը ըլլալու... գիշերները երկնքին երեսեն թռչող ու ինկող աստղերը՝ ազգերու բախտերն են, որ Հայաստանի գոգը կը թավալին... Արշալուսին առաջին ճառագայթներուն դարձյալ կը քալենք, հաղթական քայլ մ'ալ դեպի տիեզերք...

ՎՐՈՒՅՐ.— Տեր արքա, գիշերները դարերք կթվին։

ԱՐՏԱՇԵՍ.— Լյուդիո հետին հեծկլտանքները զմեզ կօրորեն։

ԽՈՍՐՈՎ.— Սակայն, տեր արքա, սուրերը չեն ուզեր իրենց պատյանին մեջ նիրհել։

ԱՐՏԱՇԵՍ.— Ճշմարիտ է, ռազմիկին սուրն ալ սրտին հետ կը բաբախե... Այսու ամենայնիվ հանգիստն ալ փառաց ստվերն է... Փոթորիկեն ետքը կը տիրե լռիկ հանդարտություն... Միթե չեք կրնար նիրհել արյան հեղեղներու քով... Ահա միայն այս գիշեր ձեզի կը թողում բանակին հսկողությունը, քաջքդ իմ... Այս գիշեր Արտաշես պիտի ննչե փառաց մրմունջներու մեջ... Լավ հսկեցեք բանակը, զգույշ կեցիք, դեռ երկինքը ամպոտ է... (կը մեկնին ամենքն ալ.— պալատականք սենյակին աշտանակները և կանթեղները կը վառեն.— երկու պահնորդ կը կանգնին սենյակին միջնական դռանը քով)։

Տեսիլ Ե

Արտաշես (մինակ)

Պահնորդք, աղխեցե՛ք դռները, և գացեք դուք ալ հանգչելու... (պահնորդք դուռը կաղխեն և կերթան) Սողոնի խոսքը և Կրյուսոսի անկումը գրեթե զարհուրեցուցին զիս... Գիշերվան խավարին մեջ կը կեղրոնանան մտքերը, աշխարհային սոսկումները... Գիշերն իր լռությանը մեջ կարծես թե ձայն մ'ունի,

որ կը հեծծե. «Կանցնի մարդը, կանհետի վարդը շուքի մը պես... Կանցնի փառքը, կը մարի գերեզմանի կանթեղի մը պես... կը սահի, կանհետանա արյան հեղեղներուն հետ... կը նվազին օր մը մարդկային փայլերը, կը նսեմանա գեղեցկությունը վշտին մեջ, փառքը՝ պարտության մեջ, ճոխությունը՝ բախտին մեջ...» Ինչո՞ւ կը ծանրանաս սրտիս վրա, ո՜վ գիշեր, ունայնության պատանքով, նախանձու կայծերով, անցավորության կոհակներով, եղերգության հեծծանքով և գերեզմանական ստվերով... Դու դահիճ մը՝ միայնությունը տապար առած կուզես դողացնել, կուզես որ հառաչ մը թռի Արտաշեսի շրթներեն... այլ դեռ գլխուն վրա կը ցոլան Լյուդիո փառաց ջահերը և անոնց ճաճանչովը կը տեսնեմ որ լոկ ստվեր մը, հառաչ մը, երազ մ'ես, և ճառագայթ մը քու դահճիդ... Այդ աստեղազարդ երկինքը Արտաշեսի տիեզերական ծիրանին պիտի ըլլա... Ոտքերուս տակ դեռ շնչասպառ դիակներ կը հեծկլտան... Թող որ դափնյա շուքին տակ հանգչի Արտաշես (թիկնաթոռի մը վրա կը բազմի) աչքերս կը գոցվին... Ի՜նչ քաղցր ես քո՛ւն, հաղթական պատերազմներով խոնջյալ ճակատի մը համար... (աչքը կը գոցե.— տեսարանը վայրկյան մը պարապ կը մնա):

Տեսիլ Զ

Նույն և Որմզդուխտ

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (գաղտնի դուռ մը բանալով) *Կրյուսոս աղեկ ցուցուց... Ճիշտ իր սենյակը հանեց այս գաղտնի դուռը...* (զգուշությամբ հառաջ կուգա) *Հոն է, կը քնանա... կը տապլտկի փառահեղ երազներու մեջ... Չը գիտե, թե օձ մը մթության մեջ զինքը կը մտածե և օր մը պարանոցը պիտի փաթթվի, գուցե այս վայրկենիս, մինչդեռ առյուծը կը ննջե, կը խորդա... Արտաշես պիտի մեռնի, ես թագուհի պիտի ըլլամ և իր գերեզմանը պիտի ընեմ առագաստս և գահս... Արտաշես արծիվ էր, այս վայրկենիս թևեր չունի... Մեկ հարվածի մը ներքև ստվեր մ'է անշշունջ և պիտի անհետանա գիշերվան մութին մեջ... Չեմ երազեր, Արտաշես գրեթե դիակ մ'է... Հոս է գահս, անոր վերջին շունչին մեջ, գոց աչքերուն, հանդարտ սրտին և*

այս դաշույնին վրա... Հոս է թագս Արտաշեսի արյան վառ ալյացը մեջ... Կինը մթության մեջ կսպաննե... (ճրագները մեկիկ մեկիկ և յուրաքանչյուրին կանգ առնելով զգուշությամբ կը մարե.— վերարկուին տակեն լապտեր մը կը հանե, կամաց կամաց Արտաշեսի կը մոտենա, լապտերը ճորեն կը պահե... կը զարնե սրտին և քանի մը քայլ ետ կերթա կատաղի նայվածքով):

ԱՐՏԱՇԵՍ.— *Ա՜հ...* (դողդոջուն ոտքի ելնելով) *Ո՞վ էր այն...*

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (լապտերն իր դեմքին բռնելով) *Տե՛ս...*

ԱՐՏԱՇԵՍ.— *Որմզդո՛ւխտ... Միշտ դո՞ւն...* (կիյնա):

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— *Կին մը, որուն հարվածը ո՛չ թե վարդ, այլ վարդագույն արյուն կը փթթեցնե։*

ԱՐՏԱՇԵՍ.— (մարած ձայնով) *Օգնությո՛ւն...*

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— *Տեսե՛ք... Արտաշես մը կնոջ մը դիմաց օգնություն կը կանչե։*

ԱՐՏԱՇԵՍ.— *Վա՜տ...*

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— *Ի՞նչ կըսես, Արտաշես... Թագուհի պիտի ըլլա՞մ։*

ԱՐՏԱՇԵՍ.— *Դեռ ոչ...* (ձեռքը սուրին տարած կուզե երթալ։ Ճորեն կիյնա):

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— *Արտաշես... Սիրո հիշատակներուն պես կանցնին կը սահին այս կարմիր ալիներն ալ... Վրեժխնդրությանս փոցերը մարեցան, բայց ատելությունը դեռ սիրտս կը լափե... Հայությունը պիտի ջնջեմ, Արտաշես...*

ԱՐՏԱՇԵՍ.— *Արտաշեսի պես դյուրավ չը մեռնիր նա...*

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— *Արդեն հիմա երկու բանակներ իրարու թշնամի ձևացուցի մթության մեջ և զիրար անխնա կը ջարդեն, պիտի երթամ հիմա Կրյուսոսի բանտը, պիտի քակեմ շղթաները... Պիտի զինվինք... Թագուհի պիտի ըլլամ, Արտաշես։*

ԱՐՏԱՇԵՍ.— *Ա՜հ... Անե՛ծք, կայծակք...*

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— *Օն, մեռի՛ր, որ վայրկյան մը առաջ թագուհի ըլլամ, ալ հերիք գալարիս ոտքերուս տակ... Լավ բաց բերանդ... Շուտ, տուր հոգիդ, և տեսնեմ փառաց ջահերով պիտի թռչի՞։*

ԱՐՏԱՇԵՍ.— (հուսահատությամբ և ցավեն նվաղյալ կիյնա) *Վա՜տ դահիճ...*

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— *Մեռա՜վ... Ձայնը մարեցա՜վ... աչքերը փակեցան... Վրեժս առի... Հագա կարմիր ծիրանին... Թագ մը մնաց...*

Հոն է... Թագուհի պիտի ըլլամ (դեպի մյուս գաղտնի դուռը կերթա կը բանա և կանհետանա):

ԱՐՏԱՇԵՍ.— (աչքերը բանալով զայն կը դիտե) *Խաբվեցավ... Բայց ես ալ կը մեռնիմ... Ո՞վ անողոք գիշեր... Վերջապես հետին հառաչս, փառքս, սուրս կը թավալես գերեզմանին անշան հատակը... Օգնութիյո՞ւն...*

ՎՐՈՒՅՐ.— (դրսեն) *Տեր արքա, տեր արքա...* (դռները ճարվածելով կը խորտակեն և ներս կը մտնեն):

Տեսիլ Է

Արտաշես, Վրույր, Խոսրով, Զորականք

ՎՐՈՒՅՐ.— Տեր արքա, բանակը զիրար կը ջարդե... Հասի՛ր...

ԽՈՍՐՈՎ.— Բայց ո՞ւր է թագավորը... (փնտռած ատենը դիակին կը դիպչի) *ա՜հ... Հոս բերեք ջահերը...*

ԱՄԵՆՔԸ.— (տեսնելով) *Թագավո՜ր...*

ԱՐՏԱՇԵՍ.— Կին մը... Այս գաղտնի դուռը... Կրյուսոսի բանտը... Շուտ վրեժս... Հայաստանը ազատեցեք... «Աւա՜ղ փառացս անցաւորի»։

ԱՄԵՆՔԸ.— Մեռա՜վ։

ՎՐՈՒՅՐ.— Օ՜ն, այս գաղտնի դռնեն (ամենքը կը մտնեն վարագույր):

ՊԱՏԿԵՐ

ԹԱՆՏ

Տեսիլ Ը

ԿՐՅՈՒՍՈՍ.— (մինակ շղթաներով գետինը կապված է, ձեռքունեն կախված կանթեղ մը կը պպպա): *Այս քա՛մ պտլտաս է... բանտս է... Ճակտիս դափնիներն են այս շղթաներն, որ երկաթի փոխակերպելով կաշկանդած են զիս գերեզմանին սև ու սեպ ժեռափանցը... Նայվածք մը հոն... և ահա այն է գերեզմանս...*

Ա՜հ, հիմա կը հասկնամ, թե ի՞նչ է դատապարտյալ մը, որուն վճիռը տալն փառք և հաճույք կազդեր ինձ... Արդյոք ի՞նչ ալևոր մազեր, սիրո հառաչներ, թագեր, արտասվաց գետեր, աղիք, ճապաղիք, կմախք և անեծք սփռված են և կը հեծեն այս սև կամարներուն տակ... Ջեմ սոսկար գաղաններեն՝ որչափ այս խավարեն, ուր զոհերուս ուրվականներն իրենց պատանքները գետնի վրա շրջելով կը շրջին միշտ, սուր չունին, նայվածք ու անեծք ունին... Ո՞վ պիտի ազատե զիս այս ոչչերու գերեզմանեն... այն կինը քիչ մը առաջ երևցավ ինձ առանց շղթայի, այս վանդակապատ պատուհանեն. «Սիրտ ա՜ռ,—ըսավ,—թագավոր պիտի ըլլաս... Արտաշեսը պիտի սպաննեմ»,— կըսեր, և պալատին դաղտնի ճամբաներուն վրա տեղեկություններ առավ ինձմե... ա՜հ, մեկ մը դուրս նետվեի, տեսնեի Լյուդիո երկինքը... Նախ սուրս Աստվածոց դեմ դարձնեի, հետո՝ տիեզերաց վրա... Ա՜հ, գաղտնի դուռը կը բացվի կարծեմ... (Որմզդուխտ կերևա) *Ինքն է...*

Տեսիլ Թ

Նույն և Որմզդուխտ

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Ա՜յո՛, ես եմ... միշտ ե՛ս՝ թագավորին ու դատապարտյալին մեջ... միշտ ե՛ս՝ վրեժի և փառաց մեջ... (շղթաները կը քակե):

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ո՞վ երկինք... Բայց ի՞նչ կընես... ի՞նչ ըրիր, կին դու...

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Ազատ ես... Լռե և քալե՛։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Բայց խոսե՛։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Բայց երթանք։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Գուցե եթե հոսկե դուրս ելնեմ՝ վատ և եթե երկրորդ անգամ հոս մտնեմ՝ կրկին մահ պիտի ըլլա... Խոսե՛...

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Արտաշեսի զորքերը խիստ բազմաթիվ ըլլալուն երկու զորանոց փոխադրված էին... Նախ մեկ զորանոցը գացի և պոռացի «թշնամիք կուգան». անոնք որոտընդոստ և սուր ի ձեռին դուրս նետվեցան... Իսկույն մյուս զորանոցը վազեցի և պոչեցի «թշնամիք եկան», և զանոնք մյուս գնդին վրա առաջ-

նորդեցի, որ բարկացայտ հառաջ կը խաղար... Երկու գնդեր իրար զարնվեցան ինչպես երկու մրրիկ, լսեցի սուրերուն շաչյունները... Անոնք մեր թագավորությանը համար արյուն կը թափեին փոփոխակի... հասա Արտաշեսի քով, զինքը քնո մեջ խողխողեցի... Մեռավ աչացս առջև... Հոս եկա զքեզ թագավոր ընելու... քալե՛։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ո՞վ դիք. այս մշտնջենավոր աղջամուղջին մեջ փառաց դռներ կը բանաք... ազատենք գահս...

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Օ՜ն, դարձյալ այս գաղտնի դռնեն Արտաշեսի սենյակը կելնենք և մյուս գաղտնի դռնեն պալատեն դուրս... Պալատեն դուրս՝ դուն թագավոր, ես ալ թագուհի (երթալու կելլան)։

Տեսիլ Ժ

Նույնք, Վրույր, Խոսրով, Զորք

ՎՐՈՒՅՐ.— (գաղտնի դռան մեջ երևնալով) Այստեղ պալատ չէ, բանտ է, գերեզմանդ է, թշվառական։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Ա՜հ...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Մատնվեցա՜նք...

ՎՐՈՒՅՐ.— Կը կարծե՞ք որ այս դռանը մեջ ահավոր և վրեժխնդիր սուր մը ձեր դիմաց չարձանանա։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (առ Կրյուսոս) Վատ արանց, առանց շղթայի արդեն չը կրցար քալել։

ՎՐՈՒՅՐ.— Զորակա՜նք, կապեցե՛ք երկուքն ալ, մեկը՝ վատ, մյուսը՝ արքայասպան։

ԿՐՅՈՒՍՈՍ.— (զորաց ոպառնալով) Դողացե՛ք, դեռ Կրյուսոսն եմ։

ՎՐՈՒՅՐ.— Հոս ստրուկ ես և հոսկե դուրս՝ դիակ... Զորականք, շղթայեցե՛ք (զորքերը երկուքն ալ կը կապեն)։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Բայց ի՞նչ կը խնդրեք ինձմե։

ՎՐՈՒՅՐ.— Արյո՜ւն... Արտաշես հյուծյալ աչքերով քեզ լրտեսեր է։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (մեկուսի) Ուրեմն դեռ մեռած չէ եղեր... (բարձր) Մեռա՞վ Արտաշես։

ՎՐՈՒՅՐ.— Այո՛, ես եմ վրեժխնդիրը։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Մեռա՜վ... Ուրեմն ի՜նչ հոգ եթե սպաննեք զիս... Խորտակեցի Հայուն հաղթական քայլը; մարեցի Հայուն փառաց ջահը... Ես էի որ քիչ մը առաջ Հայերը ի զեն և ի մահ դրդեցի։

ՎՐՈՒՅՐ.— Դո՜ւն... թշվառակա՜ն։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Ես հոս կը մեռնիմ... բայց Հայությունն ալ դուրսը ինծի հետ կը մեռնի։

ՎՐՈՒՅՐ.— Դեռ ողջ է Հայը և անդին Հայաստան մ'ունի։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Հոգ չէ, եթե թագուհի չեղա՝ թագավորի մը դահիճը եղա (ծուռ կը շոֆի Վրույր զայն զարնելու ատենը)։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Չի՛ս ալ... (Վարազույր)։

ՎԵՐՋ

Ա Ն Կ Ո Ւ Մ Ն
Ա Ր Շ Ա Կ Ո Ւ Ն Ի Հ Ա Ր Ս Տ Ո Ւ Թ Ց Ա Ն

Թատերգություն երգախառն ի վեց արարս, յերիս պատկերս եվ ի մի վերջաբան

ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԿԵՐ

(Թապլո Վիվան)

1870

Ա Ն Ձ Ի Ն Ք

ԱՐՏԱՇԻՐ, արքա Հայոց
ՎՈՒԱՄ, արքա Պարսից
ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ, հայրապետ
ՀՐԱՉՅԱ, արքայորդի
ՀԵՐԱՆՈՒՅՇ, թագուհի Հայոց
ՁԱՐՄՈՒՀԻ, մայր թագուհի
ՓԱՌՆԵՐՍԵՀ, իշխան Սյունյաց
ՎԱՉԵ, իշխան Արծրունյաց
ՀՄԱՅԱԿ, իշխան Աշոցա
ՍՄԲԱՏ, մտերիմ Արտաշրի
ՇԱՎԱՐՇ, մանկլավիկ թագուհվույն
ՍՈՒՐԵՆ ՊԱՀԼԱՎ, հազարապետ Պարսից
ՍՊԱՆԴԱՐԱՏ, զորագլուխ թիկնապահացն Արտաշրի
ՍՈՒՐՄԱԿ, երեց
ԲԱԲԵԼ, ծեր գինվոր
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ, դուստր Բաբելի
Բանտապետ մը

ԱՐԱՐՎԱԾ Ա

Հին անակ մը.— Խորք դուռ մը, ուսկից դաշտ մը կերևի. մեկ կողմը խաչելության պատկեր մը. ցիրուցան և հին կարասիք. պատեն կախված զրահ և զենքեր.— Վարագույրը բացված ատեն Շահանդուխտ պատկերին առջև կաղոթեն։

Տեսիլ Ա

Բաբել և Շահանդուխտ

ԲԱԲԵԼ.— Աղոթե, աղոթե, աղջիկս... Տխուր հիշատակներ նկարված են այդ սիրուն դեմքին վրա... սակայն իր կողեն հոսող արյան կայլակներն սպեղանի են սրտի խոցերու։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (հոր գիրկը գալով) Ճշմարիտ է, հայր իմ... Այս պատկերը միշտ մորս դագաղը կը հիշեցնե ինծի, այս խաչին շուքը՝ իր գերեզմանը և այս տխրանույշ դեմքը՝ իր սերն ու բաթի սիրտը... Այս փուշ պսակն ալ իմ խանձարուրս կը նմանի, ուր մայրս զիս երկնեց։

ԲԱԲԵԼ.— Ի՞նչ... Թշվա՞ռ ես, աղջիկս... Բայց դուն կուլաս... Ի՞նչ ունիս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ոչինչ... հայր իմ, այն աղջիկը որ մայր չունի՝ կուլա միշտ, ինչվան որ մայր...

ԲԱԲԵԼ.— Ձեմ հասկնար միտքդ, աղջիկս...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ըսել կուզեմ թե, հայր իմ, մայրս չը մեռներ։

ԲԱԲԵԼ.— Բայց մեռավ... Եթե առջի երիտասարդ զինվորն ալ ըլլայի՝ դարձյալ չէի կրնար ջնջել իմ սրտովս այն Աստվածային դատակնիքը։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ուրեմն որբ աղջիկը չի լա՞... հայր իմ։

ԲԱԲԵԼ.— Ճշմարիտ է, աղջիկս... Ալևոր հոր մը գիրկն ունիս միայն, այն ալ գերեզմանի քարի մը պես պաղ է արդեն... Հայրդ

իր մեկ ոտքը գերեզմանին սև սեմին վրա դրած՝ ո՛չ վշտեն անցնիլ կուզե և ո՛չ ալ աղջիկեն։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց, հայր իմ...

ԲԱԲԵԼ.— Աղջիկս... դուն գաղտնիք մ՚ունիս, որ ինձնե կը ծածկես... Ժամանակե մը ի վեր է, որ միայնությունը և մթությունը հորդ շուքեն ավելի կը սիրես և հորդ համբույրեն ավելի՝ հառաչանքեդ կախորժիս... Միշտ ձեռքդ ձեռքիս մեջ՝ դողդոջ, ճակատդ՝ դալկահար, սիրտդ միշտ՝ բեկբեկ... Դուն առաջները վարդե ավելի զվարթ էիր, թիթեռնիկե ավելի աշխույժ և շունչե ավելի թեթև, իսկ հիմա մանիշակի պես կորագլուխ, ձմեռվան աստղի պես տխուր, շուքի պես փախուսիկ կը տեսնեմ զքեզ... Աղջիկս, բա՛ց սիրտդ, ինչպես կը բանա վարդն իր թերթերը առտվան գուրգուրացող ցողին... Խոսե՛... ի՞նչ ունիս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Զքեզ, հայր իմ։

ԲԱԲԵԼ.— Բայց սրտիդ մեջ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Զքեզ, հայր իմ։

ԲԱԲԵԼ.— Աղջիկս (կը գրկե)։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Միշտ զքեզ, հայր իմ։

ԲԱԲԵԼ.— Շահանդուխտ, կը խաբես զիս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Տես երկինքը ինչպես գեղեցիկ է, հայր իմ։

ԲԱԲԵԼ.— Դուն երկնքեն ավելի գեղեցիկ ես։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց դու զիս կը ծաղրես, հայր իմ... Ես գեղեցի՞կ... երբ անցյալ օր խաչելության պատկերը զարդարելու համար ծաղիկ կը ժողովեի առվակին քով, ինքզինքս անդրադարձած տեսա անոր մեջ, հիշատակ մը սիրտս շարժեց, արցունք մը կաթեց հոն աչքես և կաթիլ մը կրցավ պատկերս խանգարել. ա՜հ, որչափ վշտացա, հայր իմ, երբ կարծեցի թե ալ չի պիտի սիրվեի։

ԲԱԲԵԼ.— Ուսկի՞ց, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Քեզնե, հայր իմ... վասնզի դու գեղեցիկը շատ կը սիրես։

ԲԱԲԵԼ.— Գեղեցիկեն ավելի՝ բարին։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ճշմարիտ է, հայր իմ... Եթե իմ առջիս խաչ մը և թագ մը դնեն, ուրախությամբ խաչը կը գրկեմ... Եթե պատան մը և ծիրանի մը դնեն, պատանը կընդունիմ, կը սիրեմ այն՝ որ արցունք և տխուր է, կը սիրեմ այն՝ որ երկինք կը

տանի... կը սիրեմ այն՝ որ գեղեցիկ և բարի է հրեշտակի նման, ճաճանչի նման, շուքի նման, շունչի նման. կը սիրեմ այդ ալևոր մազերդ, որ գեղեցիկ և բարի են... Վերջապես կը սիրեմ զքեզ, հայր, վասնզի գերեզմանս ես։

ԲԱԲԵԼ.— Ի՞նչ կըսես, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Այո՛, հայր իմ, չեմ սխալիր. դու իմ գերեզմանս ես։

ԲԱԲԵԼ.— Բայց չեմ հասկնար, աղջիկս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Այդ սպիտակ վարսերը ամպերու նման կենացդ հորիզոնը կը ծածկեն, զիս մինակ կուզես թողուլ... (մեկուսի) Բայց Հրաշյա՜յն...

ԲԱԲԵԼ.— Աղջիկս, կը մոռնա՞ս մորդ այս պահապան հիշատակը... Բայց դարձյալ ես չի պիտի մեռնիմ... մորթ, ոսկր և շունչ պիտի ըլլամ... պիտի լամ, պիտի զարնեմ, պիտի հեծեմ, պիտի անիծեմ... պիտի պաշտպանեմ աղջիկս ինչվան...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Մա՞հս, հայր իմ։

ԲԱԲԵԼ.— Ո՛չ... Սակայն դու հանդարտ եղիր, աղջիկս... Մնաս բարով։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՞ւր կերթաս, հայր իմ։

ԲԱԲԵԼ.— Քեզի ըսի արդեն, որ զինվորական թոշակս առնելու պիտի երթամ... Մի՛ վախնար, եթե մինակ ըլլաս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Քաջասիրտ զինվորի մը աղջկանը կը վայլե՞ վախնալ, հայր իմ։

ԲԱԲԵԼ.— Հիրավի այնպես է, աղջիկս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ե՞րբ պիտի դառնաս, հայր իմ։

ԲԱԲԵԼ.— Արևը մտնելու ատեն գուցե... Մնաս բարով։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Երթաս բարով, հայր իմ, (կը մեկնի)։

Տեսիլ Բ

Շահանդուխտ (առանձին)

Գնա՛, հայր... այլ մի դատապարտեր աղջիկդ... Ի՞նչ ընեմ, բնությունը սիրտ մը տվավ սիրելու համար, միթե չը՞ սիրվիր երկինքը, չը՞ սիրվիր այն՝ որ հուր աչեր, բարի սիրտ, գութ, գորով և անմեղություն ունի... Երանի թե բոլոր օրերը

գիշեր ըլլային և ես երկնքի փալփլուն աստղերուն հետ միշտ լայի. կը սիրեմ, այլ կարտասվեմ, երջանիկ եմ, սակայն կուլամ. կուրծիս տակ բոց մը կա, որ անուշ խունկի մը նման սիրտս կը վառե և անոր բույրին մեջեն կը սահին ոսկեթև երազներ, միշտ ամպերու նման կը սահին և արցունք կը սրսկեն... Ո՜հ, Հրաչյա, քու առաջին նայվածքդ կենացս արշալույսն էր, ես անկե առաջ նոճիի ստվեր մը, թշվառի ժպիտ մը, առկայծյալ ջահ մը և անզգա պաճուճապատանք մ'էի հորս գիրկը. դու գթացիր ինծի, շունչ տվիր ինծի, երբ «կը սիրեմ զքեզ» ըսին շրթներդ և աչերդ, երբ ձեռքս քո դողդոջ ձեռացդ մեջ դողաց... Հայրս բան մը չը գիտե, գնաց հանդարտ սրտով... (պատուհանը երթալով) ահա բլրակին գագաթը հասեր է, կարծես թե կեցեր և դեռ հոս կը նայի... կը քալե... աներևութացավ բլրակին ետև... դեռ Հրաչյա չանցնիր... Բայց ո՞վ են այս երկու անձերը, որ ճամբուն վրա կեցած իրարու կը փսփսան և մերթ ընդ մերթ հոս կը նային... Երկուքեն և ոչ մեկը Հրաչյայն է... (տեսարանը գալով) Բայց անշուշտ որսեն զարձած ատենը հոս կը հանդիպի. նա չը խաբեր զիս... Հրեշտակի պես անմեղ է... Հրաչյա՜... Անունն ալ ի՞նչ գեղեցիկ... սակայն չեմ համարձակիր զինքը հրեշտակ կոչելու...

Տեսիլ Գ

Շահանդուխտ, Արտաշիր և Սմբատ

ԱՐՏԱՇԻՐ.— Բարև, ազնիվ օրիորդ, կրնա՞ս ապաստան շնորհել երկու հոգնած ճամբորդներու։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ազատ եք, տյարք իմ, եթե կը հաճիք այսպիսի խեղճ տնակ մը ձեզի ապաստանարան ընտրելու։

ՍՄԲԱՏ.— Շնորհակալ ենք, բարեսիրտ օրիորդ։

ԱՐՏԱՇԻՐ.— Կարծեմ կրնանք սա աթոռներուն վրա քիչ մը հանգչիլ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Այո՛, տյարք իմ, թեպետև հին են։

ՍՄԲԱՏ.— Հոգ չէ, բավական է որ մեր հոգնութիւնը փարատեն (կը նստին)։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Մինակ գիտնալ պետք է, որ զինվորի մը տունը չը կրնար ասկե քիչ խեղճ վիճակ մը ունենալ։

ԱՐՏԱՇԻՐ.— Հայրդ զինվո՞ր է, օրիորդ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Այո՛, տեր իմ, ծերունի զինվոր մը։

ԱՐՏԱՇԻՐ.— Հիմա հոս չէ՞ ինքը։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՛չ, տեր իմ, դուրս ելավ։

ՍՄԲԱՏ.— (ցած, առ թագավորն) Խիստ գեղեցիկ է, տե՛ր արքա... լսածնես ավելի։

ԱՐՏԱՇԻՐ.— Մանավանդ իր անուշ ձայնը սիրտս շատ գրավեց... Կուզեմ քովը մոտենալ, Սմբատ։

ՍՄԲԱՏ.— Ազեկ չես ըներ, տեր իմ, կը վախնամ որ հրեշտակային դեմքեդ շատ զարհուրի։

ԱՐՏԱՇԻՐ.— Այդչափ տգե՞ղ եմ, թշվառական։

ՍՄԲԱՏ.— Ո՛չ, տեր իմ, դուն քեզ գեղեցիկ կը նշմարես... Անիծյալ բլյան նախանձատ աչքերը, որ ագեզությունդ նբեսիդ կը զարնեն։

ԱՐՏԱՇԻՐ.— Խեղկատակ... (շուրջ կողմը կտկտ զննել)։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (մեկոտի) Բայց այս մարդկը ինչ փսփսացին, Աստվա՛ծ իմ... Ի՞նչ էորոնեն շորս կողմերնին։

ՍՄԲԱՏ.— (նույնպես) Բայց ես հոս խաչեր և զենքեր կը տեսնեմ, տե՛ր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Զենքե՞ր, մենք ալ ունինք... Խաչերն ի՞նչ կրնան ընել մեզ, Սմբատ։

ՍՄԲԱՏ.— Մանավանդ քեզի, որ խաչակնքելդ անգամ կը սոսկաս՝ վախնալով որ աչքդ կը կուրցնես։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց ես կըսեմ, թե ես այսչափ գեղեցիկ երբեք տեսած չեմ։

ՍՄԲԱՏ.— Նորերը միշտ նախամեծար կըլլան, տե՛ր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— (բարձր, առ Շահանդուխտ) Ամուսնացյա՞լ ես, օրիորդ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (կարմրելով և աչքերը խոնարհեցնելով) Ո՛չ, տեր իմ...

ԱՐՏԱՇԻՐ.— Ճշմարի՞տ կըսես, քեզի պես գեղեցիկ աղջիկ մը ամուսնացած չըլլա, զարմանալի բան։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (ենթադրելով) Տարօրինակ կը խոսիս, տեր իմ։

ԱՐՏԱՇԻՐ.— Կը հաճի՞ս հոս քովերնիս նստիլ, օրիորդ... որ ենք քաղաքին վրա խոսինք։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (փիչ մը խստությամբ) Շնորհակալ եմ, տե՛ր իմ...

Մեր քաղաքին մեջ մոլի թագավորի մը պատմութենեն ու չարիքներեն ուրիշ բան չիկա։

ՍՄԲԱՏ.— (ցած առ արքայն) *Գողգոթան փուշ կը փնտռես, տեր արքա։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (մեկուսի) *Աստված իմ, ազատե՛ զիս այս պըժգալի նայվածքներեն։*

ԱՐՏԱՇԻՐ.— (ցած, առ Սմբատ) *Ապո՛ւշ, կը կարծես որ խաչին ստորոտը Հոմանի Մարիամներ չե՞ն գտնվիր։*

ՍՄԲԱՏ.— (նույնպես) *Բայց բախտը միշտ սուրբ Մարիամներու կը հանդիպեցնե քեզ, տեր արքա։*

ԱՐՏԱՇԻՐ.—(նույնպես) *Պալատը զայն աղեկ կը մկրտե։*

ՍՄԲԱՏ.— *Ճշմարիտ է, Արտաշիրի պալատն անմեղներու քավարան մ'է ի շնորհս պալատականներու. խե՜ղճ եղնիկներ, հսկա եղջյուրներով ասդին անդին կը տատանին ու կը թափառին իրենց թագավորին համար ծաղիկ որսալու։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.—(մեկուսի) *Որչա՜փ կը սոսկամ, աստվա՜ծ իմ։*

ԱՐՏԱՇԻՐ.— (ցած) *Է՜հ, ի՞նչ պիտի ընենք, Սմբատ։*

ՍՄԲԱՏ.— *Ծերունի զինվորեն կը վախնամ, տեր արքա, պետք է զայն կերպով մը բանտ նետել... Հետագա պարագաներն ինծի թող։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Այդ դյուրին է... Բայց շուտ գործադրելու է... վասնզի ես խիստ սիրեցի այս աղջիկը... գուցե ամենեն ավելի։*

ՍՄԲԱՏ.— *Է՜հ, ի՞նչ, սատանան դարձյալ փորդ մտավ... Երթանք և դեռ կը խորհինք, տեր արքա... բավական է որ աչքովնիս տեսանք գեղեցիկ ըլլալը։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Այո՛, երթանք, եթե դեռ հոս կենանք... կը հասկընա՞ս* (ոտքի կելնեն)։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (ուրախությունը ծածկել ուզելով) *Կերթա՞ք, տյարք իմ։*

ՍՄԲԱՏ.— *Այո՛, օրիորդ, շատ շնորհակալ ենք, հոգնությունիս բավական փարատեցինք։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Մնաս բարով, օրիորդ...* (երթալու ատենը Շահանդուխտի վրա չարաշուք նայվածք մը կը ձգե)։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (սարսռելով) *Ո՜հ, Աստված իմ...* (կը մեկնին)։

Տեսիլ Դ

Շահանդուխտ, (հետո) Սուրմակ

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.—(առանձին) *Որչա՜փ սոսկացի,, տե՛ր Աստված... Ասոնք մարդակերպ հրեշներ էին, աչքերնին դժոխոց բոցերուն պես կը փալփլեին, նախազգացում մը ինձ մոմռաց, թե ասոնք դահիճներ էին... Հայրս գնաց՝ այս մարդիկը եկան, ասոնք գացին՝ հայրս չի պիտի գա...* (պատկերին առջև ծնրադրելով բազկատարած) *Ո՜վ խաչ, քու թևերուդ տակ պահպանե իմ ծերունի հայրիկս ալ։*

ՍՈՒՐՄԱԿ.— (ներս մտնելով, մեկուսի) *Կաղոթե...*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (ոտնաձայնը առնելով և աչքը համբուրելու երթալով) *Բարի եկար, տեր հայր։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Բարի տեսանք, աղջիկս... Կաղոթեի՞ր...*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Գրեթե, տեր հայր... Հայրս դուրս ելավ, իրեն համար կաղոթեի։*

ՍՈՒՐՄԱԿ.— (նստելով) *Տեսնենք այսօր ի՞նչ մեղք գործեցիր, Շահանդուխտ։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.—(ամչնալով) *Պիտի ներե՞ս դարձյալ, բարեսիրտ հայր...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Անշուշտ, իմ պաշտոնս սիրել և ներել է... Տես, այս Քրիստոսը խաչին վրայեն մարած ձայնով «սիրեցեք ղմիմյանս» կը գոչեր. ես ալ ահա այն երկնային ձայնին հետևելով կը սիրեմ քեզի պես խելոք և մատաղ աղջիկները, և ակամա մարդկային սխալանց մեջ ընկղմելու հակամետ ըլլալուդ, ահա ամեն օր քու նորանոր մեղքերդ քավելու համար անընդհատ կայցելեմ զքեզ։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Պահապան հրեշտակս ես, տե՛ր հայր, եթե դու չըլլայիր, արդյոք ի՞նչպես պիտի այրեի դժոխոց անշեջ հրույն մեջ։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Անշուշտ... Տեսնենք, պատմե մեղքերդ...*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Նախ այսօր չի կրցա եկեղեցի երթալ, վասնզի...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Եկեղեցի չը գացի՞ր... Մե՜ղք... Մե՜ծ մեղք...*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (պաղատալից) *Ո՜հ, հայր սուրբ...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Այո՛... և պատճա՞ռդ։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հայրս զիս իրմեն չը զատելու համար՝ պատվիրեց որ չերթամ։

ՍՈՒՐՄԱԿ.— Անօրե՜ն հայր, որ զքեզ դժոխոց լափյուրինթոսը կը քաշկոնե։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց ի՞նչ ընեմ, հայր սուրբ, շատ կը սիրեմ զինքը։

ՍՈՒՐՄԱԿ.— Զինքը շատ կը սիրե՞ս, քու հրեշտակեդ և հոգևոր հորմե՞դ ավելի. ինքը որ թեև հայրդ, բայց սադայելդ ալ է։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հայրս կը սիրեմ, տեր հայր, բայց զքեզ կը պաշտեմ (մեկուսի) իսկ Հրաչյա՞ս։

ՍՈՒՐՄԱԿ.—(մեկուսի) Ո՜րչափ ալ գեղեցիկ է... (բարձր) Ուրեմն դեռ պատմե։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Քիչ մ՝առաջ երկու ճամբորդ հոգնություն առնելու համար այս տնակը եկան, ես ալ սիրով ընդունեցի զիրենք... Հետո գեշ անձեր երևեցան, վասնզի սոսկալի նայվածք և կերպարանք ունեին. վերջապես մեկնեցան, բայց ես զայրույթ և սոսկում զգացի։

ՍՈՒՐՄԱԿ.— Այդ ճամբորդները երիտասա՞րդ էին։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Գրեթե, տեր հայր։

ՍՈՒՐՄԱԿ.— Դարձյալ մեծ մեղքի մեջ թավալեր ես... Գիտցիր, որ երբեք մեկը չի պիտի ընդունիք տնակը, բացի խոստովանահայրեդ և հորմեդ... Ցավդ և սիրտդ մի՛ բանար ուրիշի մը, եթե անոթի, ծարավ, խոնջյալ և օրհասական ալ ըլլա... Այս պատկերին հետ միշտ առանձին պիտի մնաս. աղոթք և արցունք՝ այս է քու փրկությունդ, միանձնություն՝ այս է քու կյանքդ... Կը հասկնա՞ս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ուրեմն, հայր սուրբ, ի՞նչ պետք է որ ընեմ այսուհետև ալ մեղաց խոր վիրապը չը գահավիժելու համար։

ՍՈՒՐՄԱԿ.— Եկու քովս նստե տեսնեմ... Պիտի ըսեմ, թե ի՞նչ պարտիս ընել։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց ես արժանի չեմ քեզ աթոռակից ըլլալու, տեր հայր, ես ի ծունր կիջնեմ։

ՍՈՒՐՄԱԿ.— Նախ միշտ իմ խոսքիս անսալով անմեղության փիլոնը պիտի զգենուս, աղջիկս... Կը լսե՞ս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.—(Քովը նստելով) Խոսե, քեզի ունկնդիր եմ, հայր։

ՍՈՒՐՄԱԿ.—(մեկուսի) Ո՜հ կը դողամ, չեմ կրնար դիմանալ (սույն միջոցին Հրաչյա կերևի խորը զանոնք կը տեսնե, կանգ կառնե և մտիկ կրնե) Ա՜ղջիկս, քեզի ըսի, թե քեզի պես բարեպաշտ և գեղեցիկ աղջիկները շատ կը սիրեմ և ահա սիրելուս համար է որ քեզ անմեղության ապագա մը կը շնորհեմ... Մրմունջ մը, շունչ մը, զգացում մը, որ զքեզ պիտի վերածնի և գերազանցե... Բայց պետք է որ մեկը չիմանա, մինչև անդամ այս անզգա պատկերը. մոռեցիր որ ըսեմ... (իբրև թե անոր ականջն ի վար խոսելու պատրվակով համբույր մը առնելու կըլլա այտեն)։

Տեսիլ Ե

Նույնք և Հրաչյա

ՀՐԱՉՅԱ.— (հառաջ գալով) Կեցի՛ր, մի՛ տրբապոծեր անմեղ աղջիկ մը։

ՍՈՒՐՄԱԿ.— (սարսափած) Ա՜հ...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (ապշած) Հրաչյա՜...

ՍՈՒՐՄԱԿ.— Ո՞վ ես դու, անօրեն, որ խոստովանության մը սրբարան կապը կի խզես հանդուգն սպառնալյոք։

ՀՐԱՉՅԱ.— Ես քեզ հոն մտիկ կընեի, այդ խոստովանությունը...

ՍՈՒՐՄԱԿ.— Լռե՜..

ՀՐԱՉՅԱ.— Կը տժգունի սև ճակատդ ալ, և լռության տակ ծածկել կուզես ամոթդ ու ոճիրդ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Լռե՛, Հրաչյա... Ներե՛ իրեն, հայր, խնայե՛ իրեն և ինծի, մի՛ պատուհասեր...

ՍՈՒՐՄԱԿ.— Շահանդուխտ, անիծյալ ես, մինչդեռ այս անօրենը կը պաշտպանես և...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ա՜հ, գթությո՜ւն, հա՜յր, թողությո՜ւն...

ՀՐԱՉՅԱ.— Շահանդուխտ... այս սրբազան և սև փիլոնը իր սև սիրտը քեզնե էր ծածկե. այդ մարդը խաչին տակ դարանակալ սադայել մ՝է։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՜հ, Աստված իմ...

ՍՈՒՐՄԱԿ.— Կը համարձակի՞ս...

ՀՐԱՉՅԱ.— Այս մարդը Քրիստոսի հոտին գայլն է... Այս մարդը վատ մ՝է։

ՍՈՒՐՄԱԿ.— Դադա՜...

ՀՐԱՉՅԱ.— Ո՞ւսկից... Քեզնե՞, որ մութին մեջ խաչը տապար կընես. քեզնե՞, որ աղավնիները միայն ճանկերուդ մեջ կրնաս առնել և չես վախնար, որ խաչն ալ, փայտի կտորն ալ հարված մ'ունի։ Դու որ մարդուն երակացը արյունը ծծելով զայն կամակատար դիակ մ'ընել կը ջանաս, դու որ չես դողար Աստուծմե, ե՞ս, ե՞ս դողամ քեզնե։

ՍՈՒՐՄԱԿ.— Գթա՛ իրեն, Աստված իմ և քեզի դարձուր...

ՀՐԱՉՅԱ.— Ա՜հ, հարվածդ չը հաչողիր, դիմակդ կը դնես... ծածկել կուզես շառագունող ճակատդ... Դու չես նետվիր, չես թափեր թույնդ՝ տեսնելով որ ոսոխդ ազատ կը թռչի արծվո մը նման և կրնա քու ապաստանած ժայռերուդ վրա գլուխդ ջախջախել։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հա՛յր սուրբ, դու աղոթե իրեն համար... Ներե՛ իրեն։

ՀՐԱՉՅԱ.— Բայց դու չես սթափիր, Շահանդուխտ, եթե ես վրա չը հասնեի...

ՍՈՒՐՄԱԿ.— Գիտի լռե՞ս վերջապես... Օ՜ն, դո՛ւրս ել այս տեղեն... Ալ բավական եղավ, հանդգնությանդ չափն անցուցիր։

ՀՐԱՉՅԱ.— Շահանդուխտ, այս մարդը խաչը կը կոխկռտե և ուրիշին պաշտել կուտա, այս մարդը սիրտ չունի և ուրիշներուն սիրտ կը քարոզե, այս մարդը փիլոնին տակ դաշույն ունի և կոչնակին գանգյունին մեջ սպանելույն վերջին հեծեծանքը կը խեղդե... Բարեպաշտ և գեղեցիկ աղջիկները կը սիրես, պարո՛ն երեց, խիստ լավ կընես, եթե այդչափ չը սիրես։

ՍՈՒՐՄԱԿ.—(մեկուսի) Ո՞վ կատաղությանս... (բարձր) Աստվա՜ծ իմ, այս մարդը դիվահար մ'է եղեր, ներե եթե ակամա իրեն դեմ զայրացա։

ՀՐԱՉՅԱ.— Այնչափ ապահով եղիր թե ես հիմար չեմ, որչափ որ ապահով ես քու վատ մը ըլլալուդ. Շահանդուխտ, խորշե այս փիլոնեն, որ դիակի պատանք, դագաղի ծածկոց և ոճիրներ քողարկող վարագույր մ'է, այս մարդը եկեղեցին գերեզմանի կը կերպարանափոխե, կը կեղծե, կը խոնարհի, կը սպաննե միմիայն իշխելու համար... Ապառաժ է այս մարդուն սիրտը, միթե կարելի՞ է ապառաժին վրա խաչ տնկել... Նայվածքը գորովալի է, բայց թույն կը թափե, սիրով կը սեղմե ձեռքը, այլ նա կը սառի... Ինչպես օձն իր զոհը անուշահոտության մեջ կը թմրեցնե, նույնպես ասոր սփռած անուշահոտությունը

աստվածային մրմունջներն են... Եթե սիրելի մը ունի աշխարհի մեջ, այն է արյունարբու փառքը, եթե ատելի մը՝ այն է ժողովուրդը... Ասիկա դժոխքեն փախած սև ուրվական մ'է...

(Սուրմակ շարագույժ նայվածք մը կը ձգե անոնց վրա)։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (սարսափած ճիչ մը կարձակե) Ա՜հ։

ՍՈՒՐՄԱԿ.— Ո՞վ հանդուգն, չե՞ս մտաբերեր, որ կղերն իր արդար բարկությանը մեջ կայծակ կամ անեծք ունի... Կուզես որ տարածեմ թևերս։

ՀՐԱՉՅԱ.— Ապո՞ւշ կը խաբես, ավելի օրհնենքեդ կը վախնամ, քան թե անեծքեդ։

ՍՈՒՐՄԱԿ.— Գիտցիր, որ եթե այս խաչյալեն ներել և աղոթել սորված չըլլայի՝ հիմա ոքեզ ափ մը մոխիր դարձուցած էի... Շնորհակալ եղիր, քեզի համար դեռ պիտի աղոթեմ, դու՝ որ ճշմարտության ճամբեն մոլորած, ուրիշներն ալ քեզի պես կուզես մոլորել... Զգուշացի՛ր այդ ճամբեն քայլ մ'ալ և ահա անդունդ մը ունիս... Դու դիս յանդետս նախատեցիր, այլ ես քեզի կը ներեմ... Վրեժը վատերուն կը վայլե... Բայց դարձյալ օր մը պիտի բողոքեմ քու անիրավ զրպարտությանդ դեմ. կը ցավիմ որ չես ճանչեր զիս և բարեգործություններս։

ՀՐԱՉՅԱ.— Կուզե՞ս որ տամ անունդ։

ՍՈՒՐՄԱԿ.— Սուրմակ երեց՝ Հիսուսի Քրիստոսի տրուպ ծառա։

ՀՐԱՉՅԱ.— Միտքդ բեր անցյալդ... Քու անունդ Սուրմակ երեց չէ, այլ...

ՍՈՒՐՄԱԿ.—(սարսափած և սպառնալից) Զգուշացի՛ր...

ՀՐԱՉՅԱ.— Սմբատ է... Պալատական։

ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի) Ո՞վ երկինք։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Պալատակա՞ն...

ՀՐԱՉՅԱ.— Դու պալատական մ'էիր։

ՍՈՒՐՄԱԿ.— Պիտի լռե՞ս...

ՀՐԱՉՅԱ.— Դեռ մտիկ ըրե... Դու չարագործ էիր, թագուհվույն սիրահարեցար և ուզեցիր զայն կրիցդ զոհել. թագավորն իմացավ, նա քեզ հեռացուց և քու դիտավորությունդ իր վրա փորձեց. հետո զքեզ պալատեն վռնդեց... Դու երեսանկյալ՝ քինախնդիր գացիր վանքը և քանի մը կեղծ արցունք թափելով խաբեությամբ երեց ձեռնադրվեցար. մեկը քեզի չը հարցուց քու անցյալդ, խաչ մը տվին ձեռքդ, և դու զայն սուրի տեղ կը գործածես, կը տեսնես որ ամեն բան գիտեմ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՞վ երկինք։

ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի) Բայց ո՞վ է այս անձը...

ՀՐԱՉՅԱ.— Ճանչեցի զքեզ... Սմբատ...

ՍՈՒՐՄԱԿ.— Թող որ քեզի համար աղոթեմ...

ՀՐԱՉՅԱ.— Քու ոճիրներուդ քավության համար աղոթե, անօրե՛ն... ես զքեզ ճանչեցի, դուն ալ զիս ճանչե (կուրծքը կ բանա):

ՍՈՒՐՄԱԿ.— Հրաչյա՜... Արքայորդին։

ՀՐԱՉՅԱ.— Ես այն ատեն տղա էի, բայց ամեն բան լսեցի... Ո՜ն, կորի՛ր այս սրբավայրեն և մեկ մ՚ալ ոտք չի պիտի կոխես հոս։

ՍՈՒՐՄԱԿ.—(ցած, առ Հրաչյա) Զգուշացի՛ր ուրիշի ըսելու, թե ես Սմբատն եմ։

ՀՐԱՉՅԱ.— Վատարա՜նց։

ՍՈՒՐՄԱԿ.—(երթալով, մեկուսի): Արքա և արքայորդի, դողացե՛ք ինձնե։

Տեսիլ Զ

Հրաչյա և Շահանդուխտ

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ա՜հ, մեզ անիծելու չերթա, Հրաչյա... Ի՞նչ ըրիր։

ՀՐԱՉՅԱ.— Նախ անիծյալ ըլլա այդ անօրենը, որ քու միտդ այդպես շղթայեր է. բա՛ց աչքդ, Շահանդուխտ, քահանա կարծածդ դիմակավոր սատանա մ՚է... Դու կը պաշտպանես այդ անձը, որ մեր անմեղ սերը պիտի սրբապղծեր, երկու լուսոյ ճառագայթներու մեջտեղ սև ամպ մը և երկու նայվածքի մեջ խավար պիտի արձանանար, նա քու աչքերդ կապեր է և լուսո մեջ անգամ քեզ խարխափել կուտա. դուն կուլաս. Շահանդուխտ, նա կը խնդա վրադ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Կը հասկնամ... Մեկդի այս խոսքերը, Հրաչյա, մեր վրա խոսինք։

ՀՐԱՉՅԱ.— Բայց պիտի ատես այդ մարդը, ինչպես պետք է ատել մեր սիրուն դահիճը։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Սակայն ի՞նչ հոգ, եթե բոլոր աշխարհ անիծե և նախատե զմեզ... Ես քու գիրկդ, դու իմ գիրկս, ես քու նայվածքդ, դու իմ նայվածքս, ես քու շունչդ, դու իմ շունչս, սիրույս մեջ այնպիսի հեշտ կաթիլ մը կզգամ, զոր չարդը երբեք ունեցած չէ. այնպիսի ճաճանչ մը, զոր Արտաշեսի թագը չուներ, այնպիսի երազ մը, զոր քերթողը վերջալուսին հետին ճառագայթներուն մեջ չերևակայեր... Սե՜ր, սե՜ր, չի կրնար գրվիլ երկնի բոցավառ աստղերուն նման. բայց ի՞նչ է սերը, եթե ոչ դուն...

ՀՐԱՉՅԱ.— Բայց ի՞նչ ունիս, Շահանդուխտս... Կուլա՜ս...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Միթե կարելի՞ է առանց արցունքի սիրել... Միթե դու չե՞ս լար, Հրաչյա, ահա երկնագույն աչքերդ սքողված են... Միթե չե՞ս ուզեր մեռնիլ...

ՀՐԱՉՅԱ.— Այո՛... մեր սրտերը մեկ արձագանք մը ունին... Բայց եթե կոհակի մը մեջ նետվինք՝ մեր վրա ծավալող կոհակին վերջին ծալքը մրմունջ մը ունի. եթե դաշույնով մեռնինք՝ մեր կսկիծը տրտունջ մ՚ունի, մեր արյունը դարձյալ ձայն մ՚ունի... չը գիտե՞ս որ ամեն ձայն ալ երկնի մեջ արձագանք մը ունի... Միթե կարելի՞ է, որ երկու հովերու պես մարինք առանց ձայնի և կորնչինք փլատակի մառախուղի և ամպերու մեջ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Եվ կը կարծե՞ս, որ թողուն մեզ որ հանգիստ սիրենք զիրար... Ի՞նչ է մեր ըրածը. սիրել, ապրիլ միմիայն իրարու նայվածքի մեջ... Եթե զիրար ատելու ըլլայինք, այն ատեն ամենքը մեզ կօգնեին և հարյուրավոր ձեռքեր սրով կը նպաստեին, և մեր հայրերն իսկ մեր զինավարժը կըլլային. ի՞նչ կյանք... Միթե սիրե՞լ է այս... Վախնալ և հուսալ ձայնե մը, տրոփե մը, տերևե մը, լույսե մը, մութե մը, շունչե մը, շուքե մը, վերջապես իրարմե... Կանցնին աշխարհի փառքերն ու վայելքները. մենք անոնց ստվերին տակ երկու աննշան ծաղիկ էինք գիրկընդխառն փթթած, դեռ կոկոն էինք, բացվեցան մեր թերթերը, տեսանք զիրար, ժպտեցանք, պիտի թոռմինք. . Հրաչյա, դեռ գրկե՛ զիս...

ՀՐԱՉՅԱ.— Բայց վայրկյան մը աչքերուս մեջ նայե... Որչա՜փ գեղեցիկ ես... Ո՜հ, չէ՛, չը մեռնինք, Շահանդուխտ, դեռ ապրինք, երկուքնիս ալ նորատի ենք... Դեռ բուրաստանը չը մտած՝ միայն բուրումներ կզգանք, տեսնենք ծաղիկներն ալ, նախ անոնք մեր շուրթներուն վրա թոռմին, հետո մեր նայվածքները անոնց վրա... Օր մը անշուշտ միատեղ պիտի մեռնինք... Դու առաջ ամոթահար էիր, հիմա ալ՝ վշտահար... Դեռ չեմ տեսեր ժպիտդ, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ես չեմ կրնար ժպտիլ մինչդեռ կը սիրեմ, Հրաչյա... Ես մեռնելու համար կը սիրեմ, կը մեռնիմ սիրելու համար. սիրո մեջ կյանքը մահ է, իսկ մահը՝ անմահութիւն. մենք չունինք պալատ, ոսկի, ծառա, այլ հովեն տատանող խարխուլ տնակի մը մեջ կը սիրենք. եթե սա բլրակին վրա, սա ծառին հովանիին տակ, լուսնի շաղին մեջ իրարու քով վախկոտ նստած տեսնե մեզ ազնվականը, և երբ մեր շառագույն ճակատը մեզ մատնե, թե զիրար կը սիրենք, կը խնդա մեր վրա այն անսիրտը... Աղքատը սիրտ կունենա... Ո՞վ շուքի մը շունչ և հիշատակ պիտի տա... Հրաչյա, եթե չըսեիր առաջին օրը, թե պարզ զինվոր մ՚էիր, եթե իմ հորս բախտակիցը չըլլայիր՝ չէի կրնար զքեզ սիրել... Բայց ինչո՞ւ կարմրեցար...

ՀՐԱՉՅԱ.— Մեր վիճակին վրա կը կարմրիմ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Իրավունք ունին, խեղճ զինվորներն իրենց արյամբը թագավորին և ազնվականաց երջանիկ ապագայն կը գնեն, բայց դարձյալ անոնցմե կը նախատվին, վասնզի ձայն չունին, վասնզի ցնցոտին մարդը անարգության կը դատապարտե... Աղքատն իր տնակին մեջ չոր և նեխոտ հացով կը գոհանա, իսկ հարուստին ապարանը նոր խորտիկներ կը հընարվին... Զինվորը պատերազմի փողին գոռումեն կը սարսռի, վասնզի իր սիրելիեն պիտի բաժնվի, թագավորը անդին կույս աղջիկ մը կառևանգե մորը գրկեն... Ի՜նչ սոսկալի են ասոնք, ո՜հ, որչափ երջանիկ եմ որ աղքատ ծնա, աղքատության մեջ սիրտը չը կորսուիր... այս խաչյալն ալ աղքատ էր, բայց ո՛չ նվաստ... Նա թեպետ Աստված՝ կոխկռտեց ոսկին ու ծիրանին և միայն սեր ու ցնցոտի հագավ... որչափ կը սիրեմ այն Քրիստոսը, որ քեզ ալ ինծի տվավ։

ՀՐԱՉՅԱ.— Ո՜հ, այդ անունը ինծի համար խիստ քաղցր է, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Չիս շատ կը սիրե՞ս, Հրաչյա։

ՀՐԱՉՅԱ.— Քու սիրտդ չը մրմնջեր. Բե ես քեզ որչա՜փ կը սիրեմ, վասնզի սեր բառը գուցե իմ սերս չը կրնար բացատրել... Կը հասկնամ, Շահանդուխտ, կինը սիրելե ավելի կուզե սիրվիլ... Բայց ես գոհ կըլլամ միայն սիրելով, Աստուծմե ավելի պետք է սիրեմ զքեզ, վասնզի դու զիս Աստուծո կը տանիս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ի՞նչ ըսիր, Հրաչյա՜։

ՀՐԱՉՅԱ.— Բայց ինչո՞ւ սոսկացիր, դու իմ սիրույս չափը կուզես իմանալ... Ո՜հ, ներում, Շահանդուխտ, եթե դու հրեղեն մ՚ըլլայիր և եթե Աստուծմե գերագույն մեկն ալ եղած ըլլար, անկե ալ ավելի կը սիրեի, Շահանդուխտ, ո՜հ, ո՞վ ես դու...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Քու եղբայրդ... Ներե... հանցավորը ես եմ...

ՀՐԱՉՅԱ.— Ա՜հ, որչա՜փ գեղեցիկ է մարը մտնող արևուն ճառագայթը քու սիրահար ճակտիդ վրա... Որչա՜փ փառազարդ է այս տնակը, ուր քու շրթունքդ եղբայր կը կոչեն զիս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Արևը մարը կը մտնե... Ուրեմն պիտի բաժնըվինք, Հրաչյա։

ՀՐԱՉՅԱ.— Անտանելի է այս, եթե կուզես, չենք բաժանվիր։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հայրս հիմա կը դառնա... Պետք է որ մեր սերը գաղտնիք մ՚ըլլա։

ՀՐԱՉՅԱ.— Իսկ եթե իմանա։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Վրեժ կառնե... Զմեզ չսպաններ, այլ կը բաժնե։

ՀՐԱՉՅԱ.— Սոսկալի է այդ, եթե մեռնիլ ըլլար՝ միատեղ կը մեռնեինք։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Սա արևուն վերջին կարմիր ճառագայթը զքեզ բնակարանդ կը դարձնե։

ՀՐԱՉՅԱ.— Ուրեմն... մնաս բարյավ, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Երթաս բարյավ, Հրաչյա, անշուշտ չես մոռնար զիս։

ՀՐԱՉՅԱ.— Աշխարհ թող զմեզ մոռնա (կը մեկնի)։

Տեսիլ Է

Բաբել և Շահանդուխտ

ԲԱԲԵԼ.— (շփոթած ներս մտնելով) Շահանդուխտ, ո՞վ էր այն երիտասարդը, որ հիմա տնակեն դուրս ելավ և զիս տեսնելուն շփոթեցավ... Խոսե՛, ո՞վ էր այն... Չե՞ս պատասխաներ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (թոթովելով) Հայր իմ...

ԲԱԲԵԼ.— Կը կարմրիս... Ա՜հ, պատասխանե՛, ի՞նչ գործ ուներ այն երիտասարդն այստեղ. ինքն ազնվական մը կերևեր։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Կը սխալիս, հայր իմ, նա ալ քեզի պես զինվոր մ՚է։

ԲԱԲԵԼ.— Խաբեր է քեզ անիկա... Ա՜հ, միակ աղջիկ մը ունիմ, այն ալ կուզեն ձեռքես կորզել... կայծակ մ'ալ ճաղատ ճակատիս զարնել... Բայց դարձյալ կը կրկնեմ, ի՞նչ գործ ուներ նա հոս... Ո՞վ էր։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հա՛յր իմ, գթա՛ ինծի, դեռ աղջիկդ եմ...

ԲԱԲԵԼ.— Թերեմն դեռ չե՞ս պատասխաներ... Պետք է որ իրեն հարցնեմ (երթալու կելլա)։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՞ւր կերթաս, հա՛յր իմ։

ԲԱԲԵԼ.— Պիտի տեսնվիմ անոր հետ... Գուցե սրով...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՜հ, զի՛ս սպաննե, հայր իմ, անոր տեղ... Հանցավորը ես եմ։

ԲԱԲԵԼ.— Ուրեմն կը սիրես զինքը հեթանոս գաղտնի, աղնվական մը, զոր ես կատեմ... Ուրեմն դու ալ իմ աղջիկս չես, ես միակ եմ, միակ աշխարհիս վրա, և այսուհետև գերեզմանի քարերն են իմ կնճռոտ ճակատիս բարձ... Ա՜հ, Շահանդուխտ, ի՞նչպես չը գթացիր հորդ ալևոր մազերուն... Կուզես որ արցունք քալեն հորդ ցամքած աչերեն։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հանդարտե՛, հայր իմ, ինքը քու որդիդ է...

ԲԱԲԵԼ.— Երթամ տեսնել, թե իրոք որդի՞ս է, թե որդեսպան մը։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Կեցի՛ր, հայր իմ... դեռ կեցիր... (ոտքը կիյնե, Բաբել գացած ատենը դատավորը և գինվորներ կը դիմավորեն)։

Տեսիլ Ը

Նույնք, Բանտապետ մը և Զինվորք

ԲԱԲԵԼ.— Բանտապե՛տ... Կը տեսնե՞ս, այն վատը ղրկեց ասոնք։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (մեկուսի) Այն երկու անձինքը...

ԲԱՆՏԱՊԵՏ.— Դո՞ւ ես Բաբել զինվորը...

ԲԱԲԵԼ.— Այո՛, ես ինքս եմ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՞ւր պիտի տանիք հայրս։

ԲԱՆՏԱՊԵՏ.— Մեղապարտից բանտը։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՜վ երկինք, սակայն հայրս անմեղ է...

ԲԱԲԵԼ.— Բայց ի՞նչ ըրի ես, ես իմ վիճակիս վրա կուլայի հիմա։

ԲԱՆՏԱՊԵՏ.— Դատավորին հրամանն այսպես է... Զորակա՛նք, կապեցեք զինքը։

ԲԱԲԵԼ.— Սակայն զիս աղջիկես չի պիտի բաժնեք...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Աշխարհիս վրա միակ հայրս ունիմ... Ձե՞ք լսեր...

ԲԱՆՏԱՊԵՏ.— Զորականք, դատավորին հրամանը գործադրեցեք... (զորականները կը պաշարեն, զայն կը կապեն)։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հա՛յր իմ, կը բաժնեն զմեզ իրարմե։

ԲԱԲԵԼ.— Շահանդուխտ, հարգե հորդ պատիվը...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ցակայն անմեղ է ինքը, չե՞ք լսեր, անգութ մարդիկ։

ԲԱԲԵԼ.— Աղջիկս... Ա՜հ, չկա արդարության պաշտպան մը (խաչելության պատկերը կախված տեղեն կիյնե)։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (սարսափած) Աստվա՜ծ իմ, պատկերը կործանեցավ։

ԲԱԲԵԼ.— (սուրը նետելով) Ուրեմն առ հորդ սուրը (Վարագույրը կիջնե)։

<(ՎԵՐՋ Ա ԱՐԱՐՎԱԾԻՆ)>

ԱՐԱՐՎԱԾ Բ

Արտաշրի պալատը մեծ և փառավոր սրահ մը.— Ջանազան շքեղ կարասիք,— Խորը մեծ և բաց դուռ մը և ճեմելիք մը, ուստի երկինք և լեռներ կերևին.— Գետ մը կը հոսի պալատին առջևեն։

Տեսիլ Ա

Շավարշ և Սմբատ (ներս մտնելով)

ՍՄԲԱՏ.— Ի՞նչ ըրիր, Շավարշ, օրհնած ջուրը թագուհվույն տվի՞ր։

ՇԱՎԱՐՇ.— Այո՛, տեր իմ, բայց ի՞նչ կը նշանակեր ատիկա։

ՍՄԲԱՏ.— Ի՞նչ պիտի նշանակե, ապո՞ւշ... Այսօր Սահակ կաթուղիկոս Սուրբ խաչի նորակառույց վանքն առաջին անգամ պատարագ մատույց և իր կողմանե պալատ ղրկեց մեծազոր խաչին օրհնած ջուրը։

ՇԱՎԱՐՇ.— Ո՜հ, շատ կը ցավիմ, որ կաթիլ մը չը խմեցի։

ՍՄԲԱՏ.— Գուցե խելքդ գլուխդ կուգար, (մեկուսի) կը թունավորվեիր, ապուշ... Հիմա ո՞ւր է թագուհին։

ՇԱՎԱՐՇ.— Աղոթարանն է, տեր իմ։

ՍՄԲԱՏ.— Կաղոթե՛ անշուշտ. (մեկուսի) դեռ ազդեցություն չըրավ թույնը։

ՇԱՎԱՐՇ.— Կը հուսամ, որ խաչին զորությունը կը մխիթարե զինքը, վասնզի սրտամաշ վիճակի մը մեջ է. ժամանակե մ'ի վեր միշտ աղոթարանը կառանձնանա։

ՍՄԲԱՏ.— Շիտակ խոսե, Շավարշ, քեզի բան մ'ըսած չունի՞։

ՇԱՎԱՐՇ.— Բնավ, տեր իմ... Մինչև անգամ երեսս ալ նայած չունի։

ՍՄԲԱՏ.— (մեկուսի) Կը հավատամ, վասնզի կատարյալ ապուշ մ'է, (բարձր) Շավարշ, կը հասկնամ որ թագուհին հիվանդ է և այսօր կամ վաղը Հայաստան իր թագուհին պիտի կորսընցունե... Թագուհին կամ պիտի խենթենա կամ պիտի մեռնի, ինչպես որ մայր թագուհին ալ խենթենալուն համար թագավորը պալատեն վռնտեց զայն։

ՇԱՎԱՐՇ.— Բայց թագուհին խելացի և առողջ է, տեր իմ։

ՍՄԲԱՏ.— Կը վախնամ, որ յուր խելքը պիտի կորսնցունե զինքը։

ՇԱՎԱՐՇ.— Այդպես անգթաբար մի՛ խոսիր, տեր իմ, եթե կը հավատաս, ամեն վայրկյան իրեն համար կաղոթեմ և կը հուսամ, որ Աստված լսե ինձ ալևոր մազերուս շնորհիվ... Թագուհին շատ բարի է, այնպես չէ՞, տեր իմ։

ՍՄԲԱՏ.— Գուցե (մեկուսի), բայց զիս կատե. (բարձր) թագուհին գաղտնիք մը ունի, որուն ես մինակ թափանցած եմ, նա միշտ թագավորեն հեռու կը բնակի... Գրեթե կատե թագավորը, վասնզի զինքը կը կաշկանդե սիրո մեջ... Երբեք տեսա՞ծ ես անծանոթ մը թագուհվույն հետ... Շիտակ խոսե։

ՇԱՎԱՐՇ.— Բնավ, տեր իմ... Անիրավ տեղը կը դատապարտես զինքը։

ՍՄԲԱՏ.— Դուն կը քնանաս, ապուշ, նա կը սիրե...

ՇԱՎԱՐՇ.— Աստված իմ, չեմ հասկնար միտքդ։

ՍՄԲԱՏ.— Դու ծերունի ես, միայն երկինք նայելով մազերդ ճերմկցուցեր ես, դուն դիտե՞ր ես դժոխոց բոցավառ խորերը, պալատի մը կամ տնակի մը մեջ աշխարհ քեզի համար տանիքին վրայեն կանցնի, այնպես չէ՞։

ՇԱՎԱՐՇ.— Կաղաչեմ, տեր իմ, ատանկ դժվար հարցումներ մի՛ ըներ ինծի։

ՍՄԲԱՏ.— Ուրեմն քանի որ խելքդ չը հասնիր՝ քեզի համար լռել պետք է աշխարհի վրա, լռել՝ ինչ որ ալ պատահի... Այն՝ որ չը հասկնար՝ հարկ է որ լռե. անշուշտ կիմանաս թե ի՛նչ է լռելը։

ՇԱՎԱՐՇ.— Այդ դյուրին է... և քանի որ կը պահանջես...

ՍՄԲԱՏ.— Պիտի գործադրես, այնպես չէ՞, եթե ոչ կը վռնտվիս պալատեն, կը հասկնա՞ս, Շավարշ։

ՇԱՎԱՐՇ.— Ո՛հ, տեր իմ, կենացս հանգիստը չը խանգարող ի՛նչ բան որ ըսես՝ կը կատարեմ... (մեկուսի) վասնզի անկե դյուրին բան չկա։

ՍՄԲԱՏ.— Ուրեմն իմ խոսելուս կարգն անցավ և քու լռելուդ կարգը եկավ, զգուշացի՛ր, Շավարշ... Գիտես, որ սիրտս և խոսքս բարի է։

ՇԱՎԱՐՇ.— Կը հասկնամ, տեր իմ։

ՍՄԲԱՏ.— Ուրեմն ի՛նչ պաշտոն որ ունիս, գնա սույն վայրկենիս գործադրե. քե՛զ տեսնեմ, թագուհին աղեկ խնամես։

ՇԱՎԱՐՇ.— Շատ աղեկ, տեր իմ, (երթալու ատեն մեկուսի) սատանային պոչին վրա կերդնում, որ բան մը չեմ հասկնար։

ՍՄԲԱՏ.— Շավարշ, արյունաթաթավ գլուխ մը կա... և դու մեկ խոսքով պիտի ձգես զայն, եթե սխալիս։

ՇԱՎԱՐՇ.— Ա՛հ, տեր իմ, կաղաչեմ, այդպիսի սոսկալի պաշտոններ մի հանձնեք ինձ, կը տեսնեք որ հիմակվնե կսկսիմ ղոդալ։

ՍՄԲԱՏ.— Մի՛ սխալիր... լռե՛... Թշնամիներ կան։

ՇԱՎԱՐՇ.— Բայց...

ՍՄԲԱՏ.— Դարձյալ կը կրկնեմ... Պիտի լռես։

ՇԱՎԱՐՇ.— Շատ լավ, տեր իմ։

ՍՄԲԱՏ.— (մեկուսի) Թագուհին հոս կուգա, կարծես թե ավելի գեղեցկացեր է (կը մեկնին)։

Տեսիլ Բ

Հերանույշ և Հրաչյա

ՀՐԱՉՅԱ.— Սա դաշտերուն վրա ակնարկ մը ձգե, մայր իմ, տես որչա՜փ գեղեցիկ ու զվարթ է գարունը. վերը կապույտ և վարը՝ կանաչ օթոց մը. տես սա ծաղիկները, տերևները, սա արծաթի առուները, որ կը սողան, մտիկ ըրե սա սրնգաց ու թռչնոց բյուր երգերը ու գեղգեղը... Հերավի, միթե գեղեցիկ չե՞ն։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Տարփածուի մը համար... կը հասկնամ, Հրաչյա։

ՀՐԱՉՅԱ.— Բայց, մայր իմ...

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Իսկ ատելությունն ու վիշտը անոնց վրա սև վարագույր մը ձգած են, դագաղի ծածկոց մը, որուն վրա խաչ մը, փուշ պսակ մը և կմախք մը միայն բանված են... Այս պալատեն ավելի հեռու կերևի երկինքը. խղճալյաց ձայները այս պալատին սև ու հաստ պատերուն զարնելով՝ անթափանց կը նվաղին և կը թավալին հոն... Եթե արձագանք մը ունին՝ դժոխային ծիծաղ մ'է... Մինակ անսիրտներն ու անխիղճներն կրնան երջանիկ ապրիլ հոս։

ՀՐԱՉՅԱ.— Կը հասկնամ, մայր իմ, հայրս անխիղճ է։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Անսիրտ ալ է, վասնզի իմ աչաց առջև ուրիշներ կը սիրե, թեպետ չեմ ուզեր որ զիս սիրե, սակայն չեմ ուզեր նաև, որ ուրիշները սիրե, խե՜ղճ աղջիկներ, որոնք քանի մը օր թագավորին հետ կենակցելու համար կը թողուն հավիտյան իրենց անմեղ և խաղաղ տնակը, կը նետվին պալատին ցոփության մեջ, կը խամրի իրենց կուսության ծաղիկը, որուն վրա կը շողային երկնից անմեղ արցունքները, զանոնք կը թափեն ոտքերու տակ՝ մարգարիտներ ստանալու համար... Ա՜հ, երանի թե գեղջկուհի մը ըլլայի և սիրվեի, և բոլորտիքս ալ ամենքը սիրեին զիրար։

ՀՐԱՉՅԱ.— Բայց մա՜յր իմ, միթե ես զքեզ չե՞մ սիրեր։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Գիտեմ, Հրաչյա։

ՀՐԱՉՅԱ.— Ուրեմն դեռ ո՞վ...

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Հրաչյա, եթե թագավորը վատթար ըլլա, ժողովուրդը թագուհին ալ մեկտեղ կը դատապարտե. չե՞ս տեսներ, որչափ լքյալ ու թշվառ է Հայը քու հորդ թագավորության ժամանակ. օտարները միշտ Հայաստանը կը փեռեկտեն և Հայուն փառաց ջահն ու գահը թավալելու կը տքնին... Հայրդ մինակ հեշտություն և որս կը ճանչե... ազգը թագին մեջ ամփոփած, Հայուն սիրտը կը ճմլե ու կը ճնշե իր արյունոտ գահին ոտքերուն տակ. հորդ ծիրանին անմեղներու արյամբը կարմրեցավ, թագը արցունքներով կը շողա, տուրն ու սաղավարտը ժանգոտեցան. Հայաստան անոր թագ մը տվավ գանձ մը ունենալու համար՝ նա փոխանակ դափնիի՝ շղթաներ կը սփռե նախնյաց շիրիմներուն վրա, նա կը կործանե Հայաստանը՝ անոր փլատակացն ու աճյունին մեջ իր հաճույքն ու հոգին մարելու համար... Թագուհի եղա նախատվելու համար... Շատ ուշ հասկցա, թե ի՞նչ է պալատը, ի՞նչ է թագը։

ՀՐԱՉՅԱ.— Ճշմարիտ է, մայր իմ, սիրո մեջ տնակը պալատ կըլլա և ծաղկե պսակ մը՝ թագ. միթե սիրելը տիրելեն շատ փառավոր չէ՞... կը հավատա՞ս, մայր իմ, ես թագավոր չի պիտի ըլլամ։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Վասնզի հորդ արյունոտ թագովը չես ուզեր անմեղ ճակատդ պճնել։

ՀՐԱՉՅԱ.— Եվ միթե աշխարհի վրա կա՞ թագ մը, որ արյունոտ չըլլա, մայր իմ...

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Հիրավի երանի անոնց, որոնց աչքերը գեղջկային օրրանի մը մեջ կը բացվին, երկինք, սեր և գերեզման միայն կը ճանչեն... Կզգամ որ այս կյանքս շատ չի պիտի տևե, վասնզի կատեմ...

ՀՐԱՉՅԱ.— Մայր իմ, ի՞նչ կըսես... Չե՞ս ուզեր ապրիլ գոնե ինծի համար. ե՞ս որ արքայորդի ու որբ եմ. չե՞ս գիտեր, որ մայր մը թագավոր հորմե մը ավելի կընտրեմ... Դու մեռնի՞ս այդպես գեղեցիկ ու բարեսիրտ։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Մի՛ ըսեր ինձ, թե գեղեցիկ եմ, վասնզի ատելությանս կայծն ավելի կարծարծե այդ բառը... Նախանձն ու վիշտը սրտիս զգացումները խեղդեցին. ես որ բարեսիրտ էի՝ ատելության պատկերն ըրին զիս... Կատեմ ես աշխարհի ճաճանչները, որոնք սիրո ժպիտներ են... Ես ավելի կը սիրեմ՝ երբ երկինք սև, աշխարհ փլատակ և բնությունը լուռ ու տխուր ըլլա։

ՀՐԱՉՅԱ.— Բայց, մայր իմ, չե՞ս խնայեր քու զավկիդ... Այն արցունքները, զոր դու մենության մեջ կը թափես՝ իմ կուրծքիս

Վրա կը կաթին ու կը սառին... Մխիթարվե՛, մայր իմ, շատ անգամ գերեզմանի մը քով ծաղկունք կը փթթին... Մնաս բարով, մայր իմ։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Ո՞ւր պիտի երթաս, Հրաչյա... Կարծեմ կույս մը քեզի կսպասե ծառի մը հովանիին տակ, ուսկից գիրկընդխառն պիտի դիտեք վերջալուսույն հետին կարմիր ճաճանչները և հետո գիշերվան մութին մեջ պիտի համբեք երկնքեն թռչող աստղերը. այնպես չէ՞, Հրաչյա... Ի՜նչ գեղեցիկ է սիրելը և սիրվելը...

ՀՐԱՉՅԱ.— Սակայն, մայր իմ...

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Գնա՛, Հրաչյա... Բայց մեկ մ՚ալ ե՞րբ պիտի տեսնըվինք։

ՀՐԱՉՅԱ.— Անշուշտ վաղ առավոտ, մայր իմ (կը մեկնի)։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Գուցե...

Տեսիլ Հ

Հերանույշ (առանձին)

Որդվույս վրա անգամ կը նախանձիմ... Ա՜հ, թագս կուտայի սիրվելու համար... Հրաչյա աղեկ ըսավ, ի՞նչ է թագը... Սիրո արցունքներով շողացող վարդե պսակ մը անկե գեղեցիկ է, սիրո ժպիտ մը տիեզերքն իր մեջ կամփոփե... Այս մեծաշուք պալատին տեղ ծառի մը շուք բավ է սիրելու համար և անոր տերևներուն մեջ սուլող զեփյուռը փառաց երգերե ավելի փառավոր է... Ի՞նչ է թագը. թռչուն աստղ մը. ի՞նչ է ծիրանին. ժողովրդյան արյամբ կարմրած պատանքի կտոր մը, զոր դարձյալ ժողովուրդը կը կարկտե. ի՞նչ է պալատը. վիրապ մը, ուր մարդիկ շղթա և տապար կը կռեն իրենց նմանները հարվածելու. ի՞նչ է թագավորը. թագ կրող չոր գանգ մը, որ մութին մեջ կը հարվածե. Հայաստան կզգա այս հարվածը և կը ճչե. կանիծե զիս ալ՝ որ թագուհի եմ... Այս պալատը ջահազարդ դագաղ մ՚է, շողշողուն կմախք մը, իսկ ժողովրդյան անեծքը՝ փառաց արձագանքը... Արտաշի՛ր, դու թագ մը տվիր ինձ՝ դագաղեն սոսկալու համար, ծիրանի մը՝ արյունաներկ պատանք մը ունենալու համար...

Խեղճ գեղջկուհին պալատ կերազե, ես ալ՝ իր դաշտը. գուցե գեղջկուհին թագուհի ըլլա, բայց թագուհին գեղջկուհի չըլլար... Որչա՜փ երջանիկ է այն կինը, որ երեկոյին իր ամուսնույն քրտինքը կը սրբե... Ես չեմ կրնար ուրեմն սրբել... Երանի թե ցնցոտի հագնեի, վիշտ կրեի, բայց սիրվեի (խուկուն ու տրտում կը մեկնի)։

Տեսիլ Դ

Սմբատ և Արտաշիր

ՍՄԲԱՏ.—(թագումվույն ետևեն մեկուսի) Միթե ես զքեզ չէ՞ի սիրեր, անգութ, բայց ես հիմար եմ։

ԱՐՏԱՇԻՐ.—(ներս մտնելով) Ի՞նչ ըրիր, Սմբատ։

ՍՄԲԱՏ.— Շավարշ տվեր է, տեր արքա, և նա գոհությամբ ընդուներ է։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ դեռ...

ՍՄԲԱՏ.— Գուցե քիչ մը ետքը, տեր արքա...

ԱՐՏԱՇԻՐ.— Ապահո՞վ ես։

ՍՄԲԱՏ.— Ինչպես ապահով եմ զորականին աղջկան գեղեցկության վրա։

ԱՐՏԱՇԻՐ.— Ա՜հ, թշվառական, սիրույս բոցերը բորբոքել կուզես։

ՍՄԲԱՏ.— Բավական է որ քիչ մը ժամանակի համար ըլլան։

ԱՐՏԱՇԻՐ.— Ի՞նչպես, Սմբատ, չեմ հասկնար։

ՍՄԲԱՏ.— Հսել կուզեմ, թե վաղ առավոտ այն աղջիկը քեզ անկողնեդ գուցե պիտի արթնցնե իր անույշ ձայնովը։

ԱՐՏԱՇԻՐ.— Թշվառակա՜ն։

ՍՄԲԱՏ.— Բայց ասով չեմ ուզեր ըսել, թե այս գիշեր քուն չը քնանա։

ԱՐՏԱՇԻՐ.— Սատանա՜, եթե թագ չունենայի, զիս քու խաղալիքդ կընեիր։

ՍՄԲԱՏ.—(ակնածությամբ) Տեր արքա... Ես ծառայելով գոհ կըլլամ։

ԱՐՏԱՇԻՐ.— Շատ աղեկ կը ճանչեմ զքեզ, Սմբատ։

ՍՄԲԱՏ.— Ուրեմն, տեր արքա, քիչ ատենեն թագուհին դիակ մ՚է, որ ալ ձայն չունի, և թագավորը վաղն իր սիրույն մեջ պիտի

վերածնի, և Սմբատ ալ իր հաղթական ճակատը երկու սիրահարի շառագույն դեմքերու մեջ պիտի փայլեցնե... Այնպես չէ՞, տե՛ր իմ։

ԱՐՏԱՇԻՐ.— Խեղկատա՛կ, միայն գործդ կը պակսի։

ՍՄԲԱՏ.— Միտք ունեցողին համար գործն ի՞նչ է, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Աղեկ խորհե՞ր ես, Սմբատ։

ՍՄԲԱՏ.— Ինչպես որ աղեկ խորհեր եմ Արտաշրի մտերիմն ըլլալու համար։

ԱՐՏԱՇԻՐ.— Ե՞րբ պիտի ճամբա ելնես։

ՍՄԲԱՏ.— Գուցե հիմա։

ԱՐՏԱՇԻՐ.— Զորականին տնակը, այնպես չէ՞։

ՍՄԲԱՏ.— Անշուշտ... Հիմա աղջիկը միանակ է տնակը, և զորականն ալ նույնպես բանտին մեջ միանակ... Միայն Սմբատ կը պակսի։

ԱՐՏԱՇԻՐ.— Արտաշիր ալ թագավոր է, բայց միայն այն աղջիկը կը պակսի։

ՍՄԲԱՏ.— Ուրեմն թագիդ մեկ ադամանդն ընել կուզես զայն, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Անիրավ ես Սմբատ. ավելին... կենացս մեկ կայծն է նա։

ՍՄԲԱՏ.— Թագուհվույն գերեզմանին վրայեն վարդ պիտի քաղես, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Այդ վարդը ցող ունի, այնպես չէ՞, Սմբատ։

ՍՄԲԱՏ.— Տեր արքա, բոցավառ արևուն ճառագայթները շուտով կը ցամքեցնեն զայն։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց բավական է որ մեկ մը թևերուս մեջ տանիմ։

ՍՄԲԱՏ.— Այո՛, տեր արքա, կին մը պետք է որ թագը մոտեն տեսնե, այն ատեն ո՛չ միայն սերը, այլ կյանքն ալ կուտա։

ԱՐՏԱՇԻՐ.— Շատ խորագետ ես, Սմբատ, քեզ տեսնեմ, թագը ոչ տված՝ կարենայի աշխարհ վայելել... Ի՞նչ կընե ինծի ազգը, բայց թագը հրաշքներ կրնա գործել... Թող թագավորը և ժողովուրդը միայն ինքզինքնին մտածեն... Թող առնեն Հայաստանը և ինծի գեղանի հավերժահարսեր տան, ես ատով գոհ կըլլամ... Թագավորի մը մական կը վայլե և ժողովրդի մը՝ սուր, այն հնձե, ես վայելեմ... Սմբատ, երբ միտքս կուգա այն աղջկան գեղեցկությունը, վայրկյան մը թագս անգամ կը մոռնամ։

ՍՄԲԱՏ.— Տեր արքա, գեղանի աղջիկ մը քեզի համար վարդի մը կյանքն անգամ չունի... կը տեսնենք։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց դեռ դու հոս ես, Սմբատ։

ՍՄԲԱՏ.— Քայլ մը տեղ է, լեռ չի կա միջոցը, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Գիտե՞ս երբեմն ծաղիկե մը թույն կը հուսացվի։

ՍՄԲԱՏ.— Ես հոտոտեր եմ, տեր արքա, դու ապահով և հանգիստ եղիր. երբ վերադառնամ, թագուհին մեռած պիտի ըլլա։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ ես իր գերեզմանին դռներեն ավելի լավ պիտի նշմարեմ աշխարհը։

Տեսիլ Ե

Արտաշիր (հետո) Շավարշ

ԱՐՏԱՇԻՐ.— Ի՞նչ գեղեցիկ օր մը պիտի ծագի վաղը, արշալույսին ծագումեն առաջ գեղանի նայվածք մը պիտի բարևե զիս... (կանչելով) Շա՛վարշ։

ՇԱՎԱՐՇ.— Ահավասիկ եմ, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Թագուհին ի՞նչ կընե։

ՇԱՎԱՐՇ.— Իր սենյակը առանձնացած է, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Ըսե, թե կուզեմ իրեն հետ տեսնվիլ հիմա։

ՇԱՎԱՐՇ.— Գլխուս վրա, տեր արքա (**խոնարհելով կը մեկնի**)։

Տեսիլ Զ

Արտաշիր (առանձին)

Հիմա ինքը խոժոռ է. ո՞րչափ կը նախանձի իմ սիրահարությանս վրա... Ի՞նչ ընեմ, կարծես թե կնոջ գեղեցկությունը շուտ կը թոշնի իմ ջերմ համբույրներես... Առջի օրը հրեշտակ մը կը նշմարեմ և հետևյալ օրը գրեթե սրվական մը կը շոշափեմ... Ես կուզեմ հով մ'ըլլալ և ամեն ծաղիկներուն հոտն առնել... Շատ կօգնե ինձ թագը՝ այս շողշողուն իրը, որուն ադամանդները հազարավոր գեղեցիկ նայվածքներ կը շղացնեն, բայց կը տեսնեմ, որ անխնելք կբռնավոր մը կուզե

Թագիս վրա խաչ տնկել... «Ազգ, ազգ» կը գոչե միշտ ինքը, նույն ձայնը սրտիս խորը միակ արձագանք մ'ունի, որ է «Թագ, թագ»... Թագուհին շատ սխալեցավ...

Տեսիլ Է

Արտաշիր և Հերանույշ

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Զիս տեսնել ուզե՞ր ես, Արտաշիր։

ԱՐՏԱՇԻՐ.— Այո՛, Հերանույշ... Զարմանքի մեջ կը տեսնեմ զքեզ։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Կը հասկնաս...

ԱՐՏԱՇԻՐ.— Եթե կը հավատաս, բան մը չեմ հասկնար։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Շատ լավ... Ուրեմն ինչո՞ւ ուզեր էիր զիս։

ԱՐՏԱՇԻՐ.— Ամբաստանութիւն մը կա վրադ... և դու չի պիտի կարենաս արդարացնել ինքզինքդ։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Ամբաստանութի՞ւն մը... և տեսնենք, ո՞րն է այդ։

ԱՐՏԱՇԻՐ.— Հերանույշ, անխելքութիւն չէ՞ միթե, պալատին գաղտնիքն օտարի մը հաղորդելու հանդգնիլը, անխելքութիւն չէ՞ թագուհվո մը ժողովրդյան արձագանքն ըլլալը։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Արտաշիր, անցելույն վարագույրը մի՛ բանար։

ԱՐՏԱՇԻՐ.— Ես ներկային վրա կը խոսիմ, անցյալը ինծի համար շունչ և հիշատակ չունի։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Ապահո՞վ ես թե ներկայն խղճիդ վրա չը ծանրանար։

ԱՐՏԱՇԻՐ.— Այո՛, ներկային մեջ դու իմ կյանքիս թելեն կախյալ ես, ո՛չ զայն բռնելու կարողություն ունիս և ո՛չ կտրելու սուր։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Կը տեսնեմ որ անմեղի մը դագաղին վրա տապար կը դնես՝ զայն դահիճ հրատարակելու համար... Արտաշիր, բավական չեղա՞վ այսչափ ոճիր, այսչափ հարված... Դեռ անմեղ զոհերու արյունը բավական չողողեցի՞ն գահդ... դեռ այսչափ անեծք խղճիդ վրա չը ծանրացա՞ն և դեռ չը կրցա՞ր դժոխք ընել պալատդ։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ դու ալ չը կրցար ասոնց հանդուրժել, այնպես չէ՞։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Գուցե... Ա՜հ, ա՛լ բավական վիշտ կրեցի։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ կը կարծես որ մատնությունդ կը խնամե՞ ցավդ... Կը կարծեմ որ Սահակի խաչը իմ սրույս կը դիմադրե՞... Գուցե քիչ մը ետքը սոսկալի մաքառում մը պիտի սկսի մեր մեջ... Շատ սխալեցար, Հերանույշ... և այդ սխալմունքը շատ սուղի պիտի նստի քեզ։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Դեռ վրե՞ժ կը դավես, Արտաշիր, բավական չէ՞, գեղեցիկ էի, և ուրվական մ'ը ըրիր զիս, թագ մը տվիր և դիակ մ'ըրիր զիս և չես ուզեր որ հարվածիդ տակ հեծեմ... Ատելություն կը սերմանես և կըսես՝ մի՛ ատեր... Զիս չես սիրեր, կուզես որ զքեզ չատեմ... Ա՜հ, Արտաշիր, շատ անգութ ես։

ԱՐՏԱՇԻՐ.— Ես անգութ եմ, թող ուրիշներն ալ ինծի պես անգութ ըլլան, բայց Հայաստան իմս է, ո՞վ կը համարձակի ինծի խոչընդոտ կանգնել։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Նախ քու հորդ ստվերը։

ԱՐՏԱՇԻՐ.— Հայրս հանգիստ է իր գերեզմանին մեջ և եթե անխոհեմությամբ դուրս նետվի, իրեն հետ ալ կը մարտնչիմ... Չեմ ուզեր, որ մեկն ամբարտակ կանգնի դիմացս, չեմ ուզեր, որ ձեռք մը զիս բռնե. եթե խավար ու մոլար է ճամբաս, է՜հ, քայլամոլարի մը համար անդունդներ կան, թող անդունդները զիս պատժեն. Արտավազդ իր երիվարովը գլորեցավ, ես միանակ կը գլորիմ հոն...

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Բայց Հայաստան...

ԱՐՏԱՇԻՐ.— Նա ինձ հետ թող չը գա։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Ուրեմն հեռացի՛ր գահեդ, թոթվե՛ վրայեդ ծիրանիդ, որ զքեզ Հայաստանի հետ կը կապե։

ԱՐՏԱՇԻՐ.— Ա՜հ, այնչափ հիմա՞ր կը կարծես զիս... Ես չեմ ուզեր ապերախտ գտնվիլ, հայրս յուր ձեռքերը չը սառած թագ մը կարկառեց ինծի, թագ մը՝ որ ինծի միայն կը պատկաներ։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Բայց այն թագին վրա հայրենիք և իրավունք գծրված էր։

ԱՐՏԱՇԻՐ.— Չեմ գիտեր. ես բան մը չը կարդացի հոն, միանակ տեսա որ գեղեցիկ էր և գեղեցիկները հրապուրող, և անկե ավելի ի՞նչ պետք է ունենալ ինծի համար աշխարհի վրա։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Արտաշիր, դեռ չե՞ս ամոթահարիր։

ԱՐՏԱՇԻՐ.— Կը տեսնեմ որ շատ նախանձոտ ես գեղեցիկներու դեմ։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Շատ... Բայց ի՞նչ կզգամ, Աստված իմ... Կարծես թե սիրտս կայրի։

ԱՐՏԱՇԻՐ.—(մեկուսի) Թույնը...

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Արտաշիր, ի՞նչ կըլլամ... Սիրտս կը խոշտանգեն... Բայց դու ինչո՞ւ երեսդ անգին կը դարձնես... Քիս մտիկ ընել չես ուզեր... Արտաշիր...

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց ի՞նչ կըլլաս, Հերանույշ, խեղճեցա՞ր։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Արտաշիր, չես գիտեր ի՞նչ տոկալի ցավ է այս... ա՜հ, դիտա՛ խնծի, ազատե՛ գիս այս ցավեն... Կաղաչեմ, կը պաղատիմ։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց չեմ հասկնար։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Օ՛ն, կանչե պալատականները... Օգնությո՛ւն...

ԱՐՏԱՇԻՐ.— Լռե՛...

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Արտաշիր... վրե՞ժ կառնես։

ԱՐՏԱՇԻՐ.— Գրեթե...

ՇԱՎԱՐՇ.—(կես մը երևալով մեկուսի) Կարծես թե օգնության ձայն մը եկավ։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Ա՜հ, անօրեն... կը հասկնամ, քիչ մը առաջ Շավարշին հետ օրհնած ջուր դրկեցիր, թույն խառներ էիր դուն հոս։

ՇԱՎԱՐՇ.— (մեկուսի) Ի՞նչ կը լսեմ, Աստված իմ։

ԱՐՏԱՇԻՐ.— Գե՞շ ըրի, Հերանույշ, կազատեմ զքեզ Արտաշիրեն, կազատեմ զքեզ այն կյանքեն, ուր միայն ատելություն և վիշտ ունեցար։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Դողա՛... ուրվական մը ունիմ։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց ես մեծ քար մը պիտի դնեմ գերեզմանիդ վրա, զոր դու չը կարենաս գլորել և դուրս նետվիլ։

ՇԱՎԱՐՇ.—(մեկուսի) Ի՞նչ կանցնի, հոս, տեր Աստված։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Բայց դեռ ողջ եմ, դեռ կը շարժին շուրթերս, անենչ մ'ունիմ։

ԱՐՏԱՇԻՐ.— Վայրկենե մը հետդ պիտի տանիս։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Երկինք նայե անգամ մը։

ԱՐՏԱՇԻՐ.— Չե՛մ դողար։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Դժոխք նայե ուրեմն։

ԱՐՏԱՇԻՐ.— Չե՛մ տեսներ։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Մեկեն պիտի դողաս և մյուսը պիտի տեսնես. արյունս ճակատդ է, Արտաշիր, անիծյալ ես։

ՇԱՎԱՐՇ.— Ի՞նչ կը տեսնեմ... Թագուհին...

ԱՐՏԱՇԻՐ.— Մեռավ...

(Պալատականք կուգան)

ԱՐՏԱՇԻՐ.—Պալատակա՛նք, թագուհին մեռավ, սև սենյակը տարեք զինքը և քահանա մը կանչեցեք, որ աղոթե ու հսկե իր վրա (պալատականք դիակը կառնեն և խորի կողմնական սրահը կը տեղափոխեն ճենկողնո մը վրա և կը մեկնին): Ամեն բան լմնցավ, քիչ առենեն արևը պիտի ծագե, ի՞նչ երջանիկ եղավ ինծի համար այս գիշերը... Շատ քիչ անգամ զգացած էի կենացս մեջ այսպիսի սեր. զորականին աղջիկը հորը սրովը կարծես թե սիրտս խոցեց... Ո՜հ, Սմբատի ամեն մեկ քայլը սրտիս բաբախմանցը հետ կը տրոփեն... Վաղը պիտի գա (կը մեկնի, տեսարանը կը մթնե):

Տեսիլ Ը

Շավարշ, (հետո) Սուրմակ

ՇԱՎԱՐՇ.— Խե՜ղճ թագուհի... Ակամա իր սպաննիչը եղա... Անօրեն թագավոր, գոնե ինծի ալ չը մեղքցար... Հիմա ի՞նչ պիտի ընեմ ես։

ՍՈՒՐՄԱԿ.—(ներս մտնելով) Ողջույն քեզ։

ՇԱՎԱՐՇ.—(մեկուսի) Քահանա մը. (բարձր) շուտ եկար, տեր հայր։

ՍՈՒՐՄԱԿ.— Պալատին առջևեն կանցնեի և զիս կանչեցին, ո՞ւր է հանգուցյալը։

ՇԱՎԱՐՇ.— Հոս է, տեր հայր (դուռը կը բանա և կը ցուցնե):

ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի) Թագուհի՞ն...

ՇԱՎԱՐՇ.— Տեր հայր, գաղտնիք մը պիտի խոստովանիմ քեզի։

ՍՈՒՐՄԱԿ.— Խոսե։

ՇԱՎԱՐՇ.— Քիչ մը առաջ թագավորը օրհնած ջուր տվավ ինձ թագուհվույն տալու համար... բայց մեջը թույն կա եղեր։

ՍՈՒՐՄԱԿ.— Ուրեմն թագուհին թունավորված է, այնպես չէ՞, բայց աղեկ գիտե՞ս, ապահո՞վ ես...

ՇԱՎԱՐՇ.— Այո՛, տեր հայր... Բայց մեղքս քավելու մի՛ մոռնար... Հավատա, որ ամենևին չը գիտեի թե օրհնած ջուրին մեջ թույն կար և քիչ մնաց ես ալ պիտի խմեի։

ՍՈՒՐՄԱԿ.—(մեկուսի) Այս ապուշ է (բարձր) Այո՛, կը ներեմ... բայց ինձ պիտի հետաքրքիս, ինչ որ ալ ըսեմ... պիտի լռես...

Առ այս քսակը, ահա քեզի ոսկի և քավություն։

ՇԱՎԱՐՇ.— Որչափ բարեսիրտ ես, տեր հայր։

ՍՈՒՐՄԱԿ.— Մտիկ ըրե, այս սենյակը ցած է, այնպես չէ՞։

ՇԱՎԱՐՇ.— Այո՛... բայց ի՞նչ պիտի ընես, տեր հայր։

ՍՈՒՐՄԱԿ.— Լռե՛ և հնազանդե՛։

ՇԱՎԱՐՇ.— Լա՜վ, լա՜վ...

ՍՈՒՐՄԱԿ.— Գիշերվան երրորդ պահուն այս սենեկին տակը պիտի գտնվիս, ես դիակը վար կիջեցնեմ, և դու աշալուրջ պիտի հսկես անոր վրա ինչվան որ ես քովդ դառնամ... կը լսե՞ս... Եթե խոսիս կամ չը հնազանդիս, գիտցիր որ թե սոսկալի մեղքդ չեմ քավեր և թե հավիտենական անեծք կը թափեմ գլխուդ։

ՇԱՎԱՐՇ.— Բայց կաղաչեմ, ի՞նչ կուզեք ընել, տեր հայր։

ՍՈՒՐՄԱԿ.— Թագուհին պիտի վերակենդանացնեմ։

ՇԱՎԱՐՇ.— Ո՜հ, օրհնյալ ըլլաս, տեր հայր։

ՍՈՒՐՄԱԿ.— Ուրեմն գիշերվան երրորդ պահուն... Ինչվան այն ատեն խոսք մը չի պիտի ելնե բերանդ... Միայն պատվիրե, որ այս սենյակը չը մտնեն... Եթե ուրիշ խոսք մ'ընես, մեռած ես։

ՇԱՎԱՐՇ.— Ո՛չ, ո՛չ, տեր հայր, անհոգ եղիր (մեկուսի) և այնուհետև ի՞նչ պիտի ընե այս քահանայն արդյոք (կը մեկնի)։

ՍՈՒՐՄԱԿ.— Վրեժս պիտի առնեմ (սենյակը կը մտնե.— պատկերը կը փոխվի)։

ՊԱՏԿԵՐ Ա

Զորականին տնակը.— Գիշեր է գրեթե.— Ջեղունեն կախված կանթեղ մը կը պլպլա։

Տեսիլ Թ

Շահանդուխտ և Հրաչյա

ՀՐԱՉՅԱ.— (ներս մտնելով) Չեմ կրնար քեզնե հեռու մնալ, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Գիտեմ, Հրաչյա, դու շատ բարեսիրտ ես։

ՀՐԱՉՅԱ.— Բայց ինչո՞ւ այդպես դեղներ ես և գրեթե կը թուլանաս... Կերևի թե վիշտ մը ունիս, Շահանդուխտ... Խոսե, ի՞նչ ունիս...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ոչինչ, Հրաչյա, չը գիտե՞ս որ զքեզ ամեն անգամ տեսնելուս կը շփոթիմ և գրեթե կուլամ։

ՀՐԱՉՅԱ.— Բայց միանգամայն անմեղ ճակատդ վարդի գույն մը կստանար, իսկ հիմա թալկահար կը տեսնեմ... Մեր սիրույն համար ըլլա, Շահանդուխտ, խոսե՛, ի՞նչ պատահեցավ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց կը վախնամ որ զքեզ ալ կը տրտմեցնեմ։

ՀՐԱՉՅԱ.— Եվ միթե աշխարհի վրա տրտմություն և ուրախություն երկուքիս ալ բաժին չե՞ն. մեկտեղ մեռնիլ ուզողը պետք է որ մեկտեղ տրտմի... Խոսե և ազատե զիս անհուն ու դառն կասկածներե, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հրաչյա, երեկ իրիկուն քու մեկնելեդ ետքը...

ՀՐԱՉՅԱ.— Ե՞տքը։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հայրս բանտ տարին։

ՀՐԱՉՅԱ.— Ո՜վ երկինք, բայց ինչո՞ւ... Պատճա՞ռ...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Չեմ գիտեր... Ո՜հ, ո՜րչափ տրտմեցա երեկ գիշեր առանձին հոս... Հովերու մռնչյունեն ուրիշ բան չէի լսեր... ոչ քու և ոչ հորս ձայնը։

ՀՐԱՉՅԱ.— Բայց միթե հանցանք մը գործա՞ծ էր հայրդ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Չեմ կարծեր, հայրս անմեղ էր։

ՀՐԱՉՅԱ.— Անմեղ էր և բանտ դրին... Շահանդուխտ, դուն հանդարտ եղիր, հայրդ պիտի ազատի։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Եվ ո՞վ պիտի ազատե զինքը՝ խեղճ և անոթ զորական մը։

ՀՐԱՉՅԱ.— Ես։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Դո՞ւն, Հրաչյա, ա՜հ, իզուր զիս խաբել կը ճրգնիս։

ՀՐԱՉՅԱ.— Ես զքեզ խաբե՞մ... Եվ միթե չե՞ս վստահիր իմ վրաս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Այո, դու քաջ ես, Հրաչյա, բայց մեծ մեկը չես... Մի՛ ձեռնարկեր զուր տեղը, կը վռնտեն։

ՀՐԱՉՅԱ.— Կը սխալիս, Շահանդուխտ, չեն կրնար զիս վռնտել։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց չըլլա որ հայրս ազատեմ ըսելով...

ՀՐԱՉՅԱ.— Ապահով եղիր, զքեզ անոթ և անօգնական թողելով չեմ ուզեր մեռնիլ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Սակայն ի՞նչպես պիտի կրնաս ազատել զինքը։

ՀՐԱՉՅԱ.— Ես գիտեմ... Դու հորդ համար աղոթե։
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց դու ալ բան մը չե՞ս գուշակեր այս դեպքեն։
ՀՐԱՉՅԱ.— Հորմեդ ամեն բան կիմանանք... Մնաս բարյավ, սիրելիս։
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Կերթա՞ս, Հրաչյա...
ՀՐԱՉՅԱ.— Դու ապահով և հանգիստ եղիր... Քիչ մը ետքը ամեն բան տեղը կուգա։
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց կաղաչեմ, շուտ դարձիր։
ՀՐԱՉՅԱ.— Կայծակեն շուտ (կը մեկնի)։

Տեսիլ Ժ

Շահանդուխտ (մինակ)

Հայրս պիտի ազատե... Բայց ի՞նչպես... Ո՜հ, չըլլա թե իրեն ալ վտանգ մը պատահի (դեպի խորը երթալով) Հրաչյա՜, Հրաչյա՜... Գացեր է... Ես դարձյալ մինակ պիտի մնամ... Բայց եթե նա ալ չը դառնա, ա՜հ, ի՞նչ պիտի ընեմ ես հոս առանձին, ո՞վ պիտի լուր տա ինձ անոնց վրայոք... Ո՜վ երկինք, ինչո՞ւ կը տապալես անմեղ տնակ մը. ի՞նչ ըրի ես, ի՞նչ ըրավ հայրս... ինչո՞ւ կը պատուհասես զմեզ... Մայր իմ, մայր իմ, եկու գոնե քու գրկացդ մեջ ապաստանիմ. եթե ուրվական ես, ո՜հ, կը դողամ, կը սոսկամ... Բայց ինչո՞ւ կը հուսահատիմ ես, մինչդեռ երկինքն Աստված մը կա, կրնա՞ անտարբեր ըլլալ անմեղին արցունքին... Աստված իմ, ներե ինծի, եթե քու գթությունդ և զորությունդ վայրկյան մը չը մտաբերեցի... Ո՜վ երկնից իմ սիրուն հայրիկ, գթա մեզի, գթա ալևորի մը և երկու մանուկներու... Ե՞րբ պիտի ղրկես գթությանդ հրեշտակը...

Տեսիլ ԺԱ

Նույն և Սմբատ

ՍՄԲԱՏ.—(ներս մտնելով) Բաբել զորականին տնակն այս է։
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց ի՞նչ պիտի ընես... Ո՞վ կը ղրկե քեզ։
ՍՄԲԱՏ.— Դու իրեն աղջի՞կն ես։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Այո՜... Ի՞նչ պիտի ըսես։
ՍՄԲԱՏ.— Մտիկ ըրե, հայրդ բանտեն փախավ և իմ տունս ապաստանեցավ, պետք է որ երթանք, հայրդ և դու գուցե հիմա ճամբա պիտի ելնեք դեպի Պարսկաստան։
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց ինքը մինակ է... Արդյոք երիտասարդ մը չկա՞ հետը...
ՍՄԲԱՏ.— Երիտասարդ մ'ալ կա։
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՜հ, օրհնյալ ըլլաս, ո՜վ երկինք, այս բարի մարդն է եղեր քու գթությանդ հրեշտակը... Բայց ինչո՞ւ ինքը չեկավ քու տեղդ։
ՍՄԲԱՏ.— Ես չը թողուցի՝ վախնալով որ կը մատնվինք... Բայց երթանք... վայրկյան մը հապաղումը գուցե կը մատնե զմեզ։
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Երթանք... Վարձքդ երկնքեն պիտի ընդունիս, բարի մարդ. մնաս բարով, իմ սիրելի անմեղ տնակս։
ՍՄԲԱՏ.—(մեկուսի) Հրեշտակ մը, որ դժոխք կը տանի (կը մեկնին, վարագույրը կիջնե)։

<(ՎԵՐՋ Բ ԱՐԱՐՎԱԾԻՆ)>

ԱՐԱՐՎԱԾ Գ

Թագավորին պալատը.— Դիշեր— Բ արարվածին տեսարանը

Տեսիլ Ա

Սմբատ և Շավարշ

ՍՄԲԱՏ.— Թագուհին ի՞նչ եղավ, Շավարշ... Դո՞ւն ալ բան մը չը տեսա՞ր։
ՇԱՎԱՐՇ.— Ինծի մի հարցներ, տեր իմ, ոչ բան մը տեսա և ոչ բան մը գիտեմ։
ՍՄԲԱՏ.— Տեր Աստված... Բայց քահանայն կեղծ ու ծպտյալ մեկն եղած չըլլա՞։
ՇԱՎԱՐՇ.— Ո՜չ տեր իմ... Շատ բարեպաշտ կերևեր։
ՍՄԲԱՏ.— Ըսել է թե տեսար զինքը։
ՇԱՎԱՐՇ.— (տատամսելով) Ո՜չ, ո՜չ... այս պալատին ներս մտած ատենը տեսա։
ՍՄԲԱՏ.— Ե՞տքը։

ՇԱՎԱՐՇ.— Ետքը... ետքեն պատահածին բոլորովին անտեղյակ եմ։

ՍՄԲԱՏ.— Բայց ի՞նչպիսի մարդ էր քահանայն։

ՇԱՎԱՐՇ.— Աստուծո մարդը, երկայն մորուք, խոժոռ դեմք, սոսվար ձայն և քահանայական զգեստներ ուներ, վերջապես ճիշտ քահանա մ'էր։

ՍՄԲԱՏ.— Ուրիշ անգամ տեսա՞ծ էիր զինքը։

ՇԱՎԱՐՇ.— Չեմ հիշեր, տեր իմ, երազիս մեջ անգամ չէի տեսած։

ՍՄԲԱՏ.— Ես ալ անխոհեմությամբ եկեր ապուշ մը հարցափորձ կընեմ, որ հայելին նայած ատենը ինքզինքը կը մոռնա։

ՇԱՎԱՐՇ.— Իրավունք ունիս, տեր իմ... Անցյալ օր ավազանին քով շրջագայելու ատենս ինքզինքս անոր մեջ տեսա և որչափ ձայն ունեի կը պոռայի. «Ընկերնե՛ր, հասեք ավազանը ընկեր եմ». անոնք ալ եկան զիս ավազանին եզրեն ասդին առին և ազատեցա. հիմա ծերությունը զիս շատ ձգեց... Երբ երիտասարդ էի, որսի ելած ատենս եղնիկները ետևես և ես առջևնեն կը փախչեի. այն ատեն ո՜րչափ աշխույժ և առույգ էի։

ՍՄԲԱՏ.— Լռե՛, շաղակրատ, ես քեզի երեկվան անցքը կը հարցնեմ և դու երիտասարդությանդ հրաշքները կը պատմես ինձ։

ՇԱՎԱՐՇ.— Ըսել կուզեմ, թե այն ատեն շատ աշխույժ էի։

ՍՄԲԱՏ.— Ինձ կը բավեր, եթե օր մը միայն ապուշ չըլլայիր։

ՇԱՎԱՐՇ.— Բայց տեր իմ, դուն ի՞նչ կը հարցնեիր հիմա ինծի։

ՍՄԲԱՏ.— Թշվառական, ուրեմն երբ ես քեզի բան մը հարցնեմ, դուն աչքդ բաց կը քնանաս, այնպես չէ՞։

ՇԱՎԱՐՇ.— Բայց ի՞նչ կըսեիր որ...

ՍՄԲԱՏ.— Քեզի կը հարցնեի, թե թագուհին մեռնելեն ետքն ի՞նչ եղավ։

ՇԱՎԱՐՇ.— Հա, ես հասկցա, տեր իմ։

ՍՄԲԱՏ.— (հետաքրքրությամբ) Խոսե...

ՇԱՎԱՐՇ.— Բայց մեկը չիմանա... Աղեկ գյուտ մը մտաբերեցի. թագուհին ուրվական եղած ու փախած է դագաղեն։

ՍՄԲԱՏ.— Քու խելքդ փախած է գլխեդ, թշվառական, ես բան կը հարցնեմ, դուն կատակ կընես ինծի հետ։

ՇԱՎԱՐՇ.— Ո՛չ, տեր իմ, ես մտածածս կըսեմ այս մասին։

ՍՄԲԱՏ.— Քու մտածածդ ինծի պետք չէ, տեսածդ ու լսածդ։

ՇԱՎԱՐՇ.— Եթե նույնպես է՝ ոչ բան մը տեսա և ոչ ալ լսեցի։

ՍՄԲԱՏ.— Բայց եթե գիտես ու կը պահես։

ՇԱՎԱՐՇ.— Բնավ, տեր իմ, (մեկուսի) հարցափորձը երկարացուց, հիմա հոտը պիտի ելնե։

ՍՄԲԱՏ.— Եթե կը խաբես, գիտցիր որ ձեռքես ազատելիք չունիս։

ՇԱՎԱՐՇ.— Բայց հավատա որ անկեղծ եմ, տեր իմ (մեկուսի) այն քահանայն ալ ուսկից էր եկավ։

ՍՄԲԱՏ.— Շավարշ, ուրեմն բան մը չե՞ս գիտեր։

ՇԱՎԱՐՇ.— Նախ և առաջ անկեղծորեն խոստովանեցա ես այդ, տեր իմ, (մեկուսի) ազատեցա կարծեմ։

ՍՄԲԱՏ.— Ուրեմն գնա, ես քեզ չը հարցաքննեցի... Կիմանա՞ս։

ՇԱՎԱՐՇ.— Շատ աղեկ, տեր իմ... (երթալով մեկուսի) Սատանայն վկա, որ դեռ բան մը չը հասկցա։

Տեսիլ Բ

Սմբատ (առանձին)

Ի՞նչ եղած է արդյոք... Չեմ հասկնար... Թագուհվույն դիակը աներևութացեր է պալատեն... Այս գաղտնիքը դավ մ'ըլլալու է թագավորին դեմ... Ուրեմն վայրկյան մը առաջ պետք է որ ես կորզեմ թագը. դյուրին է Արտաշիրը գահեն թավալել... Աղմուկին մեջ դյուրին է դավադրել... Փայլ մը, հրաշք մը ամեն բան կը տապալե... Ժողովուրդը կատե թագավորը... Պետք է զարնել բազեն՝ աղավնիներու սիրտն ու սերը որսալու համար. ժողովուրդն աղավնիի երամ մ'է... Ամեն բան աչքիս թագ կերևի, ամեն բան ինձ թագ կը կարկառե. թագուհին մեռավ և իմ թագավորությունս ազատ պիտի սկսի։ Արտաշիր աղջկան մը թևերուն մեջ շուտ կանշնանա... Երկու դիակ պետք է ինծի՝ թագավորը և թագաժառանգը... Խե՜ղճ Արտաշիր, խոնարհեցա առաջին փոս փորելու համար, կույս մը տվի իրեն՝ թագը մոռցնելու համար... Դեռ կը խոնարհեցնեմ զինքը գահավիժելու համար... Հիմա ինքը սիրո բազկաց մեջ գուցե չերևակայեր թագը... (Արտաշիր Սպանդարատի հետ խորը կերևի, կանգ կառնե և մտիկ կընե) Արտաշի՜ր, դու ալ ինծի խոնարհե թագդ գլուխս դնելու համար...

ԱՐՏԱՇԻՐ.— (մեկուսի) Ա՜հ... կը դավե... թշվառականը։

ՍՄԲԱՏ.— Ա՜հ, մեկ մը թագավոր ըլլայի... Արտաշի՛ր, երջանիկ ես, որ չի պիտի կրնաս թագդ Սմբատի գլուխը տեսնել... Դու սիրե միշտ... Թագիդ մեջ օձ մը գալարած պահվըտած է, գուցե քիչ մը ետքը վիդ պիտի պլլվի և թագավորական արյունդ պիտի ծծե... Թող անմեղ զոհերուդ շոր ոսկրները միայն պճնեն դամբանդ, փոխանակ դափնյաց և ջահերու... Քիչ մը ետքը Արտաշիր ուրվական մ'է, իսկ ես թագավոր։

ԱՐՏԱՇԻՐ.— (ցած, առ Սպանդարատ՝ Սմբատը ցուցնելով) Պետք է որ մեռնի, դեռ պալատեն դուրս չելած... Կիմանա՞ս։

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— (նույնպես) Հարված մը ըսել կուզես, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.—(նույնպես) Բավական է որ շուտ մեռնի։

ՍՊԱՆԴԱՐԱՏ.—(նույնպես) Ես հնազանդիմ, տեր արքա (կը մեկնի)։

ՍՄԲԱՏ.—Գուցե վաղն արևը թագիս վրա պիտի ծագե։

ԱՐՏԱՇԻՐ.—(մեկուսի) Գուցե գերեզմանիդ վրա, թշվառական։

Տեսիլ Գ

Սմբատ և Արտաշիր

ԱՐՏԱՇԻՐ.—(ճառաջանալով) Ի՞նչ կը մտածես, Սմբատ։

ՍՄԲԱՏ.— Կը մտածեմ, տեր արքա, թե ի՞նչ կը նշանակե այս դեպքը։

ԱՐՏԱՇԻՐ.— Անհոգ եղիր, Սմբատ, կը վախնաս որ թագս կամ կյանքս կը կորսնցնե՞մ, է՛հ, դյուրին բան չէ կարծեմ կորսնցնելն ու ստանալը։

ՍՄԲԱՏ.— Եվ Սմբատ ալ իր թագավորը պաշտպանելու մասին բավական հաջողակ է կարծեմ, տեր արքա... Ես շատ ապահով եմ։

ԱՐՏԱՇԻՐ.— Գիտեմ, Սմբատ, դու այնպես աչալուրջ կը հսկես իմ թագիս վրա, որ կարծես թե քուկդ է... և գրեթե քուկդ։

ՍՄԲԱՏ.— Տեր արքա, երջանիկն ի՞նչ աչքով կը նայի այն աստեղազարդ երկնքին, որուն շուքին տակ ինքը կապրի։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց գոնե վայրկյան մ'ալ երկինք թաչել չերևակայեցի՞ր միթե։

ՍՄԲԱՏ.— Չիս կը ծաղրե՞ս, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Խեղճ Սմբատ, քու անկեղծ սիրտդ կը վիրավորեմ... Եթե լեզուս կը սխալի, սիրտս կը ճանչե զքեզ... Գիտեմ, արևուն ճառագայթն ալ թեպետ մաքուր է, բայց գեղեցիկ ու անբիծ ճակատ մը կրնա այրել ու սևցնել... Սակայն դու անհոգ եղիր, Սմբատ, սիրո մը դառնություններն է որ քու վրադ կը թափեմ այս գիշեր։

ՍՄԲԱՏ.— Ի՞նչպես, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Զորականին աղջկան վրա չը կրցա իշխել։

ՍՄԲԱՏ.— Եվ դեռ...

ԱՐՏԱՇԻՐ.— Դեռ նոր կը տեսնեմ թագն ատող մեկը, Սմբատ, մինչդեռ շատերը մահվան դրանցը մեջ թագը մի անգամ գըրկել կերևակայեն, այս աղջիկը թե թագը և թե զիս կատե...

ՍՄԲԱՏ.— Բայց միթե թագավորի մը նայվածքը սրո հարվածե մ'ավելի ազդու չէ՞, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց ինքը գրեթե կը մեռնի, զիս չը սիրելու համար. ամեն անգամուն արցունքներով կը շողոքորթե զիս և պայմանաժամը կը հապաղե. կամոթահարիմ ըսելու, թե այս աղջիկը սիրտս իր վրա կը շարժե։

ՍՄԲԱՏ.— Տեր արքա, կը տեսնեմ, որ իր արցունքները սիրուդ կայծը մարելու չափ զորավոր են... Այս բանը զիս կը զարմացնե. գո՜ւթ... Ի՞նչ ըսել կուզեն մարդիկ գութ ըսելով... Թագավոր ըլլալ և աղջիկե մը հաղթվիլ, որ ոչ սուր ունի և ոչ հուր, այլ քանի մը աղի կաթիլ... կը վախնա՞ս արցունքը կոխկռտելու, տեր իմ, կտեսնեմ որ հեռուեն կը սիրես միայն։

ԱՐՏԱՇԻՐ.— Սմբատ, այնպիսի սրտառուչ ձայնով խոսք մ'արտասանեց, որ զիս սարսափեցուց ու սառեցուց։

ՍՄԲԱՏ.— Ի՞նչպես, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Անգութ սիրտն ալ երբեմն փոքր բանե մը կը հուզվի... Վերջապես խոստացավ երեք օրեն սիրել զիս, խե՜ղճ աղջիկ, գուցե կը հուսա, որ երեք օրեն ձեռքես կազատի... Բայց գուցե զինքն արձակե՞մ, Սմբատ։

ՍՄԲԱՏ.— Ի՞նչ կըսես, տեր արքա... Մեկ մ'ալ չես կրնար գտնել այնպիսի գեղեցիկ... կը տեսնեմ որ ջուրին մեջ ինկած անգին գոհար մը չես ուզեր առնել, վախնալով որ ձեռքդ կը թրջի։

ԱՐՏԱՇԻՐ.— (մեկուսի) Նենգավոր, կուզե սիրո բազուկներով կաշ-

կանդել գիս... (բարձր) Սմբատ, ի՞նչ ընեմ ես այն գոհարը, մինչդեռ թագիս և կյանքիս կը դավադրեն... Թագուհվույն դիակը կանհետանա պալատեն... մեկը չը տեսներ։

ՍՄԲԱՏ.— Բայց դու քիչ մը առաջ քաջասիրտ էիր, տեր արքա, է՜հ, ո՞վ պիտի արձանանա դեմդ. ժողովո՞ւրդը. ասոր ձայնը շուտ կը խեղդվի արյան մեջ... Դյուրի՞ն է միթե գահ մը տապալել, որո կը հսկեն բանտ, աքսոր և սուր... Անհոգ եղիր, տեր արքա, գահդ Հայեն զորավոր է. ժողովուրդին բանտ, կղերներուն աքսոր և նախարարաց սուր... Դարձյալ Արտաշիր թագավոր է և գուցե առաջինեն ավելի զորավոր... Թշնամին ջախջախելու համար հարված և հանճար պետք է. հարվածը դու եղիր, հանճարը ես կըլլամ։

ԱՐՏԱՇԻՐ.— Հիրավի, Սմբատ, կը տեսնեմ որ թագավոր մը ըլլալու չափ հանճար ունիս, պետք է որ թագավոր մ՚ըլլայիր։

ՍՄԲԱՏ.— Գիս շատ կը ծաղրես այսօր, տեր արքա... Բայց նաև վստահ եմ, որ գոնե թագավորի մը կատարելապես ծառայելու չափ խելք ունիմ։

ԱՐՏԱՇԻՐ.— Սակայն կը խրատեմ նաև քեզ, որ խելքիդ վստահելով թագ մը կորզելու փորձ չը փորձես երբեք, Սմբատ։

ՍՄԲԱՏ.— Տեր արքա, կը տեսնեմ ու այսօր անսովոր կատակներ կը գլորես (մեկուսի). ի՞նչ եղած է արդյոք, բայց ես դեռ մութին մեջ եմ...

ԱՐՏԱՇԻՐ.— է՜հ, Սմբատ, կայծակը հարվածեն առաջ փայլակ մ՚ունի... Սև ամպը կը մոտենա, բայց դարձյալ արևը ծիծաղկոտ է... Գուցե փոթորիկ մը պիտի անցնի ճակտես. ի՞նչ ընեմ, պետք է որ խնդամ՝ շատ չը վախնալու համար։

ՍՄԲԱՏ.— Մի՛ հուսահատիր, տեր արքա... Փոթորիկը կանցնի և անուշաբույր անդորրություն մը կը սփռե իր ետևեն։

ԱՐՏԱՇԻՐ.— Երբեմն ալ փլատակ... Շանթը բարձր կը գոռա ու կը զարնե, այնպես չէ՞, Սմբատ։

ՍՄԲԱՏ.— Ուրեմն պետք է խոնարհիլ երբեմն, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Երբե՛ք։

ՍՄԲԱՏ.— Գոնե սառնապատ սար մը ըլլալ, ուր շանթը կը խրի ու կը մարի... ուր ցասկոտ քայլերը կը սահին։

ԱՐՏԱՇԻՐ.— Ճիշտ այդպես։

ՍՄԲԱՏ.— Լավ ուրեմն... կը սիրեմ անգութը, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Աղեկ կընես։

ՍՄԲԱՏ.— Ուրեմն դեռ չը խորհինք, տեր արքա... Ձայնի մը հարված հասցնելու է և նշանի մը՝ հանճար։

ԱՐՏԱՇԻՐ.— Անհոգ եղիր, Սմբատ, շատ կը սխալի այն, որ դեմս ելնե։

ՍՄԲԱՏ.— Հիմար մ՚ըլլալու է այն, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ պիտի մեռնի։

ՍՄԲԱՏ.— Շանթի մը հարվածով։

ԱՐՏԱՇԻՐ.— Գրեթե։

ՍՄԲԱՏ.— Դեռ կը խորհինք, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց ասկե առաջ դու կը զարնեիր, Սմբատ, այս անգամ ես պիտի զարնեմ։

ՍՄԲԱՏ.— Դու գիտես, տեր արքա, (մեկուսի) ո՛չ, շատ կը սխալիս, չը պիտի թողում որ խորհիս կյանքդ կամ թագդ ընտրելու, երկուքն ալ իմս են։

Տեսիլ Դ

Արտաշիր (առանձին)

Թշվառակա՜ն... Թակարդն ինկար... ի՞նչ ըրիր թագուհվույն դիակը... Ուրեմն դու ալ դիակ մը եղիր... Դեռ ինծի դավելու կերթաս... Բայց զգուշացիր, թագի տեղ սուր մը գլխուդ վրա կը շողա... Մութին մեջ գոնե ես պիտի թավալեի, բայց բախտին ջահը ինծի կոգնե... Հանդարտե՛, սիրտ իմ, դեռ Հայաստան իմս է... Դիակներով լեցուցի այն փոսը, զոր ինծի համար կը պատրաստեին սև ձեռքեր... Սմբատ պալատեն դուրս չի պիտի ելնե... Հոն է Սպանդարատ, Սմբատի ճամբուն վրա, սուրը կը փայլատակե... Ջա՜րկ, զա՜րկ... Թող թավալի իր սև գանգը փառահեղ երազներու մեջ... Կարմիր կոհակ մը զայն գերեզման գլորե և իր հետին հառաչը ճակտիս սև ամպը ցրվե։

ՍՄԲԱՏ.—(դրսեն օրհասականի ձայնով) Տե՛ր արքա, տե՛ր արքա...

ԱՐՏԱՇԻՐ.— Ա՜հ, անոր ձայնն է... Կը մարի... Սպանդարատ զարկավ։

Տեսիլ Ե

Նույն և Սպանդարատ

ԱՐՏԱՇԻՐ.— Ի՞նչ ըրիր, Սպանդարատ։
ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Ինչ որ հրամայեցիր, տեր արքա։
ԱՐՏԱՇԻՐ.— Զարկի՞ր։
ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Մեռավ։
ԱՐՏԱՇԻՐ.— Առ այս քսակը։
ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Շնորհակալ եմ, տեր արքա (կառնե):
ԱՐՏԱՇԻՐ.— Աներևույթ ըրե իր դիակը։
ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Կը հնազանդիմ, տեր արքա (երթալու կըլլա):
ԱՐՏԱՇԻՐ.— Կեցի՛ր... Այսուհետև իմ զինակիրս ես... Զգուշացիր, օր մ՚ալ քու գլուխդ ուրիշի մը ձգել կուտամ։
ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Վստահե սրտիս և սրույս վրա, տեր արքա։
ԱՐՏԱՇԻՐ.— Զքեզ ալ կը ճանչեմ։
ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Ուրիշ հրաման մը, տեր արքա։
ԱՐՏԱՇԻՐ.— Հսկե՛ թագավորիդ...
ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Գլուխս քուկդ է, տեր արքա։
ԱՐՏԱՇԻՐ.—Գնա՛, (Սպանդարատ կը խոնարհի և կը մեկնի) *հաղթեցի... Շահանդուխտ, քու մեկ համբույրդ բավական է ճակատս վեհաշուք պսակելու... Դարինին աշխարհակալին, ես վարդը կը սիրեմ. արևը թշվառին, ես քու ժպիտը կը խընդրեմ. քնարը փառասերին, ես քու սիրտդ կուզեմ. երկինք հիմարին, ես զքեզ կը պաշտեմ* (պատկերը կը փոխվի):

ՊԱՏԿԵՐ Բ

Գիշեր է.— Փառներսեհի ապարանը.— Մեծ և փառավոր սրահ մը.— Տեսարանը բացված ատեն բոլոր նախարարները շքեղ սեղանի մը բոլորտիք շրջապատած են և գինիի գավաթներ առած ձեռքերնին հետևյալը կերգեն։

Տեսիլ Զ

Փառներսեհ, Վաչե, Հմայակ, Նախարարք և Զորապետք

Ակոռիի քաղցր է գինին,
Որով հրճվի ավագանին,
Խմեն ապրին Հայն, Հայաստան,
Մարտի օրեր տեղի թող տան։

Կեցցեն հավերժ իշխանք Հայոց,
Վառին փառաց ճաճանչ ու բոց,
Եվ Հայաստան մնա անսասան,
Ցիշխանության Արշակունյան։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Հայաստանի կենացը։
ԱՄԵՆՔԸ.— Հայաստանի կենացը։
ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Թագավորին բարուց ուղղությանը։
ԱՄԵՆՔԸ.— Թագավորին բարուց ուղղությանը։
ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Աղջկանս կենացը։
ԱՄԵՆՔԸ.— Թագուհվույն կենացը։
ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ամենուս ալ կենացը։
ԱՄԵՆՔԸ.— Այո՛, ամենուս ալ կենացը (կը խմեն):
ՎԱՉԵ.— Իշխանդ Սյունյաց, ես ալ առանձին գավաթով մը ծընընդյանդ տարեդարձը և երկար կյանք կը բարեմաղթեմ (կը խմե):
ՀՄԱՅԱԿ.— Ես ալ Արծրունյաց իշխանին համամիտ և համախոս եմ (կը խմե):
ԱՄԵՆՔԸ.— Մենք ալ նույնպես (կը խմեն):
ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ես ալ իմ հանդեսս պատվող հանդիսականաց շնորհակալության և երկար կենաց գավաթ մը ահա կը քամեմ։
ԱՄԵՆՔԸ.— Կեցցե՛ իշխանն Սյունյաց։
ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Կեցցի՛ք և դուք, իշխանք և զորապետք... Այս հանդեսը թող մեր մեջ անմոռաց մնա, այս սեղանը որ խաղաղության և սիրո բագին մը կը ներկայացնե... Մանավանդ զձեզ հոս հրավիրելուս պատճառն ուրիշ բան չէր, այլ գրեթե ազգին վիճակին վրա խոսելու և խորհելու, կը տեսնեք որ Արշակունի հարստությունը կը տատանի։
ՎԱՉԵ.— Իշխանդ Սյունյաց, ավելի աղեկ է որ ամեն իշխան իր տերությանը վրա խորհի, բոլոր ազգին համար խորհիլ թագավորին կը պատկանի. մենք մեր վիճակը բարվոքել և փառավորել ջանանք... Ի՞նչ կըսեք։
ՀՄԱՅԱԿ.— Ամեն բանի մեջ միշտ համակարծիք գտնված ենք, իշխանդ Արծրունյաց... կը գովեմ քու գաղափարներդ, որոնք իրավացի են... Մեզի ի՞նչ հոգ... Ապագայն թագավորը պիտի դատապարտե, որ Հայուն թագը գրեթե կանանց ոտնակոխ ընել կուտա։
ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ճշմարիտ է... Բայց իբրև Հայ պե՞տք է որ թա-

գավորին դեմ ձայն և ազգին դեմ ջանք չը զլանանք. եթե թագավորությունը տապալի և թշնամիները Հայաստանը հաղթական քայլերով չափեն... ի՞նչ պիտի ընենք մենք. թակարդն ինկած առյուծներու պես բերդերու մեջ ապաստանած պիտի մոնչենք... Վերջապես մեր բաժինը պիտի ըլլա՝ կամ շղթա և կամ մահ... Իսկ արծիվն ագատ պիտի սավառնի կարմիր դաշտերու, ավերակներու և դիակներու վրա։

ՎԱՉԵ.— Իշխանդ Սյունյաց, կը տեսնեմ որ գինիին մեջ Հայաստանի արյունոտ անկումը կերևակայես... Է՜հ, ուրեմն, կեցցե՜ գինին, որ արյուն կը ներշնչե, շատ կը սիրեմ ես զայն, վասնզի ցամքած երակներու մեջ արյուն կը տեղափոխե։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Իշխա՜ն, կը տեսնեմ, որ դու ալ գավաթ մը գինիի համար կաթիլ մը արյուն կուտաս և Հայության թագին համար քրտինք մը գրեթե կը զլանաս։

ՀՄԱՅԱԿ.— Բայց ներե, իշխանդ Սյունյաց, կարծեմ մենք հանդեսի և տոնախմբության համար հոս եկանք և ոչ թե գինին արյան հետ խառնելու, սեղանը գահին հետ կցելու և ապագայի մը ուրվականովը մեր հանդեսը զարհուրելու համար... Եթե ժամանակը գա, փոթորկին փայլակներուն հետ կը միավորենք մեր սուրերուն փայլը։

ՎԱՉԵ.— Շատ լավ խոսեցար, իշխան։

ՀՄԱՅԱԿ.— Եվ կարծեմ իրավացի։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Այնպես է... Ուրեմն դեռ խմենք, տյարք։

ՎԱՉԵ.— Այո՜, խմենք... Կեցցե՜ Նոյ Նահապետ, որ գինին հնարեց։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Բայց դեռ որո՞ւ կենացը պիտի խմենք։

ՀՄԱՅԱԿ.— Ամենքնիս ալ փոփոխակի իրարու կենացը համար։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ուրեմն ամենուդ կենացը (կը խմե)։

ԱՄԵՆՔԸ.— Սյունյաց իշխանին կենացը (կը խմեն)։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Հիրավի եթե Սահակ կաթուղիկոս իմանա, որ մենք հոս գինիի և ղվարճության մեջ կը լողանք, մինչդեռ ինքը գիշերվան աստղերուն հետ Հայության արցունքները կը համրե, գլուխն ու թևերը բացած մեզ համար պիտի աղոթե։

ՎԱՉԵ.— Զգե՜ սա հայրենամոլ կրոնավորը, որ փայտե խաչով մի Հայաստանը փառավորել ու վերականգնել կերազե և ահեղ սուրե մը գերազոր հաստատել կուզե խաչ մը, որ չնչին հարվածե մը կը խորտակի և Պարսկական հուր մը զայն շուտով կրնա լափել։

ՀՄԱՅԱԿ.— Ճշմարիտ է... Իբրև հաղթության դրոշակ մը ըմբռնած է զայն։

ՎԱՉԵ.— Եվ ինքզինքն անվարդ թագավոր մը... Աստվածունի թագավոր։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Հիրավի նա գրեթե անարգ ժողովուրդը մեզնե ավելի կը հարգե, մենք որ Հայաստանի փառաց և հաղթության դրոշակիրներն ենք, նա ավելի կը սիրե ցնցոտիի տակ գտնվող հոգի մը՝ քան թե ծիրանիի տակ ծածկվող սիրտ մը... Արդեն սգազգեստ, կարծես թե Հայաստանի վրա հեծող տխուր նոճի մ'է, որ կը շարժի ու կը մոնչե միայն։

ՎԱՉԵ.— Սխալ... Հայաստանի հայրենանվեր հոտապետն է նա։

ՀՄԱՅԱԿ.— Եթե սև վարդ եղած ըլլար, վարդապետ պիտի գոչեի գինքը... Իրավունք չունի՞մ, իշխան։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Կեցցե՜ս, խիստ սքանչելի գյուտ մ'ըրիր։

ՎԱՉԵ.— Հիրավի... Տյարք, մոռցանք մեկուն կենացը խմելու։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Եվ ո՞վ է այդ։

ՎԱՉԵ.— Նույն իսկ գինին։

ՀՄԱՅԱԿ.— Ուրեմն խմենք (գավաթները լեցնելու կըլլան. դուրսեն հետևյալ երգը կը լսվի)։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Բայց ի՞նչ ձայն է այս... Մտիկ ըրեք...

Հայոց աշխարհ, քաջաց օրրան,
Ինչո՞ւ այդպես սուգ ես առեր.
Ո՞ւր քու նախնի փառաց արև,
Պայծառ կամարդ սուգ է պատեր։

Զիք սպայիցդ գունդ սրարշավ,
Եվ ոչ կամար հաղթանակացդ.
Փոխան նոցա գերեզմանք սյավ,
Ցրված ի սփյուռ յերեսս դաշտացդ։

ՀՄԱՅԱԿ.— Գեղեցիկ ձայն...

ՎԱՉԵ.— Խենթ կին մ'ըլլալու է... Գիշեր ատեն մինչդեռ ամեն մարդ և բնությունն խսկ կլռե... Բարձրաձայն լալը խենթի գործ է։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Կամ գուցե մուրացկան մ'ըլլալու է։

ՎԱՉԵ.— Բայց դարձյալ անխելք։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Այնպես չէ, իշխան, գիշերվան լռության մեջ կը գոչե, որպեսզի երկինք իր ձայնը լսե։

ՀՄԱՅԱԿ.— Իրավունք ունի, իշխանը։

ՎԱՉԵ.— Խեղճը չը գիտե, որ երկինքը վառ, բայց անտարբեր աչեր ունի միայն... Մենք ալ՝ անտարբեր ականջ։

Տեսիլ Է

Նույնք և Զարմուհի

ԶԱՐՄՈՒՀԻ.— Օրհնեալ Հայաստանն է ձայնողը, Հայոց իշխաններ։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ո՞վ է այս կինը։

ՎԱՉԵ.— Սա մուրացկանն է անշուշտ։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Որ հայրենասիրություն կը մուրա։

ՎԱՉԵ.— Գավաթ մը գինի կա, գոհ կըլլա՞ս... եթե ոչ՝ գնա՛։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Կը վախնաս արյուն տալու Հայաստանի երակաց։

ՎԱՉԵ.— Ձեզի չըսի՞ արդեն, որ այս կինը խենթ ըլլալու է։

ՀՄԱՅԱԿ.— Աղեկ գուշակեր ես, իշխան։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ձեմ հասկնար, կին դու, ի՞նչ բան կուզես։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Արշակունյաց դագաղին համա՞ր կը վառեք այս ջահերը, Հայաստանի մահվա՞նը կը խմեք այս գինիները... Խենթ եմ ես, խենթ կոչելով կուզեք ճաշմարտության ձայնն անարգել ու խեղդել. Հայոց իշխաններ, ամենքնիդ մեկ մեկ ազգ եղած՝ Հայ ազգը վերջապես պիտի տապալեք և ձեր շիրիմներուն վրա լքյալ ապագայն կապարյա մատներով անեծք պիտի դրոշմե և իր նայվածքին առջև ձեր մաշած ոսկրները պիտի դողդողան... կը խնդաք... բայց ամպերը կը դիզվին, քիչ ատենեն կայծակը պիտի որոտա։

ՎԱՉԵ.— Կը զարմանամ, որ խենթի մը պատգամներուն ունկնդիր ըլլալով կը մոռնանք գինին ու խնդումը, իշխանդ Սյունյաց, օ՛ն, գինին մեզի կը խոժոռի և իր կրակոտ նայվածքը կը հանդիմանե զմեզ։

ՀՄԱՅԱԿ.— Իշխանն իրավունք ունի. արդեն գիշերը կը տարաժամի և ապարանին ջահերը քիչ ատենեն կը մարին, մեզի համար շատ սուղ է այս փառավոր գիշերը... իշխան։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ուրեմն թողեք որ երթա։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ո՞ւր... Այն փլատակներո՞ւն մեջ, ուր շատ հեծեցի, այն նախնի դյուցազանց շիրիմներո՞ւն քով, որոնք շատ թըրջեցի... Հայոց իշխաններ, Հայաստանն է որ աղիքներուս մեջեն կը հեծե... Շատ կը սխալիք. այն՝ զոր մուրացկան և խենթ կը կարծեք և վրան կը խնդաք, երբեմն թագի մը տակ լացած է Հայուն ու Հայաստանի վրա։ Ես ղձեզ կը ճանչեմ և գրեթե ամենքնիդ ալ զիս կը ճանչեք, բայց ցնցոտիի տակ ձայնը ու փառքը կը մարի. Հայոց իշխաններ, դուք գինի կը խմեք, ջահեր կը վառեք, Հայաստանի կյանքը կը թունավորեք, փառքը կը մարեք... Դուք կը խնդաք, Հայությունը գերեզմանի մը շուրջը կը դողդողա... Երբ փոթորիկը պայթի՝ նախ աղքատին հյուղակը կը տապալի, այնպես չէ՞... Ձեր ապարանները ոսկի սյուներ ունին, բայց դողացեք. այն յուրաքանչյուր սյունին ետևը մեկ մեկ սոսկալի ուրվականներ պահված են, որ օր մը անշուշտ ձեր սիրտն ու խիղճը պիտի բզկտեն... Դարձյալ կը կրկնեմ, այն՝ որ ձեր դիմացը կը տեսնեք՝ մուրացկան չէ, այլ կին մը, զոր կը ճանչեք դուք։

ՎԱՉԵ.— Այո՛ թագուհի մը... Մութի մեջ ստվերներու թագուհի։

ՀՄԱՅԱԿ.— Խենթ մը ազատ է նաև Աստվածուհի մ՚ալ ըլլալու, իշխան։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ա՜հ, ես միշտ խենթ... դուք միշտ անսիրտ. ուրեմն իզո՞ւր կը գոչեմ։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Պալատականք, դուրս հանեցեք այդ կինը։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Դու ալ զիս կը վռնտես իբրև խենթ, ինչպես Արտաշիր պալատեն... Դեռ ողջ եմ ես և կը հեծեմ... Փառներսեհ, չը ճանչցա՞ր Զարմուհին, այնպես չէ՞ (բարկացած կը մեկնի)։

Տեսիլ Ը

Նույնք բացի Զարմուհիեն

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— (զարմացած) Մայր թագուհի՞ն։

ՀՄԱՅԱԿ.— Ի՞նչ կըսես, իշխան։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Այո՛, մուրացկան կամ խենթ չէ նա, այլ նույն ինքը Զարմուհին։

ՎԱՉԵ.— Բայց նա պալատեն արտաքսվելեն վերջը գրեթե անհետացավ և մեռած հրատարակվեցավ։

ՕԱՌՆԵՐՍԵՀ.— Եվ ահա այդ պատճառավ է, որ զինքը չը կրցա ճանչել։

ՀՄԱՅԱԿ.— Իսկ եթե ճանչնայիր, ի՞նչ պիտի ըներիր։

ՕԱՌՆԵՐՍԵՀ.— Զինքը չէի նախատեր այսպես։

ՎԱՉԵ.— Ըսել է որ թագավորը զրպարտությամբ զինքը խենթ հրատարակեց։

ՕԱՌՆԵՐՍԵՀ.— Կը հավատամ... վասնզի աղեկ կը հասկնամ, որ խենթ չէ։

ՀՄԱՅԱԿ.— Բայց ուսկից էր, որ այս գիշեր պաղ ուրվական մը մեր հանդեսին մեջ նետվեցավ։

ՎԱՉԵ.— Ճշմարիտ է... ո՞րչափ դժբախտ ենք եղեր, իշխան։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Օ՜ն, իշխանք և զորապետք, շարունակենք խնդումնիս, չեմ ուզեր, որ իմ ապարանիս մեջ ջահ մը մարի կամ սիրտ մը տխրի այս գիշեր, որ մեզ համար միության խանձարուր մ'է, զվարճության համեստ թագուհի մը, խավար մը, ուր կը գլորի անցյալը իր կնճռոտ ճակտովը, ուրեմն խմենք ու խնդանք, մինչդեռ ողջ է Հայաստան, մինչդեռ սուրն ազատ կը շարժի մեր մեջքը։

ՎԱՉԵ.— Հիրավի, իշխան, զվարճությունն ազատներու և իշխաններու համար է. մեր ձեռքը գինիի գավաթ կը շողշողա և ժողովուրդին ձեռքը՝ սուր. նա կը զարնե, մենք՝ կը խմենք... Նա գինին արյուն կը կարծե, կը պատկառի այն ծիրանիեն, որ իր կանգնած հաղթության դրոշն է։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Իշխանք և զորապետք, մինչև առավոտ սեղանակիցներս եք (խմելու կսկսին):

Տեսիլ Թ

Նույնք և Սուրմակ

ՍՈՒՐՄԱԿ.—(դռանը մեջ կեռեի՝ պատանեթով դիակը կանգնեցուցած) Ի՞նչ է այս, ուրախության գավաթներու բախյուն, ծիծաղներ ու ջահեր։ Սյունյաց իշխանին ապարա՞նն է այս... Թագավորի պալատն ու այս ապարանը միավորող ճամբան ջահազարդ կը վառի, մինչդեռ ուրվական մը կանցնի կը սպրդի անկե ծաղիկ ու ճրագ կոխկռտելով... Գիշերվան մթության ու լռության մեջ գերեզման մը կը գոցվի և միայն երկնից աստղերը կը տեսնեն ու կուլան... Միայն արդար մը այն պաղ քարին և հոր մը սրտին վրա կը դնե իր ձեռքը... Ի՞նչ է այս, մարեցե՛ք այս ջահերը, տապալեցե՛ք այս սեղանը... Հիմարներու պես գերեզմանի մը վրա կը ծիծաղիք... Ձե՞ք հարցներ, թե ո՞վ ես, ինչո՞ւ համար եկեր ես հոս։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Խոսե, ո՞վ ես դու, և ի՞նչ ընելու եկար, երկնքե՞ն կուգաս թե՞ դժոխքեն... Ի՞նչ ես դու... Պատասխանե՛։

ՍՈՒՐՄԱԿ.— Թող մարեն այս լույսերը և պիտի տեսնեք... Թող մարեն այս լույսերը և վրեժխնդրության ահեղ ճրագը թող վառի քու սրտիդ մեջ, իշխանդ Սյունյաց (թող կուտա դիակը, որ թավալգլոր կիյնա)։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ի՞նչ է այդ։

ՍՈՒՐՄԱԿ.— Տե՛ս և պիտի գիտնաս (Փառներսեհ կերթա պատանեթը կը բանա, կը դիտե և սարսափած ճիչ մը կարձակե). Ճանչցա՞ր զինքը։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Աղջիկս է...

ԱՄԵՆՔԸ.— Թագուհի՞ն։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Բայց ո՞վ սպաննեց զինքը. դո՞ւ, անօրեն...

ՍՈՒՐՄԱԿ.— Թույնը։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Եվ թույն տվող ձե՞ռքը։

ՍՈՒՐՄԱԿ.— Արքայական մական մ'ունի։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Թագավո՞ր։

ՍՈՒՐՄԱԿ.— Կը դողա՞ս։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Երբե՛ք։

ՍՈՒՐՄԱԿ.— Ուրե՞մն։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Վրե՛ժ...

ՍՈՒՐՄԱԿ.— Քաշե՛ սուրդ։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Բայց ո՞վ ես դու։

ՍՈՒՐՄԱԿ.— Պիտի գիտնաս։ (Վարագույրը կիջնե):

< (ՎԵՐՋ Գ ԱՐԱՐՎԱԾԻՆ) >

ԱԲԱՐՎԱՍ Դ

Թագավորին պալատը.— Գեղեցիկ սրահ մը.— Խորը բաց պատուհան մը, ուակից ընդարձակ զաչտ մը և հորիզոնը կիրևի.— Արևը դեռ նոր կը ծագի.— Խորը հայելիապ տրձանները.— Շահանդուխտ կողմնակի ենչասենյակեն դուրս կելնե

Տեսիլ Ա

Շահանդուխտ (մինակ)

Ահա արևը կը ծագի... բայց իր ճառագայթները չեն կրնար իմ սառած կուրծքիս թափանցել... Ի՜նչ գեղեցիկ են առավոտյան մրմունջները... Այա՛ դ որ չեն կրնար զիս օրրել... Սոխակին արցունքներն ալ բարդ մը սառ կավելցնեն կուրծքիս վրա... Ա՜հ, ո՜րչափ երջանիկ է այն, որ ազատ կը թռչի... մինչդեռ տերևի մը կամ բունի մը փեռուբի տակ ազատ սիրտ ու ձայն կա, հոս անոք աղջիկ մը զորավորի մը երկաթե ձեռքերուն ներքև կաշկանդված ու ճնշված է. սոխակը կուլա գիշերը, բայց շուտ մը արևը կը ծագի և կը տեսնե վարդը... Ո՞րն է թշվառին արևը, ե՞րբ պիտի տեսնեմ զրնը Հրաչյա՜... Հայր իմ... Երկու օր, երկու գիշեր է, որ թագավորի մը կամ դահճի մը պժգալի դեմքը պաղած կարձանանա գիմացս, նա սիրս մեջ կը մռնչե, մինչդեռ ես կուզեմ լալ... Հոս թշվառին ձայնը կը մարի... այս շենքին բնակիչ սա արձաններն ալ բռնության և անիծից կոթնած կը քալեն... կը քալեն դեպի դժոխս, անոնց ձեռքերն ալ արյունոտ են... Որչափ կը տարբերին իրարմե հյուղակն ու պալատը... Երկրագին մեջտեղ վիհ մը կա, որուն մութին մեջեն չահ ի ձեռին կարձանանա արդարությունը. հյուղակը հովեն կը տարտի, իսկ պալատը՝ ոճիրներեն... Ո՞վ պիտի ազատե զիս այս գժոխքեն... (կերբա պատուհանեն կը նայի, հանկարծ ապշած ու խռռված տեսարան կուգա) *Ա՜հ, հոն... վարը, տեսա, հայրս էր կարծեմ...* (նորեն կերբա նայիլու) *զիս տեսավ... Բայց ինքը բանտն էր...*

Տեսիլ Բ

Նույն և Արտաշիր

ԱՐՏԱՇԻՐ.— Կանուխ արթնցեր ես, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ա՜հ, (բարձր) գիտես որ չեմ կրնար քնանալ։

ԱՐՏԱՇԻՐ.— Հիրավի սա մոտակա անտառին առավոտյան մրրմունջները և հավքվներու արնագաց ձայները կստիպեն, որ ընդոստ ելնես անկողնեն, արշալուսին առաջին ճառագայթներուն հետ քու անուշ նայվածքդ փառնես և քու սիրավառ սրտիդ բաբախումը սոխակին գեղգեղին հետ հյուսես... Հիրավի, մինթե գեղեցիկ չե՞ն պալատն ու թագավորի մը աղերսը... Կարծեմ շատ անգութ կը վարվիս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՞վ թագավոր, սոխակը վանդակին մեջ չերգեր ու կը մեռնի. ավելի կընտրե թառիլ անտառին տերևներուն մեջ՝ քան թե թրթռալ վանդակին ոսկի թելերուն մեջ. չեն փակեր սոխակը՝ դիտնալով որ կը մեռնի. նա միայն տերևի մը ապաստանած է, իսկ ես՝ սրտի մը, որ անշուշտ հիմա կուլա։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ ո՞վ է այդ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հա՜յր մը... Գթությո՜ւն, տեր արքա, կը պաղատիմ... Թո՛ղ զիս։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց ես կը սիրեմ զքեզ, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Եվ հոս գրկացը մեջ, տեր արքա, ես ալ զքեզ։

ԱՐՏԱՇԻՐ.— Պիտի սիրես... ուշ... Բայց ես հիմա կը մռնչեմ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ա՜հ... կը սոսկամ։

ԱՐՏԱՇԻՐ.— Ո՞չ այնչափ՝ որչափ մահվանե։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ի՞նչ ըսել կուզես։

ԱՐՏԱՇԻՐ.— Դու կըսեիր թե սոխակը վանդակին մեջ կը մեռնի։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Այո՛, կզգամ որ պիտի մեռնիմ չը սիրելու համար։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց մինչև ե՞րբ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հավիտյան... Տեր արքա, եթե կուրծս պատռես սիրտս ձեռք ձգելու համար, պիտի տեսնես որ ափ մը արցունք պիտի կտրի այն ձեռքերուդ մեջ, հոն թափե քու սիրույդ մոխիրները, և ահա ես եմ այն ափ մը կավ, ուր մաքած է կայծն ու գեղեցկությունը. կրնա՞ս վերատեղծել զայն։

ԱՐՏԱՇԻՐ.— Ես Աստված մը չեմ... այլ թագավոր մը, որ կը սիրե ու չսպաններ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ուրեմն բա՛ց ինծի այս պալատին մարմարյա դռները։

ԱՐՏԱՇԻՐ.— Շահանդուխտ, չե՞ս հասկնար... կը սիրեմ զքեզ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Իսկ ես կը մեռնիմ, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց դու դեռ նորատի ու գեղանի ես... Տես ոսկեհուռ ծունկերս քու առջիդ կը չոքին, մինչդեռ վատ կը համարիմ ինքզինքս Աստուծո մը առջև խոնարհելու... Եթե զիս չի պիտի սիրեիր, ուրեմն ինչո՞ւ համար այդչափ գեղեցիկ եղար... Այդ սիրո կայծերդ սիրտս վառեցին... Եթե քեզի նման գեղջուկի մը տված ես սիրտդ՝ թող նա ինծի տար իր բահը և ես իրեն կուտայի գահս, միմիայն քեզնե սիրվելու համար... խոսե, Շահանդուխտ, ի՞նչ պետք է որ ընեմ...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բաժնվինք իրարմե, տեր արքա... Առջի պես դարձյալ դուն՝ թագավոր, ես՝ գեղջկուհի... դուն՝ քու պալատդ, ես՝ իմ տնակս։

ԱՐՏԱՇԻՐ.— Շահանդո՜ւխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ուրեմն ի՞նչ ընեմ, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Հիրավի փշոտ վարդ մ'ես եղեր։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Տեր արքա, վարդին բացած վերքերը դեռ չի բուժած՝ ինքը կը թոռմի։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց եթե դուն փուշ և սուր, կայծակ և մահ ալ ըլլաս, դարձյալ պիտի սիրեմ զքեզ, քանի որ գեղեցկության մեջ սիրո ժպիտ մը եղար ու սիրտս գրավեցիր... Եթե ես չեմ կրնար գեղջուկ մ'ըլլալ, գոնե դուն թագուհի եղիր և քու սիրո ժպիտովդ լույս տուր թագի տակ նսեմացած ճակտի մը, դիր ձեռքդ ծիրանիի տակ հեծող սրտի մը վրա, Աստուծո տար հոգի մը, որ աղամանդներու մեջ դժոխոց բոցերը կերևակայե... Շահանդուխտ, գրկե զիս և եթե կուզես՝ գերեզման ալ տար... Հոն առաջնորդե զիս, ուր քու սիրտդ կը հոլաթևե ու կը սավառնի։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Տեր արքա, թևերս փետրազերծ են, և դու՝ թռի՛ր կըսես ինծի։

ԱՐՏԱՇԻՐ.— Շահանդուխտ, ահա քեզի ոսկեզարդ պալատ, փառք և ճոխություն։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ես իմ տնակս կուզեմ... Տեր արքա, ես կուզամ՝

դու մարգարիտ կը խոստանաս, ես ինչ ընեմ գոհարները, մինչդեռ ալևոր հորս անգին արցունքները գիրկս թափելեն կը զրկվիմ... Հիմա թշվառ հայրս գերեզմանին եզրը գուցե կը դողդողա՝ հառելով նայվածքն այն հորիզոնին, ուսկից զիս ձևակերպող աստղը նշմարեց... Մինակ է նա, զիս և գերեզման մ'ունի միայն, բայց երկուքին մեջ փալփլող գեղեցիկ աստղ մը, որ իր վերջին դողդոջ քայլերուն պիտի առաջնորդեր, հիմա իրեն համար մարած է այն, մարած է ալեզարդ և կնճռոտ ճակտի մը ժպիտը։

ԱՐՏԱՇԻՐ.— Շահանդուխտ, նախ զիս գրկե, որ հետո հայրդ ալ գրկես։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ա՜հ... Ծերունիի մը թառամ ճակտին թառամ ծաղի՞կ կը վայլեցնես, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Է՜հ, ի՞նչ ընեմ, կը սիրեմ զքեզ սրտիս խորեն... Փշրե՛ ոտքերուդ տակ թագիս գոհարները և մի՛ մերժեր սերս, բարձրացիր գահս և մեկ մը ժպտե ինծի... Առանց քեզի ես թագավոր չեմ կրնար ըլլալ, այլ շողշողուն դիակ մը, որ դուրկ է արևեն... Դու՝ արև, ես ալ՝ վհին մեջ ինկած մարդ մը գրեթե, որուն կը զլանաս ճառագայթդ. սոխակ մ'ես դու, որ թագի մը գոհարներն արհամարհելով՝ վարդին սուտ մարգարիտներովը խաբվիլ կուզիս... որ մթին անտառին խորերը կախորժիս թառիլ. բայց եթե սոխակն ալ քեզի պես գեղեցիկ ըլլար՝ սևի ու տերևի տակ չի պիտի թաքչեր, այլ սրտերը շարժելեն զատ պիտի թռվեր։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Տեր արքա, այդ խոսքերով ավելի կը զարհուրեցնես զիս... Ավելի աղեկ կընես, երբ ինծի «Տգեղ ես» ըսես և պալատեդ դուրս ընես. կը տեսնես որ չեմ սիրեր զքեզ. խնայե ալևոր հորս, որուն մազերը բախտին շանթին անընդհատ գործած ավերակաց մոխրովը ճերմկցան... Աշխարհիս վրա եթե ամենասիրելի մեկն ունիս՝ անոր սիրույն համար ըլլա... Թո՛ղ զիս։

ԱՐՏԱՇԻՐ.— Ամենասիրելիս դու ես, քու սիրո՞ւդ համար թողում զքեզ, մինչդեռ դու չես սիրեր զիս... Եթե թողում զքեզ, պիտի մթագնի այս պալատը, եթե ջահեր ալ վառվին... Սոսկալի կըլլա գիշերը, երբ լուսինը չը թագավորեր, լուսնի շաղովը ողողված գերեզմանին վրա անթիվ հույսեր կը թռչտին, իսկ մութին մեջ գերեզմանը դժոխոց դուռ կը ձևանա... Առանց

քեզի կը զզվիմ ու կը սոսկամ ես այս պալատեն, որուն մարմարյա կամարներուն մեջեն անմեղներու արցունքները շիթ առ շիթ կը կաթին և այս ծիրանիին վրա ադյունոտ ոսկրներ կերևին աչերուս... Մի՛ մերժեր զիս, թագավոր մ'է որ քեզ կը պաղատի, թագ մ'է, որ առջիդ կը ծռի... Պիտի սիրե՞ս զիս... Վերջին խոսք մը, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Տեր արքա, մանկիկն ալ թիթեռնիկին սիրահարն է, բայց շատ անդամ զայն կը մեռցնե։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց դու իմ հոգիս պիտի ըլլաս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Տեր արքա, տարփածուս չեղած՝ սպաննիչս եղիր։

ԱՐՏԱՇԻՐ.— Շահանդուխտ, վերջապես դու իմս պիտի ըլլաս... կը հասկնա՞ս...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Տեր արքա, եթե կաթիլ կաթիլ արյունս քամես, դարձյալ անմեղ պիտի մնամ։

ԱՐՏԱՇԻՐ.— Հայրդ բանտին երկաթներուն մեջ կամ ձեռացս մեջ է... Կուզե՞ս վերջապես իր դիակը տեսնել։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ա՜հ... Ո՛չ, ո՛չ... Հայրս թող ապրի։

ԱՐՏԱՇԻՐ.— Ուրեմն ալ իմս ես։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՜հ, Աստված իմ... Աստված իմ։

ԱՐՏԱՇԻՐ.—(մեկուսի) Ոտքի ձայն մը կա... Ո՞վ է այն...

Տեսիլ Գ

Նույնք և Սպանդարատ

ԱՐՏԱՇԻՐ.— Ի՞նչ կա, Սպանդարատ։

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Տեր արքա...

ԱՐՏԱՇԻՐ.— Խոսե։

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Սահակ կաթուղիկոս...

ԱՐՏԱՇԻՐ.— Շարունակե տուրեմն։

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Եկած է և վեհափառությանդ հետ կուզե տեսակցիլ։

ԱՐՏԱՇԻՐ.— Անե՞ծք... Չե՞ս գթներ զինքը ճամբել։

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Արդեն մեծ գահլիճը մտած է, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.—(բարկացած) Սպանդարա՞տ...

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Պահնորդները քու հրամանդ ըլլալով արդեն կաթուղիկոսին իմացուցած էին, տե՛ր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Վռնտե՛ զուտ այդ անպիտան մարդիկը։

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Գլխուս վրա, տեր արքա (երթալու կելլա)։

ԱՐՏԱՇԻՐ.— Կեցի՛ր... Օրիորդը թագուհվույն սենյակը տար։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.—(ոտքերուն վրա) Տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Թագուհի պիտի ըլլաս (Սպանդարատ զայն կը առնի)։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.—(մեկուսի սոսկմամբ) Ո՜հ, ո՜չ...

ԱՐՏԱՇԻՐ.—(առանձին) Խաչն ինծի միշտ խոչընդոտ է. կամ ես պիտի չախչախիմ, կամ զայն պիտի չախչախեմ վերջապես... Գլխեմ, գեռ զոհ պետք է զահիս անպարտությանը համար։

Տեսիլ Դ

Արտաշիր և Սահակ

ՍԱՀԱԿ.— Ա՛լ բավական է, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Բարի եկար, Սրբազան հայր... Տեսնենք ի՞նչ լուր ունիս։

ՍԱՀԱԿ.— Արյան մեջ վարդ կը բուսնի՞, տեր արքա, փլատակը կը ժպտի՞ միթե... Այնպես է, խավարին մեջ ան ամբոխը ինչմարվիր, վասնզի ինքն ալ խավարին մեկ մասը կը կազմե... Տեր արքա, դու արցունք կը սրսկես և կուզես մարգարիտ ժողվել... Արդեն խորհրդավոր ճակատագիրն աչերուս կաթիլ և հոգվույս բարբառ տվավ՝ Հայությունը լալու ու ողբալու համար միայն. օրորոցիս մեջեն տեսա այն աստղին շողշողումը, որ գերեզմանիս ալ կամարին վերև կը մարի... Թանձրացան ամպերն ալևոր ճակտիս վրա, կայծակ մը կարող է զիս հավիտենականության մեջ գլորելու, բայց Հայաստա՞նը... Արդեն անոր դագաղը շրջապատեցին գյուղացոյնց ուրվականները... Սոսկա՛, տեր արքա, հայրդ կանգնեցր, դու կը կործանես... Վռամշապուհ լուռ և հիշատակաց մեջ մնաց։ Իսկ Արտաշիր խավարի և փլատակաց մեջ պիտի ինկա։

ԱՐՏԱՇԻՐ.— Սրբազան հայր, կարծեմ յանիրավի կը դատապարտես թագավոր մը, որուն հետ ոչ թե Հայաստանը, այլ նա Հայաստանի հետ կիյնա... Ինծի ոչ թե Հայաստանը, այլ թագ մը տվիք, եթե Հայաստանը շինելու համար թագս կուզեք, առեք զայն։

ՍԱՀԱԿ.— Տեր արքա, այն գահը, ուր ելար, տաճար մ'էր, իսկ այն, զոր կը թողուս՝ դագաղ մ'է... Պալատեն ու անտառեն, սերեն և սրտեն ուրիշ ի՞նչ տեսար ու գործեցիր... Միայն Հայության գերեզմանը փորելու համար գործածեցիր սուրդ. նախնյացդ այս վեհավայրը անառակությամբ և արյամբ սրբապղծեցիր, թագիդ մեջ ամփոփեցիր ոճիրը և մոխիրը, գահիդ պատվանդանը ըրիր՝ արցունք և Աստված, հայրենիք և իրավունք. փետտեցիր Հայաստանի փառաց դափնիները և նախատանաց փուշեր բոլորեցիր, կործանեցիր կոթողը և նոճի կանգնեցիր, վերջապես թագ առիր, դագաղ կուտաս։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ ո՞վ այդչափ անխղճորեն կը դատապարտե զիս, Սրբազան հայր, ո՞վ այդչափ մոխիր փառքիս և հիշատակիս վրա կուզե թափել, ուրեմն թագավոր եղա Հայաստանի դատապարտյալ դահիճը ըլլալու համար, ո՞վ է որ այս անիրավ զրպարտությանց կը հանդգնի շուրթերը բանալ։

ՍԱՀԱԿ.— Քու արարքդ զքեզ կը դատեն և կը դատապարտեն, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ ի՞նչ ըրած ունիմ ես։

ՍԱՀԱԿ.— Ո՞ւր է թագուհին։

ԱՐՏԱՇԻՐ.— Մեռավ։

ՍԱՀԱԿ.— Ո՛չ, սպաննվեցավ... այնպես չէ՞... Հանգուցելույն վրա հսկող քահանայն դիակը Փառներսեհի ապարանը կը փախցնե և թույն տվող պալատականը իր ակամա ոճիրն անոր կը խոստովանի։

ԱՐՏԱՇԻՐ.— Ի՞նչ ըսել կուզես։

ՍԱՀԱԿ.— Փառներսեհի վրեժխնդրությունը կասեցուր, երդվի՛ր այսուհետև հարգել թագդ և հայրենիքդ։

ԱՐՏԱՇԻՐ.— Ա՜հ, չեմ կրնար խոնարհիլ և գահին բարձրեն նախարարի մը ոտքն իյնալ։

ՍԱՀԱԿ.— Եթե ոչ՝ պիտի տապալի գահդ և Հայաստանը։

ԱՐՏԱՇԻՐ.— Դեռ ի՞նչ կուզես ինձնե։

ՍԱՀԱԿ.— Հորդ սկզբունքը և նախնի Հայաստանը։

ԱՐՏԱՇԻՐ.— Ուրեմն այս պալատ չէ, այլ բանտ, այս փառքերը իմ շղթաներս են, ես թագավոր չեմ, այլ Հայուն ստրուկը... Առեք ուրեմն այս անիծյալ թագը և ազատ թողեք զիս։

ՍԱՀԱԿ.— Տեր արքա, ազատ ես Հայաստանը վերականգնելու... Դեռ թագավոր եղիր և Հայուն ողջ տուր Հայաստանը...

Մի՛ թողուր, որ ճաղատ ճակտիս վրա իյնա հոգեսպառ Հայաստանը, մի՛ թողուր որ գերեզմանիս խավարին մեջ թավալին ու մարին մեր հայրենյաց փառաց և հուսո աստղերը... Եվ դու, ո՜վ երկինք, եթե Հայաստանի համար կայծակ մը պատրաստեր ես, զի՛ս զարկ, զի՛ս, որ անոր համար կը շնչեմ, թո՛ղ կորնչի Սահակ, միայն թե ապրի Հայաստան... Տեր արքա, Հայկի նետը Հայուն կուղղես, Արտաշեսի սուրը կը ժանգոտես, Տիգրանի թագը կը նսեմացնես, Վռամշապուհի ջահը կը մարես... Կուզես Հայաստանը ավերակ և մոխիր դարձնել, ուր բուն կողբա և հիշատակները կը թաղվին... Բայց մտածե, որ դու ալ այն գերեզմանը պիտի իջնես, ուր նախնիքդ իջան, և անոնք պիտի բզկտեն պատանքդ և ապագա սերընդյան արտասվաթոր զավակները պիտի գան գերեզմանիդ քով և պիտի գոչեն. «Թշվա՜ռ թագավոր, տո՛ւր մեր Հայաստանը». պիտի փշրեն իրենց սուրերը այն քարին վրա, որուն ներքև ապաստանած ես, դու չի պիտի լսես, բայց պիտի գոռաս, դու չի պիտի զգաս, բայց պիտի լաս... Ուրեմն, տեր արքա, թագավորե՞լ կուզես թե՞ կործանել։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ ի՞նչ է թագավորելը, եթե ոչ հրամայել և զբոսնուլ. թագավորը սուր կուտա և ժողովուրդը կը զարնե կամ կը զարնվի, դրոշակ կուտա և զինվորը կը կանգնե կամ իրեն պատանք կընե, դեռ գործադրելու ի՞նչ պարտք ունի թագավոր մը։

ՍԱՀԱԿ.— Պալատն արյամբ ողողել և ժողովուրդը մտածել։

ԱՐՏԱՇԻՐ.— Պալատն իր շուրջն ստվար պատվարներ ունի և պետք չէ որ ներսը ոգեսպառ իյնողին ձայնը դուրսեն լսվի. այս պալատը իմս է, հոս տեղի դիակը ժողովուրդին մարմինը չէ, այլ գրեթե քար մը՝ պալատին և գերեզմանին մեջտեղ։

ՍԱՀԱԿ.— Տեր արքա, պալատը թափանցող ահեղ նայվածք մը կա։

ԱՐՏԱՇԻՐ.— Կայծակ մը գուցե՝ ուսկից չը դողալու համար խղճի անապատ մ'ունիմ։

ՍԱՀԱԿ.— Տեր արքա, երկնի փոթորիկը զայն կալեկոծե։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց կը խաղաղի՛ կործանում առթելե հուսահատած... Քանի որ այս թագը գլուխս դրիք՝ պետք է որ մեռնիք. եթե հրամայեմ։

ՍԱՀԱԿ.— Ի՞նչ կընես, Արտաշիր, կատես Հայաստանը և կը նա-

խատես զԱստված. քեզ պատժակից ընել կուզես Հայն ու Հայաստանը... Թագավորի մը համար հայրենիք մը կործանի, Թագի մը զոհվի ազգ մը։

ԱՐՏԱՇԵՒ.— Ի՞նչ կուզես որ ընեմ. ահա ես կիջնեմ գահես. Թող Հայուն գահը և դամբանը իմ Թագավորությանս ատեն չը պղծի, այնպիսի արի մը Թող գա իմ տեղս, որ Հայաստանի փառաց յուշասպառ կանթեղը կարենա վառել, որ Հայաստանի ավերակ վայրերը կարենա ոսկեզօծել։

ՍԱՀԱԿ.— Պարսիկն է այն, որ ավելի կը մարե ու կը տապալե, գահիդ վրա կը կանգնե իր սուրը և հուրը... Տեր արքա, ավելի կը մեղանչես, երբ գահդ Թափուր Թողուս, որուն վրա հառած են միշտ Պարսկաստանի արյունռուշտ աչքերը, սուր հայկական սրտերու, հուր հայկական հիշատակարանաց. վերջապես Հայաստանի դամբանին վրա մութ ու փոշոտ կանթեղ մը միայն պիտի պլպլա, որ կարծես Թե կուլա, քան Թե լույս կուտա. այս ավերակները մութ գրերով իրենց վրա «Արտաշիր» անունը պիտի գրեն, Թեպետև Արտաշիրի անունն ալ հավիտենականության դրանց վրա սև գրերով պիտի քանդակվի։

ԱՐՏԱՇԵՒ.— Եվ դեռ ի՞նչ ընելու եմ ուրեմն։

ՍԱՀԱԿ.— Դարձուր ակնարկդ հորդ դամբանին և Հայաստանին վրա, առաջինը կսպառնա, երկրորդը կը պաղատի։

ԱՐՏԱՇԵՒ.— Եվ ի՞նչ կրնան խնդրել ինձնե անոնք։

ՍԱՀԱԿ.— Խոնարհություն և հեզություն։

ԱՐՏԱՇԵՒ.— Եվ գահի՞ս վրա։

ՍԱՀԱԿ.— Այո՛... Ա՜հ, ես այդ խաղաղության բագինին վրա կը զոհվեի Հայուն և գահուն մեջտեղ, եթե ինձնե եռքը Հայաստանը չը մտածեի, կուզեմ Հայուն ճակատագրին վճիռը կարդալ, տեր արքա, կերդնո՞ւս վերջին անգամ գահդ սուրբ սրրտով ընդգրկել։

ԱՐՏԱՇԵՒ.— Կերդնում... Սրբազան հայր, քու դողդոջ ձայնովդ գիս կը խրախուսես և կը վախցնես... Գնա, դեռ ողջ է Հայաստանը, կը խոնարհիմ զայն վերցնելու համար։

ՍԱՀԱԿ.— Որչա՜փ գթասիրտ ես, տեր արքա։

ԱՐՏԱՇԵՒ.— Եվ դեռ ուրիշ բան մը կը խնդրե՞ս ինձնե։

ՍԱՀԱԿ.— Ոչինչ, միայն Հայաստանը... Զայն պիտի շնորհես, այնպես չէ՞։

ԱՐՏԱՇԵՒ.— Ինչպես որ ձեռքս հանձնեցիք։

ՍԱՀԱԿ.— Վռամշապուհի ջահը պիտի վառես։

ԱՐՏԱՇԵՒ.— Անցելույն արյան կոհակներեն Թոթափած՝ Հայաստանի և խաղաղության գիրկը կուզեմ նետվիլ։

ՍԱՀԱԿ.— Օրհնյալ ըլլաս, տեր արքա, երբ Հայաստանը փրկեի, այսչափ ուրախ չը պիտի ըլլայի... Մնասջիր խաղաղությամբ... տեր արքա (կը մեկնի)։

Տեսիլ Ե

Արտաշիր և Բաբել

ԱՐՏԱՇԵՒ.— (միենակ) Գնա՛, անմիտ կրոնավոր, Արտաշիր Թագ ու կամք ունի, կուզես որ սև փիլանիդ և փայտե խաչիդ առջև խոնարհի՞մ. այո՛, կը խոնարհիմ՝ ավելի դիմադրելու համար։

ԲԱԲԵԼ.— (դրսեն) Թագավորը, Թագավորը, վայրկյան մը իրեն հետ պիտի տեսակցիմ։

ԱՐՏԱՇԵՒ.— Ո՞վ է այս մարդը (խորեն ճայելով) ծերունի մը, զոր պալատականք կտրգիլեն. Թողեք այդ մարդը որ գա, պալատականք. հիմա կը հասկնամ, Թե ինչ կխնդրե այդ ծերունին։

ԲԱԲԵԼ.— (ներս մտնելով) Տեր արքա։

ԱՐՏԱՇԵՒ.— (մեկուսի) Ծերունի զորականը...

ԲԱԲԵԼ.— Ձե՞ս պատասխաներ, տեր արքա։

ԱՐՏԱՇԵՒ.— Կը զարմանամ, Թե զինվոր մը իր Թագավորին պալատը մտնելով ի՞նչպես կը հանդգնի, գրեթե սպառնալից անտեղի հարցում մը ընել իր տիրոջը դեմ, որ ձեռացը մեջ կյանք և մահ կը բռնակալե։

ԲԱԲԵԼ.— Իմ տերս երկինքն է, տեր արքա, եթե դու հոս կը հրամայես՝ շատ կը սխալիս ու կը խաբվիս, փառեղի դալուկ լուսություն մը կրնա քեզ իր գիրկը բանտարկել. եթե բախտը քեզ Թագավոր ընտրեց, միայն Թագավորե, և հեգ ու ծեր զինվորի մը աղջիկը մի՛ բռնակալեր պալատիդ արյունոտ պատերուն մեջ... Ա՜հ, մի՛ խնդար, տեսնելով որ կնճռոտ ճակատս կը դեղնի. եթե բիբերուս կրակն սպառած է, երկնից կայծակները փոխ կառնեմ, տեր արքա, տո՛ւր աղջիկս։

ԱՐՏԱՇԻՐ.— Ներունի, Սահակ կաթուղիկոսի քղանցքին տակ գնա, որ խելաբերիս։

ԲԱԲԵԼ.— Տեր արքա, թեպետ հոգիս բերանս է հասած, բայց խելքս գլուխս է, վատի մը ծիծաղը կը նշմարեմ թոռմած դեմքիդ վրա... Խնայե՛ աղջկանս, տեր արքա... Անմեղ է... ո՞րչափ ալ գունատած էր։

ԱՐՏԱՇԻՐ.— Ըսի, թե քու խոսքերեդ երբեք բան մը չեմ հասկնար, կիմանա՞ս։

ԲԱԲԵԼ.— Եվ վերջապես պիտի տա՞ս աղջիկս։

ԱՐՏԱՇԻՐ.— (սպառնալից) Դուրս ե՛լ, ծերունի, ապա թե ոչ, ես կը հանեմ։

ԲԱԲԵԼ.— Առանց աղջիկս ինծի դարձնելո՞ւ... Անկարելի է այդ։

ԱՐՏԱՇԻՐ.— Կը դիմադրե՞ս արքայական բարձր հրամանիս։

ԲԱԲԵԼ.— Տեր արքա, ա՜ռ վիզս և տո՛ւր աղջիկս... Արցունքս ցամքած է, որ ոտքերդ թրջեին, արյունս ալ ցամքած, որով աղջիկս գնեի. տեր արքա, կմախք մըն եմ ես և իմ տիեզերքս աղջկանս նայվածքն է, եթե նա ողողի, ես ալ կը խեղդվիմ... Բայց դու երբեք ինծի մտիկ չես ըներ, երեսդ միշտ անդին կը դարձնես... Ա՜հ, Աստուծո ձեռքը քու աչերուդ մեջ արցունք չէ՞ քամեր, սրտի տեղ քա՞ր է դրեր կուրծքիդ տակ... Տեր արքա... Տես, ալ չեմ սպառնար, այլ կը պաղատիմ... Ծունր կուգամ փոխանակ սուր փայլատակելու, կարտասվեմ՝ փոխանակ շանթեր թոթափելու... Իմ աղջիկս ինծի դարձնելու համար պաղատանք, արցունք և արյուն կը թափեմ... Ընտրե և վճռե՛ ինչպես, ո՞վ թագավոր, կամ աղջիկս կամ անեծքս։

ԱՐՏԱՇԻՐ.— (խորեն կանչելով) Սպանդարատ։

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Պատրաստ եմ հրամանիդ, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Հետս եկուր։

ԲԱԲԵԼ.— Տեր արքա... Տեր արքա...

ԱՐՏԱՇԻՐ.— (առ Բաբել) Դահլիճին մեջ սպասե։

ԲԱԲԵԼ.— Պիտի դարձնե՞ս ինձ աղջիկս։

ԱՐՏԱՇԻՐ.— Քիչ մը եւ՛ քը։

ԲԱԲԵԼ.— Շահանդուխտս, այնպես չէ՞ (պատկերը կը փոխվի)։

ՊԱՏԿԵՐ Դ

Պալատին մեկ սրահը.— Խորը դուռ.— Կողմնական սենյակներ։

Տեսիլ Զ

Հրաչյա և Շավարշ

ՀՐԱՉՅԱ.— Դուն աչքովդ տեսար, այնպես չէ՞, Շավարշ։

ՇԱՎԱՐՇ.— Գրեթե, տեր իմ... Ո՜հ, շատ մի հարցաքններ զիս, բավական է ինձ համար այն ցավը, որ այնպիսի բարի տիրուհիե մը զրկվեցա... Ալ պիտի թողում ես այս պալատը, ուր միշտ թագուհվույն ուրվականը գրեթե ամեն ատեն աչքիս առջև կանգնած կը տեսնեմ։

ՀՐԱՉՅԱ.— Վերջապես անոք մնացի և գահի մը շուքին տակ կուլամ։

ՇԱՎԱՐՇ.— Եթե կը հաճիս, ես քու քովդ կը մնամ, տեր իմ, և կը ծառայեմ։

ՀՐԱՉՅԱ.— Բարի ծերուկ, ալ գնա այս պալատեն, քու վերջին օրերդ անմեղ ընտանյացդ գիրկն անցնելու և ալևոր ճակատդ ձիթենիի մը զով ստվերին մեջ հանգչեցնելու. հոն հեշտ հովը հավիտենականության երազներով ողողյալ կանցնի ճակատդ բարդերուն մեջեն և արևուն վերջին ճառագայթը դեղնած ժպիտ մը կը թողու դեմքիդ վրա... Քանի որ անմեղ ես, գնա՛ ոճրագործ չըլլալու համար... գնա՛, խղճահար չը մեռնելու համար։

ՇԱՎԱՐՇ.— Այո՛, դեռ անմեղ եմ, տեր, թեպետև սխալմամբ... Կարծեմ... Այո՛, անմեղ եմ և ալ կը թողում պալատը... Բայց տեր իմ, քեզ բան մը ըսել հարկ կը տեսնեմ, քանի որ ես պիտի մեկնիմ։

ՀՐԱՉՅԱ.— Խոսե՛, Շավարշ, ի՞նչ կուզես։

ՇԱՎԱՐՇ.— Ուզել չէ, տեր իմ, ըսել։

ՀՐԱՉՅԱ.— Ըսե ուրեմն, բարի ծերունի։

ՇԱՎԱՐՇ.— Բայց տեր իմ, քանի մ՚օրե ի վեր է որ հոս չէիր հաճախեր, նույն միջոցին աղջիկ մը բերին պալատը և իմ խնամատարությանս հանձնեցին. աղջիկը գիշերանց խաբելով հոս բերեր էին, խեղճը լալով կը պաղատի, որ զինքն ազատեմ,

մենակ ծերունի հայր մ'ունի եղեր, թագավորը զինքը շատ բռնադատեց։

ՀՐԱՉՅԱ.— Վերջապե՞ս։

ՇԱՎԱՐՇ.— Եթե այսօր չազատի... Թագավորը... Այո...

ՀՐԱՉՅԱ.— Եվ ո՞ւր է այդ աղջիկը։

ՇԱՎԱՐՇ.— Առ այս բանալին, տեր իմ, թագուհվույն սենյակը պիտի գտնես զինքը։

ՀՐԱՉՅԱ.— (առնելով և կողմնական դուռը ցուցնելով) Այս սենյակը, այնպես չէ՞։

ՇԱՎԱՐՇ.— Այո՛, տեր իմ... Բարի ու անմեղ աղջիկ մը, գեղեցիկ՝ հրեշտակի նման, քու քույրդ գրեթե, ազատե զինքը հորդ ձեռքեն։

ՀՐԱՉՅԱ.— Դուն անհոգ եղիր, Շավարշ։

ՇԱՎԱՐՇ.— Մի՛ թողուր, որ թագուհվույն սենյակը կրկին պղծվի, տեր իմ։

ՀՐԱՉՅԱ.— Բավական է որ այս բանալին ինձ տվիր։

ՇԱՎԱՐՇ.— Բայց մի՛ աճապարեր, տեր իմ, ինչվան որ ես պողատեն բավական հեռանամ, կը վախնամ որ...

ՀՐԱՉՅԱ.— Ապահով եղիր, բարի ծերունի։

ՇԱՎԱՐՇ.— Ուրեմն հանգիստ սրտով կը բաժնվիմ, տեր իմ... Մնաս բարյավ (կը մեկնի)։

Տեսիլ Է.

Հրաչյա (մենակ)

(Դեպի դուռը կուգալի, հետո կանգ կառնե) Չեմ համարձակիր... Գեղեցիկ և անմեղ աղջիկ մը, Շահանդուխտիս նման, արդյոք կը քնանա՞, կուլա՞, կերազե՞... Շահանդուխտիս սիրույն համար հարկ է որ ազատեմ զինքը... Ի՞նչ անգութ սիրտ պետք է գողտրիկ արարած մը լացընելու համար, ապատափթոր սիրտ մը կոխկոտելու համար. ա՜հ, որչափ թշվառ է այն ազգն, որ կատիպվի հոգին ատելը... Հարկ է որ ազատեմ շուտով այդ անմեղը. բայց իմ Շահանդուխտս ի՞նչ եղավ, առանց անոր ուշս, ուշս և հոգիս կապտեր... Վայրկյան մը աչերս բացավառ կը բորբոքին, վայրկյան մը շանթահար գերեզման-

նին ժայռոտ եզրերը կը թափառիմ... Ի՞նչ եղավ Շահանդուխտս... Հավիտենական լռություն ու մթություն կը տիրե այն հյուղակը, որ իմ տիեզերքս էր... Հոն՝ վիշտ, հոս՝ ոճիր, ո՞ւր երթամ, գերեզմա՞ն. բայց դեռ չապրեցա... (Փիչ մը մտազբաղ կենալեն վերջը) այլ հոն ալ անմեղ մը կուլա, գոնե զայն ազատեմ (դեպի դուռը կերթա և զայն բանալ կսկսի)։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (ներսեն) Դեռ ոչ, տեր արքա։

ՀՐԱՉՅԱ.— (մեկուսի զարմացած) Այս ձայնը...

Տեսիլ Ը

Նույն և Շահանդուխտ

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (սենյակեն դուրս նետվելով և դեմքը ձեռքերովը ծածկած ոտքը իյնալով) կաղաչեմ... Դեռ ոչ։

ՀՐԱՉՅԱ.— (մեկուսի ճափշտակված) Շահանդո՜ւխտ... (Շահանդուխտ գլուխը վեր առնելով Հրաչյա կը տեսնի և նիչ մը կարձակե)։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ի՞նչ կը տեսնեմ։

ՀՐԱՉՅԱ.— Շահանդուխտ, Հրաչյայն եմ ես։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հրաչյայն ոսկի չը հագնիր, Հրաչյայն պալատը գործ չունի։

ՀՐԱՉՅԱ.— Ջե՞ս ճանչեր զիս, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Կը ցավիմ, որ զիս խաբեցիր... Բայց արդեն ժամանակն անցավ։

ՀՐԱՉՅԱ.— Ի՞նչ կըսես, Շահանդուխտ, կը մոռնա՞ս, կը մերժե՞ս զիս, ա՜հ, ներե ինձ եթե ատելի և ապառնի ծիրանի մը ցնցոտիով ծածկեցի քեզնե սիրվելու համար... կը նետեմ ահա ես այս ոսկեհուռ զգեստները, կը թողում պալատը, զոր մորս անբիծ արևը ողողեց. երթանք հյուղակը, այն սիրո բագինը, ուր առաջին անգամ մեր ճակատը կարմրեցավ և մեր սիրտը բաբախեց, ուր արևուն և սիրո ճառագայթները մեզ իրարու կապեցին, ուր ոչ ես գեղջկուհի տեսա և ոչ ալ դու արքայորդի... Մինչդեռ մեր մեջտեղի երևակայական վիհը մեր սիրովը լեցուցինք, ի՞նչ բան կրնա արգիլել մեզ զիրար գրկելու, սիրելու և միատեղ մեռնելու... Ո՜հ, որչափ դեղներ է գեղեցիկ ճակատդ... Շատ վիշտ կրեցի՞ր, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Կը մեղքնա՞ս զիս դեռ, Հրաչյա։

ՀՐԱՉՅԱ.— Շահանդուխտ, ի՞նչ շուտ սառեցան սիրավառ շուրթերդ... Ա՜հ, այդ արհամարհոտ ակնարկներդ թունավոր նետերե ավելի կը խոցեն սիրտս... Գթա՛ ինձ, Շահանդուխտ, դեռ ես այն Հրաչյայն եմ, զոր քու հյուղակդ ընդունեցիր... Շահանդուխտ...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց արդեն ամեն բան լմնցավ։

ՀՐԱՉՅԱ.— Ա՜հ... Միթե հայրս...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Տես ճակատս կը կարմրի, Հրաչյա... Եվ ահա չը կարմրելու համար...

ՀՐԱՉՅԱ.— Վե՞րջը...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Պիտի մեռնիմ, Հրաչյա։

ՀՐԱՉՅԱ.— Ի՞նչ կըսես...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (սրվակ մը ցուցնելով) Տես... Թույն...

ՀՐԱՉՅԱ.— Խմեցի՞ր...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Քեզ սիրելու համար։

ՀՐԱՉՅԱ.— (ձեռքեն կորզելով) Ես ալ մեռնիմ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (թող չտալու ջանալով) Կեցի՛ր, կեցի՛ր։

ՀՐԱՉՅԱ.— (խմելով) Միթե չուխտեցի՞նք միատեղ մեռնիլ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Դեռ կը սիրե՞ս զիս, Հրաչյա։

ՀՐԱՉՅԱ.— Կը հարցնե՞ս... Գերեզմանեն անդին ալ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ներե ինձի, Հրաչյա, գրկվինք... Պիտի մեռնինք. ըսի քեզ, որ չը պիտի թողուն մեզ հանգիստ սիրելու... Ոտքերնուս տակ վարդը թոռմեցավ... գլուխնուս վերև աստղը մարեցավ... Սերը երկրի վրա վիշտ և հավիտենականության մեջ նշույլ ունի... Սերը՝ որ հոս կապարյա թևեր տվավ, հոն ոսկի թևեր պիտի տա... հոն ո՛չ թագ կա և ո՛չ սուր, որ մեր մեջ արձանանա... Ա՜հ, սիրտս կայրի...

ՀՐԱՉՅԱ.— Սիրո վերջին և ուժգին բոցն է այն, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հրաչյա, հա՞յրս...

ՀՐԱՉՅԱ.— Ազատեցավ բանտեն։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ազատեցի՛ր... Բայց ո՞ւր է հիմա։

ՀՐԱՉՅԱ.— Չեմ գիտեր... Ալ մեր վրա խոսինք...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց վերջին անգամ չի՞ պիտի կրնամ տեսնել դինքը։

ՀՐԱՉՅԱ.— Ալ երկինքը, Շահանդուխտ... Մոռնանք աշխարհը։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հրաչյա, դժվար է մոռնալ աշխարհը, երբ հոն սիրելի մ'ունիս... հայր մը, որուն հոգին ես էի։

ՀՐԱՉՅԱ.— Մորս սենյակը երթանք, Շահանդուխտ, այն արտասվաթորմ անկողնույն վրա, ուր դու նիրհեցիր և աչերնիս հավիտենականության գոցենք... Կզգամ, որ պիտի մեռնիմ... Երթանք, այն սենյակը քաշվինք, որ մեր վերջին քունը չի վրդովի ատելի մարդոց տրոփներեն ու նայվածքներեն։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հառենք աչքերնիս այն հորիզոնին վրա, ուր պիտի թռչինք. մայրս ինձ կսպասե, որչափ պիտի հրճվի, երբ զքեզ իմ գիրկս տեսնե... Ես ալ հորս պիտի սպասեմ... Ո՜հ, այն հուր աչերդ, որ իմ սիրտս վառեցին, վերջապես պիտի մարին, Հրաչյա...

ՀՐԱՉՅԱ.— Քու աչերուդ վրա... որ անմեղության եթեր մը սրփռեցին։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Կը կթոտիմ, Հրաչյա։

ՀՐԱՉՅԱ.— Եվ ես, Շահանդուխտ... (դեպի սենյակը կը քալեն դողդոջ) Տես հորիզոնը ի՞նչ գեղեցիկ է։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Թռչինք... (սենյակեն ներս կը մտնեն և դուռը կը գոցվի)։

Տեսիլ Թ

Արտաշիր և Սպանդարատ (հետո) Բաբել

ԱՐՏԱՇԻՐ.— (դուռը բանալով) Ո՜վ երկինք... Հրաչյայի գիրկը։

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Մեռած են, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— (դիտելով) Մեռա՜ծ... (դեպի խորի դուռը երթալով և կանչելով) Ներունի, թույն խմեր են... Ինչո՞ւ քիչ մը չաճապարեցի (Բաբել ներս կը մտնե. առ Բաբել), առ ուրեմն աղջիկդ։

ԲԱԲԵԼ.— Օրհնյալ ըլլաս, ո՜վ թագավոր (կերթա և կը տեսնե...) Ա՜հ, մեռա՞ծ կուտաս։

ԱՐՏԱՇԻՐ.— Քովն ալ իմ զավակս է։

ԲԱԲԵԼ.— Բայց ես միանակ մնացի (հուսահատ ծունր կիյնա.— Վարագույրը կիջնե)։

< (ՎԵՐՋ Դ ԱՐԱՐՎԱԾԻՆ) >

ԱՐԱՐՎԱԾ Ե

Գիշեր.— Գերեզմանատուն մը.— Տեսարանին առջև փառավոր շիրիմ մը.— Թանգ սոսիի ծառ մը.— Տեսարանը բացված ատեն Բաբել խորը շիրիմ մը վրա ընկղմացած է.— Երաժշտություն։

Տեսիլ Ա

Բաբել (առանձին)

Կենդանք ինձ, աղշամուղջը և աստեղք բնության, հետ ազգին կը նիրհեն, այս քարին տակ, որ հավիտենականության անողոք ձեռքն է... Որչա՜փ երջանիկ էի, մինչ երբեմն արյունոտ ճակատս պատերազմի դաշտին վրա մահվան դեմ կը խնդար... Սերությունը ցավերու և հուսահատության հասակ մ'է... Ո՜հ, աղջիկս մեռավ, հայրենիքս կը մեռնի, և դեռ ես կը ջնջեմ... Ելի դու ինչո՞ւ կը դեղնիս, Հայաստան, երբ Բաբելի մազերը ճերմկցան և ցավոց սեմին վրա դողդոջեցին... Ո՞ւր բանամ աչերս... Շահանդուխտ, ինձատու ճակտիս հովիկը, արթնցի՛ր, դու ինձ չես լսեր, և ես ալ քեզ չեմ լսեր, որ երթնքեն պիս կը կանչես... Դեռ կեցի՛ր, վրեժ պիտի առնեմ... Վրե՜ժ, վրեժ որ հյուծյալ աչերուս կայծակներ ժայթքեց... Քան քեզի ջունչ տվող Աստծուն, որ դեռ կթոտ բաղկացս զորություն ազդե... Դեռ զինվորության պարտքը կը ճանչեմ, պիտի զարնեմ և պիտի մեռնիմ... Ա՜հ, Շահանդուխտ, աղջիկս, մի՛ կթոտեր զիս. դու ալ ոչյ տուր ինձ, որ զարնեմ (գերեզմանքեն վրա կիյնա)։

Տեսիլ Բ

Նույն, Սուրմակ և Փառներսեհ։

ՍՈՒՐՄԱԿ.— *Միթե այս սոսին տակ ժամադիր չեղա՞նք, իշխան։*

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— *Այո՛, աղջկանս գերեզմանին քով, ինպես որ երեկ իրենց իմացուցինք... Անշուշտ դեռ պիտի գան։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Կը զարմանամ, թե ի՞նչպես կը հանդուրժեն սրտերն այսպիսի արդար վրեժ մը ժամ հառաջ լուծելու... Արդեն Հայաստանը մոլի թագավորի մը և ապիկար կաթուղիկոսի մը*

ձեռքեն պիտի ազատենք, ինչպես որ դուք, Հայոց իշխանքդ խոստացաք զիս կաթուղիկոսության անձնվեր աթոռը բարձրացնել... Եվ ես ալ պիտի ջանամ Արտաշիրը և Սահակն իրենց անարժան գահերեն վար տապալելու հաջողիլ... Ուր որ արդար հարված մը կա՝ հոն կա նաև Աստուծո մատը։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— *Բայց ես կուզեմ Արտաշիրեն վրեժ առնել և ո՛չ թե Հայեն, միթե պիտի չստիպվի՞նք Արշակունի թագավորությունը ծախել Պարսկին՝ Արտաշիրեն վրեժ առնելու համար... Ապագայն արյուն պիտի ժայթքե մեր գերեզմանաց... Երբ մանուկը հորը գիրկը եղած ատեն Պարսիկ իշխող մը տեսնե, պիտի հարցնե իր հորը, թե ինչո՞ւ օտարը կիշխե Հայուն... Հայրն անշուշտ անիծելով պիտի ընե պատմությունը... Երբ պատանին հայրենիք և ազատություն թոթովե՝ Պարսկին սուրը պիտի շողա կրակոտ ճակտին վրա... Կը խնդա՞ս։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Ի՞նչպես չը խնդամ, քաջ իշխան... Դու կը մոռնաս աղջկանդ գերեզմանը, որ գիշերային լռության մեջ արյուն կը հծծե և արդար ու կարմիր վրեժխնդրությունն իրը ամոթ կը նշմարես... Դեռ թողո՞ւնք, որ Հայաստանը վատթարանա, ես չեմ ուզեր որ թագավորին համազոր Սյունյաց իշխանը վրեժխնդրության առջև վատանա... Խե՜ղճ դիակ, ի՞նչ կզգաս արդյոք, երբ հայրդ գերեզմանիդ քով կը վարանի։*

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— *Ա՜հ, կեցիր... Դեռ ողջ եմ... Հանդարտե՛ գերեզմանիդ մեջ, Հերանույշ... Եթե հակառակորդեդ արյուն չառնեմ՝ իմ արյունս առ... Երբ թագն ինձ՝ մեռած է նա... Ներե, տեր հայր, եթե ապագային ձայները վայրկյան մը զիս շփոթեցին... Կզգամ որ մեր սուրն անբիծ է... Երբ հիշենք նախնի Արշակունի գոռոզները, որոնք Հայաստանի ճակտին մեկ մեկ մշտադալար դափնիներ կապեցին, ավելի լավ է որ պատմությունը Պարսկին անհարազատ իշխանությունը լա, քան թե Արշակունի ճետի մը վատթարությունը... Նախատինք է Հայուն Հայե մը նվաստանալը և Պարսիկը փաստ մը պիտի ըլլա պատմության մեջ այս նվաստության, ուրեմն դեռ հանդուրժե՞նք։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Ո՛չ, պետք է որ թագը նախատինքին զոհենք։*

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— *Եվ դեռ ե՞րբ։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Քիչ մը ետքը այս գերեզմանին վրա հավատարմության երդում պիտի ընենք և վաղը Վռամի գահին տակ պիտի ծողվվինք Արտաշիրը կործանելու։*

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Բայց դեռ կուշտեան... Սակայն ի՞նչ ձայն է այս։
ՍՈՒՐՄԱԿ.— Անշուշտ անոնք են, որ կուգան։
ԲԱԲԵԼ.— (որ մինչև այն ատեն գերեզմանին վրա ընկողմանած էր, կը կանգնի, ապշած մտիկ կընե) Միթե վրեժխնդրության ոգի-նե՞ր են ասոնք։

(Դուրսեն նախարարները հետևյալ երգը կերգեն)

Երդնումք յԱստված ի Հայ երկին,
Կործանել գահ, իշխել ազատ.
Վրե՞ժ, անկումն խոնարհի բախտ
Խորտակենք թագն ու թշնամին։

Խավք գիշերի դարան մըթին,
Եվ գերեզմանք լոկ արձագանք
Մեր խորհրդոց արյունաղանգ,
Խորտակենք թագն ու թշնամին։

Տեսիլ Գ

Նույնք, Վաչե, Հմայակ և Նախարարք

ՎԱՉԵ.— (իրենները ուն) Սուր ի պատյան, քաջ իշխանք... Գերեզմաններե վրեժ առնելու չենք։
ՀՄԱՅԱԿ.— Այլ լուսո մեջ պիտի կռվինք։
ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Շնորհակալ եմ, քաջազուն ընկերք, որ ձեր խոստումը գործադրելու համար փութացիք այս վեհավայրը։
ՎԱՉԵ.— Խոստումեն ետքը երդում մ'ալ ունինք, իշխանդ Սյունյաց։
ՍՈՒՐՄԱԿ.— Զոր հիմա այս գերեզմանին վրա պիտի ընենք։
ԲԱԲԵԼ.— (մեկուսի) Հոս կը դավադրեն։
ՀՄԱՅԱԿ.— Այսպիսի հանդիսավոր երդում մը վատ Արտաշիրի հարգը կը բարձրացնե։
ԲԱԲԵԼ.— (մեկուսի) Արտաշի՞ր։
ՍՈՒՐՄԱԿ.— Ճշմարիտ է, իշխան, բայց պետք է երդնունք, թեպետև չեմ հուսար, որ արդար դավադրության մատնիչ մը գտնվի մեր մեջ... Եվ ես անդրանիկն ըլլալ ուզելով այսպիսի նշանավոր ձեռնարկի մը (գերեզմանին մոտենալով) կերդնում այս անբիծ գերեզմանին վրա, որ խաչը տապար և լեզուս թույն պիտի ընեմ և ինչվան որ Արտաշիրեն վրեժ չառնեմ,

երկինք չը պիտի նայիմ... Իշխանդ Սյունյաց, կարգը քուկդ է։
ՓԱՌՆԵՐՍԵՀ.— (նույնպես) Կերդնում աղջկանս անմեղ ոսկորներուն վրա, որ ինչվան որ Արտաշիրը գահեն չը ձգեմ՝ սուրս իր պատյանեն երբեք չի պիտի հանեմ։
ՍՈՒՐՄԱԿ.— Քաջազուն իշխանք, օ՜ն ուրեմն, կարգը ձեզի եկավ... Դուք ալ ձեր երդումը կընե՞ք։
ԱՄԵՆՔԸ.— Կերդնունք մենք ալ մեր Աստծույն և սրույն վրա։
ԲԱԲԵԼ.— Դավաճա՜նք Արտաշրի, ես ալ ձեր երդումը կետ առ կետ կը կրկնեմ ահա Աստծույս, սրույս և աղջկանս գերեզմանին վրա։
ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ո՞վ ես դու։
ԲԱԲԵԼ.— Ձեր վրեժխնդրության զինվորը, չե՞ք ընդունիր։
ՍՈՒՐՄԱԿ.— Ծերունի զորականը։
ՎԱՉԵ.— Ձենք ճանչեր զքեզ։
ՍՈՒՐՄԱԿ.— Ես կը ճանչեմ (Բաբելի). աղջիկդ մեռա՞վ։
ԲԱԲԵԼ.— Արտաշիր մեռած տվավ զայն ինծի։
ՍՈՒՐՄԱԿ.— Այն անմեղ աղջիկն առևանգե՞ց։
ԲԱԲԵԼ.— Չեմ գիտեր... Մեռավ... Չե՞ք ուզեր սուրս... Մի՛ վախնաք, թեպետև ծերունի եմ, բայց կրնամ զարնել։
ՍՈՒՐՄԱԿ.— Դու ալ մեզնե ես, ծերունի... Վաղը, ինչպես որ ըսի, Վռամի գահույթը տակ պիտի արձանանանք... (երթալու կելլան)։

Տեսիլ Դ

Նույնք և Սահակ

ՍԱՀԱԿ.— Կեցի՛ք... Ո՞ւր կը դիմեք։
ՍՈՒՐՄԱԿ.— Մեկդի... Խաղաղության գիրկը։
ՍԱՀԱԿ.— Դողա՜ այն խաչեն, որ գլխուդ կը կրես... Պարսկին արյունռուշտ աչերեն խաղաղությո՞ւն կակնկալեք... Ձեր մոլար քայլերուն խոչընդոտ հսկա Մասիսն անցաք, բայց զիս կոխկռտելով չի պիտի անցնիք։
ՍՈՒՐՄԱԿ.— Ի՞նչ ըսել կուզես ուրեմն։
ՍԱՀԱԿ.— Ահա կուրծքս և խաչս, կրնա՞ք կոխել ու անցնիլ։
ՍՈՒՐՄԱԿ.— Ես ալ խաչ ունիմ. միթե իմ խաչս ձախակողմյան

ավազակի՞ն է... Մեկզի, որ անցնինք... Տես այս գերեզմանը։

ՍԱՀԱԿ.— Ես ալ կը սիրեմ այն բարեպաշտ ոգին, բայց Հայաստանն ավելի կը սիրեմ... Ես ալ կատեմ Արտաշիրը, բայց Պարսիկն ավելի կատեմ... Դու որ կղեր ես, Քրիստոսի «ներեցեք միմյանցը» փոխանակ պաշտպանելու՝ ազգադավ վրեժխնդրության մը դրո՞շը կը ծածանես... Այո՛, Արտաշիր հանցավոր է, բայց Թող Արշակունին չըլլա հանցավոր... Թագավորը կը զղջա իր պժգալի անցելույն վրա և խաղաղության գիրկը կը նետվի. եթե նա Հայ և դուք ալ Հայ եք, ուրեմն ներեցեք իրարու։

ՍՈՒՐՄԱԿ.— Նա շատ անգամներ զղջաց և մենք մինչև ցե՞ր ներենք։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Սրբազան հայր, մեռնողն իմ աղջիկս է և դու շատ դյուրավ կը հորջորջես «ներեցեք» բառը։

ՍԱՀԱԿ.— Եթե այդպես է, կիս զարկեք և թո՛ղ ապրի Հայաստանը։

ՎԱՉԵ.— Ո՛չ մեր քայլին խոչընդոտ ըլլալ հանդգնե և ո՛չ ալ զարնվե։

ՍԱՀԱԿ.— Ուրեմն, անդուրներ, դեռ ի՞նչ ընեմ, որ Հայաստան ապրի. ես էի որ մինչև հիմա երկրե երկիր թափառեցա Հայաստանի ջահ տալու և դուք կը մարեք զայն, ես վայրկյանի մը մեջ հազիվ խոնջյալ կյանքով մը Հայաստանի փոքր ինչ շունչ տվի, և դուք զայն բոլորովին կը խարեք, և որո՞ւ կառաջնորդեք. Պարսկի՞ն, Պարսկի՞ն, որ մեր տաճարները, պալատները, դամբանները և հիշատակարանները մոխրով և սրբապղծությամբ պիտի ծածկե, և այն ատեն դարերու բարդ ի բարդ մոխրույն տակ ո՞վ պիտի կրնա նշմարել Հայուն դամբանը, այն Հայը, որ երբեմն ազատության առաջին ախոյանը հանդիսացավ. այն գահը, որու վրա տիեզերասաստ հսկաներ որոտացին ու անշնչացան, այն գահը դուք Պարսկին կը ծախեք և ի՞նչ իրավամբ։ Դուք Հայ չե՛ք, ազգ չունիք, դուք մարդ չե՛ք, ճիվաղ եք... Ա՜հ, ի՞նչ իրավունք է այս. մեկ Հայ մը անխոնջ աշխատի հայրենիքը լուսավորելու, և շատ մը Հայեր միաբանին զայն անդունդը ձգելու։

ՍՈՒՐՄԱԿ.— Հայաստանը ո՛չ թե անդունդը, այլ խաղաղության ձորը կը ձգենք, մեր մեջ մատնիչ չկա, այլ ազգության պատվույն վրեժխնդիր, վատ է այն, որ պատմության էջերուն մեջ կարձանագրե, թե Սուրմակ մատնության սև դրոշը պարզեց։

ՍԱՀԱԿ.— Ե՛ս, ե՛ս պիտի արձանագրեմ, եթե հայրենյաց ցավոց փոսերուն մեջ շնչասպառ չիյնամ ժամանակեն առաջ և ազգերու առջև ո՛չ թե վատ, այլ արդարադատ պիտի ըլլամ... Բայց մի՞թե ետ չի՞ պիտի դառնաք։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Եթե այս աղջիկն իր գերեզմանին քարը թավալելով ետ դառնա՝ մենք ալ մեր վրեժխնդրության ամեհի հորձանքը պատռելով ետ կը դառնանք, և քանի որ չկա աղջիկս, թող Հայուն գլուխը թագ չըլլա։

ՆԱԽԱՐԱՐՔ.— Կործանի՛ թագավորը։

ՍԱՀԱԿ.— Եվ ո՞վ պիտի կանգնի։

ՍՈՒՐՄԱԿ.— Մեր վրեժխնդրությունը։

ՍԱՀԱԿ.— Խնայեցեք, հայրենյաց իշխաններ, հոգ չէ որ նա առանց թագի ըլլա, այլ չըսեն թե Հայն իր հայրենիքը օտարին մատնեց. չե՞ք մտածեր, գերի և հեգ Հայեր կը պատրաստեք ապագային համար, որոնք իրենց շղթաներուն մեջեն գերություն և օտարություն թոթովել և անիծել պիտի սովրին. ձեր գերեզմանները պիտի փնտռեն ավերակաց կույտերուն տակ, որ ձեր ոսկրները այրեն, այն ատեն ապագա սերնդյան ստրուկ Հայերն օտարության սառնապատ խորերեն իզուր «Հայաստան» պիտի գոչեն, և միայն կործանյալ հիշատակարաններ այն ձայնը խուլ մռնչմամբ մը իրենց մեջ պիտի խեղդեն և այն հայրենակարոտ հառաչները ձեր դժոխոց բոցերուն հետ պիտի խառնվին, և այն ատենի ի՞նչ պիտի ընեք, ի՞նչպես Հայուն պիտի տաք Հայաստանը։

ՍՈՒՐՄԱԿ.— Մեր Սրբազան կաթողիկոսը Ե. Գրոց մարգարեությունները շատ կատարյալ կը շփոթի... Օ՜ն, իշխանք, ա՛լ բավական մտիկ ըրինք, շաղակրատությունները Հայաստանը չեն ազատեր, հիմա չը խոսինք, վատնվի վաղը շատ պիտի խոսինք։

ՍԱՀԱԿ.— Վերջապես հայրենյաց անկումը վճռեցի՞ք։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Արտաշիրի անկումը։

ՆԱԽԱՐԱՐՔ.— Կործանի՛ թագավորը։

ՍԱՀԱԿ.— Ուրեմն վերջապես, գոռոզ Մատթա, վեր առ ամպերուն մեջեն տժգույն ճակատդ և բոլոր տիեզերաց առջև որոտագոչ ձայնե, թե Հայերն իրենց հայրենիքը կը մատնեն։

ՍՈՒՐՄԱԿ.— Հայաստանը կը խաղաղի։

ՍԱՀԱԿ.— Վերջապես կեցցե՛ք, մատնիչք հայրենյաց, դուք Հայ եք և Հային վրեժ կառնեք։

ՍՈՒՐՄԱԿ.— Հայաստանն ազատելու։

ՍԱՀԱԿ.— Ուրեմն Հայաստանեն առաջ ինձնե անիծյալ ըլլաք (ամենքը կերթան, բացի Բաբելեն)։

ԲԱԲԵԼ.— (Սահակի մոտենալով) Ես հոս եմ, Սրբազան հայր, զիս մի՛ անիծեր։

ՍԱՀԱԿ.— Բայց անոնք գացին։

ԲԱԲԵԼ.— Աղջկանս վրեժը լուծելու համար հայրենիքս մատնել ուզեցի... Երդում ըրի և հոս եմ... Թող մեկը երեսիս վատ չը գոչե (դաշույնը կուրծը կը մխե)։

ՍԱՀԱԿ.— Ի՞նչ ըրիր, ծերունի։

ԲԱԲԵԼ.— Աղոթե ինծի համար, Սրբազան հայր, որ աղջկանս հոն գտնեմ (կիյնա)։

ՍԱՀԱԿ.— Ա՜հ, բոլորտիքս միշտ մահ և անկում (վարագույրը կիջնե)։

<(ՎԵՐՋ Ե ԱՐԱՐՎԱԾԻՆ)>

ԱՐԱՐՎԱԾ Զ

Վռամի պալատը.— Սյունազարդ և փառավոր սրահ մը.— Աչ կողմը Վռամի գահը։

Տեսիլ Ա

Վռամ և Սուրեն

ՎՌԱՄ.— Քաջդ Սուրեն, վերջապես Հայաստան վշտալից ճակատը ոտքերուս առջև խոնարհած գթություն կաղերսե ինձմե իր փրկությանը համար. մինչդեռ ես ավելի կուզեմ զինքը տապալել ու ջնջել... Խե՜ղճ Հայ, որ իր ոսոխը ու բարեկամը դեռ չը ճանչեր, չը զարներ իրեն զարնողին և կը խոնարհի. չեմ գիտեր, թե Հայը խոնա՞րհ է թե՞ վախկոտ... Հա՜յ, Հա՜յ, եթե քու հանճարիդ հետ կրակ մը միավորես, տիեզերքը կը գերազանցես ու կը սարսես. դողացեք Հայեն, տիեզերք, եթե Հայերը միաբան ու համախումբ տեսնեք։

ՍՈՒՐԵՆ.— Բայց այդ ալ անկարելի է, արքա քաջ, գուցե առյուծը և վագրն իրարու հետ հաշտվին. բայց Հայը Հայուն հետ չը հաշտվիր... Արտաշես առաջին բոլոր աշխարհ կը խոնարհեցներ, եթե իր բանակին մեջ իր զորքերեն չսպանվեր։

ՎՌԱՄ.— Եվ ի՞նչ եղավ Արշակունի հարստությունը... Իր նախարարներեն մին Պարսկաստանի շահուն համար Արշակունիի ձեռքեն նախագահությունը հափշտակեց և հիմա անոր հաջորդներեն մեկն ալ իր գահը բոլորովին Պարսկաստանի կը ծախե... Եվ ի՞նչ պիտի ընդունի անոր փոխարեն, եթե ոչ նախատինք և անկում... Զարմանալի ազգ մ'է Հայը... Դու ալ Հայ ես Սուրեն, ըսե, ի՞նչպիսի մարդ է Հայը։

ՍՈՒՐԵՆ.— Հայը Հայ ծնելուն միշտ կը դժգոհի, տեր արքա, Հայը հուսահատ ու դժգոհ ազգ մ'է. իր փառքը, զորությունը և ճոխությունը միշտ անկատար կերևին իր աչքին... Եթե բոլոր տիեզերաց ալ տիրե, դարձյալ իր հաղթանակն իրեն համար անկատար կերևի. օտարին շատ կը հարի և, ասով ավելի օտարասեր, քան թե հայրենասեր ազգ մը կը սեպվի։ Ահա կը տեսնես, որ ինքն իրեն փրկութենեն հուսահատած Պարսկաստանեն կակնկալե ղայն... Ինքը չատեր օտարը և կը կարծե, թե օտարն ալ զինքը չատեր... Հայը բարեսիրտ՝ միշտ ուրիշեն բարեսրտություն կակնկալե և միշտ կը խաբվի... Դեռ զարմանալին կա, տեր արքա, մտածե մեկ մը. այսչափ ներքին խռովություն և ատելություն և միշտ ամեն կողմեն արտաքին հարված. դեռ Հայը կանգուն է և ազգ մ'է... Ես կրսեմ, որ եթե բոլոր աշխարհ կործանի ու խառնակի, դարձյալ Հայը Հայ է։

ՎՌԱՄ.— Բայց եթե այսպես Վռամի ապաստանի՝ իր կրոնքն ու ազգությունը շուտ կը թաղե իր կործանյալ հիշատակարանացը մոխրույն տակ... Պիտի տեսնես, որ վաղը Հայաստան չկա... Վաղը Հայը ստրուկ կամ Պարսիկ է։ Վա՜յ այն հարվածյալ ազգին, որ օտարին պատրիչ ու թունավոր լեզվեն կը խաբվի. վա՜յ այն անձին, որ յուր ազգը փառասիրության կամ մեծության կը զոհե, վա՜յ քեզ, Հա՜յ, եթե Պարսկաստանի գիրկը նետվիս (կը մեկնին)։

Տեսիլ Բ

Սահակ (մինակ)

Վերջապես սպիտակ այլացս տակ Հայության աստղին անկո՞մը պիտի տեսնեմ... Մառախուղ մը կը պատե Մասյաց

ճակատը. Հայութեան հետին հառաչանքն է այն, որ այս սև կամարներուն տակ պիտի նվաղի... Ա՜հ, հյուծյալ աչերս չունին շանթեր, որ Հայութեան ոսոխները զարնեմ... Ի՞նչ ընեմ, կը սիրեմ Հայը, կը սիրեմ ազգս սրտիս խորեն... Օրորոցիս մեջ աչերս հաղթութեան դափնյա կամարներուն մեջ բացի, և արդ մոխրի և մառախուղի մեջ գերեզմանս պիտի գոցվի։ Ո՜վ երկինք, այրե հոգիս դժոխոց անծուխ բոցերուն մեջ, բայց կայծ մը տուր Հայաստանի մարած սրտին... Այլ ո՞վ կը մարե Հայուն փառաց ջահը, Հայը, Հայն իր անկումը կը խնդրե և երկինք ի՞նչպես կանգնե... Գոցվեցե՛ք անհուսության անդունդներ... Գոցվեցե՛ք գերեզմանի ահարկու դռներ, ի՞նչպես պիտի ծածկեք թագն ու Հայը ձեր համար մշուշին ներքև... Եվ դո՜ւք, Արշակունի ուրվականներ, դեռ պիտի հանդուրժե՞ք ձեր դամբանաց մեջ։

Տեսիլ Գ

Նույն և Սուրեն

ՍՈՒՐԵՆ.— Ի՞նչ կը մտածես, Սրբազան հայր... կը տեսնես որ անհնար է և վտանգավոր և անհավասար զենքով մաքառիլ... Այնչափ Հայոց նախարարներ Արտաշիրը կամբաստանեն և կուզեն գահեն վար ձգել... Կընդդիմանաս և Շահին ահավոր նայվածքը կը գրգռես վրադ... Միթե ահեղ փոթորիկներու կրնա՞ դիմադրել տկար ծառ մը։

ՍԱՀԱԿ.— Իրավ է որ հայրենյացս ցավերը որդի պես թոքերս և աղիքներս կրծեցին և զիս կմախք մը ձևացուցին, բայց դեռ չը ցամքեցան սրտիս արյան ճապաղիքը և կրնամ դեռ արդարություն աղաղակել կամ աղերսել, մինչև որ անիրավ վճռո մը տակ ձայնս մարի... Դու Հայ էիր, ուրացար ազգդ... Դու չես գիտեր, հայրենասիրությունն այնպիսի բուռն կրակ մ'է, որ մարդս մոխիր կը դարձնե... Դու մարդ չես, պահլավ արյունդ հայրենասերի մը ծախե... Հայրենիք քեզ համար բոժոժի մը ձայն է... Պարսկին գահին երկրպագելու համար թողուցիր և ուրացար հավիտյան հայրենիքդ, որուն զվարթ երկինքին տակ աչերդ լույս տեսան... Ա՜հ, ի՞նչ թե ուրացողներուն մորը կաթը թունավոր եղած ըլլար կամ ժայռերու մեջ ծնեին նոքա։

ՍՈՒՐԵՆ.— Բայց վերջապես մեր ընելիքին վրա խոսինք, Սրբազան հայր, քիչ մը ետքը Արտաշիրի դատաստանը պիտի սկսի, և ես կը խրատեմ քեզ, որ նախարարաց համակարծիք գտնվիս... Ի՞նչ է այս, որ մոլի թագավոր մը կը պաշտպանես, որ բոլորովին ձեր կրոնքը ոտնակոխ ըրած և Արշակունյաց պալատը սրբապղծած է։

ՍԱՀԱԿ.— Այո՛, Արտաշիրը կը պաշտպանեմ, բայց Հայուն իշխանությունը պահելու համար... Ա՜հ, չեմ կրնար հանդուրժել ապագային անիծախառն բողոքներուն... Չեմ կրնար լսել, թե Սահակ ալ առանց արյունը թափելու՝ անտարբեր դիտեց Արշակունյաց գահին անկումը... Ես կուզեմ մաշիլ, դեղնիլ, մարիլ և մեռնիլ հայրենյացս համար, աչերս բաց և կուրծս պատռած... Բայց որո՞ւ կըսեմ... Ոչ ոք իմ զգացմանս կը պատասխանե, մեկը փառք կը տիրե, ժյուսը կին կը սիրե, ուրիշը ոսկի կը սիրե... Սահակն է միայն, որ Հայը կը տիրե։

ՍՈՒՐԵՆ.— Ալ կտրե հույսդ Հայեն, այսուհետև Պարսկեն խաղաղություն պիտի գտնես։

ՍԱՀԱԿ.— Պարսիկն իր գահը Հայաստանի հողին վրա կանգնե՞... Չե՞ք լսեր, Արշակունի գոռոզներ, այսչափ տովա՞ր են ձեր վեմերը, որ այսպիսի ահարկու վճիռ մը չեք լսեր ու չեք ճռնչեր... Դուրս նետվեցեք ձեր բանտեն, ոսկերք Արտաշեսի, դուք վարժ եք հարվածի և կրնաք դողդոջ ձեռքերով սուր գործածել... Ես խաչս կառնեմ, բայց ո՞վ սուր պիտի առնե ինծի հետ։

ՍՈՒՐԵՆ.— Գաստերազգի դաշտը չե՞ք, Սրբազան հայր, այլ այսօր Պարսկաստանի գահեն խաղաղություն պիտի բխե... Մի՛ համառիր, վասնզի պիտի հաղթվիս և Շահին ատելության շանթերը քու ճակատդ պիտի գայթին։

ՍԱՀԱԿ.— Շնորհք մ'է այդ... Պետք է որ տանջվիմ կամ մեռնիմ, քանի որ հայրենիքս չեմ կրնար ազատել։

ՍՈՒՐԵՆ.— Ուրեմն չի պիտի՞ ամբաստանես թագավորը։

ՍԱՀԱԿ.— Երբե՛ք... Ջես հաճենար... Հանցավոր է նա, բայց Հայ է, եղբայրս է. ա՜հ, հայրենիք պաշտպանելու համար Հայ և ձեր ըլլալու չէի։

Տեսիլ Դ

Նույնք, Վռամ և Արտաշիր

ՎՌԱՄ.— (ներս մտնելով և գահը ելնելով) *Ուրեմն պաշտպանե ինքզինքդ։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Ինքզինքս պաշտպանելու համար պետք է որ հանցավոր եղած ըլլամ։*

ՎՌԱՄ.— *Դու կուրանաս քու արարքդ, բայց պալատիդ կամարները և գերեզմանք չեն կրնար զանոնք ուրանալ, բաց են այն սրտերը, որոնց մեջ դու արյուն հոսեցուցիր և փոխանակ արիության արձաններու՝ հեշտության արձաններով զարդարեցիր պալատդ։*

ՍԱՀԱԿ.— *Ի՞նչպես կրնաս զինքը իր ազատ կրոնքին մեջ դատապարտել, մինչդեռ ինքն ալ ձեր հեշտային կրոնքին հետևած է. իր քաղաքական հանցանքները կրնաս դատել, և ես իմ եղբորս մեղքերը կրնամ քավել։*

ՎՌԱՄ.— *Վերջապես Հայն իր թագավորը չընդունիր։*

ՍԱՀԱԿ.— *Ես ալ Հայ եմ։*

ՎՌԱՄ.— *Բայց չես կրնար նախարարաց չափ իրավունք ունենալ հայրենյացդ վրա. անոնք իրենց սուրերովը կը պաշտպանեն զայն և դու միայն խաչ մ՚ունիս։*

ՍԱՀԱԿ.— *Բայց բոլոր ժողովուրդը իմ և թագավորին հետ է։*

ՎՌԱՄ.— *Ես չեմ ընդունիր այն ժողովուրդն, որ կղերի մը մորուքեն կը պատկառի և Աստվածային երկյուղե մը զգացված՝ ակամա կը հնազանդի յուր թագավորին։*

ՍԱՀԱԿ.— *Տեր արքա, վերջապես կը հայտնես, որ Հայուն թագը և ազատությունը կը մուրաս. կը տեսնե՞ս, Արտաշիր, դու վատ մը եղար և բոլոր Հայ ազգը նվաստացուցիր, այն Պարսիկը, որ երբեմն Հայու անունեն կը դողար, հիմա խրոխտաբար գահին վրայեն Հայության անկումը կը վճռե. անգութնե՛ր, վատե՛ր, մատնիչնե՛ր և իմ սիրելի ազգիս ոսոխնե՛ր, ամենքնիդ ալ նզովյա՛լ ըլլաք։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Ա՜հ, կեցի՛ր, թող տան թագս, և ես սուրս փայլատակելով ու արյան հովերե թռչելով՝ ազատեմ Հայը և Հայաստանը։*

ՍԱՀԱԿ.— *Ա՛լ բան մը չը մնաց, այլ միայն անհուսության վհեր։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Սահակ, օգնե՛ ինծի, կը սարսափիմ ես ապագային կոծերեն. մի՛ անիծեք զիս, Հայե՛ր, այլ իմ գերեզմանիս վրա Պարսկաց դիակներ փռեցեք։*

ՎՌԱՄ.— *Լռե՛ Արտաշիր, ստրուկ մը այդչափ հանդգնի՞։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Օգնեցե՛ք ինձ, Հայե՛ր, ձեր թագավորին շղթա կը կապեն։*

ՎՌԱՄ.— *Ի՞նչ ընե Հայը, երբ յուր թագավորը շղթա ընտրեց։*

ՆԱԽԱՐԱՐՔ.— (դրսեն) *Կործանի՜ Արտաշիր, կեցցե՜ Վռամ արքայն։*

ՎՌԱՄ.— *Կը լսե՞ք, Հայ են ասոնք։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Հայրենիք զանոնք Հայ չընդունիր։*

ՆԱԽԱՐԱՐՔ.— (դրսեն) *Կործանի՜ Արտաշիր, կեցցե՜ Վռամ արքայն։*

Տեսիլ Ե

Նույնք, Սուրմակ, Վաչե, Փառներսեհ, Հմայակ և Նախարարք

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— *Ի՞նչ վճռեցիր, արի արքայդ արյաց։*

ՎՌԱՄ.— *Թող խաղաղի Հայաստան, Արտաշիր ալ Հայոց թագավորը չէ, այլ Խուժաստանի ստրուկ աքսորյալը։*

ՆԱԽԱՐԱՐՔ.— *Կեցցե՜ Պարսկաստան։*

ՍԱՀԱԿ.— *Ա՜հ, չկա մեկը, որ ինծի հետ «Կեցցե՜ Հայաստան» գոչե։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Կը տեսնե՞ս, արքայդ վեհափառ, կաթուղիկոսն ալ աքսորյալին մեղսակիցն ըլլալով՝ զայն կը պաշտպանե, ինքը Պարսկաստանի ոխերիմ թշնամին է։*

ՎՌԱՄ.— *Քաջ գիտեմ, և արդեն անոր համար մշտնջենավոր բանտ վճռված է։*

ՍԱՀԱԿ.— *Ես ալ արդեն մենաստան մը կուզեի աղոթելու և հայրենիքս ողբալու համար... Բայց երանի թե օր մը Հայ եղբարցս ազատության ձայները լսեի և բանտիս երկաթե դռները խորտակվելով՝ վերականգնյալ Հայաստանիս գիրկն իյնայի։*

ԱՐՏԱՇԻՐ.— (ճուսահատաբար) *Ո՜հ, իսկ ես։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Մի՛ զարմանար, արքա քաջ, կը զառանցեն։*

ՍԱՀԱԿ.— *Երանի թե երազ մ՚ըլլային ասոնք։*

ՍՈՒՐՄԱԿ.— (Արտաշրի մոտենալով, որ հոատհատաբար գոգոր կուրծին հեցուցած է, կամաց) *Կը ճանչե՞ս զիս։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Դու զիս մի՛ ճանչեր, ես ալ զքեզ չը ճանչեմ։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Քո՛ւ պալատականդ, Աշոտն եմ։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Աշո՛տ... Թշվառական։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Բայց ամեն բան լմնցավ։*

ՎՌԱՄ.— *Սուրմակ, զքեզ Հայոց աշխարհին հայրապետ կը կարգեմ, քու հայրենիք ծառայութեանդ փոխարեն* (Սուրմակը կը խոնարհի)։

ՍԱՀԱԿ.— *Երկի՛նք, կամ կայծակդ, կամ Հայաստանը։*

ՎՌԱՄ.— *Զեզ տեսնեմ, Հայե՛ր, այսուհետև հայրենիք և ազատութիւն բառերն ալ մի՛ հիշեք* (սուրը կը քաշե.— Վարագույրը կիջնե)։

ՎԵՐՋ

ԱՍՊԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ՊԱՐՍԿԱՑ Ի ՀԱՅՍ ԿԱՄ ԱՎԵՐՈՒՄՆ ԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ ԲԱԳՐԱՏՈՒՆՑԱՑ

ԹԱՏՐԵՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԳԱԽԱՌՆ
ԲԱԺԱՆՅԱԼ ՅԵՐԿՈՒՍ ԹՎԱԿԱՆՍ, Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՍ,
ՅԵՐԻՍ ՊԱՏԿԵՐՍ ԵՎ Ի ՄԻ ՎԵՐՋԱԲԱՆ

<1870>

ԱՆՁԻՆՔ Ա. ԹՎԱԿԱՆԻՆ

ՈԳԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ
ՏՈՒՂՐԻԼ, թագավոր Պարսից
ԳԱԳԻԿ ԱԲԱՍՅԱՆ, թագավոր Կարուց
ԹԱԹՈՒԼ, իշխան հայկազն
ԱԲԱՍ, զորապետ Պարսից
ՊԱՐՍԻԿ ՁՈՐԱԿԱՆ ՄԸ
ՄԵՐՈՒՆԻ ՔԱՀԱՆԱ ՄԸ

ԱՆՁԻՆՔ Բ. ԹՎԱԿԱՆԻՆ

ԱԼՓԱՍԼԱՆ, թագավոր Պարսից
ԲԱԳԱՐԱՏ, իշխան Անիի
ՈՐՏԵԼՄԵՁ, զորապետ Պարսից
ԱՂԿԱՆ, իշխան Պարսից
ՏԵՐ ՎԱՀՐԱՄ, ծեր քահանա
ՁԱՐՄՈՒՀԻ, Բագարատա աղջիկը
ԱԳՐՈՍԱՄ, հրամանատար զորաց Անիի
ԼԵՎՈՆ, հայ պատանի
ԳՈՒՐԳԵՆ } իշխանք Հայոց
ԲԱԲԳԵՆ }
ՎԻՐԱՎՈՐՅԱԼ ՄԸ
ԱՂՋԻԿ ՄԸ
ԿՈՒՅՐ ՄԵՐՈՒՆԻ ՄԸ
ՊԱՀՆՈՐԴ ՄԸ

ԱՌԱՋԻՆ ԹՎԱԿԱՆ

ԱՐԱՐՎԱԾ Ա

Տեսարանն է դաշտակ մը.— Աջ կողմը բլուր մը.— Խորը ավերակ մը.— Արևը հորիզոնեն նոր վեր կը բարձրանա։

Տեսիլ Ա

Գագիկ Աբասյան (ձիով), Թաթուլ (եսեսեն, որուն կը հետևի բանակ մը, տեսարանին աջ կողմեն կը մտնեն հետևյալ պատերազմական երգը երգելով)։

ԵՐԳ

Ժամ է արդ փառաց,
Որդիք քաջազանց
Արյամբ քաղեցեք
Դափնիս վարդագեղ։

Վառյալ ի զեն հուր,
Ի սուր և յերկաթ,
Ըզվրեժ դյուցազուց,
Լուծեք օ՜ն հառաջ։

ԳԱԳԻԿ.— (ձիվանդ և վիրավոր) *Ահա արևը կը ծագի, քաջ ընկերակիցք, դիտեցեք չորս կողմերնիդ և տեսեք թե մեր հայրենիքն ի՜նչ տխուր տեսարաններ կընծայե մեր աչացը. արյան աղետալի գոլորշի մ'է պատեր մեր բերրի դաշտերը և զվարթ քաղաքները. հարցնենք նախնյաց գերեզմաններուն, թե այսպե՞ս էր առաջ Հայաստան. այնպիսի ժամանակի մը մեջ ենք, որ մայրերն իրենց զավակացը խաղալիքի տեղ դանակ կուտան, որպեսզի արյան ու պատերազմի վարժվին, և հայրն այն ատեն կը ճանչե յուր զավակը, երբ Պարսկի մը և Թշնամի մը արյամբը ներկված սուր մը իրեն ներկայացնե։*

ԹԱԹՈՒԼ.— *Արքա քաջ, ես ալ այդ ուխտը մորս սրբազան գրկացը*

մեջ ըրած եմ և հորմես ալ զենք շարժել սորված եմ... Թշնամվույն դեմ անվեհեր զինվոր մը ըլլալու համար պետք է մորմե մը ատել սորվիլ, և հորմե մը՝ կռվիլ։

ԳԱԳԻԿ.— *Եվ ի՞նչպես չատենք այն վատ ազգը, որ Հայոց այնչափ անձնվիրությանց և ձեռնտվությանց փոխարեն՝ Հայուն սրած սուրը Հայուն դեմ կը դարձնե, երբ զայն անտերունչ գտնե, ահա կը տեսնենք Տուղրիլ, որ քանի մը տարիե ի վեր զորաց նորանոր գումարտակներ ղրկելով Հայաստանը կը կողոպտեր կը քանդեր, հիմա ալ ինք պարսկական բանակին գլուխն անցած կուգա բոլորովին կողոպտելու և ի հիմանց կործանելու. բայց ավա՜ղ, այնչափ սոսկալի չեն Թշնամվույն հարձակումները, որչափ են վատ արանց քստմնելի մատնությունները. մատնությո՜ւն... ահա այս է հոգվույս վերքը, որ զիս կը տանջե, իսկ մարմնույս վրայի այս վերքը, որ քանի մը օր առաջ պարսիկ զորականե մը ընդունեցա, պատվանշան մը կը համարիմ, որովհետև իմ ձեռոքս իր սև հոգին սաղայելին նվիրեցի, իսկ հայրենյաց մատնչի մը ոգին, որ նույնիսկ սաղայելին անընդունելի է, որո՞ւն կրնանք հանձնել... Քաջ ընկերք, խորշինք այս ոճիրեն. քիչ ատենեն Տուղրիլի դեմ պիտի պատերազմինք, Հայաստանի սեմին վրա պիտի կռվինք ամեհաբար, եթե կան ձեր մեջ անանկներ, որոնց ծանր գա այս դիրքին մեջ պատերազմիլ, թող ձգեն սուրերնին. ես առանց զիրենք մեղադրելու՝ կընդունիմ իրենց հրաժարականը։*

ԹԱԹՈՒԼ.— *Արքա քաջ, Հայուն սրտին մեջ պարսկական ատելութենեն ուրիշ բան մի՛ փնտռեր, միթե կա՞ Հայ մը, որ Պարսկին հարվածը զգացած չըլլա, եթե իր հորը կամ եղբորը վերքը չորցած կամ անհետացած է, Հայաստանի ստացած վերքերը դեռ թաց են կը մխան և մեզ կը դիտեն վրեժխնդիր և արյունռուշտ աչքերու պես...* (վորաց) *դիմացե՛ք եթե կրնաք, Հայրենասեր սրտե՛ր, այն ահեղ վերքերը տեսնելով։*

ՋՈՐԱԿԱՆՔ.— *Վրեժխնդրությո՜ւն։*

ԳԱԳԻԿ.— *Կատե՞ք ուրեմն Պարսիկը։*

ՋՈՐԱԿԱՆՔ.— *Միշտ։*

ԳԱԳԻԿ.— *Կերդնո՞ւք Հայաստանի վերքերուն վրա, որ երբեք չը պիտի ընկրկիք։*

ՋՈՐԱԿԱՆՔ.— *Կերդնունք։*

ԳԱԳԻԿ.— *Լսե Հայաստան ձեր ուխտը։*

ԹԱԹՈՒԼ.— Ի՞նչ ձայն է այս (ամենքը մտիկ կընեն, հեռուն աղոթքի դողդոջ ձայն մը կը լսվի)։

ԳԱԳԻԿ.— Ո՞ւսկից կուգա այս ձայնը։

ԹԱԹՈՒԼ.— (ձախ կողմը ցուցնելով) Սա կողմեն։

ԳԱԳԻԿ.— Ա՛յն կողմը ավերակներ են (նայելով)։

ԹԱԹՈՒԼ.— Ավերակի մը վրա խաչ մը կերևի։

ԳԱԳԻԿ.— Ըսել է որ մատուռ մը կա հոն։

ԹԱԹՈՒԼ.— Եվ քահանա մը անշուշտ, որ կաղոթե։

ԳԱԳԻԿ.— Ինչի համար... զարնող զինվորին հետ, երանի այն քահանային, որ կաղոթե։

ԹԱԹՈՒԼ.— Ահա ծերունի մը կերևի։

ԳԱԳԻԿ.— Անշուշտ աղոթող քահանայն է։

ԹԱԹՈՒԼ.— Քայլերը դեպի հոս կուղղե... Մեր բանակին գալը տեսած ըլլալու է...

ԳԱԳԻԿ.— Եվ անոր համար կաղոթե։

ԹԱԹՈՒԼ.— Ի՞նչ վեհ կերպարանք. եթե ծերունի քահանա մը չըլլար, պիտի կարծեի թե պատերազմի դաշտն իջնող հսկա մ'է. ոտքերը կը դողդողան, բայց սիրտը կը բաբախե։

ԳԱԳԻԿ.— Խոնարհեցեք իրեն (զորքերը հարգանաց շարժում կընեն, մինչդեռ քահանայն տեսարանը կը մտնե)։

Տեսիլ Բ

Նույնք և Քահանայն

ՔԱՀԱՆԱՅՆ.— Ներեցե՛ք, ուրի զինվորներ, եթե տկար ծերունի մը գտնվելով՝ փոխանակ հայրենիքս երկաթով պաշտպանելու ձեզի պես, որ զինվոր ու երիտասարդ եք, գոհ կըլլամ միմիայն աղոթելով... Բայց դեռ ահեղ առյուծ մ'եմ այն մատուռին մեջ՝ անոր, որ զայն սրբապղծելու կը հանդգնի. հսկել և աղոթել, ահա ասոնք միայն բաժին մնացին ինձ իմ անկյալ հայրենիքս, հսկել հսկայի մը պես, աղոթել՝ քահանայի մը պես. թեև կը զարնեի երբեմն ալ զինվորի մը պես, իսկ երբ ծերացա և տեսա որ այն ծանր երկաթը ձեռքս կիյնար, մտածեցի, որ գեռ կրնայի հայրենյացս ծառայել, Աստուծո զինվոր ըլլալ և աղոթել...

ԳԱԳԻԿ.— Լսե՛ք քու ձայնդ երկինք, և քու հսկած միայնիկ մատուռիդ դուռը զարնե օր մը ազատությունը, զինվորդ Աստուծո, աղոթե՛ մեզի համար. դու քու խաչդ ա՞ռ, մենք ալ մեր սուրը կառնենք, դու աղոթե՝ մենք զարնենք, դու սիրե Աստվածդ, մենք ատենք թշնամին։

ՔԱՀԱՆԱՅՆ.— Աստուծմե և հայրենիքես ետև կը սիրեմ այն զինվորը, որ պատերազմի դաշտը կը խոյանա, օրհնյալ ըլլաք, քաջե՛ր, որ կը ջանաք ձեր անկյալ հայրենիքը վերականգնել, դուք մի՛ լաք Հայաստանի վրա, այլ զարկեք այն բազուկը, որ աղետք կը տեղացնե անոր գլխուն. լալը ծերերուն թողուցեք և այն մայրերուն, որոնք իրենց զավակաց գերեզմանները կորուսած են. ծերերուն և մայրերուն վրեժը առե՛ք, քաջե՛ր, և քավեցեք թշնամվույն արյամբը մեր եկեղեցյաց, պալատներուն և գերեզմանաց եղած սրբապղծությունները։

ԹԱԹՈՒԼ.— Զինվորդ Աստուծո և հայրենյաց, եթե լավ ուշ դնենք, Հայաստանի բոլոր խորշերը վրեժ կը մռնչեն. Հայաստանի մեջ չը կա մեկը, որուն սրտը չը լափե վրեժխնդրության բոցը. մենք մեր հայրենակցաց վրեժը պիտի առնենք, պիտի պատերազմինք անոնց տեղ, որք կարող չեն սուր շարժելու, նաև անոնց տեղ՝ որք կը սոսկան պատերազմի դաշտեն։

ՔԱՀԱՆԱՅՆ.— Մի՛ դանդաղիք ձեր սուրը պաշտոնը կատարելու, եղբարք իմ. հառաջ վարե՛ք բանակդ, արքա քաջ, և ես ուխտունամյա հասակիս մեջ՝ այս հսկա և վրեժխնդիր բանակին հետ քանի մը դողդոջ քայլ առնելով հրճվիմ գոնե, քանի որ կթոտությանս մեջ անկարող եմ ձեր փառքին մասնակցիլ։

ԹԱԹՈՒԼ.— (ձախ կողմեն նայելով) Արքա՛ քաջ, պարսկական բանակ մը կերևի բլրին գագաթը... տե՛ս...

ԳԱԳԻԿ.— Տուրքիք բանակն է այն։

ՔԱՀԱՆԱՅՆ.— Պարսիկնե՞ր (ակռաները կրճտելով)։

ԳԱԳԻԿ.— Պատրաստ եղիք, քաջ զինակիցք իմ. ահա այն թշնամին, որուն արյանը անհագ ծարավ մը կկդան մեր սուրերը, նա դեռ իր ժանտ սուրը մեր անմեղ հայրենակցաց արյամբը չը ներկած՝ դիմադրենք մեր կուրծքերը ժայռերու պես. Հայը այն է, որ երկու Պարսիկ չսպաննած չը մեռնիր։

ԹԱԹՈՒԼ.— Տարը Պարսիկ իմս են... կերդնում սրուս վրա։

ՔԱՀԱՆԱՅՆ.— Եթե ես չեմ կրնար զարնել, գոնե դիակները կոխկրտեմ։

ԳԱԳԻԿ.— Պատրաստ հք։

ԶՈՐԱԿԱՆՔ.— Վրե՜ժ...

ԳԱԳԻԿ.— Ա՛ռ վրեժդ ուրեմն Հայաստան (զորքերը սուրերնին կը քաշեն և պատերազմական երգով կը մեկնին ձախ կողմեն.— Պատկերը կը փոխվի)։

ՊԱՏԿԵՐ Ա

Բլուր մը.— Արքունի վրան

Տեսիլ Գ

Տուղրիլ, Աբաս և Զորք

ՏՈՒՂՐԻԼ.— Ա՛հ, ո՞րչափ մեծ հաճույք է այս, զորապետ, երբ կը մտածեմ թե այսօր իմ նախնյացս դարավոր վրեժները կը լուծեմ՝ անտերունջ Հայաստանը ոտնակոխ ընելով և մերկացնելով զայն բոլոր իր փառքերեն, զենքերեն և գանձերեն։

ԱԲԱՍ.— Մեր մեծազոր Արեգական շնորհն է այդ, տե՛ր արքա, որ քու հայրենյացդ վրեժխնդրության սուրը կընե քեզ օգնական, այսպիսի փառքե զատ ոչինչ կրնար քու զորությանդ հետ կապվիլ։

ՏՈՒՂՐԻԼ.— Որչա՞փ կը զվարճանա արդյոք մեծն Արեգակ, երբ զինքը չը պաշտող անօրեն ժողովրդյան մը արյամբը ներկված դաշտերուն վրա կը սփռե իր ճառագայթները և մեր զենքն ու զրահը ավելի ահեղապես կը շողացնե թշնամյաց ահաբեկ նայվածքին... Ի պատերազմի երեկոյին, կարծես թե թշնամյաց արյամբը կշտացած և կարմրած՝ իր աստվածային բնակարանը կը վերադառնար, որչա՞փ գոհացավ արդյոք, երբ Սմբատաբերդ և Արծն քաղաքներուն կործանումը և ջարդը տեսավ և այն կոտորածները, որ Հայաստանի բոլոր գավառները սոսկումով լցուցին։

ԱԲԱՍ.— Բայց այն ատեն մեկ սասանյան գունդ մ'էր որ Հայաստանն այնչափ տակնուվրա ըրավ, տեր արքա, և երբ այժմ քու անձամբ քաջաց բանակի մը գլուխն անցած Հայաստան

կարշավես՝ անշուշտ այն սոսկումով լցված բոլոր բերդերը և քաղաքները իրենց դռները պիտի բանան, երբ լսեն թե դյուցազն Տուղրիլ՝ արյաց արքայն ահեղ առյուծի մը պես իրենց կը նայի և իրենց վրա կը քալե, կարելի է որ քանի մը հայրենասիրությամբ վառված տկար բանակները հանդգնին մեզ դիմադրելու, բայց մեր քաջերուն և փիղերուն հարձակմանց չը կրնալով դիմանալ՝ պիտի փշրին փոշիի պես և պիտի խառնվին իրենց հայրենյաց ավերակաց աճյունին։

ՏՈՒՂՐԻԼ.— Ես արյունախանձ սրտիս խորը գրած եմ բոլոր Հայաստան ավերակ դարձնել, Հայությունը ջնջել առանց ավերակաց մեջ հեծող հայկական շունչ մը թողելու և այնպես հաղթական, Պարսկաստան՝ իմ շքեղապանծ գահս դառնալ, և անկե զվարթ նայվածքով իմ դրացի երկրիս փլատակները դիտել, որոնց վրա կը սավառնի պարսկական սոսկումը, այլ վախ չունենալ Հայաստանեն, որ միշտ կիյնա և կը կանգնի և կանգնած ատենը իր դրացի ազգերուն գահերը կը սարսե, զինքը խեղդելու համար պատեհ առիթ մ'է իր անտերունջ վիճակը... Կուզեմ Հայությունը ջնջել երկրիս երեսեն. լսե՛ երկնից բարձրերեն և դու Արև, և ծիծաղե՛ քու Աստվածությունդ արհամարհող ազգի մը գերեզմանին վրա... Ավա՜ղ որ գրեթե ծեր եմ, եթե չը կրնամ կարճ կյանքիս հետ Հայաստանը վերջացնել՝ թագիս հետ ժառանգություն պիտի ձգեմ Ալփասլան եղբորս, որ քաջերու մեջ քաջ է, հայկական ատելությունը, և հայության ջնջումը, չը թողուլ՝ որ Հայը չորրորդ անգամ հոգի առնե. Հայը այնպիսի ազգ մ'է, որ իր վերքերեն քաջ կը ծնի։

ԱԲԱՍ.— Հայն ա՛լ հոգի առնելիք չունի, մինչդեռ Տուղրիլի հարվածը զգաց իր ներքին խոցերով պատած սրտին վրա։

ՏՈՒՂՐԻԼ.— Դեռ գերեզմանին մեջ ալ կուզե հևալ։

ԱԲԱՍ.— Պարսկական սոսկումը կը հսկե անոր դիակին վրա ինկած անոպա ժայռի մը պես։

ՏՈՒՂՐԻԼ.— Եվ չի պիտի հառնե երբեք Տուղրիլի երկաթե ձեռքին տակ, երբ նախնի հայկազանց դամբանները կը կոխկռտեմ գարշապարաց տակ, անոնք որ երբեմն սասանյան գահին դեմ խրոխտացին, երբ կը կործանեմ եկեղեցիները, ուր խաչափայտի մը առջև կանթեղ կը վառեն և կերկրպագեն. երբ կը տեսնեմ Հայը վիրավոր և անզոր ոտքերուս տակ, որ կաղերսե կամ կսպառնա ընդունայն, երբ կը տեսնեմ արյան ծով մը,

բրուն մեջ կը շողան հայկական խոցյալ գլուխներ, և անոնց վրա պարսկական արյուններանգ դրոշը կը ծածանի... անհագ զվարճություն մը կզգամ։

ԱԲԱՍ.— Եվ այս ամենը Հայն ավերակի մը խորշը տոսկումով կծկած կը դիտե, երբ կը տեսնե որ հաղթական արծիվը կարմիր դաշտերուն վրայեն կը թևարկե (նանկարծ ագռավ մը կը լսվի խոռեն)։

ՏՈՒՂՐԻԼ.— Ի՞նչ ձայներ են ասոնք։

ԱԲԱՍ.— Ի՞նչ կը նշանակե այս։

ՋԱՅՆԵՐ.— Կեցցե՛ Հայաստան (խառնեն)։

ՏՈՒՂՐԻԼ.— Ա՜հ, Հայերն մեռ

ԱԲԱՍ.— Կը զարնվին մեր բանակին հետ։

ՋԱՅՆԵՐ.— Մա՜հ Սասանյանց (խառնեն)։

ՏՈՒՂՐԻԼ.— Անօրենները։

Տեսիլ Դ

Նույնք և Զորական մը

ՋՈՐԱԿԱՆ.— Տե՛ր արքա, Կարուց թագավորին բանակը մեր հառաջապահ գնդին վրա հարձակեցավ։

ՏՈՒՂՐԻԼ.— Զորապե՛տ, շուտ բանակը ուղ հանե և այդ հանդուգները խորտակե (Ռոմելմեզ պատերազմական փողը կը ճնշե և բոլոր զորքերը կը ժողովին Տուղրիլ բլրին գագաթը կելնե և կը դիտե)։ Ահա կը զարնվին, մեղվի երամ մը արծվո երամի մը դեմ... Հայոց բանակը քիչվոր է, կրնաք պաշարել և ձեր ահեղ սուրերուն մեջ այդ հանդուգն բանակը խեղդել։

ԱԲԱՍ.— (զորաց) Հառա՜ջ։

ՋՈՐՔ.— Մա՜Հ Հայկազանց (սուսերամերկ կը մեկնին)։

Տեսիլ Ե

Տուղրիլ (առանձին բլրուն վրայեն կը դիտե)

Ո՞վ է այն իշխանը, որ մեր բանակին մեջ ինկած Պարսկաց դիակներ կը փռե և չը թողուր որ մեկը իրեն հարված մը տա... Ահա կը տեսնեմ Կարուց թագավորն ալ որ զորքերը կը քաջալերե միշտ, բայց չը պիտի հաջողի. Աբասի բանակը կը հասնի, այն իշխանին հետ մեկը կը զարնվի, Արսուրան ամիրային որդին է... կը փախչի... իշխանը ետևեն կը վազե... ա՜հ, օգնություն հասավ... զարկավ (վիշտանալու շարժում մը կընե) դեռ ասդին անդին կը վազե, զոհ կը փնտռե կատաղի վագրի մը պես, երկու Հայու հետ չորս Պարսիկ կիյնա... բայց ահա Հայոց բանակը պաշարվեցավ... Կարուց թագավորը կը փախչի... չը բռնվեցավ... և այն իշխանը դեռ կը զարնե... պիտի բռնվի... ահա պաշարեցին զինքն ալ... դեռ կուզե զարնել... Պարսիկները կը վախնան անկեց. բայց վերջապես բռնվեցավ Արսուրան ամիրային որդին՝ այն քաջին զարնողը՝ որ այնչափ սիրելի է ինձ... բանակը փախստական Հայոց զորքերը կը հալածե (դրսեն պարսից զորքերը «հաղթությո՜ւն, հաղթությո՜ւն» կաղաղակեն)։ Ահա Աբաս այն իշխանը գերի բռնած հոս կը բերե... (բլուրեն վար կիջնե և արքունի վրանը կը մտնե)։

ՋՈՐԱԿԱՆՔ.— (դրսեն) Կեցցե՛ Տուղրիլ, կեցցե՛ Պարսկաստան։

ՏՈՒՂՐԻԼ.— Ա՜հ, այս օրվան հաղթության դափնիին հետ նոճի խառնվեցավ, արդյոք մահացո՞ւ էր Հայ իշխանին՝ ամիրային որդվույն տված հարվածը։

ՋԱՅՆԵՐ.— Կեցցե՛ն արիք, մա՜հ անարյաց (դրսեն)։

Տեսիլ Զ

Տուղրիլ, Աբաս, Թաթուլ (շղթայակապ), գերիներ, զորք Հայոց, զորք Պարսից

ՏՈՒՂՐԻԼ.— Ի՞նչ եղավ Արսուրան ամիրային որդին, զորապետ։

ԱԲԱՍ.— Վիրավորված է, տեր արքա, զինքը վրանը բերինք խնամելու համար։

ՏՈՒՂՐԻԼ.— Ինչպե՞ս է վերքը։

ԱԲԱՍ.— Ուսին վրա է։

ՏՈՒՂՐԻԼ.— Այս Հայ իշխանն է զինքը զարնողը, այնպես չէ՞։

ԱԲԱՍ.— Այո՜։

ՏՈՒՂՐԻԼ.— Ես այս բլրին գագաթեն կը դիտեի։

ԹԱԹՈՒԼ.— Ես էի։

ՏՈՒՂՐԻԼ.— Քաջ իշխան, ես քու բոլոր քաջագործութեանցդ հանդիսատես եղա, եթե Արսուրան ամիրային որդվույն տված վերքդ մահացու չէ, և եթե չը մեռնի՝ չեմ սպաններ զքեզ, կազատեմ, իսկ եթե մեռնի՝ դու ալ իրեն զոհ պիտի ըլլաս։

ԹԱԹՈՒԼ.— Եթե հարվածն իմս է՝ անկարելի է որ չը մեռնի, իսկ եթե ուրիշի մը՝ այդ չեմ գիտեր. հիմակվընե զարկ զիս, կամ թող բոլորովին, որ զենքս առած դարձյալ անտերունջ հայրենիքս պաշտպանեմ, ծանր են ինձ այս շղթաներս, երբ հայրենիքս անդին կողբա և օգնություն կը խնդրե, ավելի աղեկ է, որ չը լսեմ իր աղեկեզ ձայնը։

ՏՈՒՂՐԻԼ.— Հայրենի՞քդ կուզես դեռ պաշտպանել։

ԹԱԹՈՒԼ.— Այո՛։

ՏՈՒՂՐԻԼ.— Որո՞ւ դեմ։

ԹԱԹՈՒԼ.— Ձեզի։

ՏՈՒՂՐԻԼ.— Առանձի՞ն։

ԹԱԹՈՒԼ.— Սուր մը բավական է ինձ ընկեր։

ՏՈՒՂՐԻԼ.— Ո՛վ քաջ, կտրե ալ հույսդ հայրենյացդ վերականգնումեն։

ԹԱԹՈՒԼ.— Ինչո՞ւ։

ՏՈՒՂՐԻԼ.— Միթե հայրենյաց անունը կրնա՞ կրել մոխրակույտ մը։

ԹԱԹՈՒԼ.— Զգուշացիր, ո՛վ թագավոր, գուցե այն աճյունին տակ դեռ կայծեր կան պահված... ինչպես գերիին սրտին մեջ վրեժը. զարհուրելի պիտի ըլլա գուցե օր մը այն Հայը, որ փլատակաց խորշերու մեջ կծկած՝ ատելություն կը սնուցանե իր թշնամյաց դեմ։

ՏՈՒՂՐԻԼ.— Այն խորշը իր գերեզմանն է և Պարսիկն՝ իր մահը։

ԹԱԹՈՒԼ.— Հայը չը մեռնիր երբեք երբ Պարսիկը զարնե, գուցե՝ Աստված զարնե։

Տեսիլ Է

Նույնք և Զորական մը

ԶՈՐԱԿԱՆ.— Տեր արքա՛, Արսուրան ամիրային որդին մեռավ։

ՏՈՒՂՐԻԼ.— Վերջապես։

ԹԱԹՈՒԼ.— Ես չըսի՞, եթե իմ զարկածս է չապրիր։

ՏՈՒՂՐԻԼ.— Պատրաստ եղի՛ր։

ԹԱԹՈՒԼ.— Ի՞նչ բանի։

ՏՈՒՂՐԻԼ.— Մեռնելու։

ԹԱԹՈՒԼ.— Գոհ եմ որ Պարսկին սիրտը ցավ մը քանդակելով գոնե կը մեռնիմ, բայց ավելի գոհ պիտի ըլլայի, եթե սուր ի ձեռին մեռնեի... Ա՜հ Հայաստան, քաղցր հայրենիք, վերջապես քու ազատությանդ արշալույսը չը տեսած՝ պիտի փակեմ աչերս. բայց Հայաստանի սրտին վրա նստած տեսա արյունռուշտ Պարսիկը... Մեռնի՜լ... թողուլ Հայաստանը, մեռնիլ շղթայակապ այն մարդերեն, որ կատեմ և կուզեմ անխնա ջախջախել... Ա՜հ, սո՛ւր իմ (կատաղաբար զինքը պատող զորաց կը նայի). Կատեմ զձեզ, տվեք սուրս և առանձին կռվիմ ձեզի հետ, ա՜հ, դուք վատ եք, կը վախնաք...

ՏՈՒՂՐԻԼ.— Վերջապե՜ս։

ԹԱԹՈՒԼ.— Տո՛ւր հրամանդ։

ՏՈՒՂՐԻԼ.— Տարեք և զարկեք զինքը հոն ուր ամիրային որդին սպաննվեցավ (զորքը կը տանին զայն)։

ԹԱԹՈՒԼ.— Մնաս բարյա՜վ, Զարմուհի... Հայաստա՜ն (կը մեկնի)։

ՏՈՒՂՐԻԼ.— (Ոտելմեզի) Զորապե՛տ, իր աջ թևը կտրելով Արսուրան ամիրային զրկե մխիթարելու համար զինքը, որ որդին վատ բազկե մը մեռած չէ (վարագույրը կիջնե)։

<(ՎԵՐՋ Ա ԱՐԱՐՎԱԾԻՆ)>

ԵՐԿՐՈՐԴ ԹՎԱԿԱՆ

ԱՐԱՐՎԱԾ Բ

Տեսարանն է Անի քաղաքին ներքնակողմը.— Բագարատ իշխանի ապարանը փառավոր սրահ մը.— Խորը դուռ մը.— Երկու կողմը պատուհան։

Տեսիլ Ա

Զարմուհի (առանձին)

Ահա Անիի ալ զարկավ իր ճիրանը անգութ Ալփասլան. ի՞նչ սոսկում է այս, որ բոլոր Հայաստանը պարածածկեր է.

մթութիւն մը կա բոլոր անմեղ ճակտի վրա, սեւութիւն մը՝ ամեն սրտի մեջ... Ալ ամեն բան լմնցաւ Հայաստանի համար, ալ կը մարի բոլորովին Հայաստանի հուսո աստղին արյունեբանգ լույսը... Բագրատունյան անտերունջ վիճակին մեջ Տուղրիլի պես ճիվաղ մը Հայաստանն անխնա ոտնակոխ ընելէ վերջը իր սուրը կը ժառանգե իր եղբայրը՝ Ալփարսլան, որ Հայաստանի հոգին կը լափե... Թաթո՜ւլ, քա՛ջդ իմ Թաթուլ, քեզ ալ Տուղրիլի անգութ սուրը լափեց... Պատերազմի արյունոտ դաշտին վրա, հեռու ինձնե, ինծի մնաս բարյավ ըսելէդ վերջը, այն տխուր մնաս բարյավը կցանքն ալ ինծի կրկնեց, դեռ առաջաստաց չի մոռաց՝ գնրեզմանի իշար, և այն հարսանեկան քողին տեղ, որ մեր գլուխները պիտի միացներ, ոգեվոր քող մը ձգեցիր ինձ. գոնե գերեզմանի քար մ՝ալ չը թողուցիր, որուն վրա գայի երբեմն լալու... Հայաստան, այս արյունային ժխորին մեջ միմիայն հիմարը ազատ է ժպտելու (Ազրատամ դռանը մեջ կերթա):

Տեսիլ Բ

Նույն և Ապրսամ

ԱՊՐՍԱՄ.— Նաև այն որ քաջ մ'է. ո՞վ իշխանուհի։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Դո՞ւ ես, զորապետ...

ԱՊՐՍԱՄ.— Մի՛ խորշիր, Զարմուհի, զորապետե մը՝ որ քու նշանածիդ հետ միևնույն պատերազմի դաշտին վրա կռվեցավ և միևնույն Պարսկական վերքն առավ, և եթե Թաթուլ մեռավ՝ ինքը դեռ ողջ է և կը սիրե։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Թաթուլը մեռած չէ՛ ինծի համար։

ԱՊՐՍԱՄ.— Պարսիկները զինքը գերի բռնած չսպաննեցի՞ն միթե։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Նա դեռ ողջ է ինծի համար։

ԱՊՐՍԱՄ.— Ո՞ւր է ուրեմն։

ԶԱՐՄՈՒՀԻ.— (սիրտը ցցնելով) Հոս է, կանգուն հսկայի մը պես, անմահ ճառագայթի մը պես։

ԱՊՐՍԱՄ.— Զարմուհի, կը ցավիմ որ կյանքիդ արժեքը չես գիտեր. ի զուր սերդ սև երազներով կը մարես և գեղեցկությանդ վարդերը, որ հեքիաթներու նայվածքն անգամ խռնարհեցնելու

կարող են, դառն արցունքներով կը խամրես... Գեղեցիկ ես, Զարմուհի՛, սիրվե՛ քաջե մը, սիրե՛ զինվոր մը, որ իր սուրեն առաջ կը սիրե քեզ։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ես սիրեցի և դեռ կը սիրեմ, զորապե՛տ... Մի՛ շանար մեր սիրո գրախտին թռվիչ օձը ըլլալ, դու՝ որ քու քաջագործություններովդ հարգելի ես ինձ, մի՛ ջանար քու սիրովդ ատելի ըլլալ... Ես երկնքի այն ջահապից խորանին առջև ուխտեցի Թաթուլը սիրել, մեռա՜վ... կը հարգեմ իր հիշատակը ինչպես կը հարգե քաջ մը իր հաղթական սրուն բեկորը. երբ հիշեմ՝ դառն է իր մահը, երբ լամ՝ քաղցր է իր հիշատակը. զորապետ, մի՛ խռովեր ան ամպի մը պես կնոջ մը երազը, ես առի մնաս բարյավս սերեն, առի մնաս բարյավս աշխարհեն, և մտա այն մենաստանը, ուր հիշատակները կը փսփսան... Ես ա՛լ միայն հիշատակի մը և հայրենիքի մը համար կապրիմ։

ԱՊՐՍԱՄ.— Կուզե՞ս որ անիծեմ այն արևը, որ երկնքին մեջտեղ շողաց... Զարմուհի, լա՛ զինվորի մը, որ սուր մը և սիրտ մ'ունի... Սուրս գոհ է, վասնզի իր տենչը կատարված է, կըշտացած է թշնամյաց արյամբը, իսկ սիրտս դատարկ է, դու պիտի լեցնես զայն քու սիրովդ... Դու կըսես ինձ, թե գնա ուրիշ մը գրկե, մինչդեռ զիս քեզի կը քաշես և կը կաշկանդես ոսկի շղթաներով։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Թո՛ղ զիս... զորապե՛տ։

ԱՊՐՍԱՄ.— Կը սիրեմ զքեզ։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Մի՛ կրկներ իմ ականջիս այդ աղետալի բառը, որ դժոխոց բոցին նման կայրե զիս... Եթե դեռ սրտիս խորը հուզես, սիրո տեղ ատելություն պիտի գտնես։

ԱՊՐՍԱՄ.— Անգո՛ւթ...

ԶԱՐՄՈՒՀԻ.— Սերը չէ, որ քու սիրտդ կը լափե, այլ դժոխային բոց մը. դու սիրելն ավելի կուզես քու զինակցիդ սերը և հիշատակը սրբապղծել։

ԱՊՐՍԱՄ.— Զարմուհի՛...

ԶԱՐՄՈՒՀԻ.— Հեռացի՛ր ինձնե, եթե չես ուզեր ատվիլ անկե, զոր սիրել կը կարծես։

ԱՊՐՍԱՄ.— Ա՜հ, Պարսկի մը դաշույնեն ավելի սուր են և կը խոցեն սիրտս քու խոսքերդ, Զարմուհի։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Հարգե՛ զինակիցդ։

ԱՊՐՍԱՄ.— Ո՜հ, չեմ կրնար այն բոցին դիմանալ, որ իմ ներսս կը

լափե, եթե ատելության տիպարն ալ ըլլաս՝ դարձյալ պիտի սիրեմ զքեզ։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Զգուշացի՛ր, զորապե՛տ։

ԱՊՐՍԱՄ.— Ա՜հ, մի՛ բարկանար, վասնզի ավելի գեղեցիկ և հրապուրիչ կըլլաս... Այն աչերուդ բոցերը, որ գիս նախատելու համար դուրս կը ցայտեն՝ սրտիս բոցերուն հետ կը խառնվին և ավելի ահավոր կընեն հոս վառող հրդեհը։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Տե՛ս, ըորապե՛տ, ամենքը մեր քաղաքը պաշարող Պարսկաց հետ քաջաբար կը պատերազմին, իսկ դու՝ որ քաղաքին զորաց հրամանատարը պիտի ըլլաս...

ԱՊՐՍԱՄ.— Դադրեցո՛ւր նախ սրտիս պատերազմը։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Վերջապես կը հրահրես կուրծիս տակ ատելության հուրը։

ԱՊՐՍԱՄ.— Այդչափ համառ մի՛ ըլլար, Զարմուհի։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Գնա նախ պարտքդ կատարե՛... Մինչդեռ մեր Անի քաղաքը Ալփասլանի զորքերով պաշարված՝ օր օրի վտանգն իրեն կսպառնա, մինչդեռ ամեն մարդ քաղաքին փրկությանը համար ճիգ կը թափե, մանուկը պաշարող բանակին քար կը նետե, քահանայն կաղոթե, ծերը կը հսկե, կինն իր ամուսինը կամ եղբայրը կը քաջալերե, դու հանդուգն քայլ մը կը նետես այն սեմեն ներս՝ ուր մենակյաց վշտահար և քողարկյալ կին մը կը տքնի և...

ԱՊՐՍԱՄ.— (ընդմիջելով) Ա՛լ բավական է։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Գնա պարտքդ կատարելու, մի՛ թողուր որ սուրդ ժանգոտի և սրտիդ մեջ սպրդի դժոխային բոց մը. գնա հայրենիքդ պաշտպանելու, ջանա՛ որ հաղթական դափնիներով պսակյալ ճակատդ դժոխոց անդնդային սեմին չը խոնարհի, նայե՛ երկինքը, ուր աստղը կը փայլի, անբիծ ըրե սիրտդ այն աստղին պես. քույր մ'է որ քեզի կը խոսի... Օ՛ն, դո՛ւրս ել այս սեմեն, ուր սգո քողի մը տակ կը հեծե վշտահար կին մը, որուն սրտի մեջ հայրենյաց հույսն անգամ կը մարի, և դու աղետալի սիրո մը հետքը կը փնտռես ընդունայն և կը ջանաս զիս վատ մը ընել, սիրադրուժ մը...

ԱՊՐՍԱՄ.— Ա՜հ, ո՛չ, Զարմո՛ւհի... այլ ո՞վ պիտի մարե սրտիս այս հուրը, որ միշտ կը լափե զիս։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Արցունքս, զոր ջերմաջերմ կը թափեմ դեռ իմ նշանածիս անհետ գերեզմանին վրա։

ԱՊՐՍԱՄ.— Ա՜հ, այդ չէ՛ կարող։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Խիղճ չունի՞ս ուրեմն։

ԱՊՐՍԱՄ.— (ոտքն իյնալով) Միայն սեր կզգամ։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ապրսա՜մ։

ԱՊՐՍԱՄ.— Զարմուհի՜։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Մեկը կուգա։

ԱՊՐՍԱՄ.— (ոտք ելնելով) Ո՞վ։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Հայրս։

ԱՊՐՍԱՄ.— Վերջին խոսք մը ուրեմն... (Զարմուհի սպառնական նայվածք մը կուղղե) Մնաս բարյա՜վ (կը մեկնի)։

ԶԱՐՄՈՒՀԻ.— (միանակ) Կուզե որ ատեմ զինքը։

Տեսիլ Գ

Զարմուհի և Բագարատ

ԲԱԳԱՐԱՏ.— Աստվա՜ծ իմ։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ինչո՞ւ խռոված ես, հայր իմ, ի՞նչ կա, միթե քաղաքիս վտանգի մե՞ջ է... Խոսե՛...

ԲԱԳԱՐԱՏ.— Զարմուհի, Աղկան իշխանը, որ միշտ ձեռնտվություններ կըներ մեզ՝ մագաղաթի մը վրա անոնց խորհուրդները գրելով, գաղտնի մեր պարսպեն ներս կը նետեր, հիմա ալ նույնպես կը հայտնե թե Պարսիկները ահագին բաբան մը բերած են, որ 50—60 լիտր ծանրությամբ քար կը նետե եղեր և մեր պարիսպներն անով պիտի քարկոծեն... և այն բաբանը չը վնասվելու համար բամբակի հակերով պատսպարած են։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Միթե ատոր հետևանքը շատ ծանր կրնա՞ ըլլալ...

ԲԱԳԱՐԱՏ.— Ի՞նչ կըսես, աղջիկս... Երևակայե՛ անգամ մը, վաթսուն լիտր ծանրությամբ քար մը... եթե պարսպին զարնե...

ԶԱՐՄՈՒՀԻ.— Մի՛ հուսահատիր, հա՛յր իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Եվ ի՞նչ հույս կրնամ նշմարել... Բոլոր քաղաքին մեջ քարոզ կարդացուցի և իմացուցի թե՝ ով որ հաջողի այն բաբանն այրել, զինքը մեծամեծ շնորհքներով պիտի վարձատրեմ, և եթե ինքը Պարսից կատաղության ալ զոհ ըլլա բաբանը մոխիր դարձնելե վերջը՝ իր բոլոր ընտանիքը երջանիկ վիճակի մը պիտի հասցնեմ։

նակալին բարությունը հեղհեղելով, որ իր բարկությունը մեր վրա չը թափե. ի՞նչ հանդուգն փափաք, կուզեք որ Աստված կապե Հայուն վերքը, որ Հայը Հայուն կուտա։

ՁԱՐՄՈՒՀԻ.— Այնպես է։

ԲԱԳԱՐԱՏ.— Ուրեմն կը հուսահատի՞ս մեր կացությանը վրա։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Բնավ. հույսը գերեզմանին դռանը մեջ անգամ կը շողա... հույսը Աստուծո ժպիտն է... Կը գթա Աստված, երբ երկնքի համապատկերը կը տեսնե մարդուս վրա, որ արցունքներով շողացող պայծառ աչոք իրեն կը նայի հուսալից. վա՜յ մեզի, որ երբ մեր քաղքին մեջ մատնիչ մը կը շնչե և կը խոկա անդունդը նայող սև ժայռի մը պես։

ԲԱԳԱՐԱՏ.— Ի՞նչ ընելու է ուրեմն։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Պետք է հզորի մը պես ջանալ և խրախուսել տկարը... Ասով կրնանք թշնամյաց հանդուգն ջանքերուն դիմադրել. այս է մեր ընելիքը, եթե դեռ թշնամին հաղթանակե, Աստուծո կամքն է այն, գուցե ալ շատ շնչեց և փառավորեցավ երկրիս երեսը Հայը, և գերագույն կամքը կուզե որ սորա հսկա և փառավոր անունը թաղվի իր երկրին հոյակապ շենքերուն փլատակին ներքև, ինչպես ուրիշ ազգեր և երկիրներ փշրեցան այն Աստվածային կամաց անդիմադրելի փոթորկին առջև։

ԲԱԳԱՐԱՏ.— Ա՜հ, սոսկալի է այդ։

ՁԱՐՄՈՒՀԻ.— Ի՞նչ ահագին անդունդ մը պետք է Հայը թաղելու համար։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Աստուծո ափ մը հողը կը բավե, Զարմուհի։

ԲԱԳԱՐԱՏ.— Հայը դեռ շատ կանգուն կը կենար, եթե երակացը մեջ շրջան չառներ իր հայկական արյանը խառնված այն թույնը, որ չեմ գիտեր ուսկից ժառանգած է... Իր ներքին վերքերը Հայաստանը օրհասական ըրին և ո՛չ թե թշնամյաց արտաքին հարվածները. կը զարմանամ թե ինչպե՞ս Հայաստան դեռ կը շնչե կանգուն և դողդոջուն. և իր փեռեկտյալ ճակտին վրա դեռ անջինջ կը կրե ազգության դրոշմը... Հայաստանի փլատակաց մեջեն մի՛շտ Հայու գլուխներ կը փթթին հետզհետե։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ազատության արմատ ձգած ծաղիկներն են անոնք, այն ազատությունը որ Հայկ իր նետովը հնչեցուց ու տարածեց և փառամոլ ուրացողք հանդգնեցան զայն իրենց սրտին մեջ խեղդել։

ՁԱՐՄՈՒՀԻ.— Անե՜ծք անոնց։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Դժոխք իրենց հետ կը խոսի, անոնք՝ որ երկրի վրա երկաթե շղթա անցուցին ուրիշին, իրենք բոցեղեն շղթա կը ժառանգեն հոն, ուր արդարությունը կորոտա իր ամենեն ահեղ ձայնովը։

ԲԱԳԱՐԱՏ.— Միայն այն վատերը իցիվ թե իյնային Աստուծո շանթեն՝ փոխանակ հայրենիքն ալ թավալելու։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Հայաստան սնուց զանոնք։

ԲԱԳԱՐԱՏ.— Ճշմարիտ է։

ՁԱՐՄՈՒՀԻ.— (պատուհանեն նայելով) Հա՛յր իմ, քաղաքին մեջ ժխորը հետզհետե կը բարձրանա, և ժողովուրդը ալեկոծյալ ծովու պես կը տատանի։

ԲԱԳԱՐԱՏ.— Արդյոք պիտի ներկայանա՞ ինձ քաջ մը խոստանալու համար թե ինքը պատրաստ է այն ահագին բաբանը այրելու ձեռնարկել։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Մանազկերտցիք ալ Մանազկերտի առջև պարսից մեկ ահագին բաբանը այրեցին հնարքով մը Տուղրիլի արշավանց ժամանակ. բայց չեմ հուսար, որ Պարսիկք այս գործը դյուրությամբ հաջողցնել տան մեզի։

ԲԱԳԱՐԱՏ.— Եթե ձեռնարկողը մահը աչքը առնե՝ զորքերը իրենց վրանը քաշված ժամուն կրնա դեռ Պարսիկներն իր վրա չը հարձակած այն ահագին բաբանը հրո ճարակ ընել և գուցե ձեռքերնեն ալ փախչիլ։

ՁԱՐՄՈՒՀԻ.— Չկա արդյոք այդպիսի քաջասիրտ և հայրենասեր մեկը։

Տեսիլ Ե

Նույնք և Լեոն

ԼԵՎՈՆ.— Վեհա՜ղն իշխան։

ԲԱԳԱՐԱՏ.— Ի՞նչ կը խնդրես, ո՜վ պատանի։

ԼԵՎՈՆ.— Դու քաղաքացվոց մեջ քարոզ հանեցիր գտնելու համար մեկը, որ հանդգնի ի սեր հայրենյաց՝ Պարսից մեր քաղաքին դիմաց կանգնած և մեծ վտանգ սպառնացող այն ահագին բաբանն այրել։

ԲԱԳԱՐԱՏ.— Այո՛, և ձեռնարկողին մեծամեծ շնորհքներ խոստացա, և եթե ինքը մեռնի՝ իր ընտանյաց։

ԼԵՎՈՆ.— Ես շնորհքներ չեմ ուզեր և ոչ ալ ընտանիք ունեմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Դո՜ւ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Աստված իմ։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Քաջասիրտ տղա։

ԼԵՎՈՆ.— Այո՛, ես որ որբ եմ, ո՛չ հայր, ո՛չ մայր և ո՛չ եղբայր ունիմ, այլ միայն թշվառ հայրենիք մը, ահա այն է հայրս, մայրս ու եղբայրս. հայրենիք մը ունիմ միայն, որ կը սիրեմ և զայն սիրելու համար կզգամ, որ պետք է մեռնիլ, մեռնիլ, խառնել իմ երակացս արյունը այն դյուցազանց թափած արյան հեղեղներուն, որք իրենց աշխարհեն քշեցին տարին գերության ահագին շղթաները և անդունդը թափեցին։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Եկո՛ւր գրկեմ զքեզ սրտիս վրա, ո՜վ նորատի դյուցազն։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Հայաստանի հրեշտա՜կը։

ԲԱԳԱՐԱՏ.— Անիի հաղթական բուրգը։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Պիտի կրնա՞ս հաջողիլ։

ԼԵՎՈՆ.— Եթե Հայաստան դեռ պիտի ապրի։

ԲԱԳԱՐԱՏ.— Կապրի Հայաստան, եթե քեզի պես քաջեր ըլլան։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ծրանի՜ քեզի, որ այդ նորատի հասակիդ մեջ հայրենյաց փրկարար մը պիտի հանդիսանաս։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ա՜հ, հայրենասիրությունն ի՞նչ գեղեցիկ ճառագայթ մ'է վեհ և անմեղ ճակտի մը վրա (անագին բոմբյուն մը կը լսվի խորեն) Աստվա՜ծ իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Ահա առաջին հարվածը։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Սիրտ ա՜ռ քաջասիրտ տղա։

ԼԵՎՈՆ.— Բանի մը պետք չունիմ... օրհնությունդ, զինվորդ Աստուծո։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Օրհնյա՜լ ըլլաս, զավակս (ձեռքերը գլխուն կը դնե)։

ԲԱԳԱՐԱՏ.— Պատրաստ ըլլանք (Տ. Վահրամի) դու գնա՜ եկեղեցի, տե՛ր հայր, աղոթելու, ես ալ երթամ քաղաքացիքը քաջալերելու (Ջարմուհիին) իսկ դո՞ւ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Հայրենակցաց վերքերը կապելու (ամենքը կը մեկնին.— Պատկերը կը փոխվի)։

ՊԱՏԿԵՐ Բ

Անիի պարսպաց առջև դաշտակ մը.— Տեսարանին խորը բաբանը.— Պարսպին վրա խոց մը կերևի։

Տեսիլ Զ

Ալփասլան, Որտելմեզ և Զորք

ԱԼՓԱՍԼԱՆ.— Ահա մեր առաջին հարվածը պարսպին վրա ահագին վերք մը բացավ, թող տեսնեն Անիցիք և իրենց փրկությանը վրա հուսահատած անձնատուր ըլլան առանց Պարսկաց հաղթական ճակատը քրտնելու։

ՈՐՏԵԼՄԵԶ.— Այսչափը բավական է զիրենք ահաբեկելու, արքայդ վեհափառ... Քիչ մը ետքը պատգամավոր մը կը փութա հաշտության պայմաններ առաջարկել։

ԱԼՓԱՍԼԱՆ.— Բայց ես երբեք չը պիտի գթամ իրենց վրա, այսչափ ատեն իմ զորությանս ընդունայն դիմադրելուն համար, ես այսչափ ժամանակի մեջ հարյուր քաղաք կապտած, քանդած և ջարդած էի... Մանավկերտի և պարսկաց վրեժը պիտի առնեմ բոլոր Հայաստան ավերակ դարձնելով, այսպես ընդունեցի Պարսկաց թագը իմ դյուցազն Տուղրիլ եղբորմես. իր ցուրտ գերեզմանին և արևին վրա այս ահավոր ուխտը կրկնեցի. ջնջել Հայաստանը։

ՈՐՏԵԼՄԵԶ.— Եվ պիտի հաջողիս, տե՛ր արքա։

ԱԼՓԱՍԼԱՆ.— Կերդնում ահավոր սրուս վրա։

ՈՐՏԵԼՄԵԶ.— Քու մեկ հրամանդ կը բավե՝ Հայաստանի Հայերը սարսելու։

ԱԼՓԱՍԼԱՆ.— Թող Հայաստանի ավերակները կրկնեն սոսկմամբ առյուծ Ալփասլանի անունը, ուր նա որոտաց. այս է այն հիշատակը, որ հոս պիտի թողում և հայկական Կմախք մը իմ շքեղապանծ գահիս պատվանդան։

ՈՐՏԵԼՄԵԶ.— Տե՛ր արքա, քեզ երախտապարտ պիտի ըլլա Պարսկաստանի ապագայն։

ԱԼՓԱՍԼԱՆ.— (զորաց) Դուք ալ գացեք, քաջեր, ձեր վրաններուն մեջ հանգչելու, և պատրաստ եղեք քիչ ատենեն այս գոռոզ քաղաքը կործանելու և կողոպտելու... (զորքերը կը մեկնին)

քաջդ Որտելմեզ, մենք ալ երթանք հանգչելու, այս հարվածը բավական է (կը մեկնի):

Տեսիլ Ե

Աղկան (առանձին)

Ահա Անիի պարսպին վրա խոր վերք մը, վերջապես պիտի տապալի նա։ Ալփասլան կը կատղի՝ կարծելով որ իր բոլոր հնարքները քաղաքացվոց նախատեսությամբը կը փճանան, չը գիտեր որ իր բանակին մեջ մատնիչ մը կա, որ իր բոլոր խորհուրդները գաղտագողի քաղաքացվոց կը հաղորդե... Ա՜հ, Զարմուհի, գեղանի աղջիկ, դու ես որ զիս այս մատնությունները գործադրելու կը դրդես... Անիծյալ ըլլա այն օրը, որ քեզ տեսա այդ պարսպին վրա և սիրեցի. ա՜հ, կը սիրեմ ու կամոթահարիմ, կը մատնեմ և կը կատղիմ. անիծյա՜լ սեր... Պարսիկ մը Հայուհի մը սիրե և անոր սիրուն իր հայրենիքը մատնե՜... բայց սերն ամեն բանի կը հաղթե, պետք է տեսնել զինքը (կը մեկնի):

(Պարսպին վրա հետաքրքիր գլուխներ կերևին):

ՆԵՐՍԵՆ.— Պատերա՜զմ, պատերա՜զմ։

Տեսիլ Ը

Լևոն

(Մինակ կերևի, ձեռքը նիզակ մը, որուն ծայրը մագաղաթ մը կը շարժի):

ԼԵՎՈՆ.— Պատգամավո՜ր, պատգամավո՜ր (բաբանին կուգե մոտենալ):

ՊԱՐՍԻԿՔ.— (դրսեն) *Բաբանը պիտի այրե՜, բաբա՜նը.* (մեծ աղմուկ):

ՀԱՅԵՐ.— (պարսպին վրայեն) *Փախի՜ր, Պարսիկները կը հասնին։*

ԼԵՎՈՆ.— (որ դյուրավառ հեղուկ մը բաբանին վրա թափած էր, բաբանը կսկսի բռնկիլ, Լևոն կուգե փախչիլ, Պարսիկները ամեն

կողմե զինքը կը պաշարեն) *Պարսկաց ձեռք չեմ իյնար* (կը դառնա շուտով և հանկարծ բաբանին բոցին մեջ կը նետվի և աչքերը երկինք հառելով կաղաղակե) *Կեցցե՜ հայրենիք* (Պարսիկները, որ զինքը պաշարած էին, ապշած և կայծակնահար կը մնան.— Վարագույրը կիջնե):

<(ՎԵՐՋ Բ ԱՐԱՐՎԱԾԻՆ)>

ԱՐԱՐՎԱԾ Գ

Տեսարանն է Բագարատա ապարանին մեջ կամարակապ և սյունազարդ սրահ մը. պատեն կախված զենքեր և զրահներ.— Տեսարանը մութ է։

Տեսիլ Ա

Բագարատ և Տ. Վահրամ

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ի՞նչ կը մտածես, իշխան։

ԲԱԳԱՐԱՏ.— Բաբանը և միանգամայն ինքզինքն այրող հայրենասեր պատանվույն վրա կենտրոնացած է ուշս... Ա՜հ, որչափ սրտաշարժ և վսեմ էր այն վայրկյանը, երբ նա «Հայրենի՜ք» գոչելով բոցին մեջ նետվեցավ։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Հիրավի, զարմանալի էր իր արիասրտությունը. պիղծ Պարսից ձեռք չիյնալու համար ինքզինքը կրակը նետեց, և զինքը շրջապատող Պարսից այն կատղած խումբը շանթահար մնաց, երբ այն հայրենասիրական վսեմ տեսարանը տեսավ. Ալփասլան Անին պաշարելեն ի վեր է, որ շատ հանդուգն քաջագործություններ տեսավ Անիցվոց կողմանե։

ԲԱԳԱՐԱՏ.— Եվ դեռ մինչև հիմա Անին իր ճանկերուն տակ առնելե հուսահատած չը մեկնիր, և մինչև ցե՞րբ այսպիսի սրտատանջ վիճակի մը մեջ պիտի տատանինք։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ինչո՞ւ սրտատանջ ըլլա մեր վիճակը, երբ մեր հույսը ցամքեցնող բաբան մը կար, այն ալ մոխիր դարձավ քաջի մը կրակովը։

ԲԱԳԱՐԱՏ.— Եվ միթե դեռ նորանոր կատաղի և հանդուգն փորձերու չի՞ պիտի ձեռնարկեն։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Թող այդպես ըլլա. մենք ինչվան հիմա ինչ որ ըրինք, ասկեց ետքն ալ նույնը կընենք դարձյալ, արիություն և միություն. դարձյալ կը կրկնեմ, եթե մեր քաղաքին մեջ մատնիչ մը չը խոկար, կրնայինք խորտակել այսպես Ալփասլանի երկաթե կամքը։

ԲԱԳԱՐԱՏ.— Այս անգամ Պարսիկին է կարգը. նա կընե մատնությունը։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Աղկան իշխանը։

ԲԱԳԱՐԱՏ.— Կը զարմանամ այդ իշխանին մեր վրա ցցուցած համակրական ցույցերուն և անձնվիրությանց վրա. ես այնպես կը կարծեմ, թե գաղտնիք մը կա ծածկված իր գործոցը տակ... կամ գուցե բան մը կաթնկալե մեզնե։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ի՞նչ ակնկալություն կրնա ունենալ, եթե ճշմարիտ Պարսիկ մ'է, քանի որ Պարսկի մը երջանկությունը իր խողխողած Հայոց թվույն քանակությենեն կախում ունի, ես այնպես կը կարծեմ, թե այս իշխանը պարզապես կը գթա մեր դառն կացությանը վրա, նաև գուցե Պարսկաստանի անապատներուն մեջ գոհար մ'է։

ԲԱԳԱՐԱՏ.— Գրեթե նա եղավ Անիի ազատագրողը։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ճշմարիտ է։

ԲԱԳԱՐԱՏ.— Եթե դեռ Պարսիկք բաբանին այթելուն վրա կատաղած ուրիշ ձեռնարկի մը խորհուրդ ընեն, մեր բարեսիրտ իշխանը սովորականին պես գաղտնի կերպով անշուշտ կիմացնե մեզի։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Այլ գեռ ի՞նչ մնաց գործադրելու Պարսից համար, ինչ որ կուզեն թող ընեն. բավական է որ մենք միաբան և արթուն՝ հարվածը ձեռքնենք՝ հակենք այն վիշապին գլխուն վրա... Ո՜վ երկինք, մենք կաղոթենք և կը զարնենք, այս է մեր զորությունը, դու ալ օգնե, որ հայությանն վերջին արձանն ալ չը տապալի թշնամյաց առջև։

Տեսիլ Բ

Նույնք և Պահնորդ

ՊԱՀՆՈՐԴ.— Վեհազն տեր, այս մագաղաթը գտանք դարձյալ Անիի պարսպաց ներսը։

ԲԱԳԱՐԱՏ.— Աղկան իշխանը գրած է անշուշտ (ներսն)... տեսնենք (կարդալով) «Որտելմեզ զորապետը զորաց գլուխն անցած՝ Անիի արևելյան պարսպացը տակ խրամատը կը փորեն»։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ա՜հ նենգավորներ։

ԲԱԳԱՐԱՏ.— Պետք է ճանկեր և քարեր պատրաստել՝ զորքերը քարկոծելու և զորապետը որսալու համար։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Բայց պետք չէ դանդաղիլ, իշխան, պետք է շուտով գործի սկսիլ, որովհետև վտանգը կապառնա վայրկենե վայրկյան։

ԲԱԳԱՐԱՏ.— Ուրեմն երթանք։

Տեսիլ Գ

Ապրամ (առանձին ներս կը մտնե)

Վերջապես չեմ կրնար սանձել սրտիս այդ փրփրերախ դժոխքը. պիտի տեսնեմ զինքը, պիտի իյնամ իր ոտքը, պիտի նետեմ սուրս իր առջին ըսելով՝ «ա՜ռ սուրս, տո՜ւր սերդ». և եթե դեռ մերժե իմ սերս, սոսկալի պիտի ըլլամ իմ սրտիս դժոխքին նման... կը սիրեմ ես, ինչպես կը սիրե վագրն իր արյունաթաթավ որսը. կը սիրեմ, ինչպես կը սիրե Պարսիկն իր Արևը. ինքը կը զայրանա ինձ դեմ, երբ կսպառնա, աստղի մը նման շողշողուն կելլա ինձ համար. երբ կը տժգունի՝ ճառագայթ, երբ կը շառագնի՝ բոց մը... Սակայն դարձյալ կը դողամ իրմե, ինչպես ոճրագործն աստղե մը... Ա՜հ, ոտքի ձայն մը կա... ինքն է կարծեմ...

Տեսիլ Դ

Նույն և Զարմուհի

ԶԱՐՄՈՒՀԻ.— Դու հո՞ս, զորապետ։

ԱՊՐԱՄ.— Քեզ տեսնել ուզեցի։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ի՞նչ բանի համար։

ԱՊՐԱՄ.— Վասնզի քեզնե հեռու դառն և խավար է ինձ կյանքը. Զարմուհի, քու ժպիտդ միայն քաղցր և լուսավոր պիտի ընե զայն։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Զորապե՛տ։

ԱՊՐՍԱՄ.— Ինձ դեմ մի՛ զայրանար, Զարմուհի, այլ անիծե՛ այն ձեռքը, որ այս կրակը սիրտս ձգեց։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Զքեզ այսչափ հանդուգն չէի կարծեր։

ԱՊՐՍԱՄ.— Ա՜հ, ի՞նչ ընեմ, եթե սերը զիս այսչափ հանդուգն կընե և վրաս կը ծիծաղե դժոխային ծիծաղով մը։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Գնա՛, ա՛լ ատելի ես ինձ։

ԱՊՐՍԱՄ.— Զարմուհի՜։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ա՜նգութ, ի՞նչ կուզես այն կնոջմեն, որ երագ մը ունի լոկ, տխուր վերջալույս մը... Հեռացի՛ր ինձմե։

ԱՊՐՍԱՄ.— Առանց քու թևերուդ մեջ սարսռալու... անկարելի է այդ, այն ատեն սիրտս քեզմե կը բաժնվի, երբ գլուխս մարմնես զատվի։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Դեռ կը հանդգնի՞ս։

ԱՊՐՍԱՄ.— Պիտի սիրեմ զքեզ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Բայց ես զքեզ կատեմ։

ԱՊՐՍԱՄ.— Դու ատե, ես սիրեմ, տեսնենք ո՞վ պիտի հաղթանակե (կուգե մոտենալ անոր)։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Հեռո՜ւ, վատ մարդերե։

ԱՊՐՍԱՄ.— Մի՛ գրգռեր զիս, Զարմուհի։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ամո՜թ քեզի... ա՛լ արատեցիր հաղթական սուրդ... թաթխեցիր զայն վատության տղմին մեջ, ալ վատ պիտի հրատարակեմ քեզ քաջաց մեջ. պիտի ըսեմ թե Ապրսամ զինվոր չէ, այլ ոճրագործ մը, որ կանանց սրտերուն հետ կը պատերազմի... Զորապե՛տ, հոս է Թաթուլի ստվերը՝ մեր երկուքին մեջ արձանացած, դեռ պիտի հանդգնի՞ս։

ԱՊՐՍԱՄ.— Ո՛չ թե մեռյալի մը ստվերը մեր մեջտեղ, այլ եթե դժոխք մ'ալ ըլլա, պիտի անցնիմ քեզ գրկելու համար իմ բոցավառ սրտիս վրա. (կուգե վրան հարձակիլ)։

ՋԱՐՄՈՒՀԻ.— (հանկարծ կը հետվի և պատին վրայեն կախված սուր մը կը հափշտակե. Ապրսամ կանգ կառնե) Մոտեցի՛ր եթե կրնաս... Ա՜հ, տկա՞ր կը կարծեիր զիս քու հանդուգն վատության դեմ... կը կարծես թե Հայուհի մը չը՞ կրնար սուր շարժել... Տե՛ս... պատերազմի դաշտին վրա ճակատ առ ճակատ մենամարտած թշնամվույդ կը նմանիմ, կին մը՝ ոչ միայն սուր, այլ տապար ալ կը գործածե իր պատիվը պաշտպանելու և չը սրբապղծելու համար անոր հիշատակը, զոր կը

սիրե... Հեռացի՛ր հալածական կնոջ մը ատելության առջևեն։

ԱՊՐՍԱՄ.— Պիտի զղջաս, Զարմուհի, վասնզի հալածական քայլս դեպի դժոխք պիտի ուղղվի։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Դու որ զինվոր մ'էիր և սուրովդ չը կրցար խոնարհեցնել կնոջ մը ճակատը, ալ ուրիշ զենք չունիս որ գործածես. վատ ես, չեմ ուրանար այդ, բայց ես պատվո համար կռվող Հայուհի մ'եմ, Հայուհի մը, որ առագաստին մեջ կը դողդողա, բայց անտի դուրս հսկայի մը պես հանդուգն է։

ԱՊՐՍԱՄ.— Դողա՛ վրեժխնդրութենես, Զարմուհի։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Վա՜տ։

ԱՊՐՍԱՄ.— Պիտի տեսնես (սպառնալից կը մեկնի)։

Տեսիլ Ե

Զարմուհի (առանձին)

Ա՜հ, Թաթո՜ւլ, սրտիս հատորը, ինչո՞ւ զիս որբ և միայնակ թողուցիր, տե՛ս, քու զինակիցներդ անգամ կը հանդգնին մեր սգավոր և թափուր առագաստը մտնել... Մոռցան զքեզ ամենքը, միայն քու Զարմուհիդ չը մոռցավ, որ իր սրտին խորը քու մշտնջենավոր մահարձանդ կանգնեց... Կը թքնե մահարձանիդ ամբարիշտ և վատ զինակիցներեդ մեկը. եթե հավիտենականության շղթայն կոտրեր, կիջնեիր շանթի մը պես այն անօրենին գլխուն և կը ջախջախեիր, այլ ավա՜ղ, անգութ է հավիտենականության շղթայն... Լռեցե՛ք, հաղթության փողեր և աղոթքի զանգակներ, երբ ես իմ Թաթուլիս վրա կուլամ։

Տեսիլ Զ

Նույն և Բագարատ

ԲԱԳԱՐԱՏ.— Ուրախ լուր մը, Զարմուհի։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ի՞նչ լուր, հայր իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Պարսից Որտելմեզ սպարապետը գերի բռնվեցավ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ի՞նչպես, հա՛յր իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Անշուշտ զարմանալի կը թվի քեզ։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Շատ հետաքրքրական բլլալու է պատմությունը։

ԲԱԳԱՐԱՏ.— Բավական։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Տեսնենք, հա՛յր իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Աղկան իշխանը մագաղաթով մ՝իմացուց, թե Պարսիկները խրամատ կը փորեն քաղաքին պարսպացը տակ, անմիջապես պահնորդներու ձեռոք ահագին քարեր և երկաթե ճանկեր պատրաստել տվի, և ակսան քաղաքացիք Պարսից զորքերը քարերով ջախջախել, քաջ զորավար մ՝ալ նույն միջոցին հաջողեցավ երկաթե ճանկով Որտելմեզ զորապետը բռնել. և ուրիշ ընկերներու օգնությամբ օդին մեջ բառնալով վեր քաշել. Պարսիկ զորապետը կատղած և իր քարկոծյալ զորաց օգնութենեն հույսը կտրած՝ իզուր կը պոռար, և ինքզինքն այն ճանկեն աղատելու համար ընդունայն կը թոթվըտեր օդին մեջ... Արդ երևակայե թե ո՛րչափ կրնա կատղիլ Պարսիկ սպարապետ մը, երբ Հայու մը ճանկեն բռնված օդին մեջ խաղալիքի մը պես կը տատանի և պրծիլ կաշխատի։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Հիրավի նշանավոր որս մ՝են բռներ մեր քաղաքացիքը։

ԲԱԳԱՐԱՏ.— Արդյոք ո՛րչափ պիտի կատղի Ալփասլան։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Երանի՜ թե ալ Անին առնելե հուսահատեր։

ԲԱԳԱՐԱՏ.— Գուցե, որովհետև շատ հանդուգն քաջագործություններ ցույց կուտա Անիի ժողովուրդը... Այս նոր հաջողության համար ալ իշխանները և զորականները խնճույք մը խնդրեցին ինձնե այս ապարանիս մեջ։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ուրեմն երթանք հյուրընկալելու (կը մեկնին.— Պատկերը կը փոխվի)։

ՊԱՏԿԵՐ Գ

Փառաշեն սրահ մը, ուր շքեղազարդ սեղան մը դրված է։

Տեսիլ Է

Նույնք, Գուրգեն, Բարգեն և Իշխանք

ԲԱԳԱՐԱՏ.— Ահա այն կամարակապ և սյունազարդ սրահը, ուր շատ ավագանյաց խնճույքներ և ժողովներ տեղի ունեցած են. ահավասիկ սեղանն ալ պատրաստ է, իշխանք։

ԳՈՒՐԳԵՆ.— Մինչդեռ մեր նոր հաջողությանց գոհությանը համար եկեղեցյաց զանգակները կը հնչեն, մենք ալ հոս գավաթներ բախենք Հայաստանի կենաց։

ԲԱԲԳԵՆ.— Ճշմարիտ է, ա՛յլ բավական դողացինք Պարսից առջև։

ԳՈՒՐԳԵՆ.— Թող մեր խնճույից ձայները մինչև Ալփասլանի ականջը հասնին։

ԲԱԳԱՐԱՏ.— Կը կատաղի նա։

ԲԱԲԳԵՆ.— Վագրի մը պես։

ԳՈՒՐԳԵՆ.— Կը կրճտե ակռաները, կերկնցնե ճիրանը, բայց ահագին պատեր և երկաթե կամք մը կը գտնե՝ փոխանակ Հայուն օձիքը գտնելու։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ահա հայտնի կերևի, ո՞վ վեհազն իշխաններ, որ Ալփասլանի նման անապատի առյուծի մը զորությանը այսչափ դեմ դնելնուս և զայն մինչև անգամ կորուստներով հուսահատեցնելնուս միակ պատճառը մեր մեջ տիրած միությունն է եղեր, և այն հայրենասիրությունը, որ ամեն զգացմանց վրա կը հաղթանակե... Ա՜հ, շատ սքանչելի կը տեսնեմ Հայուն արիությունը, կը պնդեմ թե աշխարհի վրա հայրենասիրության կրակով հրահրած պայծառ ճակտե մը ավելի գեղեցկություն չը կա... և իր վիրաց արյան հոսումը մեկ ձեռքովը բռնող և մյուս ձեռքովը թշնամին զարնող զինվորին ճգնաժամեն ավելի վսեմ տեսարան մը չը կա։

ԳՈՒՐԳԵՆ.— Իշխանուհին շատ գեղեցիկ խոսեցավ։

ԲԱԲԳԵՆ.— Արդյոք դեռ ո՛րչափ պիտի կատղի Ալփասլան իր զորապետին գերի բռնվելուն վրա։

ԳՈՒՐԳԵՆ.— Մանավանդ որ գրեթե բանակին հրամանատարությունն ընողը այն էր, շատ քաջ զորապետ մ՝է այն... Գագիկ Աբասյան՝ Կարուց Թագավորին հրամանատարությանը տակ Տուղրիլի արշավանաց դեմ պատերազմած ատենները բանակին մեջ զորապետ էր նա (Բարգենի), այնպես չէ, իշխան։

ԲԱԲԳԵՆ.— Այո՛, երեկվան պես կը հիշեմ այն պատերազմը։

ԲԱԳԱՐԱՏ.— Մեր քաղաքացիքը աղեկ որս մը որսացին իրենց ճանկերովը՝ ի շնորհս Աղկան իշխանին, որ սովորականին պես մագաղաթով մը Պարսից գիշերային դավը մեզ իմացուց գաղտնի կերպով։

ԲԱԲԳԵՆ.— Կը զարմանամ Պարսիկ իշխանի մը Հայոց ցցուցած այս տարօրինակ անձնվիրությանը վրա։

ԳՈՒՐԳԵՆ.— Ես այնպես կը գուշակեմ, որ այդ անձնվիրության տակ տարօրինակ գաղտնիք մը ըլլալու է։

ԲԱԲԳԵՆ.— Այնպես ըլլալու է, եթե ոչ անկարելի է, որ Պարսիկ մը Հայոց վրա այսչափ խնամք և հոգ ունենա։

ԳՈՒՐԳԵՆ.— Բայց սեղանը պարապ մնաց։

ԲԱԲԳԵՆ.— Ուրեմն խմենք։

ԲԱԳԱՐԱՏ.— Եթե կը հաճիք, մեր հին Գողթան բանաստեղծներուն մեկ երգը նախ նվագենք, վասնզի երաժշտութենե շատ կախորժիմ ես։

ԱՄԵՆՔԸ.— Երգենք։

ԵՐԳ ԽՆՃՈՅԻՑ

Խմենք գինին, անուշ գինին կենաց բաժակ,
Քաջաց բաժին դրավ երկինք, քամենք հատակ.
Տխուր դիմաց վարդ կը սրսկե կարմիր գինին,
Աչաց ծիծաղ, շրթանց ոգի տա բոցագին։

Խմենք գինին, անուշ գինին կենաց բաժակ,
Քաջաց բաժին դրավ երկինք, քամենք հատակ.
Գինին ոգի, սեր կարծարծե մաշած սրտին,
Մենք զայն խմենք, և թող վերեն հրեշտակք ժպտին։

ԳՈՒՐԳԵՆ.— Կարծեմ ա՛լ խմելուն կարգը եկավ, իշխաններ, եթե կուզեք, ես լեցնեմ ձեր գավաթները. (կսկսի բոլոր գավաթները լեցնել) ամենքնուդ ալ միակերպ, ո՛չ մեկուն շատ և ոչ մյուսին՝ քիչ. Ակոռիի գինին է այս, որ բոլոր Ասիո մեջ իր կրակոտ համբավը տարածած է։

ԱՄԵՆՔԸ.— Խմենք (ամենքը գավաթնին իրար զարնելով կը խմեն) Հայաստանի կենացը (սույն միջոցին զինվորներ Ուռելմեզ զորապետը կը բերեն շղթայակապ)։

Տեսիլ Ը

Նույնք և Ուռելմեզ

ԲԱԳԱՐԱՏ.— Քակեցե՛ք զորապետին շղթաները. որչափ որ Պարսիկները մեր արյունը խմելու և մեր փառքը մարելու անհագ տենչ մը կզգան, Հայերը դարձյալ իրենց Պարսիկ գերվույն

շղթաներն անգամ կը քակեն, և սուր կրող զորապետը կը պատվեն։

ՈՐՏԵԼՄԵԶ.— Պետք չէ՛ ինձ այդ պատիվը, իմս են այս շղթաները, կընդունիմ. մինչդեռ անհուն ցավ մ'է ինձ Հայու մը օղակ կրել պարանոցս, դուք ավելի դառնացնել կուզեք իմ ճակատագիրս, դո՛ւք, Հայոց գծուծ իշխանները, լիաբերան շնորհ առատաձեռնելով ինձ։

ԱՄԵՆՔԸ.— (զայրացած) Նախատի՞նք։

ՈՐՏԵԼՄԵԶ.— Ձեռքերնիդ սուրերնուդ կը տանիք գոռոզաբար, մինչդեռ շղթայակապ կը տեսնեք զիս ձեր առջև... Դուք հոս ձեր կարճ թուրերովը, թզուկնե՛ր, դատավոր կը կարծեք ինքզինքնիդ արի հսկայի մը, որուն խոժոռեցավ սև ճակատագիրը։

ԲԱԳԱՐԱՏ.— Հսկա մը այդպես չը խոսիր, հսկա մը չը նախատեր իրեն շղթաները քակող և սուրը պատվողը... այնչափ նենգության և զրկանաց համակրությամբ և պատվով համապատասխանող Հայը դեռ կը հանդգնիս նախատել, ժանտ Պարսիկ, մինչդեռ Հայը իր դարավոր վրեժները ծածկել կուզե անհիշաչարությամբ, դու դեռ կը հրահրես զայն... Պետք է որ ամոթահարեիր այնչափ նենգավոր արարքներու դեմ Հայոց ցցուցած վեհանձնությունը տեսնելով։

ՈՐՏԵԼՄԵԶ.— Վեհանձնությո՞ւն. ի՞նչ վեհանձնություն կրնա ընել իր մեխրակույտ ավերակներն հայրենիք անվանող լալկան ու անզոր ժողովուրդ մը Սասանյան սպարապետի մը, որ իր ետեվեն ահեղ վրեժ մը կը թողու, վրեժ մը, որ երբեք չը պիտի հագենա և չը պիտի մարի Հայոց արյամբը։

ԳՈՒՐԳԵՆ.— Նախ Հայաստան համայն հայության վրեժը լուծե՝ ետքը Պարսկաստան՝ Պարսիկ զորապետի մը վրեժը։

ԲԱԳԱՐԱՏ.— Այդչափ հանդուգն նախատինքներդ, որոնք վատություններ կը բուրեն, կրնային զքեզ Հայու մը վրեժխնդիր սրույն մատնել, բայց Հայը վատություն կը սեպե իր շղթայակապ գերին զարնել։

ՁԱՐՄՈՒՀԻ.— Եթե այդչափ ցավ կը պատճառեր քեզ հայկական լուծը, ինչո՞ւ ուրեմն վիզդ անցնել տվիր, հսկայդ Սասանյան։

ՈՐՏԵԼՄԵԶ.— (զայրացած) Ա՜հ, անգութ ճակատագիր։

Տեսիլ Թ

Նույնք և Տ. Վահրամ

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ի՞նչ է այս, իշխաններ, մինչդեռ քահանայն կաղոթե, զինվորը պե՞տք է թուլնա զվարճության սեղանի մը վրա, այսպե՞ս պետք է ընդունիլ երկնից շնորհաց հաջողությունը... Քաշվեցեք այդ սեղանեն, ուր սադայելը կը ծիծաղի... (կամաց կամաց սեղանեն կը քաշվին և Տ. Վահրամի բոլորտիքը շրջանակ մը կը կազմեն):

ԳՈՒՐԳԵՆ.— Հայաստանի կենացը կը քամեինք մեր բաժակները, տե՛ր հայր։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Հայաստանի վերականգնումը գինվո գավաթին մեջ չէ՛, իշխան, Հայաստան մեր միությամբը և երկաթե կամքովը կը վերականգնի... զվարճության և ուրախության ժամ չէ՛ մեզի համար այս ժամը, այլ գոհություն տալու ժամ է Արարչին, որ մեր հայրենասիրական ջանքերը կը պսակե... Պետք չէ որ թուլանանք, մինչդեռ թշնամին կը հսկե մեր դռանը մեջ։

ԲԱԲԳԵՆ.— Միշտ նույնն եմք Պարսից դեմ, տե՛ր հայր։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Միշտ նույնն են նաև Պարսիկները մեզի դեմ՝ վատ, նենգավոր և խորամանկ։

ՈՐՏԵԼՄԵԶ.— Ի՞նչ ըրավ քեզ Պարսիկը։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ինչ ըրա՞վ. ինչ որ ըրավ մինչև այս ալևոր հասակս՝ ես գիտեմ, և անկեց առաջ ինչ որ ըրավ՝ Մասյաց ալևոր սարերը գիտեն. Հայն իր վեհ դյուցազներուն որի՞ն վրեժն առավ։

ՈՐՏԵԼՄԵԶ.— Եվ դեռ չես մտածեր, թե ի՞նչ հայկական զոհեր պիտի մորթվին իմ գերեզմանիս վրա վրեժս քավելու համար։

Տեսիլ Ժ

Նույնք և Պահնորդ մը

ՊԱՀՆՈՐԴ.— Վեհազն տե՛ր, Աղկան՝ Պարսիկ իշխանը կուզե քեզ տեսնել։

ԲԱԳԱՐԱՏ.— Հայոց բարերա՛ր... Թո՛ղ գա (պահնորդը կը մեկնի):

ՈՐՏԵԼՄԵԶ.— (մեկուսի) Ի՞նչ կը լսեմ։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ի՞նչ կը նշանակե արդյոք իր գալուստը։

ԲԱԳԱՐԱՏ.— Արդյոք մեծ վտա՞նգ մը կա, որ կուգա անձամբ իմացնելու մեզի։

ՈՐՏԵԼՄԵԶ.— (մեկուսի) Մատնիչ մ'է եղեր նա։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ահա ինքը (Աղկան իշխանը կերևի, որ Որտելմեզ հոն շղթայակապ տեսնելով՝ շանթահար և շփոթած կը մնա, Որտելմեզ իր շարագուշակ նայվածքը անոր վրա կը հառե):

Տեսիլ ԺԱ

Նույնք և Աղկան

ԱՂԿԱՆ.— (մեկուսի) Որտելմե՞զ։

ՈՐՏԵԼՄԵԶ.— Ա՜հ, վատ մատնի՛չ... Մատնություններ ընելե վերջը կը հանդգնիս դեռ Հայոց գիրկն իյնել. այդպե՞ս սորվեցուց քեզ հայրենիքդ, այդպե՞ս սորվեցար Հայերն ատել և Պարսկաստան սիրել... դողա՛ այն արևեն, որ գլխուդ վրա կը շողա ահեղ վրեժխնդրության շանթի մը պես... նայե՛ այն անդունդը, ուր Պարսկաց անեծքներ կը մռնչեն. քեզ կանիծե հայրենիքդ, վատ արանց, ես կը կարծեի թե աշխարհի վրա միայն հայը կրնամ ատել, այլ անկե ատելի էակ մ'ալ կա եղեր, Պարսիկ մը, որ իր հայրենիքը կը մատնե։

ԱՂԿԱՆ.— (որ հուսահատ և գլուխը կախած՝ վշտագին մտիկ կըներ, դեպի Որտելմեզ կը հառաչանա և ոտքն իյնելով) Գթությո՛ւն... ներե՛ թշվառիս, ո՞վ վեհազն քաջ։

ՈՐՏԵԼՄԵԶ.— Ներե՛լ... միթե ես կրնա՞մ ներել, անիծել խնդրե ինձնե, անիծե՛լ։

ԱՂԿԱՆ.— Ուրեմն ինձ ալ կիյնա անիծել զայն, որ իր ազդած սիրովը և գեղեցկությամբը սիրտս մթագնեց... զքեզ Զարմուհի... սիրեցի զքեզ, անիծյալ ըլլաս (կը մեկնի հուսահատ, ամենքը շվարյալ կը մնան):

ՈՐՏԵԼՄԵԶ.— Ավելի՜ վատ, կը սիրե Հայուհի մը (հանկարծ դրսեն դղրդյուն մը կը լսվի):

ԲԱԳԱՐԱՏ.— Ի՞նչ է այս (ամենքը միջնադռան կը մոտենան)։

ԳՈՒՐԳԵՆ.— Աղկան իշխանն է իյնողը։

ԲԱԲԳԵՆ.— Ինքգինքը զարկեր է։

ՈՐՏԵԼՄԵԶ.— Զը թողուց որ երկինքը զարնեին։

Տեսիլ ԺԲ

Նույնք և Պահնորդ

ՊԱՀՆՈՐԴ.— Վեհազն տյա՛րք, Ապրսամ զորապետն իր հրամանատարության տակ գտնված զորաց բազմությանը հետ Թշնամյաց կողմն անցավ։

ԱՄԵՆՔԸ.— (սարսափած) Ա՜հ։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Վա՜տը։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ո՞վ երկինք։

ՈՐՏԵԼՄԵԶ.— Խնդացեք, հայե՛ր։

ԲԱԳԱՐԱՏ.— (զորաց) Զորապետին գլուխը կտրելով Պարսից բանակը նետեցեք։

ՈՐՏԵԼՄԵԶ.— Եվ Թող իմ վրաս փլչի Անի։

ԲԱԳԱՐԱՏ.— Ողջ են դեռ հայերը։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Արդյո՞ք են երկինք (վարագույրը կիջնե)։

<(ՎԵՐՋ Գ ԱՐԱՐՎԱԾԻՆ)>

ԱՐԱՐՎԱԾ Դ

Տեսարանն է Բագարատ իշխանի ապարանը, սգապատ սրահ մը։

Տեսիլ Ա

Բագարատ և Զարմուհի

(Վարագույրը բացված ատեն նստած են մտազբաղ, ճեռուեն կոշնակահարություններ և աղոթքներ կը լսվին)։

ԱՂՈԹՔ

Ո՞վ Տեր, լսե մեր աղոթից տխուր ձայն,
Որ հուսահատ աստ քեզ մնամք ապաստան,
Ձեռք տուր մեզի, և Թող կանգնի մեր ճակատ,
Եկեղեցիք, սաղմոսք ըլլան Թող ազատ։

Տուր, Տեր, կանգնել մեզ դրոշակ փառավոր,
Ցավերակուս մեր հայրենյաց սգավոր,

Ցայնժամ կենոք հառնե ի վեր Հայաստան,
Ցայնժամ ծաղկին սրբոց պսակ քաջության։

ԲԱԳԱՐԱՏ.— Ա՜հ, ինչ սոսկալի հարված էր այս։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ի՞նչ պիտի ընենք, հա՛յր իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Ձեմ գիտեր, հուսահատությունն արդեն քաղաքին ամեն կողմը տիրած է, և հիմակվընե կսկսին իրենց կորուստները լալ ամեն մարդ։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ի՞նչ պիտի ըլլա մեր վիճակը։

ԲԱԳԱՐԱՏ.— Ամեն բան լմնցավ Անիի համար, այս ալ Հայաստանի մյուս հոյակապ քաղաքաց նման, որք ավերակ դարձան, անոնց ճակատագիրը կը կրե։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Միշտ սև մատնությո՜ւն։

ԲԱԳԱՐԱՏ.— Տեսնենք այն վատը՝ Ապրսամ զորապետը, որ իր հայրենիքը դավեց, պիտի գտնե՞ իր վարձքն ու հանգիստը. ո՛չ երբեք. նույնիսկ իր խիղճը պիտի խռովե միշտ զինքը և հայածե արյունարբու հրեշի մը պես, ինչվան որ հոգեսպառ գերեզման իջնե, ուր կը ծավալին արդեն դժոխոց բոցերն իր հոգին լափելու համար...

ԶԱՐՄՈՒՀԻ.— Մի՛ հուսահատիր, հա՛յր իմ, կը պատերազմինք դեռ Թշնամյաց դեմ մինչև մեր արյան վերջին կաթիլը։

ԲԱԳԱՐԱՏ.— Անկարելի է այդ, Զարմո՛ւհի։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ինչո՞ւ, հա՛յր իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Մենք ա՛լ չենք կրնար Պարսից ահեղ զորությանը դեմ դնել, մինչդեռ Ապրսամ սպարապետը զորաց մեծ մասն իրեն կողմը որսալով Թշնամյաց կողմն անցած է՝ այնպես համոզելով զիրենք, Թե Անի երկար ատեն չէ կարող Պարսից զորությանը դիմադրել, և փոխանակ Պարսից ահեղ սրույն ճարակ ըլլալու, անոնց կողմն անցնելով կրնան գոնե կյանքերնին ազատել։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Բայց, դարձյալ պետք է քաջալերել զինվորները, որ պարսպին վրա կենալով ի դերև հանեն Թշնամվույն ջանքերը։

ԲԱԳԱՐԱՏ.— Ի՞նչ կըսես, Զարմուհի, բոլոր քաղաքին պարիսպները պահնորդելու չափ զինվոր չը մնաց. քաղաքին մեջ մինակ խառնիճաղանճ բազմություն մը մնաց, ծերոց, կանանց և տղոց, որոնք ավելի ժողովրդյան հուսահատությունը կը գրգռեն։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ի՞նչ ընելու է ուրեմն։

ԲԱԳԱՐԱՏ.— Բոլոր իշխանները քիչ մը ետքը հոս պիտի ժողովին և քաղաքին բոնելիք ընթացքին վրա համաձայն որոշում մը պիտի տրվը... Տեսնենք ի՞նչ պիտի ըլլա որոշումնիս։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ինչ որոշում ալ ըլլա՝ խեղճ ժողովուրդն ուրիշ փրկություն չունի, բայց եթե Պարսկին սո՛ւրը կամ շղթա՛յն... ընտրել երկուքին մեկը. ո՞րն ընտրե, երկուքն ալ սոսկալի են. երկուքն ալ հայության ջնջում կսպառնան, մեկը կենաց դահիճ, իսկ մյուսն իրավանց դահիճ... Ա՜հ, մեր վիճակին վրա մտածելն անգամ սոսկումով կը լեցնե և կը սառեցնե դիս... Միայն Անիի պարիսպները կան կանգուն թշնամյաց դիմաց, և այն պարիսպներուն ետև Հայուն տկար կուրծը կա, ալևոր ծերունիներ, հերարձակ մայրեր, ողբագին տղաքներ, վերջապես այնպիսի անձեր, որք միայն ազերսել գիտեն թշնամվույն։

ԲԱԳԱՐԱՏ.— Գերեզմաննիս փորենք, աղջիկս։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ո՜չ, հայր իմ, ես միտքս դրի չը մեռնիլ, մինչև որ Պարսիկ մը արյունաթաթավ ոտքերուս տակ չը փռվի։

ԲԱԳԱՐԱՏ.— Չես կրնար զարնել, Զարմո՛ւհի։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ինչո՞ւ, հայր իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Դու չես տեսեր Պարսկի մը արյունռուշտ աչքը։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Եվ դու ալ չե՛ս կարդացեր, հայր իմ, կնոջ մը սիրտը և չես կրնար կարդալ. պիտի տեսնես, հայր իմ, թե ինչպես սուր պիտի շարժեմ։

Տեսիլ Բ

Նույնք, Գուրգեն, Բարգեն և Իշխանք

ԳՈՒՐԳԵՆ.— Ի՞նչ պիտի ընենք, իշխան։

ԲԱԳԱՐԱՏ.— Պետք է որ համաձայն մտածենք մեր ընելիքին վրա։

ԲԱԲԳԵՆ.— Անիի վիճակը շատ խղճալի է։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Պետք է դարման մը գտնել անոր։

ԳՈՒՐԳԵՆ.— Շատ ուշ մնաց դարմանը, որովհետև Պարսից ներկնապատկյալ զորությունը կը ծանրանա մեր վրա, անկարելի է դեմ դնել, վասնզի այսուհետև ալ Պարսից խորհուրդները մեզ իմացնող մը չըլլալե զատ՝ մեր պինվարներուն շատերը թշնամյաց կողմն անցած են։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ուրեմն պատերազմինք մինչև մեր վերջին շունչը, վասնզի եթե անձնատուր ըլլանք, դարձյալ Պարսից անխնա սրուն ճարակ պիտի ըլլանք... Այո՛, պետք է պատերազմիլ և մեռնիլ, բայց դյուցազնաբար։

ԲԱԲԳԵՆ.— Ո՞վ իշխանուհի, մեր դիմադրությունն արդյունք մը չունենալե զատ՝ Պարսից կատաղությունը պիտի գրգռե մեր վրա։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ուրեմն ուրիշ ի՞նչ միջոց կրնանք ունենալ։

ԳՈՒՐԳԵՆ.— Պետք է գտնե մեր կյանքն ազատելու հնարք մը գտնել... և մեր ժողովուրդը բոլորովին անտերունչ և անգլուխ չը թողուլ ապագային... Ի՞նչ կըսես, իշխան։

ԲԱԳԱՐԱՏ.— Կընդունիմ այդ գաղափարը... բայց հնա՞րքը։

ԳՈՒՐԳԵՆ.— Քաղաքին միջնաբերդը քաշվինք, ասկե ուրիշ ազատության միջոց չի կա մեզի համար։

ԲԱԲԳԵՆ.— Բայց ժողովո՞ւրդը... հուսահատ քաղաքացինե՞ր։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ո՞վ պիտի խրախուսե այն խեղճերը, որոնց սիրտն արդեն դառնությամբ լի է։

ԳՈՒՐԳԵՆ.— Եթե դեռ ժողովուրդը մտածենք, որուն կորուստն անհրաժեշտ է, մենք մեր ազատությունը պիտի կորսնցնենք... Ժողովուրդին ազատությունը մեր դյուցազնությանը կարոտ չէ, այլ պիտի խոնարհի նա անողորմ ճակատագրի մը առջև։

ԲԱԲԳԵՆ.— Ճշմարիտ է։

ԳՈՒՐԳԵՆ.— Բոլոր իշխաններն այսպես կուզեն։

ԲԱԳԱՐԱՏ.— Ի՞նչ ընենք, ա՛ղջիկս։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Դու գիտես, հա՛յր իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Միթե անխոհեմությո՞ւն մ'է մեր ըրածը։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Քանի որ բոլոր իշխաններուն կամքն այդ է, և եթե դու անոնց խորհրդոցը չը համաձայնիս, անմիաբան պիտի ըլլաս, ընդունե ուրեմն իրենց կարծիքը։

ԲԱԲԳԵՆ.— Իսկ դո՞ւ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ես ալ կընդունիմ, վասնզի մինակ կարող չեմ բան մը ընել, և մանավանդ դառն ճշմարտությունը կը տեսնեմ։

ԳՈՒՐԳԵՆ.— Ուրեմն համաձայնեցանք մեր կարծյաց մեջ։

ԲԱԲԳԵՆ.— Այս է մեր փրկության միակ միջոցը։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ա՜հ, երանի թե ասով կարենայինք ծառայություն մը ընել հայրենյաց։

ԳՈՒՐԳԵՆ.— Ապրի՛նք, որպեսզի հայրենյաց վրեժն առնենք։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ուրեմն երանի ձեզ, որ վրեժ առնելու համար կուզեք ապրիլ։
ԳՈՒՐԳԵՆ.— Կերդնում Անիի հազար ու մեկ եկեղեցիներուն վրա։
ԲԱԳԱՐԱՏ.— Իսկ դո՞ւք, իշխաններ։
ԱՄԵՆՔԸ.— Կերդնունք։
ԲԱԳԱՐԱՏ.— Ուրեմն սրբազան է մեր խորհուրդը։
ԳՈՒՐԳԵՆ.— Միջնաբե՞րդը, իշխա՜նք։
ԲԱԲԳԵՆ.— Երթա՜նք։
ԲԱԳԱՐԱՏ.— Օ՜ն, Զարմուհի։
ՋԱՐՄՈՒՀԻ.— Երթանք, հա՜յր իմ (կը մեկնին.— տեսարանը վայրկյան մը պարապ կը մնա)։

Տեսիլ Գ

Տ. Վահրամ և Պահնորդ մը

Տ. ՎԱՀՐԱՄ.— (պահնորդին) Իշխաններդ հոս հավաքվեր են խորհրդակցելու համար, ո՞ւր են։
ՊԱՀՆՈՐԴ.— Ամենքն ալ միջնաբերդը քաշվեցան, տեր հայր (կը մեկնի)։
Տ. ՎԱՀՐԱՄ.— (միանակ) Միջնաբերդը քաշվեր են, անտեղունց թողլով խեղճ ժողովուրդը, այդչափ իշխան ի՞նչպես միաբաներ են առանց երկպառակություն հանելու, վասնզի դյուցազնական գործի մը համար չեն միացած. թող չլսեն թե անմիաբան է Հայը, կը միաբանի՝ երբ գործը վատություն կը բուրե... Միջնաբերդը կը քաշվին առանց ժողովուրդը մոռնալու այն մեծ և հսկա իշխանները... վատերը... առանց հուսահատ քաղաքացիները խրախուսելու... Ա՜հ հարվածը միշտ ժողովուրդին գլխուն կիջնե. բայց ժողովուրդը դեռ հայր մը և զորապետ մը ունի, քահանայն... ինչվան հիմա աղոթեցի, արդ զորապետի մը պես դարձյալ կը քաջալերեմ ժողովուրդը (կը մեկնի.— Պատկերը կը փոխվի)։

ԳԱՏԿԵՐ Դ

Ալփասլանի բանակը.— Պարիսպ

Տեսիլ Դ

Ալփասլան և Ապրսամ

ԱՊՐՍԱՄ.— Վեհափա՜ռ թագավոր, Անի ա՜լ անկարող է այսուհետև քու ահեղ զորությանդ դիմադրել, վասնզի ես զրկեցի զինքը իր բոլոր քաջերեն։
ԱԼՓԱՍԼԱՆ.— Ուրեմն կրնանք անվտանգ հարձակիլ։
ԱՊՐՍԱՄ.— Այո՛, վեհափառ տեր, եթե Անի մինչև հիմա գոռոզ ճակատ մը կը բարձրացներ քեզի դեմ, պատճառն այն էր, որ քու բանակեդ իշխան մը քու բոլոր խորհուրդներդ գաղտագողի կը հաղորդեր քաղաքացվոց։
ԱԼՓԱՍԼԱՆ.— Ո՞վ է այդ վատը։
ԱՊՐՍԱՄ.— Աղկան իշխանը։
ԱԼՓԱՍԼԱՆ.— Աղկան... որ բոլորովին անհետացած է բանակեն։
ԱՊՐՍԱՄ.— Գուցե Հայոց կողմն անցած է։
ԱԼՓԱՍԼԱՆ.— Ա՜հ, այդպիսի դավադրություն մը կըլլա՜ր, և ես Անիցվոց նախատեսությունը և քաջագործությունները կը կարծեի. ես բոլորովին հուսահատած էի Անին առնելե. ա՜հ, եթե այն վատը Անիի մեջ կենդանի գտնեմ, չի՞ պիտի ջախջախեմ։
ԱՊՐՍԱՄ.— Ուրեմն ալ սփոփե հուսահատությունդ, վեհափառ տեր. առաջին հարձակման պիտի տեսնես, որ սրտոտ զինվորի մը գլուխը չը պիտի երևի Անիի պարսպացը վրա. գլուխս ազատեցի քեզ ապաստանելով, վեհափառ տե՛ր, օգնե՛ նաև որ վրեժս ալ առնեմ. Անիի բոլոր Հայերուն գլուխը քեզի, գլուխ մը կա՝ այն միայն ինծի թող... Տո՛ւր հրամանդ և հարձակինք փոթորկի նման։
ԱԼՓԱՍԼԱՆ.— Վա՜յ Անիի. այս վայրկենես նա իմ աշխարհակալ ձեռքիս մեջ ափ մը փոշի է իր հազար ու մեկ եկեղեցիներովը, պալատներովն ու շենքերովը. լսեցին անունս և չը դողացին, ուրեմն թո՛ղ տեսնեն վրեժս։
ԱՊՐՍԱՄ.— Սկսի՞նք հարձակումը, վեհափառ տե՛ր։
ԱԼՓԱՍԼԱՆ.— Այո՛, զորապետ, գնա՛ բոլոր բանակին մեջ հնչեցուր իմ հրամանս։
ԱՊՐՍԱՄ.— Կը հնազանդիմ, արքա (կը մեկնի)։

Տեսիլ Ե

Ալփասլան (առանձին)

Ահա վատ մ'ալ, որ իր հայրենիքը կը մատնե, մեկ անձի մը վրեժը բոլոր հայրենակիցներեն կառնե... Թշնամիներեն ավելի մատնիչները կործանեցին Հայաստանը... արդ ինք իր հարվածներով կիյնա. Հայաստան անձնասպան մ'է. ո՛չ ոք իր վրա կարգահատի, ո՛չ ոք կօգնե իրեն... Ա՜հ, եթե մեկ մը Անին ալ ճանկերուս մեջ առնեմ, ավելի մեծափարթամ և գորավոր պիտի ըլլամ... և այն մատնչին գերեզման մը պիտի տամ Անիի ավերակաց մեջ...

Տեսիլ Զ

Ալփասլան, Ապրսամ և Զորք պարսից

ԱՊՐՍԱՄ.— *Բոլոր բանակը պատրաստ է քու հրամանդ կատարելու։*

ԱԼՓԱՍԼԱՆ.— *Զորապե՛տ, դու անգամ մը քու զորքերովդ Անիի պարսպին վրա հարձակելու փորձ մը ըրե, և տեսնենք թե Անիցիք դիմադրելու ջանք պիտի ընե՞ն դարձյալ* (սույն միջոցին Անիեն ողբոց և լալագին աղաղակաց աղմուկ մը կը լսվի) *ի՞նչ է այս։*

ԱՊՐՍԱՄ.— *Կը լսե՞ս, վեհափառ թագավոր, Անիի մեջ հուսահատությունը տիրեր է։*

ԱԼՓԱՍԼԱՆ.— *Ուրեմն հարձակինք* (վարագույրը կիջնե):

<(ՎԵՐՋ Դ ԱՐԱՐՎԱԾԻՆ)>

ԱՐԱՐՎԱԾ Ե

Տեսարանն է ավերակ վայր մը.— Ասդին անդին փռված դիակներ, որոնք կը հևան և կը գալարին.— Ջենքեր ցիրուցան։

Տեսիլ Ա

Կույր Ծերունին (մանկիկ մը գրկած)

Ա՜հ, ո՞ւր փախչիմ, ամեն կողմեն Պարսկաց մռնչյուններ կը լսվին, որոնք Հայու արյամբ հագենալ կուզեն... Կորսնցուցի որդիս, հարսս, մեռա՞ն, ո՞ղջ են, չը գիտեմ, մինակ թոռամնաց ինձ, զոր կուզեմ զինուց շառաչյուններուն մեջեն փախցընել... Կույրին մնացեր է խեղճ թոռն ազատել, մինչդեռ հսկաներու ձեռքեն զենքերը կը հափշտակվին. չեմ գիտեր թե այս ճամբան ո՞ւր կը տանի զիս, գուցե Պարսկաց ոտքը... Ես ինքնին կերթամ ըսելու «խեղդեցեք զիս և այս մանկիկն ալ գետինը զարկեք». Աստվա՜ծ իմ, Աստվա՜ծ իմ, պիտի մատնեն զիս բնության այս մարած կանթեղները... (վիրավորյալ մը շնչասպառ ծերունիին քով կիյնա սարսափած) *Գթություն, գթություն։*

Տեսիլ Բ

Նույնք և Վիրավորյալ մը

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— (ինկած տեղը գալարելով) *Ջավա՜կս...*

ԾԵՐՈՒՆԻՆ.— (զարմացած) *Այս ձայնը... թշնամվո մը ձայնին չը նմանիր, սիրելվո մը ձայնն է այս* (դառնալով, բարձր) *ո՞վ ես դու։*

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— (գլուխը վեր առնելով և ծերունին դիտելով) *Հա՜յր իմ...*

ԾԵՐՈՒՆԻՆ.— *Ա՜հ, որդիս է կարծեմ... Բակո՛ւր...*

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— *Ես եմ։*

ԾԵՐՈՒՆԻՆ.— *Ո՞ւր ես։*

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— *Ձայնիս մոտեցի՛ր։*

ԾԵՐՈՒՆԻՆ.— *Վիրավորյա՞լ ես։*

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— *Այո՛։*

ԾԵՐՈՒՆԻՆ.— *Ջավա՜կս...* (մոտենալով):

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— *Ի՞նչ է այդ գրկածդ։*

ԾԵՐՈՒՆԻՆ.— *Ջավակդ է։*

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— *Բարի՜կս։*

ԾԵՐՈՒՆԻՆ.— *Այո՛։*

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— *Տուր ինձ, որպեսզի խոցյալ սրտիս վրա գրկեմ անգամ մը, հայր իմ* (կառնե):

ԾԵՐՈՒՆԻՆ.— *Արդյոք ծա՞նր է վերքդ, Բակուր։*

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— *Մահացու է, հայր իմ, սրտիս վրա։*

ՇԵՐՈՒՆԻՆ.— Աստվա՜ծ իմ։

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Բայց դեռ կրնամ քանի մը վայրկյան ապրիլ, քանի որ Բաբիկս գիրկս է... իսկ Աշխենս ի՞նչ եղավ, հայր իմ. ո՞ւր է ինքը, իմ սիրելի ամուսինս։

ՇԵՐՈՒՆԻՆ.— Չեմ գիտեր. ես այս մանկիկին հետ եկեղեցին էի և կաղոթեի, երբ իմացա, որ Պարսիկները Անիի վրա կը հարձակին... դարձա տուն՝ ձեզ գտնելու... և երբ հոն հասա՝ թաղն ավերակ և ամայի գտա... Ձայն մ'անգամ չը լսեցի. չը տեսա մեկը, որուն հարցում մ'ընեի... միշտ վիրավորյալներու հանդիպեցա, որոնք կը հեծեծեին և պապակած՝ «ջուր» կաղաղակեին։

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Ուրեմն անգութ Պարսից սրուն ճարակ եղավ նազելի Աշխենս, առանց անգամ մ'իր մանկիկը սրտին վրա սեղմելու. բայց լավ է որ գերի չըլլա և մեռնի։

ՇԵՐՈՒՆԻՆ.— Ա՜հ, այսպե՞ս պիտի տեսնեինք մեր գոռոզ Անին, իր հազար ու մեկ օծյալ գլուխներն այսպե՞ս պիտի փշրեին. հոյակապ պալատներն ու փառավոր շենքերն առհասարակ թաղվեցան արյան հեղեղներու մեջ... Չը բացվի՞ն աչքերս և չը տեսնեմ իր ողորմելի ավերակները։

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Ա՜հ, հայր իմ, կզգամ որ պիտի մեռնիմ. ազատե գոնե զավակս և իմ տեղս վրեժխնդրություն սորվեցո՛ւր իրեն, միշտ պտտցո՛ւր զինքն ավերակաց մեջ, և անոնց ամեն մեկ բեկորին սոսկալի պատմությունն ըրե իրեն... Եթե Աշխենս ալ գտնես, իմ վերջին մնաս բարովս հաղորդե իրեն, թող աղեկ խնամե մեր զավակը... Իր սիրտը պարսկական ատելությամբ վառե՛... Քաղաքին պարիսպներուն մոտ ենք, հայր իմ, ազատե՛ զավակս... փախի՛ր...

ՇԵՐՈՒՆԻՆ.— Իսկ դո՞ւ, Բակուր...

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Ես հիմա պիտի մեռնիմ, հայր իմ։

ՇԵՐՈՒՆԻՆ.— Ա՜հ, ինչպե՞ս զքեզ վիրավոր թողում միենակ։

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Չիս մի՛ մտածեր, հանգիստ եմ, հայրենյաց համար կը մեռնիմ... երջանիկ եմ։

ՇԵՐՈՒՆԻՆ.— Զավա՜կս։

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Փախիր, հայր, հիմա Պարսիկները կը հասնին։

ՇԵՐՈՒՆԻՆ.— Մնաս բարյա՜վ։

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Երթաս բարյավ, հա՜յր իմ (ետևեն նայելով և պոռալով), փախի՛ր, հայր իմ, ետևեդ խումբ մը կատաղի

Պարսիկ կուգան... Ա՜հա, հասան. հորս քով... Բաբիկս ձեռքեն կը հափշտակեն... օդին մեջ հանեցին... գետին պիտի զարնեն... կեցե՛ք... ա՜հ (ճիչ մը կարձակե և կը մեռնի)։

Տեսիլ Գ

Տեր Վահրամ.— (հետը կիներ, ծերեր, քահանաներ և ուրիշ զինյալ մարդիկ)

Ա՜հ, ամեն տեղ ավերակը ծածկեր է, ամեն տեղ Հայու արյուն կը քալե... Աստուծո փոթորկալից շունչը անցավ Անիի վրայեն, ինչպես անցավ Բաբիլոնի, Նինվեի և ուրիշ գոռոզ քաղաքաց վրայեն։ Անի՝ Հայաստանի քաղաքաց թագուհին, որուն խրոխտ պարսպացը տակ աշխարհակալ թշնամյաց սրտեր արյունեցան, ի գետին կը խոնարհե իր մոխրալից գլուխը, որպեսզի անարգ Պարսիկն անցնի անոր վրայեն, կոխկըռտելով Հայության դրոշմը. ա՜հ, այսչա՜փ պիտի խոնարհի եղեր Հայաստան... այսչափ սև՜ է եղեր Հայության ճակատագիրը... այսչափ անտերունչ պիտի մնա եղեր Հայաստան... (իրենները ցուցնելով) ահա քահանաներ, որ սուր շարժել գիտեն, ահա կիներ, որ պատերազմիլ կուզեն... ահա ծերեր, որ զարնել կուզեն... դո՜ւք, Հայության մնացորդներ, դո՜ւք կովեցեք հայրենյաց փառացը համար, մինչդեռ իշխանները միջնաբերդը կապաստանին... ձեր զավակներուն, եղբայրներուն, հայրերուն, մայրերուն և ամուսիններուն համար կովեցե՛ք... զինվոր չիկա՝ զինվոր եղի՛ք. Հայ չիկա՝ Հայ եղի՛ք... հրամանատար չունինք՝ ահա ես զորապետ. ձեր ճակտին վսեմ պայծառությունը բավական է թշնամին դողացնելու։

Տեսիլ Դ

Նույնք և Ապրսամ

ԱՊՐՍԱՄ.— (առանց զանոնք տեսնելու) Դեռ չը կրցի գտնել զինքը։ միջնաբերդն է եղեր։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Զո՞վ։

ԱԳՐՍԱՄ.— (մեկուսի) Տեր Վահրա՞մ։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Դեռ զո՞վ կը խնդրես քու գժոխային սրտիդ զոհ, վատ արանց, դեռ չը կշտացա՞ր եղբարցդ արյամբը, որոնք քու սրբազան հայրենյացդ ավերակները ողողեցին... Ջորս կողմդ նայե, չե՞ս սոսկար... Ջե՞ն քստմնիր մազերդ այս ողորմելի տեսարանները դիտելով. միթե քու մարմարյա կուրծքիդ տակ փոխանակ սրտի՝ դժո՞խք կը վառի... Ջե՞ս լսեր եղբարցդ աղիողորմ աղաղակները, տո՛ւր ասոնց իրենց ամուսինները, զավակները, եղբայրները, հայրերը, մայրերն ու հայրենիքը, և ապա դեռ զարկ։

ԱՄԵՆՔԸ.— Տո՛ւր մեզ։

ԱԳՐՍԱՄ.— Պարսկեն ուզեցեք։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Դուն տվիր Պարսկին, անօրե՛ն, դու քու հայրենյացդ դռներն անոր բացիր, քու սրտիդ դժոխային բոցերուն մատնեցիր հայրենիքդ... Հավիտյան անեծք պիտի լսես այն դարերուն, որոնք Անիի ավերակացը վրայեն պիտի անցնին լալով... Արյուն քալե սրտեդ՝ Հայաստանի ավերակացը պես. անիծյալ ըլլաս Հայության ճակատագրին պես։

ԱՄԵՆՔԸ.— (սուրերին բարձրացնելով) Մա՛հ մատնչին։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Կեցե՛ք, այն՝ որ զարնել կուզեք, Հայ անունը կը կրե. դուք մի՛ զարնեք, վասնզի ձեր սուրերեն ավելի ահեղ և արդար՝ Աստուծո ձեռքը կա անոր վրա, դուք մի՛ ըլլաք իր դահիճը, թող իր խիղճը ըլլա իր դահիճը, թողե՛ք զինքը, մի՛ պղծեք իր արյամբը ձեր անբիծ սուրերը...

ԱՄԵՆՔԸ.— Տուր մեզ մեր հայրենիքը։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Երկնքեն խնդրեցեք և ոչ թե այս վատեն, որ միայն մատնել գիտե... Թողեք զինքը։

ԱԳՐՍԱՄ.— Ա՛լ բավական է։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Գնա՛, վա՛տ, և թող գունդագունդ անեծքներ քեզ հալածեն... կորի՛ր...

ԱԳՐՍԱՄ.— (մեկուսի) Միջնաբե՛րդը... (կը մեկնի. ճանկարձ ավերակ մը փլչելու աղմուկը կը լսվի դրսեն)։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Տեսե՛ք, իր գործած ավերակն իր վրա փլավ և թաղեց զինքը։

Տեսիլ Ե

Տ. Վահրամ (իրենեներով), Ալփասլան (զորքով)

ԱԼՓԱՍԼԱՆ.— Ո՞վ են այս քահանաները, ծերերը և կիները, որոնք սուր կը կրեն և իմ արյունաբույր շուքես չեն փախչիր... Ո՞վ են ասոնք։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Քու թշնամիներդ։

ԱԼՓԱՍԼԱՆ.— Իմ թշնամինե՞րս... Իմ թշնամիներս հսկաներ կրնան ըլլալ... ձգեցեք սուրերնիդ և խոնարհեցուցե՛ք գլուխնիդ Պարսկական լուծին, եթե չեք ուզեր մեռնիլ։

ԱՄԵՆՔԸ.— Ո՛չ երբեք։

ԱԼՓԱՍԼԱՆ.— Ի՞նչ կը խնդրեք, ուրեմն։

ԱՄԵՆՔԸ.— Ազատությո՛ւն հայրենյաց։

ԱԼՓԱՍԼԱՆ.— Ի՞նչ իրավամբ ինձնե կը խնդրեք այն ազատությունը, զոր դուք ծախեցիք ինծի. քանի՞ տեսակ Հայ կա, մեկը կուտա, մյուսը ետ կուզե. թշվառնե՛ր, մոռցեք այսուհետև հայրենիք, ազատություն և իրավունք, վասնզի Պարսկին օղակն անցավ ձեր վիզը. քանի որ Հայը չը կրցավ տեր ըլլալ, պետք է որ գերի ըլլա։

(Հայերը գլխիկոր ետ կը դառնան.— Վարագույրը կիջնե)։

<(ՎԵՐՋ Ե ԱՐԱՐՎԱԾԻՆ)>

ՎԵՐՋԱԲԱՆ

Տեսարան է գիշեր.— Լուսին.— Ավերակ վայր մը, խորը հրդեհ։

ՄՈՒՍԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ (շղթայակապ)

Մայր մ'ունեի ես միայն,
Այն ալ գնաց գիրկ մահվան,
Անմխիթար թողուց զիս՝
Գերեզմանաց պահապան։

Հայրենիք մը ունեի
Ցեղ Աստուծո սիրելի,
Այն ալ իր ճոխ յուրքերեն
Ձգեց ինձ սև շղթա մի։

Ես որ չառի ձեռքս սուր,
Ինչո՞ւ կրեմ այս անուր,
Պարսի՛կ, քակե՛ այս շղթայն,
Զիս մորքս հետ հողին տո՛ւր։

Ամեն դիեն սև խուժան
Կը կոխոտե Հայաստան,
Հայք կը հևան վիրավոր,
Պալատ և հյուղ կը մրխան։

Չը կա հուժկու Հայ զինվոր,
Զի կոտրեցավ սուրն անոր,
Զիք աղոթող քահանա,
Եվ չիք տաճար փառավոր։

Սուգ է պատեր ամեն վայր
Աստղերն անգամ չեն իսկ վառ,
Այն Հայաստանն ա՛լ չըկա
Այլ գերեզմանք ու խավար։

Շղթա կապած իմ վրդին,
Գերի վարեն ցավագին,
Կուզեն պաշտել տալ ինձի
Օտար մարդ, հող ու երկին։

Ավերակներն ես կուզեմ
Հայաստանիս տխրացեմ,
Որ հոն լամ իմս հայրենիք,
Մինչ ողջունեմ մահվան սեմ։

Ո՜հ, անոնք սև թող ըլլան,
Ես կը սիրեմ հավիտյան,
Զի երբ իմ մայրըս մեռավ,
Ըսավ. «Սիրե՛ զՀայաստան»։

Պիտի սիրեմ զանի ես՝
Ցհետին շունչ իմ սրտես,
Մինչ որ ժպտի Հայաստան՝
Հանդեպ շիրմիս բոցակեզ։

Թող Հայք ուսնին միաբան
Ինձ պես սիրել Հայաստան,
Ցետ իմ աչաց ցողեն ցող,
Երբ զայն ավեր կը տեսնեն։

Թ'և է անկյալ Հայաստան,
Պիտի կանգնի հուսկ յապայն,
Երբ որ հայեր միասիրտ
Գոչեն «Կեցցե Հայաստան»։

ՎԵՐՋ

ԹԱՏՐՈՆ ԿԱՄ ԹՇՎԱՌՆԵՐ

ժամանակակից թատերախաղ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՍ ԵՎ ՅԵՐԻՍ ՊԱՏԿԵՐՍ

3 Հունվար, 1871

ՀԱՌԱՋԱԲԱՆ

Մեկ քանի տարիե ի վեր հղացած երկոցս մեջ սույն ժամանակակից թատերախաղն անա կը համարձակիմ ի լույս ընծայել, իբր առաջին պտուղ իմ ճգանց, զոր կուզեմ նվիրել ազգիս: Սույն հրատարակումն ինձ համար նոր է. ուստի դողդողալով կիջնեմ յ'ասպարեզ առաջնորդող աստիճանները՝ ներողամիտ ժպտումներ ակընկալելով: Արդարև թատերագրությունը դժվարին արհեստ մ'ըլլալը ամեն ոք կը խոստովանի, ես ալ արդեն խիստ բարձր գտած եմ զայն իմ փանաքի կարողության և մանավանդ հասակին քով. սակայն զայս ալ պետք է խոստովանիմ, թե դժվարին գործ մը առանց հանդուգն ձեռաց օժանդակության, չը կրնար դյուրավ կատարիլ, և թե երկ մը բանաստեղծության բովեն չանցած՝ չը կրնար զտվիլ:

Թատերախաղիս նյութը թեպետև նշմարիտ դեպքեր կը պարունակե, սակայն այսու ամենայնիվ, ինչպես որ հեղինակ մը կ'ստիպվի ընել, պահանջված հավելադրությունք չեն զլացված:

Զայս երկասիրելով, իմ մասնավոր դիտումն է իմ անհշանությամբ օրինակ ըլլալ ուրիշ թատերագրաց, որ ավելի արդի ընտանեկան անցքերը պարունակող բարոյալից թատերախաղեր հորինելու աշխատին, որով ավելի օգուտ կրնան ընծայել Հայ հասարակության, քան թե ազգային հին դյուցազնությունքը ողբերգությանց վերածելով, որք միշտ միակերպութենե վրիպած չեն, վասնզի նյութոց հարուստ աղբյուրներ չունին և հետևաբար ունկնդիր թատերասերներու տաղտկալի կրնան ըլլալ իրենց միակերպ և անընդհատ ներկայացումներովը:

Որչափ որ կարելի է, սույն թատերախաղիս լեզուն թատերական կամ պարզ ըրի:

Իմ այս թատերախաղը տեսարանի վրա հանդիսացնելե առաջ տպագրության տալուս վրա գուցե զարմանան ոմանք, սակայն այս մասին այնպիսի պատճառներ կան, զորս լուսաբանելու համար հատուկ ժամանակի կսպասեմ:

Իրավ է որ սույն թատերախաղը Վիքթոր Հյուկոյի ԷՌՆԱՆԻ թատերահանդեսին պես չի պիտի հեղափոխե հասարակության զաղափարքն ու զգացմունքը, սակայն և այնպես սոսա և փոշիները թոթվելով գրադարակեն դուրս հանելով թերևս դույզն ծառայություն մ'ըրած համարիմ:

Անհերկբա եմ, որ փուշեր չի պիտի պսակեն սույն հանդուգն և միանգամայն դողդոջ քայլափոխս, և այն սկսամա թերությանց նկատմամբ, որք հարկավ սպրդած են երկասիրությանս մեջ՝ ներողամտություն և հետևաբար քաջալերություն գտնելով, պիտի փութամ հուսալից նորանոր քերթությանց ձեռնարկել և այս գրական արհեստը քիչ շատ կատարելագործելու աշխատիլ:

ՀԵՂԻՆԱԿՆ

ԱՆՁԻՆՔ

ՄՈՒՐԱՏՈՖ, սնանկացյալ վաճառական, Թովմա անվանյալ
ՎԱՐԴՈՒՀԻ, դուստր } Մուրատոֆի
ԵԴՈՒԱՐԴ, որդեգիր }
ԴԵՈՐԳ, դրամանենգ, Նահապետոֆ անվանյալ
ՄԱԿԱՐ, սպասող, մատակարար՝ Նահապետոֆի
ՊՈՂՅԱՆՑ, տնօրեն թատրոնի
ՎԱՀԱԳՆՅԱՆ, դերասանապետ
ՃԻՈՐՃԻ
ՍԱԼՈՄՈՆ
ՁԻՁԻԼ, դերասանուհի
Ա. ԴԵՐԱՍԱՆ
Բ. ԴԵՐԱՍԱՆ
Ա. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ
Բ. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ
ԹԱՏՐՈՆԻ սպասավոր մը

Դերասանք, դերասանուհիք, ուսանողներ, ժողովուրդ.

ԱՐԱՐՎԱԾ Ա

Թովմայի տնակն.— Վարագույրը բացված ժամանակ Եդուարդ հողե կանթեղով լուսավորված գրասեղանի մը վրա գրելու զբաղած է.— Գրքեր և թուղթեր ցիրուցան.— Մութը կոխած է.— Փոթորիկ.— Մերթ ընդ մերթ փայլակը կը լուսավորե սենյակը։

Տեսիլ Ա

ԵԴՈՒԱՐԴ.— (առանձին գրելու զբաղած՝ ճանկարձ պատուհանը կը բացվի, զոր զոցելու կերթա) *Ի՜նչ սարսափելի քամի... փոթորիկ եղած ժամանակ հազիվ հաղ այս տնակին մեջ եղած խոսակցությունները կը լսվին... մարդուս գլուխը և երևակայությունը կը շփոթե... կարծես թե դուրսը բանակներ զիրար կը զարնեն... Այս աղմուկին մեջ դժվար է երևակայությունն ամփոփել և հանդարտ գրել կամ բան մը հասկնալու չափ կարդալ...* (նորեն գրասեղանին քով կը նստի և գրիչը թուղթի մը վրա բռնած կը մտածե): *Պատուհանին ուժգնակի բացվելեն և հանած աղմուկեն երևակայություններս ցնդեցան... միտքս բան մը չ՚գար...* (գրիչը վար կը դնե): *Վերջապես չի պիտի կարենամ սա տեսարանը ուզածիս պես լավ գրել. աղքատ երիտասարդի մը՝ հարուստ տիկնոջ մը սիրահարելով, սերը անոր հայտնելն է... գրածս է թատերգություն մը...* (ոտքի կելնե) *երբ Ռուսիո մեջ վարժարանեն ելնելես վերջը անգամ մը հորս հետ թատրոն գացի, շատ ախորժեցա անկե. սեր մը տվի անոր և միշտ կերթայի, շատ անգամ ալ մինակ...* (տխրությամբ), *բայց երբ Մուրատոֆ Թովմա եղավ և դղյակնիս՝ տնակ... անկե ի վեր է որ թատերական երևակայությանց մեջ ընկղմած՝ թատրերգություն գրելու կզբաղիմ... առաջին անգամն է որ սիրահարական թատրերգություն մը ահա կը գրեմ... դեռ չը կրցի ավարտել, գրածս միշտ հետզհետե կը սրբագրեմ, մաքուրը կառնեմ և դարձյալ կը սրբագրեմ, և դեռ գրածես գոհ*

չեմ... բայց երբ Վարդուհիին կը կարդամ, շատ կախորժի, կը հավնի, կզմայլի, զիս փոքրիկ բանաստեղծ կը կոչե. Վա՛րդուհի, (կը ցնցվի, մտազբաղ կարձանանա, ետոո ետառաշով մը կուգե մտքինը փարատել): *Բայց տեսնեմ սա տեսարանը կրնամ ավարտել...* (գրասեղանին քով կը նստի և գրիչը ձեռքը կառնե):

Տեսիլ Բ

Նույն և Վարդուհի

ՎԱՐԴՈՒՀԻ.— (կը մոտենա առոր. մինչդեռ նա մտազբաղ՝ տեսարակին վրա հառած է. մեկուսի) *Միշտ կը գրե։*

ԵԴՈՒԱՐԴ.— (գրելու ատեն արտաբերելով) *Կը սիրեմ...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— (ընդմիջելով) *Զո՞վ...*

ԵԴՈՒԱՐԴ.— (շփոթած ոտքի ելնելով) *Քույր իմ...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Կարծեմ գրությանդ արգելք եղա։*

ԵԴՈՒԱՐԴ.— *Ընդհակառակն, ժամ մ՚է որ կը մտածեի և չէի կրնար գրել... Բայց դու քիչ մը առաջ հոս մոտեցած էիր, այնպես չէ՞։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Այո՛։*

ԵԴՈՒԱՐԴ.— *Ուրեմն քու ներկայությունդ և շնչառությունդ է եղեր, որ գոնե այս բառը գրելու խանդը ներշնչեց ինձ։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Երկու ամիս առաջ սկսած թատերգությո՞ւնդ է գրածդ։*

ԵԴՈՒԱՐԴ.— *Այո՛... դեռ չը կրցի ավարտել։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Կը տեսնեմ որ առանձին գրելե շատ կախորժիս... ուրեմն եթե ես մեկնիմ՝ գեշ չըլլար...* (կուգե ետառնալ):

ԵԴՈՒԱՐԴ.— (ետառնալով) *Քո՛ւյր իմ...* (ձեռքեն բռնելով) *քու ներկայությունդ պակսած վայրկյաններուն է որ գրելով զբաղիլ կուզեմ, և այն տեսության վայրկյաններուն մեջ ի՞նչ որ ներշնչես ինձ՝ գրի առնել կը փութամ։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— (ժպտելով) *Ի՞նչ ըսել կուզես։*

ԵԴՈՒԱՐԴ.— *Նստե քիչ մ՚ալ խոսակցինք։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— (արթոն մ՚առնելով և քովը նստելով) *Խոսակցինք, եղբայր իմ...*

ԵԴՈՒԱՐԴ.— *Ահա այդպես...* (ճիարցմամբ առոր երեսը կը նայի):

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Բայց ինչո՞ւ այդպես երեսս կը նայիս։*

ԵԴՈՒԱՐԴ.— (ձեռքը սեղմելով) *Քույր իմ... ո՛րչափ գեղեցիկ ես։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Զիս կը ծաղրես։*

ԵԴՈՒԱՐԴ.— (ետառնալով) *Կը ծաղրե՞ս։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Չեմ գիտեր... երեք չորս ամիս է որ հայելին նայած չունիմ... Արդարև երբ Ռուսիո մեջ էինք... կը հասկնա՞ս... այն ատեն ինքզինքս փոքր ինչ վայելուչ կը կարծեի։*

ԵԴՈՒԱՐԴ.— *Կը հասկնամ, քույր իմ... Արդարև հոս հայելի չըլլալե զատ մեր հյուղին պատուհանի ապակիներն անգամ փոշոտ ու անթափանց են... Ատոր վրա չը մտածենք... Շարժող տերևին անգամ Ամենակալին շունչը կը դպի կըսեն... Բայց փոխենք խոսակցությունները... Ի՞նչ կըսեի հիմա... այո՛, կըսեի թե շատ գեղեցիկ ես...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Զիս կը նեղացունես, Եդուարդ։*

ԵԴՈՒԱՐԴ.— *Բայց, քույր իմ, մտիկ ըրե... քու գեղեցկությանդ բնական և ճշգրիտ ապացույց մը պիտի տամ, թող հայելին խաբե քեզ... Դու գեղեցիկ ըլլալով՝ քեզ պատող ճառագայթ մը չե՞ս զգար։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Զայդ կզգա, բայց ուրիշ մը... սիրահար է այն։*

ԵԴՈՒԱՐԴ.— *Ո՛չ... սիրահարը պատողը ո՛չ թե ճառագայթ է, այլ բոց... Կը հասկնա՞ս։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Արդարև շատ գիտուն ես։*

ԵԴՈՒԱՐԴ.— *Այդ հասկցունել չեմ ուզեր։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Ուրեմն ի՞նչ է միտքդ։*

ԵԴՈՒԱՐԴ.— (զմայլումը շարունակելով) *Որչափ ինքզինքս երջանիկ պիտի համարեի, եթե Ռաֆայել մը ըլլայի և քու պատկերդ գծագրեի։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Եղբայր իմ, կը տեսնեմ որ շատ ագահ ես... Լամարթինի քնարն ունիս և դեռ կուզես Ռաֆայելի վրձինն ալ ունենալ* (ժպտելով), *կըսեմ թե շատ ագահ ես, փոքրիկ բանաստեղծս։*

ԵԴՈՒԱՐԴ.— *Զիս կը ծաղրես, քույր իմ։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Քիչ մը առաջ դու ալ զիս կը ծաղրեիր։*

ԵԴՈՒԱՐԴ.— (տրտմած) *Այսպե՞ս կը փոխանակես։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— (գիրկը նետվելով) *Տխրեցա՞ր, Եդուարդս... Ուրեմն կընդունիմ քու գաղափարդ, այլ լոկ քեզի համար գեղեցիկ ըլլալու պայմանավ։*

ԵԴՈՒԱՐԴ.— Բայց...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Եվ դու ալ բանաստեղծ մ'ըլլալդ կընդունի՞ս։
ԵԴՈՒԱՐԴ.— Այո՛, լոկ քեզ երգելու նվիրված ըլլալու պայմանավ։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Թող այնպես ըլլա... ուրեմն հաշտվեցանք, սիրելի Եդուարդս։
ԵԴՈՒԱՐԴ.— Այո՛, քույր իմ, ո՜հ, շատ գեղեցիկ ես... Վարդուհի։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Ետքը՞։
ԵԴՈՒԱՐԴ.— Պահապան հրեշտակս ես։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Վերջապե՞ս։
ԵԴՈՒԱՐԴ.— Կը սիրեմ զքեզ Վարդուհի։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Գիտեմ... քրոջդ պես։
ԵԴՈՒԱՐԴ.— (կաղմրելով և տխրությամբ) Գուցե՛։
ՎԱՐԴՈՒՀԻ.— (ապշած) Գուցե՛։ (լռություն) Ուրեմն դու միտք մը ունիս... լուռ կը կենաս... կը ծածկես դեմքդ. դու ինձնե բաժնըվիլ կուզես՝ թողլով այս տնակը, զայն պարածածկող թշվառութենեն ազատելու համար... գուցե...
ԵԴՈՒԱՐԴ.— (եռանդով) Վարդուհի՛, չես հասկցեր միտքս։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Ուրեմն ի՞նչ կուզես որ հասկնամ, եղբայր իմ։
ԵԴՈՒԱՐԴ.— Կաղաչեմ, զիս եղբայրդ մի՛ կոչեր։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Տե՛ր Աստված... բայց ահա կապացուցանես իմ ենթադրություններս... զքեզ եղբայր չը կոչե՞մ... Միթե մանկութենե ի վեր քեզի հետ մեծցած ու ապրած չե՞նք, երբ դու որբ մ'ըլլալով հայրս զքեզ որդեգրեր էր... Միթե եղբոր պես միշտ զիրար սիրած չե՞նք. Աստվա՜ծ իմ... հիմա միտքս կարթնա, այնչափ միամիտ եմ եղեր որ ժամանակ մը ի վեր զիս տեսած ատենդ բնավ չէի կասկածեր՝ հանկարծ զգացած թեթև սարսուռներեդ և շփոթություններեդ...
ԵԴՈՒԱՐԴ.— (եռանդով) Ուրեմն ճշմարի՞տ ես։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Բնավ չէի գուշակեր որ օր մը պիտի փոխվիս և... (կը փղձկի)։
ԵԴՈՒԱՐԴ.— Կուլա՜ս, Վարդուհի։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Անգո՛ւթ, միթե լալու իրավունք չունի՞մ, երբ կը զատվիս ինձնե...
ԵԴՈՒԱՐԴ.— Վարդուհի, չես հասկնար միտքս։
ՎԱՐԴՈՒՀԻ.— (արտասուքը սրբելով) Բայց ո՜չ, իրավունք չունիմ քեզ բռնադատելու, անշուշտ անհնարին ցավ կդգաս Մուրատոֆի ապարանեն Թովմայի անշուք տնակը փոխադրվելով, ուր քաղցը և ցուրտը կը տիրապետեն... Գիտեմ, շատ անգամ գրած ատենդ մատներդ կը մսին և կրնդարմանան... շատ անգամ ալ կանթեղին յուղը հատնելով կը մարի և աշխատութենեդ կը զրկվիս, որ քեզի համար շատ կարևոր և թանկագին է... Գիտեմ, Եդուարդ, ասոնք սաստիկ ցավ կը պատճառեն քեզ...
ԵԴՈՒԱՐԴ.— (արտասվալից) Վա՜րդուհի։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Գիտեմ, Եդուարդ, կը սիրես զիս, բայց այդ ցավերն ալ կրել՝ քեզ համար դառն և անհնարին է։
ԵԴՈՒԱՐԴ.— Իսկ դո՞ւ, քաղցր և հեք արարած։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Զիս մի մտածեր... ես կը համբերեմ...
ԵԴՈՒԱՐԴ.— Անհնար է որ ես բաժնվիմ քեզնե, Վարդուհի, բայց...
ՎԱՐԴՈՒՀԻ.— (ընդմիջելով) Քաշածնե՜րդ...
ԵԴՈՒԱՐԴ.— Մտիկ ըրե, Վա՜րդուհի...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Հիմա կը հասկընամ ստեպ ինձ «գեղեցիկ ես» ըսելուդ իմաստը. ըսել կուզեիր՝ թե գեղեցիկ ես, բայց աղքատ... անոր համար...
ԵԴՈՒԱՐԴ.— Վա՜րդուհի...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Տե՛ս, առաջ քույր կը կոչեիր զիս և հիմա ստեպ անունս կուտաս։
ԵԴՈՒԱՐԴ.— Հրե՜շտակս... (ձեռքը աչքերուն կը տանի և արցունքով կը թանա)։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Շիտակ խոսե, Եդուարդ, ե՞րբ պիտի երթաս։
ԵԴՈՒԱՐԴ.— Ո՞ւր։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Ուր որ մտքդդրած ես։
ԵԴՈՒԱՐԴ.— Ա՜հ, իմ հոգիս... մթթե քեզնե բաժնվելե վերջը գերեզմանեն ուրիշ տեղ մ'ունի՞մ։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Գերեզմա՜ն։
ԵԴՈՒԱՐԴ.— Սոսկացի՜ր։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Շա՜տ մութ կը խոսիս, Եդուարդ։
ԵԴՈՒԱՐԴ.— Լավ... Վարդուհի, Լամարթինի սիրավեպ «Ռաֆայել»-ը կարդացեր ես, այնպես չէ՞։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Այո՜...
ԵԴՈՒԱՐԴ.— Անշուշտ ինքզինքդ Հուլիայի տեղ երևակայեցիր։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Այո՜... վասնզի սրտիս համապատկերը կը տեսնեիր։
ԵԴՈՒԱՐԴ.— Եվ Ռաֆայելի տեղ զո՞վ երևակայեցիր։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Նույնինկ Ռաֆայելը, համանման Ռաֆայել մը։

ԵԴՈՒԱՐԴ.— (աչերը խոնարհելով) *Հիրավի՞, ես Ռաֆայելի չափ գեղեցիկ չեմ։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— (շփոթած) *Դո՜։*

ԵԴՈՒԱՐԴ.— (աճոռ ձեռքը սրտին տանելով և իր սիրաբորբոք նայվածքը աճոռ աչացը մեջ հառելով) *Վարդուհի՞...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— (հանկարծ ցնցվելով և փղձկելով) *Եդուա՜րդ...* (գիրկը կիյնա, լռություն)։

ԵԴՈՒԱՐԴ.— *Վարդո՛ւհի, բնությունը շատ զորավոր է... Առաջները քեզ քրոջ մը պես անտարբեր կը սիրեի, մինչև անգամ գեղեցկությունդ չէի նշմարած... ետքը սրտիս մեջ վառած խունկ մը ծխեցավ... սիրտս լեցավ զեղվելու չափ, աչերս հեշտ արցունքներ սկսեցին ցայտել... անհանգիստ էի... սրտիս վրա բեռ մը կար, քեզ տեսնելուս կը շփոթեի, կը կարմրեի, սիրտս կը բաբախեր... զգացի որ կը սիրեի... զգացի որ եթե այս հեշտ հուրը սրտիս ծալքերուն մեջ թաղեի, մոխիր պիտի դառնայի, շունչս պիտի հատներ, պիտի նվաղեի... ա՜հ, կը սիրեի... կզգայի որ դու ա՛լ իմ քույրս չէիր, այլ ավելի գերբնական էակ մը... եթե հրեշտակ մը ըսեմ, բայց չզգար նա... և դու ալ բան մը չէիր գուշակեր, բան մը չէիր զգար...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Բայց դու երբեք այնպես նայած չէիր աչերուս խորը, ինչպես որ քիչ մը առաջ նայեցար... և ես երբ արտասվալից բիբերուդ մեջ հառեցի աչքս, կայծ մը ցայտեց անկե սրտիս խորը... Ո՜հ, ի՞նչ եղա... չեմ գիտեր, այլ կզգամ որ Հուլիան եմ և դու իմ Ռաֆայելս... Ո՜հ, ի՞նչ կզգամ... ի՞նչ կըլլամ... Սիրտս կելնե, բայց երջանիկ եմ...*

ԵԴՈՒԱՐԴ.— *Ինձ նման։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Բայց այս խուցը շատ հեղձուցիչ է, Եդուարդ։*

ԵԴՈՒԱՐԴ.— *Եթե կուզես, քիչ մը դուրս ելնենք։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Փոթորիկը անցա՞վ։*

ԵԴՈՒԱՐԴ.— *Այո՛... ալ հովը չը մռնչեր և ահա երկնից երեսը աստղերը կը փողփողեն։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Ուրեմն քիչ մը շրջագայինք տնակին բոլորտիքը... քիչ մը օդ շնչենք... վասնզի դու ալ գրելե հոգնած ես... այնպես չէ՞ Եդուարդ* (Եդուարդ հավանական նշան կընե) *տես, որչափ գեղեցիկ է երկինքը* (կը մեկնին)։

Տեսիլ Գ

Թովմա և Սալոմոն

ՍԱԼՈՄՈՆ.— (ճեռը ներս մտնելով) *Վերջապես պիտի տա՞ս ստակները։*

ԹՈՎՄԱ.— *Հիմա ժամանակ չունիմ տալու։*

ՍԱԼՈՄՈՆ.— *Բայց, պարո՛ն, այդ պատճառաբանության վերջը ե՞րբ պիտի գա... Չորս ամիս է որ տունս կը նստիս, 100-ական զուրուշեն կընե 400 ղ<ու>ր<ու>շ և դեռ 50 ղ<ու>ր<ու>շ թերհաշիվ առած չեմ... Այս ճամբան չելներ։*

ԹՈՎՄԱ.— *Բայց չե՞ս տեսներ, պարոն, ես աղքատ եմ։*

ՍԱԼՈՄՈՆ.— *Այդ իմ փո՞ւյթս է, եթե կուզես, միլիոնատեր եղիր, միայն թե իմ տանս ամսականը անթերի վճարե...*

ԹՈՎՄԱ.— (մեկուսի) *Երբեմն էի միլիոնատեր...*

ՍԱԼՈՄՈՆ.— *Վերջապես, ի՞նչ պիտի ընենք... ոստիկանության դիմենք. տունս ել կըսեմ, այդ ալ չես ըներ։*

ԹՈՎՄԱ.— *Բայց ո՞ւր երթամ, պարոն, այսպես աղքատ։*

ՍԱԼՈՄՈՆ.— *Ուր կուզես գնա՛, ա՞յդ ալ ինձ պիտի հարցնես, եթե կուզես սատանային ծակը գնա՛։*

ԹՈՎՄԱ.— *Դեռ քանի մ՚օր ալ համբերե, բարեսիրտ պարոն կաղաչեմ։*

ՍԱԼՈՄՈՆ.— *Վե՞րջը։*

ԹՈՎՄԱ.— *Անշուշտ Աստված կուտա օր մը։*

ՍԱԼՈՄՈՆ.— *Հը՜... Աստված կուտա, Աստված իր տալիք տեղը չը՞ գիտեր. եթե տալու միտք ունենա, ինծի կուտա որ աշխատութենես հոգիս բերանս կուգա, և ո՛չ թե քեզի՝ որ ո՛չ արհեստ ունիս և ոչ ալ դաշխատիս՝ պատճառելով թե տկար և հիվանդոտ ես... Բայց ես մեր Սուրբ Մովսեսի լուսեղեն եղջյուրներուն վրա կերդնում որ բողկե մը վար չես մնար։*

ԹՈՎՄԱ.— *Վերջապես, պարո՛ն...*

ՍԱԼՈՄՈՆ.— *Ստակնե՛ր։*

ԹՈՎՄԱ.— *Քեզ ըսի որ քանի մ՚օր ալ սպասե։*

ՍԱԼՈՄՈՆ.— *Բայց միթե շորս ամսե ի վեր ճանչցած մարդս դու չես։*

ԹՈՎՄԱ.— *Վերջապես ի՞նչ ըսել կուզես։*

ՍԱԼՈՄՈՆ.— *Հասկցա... ոստիկանությունը կը լմնցնե այս գործը...*

ԹՈՎՄԱ.— Բայց, պա՛րոն...

ՍԱԼՈՄՈՆ.— Քեզ մտիկ ընելու ժամանակ չունիմ... այո՛... ոստիկանությունը...

ԹՈՎՄԱ.— Ուրեմն ինչ որ կուզես ըրե...

ՍԱԼՈՄՈՆ.— Օ՜, ոստիկանութենե՞ն ալ չես պատկառիր։

ԹՈՎՄԱ.— Քանի մը օր բանտը պիտի պառկիմ... ավելի՞ն։

ՍԱԼՈՄՈՆ.— Իրավունք ունիս, ոստիկանությունը տեսնելով որ աղքատ ես, քանի մը օր բանտը պիտի դնե քեզ՝ իբրև պատիժ կամ հատուցում պարտքիդ. այնուհետև պիտի արձակե և մեր 400 ղ<ու>ր<ու>շը մեջ պիտի խաղա ոստիկանական ծախքերու հետ... Պարո՛ն, աշխատե սա պարտքդ վճարելու, մեղք է ինձ ալ, քեզ ալ. դու պատիվդ պիտի կորսնցնես, ես ալ՝ ստակս... Գիտե՞ս, պարո՛ն, հոս ժամանակավ 500 ղ<ու>ր<ու<շ ծախք ըրած եմ այս տանը շինությանը համար որ իր դիրքովը և շենքովը հովանոցե վար չը մնար. 500 ղ<ու>ր<ու>շ<ը> շատ մեծ բան էր այն ժամանակվան և նույնպես հիմա՝ քեզ համար... Վարձվոր պակաս չէ այս հովանոցին համար, որ թեպետ անմարդի տեղ մ'է, բայց և այնպես անտառներ, ձորեր ու պարտեզներ կը շրջապատեն զայն, արևելքը ու արևմուտքը միշտ աչաց առջև... գուցե ամսականն ալ իր արժեքեն շատ պակաս է. բայց ինչ որ է, բան մ'է ըրինք... պարո՛ն, վերջին անգամ կըսեմ, եթե չես կրնար վճարել, կարասիներդ դուրս պիտի հանես... մարդու պես տեսնըվինք... իմ անխելքությունս որ երբ հովանոցը վարձելու համար ինձ ներկայացար, ազնվականի պես հագուստդ մաքուր ըլլալուն՝ աչքս շլացավ և իսկույն հովանոցս քեզ հանձնեցի... աղեկ միտքս եկավ, պարո՛ն, ի՞նչ ըրիր այն հագուստները, որ առնվազն 500 ղ<ու>ր<ու>շ կարժեին։

ԹՈՎՄԱ.— Ծախեցի։

ՍԱԼՈՄՈՆ.— Եվ ստակնե՞րը...

ԹՈՎՄԱ.— Հաց առի ընտանյացս։

ՍԱԼՈՄՈՆ.— Առանց պա՞րտքդ մտածելու, անիրա՛վ... և ո՞վ գիտե, ի՞նչպես տեր եղեր էիր այն հագուստին. և ինչպես որ գուշակել կուտաս, անշուշտ հանդերձավաճառը քնացած ատենը գնեցիր։

ԹՈՎՄԱ.— Պարո՞ն...

ՍԱԼՈՄՈՆ.— Վերջապես մեր գործին նայինք... ե՞րբ պիտի տաս որամը... պատասխան տուր։

ԹՈՎՄԱ.— Չը գիտեմ։

ՍԱԼՈՄՈՆ.— Չը գիտե՞ս... միթե կատա՞կ կընես ինձ հետ...

ԹՈՎՄԱ.— Թող զիս կըսեմ։

ՍԱԼՈՄՈՆ.— Թողում զքեզ, բայց ստակ պետք է ինծի... (զննելով) Այս աթոռները խարխուլ... սա գրասեղանը՝ որդնեկեր ու փտած... (շուրջ կողմը զննելով) Բայց նոր ու մեծագին կարասի մ'ալ չունիս, որ թերհաշիվի տեղ տաս... պարոն, ստակ պետք է ինծի... ստա՜կ... (բալթոն զննելով) Հը՜, գոնե սա տուր իբրև թերհաշիվ, որ գոնե առ առավելն ֆրանք մը կարժե... այո՛, այո՛, այդ տուր։

ԹՈՎՄԱ.— (սպառնալից) Պարո՛ն, եթե չես ուզեր որ ձեռքես կրակ թափի գլխուդ, թո՛ղ զիս...

ՍԱԼՈՄՈՆ.— (վախնալով) Սպառնալի՞ք... կրա՜կ... Ա՜հ վերջապես մարդասպան ըլլալդ ալ կը հայտնես... Ա՜նօրեն մարդ, ստակներս կը կլլես և կը հալեցնես, հիմա ալ կըսպառնաս ինձ մարդասպանի մը կերպարանքով։

ԹՈՎՄԱ.— (ճանդարտությամբ) Պարո՛ն, կաղաչեմ, դեռ քանի մը օր ալ սպասե։

ՍԱԼՈՄՈՆ.— Հիմա ալ տեսար որ քու սպառնալիքդեդ չեմ վախնար, հը՜, հը՜, կեղծավորությամբ և խոնարհությամբ կուզես ճամբել զիս... ո՜չ, ո՜չ, կա՜մ ստակս կուտաս կամ բանտ կերթաս։ Այո՛, այո՛, աղեկ միտքս եկավ, թող ստակներս փճանան, դու բանտ երթալեդ ետքը կրնամ կարասիներդ փողոցը նետել և ձեռքեդ ազատիլ. այո՛, այնպես պիտի ընեմ... դու գուցե փախըստական մ'ես, և եթե ոստիկանության ձեռքն իյնաս, քեզ հարցաքննելով ի՜նչ տեսակ մարդ ըլլալդ կը գիտնան, և ասով ոստիկանության ծառայություն մ'ըրած կըլլամ...

ԹՈՎՄԱ.— Կաղաչեմ, պարո՛ն, այդ բանը մի՛ գործադրեք։

ՍԱԼՈՄՈՆ.— Տե՛ս ի՜նչպես շփոթեցավ, և կը քծնի... շիտակ ըսե, թիարանին շղթա՞յն կոտրեցիր ու փախար, թե բանտին պատուհանին երկաթե վանդակը... վերջապես եղեռնագործ մը կերևիս (երթալու կըլլա)։

ԹՈՎՄԱ.— Պարո՛ն։

ՍԱԼՈՄՈՆ.— (դառնալով) Ի՞նչ է... պիտի տա՞ս ստակներս։

ԹՈՎՄԱ.— Հիմա չեմ կրնար...

ՍԱԼՈՄՈՆ.— Ուրեմն պետք է որ առնելիքս զոհեմ արժանավոր կերպով քեզ պատժել տալու համար (նորեն երթալու կըլլա)։

ԹՈՎՄԱ.— Պարո՛ն, կը խոստանամ... վաղը դուրս կը հանեմ կապրասիներս։

ՍԱԼՈՄՈՆ.— Հապա ստակնե՞ը։

ԹՈՎՄԱ.— Դու չըսի՞ր որ գոնե տունես դուրս ելլ։

ՍԱԼՈՄՈՆ.— Առա՞նց ստակները տալու... այդ ալ չըլլար։

ԹՈՎՄԱ.— (աղերսանոք) Շնո՛րհ... պարոն... կը վճարեմ։

ՍԱԼՈՄՈՆ.— Վճարե ուրեմն... տեսնեմ։

ԹՈՎՄԱ.— Բայց ըսի քեզ թե հիմա չեմ կրնար... քանի մ'օրեն։

ՍԱԼՈՄՈՆ.— Ո՛չ, ո՛չ, չըլլար, պետք է որ միտքս դրածս ընեմ (երթալու կըլլա)։

Տեսիլ Դ

Նույնք և Մակար

ՄԱԿԱՐ.— Հրեա, ի՞նչ կուզես այս մարդեն։

ՍԱԼՈՄՈՆ.— Տանս վարձքը, պարոն, չորս ամիս է բնավ թերհաշիվ անգամ առած չեմ։

ՄԱԿԱՐ.— Ես խոսք կուտամ որ այս մարդը քանի մ'օրեն պահանջդ ամբողջ կը վճարե... Ինքը բարեսիրտ և պատվավոր մեկն է և քու բոլոր ենթադրություններդ...

ՍԱԼՈՄՈՆ.— Ներեցեք, պարոն, չէի գիտեր...

ՄԱԿԱՐ.— Ուրեմն ըսածիս պես...

ՍԱԼՈՄՈՆ.— Շատ աղեկ, պարոն, (մեկուսի) Նահապետոֆի մատակարարն է, հոգ չէ, հերիք է որ փոքր ինչ այս մարդը ճանչեկամ անոր երաշխավորելու պես բան մ'ընե... (բարձր՝ Մակարի) Ահա կերթամ, պարոն... (կերթա)։

Տեսիլ Ե

Թովմա և Մակար

ԹՈՎՄԱ.— (ոտ ապշած և մտածմանց մեջ ընկղմած էր. գլուխը վերառնելով և Մակարին մոտենալով) Պարո՛ն, թեպետ չեմ ճանչեր զձեզ, այլ չի պիտի մոռնամ ձեր ըրած բարերարությունը...

ՄԱԿԱՐ.— Պարո՛ն, ես կը նեղանամ, երբ պարտք մը բարերարության վերածելով ինձնե շնորհակալ ըլլաք... Դուք Հայ եք, նույնպես ես ալ Հայ, միթե կրնա՞յի անտարբեր ըլլալ և չը միջամտել գծուծ Հրեայի մը նախատանացը ենթակա ըլլալնիդ տեսնելով առանց ազգայնությանս կրակը գրգռելու։

ԹՈՎՄԱ.— Պարո՛ն, ներեցեք եթե համարձակիմ հարցունել ձեզ, թե ի՞նչ շարժառիթով իմ տունս գալու պատիվը կրնեք ինձ...

ՄԱԿԱՐ.— Ա՛, այդ այնպիսի խնդիր մ'է, որ ձեր գլխուն այդ տաք միջոցին չը լուծվիր... Նախ և առաջ ներեցեք որ հարցնեմ, թե ի՞նչ է ձեր անունը։

ԹՈՎՄԱ.— (շփոթած) Թովմա։

ՄԱԿԱՐ.— Ուրեմ, պարո՛ն Թովմա, եթե կը հաճիք, նստինք։

ԹՈՎՄԱ.— Շատ աղեկ, պարոն, (աթոռ մը կը բերե Մակարի, ար նստի) Զգուշացեք, պարոն, նստելու ատեննիդ, աթոռը խարխուլ է...

ՄԱԿԱՐ.— Հոգ չէ, պարոն Թովմա (կը նստի). բայց դուք ինչո՞ւ ոտքի վրա կեցաք, աթոռ մ'ալ դուք առեք և նստեցեք։

ԹՈՎՄԱ.— Շնորհակալ եմ, պարոն (աթոռ մը կառնե)։

ՄԱԿԱՐ.— Օ՜, ես չեմ ախորժիր այդպիսի չափազանց քաղաքավարական ձևերեն, եթե կը ներեք։

ԹՈՎՄԱ.— Ինչպես որ կը փափաքիք, պարո՛ն... (կը նստի)։

ՄԱԿԱՐ.— Անուննիդ Թովմա էր, այնպես չէ՞։

ԹՈՎՄԱ.— Այո՛, պարոն...

ՄԱԿԱՐ.— Կարծեմ որ դուք Թովմա առաքյալի չափ դժվարահավատ չեք...

ԹՈՎՄԱ.— Հավատացեք, պարոն, որ...

ՄԱԿԱՐ.— (ընդմիջելով) Կատակ մ'էր ըրածս... Պարո՛ն, ձեր վիճակին վրա շատ կը ցավիմ։

ԹՈՎՄԱ.— Այդ ձեր բարեսրտությունն է։

ՄԱԿԱՐ.— Իմ՝ այսպես տարաժամ քու տունդ գալուս վրա զգացած հետաքրքրությունդ հագեցնելու համար՝ պետք է քեզ իմացնեմ, թե քու ցավալի վիճակիդ դարման մը գտնելու համար եկած եմ։

ԹՈՎՄԱ.— Շնորհակալ եմ պարո՛ն։

ՄԱԿԱՐ.— Դուն չես ճանչեր զիս, բայց ես զքեզ կը ճանչեմ...

ԹՈՎՄԱ.— (շփոթած) Զի՞ս...

ՄԱԿԱՐ.— Այո՛... ես շատ անգամ մութը կոխած ժամանակ քեզ նստած տեսած եմ Ֆըստրը փողոցին պարտեզին պատին տակ, ուստի շուկայի անցորդները կը վերադառնան։

ԹՈՎՄԱ.— Սխալ տեսած ըլլալու եք, պարոն...

ՄԱԿԱՐ.— Գիտեմ, պարո՛ն, կամաչես մուրացկանի վիճակիդ վրա, զոր ընդունելու հարկադրած են քեզ կենաց ստիպողական բերմունքները... Գաղտնիք մ'է այդ ինձ համար, որուն խորը չեմ ուզեր թափանցել՝ վախնալով որ սիրտդ անհուն ու դառն հիշատակներով կը լեցնեմ։

ԹՈՎՄԱ.— Այո՛, պարոն, այն մարդը ես եմ...

ՄԱԿԱՐ.— Իմացա որ դուն ընտանիք ալ ունիս եղեր։

ԹՈՎՄԱ.— Այո՛, աղջիկ մը և որդեգիր մը։

ՄԱԿԱՐ.— Աղջիկդ շատ գեղեցիկ է եղեր։

ԹՈՎՄԱ.— (շփոթելով) Բավական։

ՄԱԿԱՐ.— Ինչ որ է... առաջին վարդը 50 կլորիկ ու կարմրուկ ոսկի արժելու չափ գեղեցիկ։

ԹՈՎՄԱ.— (ապշած) Ի՞նչ ըսել կուզեք, պարոն։

ՄԱԿԱՐ.— Նախախայրիքը։

ԹՈՎՄԱ.— Չեմ հասկնար, պարոն...

ՄԱԿԱՐ.— Պարոն Թովմա աղջիկդ կը սիրե՞ս։

ԹՈՎՄԱ.— Կը հարցնե՞ք։

ՄԱԿԱՐ.— Հարուստ ըլլալ կուզե՞ս։

ԹՈՎՄԱ.— Հարո՞ւստ... մութին մեջ չը մուրալու չափ։

ՄԱԿԱՐ.— Կուզե՞ս որ աղջիկդ քու մուրացած չոր հացդ չուտե և դու ալ մուրալու համար վերարկուովդ երեսդ չը ծածկես մութին մեջ։

ԹՈՎՄԱ.— Ա՜հ, պարոն, սրտիս խորեն կը խոսիք։

ՄԱԿԱՐ.— Շատ կը ցավիմ, որ այլապես ատեն անգիտաբար կը տառապիք։

ԹՈՎՄԱ.— Եվ ի՞նչ կրնամ ընել, քանի որ...

ՄԱԿԱՐ.— (ընդմիջելով) Քանի որ ձեռքիդ տակ գանձ մ'ունիս...

ԹՈՎՄԱ.— Չեմ հասկնար միտքերնիդ, պարոն։

ՄԱԿԱՐ.— Պարոն Թովմա աղջիկդ հարուստ է։

ԹՈՎՄԱ.— (ժպտելով) Կաղաչեմ, ազնիվ պարոն, կատակը մեկդի։

ՄԱԿԱՐ.— Պարոն, Թովմա առաքյալ մի ըլլար գլխուս։

ԹՈՎՄԱ.— Բայց դուք դարձվածավոր կը խոսիք, պարոն։

ՄԱԿԱՐ.— Ուրեմն պարզապես եղելությունը հասկցնեմ քեզի... Վերին աստիճանի ազնվական մը այս օրերս աղջիկդ տեսեր է...

ԹՈՎՄԱ.— Ո՞ւր տեղ։

ՄԱԿԱՐ.— Չեմ գիտեր, գուցե այս տնակին քովի ճամբեն ձիով անցած ատենը... Վերջապես ձեր աղջկան գեղեցկությունը իր սիրտը գրավեր է... պարզապես ըսենք, սիրահարեր է... Ես այն ազնվական անձին մատակարարն ըլլալով, քեզ տեսնելու և այս գործին վրա խոսելու պաշտոնն ինձի հանձնված է։

ԹՈՎՄԱ.— Ուրեմն այդ ազնվական անձը կը զիջանի իմ աղջիկս իրեն կին առնելու։

ՄԱԿԱՐ.— Ա՜հ, ոչ, շատ բարձրերը ելար... միտքս լավ չես հասկըցեր...

ԹՈՎՄԱ.— Ուրեմն հառաջ տարեք խոսքերնիդ։

ՄԱԿԱՐ.— Միթե հնա՞ր է որ վերին աստիճանի ազնվական մը խոնարհի մուրացկանի մը աղջիկ իրեն բացարձակ կին առնել. այս ըսելով միտքս քեզ նախատել չէ... բայց ասանկ անտեղի ամուսնության անտեղի զրույցներ և ենթադրություններ կը հաջորդեն, որ կրնան նորին ազնվության հարգն ու վարկը կոտրել։

ԹՈՎՄԱ.— Այո՛, շատ սխալ հասկցեր եմ։

ՄԱԿԱՐ.— Բայց դարձյալ տերս ձեր աղջկան սիրահարած է և իր սերը պսակելու համար պետք է որ հարսանիքը գաղտնաբար տեղի ունենա, կարելի եղածին չափ անշուք։

ԹՈՎՄԱ.— Այո՛, պարոն։

ՄԱԿԱՐ.— Բայց դարձյալ ասի պատիվ մ'է քեզի, վասնզի աղջիկդ ալ թշվառության չը կրնալով տոկալ և իր գեղեցկությունն ալ հայելիին մեջ ստեպ տեսնելով, վերջապես... աղջիկդ լկտի և հասարակաց չեղած... տերս կուզե իր անմեղ ճակտին նախախայրի վարդը ծախու առնել... 50 ոսկիի... ի՞նչ կըսես։

ԹՈՎՄԱ.— (զառանցելով) 50 ոսկի՞...

ՄԱԿԱՐ.— Մտածե... 50 փայլուն ոսկի։

ԹՈՎՄԱ.— Բայց ո՞վ է ձեր տերը, պարոն, կրնա՞մ գիտնալ։

ՄԱԿԱՐ.— Չես ճանչեր... Ռուսիացի վաճառական մ'է։

ԹՈՎՄԱ.— (շփոթած) Ռուսիացի՞...

ՄԱԿԱՐ.— Ի՞նչ կա... կը ճանչե՞ս...

ԹՈՎՄԱ.— Անունն ի՞նչ է արդյոք։

ՄԱԿԱՐ.— Նահապետոֆ։

ԹՈՎՄԱ.— (մոազբաղ) Նահապետո՞ֆ... ո՞չ, չեմ ճանչեր (մեկուսի), այս անունով ոչ ծանոթ ունիմ և ոչ ալ պարտատեր։

ՄԱԿԱՐ.— Ուրեմն մեր սակարկությանը նայինք... մի՛ վախնար, այս անցքը գաղտնիք պիտի ըլլա քու և աղջկանդ, իմ և տիրոջս մեջ... աղջիկդ դարձյալ աղջիկ է... 50 ոսկի ալ բացեն շահ, նաև չը մոռնամ ըսելու որ տեղս՝ ի սեր աղջկանդ՝ այս գումարը գրեթե նպաստ կուտա և ոչ հատուցում... 50 ծիծաղկոտ ոսկի... կընդունի՞ս...

ԹՈՎՄԱ.— (միշտ մոազբաղ) Կընդունիմ։

ՄԱԿԱՐ.— Մաքսատունեն վաճառք փախուցածի չակ՝ էղար, պարո՛ն Թովմա... հուսամ թե աղջիկդ ալ բնավ տրտնջալու առիթ չի պիտի ունենա... ե՞րբ պատրաստ ես։

ԹՈՎՄԱ.— Երբ որ ձեր տերը գալու հաճի։

ՄԱԿԱՐ.— Ուրեմն գիշեր բարի։

Տեսիլ Զ

ԹՈՎՄԱ.— (առանձին կերթա, աթոռի մը վրա կը նստի մոազբաղ՝ ձեռքը ճակտին դրած) Ա՛լ մուրացկան չեմ, ալ չի պիտի ամաչեմ, ալ մութին, անձրևին ու ձյունին տակ, առանց երկնքի աստղերուն նայիլ համարձակելու՝ ալ գլուխս չի պիտի կախեմ կուրծքիս վրա որ երեսս չը տեսնեն. ալ դողդոջ թևերս երկնցուցած ատենս անցորդ մանկտիք ափիս մեջ նենգյալ դրամ չի պիտի նետեն և զիս խաբեն ու ծաղրեն. ալ վեր պիտի բռնեմ ճակատս, ուր խորշոմն ու խոկմունքը ծանրացան... Այս իրիկուն անձրևին ամենքը շտապով կերթային և չէին տեսներ գիշերվան մութին մեջ անկյուն մը կծկող թշվառ մարդը՝ որ տեղատարափին, թոնին տակ անշարժ ու գրեթե անզգա սավերի պես՝ պաղ քարի մը վրա նստած՝ անցորդներուն բարեմաղթություններ կը մրմնջեր, մարդ մը, որ անծանոթ անցորդներու ոտնաձայնը կը հաշվե, կարծես իր հույսը մարդոց ոտքին տակ կը փնտռե... չը տեսան այն մարդը որ խեղճ ընտանիքի մը հաց տանելու համար հոն կը տքներ... մեկը չը տեսավ խավարին մեջ այն սև ամպը որ կը շնչեր... որուն ներսն ալ կանձրևեր... չը տեսան ու անցան... ոտնաձայները դադրեցան... անձրևեն թրջած մարդիկը իրենց տունը դարձան և ճարտա-

տուն վառարանի մը բոլորտիքը կը չորնային ու կը տաքնային... անդին մութին մեջի մարդը նոր ոտքի կելներ, բայց ծանր, վասնզի իր ոտքերը թրջած, թմրած և ընդարմացած էին... առաջին անգամ գլուխը վեր՝ երկինք վերցուց... լացավ աղու պես այն անձրևոտ գիշերվան հետ... ծանր ծանր տուն դարձավ առանց հացի... այն անձը ես եմ... այն անձը վաճառական Մուրատոֆն է, որ մուրացկան Թովմա անունով առանց հացի և անոթի տուն կը դառնա այժմ. ա՜հ, աղջկանս դահիճը կըլլամ, ալ մուրացկան չեմ ըլլար... ի՞նչ պիտի ընե խեղճը այսպես գեղեցիկ և թշվառ մնալով. մեկը կին չառներ զինքը, վասնզի հայրը մուրացկան է... վերջապես իր ճակատագիրը հոն կանգ կառնե, ինչ որ ես վճռեցի քիչ մը առաջ... այո՛, թող անպատիվ ըլլա, բայց ոչ անոթի... վասնզի անոթի մարդը, աղքատ մարդն արդեն անպատիվ է... ի՞նչ աշխարհ, ի՞նչ մարդկություն, որ ցնցոտիով ծածկված սրտին ազնվությունը կը մարեն... այո՛, անպատիվ կըլլամ, բայց ոչ անոթի։

Տեսիլ Է

Թովմա, Վարդուհի, Եդուարդ (ձեռքը գիրք մը կը թղթատե և կը կարդա)

ՎԱՐԴՈՒՀԻ.— (հոր կը մոտենա, որ աթոռի մը վրա ինկած է մոազբաղ) Եկեր ես, հայր իմ... այդ որչա՜փ թրջեր ես։

ԹՈՎՄԱ.— Այո՛, բավական... քիչ մը առաջ տեղացող անձրևին տակ կեցողն ի՞նչ պիտի ըլլա։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց ի՞նչ հարկ կար անձրևին տակ կենալու։

ԹՈՎՄԱ.— Որովհետև մեկուն կսպասեի։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ո՞ր անսիրտն այդպես անձրևին տակ սպասցնել ավավ քեզ։

ԹՈՎՄԱ.— Իմ ըսածս մարդ չէ, հոգի չունի, այլ հոգի կուտա, անունն է հաց... վազվան բաժին ինկած հացերնիս չը կրցի բերել։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Հոգ մի ըներ, հայր իմ, անշուշտ կուտա։

ԹՈՎՄԱ.— (ընդմիջելով) Ո՞վ։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Աստվա՜ծ։

ԹՈՎՄԱ.— (ակռաները կրճտելով) *Աստվա՜ծ...* (ճանդարտությամբ) *Այո՛, Աստված...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Կրակարաննիս ամայի է, եթե ոչ հագուստներդ կը չորցընեինք։*

ԹՈՎՄԱ.— *Հոգ չէ, Վարդուհի... Ես գոհ եմ որ փոթորկին ժամանակ պատին տակ նստած ատենս կայծակը չը զարկավ զիս։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Ինչո՞ւ նստար պատին տակ, անոր համար թրջե՞ր ես։*

ԹՈՎՄԱ.— *Կը մուրայի։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Աստվա՜ծ իմ։*

ԵԴՈՒԱՐԴ.— *Ի՞նչ կը լսեմ* (գիրքը գոցելով գրասեղանին վրա կը նետե ու ճորը կը մոտենա)։

ԹՈՎՄԱ.— *Այո՛, կը մուրայի՛... ոչ թե լոկ այս գիշեր... այլ ամեն գիշեր՝ երբ մութը կոխելուն դուրս կելնեի. դուք չէիք մտածեր անգամ մը թե մեր հայրը ի՞նչպես կը բերե այս հացը և թե ո՞վ կուտա զայն։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Աստվա՜ծ։*

ԹՈՎՄԱ.— (ակռաները կրճտելով) *Աստվա՜ծ...* (ճանդարտությամբ) *Այո՛, Աստվա՜ծ... և ի՞նչպես չը մուրայի, մինչդեռ անակնկալ դիպվածով մը պարտուց ահագին գումարով սնանկացած՝ Ռուսիայեն հոս փախչելու ստիպվեցա՝ գրպանս մեկ քանի մանեթ միայն ունենալով. արհեստի մը տեղյակ չըլլալով, չէի կրնար օրապահիկս ճարել հոս, վասնզի չէի կրնար մեկուն քով ծառայության մտնել կամ պարապորդ և անարհեստ մարդո մը բաժին ինկած նվաստ աշխատության մը պարապել, վասնզի երբեմն Մուրատոֆ մ'էի. քանի որ դու կար կարելու վարժ չէիր և Եդուարդ միշտ գրելու զբաղած էր, քանի որ թշվառությունն ու անոթությունը մեզ կսպառնար՝ ի՞նչ կրնայի ընել... միտքս դրի մուրացկան մ'ըլլալ, վերարկուովս երեսս ծածկած՝ իրիկունները մութ ատեն ափս բանալ այնպիսի մարդոց՝ որոց եթե անունս տայի, ըսեի թե ես Մուրատոֆն եմ, ապշած ու զարհուրած ետ ետ կը քաշվեին առանց դրամ մը տալու՝ որուն կարոտ էի... լռեցի միշտ, դեմքս ծածկեցի և ձեզ բան մը չը հայտնեցի՝ մտածելով՝ որ գուցե մուրացված հաց է բանով չէիք ուտեր. բայց հիմա ամեն բան կը հայտնեմ, վասնզի ալ չի պիտի մուրամ...* (փոփոխակի անոնց երեսը կը նայի). *բայց երկուքեդ և ոչ մեկը չըսեր թե ի՞նչ պիտի ընեք, ի՞նչպես հաց պիտի գտնենք։*

ԵԴՈՒԱՐԴ.— *Մենք անոթի չենք, հայր իմ։*

ԹՈՎՄԱ.— *Հիմա... բայց վա՞ղը։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Աստված կուտա։*

ԹՈՎՄԱ.— (ակռաները կրճտելով) *Աստվա՜ծ։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Ինչո՞ւ կը հուսահատիս, հայր իմ։*

ԹՈՎՄԱ.— *Եդուա՛րդ, Մուրատոֆի ապարանը կը վայլեր կարդալ, գրել, նվագել և զբոսնուլ... բայց Թովմայի հյուղը ատոնք չընդունիր. եթե չես ուզեր յուղոտ օձիքով, մաշած ու պատռած հագուստ հագնիլ, ոսկեզօծ թշվառ մը, ինծի պես մուրացկան մ'ըլլալ, սա տարբերությամբ, որ եթե ես պղնձե թաս մը ունիմ, դու քնար մը պիտի ունենաս... վերջապես եթե չես ուզեր բացարձակ մուրացկան մ'ըլլալ, կրակը նետե այդ մրոտած թուղթերը, որոց վրա ընդունայն քիրտ և լույս կը թափես... տաղերգությանց մեջ սիրուհվույդ առջև խոստմունքներ, անձնուրացություններ կը շարես, բայց երբ ամուսին ըլլաս՝ չոր հաց անգամ չես կրնար տանիլ անոր... հրաժարե այդ քաղցր բայց խաբուսիկ երևակայություններեն և երազներեն, հրաժարե այդ թովիչ փառքեն, ջախջախե այդ մուրացկանության նպաստող քնարը։*

ԵԴՈՒԱՐԴ.— *Բայց օր մը անշուշտ անոր հարգը կը ճանչցվի։*

ԹՈՎՄԱ.— *Այո՛, գուցե անունդ ոսկեզօծ պիտի հիշատակվի խեղճ և անշուք մեռնելե վերջը, հորանջող քահանաներ՝ գերեզմանոցին ճամբուն վրա գտնված փոսի մը մեջ քեզ նետելե ետքը, երեսկախ ու դժգոհ մեռելաթաղներ քանի մը թի ցուրտ հող վրադ թափելե և տարիներ դերեզմանիդ հողակույտը հարթ ու անհայտ ընելե վերջը։ Մա՞րդն է ապրողը թե փտած ոսկորը, սի՞րտն է զգացողը թե գերեզմանը... կը հասկնա՞ս... գնա, գործավոր եղիր՝ արհեստավոր, սպասավոր եղի՛ր, բայց երբեք մի՛ փափագիլ Հայ մատենագիր ըլլալու։ Ահա իմաց կուտամ քեզ. վաղվընե գնա ստակ վաստկելու գործ գտիր, և եթե իրիկունը ձեռքդ հաց մը և մոմ մը չը տեսնեմ, տունս չի պիտի ընդունիմ քեզ։*

ԵԴՈՒԱՐԴ.— *Բայց Վարդուհի մինակ կը մնա հոս։*

ԹՈՎՄԱ.— *Ես հոս եմ։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Ա՜հ, հա՛յր իմ, նա ոչ զոք կը ճանչե հոս և ոչ ալ արհեստի մը տեղյակ է. ի՞նչպես կրնա գործ գտնել և ստակ շահիլ։*

ԹՈՎՄԱ.— Թող հարուստին մեկուն աղերսագիր մը տա և անոր քով ծառայության մտնե։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Այսպիսի ուսումնական և հանճարեղ պատանի մը ծառա կամ սպասավոր ըլլա՞։

ԹՈՎՄԱ.— Եթե չուզեր վերջը մուրացկան մ'ըլլալ։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց, հա՛յր իմ, ես կար կարել կսկսիմ և Եդուարդի տեղ ստակ կը շահիմ, ասով կրնանք ապրիլ։

ԹՈՎՄԱ.— Խեղճ աղջիկ, կը կարծես որ ատով կրնա՞նք ազատիլ... քիչ մ'առաջ մեր տան տերը՝ Սալոմոն օձիքս բռնեց և ըսավ որ եթե քանի մ'օրեն չը վճարեմ 4 ամսվան վարձքը, կարասիներս փողոցը պիտի նետե և ոստիկանության պիտի մատնե զիս. մտածեցեք որ եթե ոստիկանության հանձնվիմ...

ԵԴՈՒԱՐԴ.— (սարսափած) Աստվա՛ծ իմ։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Հա՛յր իմ։

ԹՈՎՄԱ.— Հիմա որ ամեն բան հայտնեցի ձեզի, ի՛նչ որ կուզեք ըրեք (մտանուշ աթոռի մը վրա կիյնա)։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Եդուա՛րդ։

ԵԴՈՒԱՐԴ.— Վարդուհի՛ (կը գրկվին) (Վարագույրը կիջնե)։

ԱՐԱՐՎԱԾ Բ

Տեսարան է թատերաբեմ.— Թատրոնի սպասավոր մը թատերաբեմը կավլե.— Տեսարանին խորը՝ ձեացյալ դուռներ, պատուհաններ, արձաններ, և։

Տեսիլ Ա

Բ. Դերասան, (հետո) Ա. Դերասան

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— (ցրտեն դողալով, մերթ ձեռքերը և մերթ աչքերը շփելով կը մտնե)

Գեշ ատեն, տը, տը, տը,
Անշահ բան, տը, տը, տը,
Գեշ ատեն
Իրավ շատ
Անպիտան, ևն։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— (մտնելով՝ նույնպես)

Դեռ մանուկ էի,
Մեղքս ինձ ըսին, ևն։

(ընկերը տեսնելով) Բարի լույս, ժա՛ք, ի՞նչպես երեկ գիշերվան փոթորկահույզ անձրևը խափանեց Վիքթոր Հյուգոյի այն ընտիր խաղը։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Թշվառակա՜ն, կարծես թե թատրոնին ձեղունին մեջ ահագին և խոֆած մուկերու երամ մը հեղեղի պես կերթևեկեր։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— (խնդալով) Հապա հանդիսատեսներու աղմո՞ւկը։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Այո՛, փոթորիկը բռնեց անոր տեղը... ամայի նստարանները և օթյակներն ըսել կուզես... եթե դերասաններու թատրփուքներ, թատրոնի սպասավորներ, ազատ մուտք ունեցող քանի մը պարոններ ասդիս անդին կծկած չըլլային սատրինջի քարերու պես, թատերասրահը մարդու շուք անգամ չի պիտի տեսնվեր... մոռցա ըսելու որ վերնատունը քանի մը սուլող պարոններ կը գտնվեին։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Հապա անց,ալ շաբաթ գիշերվան ներկայացո՞ւմը, քանի որ երկինքը պայծառ էր և խաղն ալ փառավոր ազգային հրդեհություն մը։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Գուցե թատերազրի ցրվիչը շտապի գալով ազդերուն տպյալ երեսը փակցուցած է։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Բայց Ազգ մ'ալ Մ. լրագրին ղրկվեցավ։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Ա՜հ, գրաշարապետը շարված թատերազրը անուշադրությամբ տեղավորված միջոցին, վասնզի իրեն ձրի մուտք չը կար մսած մատներեն սահելով գետինը ինկեր և ցրվեր է... գրաշարապետը փույթ չէ ըրեր զանոնք նորեն ժողվելու, և անոր տեղ պատրաստ ազդ մը տեղավորեր է։

Ա. ԴԵՐԱՍԱՆ — Կատակը մեկդի, ես այնպես կը կարծեմ թե հասարակությունը ձանձրացած է դերասանին կոկորդը պատռող և թատերատեսներու գլուխը ուռեցնող ազգային դյուցազներգական խաղերեն, և եթե ընտանեկան անցքերու վրա հորինված ժամանակակից թատերախաղեր ներկայացվին, հուսամ թե ժողովուրդը շատ կախորժի անոնցմե և իր քաջալերությունը չի զլանար։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Եթե բերանփոխ ըլլա, գեշ չըլլար ըսել կուզես։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Ոչ, իմ կարծիքս այն է, որ ներկայացումները գրեթե բոլորովին ժամանակակից թատերախաղեր ըլլալու են, վասնզի Հայ հասարակությունը հիմա առաջինը չէ, արթնն-

ցավ... և այն զառանցական խաղերով գոհ չըլլար որոնց իմաստը մեր արդի կացության հետ կապակցություն չունի գրեթե։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Այո՛, այն խաղերուն նորությունը անցավ։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Նաև այն դյուցազնական խաղերուն բոլորն ալ միակերպ են գրեթե, որով ժողովուրդը կը ձանձրացնեն հարկավ. ասով ըսել չեմ ուզեր թե այն խաղերը բոլորովին չը ներկայացվին, այլ ըսել կուզեմ թե ժամանակակից խաղերն անոնցմե նախամեծար համարվին, քանի որ ունկնդիր թատերատեսն ալ վերջիններեն ավելի բան մը կզգա կամ կը շահի, վասնզի ինքն ալ տեսարանին վրա ելնող անձի մը համապատկերը կը գտնե իր վրա, և հեղինակին ճաշակին կամ հմտությանը շնորհիվ քիչ կամ շատ օգուտ կը քաղե անկե։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Մանավանդ արդի կատակերգությունները։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Թատերգություն կամ կատակերգություն, երկուքն ալ եթե ժամանակակից անցքերու վրա հորինվին, ժողովուրդին համար շատ օգտավետ են. ժողովուրդին օգտակար եղածը թատրոնին ալ ըսել է, վասնզի զիրար կը սնուցանեն։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Կեցցես, ժա՛ն, լրագրի մը խմբագրի պես դատողություն ունիս։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Բայց վերջապես ըսածներս իրավացի չե՞ն։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Օ՜հ, իմ նպաստիս, անձրևոտ, ձյունոտ և ցուրտ գիշերվան վրա կերդնում որ բոլոր ըսածներդ իրավացի են։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Պետք է որ մենք հասարակութենե քաղված այս դիտողությունները մեր տնօրենին հաղորդենք, որպեսզի ժողովուրդին ճաշակին համեմատ վարվելով ոչ իրեն վնաս ըլլա և ոչ ալ մեզ... Ես ազգային խաղի մը ներկայացման գիշերը դեր չունենալով գետնասրահը կը գտնվեի. վարագույրը գոցված ատեն առջևի նստարանին վրա գտնվող ուսումնական և հարգի երևույթ ունեցող երկու պարոններու խոսակցութենեն քաղեցի այս դիտողությանս աղբյուրը և ետքը մտածեցի որ շատ իրավունք ունեին. իրենց քննադատությունը հեղինակին գրչին և հանճարին վրա չէր, այլ ցավ կը հայտնեին թե թատերագիրք ընդհանրապես անօգուտ այլութեղու վրա կը հոգնեին և թե դերասանական արվեստն ասանկով չէր զարգանար։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Այդ մարդիկը շատ լավ դիտողություն ըրեր են։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Վասնզի այն խաղերուն մեջ ունակություն կամ արհեստ ալ չը մտներ որ դերասանը կարենա փայլեցնել իր հանճարը։

Տեսիլ Բ

Նույնք և Զիչիլ (խիստ վերջը՝ սպասավոր մը)

ԶԻՉԻԼ.— Բարի լույս ձեզ, ժա՛ն, ժա՛ք։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Բարի լույս, Ռուսո։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— (խնդալով) Հա՛, հա՛, հա՛, շատ խեղկատակ ես, ժաք։

ԶԻՉԻԼ.— Ինչո՞ւ խնդացի՛ր ժա՛ն, ի՞նչ ըսել է Ռուսո։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Ժան Ժաք Ռուսո՝ գաղիացի փիլիսոփայի մ՚անուն է. մեր Ժաքը անոր փիլիսոփայությունը շատ կարդացած ըլլալուն և իր բերանն ալ միշտ Ժան Ժաք Ռուսո հեղեղելուն համար՝ երբ դու մեր անունը տալով՝ Ժան, Ժաք ըսիր, ինքն ալ՝ բերանը վարժված ըլլալով՝ պակասը լեցնելու համար, Ռուսո կոչեց քեզ, բայց միտքը ուրիշ բան էր. Ռուսո շիկահեր ըսել է և այս անունը քեզ տալով կատակախառն նախատինքով մը տգեղություն մը քեզ հատկացնել էր միտքը, թեպետև մազերդ մետաքսի պես փայլուն և սև են, օրիորդ Զիչիլ։

ԶԻՉԻԼ.— (գլուխը երերցնելով) Խեղկատակ պարոնս։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Բայց դուն ալ զինքը Մոլիեր կոչե իր գեղեցիկ կատակաբանությանը համար, որ շատ կը վայլե։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Ա՜հ, փառք մ՚է ինձ այդ, որովհետև Մոլիեր Գաղիացվոց առաջին կատակերգակ բանաստեղծն է։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Եթե բառարանը նայիս, Մոլիեր ցեխի ալ նշանակություն ունի։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Վա՞յ... այդ չէի գիտեր։

ԶԻՉԻԼ.— (խնդալով) Շնորհակալ եմ քու ազնիվ կատակաբանութենեդ, պարոն Մոլիեր։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— (խոնարհությամբ) Ներում կը խնդրեմ ուրեմն... Ժան՝ որ ողբերգակ դերասան մը ճանչցված է, ինձնե ավելի լավ կապեց այս կատակը. ներում կը խնդրեմ, օրիորդ Զիչիլ... հպարտեցա...։

ՉԻՉԻԼ.— (զոռոզությամբ) Կը ներեմ, պարոն Ժաք։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— (ձեռքերը շփելով) Բայց բավական ցուրտ կընե օդը։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Ձմեռը կանուխ արթնցավ, ձեռքերնիս ծակ գրպաններս խոթելու ստիպվելով՝ հազար ու մեկ դառն մտածումներ մտաց մեջ դիզելու համար... բայց կեցցեն կատակաբանությունները։

ՉԻՉԻԼ.— Իրավունք ունիս, ժա՛ք. (սույն միջոցին սպասավոր մը խոռեն կանցնի, վառարան մը ձեռքը)։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— (զայն տեսնելով) Օհո՜, Միքե, ո՞ւր կը տանիս այդ վառարանը։

ՍՊԱՍԱՎՈՐ.— Պարոն տնօրենին տենյակը։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Մեղի տուր (կուզե առնել)։

ՍՊԱՍԱՎՈՐ.— Բայց, պարոն...

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Տուր կրսեմ (կառնե). ուրիշ վառարան մը տար իրեն (սպասավորը շփոթած կը մեկնի). Պարոն տնօրենը շատ գոհ կըլլա եթե առանց վառարանի սենյակին մեջ ինքը մսի և մենք վառարանով մը ձայներնիս կտրենք քան թե մեր առկախ մնացած ամսականները պահանջելու համար գլուխն ուռեցնենք (վառարանը կը բերե, որուն թղթորտիքը շարվելով երեքը կը տաքնան)։

ՉԻՉԻԼ.— Այդ մասին իրավունք չունիս պարոն տնօրենին դեմ բողոքելու, վասնզի թատրոնն արդեն հասույթ չունի դեռ։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Բարեսիրտ Չիչիլ իրավունք ունի։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Եվ միթե ես իրեն դեմ բողոքած ունի՞մ... կատակ մ'էր ըրածս։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Ահա լավ վառարան մը։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Փափուկ ձեռքերդ կապուտցեր են ցրտեն. տաքցո՛ւր, օրիորդ Չիչիլ։

ՉԻՉԻԼ.—Իրավունք ունիս... շատ մսեր եմ։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Մեր քնասեր ընկերները դեռ ցուրտ անկողիններու մեջ կը խոկան։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Աղքատ և որբ ըլլալն այսպես է ահա, օրիորդ Չիչիլ։

ՉԻՉԻԼ.— (տխրելով և ճառաչելով) Կաղաչեմ, պարո՛ն Ժան, անցեալն վարագույրը մի բանար։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Եթե այնպես է, ներե ուրեմն, բարեսիրտ Չիչիլ

Տեսիլ Գ

Նույնք և Վահագնյան

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— (ահուրը տեսար մը մտնելով) Բարի լույս ձեզ... այսօր շատ ցուրտ կընե (վառարանեն կը տաքնա)։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— (ժամացույցը նայելով) Ժամը ճիշտ յոթն է։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Եվ դեռ մեկը չի կա թատերաբեմին վրա։

ՉԻՉԻԼ.— Այսօր փորձ չունի՞նք։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Քանի մը դերասաններ ստիպողական գործերու համար հրաման առին, ուստի այսօր չի պիտի կրնանք փորձ ընել։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Ուրեմն հոս մարմար կտրելու տեղ մեր սենյակը քաշվինք, որ բավական կոկիկ է և այս վառարանով կրնանք տաքնալ։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Այո՛, աղեկ ըսիր... (Վահագնյանի) դուք ալ կուգա՞ք։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Ո՛չ, ես սա խաղը պիտի կարդամ։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Նո՞ր հեղինակություն մ'է։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Այո՛։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Աղգայի՞ն։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Այո՛։

ՉԻՉԻԼ.— Ողբերգությո՞ւն։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Անշուշտ։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Ե՞րբ պիտի ներկայացվի։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Գուցե երկու շաբաթեն։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Երթանք։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Այո՛ (երթալու կըլլան)։

ՉԻՉԻԼ.— Վառարա՛նը։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Ա՜, քիչ մնաց որ կը մոռնայի (վառարանը կառնե, երեքը կը մեկնին)։

Տեսիլ Դ

Վահագնյան և Եղուարդ

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— (Եղուարդի՝ որ գուլիսի մեջ կեռնի) Ո՞վ կուզես, պարո՛ն։

ԵԴՈՒԱՐԴ.— Ներեցեք, պարոն, արդյոք կրնա՞մ տեսնել պարոն տնօրենը։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.—Ի՞նչ պիտի ընես։

ԵԴՈՒԱՐԴ.— Առանձին խոսիլ կուզեի իրեն հետ։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Այդ սանդուղքեն վեր ել և առաջին սենյակը նայե... բայց կեցիր, ինքն ալ ահա կուգա։

ԵԴՈՒԱՐԴ.— Շնորհակալ եմ, պարոն։

Տեսիլ Ե

Պողյանց, Եդուարդ, Վահագնյան (որ աթոռի մը վրա նստած՝ ձեռքի տետրը կարդալու կզբաղի)։

ԵԴՈՒԱՐԴ.— Պարոն տնօրեն, պատիվ ունիմ ձեզ ներկայանալու։

ՊՈՂՅԱՆՑ.— Կրնաս խոսիլ։

ԵԴՈՒԱՐԴ.— Արդյոք կարելի՞ է որ զիս ձեր խմբին մեջ ընդունելու բարությունը շնորհեք ինձ։

ՊՈՂՅԱՆՑ.— Դերասա՞ն ըլլալ կուզես։

ԵԴՈՒԱՐԴ.— Այո՛, պարոն։

ՊՈՂՅԱՆՑ.— Անշուշտ դերասանի մը հարկավոր եղած ընդունակությունն ու միջոցը ունիս։

ԵԴՈՒԱՐԴ.— Ըստ բավականին, պարո՛ն։

ՊՈՂՅԱՆՑ.— Կրնա՞ս խոսք տալ։

ԵԴՈՒԱՐԴ.— Եթե կը հաճիք, փորձեցեք, պարոն։

ՊՈՂՅԱՆՑ.— Շատ լավ։

ԵԴՈՒԱՐԴ.— Ընդունելու համար պայման մ'ունի՞ք առաջարկելիք։

ՊՈՂՅԱՆՑ.— Սա կա որ նորեկ դերասանի մը 40 ֆրանքեն ավելի ամսական չեմ կրնար վճարել։

ԵԴՈՒԱՐԴ.— Շատ մեծ բարերարություն մ'է ըրածնիդ, պարո՛ն։

ՊՈՂՅԱՆՑ.— Ուրեմն կընդունի՞ս այս պայմանը։

ԵԴՈՒԱՐԴ.— Եվ շնորհակալությամբ, պարոն։

ՊՈՂՅԱՆՑ.— Ուստի ես ալ այս պայմանավ խումբին մեջ իբրև դերասան կընդունիմ քեզ այսօրվընե... Հուսամ թե գոհ ես։

ԵԴՈՒԱՐԴ.— Ոչ թե գոհ, այլ երջանիկ, պարո՛ն։

ՊՈՂՅԱՆՑ.— Արդ, այսօրվընե դերասանաց հատկացյալ սենյակներեն մեկը կրնաս բնակիլ քու բոլոր պիտույքդ հոգալով։

ԵԴՈՒԱՐԴ.— Շնորհակալ եմ, պարոն։

ՊՈՂՅԱՆՑ.— Անշուշտ որևէ անտեղություն մը չեմ տեսներ մինչև վերջը։

ԵԴՈՒԱՐԴ.— Կը հուսամ, պարո՛ն, և կը փափաքիմ որ այդպես ըլլա։

ՊՈՂՅԱՆՑ.— Ուրեմն, այսպես...

ԵԴՈՒԱՐԴ.— Պարոն...

ՊՈՂՅԱՆՑ.— Եթե խոսելիք մ'ունիս, զրուցե։

ԵԴՈՒԱՐԴ.— (գրպանեն տետր մը հանելով) Արդյոք կրնա՞մ ձեզ ներկայացնել։

ՊՈՂՅԱՆՑ.— Ի՞նչ է այդ։

ԵԴՈՒԱՐԴ.— Ռուսերենե թարգմանված թատերախաղ մը։

ՊՈՂՅԱՆՑ.— Տեսնեմ (կառնե և կը զննե) ընտի՞ր խաղ է։

ԵԴՈՒԱՐԴ.— Եթե կարդալու հաճիք, պիտի տեսնեք։

ՊՈՂՅԱՆՑ.— Աղեկ։

ԵԴՈՒԱՐԴ.— Պետք ունի՞ք։

ՊՈՂՅԱՆՑ.— Ի՞նչ կը պահանջես։

ԵԴՈՒԱՐԴ.— Հինգ ֆրանք։

ՊՈՂՅԱՆՑ.— Հինգ ֆրան՞նք... շա՛տ լավ։

ԵԴՈՒԱՐԴ.— Պարոն...

ՊՈՂՅԱՆՑ.— Ստա՞կը կուզես։

ԵԴՈՒԱՐԴ.— Շատ բարեսիրտ եք, պարո՛ն։

ՊՈՂՅԱՆՑ.— (Վահագնյանի մոտենալով, որ միշտ կը կարդա) Ի՞նչ է կարդացածնիդ։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Անցյալ օր կարդալու համար ինձ տված ազգային խաղերնիդ է։

ՊՈՂՅԱՆՑ.— Ի՞նչպես է։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Բանաստեղծություն։

ՊՈՂՅԱՆՑ.— Եթե կուզեք, սենյակս երթանք և միատեղ կարդանք։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Շատ լավ... (ցած՝ առ Պողյանց՝ Եդուարդը ակնարկելով) նորեկ դերասա՞ն է։

ՊՈՂՅԱՆՑ.— (ցած) Այո, ի՞նչպես կը գտնես։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Շատ փափուկ... Լավ սիրահար կըլլա... անդիի աշխարհ գացող մեր սիրահարին տեղը կը բռնե և կամ զայն կը գերազանցե։

ՊՈՂՅԱՆՑ.— Ես ալ այնպես կը հուսամ... (բարձր) երթանք ուրեմն։ (Եդուարդի) Ինչպես որ ըսի, պարոն, (Եդուարդ գոհության և շնորհակալության շարժում մը կրնե)։

Տեսիլ Զ

Եդուարդ (մենակ)

Հինգ ֆրա՞նք... Որչա՜փ հարուստ եմ... պիտի երթամ Վարդուհիս տեսնելու... բա՜ց դուռը, անգո՛ւթ հայր, բա՜ց դուռը ձեռքի հինգ ֆրանքիս. ես որ Վարդուհիս տեսնելու համար արյունս անգամ կուտամ, դու սոսկ կուզես... սիրո մուռք... բայց ոչ, զքեզ նախատելու իրավունք չունիմ, վասնզի քու մուրացած հացդ կերա... բայց անոթի կը մնայի եթե Վարդուհի քովս ըլլար, իր շունչ ինծի կյանք կուտար... ո՜, եթե հոս եկած չըլլայի, այս գիշեր՝ առանց սոսկի և անոթի՝ փողոցին սալահատակին վրա պիտի պառկեի, եթե սովերս տեսնեին՝ գինով և եթե դեմքս տեսնեին՝ սրիկա մը պիտի կարծեին և բանտ պիտի տանեին զիս... աղքատությո՜ւն, ո՞վ կը ղրկե զքեզ, ես չեմ կարծեր որ երկնից հեղինակությունն ես, այլ դժոխոց մեկ կատակը... ա՜հ, սոսկալի է աղքատ ըլլալ և սիրել, երբ սիրուհիդ՝ զոր քու շունչովդ կուզես պատսպարել, մերկ է և անոթի... բայց ես հի՜նգ ֆրանք ունիմ, Վարդուհիս քիչ մը հաց և բոտին մը կառնեմ և վաղը երկու երեք ժամ թև թևի կը շրջագայինք մեր տնակին ձորը... ամսագլխուն թոշակովս ալ մեր տնակին քառասուն ֆրանք պարտքը կուտամ... երջանիկ կըլլանք... բա՜ց դուռը, հա՜յր, հի՜նգ ֆրանք ունիմ... հի՜նգ ֆրանք... (կը մեկնի. պատկերը կը փոխվի)։

ՊԱՏԿԵՐ Ա

Թովմայի տնակը. պատուհանը արևուն մարը մանելին կը ցոլա

Տեսիլ Ա

Թովմա և Վարդուհի

ԹՈՎՄԱ.— Ահա արևը մարը կը մտնե... կուզե՞ս որ վաղը անոթութենե ընկճյալ և կթոտ՝ խղուր իր ճառագայթներուն կծկինք քիչ մը կյանք և հոգի առնելու համար... կուզե՞ս որ վաղը իրիկվան մարը մտնող արևին հետ մենք ալ անոթութենե մարինք... Վարդուհի՜, մենք արդեն այս տնակին մեջ, աղքատության մեջ, անոթության մեջ անպատիվ ենք... Աստված չը կամիր որ անձնասպան ըլլանք, բայց՝ մինչդեռ ես մուրացկանությունը կատեմ և դու ալ մուրացված հաց չես ուտեր... հաց չունինք... ի՞նչ ընենք, Վարդուհի՜, հարո՜ւստ ըլլանք և վրե՜ժ առնենք։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ուսկի՞ց։

ԹՈՎՄԱ.— Չեմ գիտեր, բայց կզգամ որ սիրտս ատելության հնոցի պես կը բռնկի... վրե՜ժ առնել կուզեմ, այլ չեմ գիտեր ուսկի՞ց... երբ Ռուսիո ապարանքս կը հիշեմ, ուր ինչվան առավոտ ջահերը կը վառեին, ուր մինչև առավոտ ծիծաղները արձագանք կուտային, երբ հոն բազմախորտիկ սեղանս տեսնելով միայն կը հագենայի և երբ հոս ցամաք հացի անհագ քաղցը կզգամ, երբ կը մտածեմ թե բոլոր անցելույն փառքերը զիս լքին և սովերի պես անցան, անոթությունենե ավելի հարստության ծարավ մը կզգամ, ա՜հ, մեռնի՜լ, բայց հարուստ մեռնիլ կուզեմ... այո՜, Թովմայի գծուծ անունը կուզեմ թոթվել և զմուրատոֆ վերականգնել... կուզեմ որ մուրացկանի աղջիկ չը կոչվիս դու, այլ Մուրատոֆի աղջիկը... Վարդուհի՜, հարստությունն ամոթապարտ կարմրությունը կը ծածկե, իսկ աղքատությունն անբիծ ճակատը կը նսեմացնե... Վարդուհի, հարո՜ւստ ըլլանք։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Հապա խեղճ Եդուա՞րդը, որ վռնտեցիր։

ԹՈՎՄԱ.— Աղեկ ըսիր, այն ալ անշուշտ քովերնիս կառնենք և երջանիկ կըլլանք։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց կը վախնամ ես անկե։

ԹՈՎՄԱ.— Ինչո՞ւ կը դեղնիս... կը սիրե՞ս զինքը։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Անկե կը վախնամ միայն։

ԹՈՎՄԱ.— Բայց այդ գաղտնիք մը պիտի ըլլա։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ո՜հ, ո՜չ, կը վախնամ։

ԹՈՎՄԱ.— Ուրե՞մն։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Չեմ կրնար։

ԹՈՎՄԱ.— Բայց մտածե... անոթությունը։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Կը համբերեմ...

ԹՈՎՄԱ.— Իսկ ես չեմ կրնար համբերել... արյունս ցամքելով անոթի մեռնելու տեղ արյուն թափելով կուզեմ մեռնի՜լ... (հուսահատությամբ բան մը կը փնտռե)։

ՎԱՐԴՈՒՀԻ.— (ճայրը բռնելով) Հա՛յր իմ... ի՞նչ կընես...։

ԹՈՎՄԱ.— Թո՛ղ զիս... անոթի՞ մեռնիմ... միթե ես մանո՞ւկ եմ։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Կեցիր, հա՛յր իմ, ալ քուկդ եմ... (Թովմա կը ցնցվի) քու աղջիկդ եմ, ի՛նչ որ կուզես այն ըրե, միայն թե դու մի մեռնիր... միայն թե մի լքաներ հետո անպատիվ աղջիկդ, դարձյալ քու անմեղ աղջկանդ պես նայե ինծի։

ԹՈՎՄԱ.— (փղձկելով) Վարդուհի՜... (արցունքը կընդմիջե զինքը)։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Եթե մայրս կենդանի ըլլար, զիս կը պաշտպաներ։

ԹՈՎՄԱ.— Վարդուհի, զա՛րկ զիս, և այդպես մի խոսիր։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ներե, հա՛յր իմ... եթե փոքր ինչ վախկոտ եմ։

ԹՈՎՄԱ.— Վարդուհի, եթե այսպես պիտի մեղադրեիր զիս, ինչո՞ւ քիչ մ՚առաջ թող չը տվիր որ...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ո՛չ, հա՛յր իմ, ներումն կը խնդրեմ, հանդարտե։

ԹՈՎՄԱ.— Աղջի՛կս, չես գիտեր թե անոթությունը ո՛րչափ սոսկալի է...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Գիտեմ, հա՛յր իմ... (ճառաչելով) Եղուա՛րդ...

ԹՈՎՄԱ.— Այդ անունը մի տար։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ինչո՞ւ, հա՛յր իմ։

ԹՈՎՄԱ.— Վասնզի քաջությունդ կը նվազի։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ընդհակառակն, հա՛յր իմ, հիմա կզգամ որ զինքը պիտի ազատեմ փողոցներու մեջ անպաշտպան, հիվանդ և անոթի մեռնելե... արդյոք խեղճ Ռաֆայելս ի՞նչ կընե այս վայրկենիս։

ԹՈՎՄԱ.— Կաղաչեմ, Վարդուհի՛, փարատե այդ մտածմունքը, վասնզի դու լալով սիրտս թունդ կը հանես... գիտեմ, անիրավություն ըրի Եղուարդը ճամբելով, բայց ի՞նչ կրնայի ընել, երբ ոստիկանության պիտի մատնվեի, թե իր և թե քու վիճակդ գեշ պիտի ըլլար. մտածեցի որ օր հառաջ գործ մը գտնելով կրնար զքեզ և զինքը խնամել, բայց հիմա որ հարուստ պիտի ըլլանք...

ՎԱՐԴՈՒՀԻ.— (ընդմիջելով) Կը հասկնամ, հա՛յր իմ...

ԹՈՎՄԱ.— Վարդուհի, շատ պիտի ատե՞ս զիս։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ընդհակառակը գոհ պիտի ըլլամ... վասնզի դու և Եղուարդ անոթութենե և աղքատութենե պիտի ազատիք...

ԹՈՎՄԱ.— Մանավանդ մուրալե...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Տես, հա՛յր իմ, ալ գոհ եմ և կը ժպտիմ... (կը ջանա ժպտիլ)։

ԹՈՎՄԱ.— Վարդուհի՜... աղջի՛կս։

ՎԱՐԴՈՒՀԻ.— (կարմրելով, աչերը խոնարհելով և գրեթե թոթովելով) Հա՛յր իմ, արդյոք այն մարդը երիտասա՞րդ է։

ԹՈՎՄԱ.— Ինչո՞ւ կը հարցնես։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ա՜հ չըլլա որ անհաճո դեմք մ՚ունենա, կը վախնամ, կը սոսկամ որ քաջությունս կը պակսի... գիտես որ վախկոտ եմ։

ԹՈՎՄԱ.— (հուսահատությամբ...) Ա՜հ, սոսկալի բան է այս։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Մի՛ բարկանար, հա՛յր իմ, սիրտս ամուր կը բռնեմ... ալ ամեն բանի պատրաստ եմ... եթե ճիվաղ մ՚ալ ըլլա, պիտի գրկեմ, որպեսզի դուք երջանիկ ըլլաք... գո՞հ ես, հա՛յր իմ...

ԹՈՎՄԱ.— Վարդուհի, ալ բավական է... ինձ մի հարցներ...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Կուզե՞ս որ սենյակս քաշվիմ։

ԹՈՎՄԱ.— Դու գիտես։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Դու հոս պիտի ըլլաս, այնպես չէ՞։

ԹՈՎՄԱ.— Այո՛։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Կաղաչեմ, եթե Եղուարդ առանց հացի գա այս իրիկուն, մի վռնտեր։

ԹՈՎՄԱ.— Անտարակույս (մեկուսի) բայց եթե Նահապետոֆ հո՞ս ըլլա...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Սենյակս կերթամ, հա՛յր իմ...

ԹՈՎՄԱ.— Բայց միթե՞...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Դեռ ըսելիք մ՚ունի՞ս, հա՛յր իմ։

ԹՈՎՄԱ.— Արդյոք առանձին լալու համա՞ր սենյակդ քաշվիլ կուզես։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ո՛չ, հա՛յր իմ... այլ կը խոստովանիմ որ միանակ ըլլալ կուզեմ... դու անփույթ եղիր... (մեկուսի) ո՞վ պիտի օգնե ինծի, հրեշտա՞կը թե սատանան (Վարդուհի կը մեկնի. Թովմա աթոռի մը վրա կիյնա մտազբաղ)։

Տեսիլ Բ

Թովմա և Մակար

ՄԱԿԱՐ.— (ձեռքը մախաղ մը՝ մտնելով, մեկուսի) *Խիստ լավ խելք մը մտածեցի. 50 հատ հրաշագործ ոսկի այս մարդուն հանձնելու տեղ, տիրոջս սնտուկին տակ մնացած նենգյալ դրամ-*

ներե 50 ոսկի գտա և պիտի տամ... (մախաղը կը բանա և խակ մը կը հանե): Ահա նենգյալ ոսկիները, որ գուտ և բուն ոսկի ըլլալու համար կեղծ ըլլալեն ուրիշ պակասություն չունին... խեղճ մարդը քար պիտի կտրի, երբ նենգյալ ըլլալն իմանա. ոստիկանության ալ չի պիտի կրնա բողոքել, վասնզի ոստիկանությունը անշուշտ պիտի հարցնե թե այն կեղծ դրամները փոխարեն ի՞նչ տված է. պատասխանը ամոթահարություն է... և այս մարդն ալ շատ խղճահար ըլլալեն գատ՝ միանգամայն վախ մ'ալ կունենա որ դրամանենգ չամբաստանվի... եթե գա բողոքելու տիրոջս, այն ատեն բան մը կրնենք... (Թովմայի մոտենալով և անոր ուսին զարնելով) պարո՛ն Թովմա...

ԹՈՎՄԱ.— (շփոթած՝ ոտք ելնելով) Դուք հո՞ս... պարոն...

ՄԱԿԱՐ.— Տերս հոս է... պատրաստ ես։

ԹՈՎՄԱ.— Իմացուցեք իրեն, որ կրնա ներս մտնել... (Նահապետոֆ ներս կը մտնե. մեկուսի) Չեմ ճանչեր այս մարդը։

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Ո՞ւր է ինքը։

ԹՈՎՄԱ.— Հոս, իր սենյակն է, պարո՛ն։

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Կրնա՞մ տեսնել։

ԹՈՎՄԱ.— Անտարակույս, պարո՛ն... (Նահապետոֆ կակնարկե Մակարի):

ՄԱԿԱՐ.— (խակը տալով) 50 ոսկի է, պարո՛ն Թովմա...

ԹՈՎՄԱ.— Շնորհակալ եմ։

ՄԱԿԱՐ.— Տե՛ր իմ... (Նահապետոֆ երթալու հրամայական նշան կրնե Մակարի, որ խոնարհելով կը մեկնի. Նահապետոֆ սենյակը կը մտնե):

Տեսիլ Գ

Թովմա և Եդուարդ

ԵԴՈՒԱՐԴ.— (ներս մտնելով) Հա՛յր իմ...

ԹՈՎՄԱ.— Դո՞ւն հոս...

ԵԴՈՒԱՐԴ.— Ներե, հա՛յր իմ, եթե համարձակեցա ներս մտնելու, վասնզի 5 ֆրանք վաստկեցա... ահա քեզի կը հանձնեմ...

ԹՈՎՄԱ.— Շա՜տ ուշ հասար... վասնզի ես արդեն շատ ունիմ (Խանկն ոտքին մեջ թաթվելով) ոսկի են ատոնք, ոսկի՜...

ԵԴՈՒԱՐԴ.— Ուրեմն հարուստ ենք... և ալ չի պիտի վռնտես զիս... Վարդուհիին քով պիտի կենամ ալ... բայց ո՞ւր է Վարդուհի։

ԹՈՎՄԱ.— Չես կրնար տեսնել զինքը։

ԵԴՈՒԱՐԴ.— Ինչո՞ւ, հա՛յր իմ, միթե իր սենյակը չէ՞ (կուզե երթալ)։

ԹՈՎՄԱ.— (առաջքն առնելով) Հոս չէ։

ԵԴՈՒԱՐԴ.— Մի բարկանար, հա՛յր իմ... կսպասեմ որ գա... բայց միթե իրավունք չունի՞մ զինքը փնտռելու, ես՝ որ ամբողջ օր մը զինքը չը տեսած անցուցի և...

ԹՈՎՄԱ.— Դարձյալ պետք չէ որ տեսնես զինքը։

ԵԴՈՒԱՐԴ.— Ի՞նչ կըսես, հա՛յր իմ... չեմ հասկնար... բայց...

ԹՈՎՄԱ.— Եվ էր հրամայեմ որ հիմա դուրս ելնես։

ԵԴՈՒԱՐԴ.— Չիս կը վռնտե՞ս դարձյալ։

ԹՈՎՄԱ.— Այնպես պետք է... (բարկացած՝ հրամայական նշան կրնե. Եդուարդ սարսափած կը մեկնի): (Վարագույրը կիջնե)։

ԱՐԱՐՎԱԾ Գ

Թովմայի տնակին մեջ սենյակ մը։

Տեսիլ Ա

Թովմա (առանձին, որ հուսահատ և մտահոգ ներս կը մտնե)

Վատությո՛ւն... սոսկալի վատությո՛ւն... այն դրամներն կեղծ են եղեր. ա՜հ, շարաչար խաբեցին զիս... ի՞նչպես պիտի նայիմ աղջկանս երեսը... որ ձեռքս անբիծ ճակտին դրի, արդարացուցի զինքը, ներեցի իր անպատվությանը, բայց չը մտածեցի որ իմ գլխուս վերև ալ ուրիշ ձեռք մը կա, անողոք և արդար ձեռք մը՝ որ զիս անիծեց... Ավա՜ղ, թեթև բեռ մ'ունեի, մուրացկանի տոպրակ մը և տրտնջացի. իսկ հիմա սրտիս վրա երկաթե ձեռք մը կա, որ միշտ կը ճնշե... աղջկանս անմեղ սրտին վրա գերեզմանաքար մը թավալեցի. աղջիկ մը վարդի պես շուտ կը թոռմի... մեռա՜վ աղջիկս... և ես իրավունք ալ չունիմ իր վրա լալու, վասնզի գահիճը գլխատյալին վրա չի լար... ա՜հ, այս միայն կը պակսեր կործանյալ Մուրատոֆին... Հարո՜ւստ մարդիկ, ի՞նչ կուզեք աղքատներեն... ատոնք աղ

պատիվ ունին... ներեցեք միայն եթե դրամե կը շլանան, վասընզի աշխարհի վրա կարոտ են և շատ անգամ անոթի՜... իսկ եթե այն դրամն ալ կեղծ ըլլա... սոսկալի՜ բան է... սոսկալի՜... ի՞նչպես չընդունեի, երբ այն սապատողն սատանան բավական հարստություն կը խոստանար ինձ, մինչդեռ ես մուրացկան, պարտապան, անոթի էի և կուզեի վերականգնել... մեռնե՞ի... ո՜չ... վասնզի կուզեի վրեժ առնել աշխարհեն... բայց աշխարհ ինձնե վրեժ առա՜վ... ա՜հ, ի՞նչ ընեմ... մատնեմ այն վատը... բայց ի՞նչպես... եթե արդարության ատենին դիմեմ, պիտի ըսեն թե ի՞նչ տվիր այս նենգյալ դրամներուն փոխարեն... ի՞նչ պատասխան տամ... ի՞նչ ընեմ... ոչի՜նչ... թշվառ մ'ըլլամ և անիծե՜մ... (աթոռի մը վրա կիյնա հուսահատ):

Տեսիլ Բ

Թովմա և Սալոմոն

ՍԱԼՈՄՈՆ.— Տեսնենք, եղբայր Թովմա, անշուշտ մեր ստակները պատրաստեցիր, վասնզի Նահապետոֆի մատակարարին հոս գալը քեզի շատ նպաստավոր կերևեր, մանավանդ որ ինքը հավաստեց թե քանի մը օրեն պիտի տաս ստակս։

ԹՈՎՄԱ.— Վա՜տ մ'է այն մարդը։

ՍԱԼՈՄՈՆ.— Ինչո՞ւ։

ԹՈՎՄԱ.— Ահա այսչափ։

ՍԱԼՈՄՈՆ.— Կաղաչեմ, եղբայր Թովմա, այդպիսի վարպետ ձևերով մի ջանար օր օրի ձգելու պարտքդ... հավատա որ այս օրերս շատ պետք ունիմ դրամի։

ԹՈՎՄԱ.— Ես ալ։

ՍԱԼՈՄՈՆ.— Բայց դու բավական ստակ առած ըլլալու ես։

ԹՈՎՄԱ.— Ի՞նչ քանի համար։

ՍԱԼՈՄՈՆ.— Ես գրեթե բավական կը գուշակեմ։

ԹՈՎՄԱ.— Ի՞նչ է գուշակածդ։

ՍԱԼՈՄՈՆ.— Աղջիկդ գեղեցիկ է։

ԹՈՎՄԱ.— Ի՞նչ բանել կուզես։

ՍԱԼՈՄՈՆ.— Նահապետոֆ զայն տեսած ըլլալու է։

ԹՈՎՄԱ.— Ի՞նչ կրնա ըլլալ ատկե։

ՍԱԼՈՄՈՆ.— Շատ բան կրնա ըլլալ։

ԹՈՎՄԱ.— Զգուշացի՛ր... պարո՛ն... եթե մեկ մ'ալ այդպիսի խոսք մը հանես բերնեդ, կը ջախջախեմ քեզ։

ՍԱԼՈՄՈՆ.— Մի՛ բարկանար, եղբայր Թովմա, իրավունք ունիս... այդ իմ խառնվելիք գործս չէ, ես միայն ինծի տրված ստակն առնելու պարտական եմ, ինծի չը վայլեր հասկնալ թե այն ստակը ի՞նչպես վաստակված է։

ԹՈՎՄԱ.— Հրեա՛, ի՞նչ ըսի քեզի։

ՍԱԼՈՄՈՆ.— Ա՜, իրավունք ունիս... բայց դու ալ գործը մի երկարեր. ստակներս տուր որ բերանս գոցեմ, գործիս երթամ... օ՜ն, տեսնեմ սա երկու ամբողջ ոսկին որ իմ բոլոր առնելիքս է... եթե կուզես լավ խելք մը բանեցնել, քանի մ'ամսվան վարձքս ալ կանխիկ տուր որ ետքը չունեցած ժամանակդ դժվարություն չը կրես։

ԹՈՎՄԱ.— (մեկուսի) Ո՜չ... այս մարդը ինծի պես տխմար չէ և վերջը գեշ կըլլա։

ՍԱԼՈՄՈՆ.— Քեզի կըսեմ, եղբայր Թովմա... չե՞ս լսեր։

ԹՈՎՄԱ.— Ի՞նչ կըսես։

ՍԱԼՈՄՈՆ.— Կըսեմ որ եթե հիմա տաս, վերջը դժվարություն չըլլար։

ԹՈՎՄԱ.— Ի՞նչ պիտի տամ։

ՍԱԼՈՄՈՆ.— Ետքեն գալիք քանի մը ամսվա վարձքը (Թովմա դառնությամբ կը ծիծաղի), ի՞նչ կը խնդաս... գե՞շ խելք է այս...

ԹՈՎՄԱ.— Պարո՛ն, պարապ տեղը կը ցամքեցնես բերանդ։

ՍԱԼՈՄՈՆ.— Եթե չես ընդունիր իմ առաջարկությունս, որ շատ նպաստավոր է քեզի, դու գիտես... առայժմ սա առնելիքս տուր որ երթամ... ժամանակը կանցնի... պիտի երթամ։

ԹՈՎՄԱ.— Կրնաս երթալ։

ՍԱԼՈՄՈՆ.— Բայց կատակը մեկդի, եղբայր Թովմա։

ԹՈՎՄԱ.— Կատա՜կ... կատակին աղեկը ինծի ըրին։

ՍԱԼՈՄՈՆ.— Բայց վերջապե՞ս։

ԹՈՎՄԱ.— Ի՞նչ ըսել կուզես։

ՍԱԼՈՄՈՆ.— Տեր Աստվա՜ծ... քու ականջիդ թմբո՞ւկ զարնելու է որ իմանաս... քեզի ըսի թե գործ ունիմ, օրը կը տարաժամի...

ԹՈՎՄԱ.— Ես ի՞նչ ընեմ... ազատ ես երթալու։

ՍԱԼՈՄՈՆ.— Բայց զիս կը կատղեցնես։

ԹՈՎՄԱ.— Որչափ որ կատղիս, ինծի չափ չես կրնար կատղիլ։

ՍԱԼՈՄՈՆ.— Եվ այս կատակերգության վե՞րջը։
ԹՈՎՄԱ.— Ողբերգության չը դառնալու համար կրնաս դուրս ելնել։
ՍԱԼՈՄՈՆ.— Բայց ի՞նչ է քու միտքդ։
ԹՈՎՄԱ.— Ես ո՛չ միտք մ՚ունիմ և ո՛չ ալ դրամ մը...
ՍԱԼՈՄՈՆ.— Սուտ կը խոսիս, վասնզի աղեկ գիտեմ որ...
ԹՈՎՄԱ.— (ընդմիջելով) Լռե՛... չեմ կրնար մտիկ ընել քեզ։
ՍԱԼՈՄՈՆ.— Բայց վերջապես ի՞նչ պիտի ընենք քեզի հետ։
ԹՈՎՄԱ.— Ինչ որ կուզես, այն ըրե...
ՍԱԼՈՄՈՆ.— Կուզես որ ամեն տեղ տարաձայնե՞մ աղջկանդ...
ԹՈՎՄԱ.— (կոուփնեռով վրան վազելով) Եթե կուզես որ գլուխդ չափաչափեմ։
ՍԱԼՈՄՈՆ.— (սարսափելով) Ա՜հ... օգնու...
ԹՈՎՄԱ.— Լռե՛։
ՍԱԼՈՄՈՆ.— Ներե, պարո՛ն...
ԹՈՎՄԱ.— Դուրս պիտի ելնե՞ս։
ՍԱԼՈՄՈՆ.— Այո՛. պարոն... կելնեմ...
ԹՈՎՄԱ.— Օ՜ն, ուրեմն, կռնակդ տեսնեմ...
ՍԱԼՈՄՈՆ.— Բայց ի՞նչ իրավունք ունիս իմ տունես վռնտելու զիս...
ԹՈՎՄԱ.— (վրան հարձակելով) Դեռ կեցեր կը խոսի՞ս...
ՍԱԼՈՄՈՆ.— Կերթայի, պարո՛ն...
ԹՈՎՄԱ.— Գնա՛ ուրեմն...
ՍԱԼՈՄՈՆ.— Բայց մեծ անիրավություն...
ԹՈՎՄԱ.— Գծուծ Հրեա... (վրան կը վազե և Հրեայն սարսափած կը փախչի) Աղջկանս սենյակը ոտքի ձայն մը կա. ինքն է... արթնցեր է... ի՞նչպես երեսը պիտի նայիմ և պատասխան պիտի տամ... բոլոր ջիղերովս կը ցնցվիմ... սիրտս կը նվաղի... ա՜հ, ո՞վ վեր պիտի վերցնե ամոթեն աղջկանը առչև խոնարհած տարաբախտ հոր մը ճակատը...

Տեսիլ Գ

Թովմա և Վարդուհի

ԹՈՎՄԱ.— (մեկուսի) Ինքն է...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Բարի լույս, հա՛յր իմ...
ԹՈՎՄԱ.— (աղջկան առջև՝ ի ծունր և երեսը ծածկելով) Աղջի՛կս...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Ի՞նչ կըլլաս, հա՛յր իմ... ոտք ել... (կը ջանա ոտք հանել)։

ԹՈՎՄԱ.— Ո՛չ, ո՛չ, ինչվան որ չը ներես, չի պիտի ոտք ելնեմ...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց ի՞նչ կա քեզի ներելու, հա՛յր իմ...
ԹՈՎՄԱ.— Վասնզի շատ թշվառ ըրի քեզ։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Բնավ, հա՛յր իմ, ես երջանիկ եմ քանի որ դու և եղբայրս այլևս չի պիտի մուրաք փողոցները... միթե ալ հարուստ չե՞նք...
ԹՈՎՄԱ.— Ա՜հ, եթե գիտնայիր, Վարդուհի՛։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց ի՞նչ կա, հա՛յր իմ։
ԹՈՎՄԱ.— Նախ ներե ինձ։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Միթե ես աղջիկդ չե՞մ։
ԹՈՎՄԱ.— Բայց դու անմեղ ես, իսկ ես ոճրագործ մ՚եմ... դու կրնաս ներել ինձ, իսկ ես չեմ կրնար օրհնել քեզ։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Քու ըրածդ բնավ ոճիր չէ, հա՛յր իմ... ի՞նչ կրնայինք ընել առանց ստակի և առանց հացի։
ԹՈՎՄԱ.— Այնպես չէ՞։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց ոտք ել, հա՛յր իմ, մոռնանք անցյալը... և ապագային մեր ապահով բարօրությունը վայելենք։
ԹՈՎՄԱ.— Եթե գիտենայի՞ր, խե՜ղճ աղջիկ...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց ի՞նչ պատահեցավ, հա՛յր իմ...
ԹՈՎՄԱ.— Եթե ներես, կը խոսիմ։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Ո՛չ միայն ներել, այլ, եթե դժոխոց բոցերուն մեջ ալ ըլլաս, քեզ կը փարիմ անբաժան, հա՛յր իմ... (անոր փարելով ոտք կը հանե)։
ԹՈՎՄԱ.— Աղջի՛կս... հրեշտա՛կս...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Ի՞նչ ունիս, հա՛յր իմ...
ԹՈՎՄԱ.— Որչա՜փ դեղներ ես, Վարդուհի՛... որչափ լացեր ես...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց, հա՛յր իմ...
ԹՈՎՄԱ.— Վարդուհի՛, եթե քու տեղդ ըլլայի, այսպիսի հոր մը չը ներելե զատ՝ դահիճե մ՚ավելի սոսկալով կը խորշեի անկե... վասնզի ցած դահիճին զարկածն իր արյունը չէ...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Հա՛յր իմ...
ԹՈՎՄԱ.— Մի՛ կոչեր զիս հայր... կը մեղանչես, անմեղ աղջիկ... փախի՛ր, սոսկա՛ ինձմե, անիծե՛ զիս... ես քու հայրդ չեմ, մի՛ մոտենար... Միթե չե՞ն ատեր, չե՞ն զարներ, չե՞ն ջախջախեր հայր մը, որ իր աղջկան պատիվը կը ծախե նենգյալ դրամներով...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Ի՞նչ կըսես, հա՛յր իմ...

ԹՈՎՄԱ.— Ճշմարիտը... խաբեցին զիս...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Խե՜ղճ հայրս...
ԹՈՎՄԱ.— Ի՞նչ, զի՞ս կը մեղքնաս։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Վասնզի դու ինձնե ավելի թշվառ ես... ես քանի մը գաղտնի արցունք թափելով անցուցի այն ճգնաժամը... իսկ դու...
ԹՈՎՄԱ.— Աստվա՜ծ...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց միթե այն ատեն չի՞ պիտի ստիպվեինք անոթութենե նվաղիլ։
ԹՈՎՄԱ.— Իսկ հիմա՞։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Ճշմարիտ է...
ԹՈՎՄԱ.— Բայց ես դարձյալ կը մուրամ...
ՎԱՐԴՈՒՀԻ.— (գետինը դրամ մը տեսնելով և առնելով) Ի՞նչ է այս, հա՜յր իմ, տե՜ս, հինգ ֆրանքնոց մը։
ԹՈՎՄԱ.— (ճիչ մ'արձակելով) Ա՜հ... այո, Եդուարդ բերավ երեկ իրիկուն... քեզ տեսնել ուզեց...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Եվ դու ճամբեցիր զինքը... այնպես չէ՞...
ԹՈՎՄԱ.— Ըսելով թե ինքը հոս չէ... Գիտես որ ստիպված էի...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Այո՜... հա՜յր իմ... արդյոք ի՞նչ եղավ խեղճը. հիմա ո՜րչափ հուսահատած է և մեկ մ'ալ մեր տանը սեմը ոտք չի պիտի կոխե, վասնզի երկրորդ անգամ վռնտեցիր զինքը։
ԹՈՎՄԱ.— Անհոգ եղիր, Վարդուհի, ես զինքը կը գտնեմ, կը բերեմ և մուրալով առաջվան պես կապրինք։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Բարեսի՜րտ հայրս...
ԹՈՎՄԱ.— Զավակնե՜րս, սիրեցեք զիրար և ինծի համար աղոթեցեք այսուհետև։

Տեսիլ Դ

Նույնք, Սալոմոն, ոստիկանության տեսուչ մը, Ոստիկան

ՍԱԼՈՄՈՆ.— Պարոն ոստիկան, բռնել տվեք այս մարդը...
ԹՈՎՄԱ.— Հրեա՜յն է։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Աստվա՜ծ իմ։
ՈՍՏԻԿԱՆ.— Պարո՜ն, հանուն արդարության ատենին կը ձերբակալեմ քեզ. դատախազդ այս Հրեայն է։

ՍԱԼՈՄՈՆ.— Ինքը կը ճանչե զիս։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Հա՜յր իմ...
ԹՈՎՄԱ.— Աղջի՜կս...
ՎԱՐԴՈՒՀԻ.— (ցած) Սա հինգ ֆրանքնոցը տանք, հայր իմ, գուցե...
ԹՈՎՄԱ.— (ցած) Այդ չը բավեր, աղջիկս, զայն քովդ պահե, եթե ոչ անոթի կը մնաս հոս։
ՎԱՐԴՈՒՀԻ.— (ցած) Իրավունք ունիս... ա՜հ ի՞նչ դժբախտություն էր այս...
ՍԱԼՈՄՈՆ.— Օ՜ն, շուտ, պարոն տեսուչը քեզ կսպասե...
ԹՈՎՄԱ.— (առ ոստիկանն) Քանի մը վայրկյանի համար ներողամիտ եղեք, պարո՜ն... (ցած՝ առ աղջիկն) գոնե սա վերարկուս քեզ ձգեմ որ հին գնող Հրեայի մը ծախես, երբ հինգ ֆրանքնոցը հատնի...
ՎԱՐԴՈՒՀԻ.— (ցած) Ո՜չ, ո՜չ, հայր իմ, բանտը ցուրտ է, կը մսիս... Անփույթ եղիր, Աստված բոլորովին երեսե չը ձգեր մեզ...
ԹՈՎՄԱ.— (նույնպես) Աղջիկս, ինքզինքդ աղեկ խնամե... չը հիվանդանաս...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Ինքզինքս Աստուծո կը հանձնեմ։
ԹՈՎՄԱ.— Եթե Աստված մը կա, թող լսե քեզի...
ՍԱԼՈՄՈՆ.— Երկար ըրիր, եղբա՜յր Թովմա։
ՎԱՐԴՈՒՀԻ.— (ցած) Անգո՜ւթ Հրեա։
ԹՈՎՄԱ.— Վաղը գուցե քեզ ալ վռնտե տունեն... և այն ատեն... (Վարդուհի մատովը երկինքը կը ցուցնե) Աղջի՜կս...
ՈՍՏԻԿԱՆ.— Օ՜ն, առջևս ինկիր, պարո՜ն, շատ սպասեցինք...
ԹՈՎՄԱ.— Ներեցեք, պարո՜ն... մնա՜ս բարով, աղջի՜կս...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Հա՜յր իմ... (գիրկընդխառն կը մեկնին)։

Տեսիլ Ե

Վարդուհի (մինակ)

Մնա՜ք բարյավ, դուք՝ պերճության, գեղեցկության, անմեղության և սիրո օրեր... մնա՜ք բարյավ, խարխուլ աթոռակներ, ուր Եդուարդի և հորս հետ կը նստեինք քով քովի. մնա՜ս բարյավ, տխուր սեմ, ուրկե անցավ Եդուարդս արցունք կաթեցնելով և հայրս՝ վշտահար ճակտով. մնա՜ս բարյավ, գծուծ օթևան, որ իմ ամոթահար ճակատս տեսար... մնա՜ս բարյավ Եդուա՜րդ, Եդուա՜րդ... (կը մեկնի.— պատկերը կը փոխվի)։

ՊԱՅԿԵՐ Բ

Տնօրենին սենյակը. խորը դռնակ մը։

Տեսիլ Ա

Պողյանց և Վահագնյան

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— *Իմացա որ այսօր նոր դերասանուհի մը պիտի գա։*

ՊՈՂՅԱՆՑ.— *Այո՛, նամակով մ'իմացուցած էր ինձ թե արդյոք կրնա՞ խումբին մեջ իբր դերասանուհի ընդունվիլ. ես ալ պատասխանեցի որ եթե հաճի, կրնա ինծի ներկայանալ և խոսիլ։*

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— *Եթե ընդունելու պայմաններն հաջողին, շատ շատ աղեկ պիտի ըլլա, վասնզի հեղինակին մեկը ելեր չորս դերասանուհի պարունակող խաղ մը հեղինակեր է...*

ՊՈՂՅԱՆՑ.— *Խաղն ի՞նչպես է։*

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— *Ժամանակակից, բավական գարձվածքներով և բարբարական դասերով համեմված։*

ՊՈՂՅԱՆՑ.— *Անունն ի՞նչ է։*

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— *Պարունակությունը հայտնելու վերջն այդպես հետաքրքրությամբ անունը հարցնելդ ի՞նչ պիտի ըլլա։*

ՊՈՂՅԱՆՑ.— *Գործը անունին վրա է։*

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— *Անունը խորհրդավոր անուն մ'է. «Գաղտնիք մուրացկանին»։*

ՊՈՂՅԱՆՑ.— *Ա՜հ, ըսել է որ այդ խաղը չը կրնար ներկայացվիլ։*

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— *Ինչո՞ւ։*

ՊՈՂՅԱՆՑ.— *Միթե կարելի՞ է որ այդ խաղն անունը փոխելով մեր մեծ դյուցազներեն մեկուն ծանոթ անունը դրվի առժամանակյա կերպով։*

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— *Ո՛չ, այն խաղը ծանոթ դյուցազանց հետ բնավ հարաբերություն չունի։*

ՊՈՂՅԱՆՑ.— *Ուրեմն, ինչպես որ ըսի, չեմ կրնար ներկայացնել, վասնզի անանկ խաղերու շնորհիվ կրած վնասներս մտածելով՝ գլուխս ուռեցավ... մեր հասարակությունը թատերագրերուն վրա խոշոր, փառավոր և ահավոր անուններ կը փնտռե, և անունեն կը գուշակե խաղին լավ կամ գեշ ըլլալը. եթե մեր հեղինակներեն մեկը խելք ունենա՝ «Կործանումն աշխարհի» կամ «Վերջին դատաստան» անունով խաղ մը գրե, ես ալ ազ-*

դին վրա «արտաքո կարգի փառավոր ներկայացում» մը կը գրեմ, թատրոնը լեցավ գնաց։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— *Իրավունք ունիս։*

ՊՈՂՅԱՆՑ.— *Խոսիլն ավելորդ է, քանի որ շատ փորձերով հաստատված է։*

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— *Բայց հայ հասարակության արդի հառաջընթացությունը նայելով ժամանակակից խաղերն ավելի հաճո և օգտակար պետք է համարվին իրեն։*

ՊՈՂՅԱՆՑ.— *Բայց ի՞նչպես կրնա գիտցվիլ այդ, քանի որ լրագիրներու միջոցավ թատրոնի հոռի կամ լավ վիճակին վրա խոսող չկա, և եթե թատերասեր անձ մը այդ նյութին վրա գրված հոդված մը լրագրի մը ղրկվի, լրագրին գրասենյակին մեկ անկյունը մնալով կը փոշոտի, լրագրապետին ընթացքը ալ չը դատաքննվիր, վասնզի մեր հասարակության մեջ թատրոնի և գրականական նյութերու վրա գրված հոդվածներ կարդացող չկա. ամենքն ալ քաղաքագետ են եղեր. խելքերնին ու մտածմունքնին տվեր են այն քաղաքագետ ճիվաղներու մեքենայությանց, որոնք քանի մը կանգուն հողի համար արյան հեղեղներ թափել կուտան և անոթի ընտանիքներ կը կազմեն... վերջապես ձմեռ գիշերները մեր հայ փոխքաղաքագետներն իրենց ակումբները թողլով թատրո՞ն պիտի գան կամ թատրո՞նը պիտի մտածեն... թատերաբեմը հոռին անդունդը կը նետե, կը թաղե և բարին կը վսեմացնե, կանմահացնե. թատրոնի ընծայած սիրո, եղբայրության, անձնվիրության, ընկերականության և խղճի օրինակը տեսնելե ավելի՝ Հայը կը զվարճանա պատերազմի սոսկալի պատկեր մը նկատելով...*

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— *Բայց այդ տրամախոհությունները գրագիտաց վերապահենք և մենք մեր գործին վրա խորհինք... մենք որ դերասան ենք, որչափ հեռու են մեզնե այդ տրամախոհությունները, մենք որ թուրակ ճանչցված ենք, եթե ակնոցավոր պարոն մը լսե, կը ծիծաղի մեր վրա։*

ՊՈՂՅԱՆՑ.— *Իրավունք ունիս... ի՞նչ բանի վրա կը խոսակցեինք։*

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— *Նորեկ դերասանուհվույն վրա։*

ՊՈՂՅԱՆՑ.— *Այո՛... տեսնենք, իր փափաքած արհեստին ընդունակ պիտի գտնե՞նք զինքը։*

Տեսիլ Բ

Նույնք, Վարդուհի, Ա. Դերասան, Բ. Դերասան, դերասանուհիք, դերասանք

ՎԱՐԴՈՒՀԻ.— (դերասանի մը) *Արդյոք կրնա՞մ տեսնել պարոն տնօրենը։*

ՊՈՂՅԱՆՑ.— (տեսնելով) *Ա՜, կարծեմ ինքն է...* (Վանագնյանի հետ Վարդուհիի կը մոտենան և անկյունը կեցած՝ ցած կը խոսակցին. նույնպես Ա. Բ. դերասանք և Ջիչիլ ասդին կեցած ցած կը խոսակցին):

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— *Տես, Ջիչիլ, նոր դերասանուհի մը... կը նախանձի՞ս...*

ՋԻՋԻԼ.— *Աստված չընե. ինձ համար ավելի աղեկ. բեռնավորված դերերես բավական կը թեթևնամ...*

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— *Ճշմարիտն ըսելով՝ մուրացիկ կնոջ մը դեր կատարելու շատ հարմար պիտի գա, վասնզի լալկան աչեր ունի։*

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— *Շատ կը սխալիք, ժաք, լավ սիրուհի մը կըլլա, այնպես չէ՞, Ջիչիլ։*

ՋԻՋԻԼ.— *Գուցե։*

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— *Ոչ, հակառակորդի դեր աղեկ պիտի հարմարի իրեն, վասնզի աչքերը խոշոր են։*

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— *Բայց գեղեցիկ։*

ՋԻՋԻԼ.— *Սակայն դեղնած և նիհար է։*

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— *Աղքատության մեջ տառապելուն նշան է այն։*

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— *Գրավ կը դնեմ որ լավ հակառակորդ մը կըլլա։*

ՋԻՋԻԼ.— *Կարծեմ իմ անձնականիս նկատմամբ է այդ խոսքը, ժաք, որ միշտ կը կրկնես։*

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— *Ամենևին, Ջիչիլ։*

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— *Իր վեհանձն շարժվածքն է որ այդպես կարծել կուտա քեզ, ժաք, բայց իր անուշ նայվածքն ո՞ւր թողունք որ բնավ հակառակորդի չը հարմարիր։*

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— *Բայց միթե սիրահար մը խաբելու պետք չըլլա՞ր։*

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— *Ատոր համար օձի նայվածք պետք է։*

ՋԻՋԻԼ.— *Վերջապես փորձն ամեն բան կը հայտնե։*

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— *Ջիչիլ իրավունք ունի։*

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— *Ես ալ իրավունք կուտամ այն խոսքին։*

ՋԻՋԻԼ.— *Ուրեմն դադրեցուցեք ընդունայն վիճաբանությունները։*

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— *Մոլիերի գլխուն վրա կերդնում, որ նորեկ դերասանուհվույն վրա եղած խոսակցությունը շատ կը նեղացնե Ջիչիլը։*

ՋԻՋԻԼ.— *Լռե՛, փողոցի մոլիեր։*

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— *Մեր ցայտող մոլիերը լռեց։*

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— *Այս ալ քու գյուտդ է, ժա՜ն։*

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— *Ահա ձեռքը մաս մը կուտան, ըսել է որ ընդունվեր է։*

ՋԻՋԻԼ.— *Ի՞նչ դեր է արդյոք։*

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— *Եթե ժանի դիտողությանը հավատք ընծայենք, գուցե Լուիզա Միլլերի դերն է, որ մոտերս պիտի ներկայացնենք։*

ՋԻՋԻԼ.— *Լուիզա Միլլերի՞։*

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— *Տես, ինչպե՜ս կը նախանձիս։*

ՋԻՋԻԼ.— *Շատ կը սիրեմ ես այն դերը։*

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— *Ֆերտինանտի դերն ալ արդեն նորեկ դերասան, Եդուարդի տվին։*

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— *Եդուարդ շատ պիտի հաջողի սիրահարության մեջ։*

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— *Առանց հակառակորդի դու մնացիր, ժա՜ք։*

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— *Իմ հակառակորդս և սիրահարս գինին է։*

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— *Պարոն դերասաններ, թատերաբեմը երթանք, փորձը պիտի սկսինք* (ամբոխը կը մեկնին. Վարդուհի մինակ կը մնա՝ ձեռքը թղթի ծրար մը):

Տեսիլ Գ

Վարդուհի և Եդուարդ

ԵԴՈՒԱՐԴ.— (դռնեն երևնալով, մեկուսի, մինչդեռ Վարդուհի կռնակը անոր դարձուցած ձեռքի դերն ալ կանցնե) *Նորեկ դերասանուհի՞ մը... ո՞վ է արդյոք...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— (դառնալով, Եդուարդը տեսնելով և ճիչ մը արձակելով) *Ա՜հ...*

ԵԴՈՒԱՐԴ.— (զարմացած) *Վարդուհի՞...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— (գիրկը իյնալով) *Եդուա՜րդ...*

ԵԴՈՒԱՐԴ.— *Բայց ինչո՞ւ եկար հոս, Վարդուհի՞։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— Վասնզի մինակ մնացի։
ԵԴՈՒԱՐԴ.— Սակայն հա՞յրդ, որ զիս վռնտեց։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Հրեայն բանտ դնել տվավ զինքը։
ԵԴՈՒԱՐԴ.— Բա՜նտ... խե՜ղճ Վարդուհիս, որչա՜փ հալեր ու դեղներ ես։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Եթե հարցնե՞ս...
ԵԴՈՒԱՐԴ.— Կուլա՞ս... Վարդուհի՜... ի՞նչ ունիս։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Շա՜տ բաներ։
ԵԴՈՒԱՐԴ.— Պիտի պատմե՞ս։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Եթե զիս չատես։
ԵԴՈՒԱՐԴ.— Ի՞նչ ըսել կուզես...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Եդուարդ, ալ անմեղ Հուլիան չեմ ես...
ԵԴՈՒԱՐԴ.— Ինչո՞ւ...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Լլկյալ Ֆանթինն եմ։ (Վարագույրը կիջնէ)։

ԱՐԱՐՎԱԾ Դ

Եդուարդի հագնվելու սենյակը.— Աջ կողմը գռնակ մը։

Տեսիլ Ա.

Եդուարդ և Վարդուհի։

ԵԴՈՒԱՐԴ.— Այսպես ուրեմն, Վարդուհի։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Ի՞նչ ընեի, Եդուա՜րդ. հայրս անոթութենե չը մեռնելու համար ինքզինքը պիտի զարներ, եթե ամոթահար ճակատս իրեն առջև չը խոնարհեի և չըսեի. «Հա՜յր իմ, ալ քուկդ եմ»։ մանավանդ որ ասով կը կարծեի թե քեզ ալ փողոցներու մեջ անպաշտպան ու անոթի մնալե կազատեի, վասնզի չէի գիտեր որ պաշտպանություն գտած էիր... տես, Եդո՜ւարդ, առանց առաջուց ներում խնդրելու քեզնե՜ ահա ամենեն բան պատմեցի քեզի...
ԵԴՈՒԱՐԴ.— Անկարելի է որ չը ներեմ քեզ և չը սիրեմ, վշտահար հրեշտա՜կ...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Ա՜հ, հիմա ես ալ որչա՜փ կը սիրեմ զքեզ, Եդուա՜րդ։ այլ ամոթահա՜ր...

ԵԴՈՒԱՐԴ.— Մի ըսեր այդ խոսքը, Վարդուհի՜։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Երկու պարտք ունեի. նախ՝ հայրս բանտեն ազատել...
ԵԴՈՒԱՐԴ.— Այսօր բանտեն պիտի ելնե և հոս գա, վասնզի իր պարտքը վճարեցինք մեր վաստակովը։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Երկրորդ՝ վերջին անգամ քեզ տեսնել և հետո...
ԵԴՈՒԱՐԴ.— Հետո՞։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Ես գիտեմ ընելիքս։
ԵԴՈՒԱՐԴ.— Ի՞նչ պիտի ընես։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Դու թատերախաղ մը գրեցիր, որ մեր պատմությունն է և այս գիշեր պիտի ներկայացնենք։
ԵԴՈՒԱՐԴ.— Այո՜, բայց անի մինչև վերջը մեր ճշգրիտ պատմությունը չէ. անոր վերջը վիպասանական է. մեր պատմությունը մինչև մեր թատրոն մտնելը և դերասան ըլլալը կը հանգի, իսկ վերջին արարվածը բոլորովին մտացածին է։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Լավ ուրեմն, ես ալ կուզեմ թատերախաղը ճիշտ այնպես վերջացնել...
ԵԴՈՒԱՐԴ.— Ի՞նչ, թույն խմե՞լ։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Թույնն ալ պատրաստած եմ... պարզ բաղադրություն մը, զոր վիպասանության մը մեջ սորվեցա։
ԵԴՈՒԱՐԴ.— Ի՞նչ կըսես, Վարդուհի՜։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Ապրի՜լ... ա՜հ, Եդուա՜րդ, չե՜մ կրնար... քանի որ թատերախաղին վերջին խոսքերն արտասանեմ... թույնի տեղ չո՞ւր խմեմ և մա՜հ կեղծեմ... ո՜չ, ո՜չ... չե՜մ կրնար...
ԵԴՈՒԱՐԴ.— Բայց անկարելի է այդ, Վարդուհի...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Եթե զիս կը սիրես, Եդուա՜րդ, օգնե ինծի այս գերագույն ճգնաժամին։
ԵԴՈՒԱՐԴ.— Անգո՜ւթ, չե՞ս մտածեր զիս։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Դու անպատիվ չես և...
ԵԴՈՒԱՐԴ.— (ընդմիջելով) Վարդուհի՜...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Ա՜հ, որչա՜փ թշվառ եմ... թող որ երջանիկ ըլլամ...
ԵԴՈՒԱՐԴ.— Անգո՜ւթ, չես սիրեր զիս ուրեմն...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Մի՜ վիրավորեր զիս, Եդուա՜րդ, գոնե դու միայն այս աշխարհիս մեջ զիս սիրած և չը վիրավորած եղիր։
ԵԴՈՒԱՐԴ.— Մտածե թե ի՞նչ անողորմ հարված մը կուտաս ինձ... դու մեռնի՜ս... Վարդուհի, դո՞ւ, իմ պահապան հրեշտակս...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց ի՞նչ ընեմ, Եդուա՜րդ, կզգամ որ քիչ ժամա-

նակեն մայր պիտի ըլլամ... նախատալից մայր մը... ի՞նչ ընեմ...

ԵԴՈՒԱՐԴ.— Ա՜հ, սոսկալի է այդ։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Այսչափ ատեն շատ վիշտ կրեցի և համբերեցի, բայց չեմ կրնար մայրական ցավոց հանդուրժել... ա՜հ, տկար եմ, կին եմ... մանավանդ որ կը վախնամ... կը վախնամ ամոթահարութենե... կը սիրեմ զքեզ... Եդուարդ, նման այն փուշին, որ վարդին կուշտը կը սիրե...

ԵԴՈՒԱՐԴ.— Դու ինձ համար էակ չես, Վարդուհի՛, այլ ճառագայթ մը սրտիս խավարին մեջ... զեփյուռ մը՝ ցավագին ճակատիս, թել մը՝ իմ քնարիս... Մուրատոֆի ապարանին մեջ մանուկ էինք և կը խաղայինք ճոխությանց մեջ... հյուղի մը մեջ զիրար սիրեցինք, անոթության մեջ զիրար սիրեցինք, պլպլուն կանթեղի մը լուսովը խոսեցանք, ցուրտ քամին փչած ատեն իրարու շնչովը տաքցանք... վերջապես անոթությունն իրարմե բաժնեց մեզ, թշվառությունը միացուց... դարձյալ որբ ու լքյալ ենք... գրկենք ուրեմն այն աննշան ու անհիշատակ հողակույտը... որուն վրա քահանայն անգամ գուցե չը մրմռար և մենք առանց ձայնի իջնենք այն մութ և խաղաղ փոսը։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ի՞նչ, դո՞ւ ալ մեռնիլ կուզես։

ԵԴՈՒԱՐԴ.— Մեր պատմության մեջ Եդուարդ ալ թույն կը խմե... թույնը երկուքիս կը բավե, այնպես չէ՞ Վարդուհի՛... ապրելու համար հացը խնայությամբ կուտեինք, բայց մեռնելու համար պետք չէ որ թույնը խնայությամբ խմենք...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Եդուա՜րդ, եթե ճշմարիտը իմանալ կուզես, ես երկուքիս համար պատրաստեցի թույնը, վասնզի առանց քեզի մեռնելու համար քաջասրտությունս կը պակսի... բայց դարձյալ չէի կրնար համարձակիլ քեզ թույն առաջարկել՝ մտածելով որ գուցե դու չէիր ուզեր մեռնիլ, և հերիք կը սեպեիր քանի մ՚արցունք թափել իմ աննշան դագաղիս և հողակույտիս վրա... բայց կզգամ հիմա որ մեր սրտերն երկնային ճառագայթով մը միացած են անբաժան։

ԵԴՈՒԱՐԴ.— Որչա՜փ դժվար է աշխարհի վրա համազգաց սիրուհի գտնել, սիրվիլ անկե և մեռնիլ իրարու գիրկ՝ դարձյալ զիրար սիրելով. ապրի՞լ է այս՝ աշխարհային ժխորին մեջ, սիրե՞լ է այս. ո՛չ... ապրիլն այն է, սիրելն այն է, երբ մահվան դալուկն զգեցած երկու զվարթադեմ դիակ գիրկընդխառն կիջնեն այն

լռիկ փոսը... եթե երջանկությունը չեն զգար՝ թշվառություն, զրկանք, անոթություն ալ չե՞ն զգար...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ո՜հ, որչա՜փ քաղցր է բանաստեղծ մը սիրել և հետը մեռնիլ...

ԵԴՈՒԱՐԴ.— Դո՜ւ բանաստեղծ ըրիր զիս, Վարդուհի՛... դու մատրովակեցիր ինձ այն նեկտարը, որ սեր և բանաստեղծություն կը ներշնչե... այն նեկտարը քու նայվածքեդ և սրտեդ կը բխեր...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Եվ հիմա թույն կը մատուցանեմ։

ԵԴՈՒԱՐԴ.— Կընդունիմ, Վարդուհի՛, վասնզի այդ թույնն ալ Աստված և անմահություն ներշնչող նեկտարն է... (ձեռքը կը համբուրե)։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Եդուա՜րդ...

ԵԴՈՒԱՐԴ.— Վարդուհի՛... (կը գրկախառնին քանի մը վայրկյան՝ լուռ և արտասվալից...)

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ոտքի ձայն մը կը մոտենա... Եդուա՜րդ...

ԵԴՈՒԱՐԴ.— Գուցե հայրդ է, արցունքդ սրբե... մեր գաղտնիքը չիմացվի...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Այո, առանձին մեռնինք (արցունքը սրբելով)։

Տեսիլ Բ

Նույնք և Թովմա

ԹՈՎՄԱ.— (դուռը բանալով և ներս մտնելով ահռեղ կը մոտենա և փոփոխակի կը գրկե զանոնք) Ջալակնե՜րս... վերջապես բանտեն ալ ազատեցիք զիս... ա՜հ, երբեք երես ունենալու չէի ձեր դեմն ելնելու... բայց ի՞նչ ընեմ, զավակ եք և ես ալ թշվառ և ժանտ հայր մը գտնված եմ... ես որ կենացս մեջ խիստ քիչ անգամ լացեր եմ, այս վայրկենիս լալու անզուսպ փափաք մ՚ունիմ (կուլա, ներուսեն հնչակի մը ձայն կը լսվի) ի՞նչ ձայն է այս։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Պատրաստության նշան է, հա՛յր իմ։

ԹՈՎՄԱ.— Ի՞նչ պատրաստության։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Վարագույրը բացվելու մոտ է... հա՛յր իմ... պետք է որ բաժնվինք։

ԹՈՎՄԱ.— Բայց շատ քիչ տեսնվեցանք... ես շատ ներումներ պիտի խնդրեի ձեզնե։

ՖՈՒՐԻԱԲԳ.— Այսուհետև շատ կը տեսնվինք, հա՛յր իմ...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Դու հիմա գետնասարահը գնա և Եդուարդի հեղինակած թատերախաղին հանդիսատես եղիր։

ԹՈՎՄԱ.— Արդյոք որչա՞փ գերազանց պիտի ձևացնեք։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Պիտի տեսնես, հա՛յր իմ... (դռնակեն կը մեկնին։ Պատկերը կը փոխվի)։

ՊԱՏԿԵՐ Գ

Տեսարանն է թատրոնին ներքնակողմը.— Օթյակները և նստարանները լցված են հանդիսատեսաց բազմությամբ մը.— Վարագույրը դեռ բացված չէ։

Տեսիլ Ա

ԹՈՎՄԱ.— (մինչև վերջը մտազբաղ) Ա. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ, Բ. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ (թատերատեսներ ատոիին ցած կը խոսակցին)։

Ա. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ.— Վերջապես հինգերորդ արարվածին վարագույրը պիտի բացվի հիմա. տեսնենք խաղը ի՞նչպես պիտի վերջավորի։

Բ. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ.— Մինչև հիմա թե խաղին կապակցությունը լավ էին և թե այն երկու ամուսիներն սքանչելի կերպով կատարեցին իրենց դերը։

Ա. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ.— Բնավ չը հուսացվիր որ մեկ քանի ամսո դերասաններ եղած ըլլան։

Բ. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ.— Կերևի թե սիրահարյալ են իրարու։

Ա. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ.— Թող ըլլան, բայց միթե առանց դերասան ըլլալու՝ երկու սիրահարյալներ կրնա՞ն այս հրապուրիչ տեսարանն ընծայել... դյուրին բան չէ դերասան ըլլալ. թատրոնին բախտը դերասանի ձեռքն է. պետք է որ դերասանը գոնե լուս բանաստեղծ մ'ըլլա, որուն լեզվին տեղ հոգին խոսի, պետք է որ գլխուն մեջ բոց և սրտին մեջ ավյուն ունենա. դերասան մը իր ընդունակությամբը կրնա հեղինակության մը հարակից փայլ մը տալ, նույնպես կրնա իր ապիկարությամբը նսեմացնել այն փայլը։

Բ. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ.— Ձեր ըրած դիտողությունը շատ ճշգրիտ են, բայց խիստ քիչեր այդ մասին գիտակցություն ունին. շատեր զբոսնելու համար թատրոն կուգան և ոչ թե ներկայացված խաղին ոգվույն թափանցելու. նույնիսկ եթե արհեստի և գաղափարի թերությունք կան թատերախաղին մեջ, անոնց բոլորովին աչք կը գոցեն։ Եվրոպացիք գիտեն թատրոնին հարգը. թատրոններն անցյալ դարերուն հեղափոխությանց վառարաններ հանդիսացան, թատրոններն իբրև ժողովրդյան կրթարանները կը նկատվին, կըսեն, բայց ես կըսեմ թե անոր մարմինք կազմող բոլոր երակներուն կեդրոններն են. անոր հեղափոխությունն հարդարող հրաբուխներ են. անհնար է, որ մարդ Շեքսբիրի, Շիլլերի, Հյուկոյի և Տյումայի թատերգությունքը կարդացած ժամանակը չսքանչանա. կը պաշտեմ ես այդ հանճարները, ժողովրդոց այն շանթեռանդն ու կաթմիթ զավակները։

Ա. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ.— Ցավալի է որ մենք զրկված ենք ալսպիսի հոյակապ հեղինակներե։

Բ. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ.— Եթը քաջալերությունը պակսի, ամեն բան կը պակսի. եթե արարչագործության սքանչելիքը զգաստված չը քաջալերեին իրենց վսեմ արդյամբը, թերևս Աստված չէր կարողանար իր հակայական գործն հառաջ տանել։ Քաջալերությո՛ւն, մի՛շտ քաջալերություն վսեմ գործերու։ (Թատերատեսք վարագույրը քանալ տալու համար խառն ծափահարություն մը կսկսին) Տե՛ս, ահա մեր տված քաջալերությունք՝ շոր ծափահարություն մը (դարձյալ ծափահարություն)։

Ա. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ.— Այդ ծափահարությունն ալ կրնա դիտողություն վերցնել, վասնզի շատ անգամ կը տեսնեմ որ անտեղի ծափահարություններ ալ կըլլան, որոնք կրնան իրենց ծայրահեղությամբն ամեն բան շփոթել և երբեմն ալ իրենց անտեղի թերությամբը՝ բռնկած դերասան մը քար կտրեցնել (ծափահարություն)։

Բ. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ.— Կարծեմ թե վարագույրը պիտի բացվի, վասնզի հուշարարը իր տեղը մտավ։

Տեսիլ Բ

(Վարագույրը կը բացվի և ահա նկարչական վայր մը կերևի լերան մը ծոցը, ծառերով և ծաղիկներով զարդարված. առվակ մը կը սահի կերթա տեսարանին դեպի խորը)։

ՆՈՒՅՆՔ, ԵԴՈՒԱՐԴ և ՎԱՐԴՈՒՀԻ (ձևացյալ թատեր տեսարանին վրա.— Տեսարանին մինչև վերջն անընդհատ ծափահարություն):

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Հեռո՜ւ մեզնե այդ տուները, այդ շենքերը... հեռո՜ւ մեզնե այդ ամպերն անգամ... միմիայն այս ծառերուն տերևները թող պարածածկեն մեզ, միայն սա գեփյուռը թող մոտենա և միայն սա առվակը նայի մեզ... ա՜հ, սա տերևները, գեփյուռը և առվակն իրենց շշունջներովը բավական կրնան աղոթել մեր հոգվույն փրկությանը համար։*

ԵԴՈՒԱՐԴ.— *Եվ դու կը կարծես որ մեր հոգիները փրկելի՞ հոգիներ են, Վարդուհի՛... պետք է մեռնինք... այո՛, մեռնինք, վասնզի աշխարհս անհուն սև ամպ մ'է որ մեր սիրո արևը կը պարփակե զայն խեղդելու չափ... անկարելի է սիրել հոս... սերը ծաղիկ մ'է որ միայն երկնքին մեջ կը գտնվի, և մենք հոս միմիայն անոր բուրումը կրնանք զգալ... ա՜հ, տեսնենք ի՞նչ է այն սերը, որուն լոկ ցավերը կզգանք հոս միանգամայն։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Պիտի տեսնենք, Եդուա՛րդ, պիտի թողունք այս աշխարհը, յորում մարդիկ իրարու հավասար և եղբայր չեն, յորում միայն տկար արարածներն ամոթ, խիղճ և ցավ ունին. անգութ է այս աշխարհիս վերատեսուչը, քաղաքականությունն ըսել կուզեմ որ չը ներեր անոթիին կտոր մը հաց գողնալ՝ հարկավ ունեցողե մը, չը ներեր խեղճ աղջկան մը որ իր սիրույն մեջ խաբված է անոթի չը մնալու համար, կամ ստիպված է իր երկնային լոմայն ապօրինավորապես ծախսել... սիրելի մը և ալևոր հայր մը անոթի չը ձգելու համար* (սույն միջոցին Թովմա նստարանին վրա կը սարսռի):

ԵԴՈՒԱՐԴ.— *Կաղաչեմ, Վարդուհի՛, այդ ցավերը հոգվույդ մեջ մի՛ խորասուզեր, հիմա պիտի փշրեն զանոնք երկնքի ալիները մեր հոգիները կոծելով... հանդարտ ըլլանք, թողունք որ մեր օրհասին մեջ մեր հոգիները երկրի բուրումը վայելեն... հեռ ժամանակ կա թույնը ներգործելու... նստինք սա առվակին քով, սա աթոռաձև ժայռն վրա և առվակին հայելվույն մեջ մեր դալկությունը դիտենք...* (դեպի ժայռը կերթան իրարու կրթնած, Վարդուհի նստած ատեն կը դողդոջե) *կը դողդոջե՞ս, Վարդուհի՛։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Անշուշտ թույնի ներգործությունն է որ կզգամ։*

ԵԴՈՒԱՐԴ.— *Ուրեմն ինչո՞ւ չը փութար ինձ ալ ներգործելու այդ թույնը, անկարելի է որ վայրկյան մը իրարմե անջատյալ մնանք... ա՜հ, կը հասկնամ քեզ շուտ ներգործելուն պատճառը... ագա՜հ, դու ինձնե առաջ և քու բաժինեդ ավելի խմեցիր։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Վասնզի քեզնե ավելի ծարավի էի մահվան։*

ԵԴՈՒԱՐԴ.— *Ի՞նչ կզգաս, Վարդուհի՛։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Երակներուս մեջ թմրեցուցիչ հյութ մը կը հոսի... ա՜հ, որչա՜փ թեթև և երջանիկ կըլլա եղեր դողդոջ էակ մը։*

ԵԴՈՒԱՐԴ.— (ինքզինքը զննելով, ճանկարծ) *Վարդուհի, ես ալ բան մը կզգամ, ա՜հ, միատեղ պիտի մեռնինք...* (կընդգրկե զՎարդուհի):

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Կուրծքդ ավելի մոտեցուր կուրծքիս, Եդուարդ, թող մեր սրտից տրոփյուններն իրարու խառնված աղոթք մ'ըլլան առ Բարձրյալն... վասնզի սրտերը շուրթերեն ավելի մաքուր կըլլան։*

ԵԴՈՒԱՐԴ.— *Այո...* (Վարդուհին դիտելով) *ա՜հ, որչափ գեղեցկացեր ես, Վարդուհի՛, մինչև հիմա այսչափ ճառագայթալից տեսած չէի քեզ... միթե երկնքի առաջին ալինե՞րն են այդ ճառագայթները, ուր կը բարձրանան մեր հոգիները...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Եվ միթե Աստուծո աթոռին նայելու համար ադամանդյա աչե՞ր պետք են... այն ահավոր փառաց ցոլմունքեն չը շլանալու և չը փշրվելու համար...* (դողդոջուն՝ Եդուարդի վրա կընկնի):

ԵԴՈՒԱՐԴ.— *Ի՞նչ կըլլաս։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Կայրի՜մ։*

ԵԴՈՒԱՐԴ.— *Երկնքի բո՜ց, իջար վերջապես...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Ինձ փարե...*

ԵԴՈՒԱՐԴ.— *Այո՛, իրարու մեջ այրինք...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— (մթագնած աչերը հորիզոնին վրա ճառելով) *Տե՛ս, որչա՜փ սև է եղեր աշխարհը, կը տեսնե՞ս, Եդուա՛րդ։*

ԵԴՈՒԱՐԴ.— (նույնպես) *Այո՛, ես ալ նույնպես սև կը տեսնեմ, Վարդուհի՛... Բայց մեր գերեզմանը չըլլա՞...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ա՜հ, ի՞նչ կըլլամ... մնա՜ս բարով, Եդուարդ...

ԵԴՈՒԱՐԴ.— Կեցիր... ես աղ...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Միատեղ...

ԵԴՈՒԱՐԴ.— Ծրթա՜նք բարով... (իրարու փարած կարձանանան. վարագույրը կիջնե):

ՀԱՆԴԻՍԱՏԵՍՔ.— (անընդհատ և ուժգին ծափահարելով) *Ի տե՜ս... ի տե՜ս... ի տե՜ս...* (սույն ազմուկը մեկ քանի վայրկյան կը տևե):

Տեսիլ Գ

Հանդիսատեսք և Պողյանց

ՊՈՂՅԱՆՑ.— (վարագուրիկը բանալով շփոթած և այլայլուած) *Մեծարգո հանդիսականք...*

ՀԱՆԴԻՍԱՏԵՍՔ.— (խոսքն ընդմիջելով և ծափահարելով, անտարբերությամբ) *Ի տե՜ս... ի տե՜ս...*

ՊՈՂՅԱՆՑ.— (նույնպես) *Բայց...*

ՀԱՆԴԻՍԱՏԵՍՔ.— (նույնպես) *Ի տե՜ս... ի տե՜ս...* (Պողյանց վարագուրիկեն ներս կը մտնե և հանդիսատեսաց ազմուկին և ծափահարության միջոցին՝ վարագույրը նորեն կը բացվի և միևնույն տեղը Եդուարդ և Վարդուհի դիտեցնցած կերևին):

ՀԱՆԴԻՍԱՏԵՍՔ.— (սարսափած) *Մեռա՜ծ...*

ԹՈՎՄԱ.— (կայծակնահար) *Ջավակնե՜րս...* (Վարագույրը կիջնե):

ԱՐԱՐՎԱԾ Ե

Նահապետոֆի տանը մեջ ծանրագին կարասիներով զարդարված սենյակ մը

Տեսիլ Ա

Նահապետոֆ և Մակար

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— *Այո՛, քեզի խոսք տված եմ որ եթե բոլորովին իմ վստահությունս և համակրությունս գրավես, որ մը իմ ինտարբերական պատմությունս քեզի պատմեմ։*

ՄԱԿԱՐ.— *Եվ կը հուսամ որ...*

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— *Գոհ եմ քու ծառայութենեդ, փոքրիկ սապատոզս...* (Մակար բարկությամբ ուսերը կը թոթվե) *ի՞նչ կըլլաս։*

ՄԱԿԱՐ.— *Վերջապես չը կրցի հասկցնել որ իմ անունս Մակար է...*

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— *Էհ, մի բարկանար...*

ՄԱԿԱՐ.— *Եվ պաշտոնս ալ ձեր քով մատակարար...*

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— *Ուրեմն, Մակար մատակարար... մտիկ ըրե որ պատմությունս սկսիմ...*

ՄԱԿԱՐ.— *Ունկնդիր եմ, տեր իմ...*

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— *Ասկեց 28 տարիի չափ առաջ, գիշեր մը Բերայի հրապարակն աղջիկ մը առանձին կը պտտեր։ Ծրթեկող բազմության մեջեն ռուսական զգեստ հագած վայելչադեմ երիտասարդ մը այն մենաշրջիկ օրիորդին մոտենալով՝ լուսընկային, քաղաքավարական և անուշ կերպիվ մը կըսե. «Օրիորդ, ինչո՞ւ մինակ եք, կը հաճի՞ք թեակցելու պատիվը տալ ինձ». աղջիկը, որ մտաղբաղ էր, հանկարծ երկու աչքունք կը ծագին աչերուն մեջ... վասնզի որը, մինակ և աղքատ էր բոլորովին երկրի վրա... և վայելուչ երիտասարդ մը, թեպետ անծանոթ, բայց համակրություն ցույց կուտար իրեն. ուստի երիտասարդին խնդիրը չը մերժեր։*

ՄԱԿԱՐ.— *Վայելուչ ըլլալուն համար... եթե ես այդպիսի առաջարկություն մ'ընեմ, իսկույն լավ ապտակ մը կուտեմ...*

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— *Մտիկ ըրե. ուրիշ գիշերներ ալ այս երկու անձինքը կը տեսնվին Բերայի հրապարակը, բայց երկնի բաց կառքով, և այն օրիորդը բավական վայելուչ հագված և երեսը կարմրորակ քող մը ձգած է, գուցե չը ճանչցվելու համար... երիտասարդը Ռուսիայի երևելի վաճառականի մը որդի է և Մուրատոֆ կը կոչվի... ճամբորդելու և պտտելու համար Պոլիս կուգա և այն աղջկան կը հանդիպի, որ իր հրապույրովն անոր սիրտը կը գրավե... քանի մ'ամիս շքեղ տան մը մեջ ճոխությամբ կը կենակցին. վերջապես անպսակ սիրո ձանձրությունն ժամերը գալով, Մուրատոֆ Ռուսիա կը վերադառնա... աղջիկն իզուր կուլա և կաղերսե, դեռ կը սիրե... երկու ամիսեն զավակ մը կը ծնի, զիս, անունս Գեորգ կը դնեն։*

ՄԱԿԱՐ.— *Ուրեմն այն աղջիկը քու մայրդ է։*

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— *Այո՛, լար կարելով զիս և ինքզինքը խնայությամբ կը սնուցանե... Ծեր մանուկ էի, խաղալիք չունենալով՝ մորս*

գուլպա հյուսած ատեն կծիկովը կը խաղայի, երբ խելահաս եղա՝ բազմոցի տեղ տախտակամածին վրա փռած հին գորգի մը վրա կը նստեի, երբ պատանի եղա շատ անգամ մորմես ծածկվելով կուտեի ցամաք հացը... վերջապես երիտասարդ եղա գրեթե՝ մայրս զիս աշկերտ տվավ դրացի երկաթագործի մը քով. մինչև իրիկուն կռանով սալը ծեծելով կրակին դեմը հոգիս բերանս կուգար և ուժս կսպառեր, վասնզի ցամաք հացով և ցուրտով սնած էի. ավուրշեք 60 փարա կառնեի... վերջապես մայրս, որ քանի մը ամիսե ի վեր հազեն կը հալեր, մեռավ... մորս կուրծքին վրայեն մատանի մը գտա, զոր երբեք մատը դնելը տեսած չէի, վրան «Մ» նշանագիր մը կար, որ անշուշտ իր սիրահար Մուրատոֆի տվածը պիտի ըլլար... մայրս շատ սիրելուս՝ այս մատանին, որ ահա մատս է, միշտ հիշատակ պահեցի և երբեք ծախել չը մտաբերեցի՝ աղքատությանս մեջ անգամ։

ՄԱԿԱՐ.— Եվ դեռ կը պահես։

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Միշտ... մորս մահվան և իմ թշվառ վիճակիս վրա վշտահար՝ գիշեր մը, չը գիտեմ ի՞նչ դիտավորությամբ, այլ գրեթե սրտատանջությունս փարատելու համար Վոսփորի եզերքները կը թափառեի՝ լուսընկային, ինքզինքս ամայի տեղվանք գտա... այն ամայության մեջ կռանի՝ սալին զարնվելու ձայներ և ուրիշ աղմուկներ կը լսեի, չորս դիս նայեցա և շենք մը չը տեսա. կենդանյաց որջի կամ քարայրի պես տեղ մը կանցնեի, կռանին ձայները մոտեցան... այն քարայրեն ներս նայեցա, բավական մութ էր, բայց քիչ մը ետքը լուսի աղոտ հետք մը նշմարեցի... հետաքրքրությունս ավելցավ, քարե բնական սանդուղ մը կար, ուսկից քիչ մը վար իջնել և բան մը հասկնալ ուզեցի առանց տեսնվելու, բայց ոտքս սահելով՝ հանկարծ ինքզինքս բավական ընդարձակ գետնափորի մը հատակը գտա...

ՄԱԿԱՐ.— Ի՞նչ աներկյուղություն...

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Կռանին ձայները դադրած էին, ապշած չորս դիս և երկու մարդոց կը նայեի՝ որոնք շվարած փոփոխակի իրարու երես նայելով զիս կը դիտեին. կերևի որ հագած գործավորի շապիկս իրենց վստահությունը գրավեց և չը կասկածեցան ինձնե այնչափ, որչափ որ պիտի կասկածեին դրամանենգներ. մեկը քայլ մը հառաջ գալով հարցուց ինձ տաճկերեն լեզուն թոթովելով. «Ո՞վ ես դու». ես ալ պատասխանեցի որ ինձնե թող չը կասկածին, վասնզի հասկցա թե ինչ տեսակ տեղ մը կը գտնվեի, և պատմությունս և հոն իյնալս իրենց համառոտիվ անցա... անոնք իմ վրաս գութ ցուցուցին և իրենց ընկեր ըլլալով իրենց հետ աշխատիլ առաջարկեցին ինձ, ես ալ ընդունեցի ստիպմամբ...

ՄԱԿԱՐ.— Վասնզի վախնալով որ իրենց գաղտնիքը կը տարածայնես, անշուշտ հոնկե ողջ դուրս չէին հաներ քեզ...

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Տարի մը այն ամայի տեղը բնակելով և գիշերներն աշխատելով՝ բավական ստակ դիզեցինք և հարուստ եղանք, զանազան քաղաքներու մեջ մեզի ընկեր գտնվող դրամախույզներու շնորհիվ. վերջապես մեր մեջ որոշեցինք որ ալ այն սոսկալի գետնափորեն ելնելով արևուն դիմաց հանգիստ ապրինք... ընկերներս ուրիշ երկիրներ գաղթեցին, ես ալ Ռուսիա գացի ասկեց երեք ամիս առաջ, հոն հայրս միտքս եկավ, և երբ Մուրատոֆը փնտռեցի, ըսին թե նա սնանկանալով ամիսի մը չափ կար որ աներևութացեր էր և ուր երթալը չէր գիտցվեր... վերջապես հոն ռուսական հագուստներ հագնելով Պոլիս դարձա, դարձյալ իբրև Ռուսիացի վաճառական... ալ քեզ հանդիպելուս և իմ մատակարարս ընելուս պատմությունը դու գիտես... կը հուսամ որ գոհ ես։

ՄԱԿԱՐ.— Բոլորով սրտիվ, տե՛ր իմ, և կը հուսամ որ դուք ալ...

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Եվ միթե իմ գոհությունս և վստահությունս հայտնելու համար չէ՞ որ այս պատմությունը քեզ ըրի, որ ինձ համար մեծ գաղտնիք մ'է։

ՄԱԿԱՐ.— Տե՛ր իմ, միշտ վստահ եղիք իմ վրաս։

Տեսիլ Բ

Նույնք և Սպասավոր մը

ՍՊԱՍԱՎՈՐ.— Տե՛ր իմ, մեկը եկեր ձեզ տեսնել կուզե։

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Ջե՞ս ճանչեր զինքը։

ՍՊԱՍԱՎՈՐ.— Ո՛չ, տեր իմ։

ՆԱՀԱՊԵՏՈՖ. — Ի՞նչպես մարդ է։

ՍՊԱՍԱՎՈՐ.— Արհեստավորի հագուստով երիտասարդ մ'է։

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Անունը չը գրուցե՞ց։

ՍԳԱՍԱՎՈՐ.— Ճիորճի։

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Ճիորճի՞... ներս մտցուր զինքը. (ապասավորը կը խոնարհի և կը մեկնի) իմ դրամանենգ ընկերներես մեկն ըլլա-լու է... բայց ի՞նչ կը նշանակե արհեստավորի կերպարանքը... տեսնենք... (Ճիորճի՝ դռանը մեջ Մակարի համար կակնարկե և Նահապետոֆ նշան կրնե որ դուրս ելնե)։

Տեսիլ Գ

Նահապետոֆ և Ճիորճի

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Ի՞նչ կա, Ճիորճի, ի՞նչ վիճակի մեջ կը գտնեմ զքեզ։

ՃԻՈՐՃԻ.— Բան չկա, Գեորգ... ը՜... պարոն Նահապետոֆ։

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Բայց ի՞նչ կուզես որ գուշակեմ։

ՃԻՈՐՃԻ.— Ի՞նչ պիտի գուշակես... սնանկացա...

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Ի՞նչ կըսես։

ՃԻՈՐՃԻ.— Է՜հ, ի՞նչ ընեմ, քեզի պես հարստությանս հարցը չը դիտցա կամ մականունիս վրա դը մը օֆ մը կամ ովիշ մը չավելցուցի... այլ Փարիզուհիներու հետ վատնեցի բոլոր ոսկիներս, որ այնչափ սրտատանջությամբ և աշխատությամբ ձեռք բերի այն մութ գետնափորին մեջ։

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Ուրեմն Գաղիայեն կամ Փարիզեն կուգա։

ՃԻՈՐՃԻ.— Այո՛, վերջին դրամներս մսխած գիշերը՝ գինովությանս մեջ հազիվ մտածեցի շոգենավի ծախքը պահել Պոլիս դառնալու համար, կը մտածեի որ գոնե քեզ հարուստ գտնելով կրնայի քիչ մը ստակ առնել... քու տվածդ փրկանք մը պիտի սեպվի, վասնզի մեր գետնափորը ինկած գիշերդ կռանով մը գլուխդ ջախջախելու տեղ մարդասիրությամբ զքեզ ընկեր ըրի։

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Ուրեմն ո՞րչափ կը պահանջես։

ՃԻՈՐՃԻ.— Հազար ոսկի։

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Ա՜հ, շատ է։

ՃԻՈՐՃԻ.— Բոլոր հարստությունդ ոստիկանությանն հանձնելու և թիարանը տարիներով փտելու տեղ, քու մարդասեր բնությունդ հազար ոսկի տալ ջանա է։

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Բայց միթե դու ալ իմ ընկերս չե՞ս... ինչպես կը մատնես։

ՃԻՈՐՃԻ.— Ինծի համար քեզի չափ հոգ չէ... ոսկալի բան է, երբ Նահապետոֆ մը դրամանենգ կամ թիապարտ հրատարակվի... իսկ ես միշտ Ճիորճի եղա... միանգամայն այս վիճակիս մեջ մնալու տեղ ինծի ավելի աղեկ է բանտը պատրաստ հաց ուտել և բանտը իմ զվարճութենե հեռու գտնվելուս փաստ մ'ընել։

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Եթե ստակները տամ՝ ի՞նչ պիտի ընես։

ՃԻՈՐՃԻ.— Փարիզ պիտի երթամ։

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Դարձյա՞լ...

ՃԻՈՐՃԻ.— Ա՜հ, Գեորգ, չես գիտեր Փարիզը և Փարիզուհիները։

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Բայց ետքը՞։

ՃԻՈՐՃԻ.— Ի՞նչ կուզե թող ըլլա... դու չես գիտեր Փարիզը, իր գեղեցկությամբն աշխարհի թագուհին է և իր գեղեցիկներովը երկրային դրախտ. հոն միշտ զվարճություն, ճոխություն, գեղեցկություն և երջանկություն կը թագավորեն... վերջապես, ի՞նչպես բացատրեմ, ամեն բան առատ... մտածե մեկ մը, Փարիզի գերեզմանոցներուն մեռելաթագին թին անգամ հողով լի է և մեռելին վրա խնայողությամբ հող չի նետեր։

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Ա՜հ, խենթ։

ՃԻՈՐՃԻ.— Վերջապես Փարիզի գերեզմանոցը կուզեմ թաղվիլ։

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Ճիորճի՛, հարուստ եղիր և տես։

ՃԻՈՐՃԻ.— Հարուստ ըլլա՜մ, քեզի պես տուգա՞նք տալու համար, ինչպես որ դու հիմա ինծի կուտաս։

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Անզգա՜մ։

ՃԻՈՐՃԻ.— Ծ՜ն, համբե հազար ոսկին, գուցե այսօր ճամբա պիտի ելնեմ... վայրկենե վայրկյան երթալու խոսք տվի սիրուհիս... և օրեր անցան։

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— (թուղթ մը տալով) Առ։

ՃԻՈՐՃԻ.— Արժեթո՞ւղթ է։

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Այո՛։

ՃԻՈՐՃԻ.— (զննելով) Հազար ոսկինոց... շնորհակալ եմ։

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Եթե մեկ մ'ալ ինծի գիմես...

ՃԻՈՐՃԻ.— Տեսնե՜նք...

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Գուն գիտես։

ՃԻՈՐՃԻ.— Մնաս բարով, Գեո՛րգ... տեսնեմ այսօր ճամբա ելնող

Մարսիլիո շոգենավին կրնա՞մ հասնիլ...
ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Փարիզի խենթ։
ՃԻՈՐՃԻ.— Մնաս բարով... (կը մեկնի)։
ՆԱՀԱՊԵՏՈՖ.— (միանակ) Ո՞ւսկեց դիմացս ելավ այս սատանան։

Տեսիլ Դ

Նահապետոֆ և Սպասավոր մը

ՍՊԱՍԱՎՈՐ.— Տե՛ր իմ, Թովմա անուն մեկը եկեր ձեզ տեսնել կուզե։
ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Թովմա՛... թող գա. (սպասավորը կը խոնարհի և կը մեկնի) Հին ու մոռցված մարդիկներ կը հաճախեն տունս... մեկը զիս կողոպտեց, տեսնենք այս ի՞նչ պաշտոնով կուգա... փոթորիկ մը կա իմ գլխուս վրա։

Տեսիլ Ե

Նահապետոֆ և Թովմա, <(հետո Սպասավոր մը)>

ԹՈՎՄԱ.— Ա՜հ, պարո՛ն, ի՞նչ վատություն էր որ ըրիք, բոլոր ընտանիքս թշվառ ըրիք... աղջիկս մեռավ...
ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Ես ի՞նչ ընեմ... եթե աղջիկդ մեռեր է։
ԹՈՎՄԱ.— Դու ի՞նչ ընես, դու ես պատճառը... որ աղջիկս իր եղբայրագրին հետ թույն խմեց և մեռավ։
ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Բայց միթե քու հաճությամբդ չեղա՞վ ամեն բան։
ԹՈՎՄԱ.— Պարո՛ն, միթե փոխարեն նենգյալ դրա՞մ խոստացար ինձ...
ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Նենգյալ դրա՞մ... ի՞նչ կըսես...
ԹՈՎՄԱ.— Ահա վատություն մ'ալ, որ կուրանաս և զարմացյալ կը ձևացնես։
ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Բայց բան մը չեմ հասկնար քու խոսքերեդ։
ԹՈՎՄԱ.— Միթե դու չը տվի՞ր նենգյալ դրամը սապատողին որ ինձ հանձնե և զիս խաբե... վատաբար։
ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Ճշմարի՞տ կըսես...
ԹՈՎՄԱ.— Ա՜հ, այդ ձևերով մա՞րդ կուզես ճաթեցնել...

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— (կանչելով) Մակա՛ր... Մակա՛ր...
ՍՊԱՍԱՎՈՐ.— (ներս մտնելով) Դուրս ելավ, տե՛ր իմ...
ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Ո՞ւր գնաց։
ՍՊԱՍԱՎՈՐ.— Չեմ գիտեր։
ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Գնա, շուտ զինքը գտիր։
ՍՊԱՍԱՎՈՐ.— Շատ աղեկ, տե՛ր իմ... (խոնարհելով կը մեկնի)։
ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Պարո՛ն, կերդնում այս մատանվույն վրա, որ աշխարհի մեջ ինձ համար ամենեն նվիրական բանն է, կերդնում որ բան մը չեմ գիտեր...
ԹՈՎՄԱ.— (մատանին տեսնելով՝ զարմացած, մեկուսի) Այս մատանի՞ն...
ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Բայց, պարո՛ն, այն նենգյալ դրամներն ի՞նչ ըրիր...
ԹՈՎՄԱ.— (որ աչքը մատանվույն ճառած է՝ առանց զայն մտիկ ընելու) Այս մատանին որո՞ւն է, պարո՛ն...
ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Իմս է...
ԹՈՎՄԱ.— Վրայի նշանագիրը «Մ» է, այնպես չէ՞...
ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Այո՛... բայց ի՞նչ կա որ...
ԹՈՎՄԱ.— Ո՞վ տվավ ձեզ զայն...
ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Բայց ինձ մտիկ ըրե, այն նենգյալ...
ԹՈՎՄԱ.— (ընդմիչելով) Կաղաչեմ, պարո՛ն, ուսկից առիք այս մատանին... տերը կը ճանչնա՞ք...
ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Մորս հիշատակն է...
ԹՈՎՄԱ.— (զարմացած) Մո՞րդ։
ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Բայց բան մը չեմ հասկնար։
ԹՈՎՄԱ.— Աստվա՜ծ իմ... Աստվա՜ծ իմ...
ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Ի՞նչ կըլլաս, պարոն Թովմա...
ԹՈՎՄԱ.— Քեզի համար Թովմա չէ իմ անունս։
ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Ի՞նչ ըսել կուզես։
ԹՈՎՄԱ. – Կյանքիս թշվառ մասին անունս է Թովմա, իսկ իմ բուն անունս...
ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Անո՞ւնդ։
ԹՈՎՄԱ.— Մուրատոֆ։
ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Իմ հա՜յրս... և Վարդուհի՞ն...
ԹՈՎՄԱ.— Քու քույրդ էր...
ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Աստվա՜ծ իմ... մեռա՜վ...
ԹՈՎՄԱ.— Ես եղա իր դահիճը... և դարձյալ պիտի ըլլամ։
ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Բայց, հա՜յր իմ. ի՞նչ ըրիր այն կեղծ դրամները։

Տեսիլ Զ

Նույնք և Մակար, <(հետո Սպասավոր մը)>

ՄԱԿԱՐ.— (զԹովմա տեսնելով՝ սարսափած, մեկուսի) *Այս մարդը՞...*

ՆԱՀԱՊԵՏՈՅ.— *Անիծյա՛լ սապատող, այս մարդուն նենգյալ գրամովեր ես...*

ՄԱԿԱՐ.— (վախեն տատամսելով) *Բայց... տե՞ր իմ...*

ՆԱՀԱՊԵՏՈՅ.— *Օ՛ն, կորիր աչացս առջևեն. տանս սեմեն ներս մեկ մ՚ալ ոտք չի պիտի կոխես...*

ՍՊԱՍԱՎՈՐ.— (շփոթած մտնելով) *Տե՛ր իմ... ոստրկանները տունը կը պաշարեն...*

ՆԱՀԱՊԵՏՈՅ.— (սարսափած) *Ի՞նչ կը նշանակե ասիկա...*

ԹՈՎՄԱ.— (որ մինչև հիմա մտանուլզ էր) *Ձախող վրեժ մ՚առի... աղջկանս մահվանը վրա բոլորովին կատաղած՝ ամեն բան ոստիկանության իմացուցի... քեզ մատնեցի, զավակս...*

ՄԱԿԱՐ.— (մեկուսի) *Իր հա՞յրը...*

ՆԱՀԱՊԵՏՈՅ.— *Անե՛ծք...* (Մակարը կուզե փախչիլ) *Կեցի՛ր անօրեն սապատող, այս բոլոր աղետից պատճառը դու ես,* (ատրճանակ մը կուղղե անոր և կը զարնե)։

ՄԱԿԱՐ.— (թավալգլոր ընկնելով) *Կոբսվեցա՛...* (Վարագույրը կիջնե)։

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԽՈՍԱՐԱՆ

Այս օրերս Սամաթիա սույն «լուսարանին» կարևորությունը զգաց և գործադրեց։

Շատ քիչ անգամ տեսնված է զգալ և գործադրել բառերուն համընթացությունը, որուն շարժառիթին վրա ուրիշ միջոցով կը խոսինք։

Սամաթիա սույն հառաջադիմության քայլափոխին մեջ ալ անդրանկության պսակը ընդունեց, Սամաթիա նյութական մոխրին տակ վառ պահեց բարոյական կայծը, և այսօր փլատակաց մեջեն իր հարվածյալ գլուխը վերուցած «ԼՈՒՅՍ» կը պոռա. ստակ կուտա, մինչդեռ հովեն խարխուլ հյուղակին հողե կանթեղը կանուխ կը մարի. կաշխատի, կը հոգնի, կը մսի, կը քրտնի իր զավկին բարոյականը և ապագայն վաստրկելու համար։ Վերջապես Սամաթիոյ թաղը մյուս թաղերեն ավելի ձայն, հուր և ճիգ կարտահայտե և ապագային մեջ ալ դաստիարակ մայրեր կը խոստանա յամոթ մյուս մեծ և հարուստ թաղերուն։ Սամաթիացին զգաց, որ ազգի մը դաստիարակության և հառաջադիմության աղբյուրը կիրթ մորատինն է, զգաց և գործադրեց, աղջկանց վարժարան մը կանգնեց անձնվեր և ազգասեր անձի մը ջանքով[1] և ահա այսօր ալ վերածնության տաճարին մեջ ուրիշ լուսեղեն այուն մ՚ալ կանգնեց։

Խոսարան։

Այս բառը միմիայն եվրոպական թերթերու մեջ գրեթե կը կարդայինք, այս հարկը Սամաթիացին զգաց, այս հարկը Սամաթիացին ունեցավ։

Խոսարանը ազգային խնդրոց քավարան և գաղափարներու կրթարանն է, հառաջադիմության բաժակ մը, ուր մրուրը հյութեն կը զատվի։

Խոսարանն իր մեջ ապագային նախազգաց ձայներն ունի։ Սկզբունքներու ընդհարումը լույս կը ժայթքե. հոն կը սրվին գա-

դափարները, հոն կը ցրվին սխալ ըմբռնումները, հոն կը փթթին հանճարները, հոն կուղղվին կարծիքները, հոն կը հյուսվին գեղեցիկ միտումները, հոն կը կապվին միտքն ու սիրտը, հոն կարտահայտի լույս և կապ, վերջապես հոն կը կազդուրի ներկայն և հուսադրվի ապագայն։

Լուսավորության կանթեղին յուղը մեր քիրտն է, եթե մեր հուրը մարի, այն ալ կը մարի։

Ուրեմն աշխատինք, որ քրտնինք, առանց հոգնելու չըզգացվիր այնչափ հանգստյան քաղցրությունը։ Սամաթիա Պոլսո արվարձաններուն նախնի Աթենքը եղած է, պետք է որ Պոլսո մյուս թաղերն ալ անոր շավղին հետևին, այլ ընդհակառակը անոնցմե շատերը վարժարանաց ուրիշ կարևոր հարկեր հարելու տեղ, նույն իսկ վարժարաններն ալ անկարգ ու կիսափակ պահելու անփույթ ու մութ վիճակի մը մեջ կը ծփան. (բարեհույս եմք որ Ամեն. ս. Պատրիարքի եռանդուն ջանքովը աղքատիկ և անտարբեր թաղերու այս թշվառ կացությունը քիչ ժամանակեն կը կերպարանափոխի)։

Շատերնիս գրեթե կզգամք, որ խոսարանը վերոհիշյալ հառաջադիմության ջահերը կարտադրե. ուրեմն ինչո՞ւ կը դանդաղինք յուրաքանչյուր թաղի մեջ խոսարաններ բանալու, ո՞վ կարգելե մեզ — ոչ մարդ և ոչ օրեն։

Թատրոնին ծուռ նայեցանք՝ պատճառելով, թե սիրայի՝ դեպքեր կը գործադրվին թատերաբեմին վրա և անոր քաղաքակրթական և բարոյական օգուտներուն աչք գոցեցինք, երեսե ձգեցինք բարին ու չարը, արդարն ու անիրավը, վսեմն ու նվաստը և աշխարհային դարձվածքներն և գաղտնիքները մեր առջև պարզող այն գեղեցիկ տեսարանը թողուցինք որ մթագնի. հավիտենական սեր մրմնջող այն սրտաշարժ քնարը թողուցինք որ փոշոտի, թեպետև հոն զգացինք հին գլխո անկումը և նորին վերականգնումը։

Վերջապես այս հարկն ալ փակեցինք կամ քակեցինք։

Պատճա՞ռ։

Վասնզի թատերաբեմին վրա դերասանուհի մը «կը սիրեմ զքեզ» կըսե եղեր։ Խեղճը չէ կարող նշմարել այն արցունքը, որ այն խոսքին վրա հեղինակը թափած է և արտասանողն ալ կը փղձկի դուքն։

Բայց վերոհիշյալ «բծախնդիր» հին գլուխը «օրթա օյինիի»[2] և ուրիշ խայտառակ ներկայացմանց հանդիսատես կըլլա եղեր— այդ հոգ չէ...

Թատրոնը իրեն չը հաճախելուն երկրորդ պատճառ մ'ալ ավելցուց հետո՝ ստակ։

Թատրոնը թեպետ ինկավ, բայց նորեն հոգի կառնու[3], վասն զի իր փլատակին մեջ դեռ լույսը պլպլաց։

Գալով խոսարանին՝ իր բեմին վրա առ այժմ ոչ կին (բայց կը փափագինք որ ունենա) և ոչ դրանը մեջ ստակ ունի (Ավազաղբյուրի մերկ զավակաց նկարագիրը[4] եթե միտքերնիս բերենք, պիտի ըսենք թե այն ստակին վրա, որ արցունք կը կաթե՝ նա սրտի հատոր չէ)։

Ինչո՞ւ ուրեմն մյուս թաղերն ալ չեն շարժիր այս ապահով «լուսարանին» կառուցմանը ձեռնարկելու՝ փոխանակ գիշերները երեկույթներու և կիրակի օրերը սրճանոցներու մեջ անօգուտ և անգործադրելի առարկություններով և խնդիրներով զբաղելու (խնդիրները եթե ազգային կամ օգտակար ըլլան, ատոր խոսք չունինք)։

Գաղղիո կայսրուհվույն և Ավստրիո կայսեր եկած ատեն ներկայացման խնդիր մը հուզեցինք և այն խնդրույն մեջ չը հաջողելովնիս[5] ազգին արժանապատվության վնաս մը եղած ըմբռնեցինք, մինչդեռ անդին քյուրտերը մեր եղբայրները հարստահարելով և անոնց սրտաճմլիկ ճիչերը մեզ հասած ատեն անտարբեր կենալով, այս՝ թե մարդկության և թե ազգության արժանապատվությանը վնասող կացության մեջ անհաջող և պարսավելի դեր մը կատարեցինք և դեռ կը կատարենք.

Ասկե կրնա՞նք հետևցնել, թե հայը փառք մը կակնկալեր այն ներկայացմանց մեջ — ոչ, այլ կրնանք ըսել, թե հայը դեռ իր արժանապատվության կետերուն լավ վերահասու եղած չէ։

Խոսարանի մեջ այս և ուրիշ տեսակ խնդիրները կը հուզվին և կը պարզվին, առանց ազգային թերթերուն կարոտելու և հեղինակ մը իր գրածը կարդալով ավելի ազդում և զգացում կը պատճառե, որչափ ուրիշ մը զայն կարդալով. առաջինը իր ոգին շատերուն կը ներշնչե ու կը ներգործե, իսկ երկրորդը միայն իրեն (այն ալ պակաս)։

Խոսարանը կանոնավոր և համեստ վիճաբանության բեմ մը կը ներկայե։

Հրապարակային լավ կամ գեշ խոսք մը արդյունք մը կարտադրե՝ մեկին կամ շատին նկատմամբ։

Խոսարանին մեջ գաղափար մը անդորր կարտահայտի, այլ կամ պիտի զարնե և կամ պիտի զարնվի և, ինչպես վերը ըսինք,

այս հարվածեն լույս մը պիտի բխի, այս լույսը պիտի ծավալի, այս լույսը պիտի խմորի և մեր գլխուն մեջ կեգրոնանալով, մեր ճակատը զեղուլ և այրել պիտի սկսի, և այն ատեն պիտի ըսենք, թե «մեր գլուխները տկար են այս լույսը զսպելու համար, կամ աշխատիլ հարկ է և կամ «մեռնիլ», պիտի զգանք, թե մարդ և ազգ ենք, և հարկ է գործադրել այն բաները, զոր պահանջեն այս երկու մեծ սկզբունքները։ Հոն պիտի սովրինք հավասարություն, ազատ մտածում, ընկերականություն, եղբայրություն, վերջապես բոլոր մահու և կենաց խնդիրները իրենց հետևանքներովը մեր առջև պիտի զտվին և այն ատեն ընտրումնիս ընդհանուր և ազատ պիտի ըլլայ։ Միատեղ պիտի վիճինք և պիտի վճռենք, վերջապես, հայը հոն պիտի ամփոփի և պիտի սփոփի։

Լրագիրները խնդիր մը կառաջարկեն և խոսարաններու մեջ նույն խնդիրը կանոնավոր վիճաբանության ենթարկելով, կը պարզեն և կը գործադրեն։

Լրագրաց միջոցավ ազգօգուտ խնդիրներ շատ առաջարկված կան, բայց միջոց չըլլալուն պատճառավ անզգայության մառախուղին մեջ թավալած ու թաղված են։

Խոսարանը ազգային թե առաջարկության և թե գործադրության կեդրոնականությունը իր մեջ կը պարունակե, և քանի որ հասարակաց կամքը կը հագի, ուրեմն ազգին տարտամ վիճակն ալ կը հանգի։

Կարծեմ մերովսանն կրցանք բավական բացատրել խոսարանին կարևորությունը և արդյունավոր արտադրությունը։

Ուրեմն մյուս ազգային թաղերուն նախանձոտ նայվածքը կը հրավիրեմք[6] նախաքայլ Սամաթիո խոսարանաց և հառաջադիմության վրա։

Մենք, երիտասարդներ, մենք պիտի հանգիստանանք լուռ գրաշակիրները, թող մեր ալևոր հայրերը ապագային աստղը իրենց կենաց սև կամարին վրա նշմարելով գոնե իջնան այն անցելույն փոսը։ Ինչպես որ մենք մեր հայրերուն նախապաշարյալ գաղափարներուն վրա կը խղճանք, մեր զավակներն ալ մեր գաղափարներուն վրա պիտ խղճան, որոնք դեռ հին գլխո մը մբուրն ու մնացորդն են. սրբենք մեր ճակատը և ծավալենք մտածումնիս հոն, ուր որ կը հասնի։

Ահա մեզի ազգաստության մեջ հառաջադիմության միջոց մը ձեռնարկենք, քանի որ գործադրելի և դյուրամատչելի է։

Պիտի խոսինք՝ ինչ որ կզգանք, պիտի տանք՝ ինչ որ ունինք։

Ինչո՞ւ դանդաղինք այն խնդրոց և ձեռնարկաց մեջ, որ առանց մեր կենաց վնաս մը առթելու՝ մեր և ապագային բարոյական և նյութական կյանքը կապահովեն։

Ուրիշ առթով դեռ կը խոսինք։

ԹԱՏՐՈՆ

Ամեն հիմնարկություն և սկզբնավորություն իր հաստատությունը ունեցած օրեն՝ կունենա նաև իր հակառակորդներն ալ, որոնք զանի խորտակել ու անհետացնել կուզեն. ուստի այն հիմնարկությունները, հակառակորդաց կամացը չը զոհվելու համար, պետք է անոր հիմերը խիստ զգուշությամբ և ավելի ամուր կերպով հաստատվին՝ որ ո՛նիցե փոթորիկի մը բռնված ատեն, եթե յուր մասնիքներն ալ խորտակվին, գոնե յուր հիմերը հաստատ մնան։

Մեր մեջ բավական ժամանակե ի վեր բազում հաստատություններ եղան, բայց դժբախտաբար ասոնցմե շատերը անհետ եղան ի շնորհս հակառակորդաց (ինչպես խոսարանի հաստատությունն ալ, որ իր ծնունդը առած օրեն իր թշնամիներն ու հակառակորդներն ունեցավ, բայց ասոնք լավ գիտնալու են, թե ամենափոքրիկ վնաս մը կամ տրգելք մը չը պիտի կրնան հասցնել, քանի որ անոր հիմերը ավելի հաստատ և խիստ խորը ձգված են ժողովրդյան սրտին մեջ). այնպիսի հաստատություններ, որոնք հառաջադիմության շավղին հետեղող ազգի մը նախաքայլերն են և առանց անոնց՝ հառաջադիմությունը անկարելի է։

Ո՞ւր են այնչափ այլևայլ նպատակներով կազմված ընկերությունները, ի՞նչ եղան ատոնք, և ի՞նչ արդյունք կրցին հառաջ բերել,— ոչինչ, այլ մեկ մեկ անհատի կրից և թշնամացը զոհվելով, անհետացան՝ առանց արդյունք մը հառաջ բերելու և ահա ասոնցմե մինակ Հայկական և Անձնվեր ընկերությունները[1] դեռ հաստատ կեցած են, որոնք մեծապես օժանդակեցին ազգին և դեռ կօժանդակեն թե բարոյապես և թե նյութապես։

Այս հաստատությանց կարգեն է նաև թատրոնի հաստատությունն ալ, որ երբեմն զանազան թշնամիներե պաշարվելով, նախատվեցավ, բամբասվեցավ և վերջապես այնպիսի վիճակի մը հասավ, որ միշտ խափանվելու երկյուղը կազդեր ճշմարիտ թատ-

բասերներուն. և ահա դեռ այդ անորոշ և տատանյալ վիճակովն է, որ կը շարունակվի մինչև ցայսօր։

Թատրոնը հայելի մ'է, որուն մեջ մարդս կրնա իր ճշմարիտ պատկերը տեսնել և որով իր վրա նշմարած անհաճո տեսքերը անհետացնել և մաքրել, իսկ դերասաններն ալ մեկ մեկ դաստիարակներ են, որ ամեն աստիճանի մարդոց ճշմարիտ պատկերը կամ բարության և լավության հետևանքները ներկայացնելով, մարդուս բարոյական զարգացմանը պատճառ կըլլան. ուստի, սրտի և մտքի բարոյական զարգացմանը փափագողը պետք է թատերասեր ըլլա, կամ այն, որ թատերասեր է՝ ուրեմն բարոյականության ծավալման ալ փափագող է։

Ամեն լուսավորյալ ազգ՝ այս ճշմարտության համոզված ըլլալնուն, քանի քանի թատրոններ և թատերական խումբեր ունին իրենց մեջ, որոնք միշտ պետք եղած քաջալերության արժանացած ըլլալնուն, կարողացեր են օրինավորություն պահել և հառաջադիմել, և ասով ժողովրդյան համակրությունն ալ գրաված են։

Մենք, որ իբր լուսավորյալ ազգ կը պարծինք և միշտ հառաջագիմության քայլեր առնելու կաշխատինք, այս ճշմարտությունը, որ ինչպես ըսած էինք, թե հառաջադիմության միջոցներեն մեկն է, իբր երևակայություն մը կը նշմարենք և թատրոնը ոչ թե բարոյական և օգտակար հաստատություն մը, այլ իբրև զբոսատեղի մը կը նկատենք, և ահա ասոր համար է, որ մինչև ցարդ օրինավոր Հայ թատերաբեմ մը ունեցած չենք։

Ժամանակ մը Արևելյան անուն թատրոն[2] մը ունեինք։ Ասիկա մեկ քանի տարի շարունակ Հայ ներկայացումներ տալով՝ կրցավ հասարակության ընդունելությանը և քաջալերությանը արժանանալ. բայց հանկարծական արկած մը զանի իր այս ընթացքեն գադրեցուց։

Բայց և այնպես. երբեմն երբեմն այլևայլ անուններով թատերական խումբեր և վարչություններ տեսնվեցան, որոնք նույն թատրոնը դարձյալ վերականգնելու հուսով աշխատեցան, զոհվեցան և վերջապես վնասվեցան թե բարոյապես և թե նյութապես, բայց, ավա՜ղ, որ իրենց այս աշխատությունը, որ նյութական օգնության կը կարոտեր, բնավ քաջալերող չեղավ. այն ժողովուրդը, որ խիստ գեշ օդերուն անգամ հեռավոր տեղերե խումբ խումբ թատրոն կը հաճախեր, կարծես այն ատեն այլևայլ պատճառաբանություններով անտարբերության մեջ թաղվեցավ և սկսավ անտարբեր աչոք դիտել, մինչդեռ մեկ քանի տարի հառաջ իբր լուսավորության նախաքար մը և ազգության փառք մը կը համարեր։

Ի՞նչ շահ կրցանք ունենալ ասկե, ոչինչ, բայց եթե նույն խումբերը անօգնական մնալով, տեղի ունեցած մեկ քանի անտեղությանց ու ապօրինավորությանց առաջքն առնուլ անկարող եղան և ասով ժողովրդյան այն անտարբերությունն անվստահության փոխվելով՝ ալ յուր փափագը բոլորովին մարեցավ, թատրոնի վրա ունեցած գաղափարը խանգարեցավ և Արևելյան անունն ալ իր դիրքովը մեկտեղ Ալգազարի փոխվելու դժբախտությանը արժանացավ[3]։

Ի՞նչ օգուտ կրցին ունենալ այնչափ զոհողությունները, աշխատությունները և ժողովրդյան այն փափագը.— ոչինչ, բոլորն ալ հօդս ցնդեցան, և անոնց հիշատակները միայն կեցած են այսօր, և որոնք միշտ ցավ կը պատճառեն ճշմարիտ զգացման տեր եղողներուն։

Մեկը, մեկը կար միայն[4], որ թատրոնի վերականգնության կարծես ի բոլոր սրտե ուխտած՝ առանց վարանելու ամեն միջոց ձեռք առավ, զոհեց իր անձը, իր կյանքը, իր քսակը և վերջապես զոհեց ամեն բան՝ ինչ որ իրեն սիրելի էր, և ահա ի շնորհս անոր, գրեթե կես-Հայ թատրոն մը ունինք այսօր Օսմանիե անվամբ[5], բայց այն ալ անորոշ վիճակի մը մեջ։

Ուրեմն ինչո՞ւ չենք քաջալերեր զանի, քանի որ մեզի փառք ու պարծանք համարվող շենքի մը հաստատությանը և անցյալին մեջ տեղի ունեցած նախատինք մը մեր ճակտին վրայեն սրբելու համար ամեն ջանք և զոհողություն չի զլանար։

Մենք խիստ բծախնդիր ըլլալով, ամեն բանի մեջ օրինավորություն կը բնտռենք. այո՛, օրինավորությունը միշտ հարգելու է, բայց սա ալ գիտնալու է, որ առանց կողմնակի պարտավորությունները ի գործ դրվելու՝ օրինավորությունն ալ անկարելի է։

Մենք թողլով մեր հայկական ներկայացումները, կը դիմենք օտար թատրոններ, որ մեզի բնավ օգուտ մը չընելեն զատ՝ մեծ ամոթ մ'ալ կրնա համարվիլ, քանի որ մենք մեզի համար թատրոն մը ունինք. այո՛, թողլով մեր թատրոնը կը հաճախենք հոն, որովհետև օտար թատրոնները ավելի զարդարուն են և դերասաններն ալ ավելի հառաջադեմ, որովհետև մեր թատրոնը խիստ աղքատ է և դերասանները տկար, հետևաբար՝ ապօրինի. կուզենք որ մեր թատրոններն ալ օտար թատրոններու նման ըլլան։ Զարմանալի պահանջում. ենթադրենք պահ մը, թե ներկա թատրոնիս յուր այս

կաղն ի կաղն ընթացքին մեջ անգամ, պետք է ամենայն կերպիվ անոնց փայլունությունը ունենալ.— շատ աղեկ,— այն անձը, որ ամեն զոհողություն և վնաս չէ խնայած և յուր վնասը գոցելու համար օտար ներկայացումներ տալ ստիպվեցավ, ալ ավելի ծախքեր ընելու համար որո՞ւ վստահի, (բայց դարձյալ նույն անձն էր, որ կատարյալ սիրահարի մաս կատարողի մը 10 ոսկի ամսական կը խոստանար)— ժողովրդյա՞ն,— մեր ժողովուրդը միշտ նորասեր ու կասկածոտ է, ամեն բանի սկիզբը կը հարգե, կը քաջալերե, կը պաշտե և վերջապես անոր հարատևության ի բոլոր սրտե կուխտե, բայց փոքրիկ շարժում մը, կասկած մը կարող է ժողովրդյան այս հեռանդը մարել ու ամեն խոստում մոռցնել— ահա ճիշտ այս հեռանդը մարել ու ամեն խոստում մոռցնել— ահա ճիշտ այս հեռանդությունն ունեցած է թատրոնի մասին ժողովրդյան ունեցած փափագն ու տված կարևորությունը. ուրեմն, ինչպես համարձակի ալ ավելի պարտուց տակ ճզմվիլ, քանի որ ժողովրդյան կողմեն փոքրիկ շարժում մը և քաջալերություն մը անգամ տեսած և ընդունած չէ։

Արդ, ո՛ ժողովուրդ, մենք բուն մեր ուզածին նման թատրոն մը ունենալու համար պետք է հարգենք զանի, որ մինակ այս նպատակին և մեր անվան պատվույն համար կաշխատի, քաջալերենք զանի ,որ նա ալ մեզ գոհացնելու կարող ըլլա, թողունք օտարները, որովհետև օտարներեն չկա մեզ հույս, հուսանք մինակ Հայ անուններեն, սիրենք ինչ որ Հայ անունը կը կրե, Հայը միայն կրնա հայուն օգնել և անոր ցավակից կամ ուրախակից ըլլալ։ Այո՛, անցյալին մեջ տեղի ունեցած մեկ քանի անտեղությանց պատճառավ, մեր սրտին մեջ դեռ ամփոփ կեցած ատելությունը անհետացնելով, պետք է չի զլանալ այն քաջալերությունը անոր, որ ապագային և թե ներկային մեջ ՀԱՅ անունը կրող թատրոն մը մեզ ներկայացնելու փորձ կը փորձե, և փոխանակ օտար թատրոններ հաճախելու, դ՚մենք հոն և մեր տեսած ու նշմարած պակասությունները ու ապօրինավորությունները լրջմտությամբ իմացնենք վարչության, որ նա ալ առանց վարանելու իր նպատակը կատարելագործել աշխատի, ասով ոչ թե ուրիշ բան մը, այլ Հայ թատրոնի մը հաստատությանը օգնած, օտարներու առ և մեր պատվույն պաշտպանությանը աշխատած և Արևելյան թատրոնին՝ մեր վրա ծանրացուցած նախատինքը անհետացուցած պիտի ըլլանք։

ԲԱՆԱՍԵՐԱԿԱՆ

Հառաջաբան: —Օրագիր և թերթ: —Մայիս 24: —Խոսք մ'ալ:

Գաղափարի սվին՝ գրիչ շաքժել կաբենալես ի վեր, հոգվույս ծալքերը մեկուսի թղթատելե ավելի՝ կը սիրեմ հրապարակական ձայնարկություններբ։ Չեմ ուզեր նմանիլ անոնց, որոնք իրենց հոգվույն կայծերովը աստղերուն հետ կ'ընդհարին անձայն։ Սակայն զրաղմունքս և ուրիշ պարագաներ շատ քիչ անգամ սույն փափագիս լրմանը տեղի կուտան։ Թեպետև թատերաբեմի մը միջոցավ հայրենյաց հսկա դարերու ավերակաց մոխրոտ շունչն ուզեցի ըլլալ բայց երևակայության հեղեղներուն արտադրած սույն կաթիլները ցնդեցան համր կամարի մը տակ։ Հոգվույս քրտունքն էին անոնք։ Խոսքեր, որոնք հանճարներու ամպրոպին մեջ կը փսփսան թեև , բավական է որ խոսին։ Որչափ թերթեր բացվին՝ այնքան վհեր կը գոցվին։

Այն, որուն խոկմանքը հանապազաց սլաքներ կ'արտադրե, բնական է, որ երբ ատպարեզ նետվի, արձագանք մ'ունի իր գաղափարին, քրքիջ կամ ծափ։ Ես վայրկյան մը մտածեցի անուշագիր անցնիլ այն ժխորին մեջեն, և միայն ուշ դնել այն Օվկիանին, որ իմ ներքս կը փրփրի.— այլ ո՛չ։ Հարկ է այն ծափահարին ձեռքը թոթվել և այն քրքիջին դեմ որոտալ։ Սիրել և մաքառիլ։ Ահա սրտիս ծալուցը մեջ երկու հրատառ բառեր, ճակտիս տակ երկու հրաբուխներ։

Ահա իմ գաղափարս.

Խառնել գահանները, մոռնալ այն վիճին, ուր ճառագայթը կը առնկա թափանցելու. վիճ մը, որ կը շնչե, և գծուծ, գունատ և անդամ էակներու վիճակում մը անոր ոգիքը կը կազմե. լույս և ձեռք կը պրտտա նաև։ Այն վիճը մարդկության ահագին և խորունկ վիրքն է։ Լույսը և եղբայրության շունչն է անոր սրբազանին։

Հոս կ'ուզեմ խառնել նաև դարուց մոխրակույտը և ի՞նչ բերեր այն մարած հրաբուխը[1], որ ասկից առանձինը դար ապաշ վերանորոգության գործեր տեսնց, այն կատարեր բլուրը, ուր բանակեն պիակ մը վառեցավ[2] ահավոր ջահի մը պես։ Այն [illegible] խորշը ուր ահեզեքդն հեղաշրջյա առ փոքրիկը հեծկլտաց՝ «Աբեցեց գ՚միմյանս»։

Բայց ավա՛ղ ոչ Գաղղիան միջին դարը պիտակեր։ Այն վսեմ

փոթորիկը արյան ծովեր ալեկոծեց, փայտակույտներ հրահրեց։ Մենաստաններու մեջ մահաշշուկ հծծյուն մը սողաց։ Տիեզերքի երակներուն մեջ ցուրտ սարսուռ մ'էր այն։

Խղճի շղթա հյուսեցին կողմնակի չարաշշուկ գանչյուններ։

Ա՜հ, ո՜րչափ այլայլեցին Աստվածաշունչ հեղափոխականին հագագը։

Եվ դեռ մինչև հիմա միայն երկու իր ակնածությամբ և հավատարմաբար կը նային այն հեղափոխական հրաբուխին, երկնի աստղը և հյուղին փոշոտ լուսամուտը՝ նվաղյալ աչքի պես։

Ա՜հ, մինչև ե՞րբ մարդիկ թույն ու խավար պիտի շնչեն։

Ե՞րբ պիտի լռե թնդանոթը։

Ե՞րբ պիտի սիրե կղերն ալ։

Ե՞րբ տիեզերք համեղբայրության վառարան մը պիտի ըլլա։

Ե՞րբ պիտի ծավալի համայն աշխարհ իր ամբողջությամբը ԼՈՒՅՍԸ։

Ե՞րբ։

Արդյոք դեռ շատ դարե՞ր կան հոլովելիք։

Ես կը տարակուսիմ, որ չըլլա թե աշխարհ իր երկանցը մեջ այս երազները հեղհեղած միջոցին ալեվորի և լուսածամ աստղերուն վարսերը թափթփին։

Այլ ո՜չ, հարկավ Աստծո մը ըմպած բաժակին մեջ պատրանք չի գտնվիր։

* * *

Այս օրերս երբ Օրագիրը նորափետուր տեսա[3], բերկրեցա, համակրական նոր նշույլ մը կ'ընդնշմարվեր հոն։ Հիրավի որչափ զմայլում ազդեց ինձ այդ կերպարանափոխությունը,— ինչպես շատերուն,— երբ նա հառաջադիմության նշանավոր քար մը կ'առներ և իր մեջ կը փայլեր հայկական լեզվին կորովը։ Կը շնորհավորեմ այդ հսկա քայլը։

Օրագիր հրապարակ իջնելեն ի վեր Հայ հասարակությունը զայն համակրությամբ ընդգրկեց, վասնզի Օրագիր, վսեմ և ազատ գաղափարներ արտաշնչեց։ Անշուշտ այս անգամ ալ, որ հայկական լեզվով ոգևորվեցավ, ազգն իրավամբ իր համակրական ընդգրկումը պ'տի ամրապնդե։ Հասարակաց կարծիքը չկրնար ուրանալ այն շահերը, զորս ազգը քաղեց ազգային թերթերեն, որոնց գլխավորներեն Մասիս[4] իր հայկաբանությամբը, Մանգումե[5] իր հախուռն գաղափարներովը և Օրագիր իր հասուն խորհրդածությամբը բավական լույս ու շահ ջամբած են ազգին։ Հրապարակական թերթերն ազգի մը հառաջադիմության թևերն են։ Լուսավորյալ դարու փառաց դափնիներ։ Մելանը խավարի սև արյունն է։ Ծծենք միշտ զայն։ Հոգեսպառ ընենք. տապալենք խավարը։ Խավարի արյանը մեջ լուսո զենքեր թաթխենք, գրիչներ։ Հարդենք գրիչը, ինչպես հսկայն իր զենքը, քահանայն իր խաչը։ Հառաջադիմական խոկմանց ծալերով ծանրացած ճակատներ հանձնենք մեր հողակույտին։ Այս է մարդկության պարտքը։ Իրավ է որ Մամուլնիս ամուլ չէ։ Բայց ինձ այնպես կ'երևի, որ Հայության կենաց ծառեն մեկմեկ տերև կ'ընկնի, երբ անընդհատ նոր թերթեր ծնանելնուն հետ կը մեռնին։ Ասոր պատճառն այն է, որ մեր հասարակությունը չը հարգեր նոր ասպարեզ նետվող գաղափարի մը դողդոջումը և թոթովումը, կ'ուզե որ հանկարծ արծվի մը պես թևարկե և օվկեանի մը պես մռնչե։ Անհնար է այս։ Օվկեանն անգամ ատեն մը կաշիլ մ'էր։ Վերջապես խոսքերնիս եզրակացնենք։

Վարժարան և տպարան, ասոնք են մեր զարգացման վառարանները. ասոնցմե մարդ,— մայր ալ հասկնանք,— և գիրք դուրս տալ աշխատինք։ Եթե ամեն հայ մարդ և ամեն գաղափար գիրք ըլլան՝ այն ատեն մեր հուսացած իրականացյալ ազգն ենք։

Երջանիկ և անմահ ազգ մ'ենք։

* * *

Վարդի և արշալույսի ամսուն՝ Մայիս 24ը[6] կը մոտի։ Կրակոտ հիշատակի մը սրտագրավ թվական։ Տես սա կապույտ եթերին ձյունատիպ ամպիկը. տես սա Վոսփորի խաժագույն ալին.— ձգե՛նք, եղբա՛յր, թող երկին ու ծով իրարու նային։

Տես սա կանաչագեղ թավուտը։ Շուք և փսփսուք ունի.— ձգե՛նք, եղբա՛յր, թող հոն սիրեն։ Տես սա դափնեզարդ և դրոշավոր շոգենավները, որոնք Վոսփորի խաժագույն լանջը պատռելով կը թռչին։ Անոնց մեջ խուռն ու զվարթ ամբոխ մը կա։ Հոն սրտերը շոգենավին անիվներեն ուժգին կը բաբախեն։ Կարծես թե եռանդը զիրենք կը տանի, քան թե շոգենավին մեքենայն։ Հոն կիներ ալ կան։ Հաստատուն աստղերու պես զիրենք շրջապատող մոլորակներուն լույս տվող էակներ։ Ծածանող դրոշակներ, բոցավառ ճա-

կատներ, դյությալ նայվածքներ, կցկտուր ձայնարկություններ, նվագարանաց թրթռումներ...։

Ո՜հ, ուր կ'երթա այս սրտագրավ շենքը։

Հոն, ուր կան նաև ամպիկներ, աչի, թավուտք, շուք ու փրփրուք։ Գեղ, գույն, բույր, ամեն բան կա հոն։ Բայց հոն ա՜յլ է սերը։ Հոն շատեր վիրար կը սիրեն, հոն հոգիները կը սիրեն, հոն հայրենիք մը կը սիրեն։ Հոն կայսերաշնորհ Սահմանադրության մը հիշատակը կը տոնեն։ Հոն ազգային հանդես մը կը կատարվի։

— Այդ շոգենավը նետվինք ուրեմն, եղբա՜յր, որ կարծես թե վատիկանը զարնող շանթեն շուտ այն սրբավայրը կ'ուզե նետվիլ, հոն, ուր հոգիներու բուրում մը կը ծավալի։ Ազգային հանդեսները ազգի մը շնչառություններն են։

Բայց բա՜բե։ Ո՜րչափ կարճ կը տևե այս սխրալի՜ն օրը։ Արևը կը փութա իր ճառագայթները լերանց գագաթը մարելու։ Իսկույն օդը կը տարաժամի, մինչդեռ սրտեր դեռ կը բաբախեն և շուրթեր դեռ կը դողդոջին խոսելու համար։

Շոգենավները կը սուլեն։ Բաժանում կը գուժեն։

Տեսե՞ր եք այն ալին, որ հանդիսականները ի ծով կամ ի վերադարձ հրավիրելու համար ծովափին ավազներուն վրա կը շփշփա։

Լսե՞ր եք այն հսկա ծառերուն սոսափած տխուր «երթայք բարյավ»ը, որոնք իրենց շուքին տակ հյուսված մտերմությանց վկա հանդիսացան։

Հիրավի դառն է այս ժամը։ Բայց ամբողջ տարի մը դառն լլլալու համար երանի թե այն բոցավառ ճակատները չը մարին, եթե այն օրվան վերջալույսը հորիզոնին վրա մարի։

ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ

Առ Պ. Ա. Լուսինյան.— Գանձանակ մը.— Հայրենասիրաց խումբ.— Սահմանադրության հանդիսին ճոր փայլեր.— Ազգային մը.

Պարոն.

Ներեցեք եթե պատասխանս ակամա քիչ մ'երկարաձգեցի։

Շնորհակալ եմ Ձեր այդ ողջույնեն։

Սիրեցի այդ ողջույնը՝ ծարավի հանճարի մը այդ ջերմ ընդգրկումը։

Ձեզ խաբվեր. այն համեստ գաղափարները, որոնք որոտալու հետ բուրել, շանթելու հետ բուժել գիտեն՝ այն գաղափարները պատրաստ եմ զինել իմ կողմես։

Սակայն կը ցավիմ որ չեմ բոլորովին, զոր դուք կը նկատեք Ձեր պըշրող գրչովը։

Այն դափնիները, զորս դուք իմ ճակտիս բոլորել կ'ըզձաք՝ կը ճնշեն արդեն ճակատս։

Անտեղի կը թոթվեք Ձեր ծաղկապսակ քնարը, հանճարի այդ վեհ սիրտը ի զո՜ւր կը սասռեք։

Թո՜ւյլ տվեք, Ազնի՜վ բարեկամ, որ Ձեր այդ ջերմ համակրության դիմաց սիրտս լուռ դողդոջե։

Դուք զիս լավ նկարագրեր էիք. արտոսրի պես լռիկ և հառաչի պես մթին, դուք որ աստղի նման խայտալ և շանթի նման որոտալ գիտեք։

Խոսեցեք և սավառնեցեք, պերճախո՜ս բարեկամ, և թույլ տվեք, որ բևեռային երկրի պես ցուրտ, տխուր ու դալկահար ճակտի մը վրա լոկ լուռ խորշոմներ ծալվին, ցավոց թերթե՜ր, և հանճարը շրթանց մեջ մեռնի, քանի որ Ձեր կրակոտ ճակատն անգամ պերճախոս հանճարի բեմ մը կը ներկայե։

Սակայն չեմ ուզեր հոս խոսքս երկարել։

Սրտերու խոսակցությունքը աստղերու և տերևներու շուքին վերապահենք, Ազնի՜վ բարեկամ...։

Այնպիսի նյութեր ունիմ, որոց վրա խոսելու տեղ մերթ որոտալ, մերթ բուրել, մերթ սարսափիլ հարկ է. կոչման և սրտի դյուցազներ են անոնք վսե՜մ հիշատակներ. խոկմանցս վրանին մեջ թռչտող հրեշտակնե՜ր։

Պիտի խոսիմ անոնց վրա որչափ որ արտասանվելու համար շուրթեր այրե՜ն։

Այն նշանավոր օրը պիտի հիշատակեմ, յորում խաղու ձեռք թոթվեցինք, այն օրը՝ յորում ամեն գլուխ հեղաշրջում մը, ամեն սիրտ կրակ մը և ամեն հոգի զմայլում մ'ուներ։

Կ'ուզեմ այն հանդեսեն վսեմ գործերու փունջ մը քաղել։

Կ'արի՜ կը զուրգուրամ այս հանդիսին վրա, զի մեկ հատիկ է։

Տխո՜ւր բան. գործեր չ'ունինք, որ հիշատակներ ունենանք։

* * *

Հորիզոնին վրա վարդերու հրդեհ մը կը ծավալեր։ Աստղերն անգամ խաղտել, տժգունել և մարմրել կ'սկսեին։

Թավուտքի մը դայլայլիկը Մայիս 30ի առավոտը կը ճծծեր։

Բյուզանդյանի կապույտ գոտին կը ծփծփար։

Տեսարանին մեջ փա՞ռք և թվականին մեջ կրա՞կ կար։

Ճակատս երազներու օրորոց մ'էր դարձած։ Կը դողդոջեի[4] այս թվականին առջև։

Ոսկեզօծ սարեր ընդնշմարեցի. վարդերու աճյունին մեջեն մեծ կայծ մը կը բարձրանար Երկնքի լուսալիր Բիբը։ Լուրջ Վոսփոր մը կը ծիծաղեր, կ'ուռեր և կը փրփրեր, կը սոնքար այնպիսի սիրալիր և նշանավոր թվականի մը ներքև։

Նվագներու, կեցցեներու և ծափերու ներդաշնակություն մը, սրտագրավ ժխոր մը Գուզկունճուքի նավամատույցը թնդացուց։

Շոգենավ մ'էր այս ժխորը շնչողը. սրտադրոշմ դրոշակներ կը ծածանեին, սրտեր կը բաբախեին հոն. ամենքը գունաթափ էին, կը հևային սույն թվականին վայրկյաններուն հետ։

Երևակայե՛ զիս ալ, բարեկա՛մ։

Չեմ գիտեր, թե ինչպես ինքզինքս այս շոգենավը նետեցի։

Կը քալեինք, կ'երազեի. սիրտս դաշնակ մ'էր և հոգիս մեղեդի մը։ Հանկարծ ձայն մը զիս թոթվեց, տեսիլ մը սառած նայվածքս հափշտակեց, երիտասարդ մ'էր տեսածս, դժգույն այտերեն խարտյաշ մորուք մը վար կը թափեր. կարծես թե այդ անձին ներսը սրբազան բան մը կ'որոտար. իրեն հետ ձայնը կը դողդոջեր, ձեռքը գանձանակ մը կար... ա՜հ, քաղցր այդ անձը... լուսո սիրահարը, հառաջադիմության զինվորը՝ Անձնվեր ընկերության առաքյալը. թշվառներու անդունդին հսկող այդ աստղը ճանչցի և սարսռացի... Հայաստանի արտասվալից ուրուն անցավ վրայես։

Գ. Գ. Զոպանն[1] էր այս անձը. պարծանոք և հարգանոք կը հորջորջեմ. ԳՈՐԾՈ՞Ղ ՄԸ. փա՞ռք իրեն, որ հիշատակ մը հիշատակով կ'անցունե։ Մեկ քանի տարի է որ Սահմ. [անադրության] հանդեսներուն և ազգային ուրիշ համախմբությանց մեջ իր գանձանակովը կերևի, ամբոխը կ'ակնածէ այդ պատկառելի մուրացկանեն, սրտե՞ն կուտա։

Անձնվեր ընկերության գանձանակն ինկած լումաները հին գլուխ մ'հեղափոխելու կը ծառայեն, ուր գաղափարք ժանգոտած են, ուր աղջամուղջ կը վխտա՞ն։

Աշխատի՛ նք որ մեր ընկած հայրենիքը վերականգնելու տքնող այդ առաքյալներուն ճակտին վրա մխացող քրտունքը չը սառչի։

Երանի այդ անձերուն, որոնք իրենց անշուք կյանքին հետ հսկա փա՞ռք մը կը տանին։

* * *

Փա՞ռք այն ընկերությանց, որոնց նպատակը մարդկության կամ հայրենյաց ավերակ սրտին հետ կը խոսի։ Հայրենասիրաց խումբը[2] կուզեմ հոս հիշատակել, որ այս տարի Սահմ.[անադրության] հանդիսին առթիվ իր սրբազան ձգտմանը մեջ հսկա քայլ մ'առավ։

Հայաստանի ավերակ և ամայի սրտին վրա նորընձյուղ ծաղիկ մ'է նա, իր արևն իր նպատակն է, իր ցողն իր քիրտն է։

Մե՜ծ է իր նպատակն։

Նա հայրենի փլատակաց վրա գաղափարի վերանորոգության վառարաններ՝ վարժարաններ պիտի կանգնե. հեղափոխության մրրիկներ՝ սմքած հանճարներ պիտի հարուցանե։

Իցի՜վ թե խավարասերներ իր նպատակին չը դավեն։ Կը թալկանան խնծիղք այդ ճիվաղներուն սև շրթանցը վրա, երբ այսպիսի լուսասփյուռ նպատակներ ասպարեզ կը նետվին։ Կը մոտի այն ժամը, որ այդ սև կառափները ընկնին, որոնք վսեմին, բարվույն, ճշմարտին և գեղեցկին՝ բնության հանճարը և մարդկության ոգին բաղկացնող այս չորս տարերց ցուրտ գերեզմաններ կը հանդգնին ըլլալ։

* * *

Չեմ դանդաղիր մատուցանել իմ անկեղծ շնորհակալիքս Հայկական ընկերության Սահմ.[անադրության] հանդեսին այդ վեհաշուք դրոշակրին։

Այս տարի ավելի շքեղ էր իր ճակատը, ավելի մեծ էր իր փառքը, վասնզի Հիսարի դպրոցի[3] աղքատիկ աշակերտուհյաց անմեղ սրտերն ալ ծափահարեցին։

Կը փութամ նաև շնորհակալ ըլլալ որբերու մեծանձն բարե-

կամին, որ բարեհաճեցավ Ս. Փրկչյան վարժարանի[4] աշակերտները։ Սահմ.[անադրության] հանդեսեն չը զրկել։

Ս. Փրկչյան որբե՜ր, անդունդը թափած այդ շողերը, ո՜հ, անոնք ո՜րչափ շնորհակալ ըլլալ գիտեն, իրենց ձեռքը սեղմող ձեռքին մեջ դողդողալ և փայփայված ատեն փղձկիլ կը սիրեն. արտասրը անոնց հոգիեն կը բխի, անոնք աշխարհի վրա բարերար որտի սիրահար են լոկ։

Սահմ.[անադրության] հանդեսին ներկա գտնվող այդ որբոց մեջ չը տեսի մեկը, որ ժպտեր կամ զմայլեր, ամենքն ալ տխուր էին և կապշեին, մութ էին իրենց ճակատագրին պես։

Օրհնյա՜լ ըլլա այդ թշվառիկներու բարեկամը, թող ինք այդ որբոց աղոթքն հետը տանի, անոնք ալ իր հիշատակը, ինք որչափ անհունը ծածկե՝ փառքը չ'կրնար ծածկել։

* * *

Երբ որոտընդոստ պերճախոս մը իր շանթերը զգածյալ համախմբության մը սիրտը խրելե վերջը թողուց որ մխա՜, ամպիոնին վրա շիկնոտ դեմք մ'երևաց. ծափերու թագուհի մ'էր նա. թոթվեց հոն սիրտը՝ զգացմանցն այն բուրվառը, կուգար իր ճիչը ծափերու ամպրոպի մը մեջ սուզել, սակայն ամբոխին համար գրեթե նորատեսիլ էր այս... ուզեց լսել և զմայլիլ և թողուց որ սրտերը լուռ ծափահարեն։

Ո՜հ, հանճարի հրկնած շանթերը շուրթերու վրա կը մարին երբեմն, գույնն ու ձայնն են որ մարդը պերճախոս կընեն։

Երբ վերոհիշյալ ատենախոսուհին, որուն անունը հարգանոք կը հորչորչեմ, օր. Աղ. Վարդանյան[5] իր ատենախոսությանը մեջ կըսեր «Ես սիրեցի իմ ազգս...», ակամա խնծիղ մը փոթեց շուրթերս, մրմռացի յուրովի. սիրեր է իր ազգը. նման անոր, որ առանց աղոթելու կը պաշտե յուր Աստվածը։

Ուրախ եմ որ չարաչար կարմրեցա այս թյուր կարծիքին վրա, հեգնս փուշի մը պես հոգվույս խրեցավ, երբ լսեցի և տեսի ազգասեր օրիորդին նպատակն ու գործը։

Ազգու շեշտ մ'էր իր խոսքը, որ եզրակացուց թե՝ կնոջ շուրթերը ոչ թե միայն ժպտելու, համբուրելու և հրապուրելու համար գծված են, այլ մանավանդ ՀԵՂԱՓՈԽՈՒՄ։

Պատիվ կը համարիմ ինձ ծափահարել սրտի և մտքի այդ վեհ առաքելուհին։

<ԴԱՄՊԱՆԱԿԱՆ>

Մեծարգո հանդիսականք.

Կ'աղաչեմ, կեցիք քիչ մ'ալ, դեռ մի զատվիք այն սգալի դագաղեն, որուն տժգույն ճամբորդը հանդարտությամբ լսեց իր բարեկամաց հառաչանքը։ Լսեցեք և դուք ուրեմն իր կենաց վսեմ արձագանքը, զոր ինքը բարեկամի մը անկեղծ սիրտը փոխադրեց. լսեցեք իր մեծ հիշատակը հռչակող մտերմի մը տկար ձայնը, որ կը հանդգնի թնդացնել գերեզմանի մը ահարկու կամարը։

Մեռավ մեր սխրալի բարեկամը, Վարդան Լուիֆյան. մեռավ երկրի վրա, գերեզմանաց անշունչ մարմարիոնեն ավելի, որ կը քրտնի, մեռավ այն ծաղկեն ավելի, որ տարվե տարի կը վերածնի. մեռավ նա, ցամքեցավ քսաներորդ գարնանը մեջ։ Բայց հիմա՞ լանք։ Մենք մեծ սխալ մը կը գործենք, զոր մինչտ պիտի կրկնեմ. ծնող մարդուն վրա լալու տեղ մեռնող մարդուն վրա կուլանք, մինչդեռ նա վշտալի անդունդի մեջ կը ծնի և երանության կատարը կը մեռնի։

Զըսենք թե տիեզերք Աստուծո մը ծաղրն է. երբեք. տիեզերք հոգիներու բովն է։

Վարդան Լուիֆյան անոնցմե էր, որոնք միշտ իրենց կենաց մեջ երկնից բուրումը կզգան. այն երշանիկներեն էր, որոնք մաքուր և կարճ կյանք մը կը շնչեն։

Այս զգածյալ բազմության մեջ շատ քիչեր կան, որ անոր սիրտը և հանճարը կը ճանչեն։

Հոս միայն մեկ ողբալիք կետ մ'ունինք. Վարդան գաղափարի հեղափոխական մ'ըլլալու տրամադրյալ էր, երբ լուսո շենքը ձեռքն առավ, երբ ձեռքը թարմ և հանճարեղ ճակտին տարավ, մահը պաղ քրտամբք զայն ողողեց։ Ահա այս է ցավալին։

Սակայն կ'ուզե՞ք որ այժմ իր հոգին չը խռովի. իր կրակն ու հիշատակը Ձեզ կը թողու, դուք որ իր բարեկամներն եք, հառաջ տարեք իր սկսած գործը եթե զինքը կը սիրեք։

Սակայն այս սգալի հանդիսին մեջ բան մը զիս կը զարմացնե. ցավելով կը տեսնեմ որ մեռելաթաղներ բրիչ ի ձեռին անհամբեր կսպասեն որ սիրելվույն սև փոսը վայրկյան մ'առաջ գոցեն. անոնք կը կարծեն որ այն մարդոցմեն մեկը կը թաղեն, որոնց գերեզմանը անդունդ մ'է, որոնք իրենց հիշատակին վրա կը մեռնին։ Ըսեք իրենց, դուք որ Վարդանը կը ճանչեք, ըսեք որ ասի այն մարդոց-

մեն չէ, ասի լուսո զինվոր մ՝է և չը թաղվիր որչափ որ ցուրտ հող թափեն իր դիակին վրա. ասի տասնեվիններորդ դարու ազգի մը և լուսո ճառագայթներեն մին է։

Միթե կը թաղվի՞ ճառագայթը։

Մանավանդ ինչո՞ւ այս գերեզմանը, մինչդեռ իր բարեկամաց ջերմ սրտերը բաց են զինքը հյուրընկալելու.

Գոցվե, դու սև գերեզման,
Վարդան մերն է հավիտյան։

Պ. Դուրյան

ՆԱՄԱԿՆԵՐ

Ա

<Առ
Պ. Տ. Ադամյան>

Բարեկամ,

Անշուշտ կը ներես ինձ, եթե մեր բաժանման հաջորդող զգացումները լռության տակ թաղեցի, եթե չբացի ծանր շուրթերս քեզ «բարով նստիս» մաղթելու. անշուշտ եմ, որ լավ ես և առողջ, հիմա գուցե վառարանի մը ճարճատուն բոցերուն բոլորտիքը կը խոկաս կամ կես մը կը մրափես. կոնակդ տաք, փորդ ուռուցիկ և երևակայությունդ կուսի մը պատկերովը առլի... անշուշտ խաղ և պար ալ կը վայելես. երկու տեսակ օթուզ պիր կը խաղաս, երկուքն ալ իրենց ճգնաժամերն ունին, հոռի՜, նաև ճոռի կամ թոռի[1]... վերջապես կը մաղթեմ, որ ձմեռը լավ որսեր քեզ մատակարարե, ձյունի վրա քալող կամ թռչող ձյունն գունտեր[2], որոնց ճառագայթ մ՝է հարած... որոնք սակայն չեն հալիր, այլ կը հալե՜ն... Թոշնիլ գիտեն անոնք գերբնական վայրկենի մը վառ նայվածքի մը մեջ... Սակայն մեկդի թողունք քիչ մը այս սերը և տարփը նայինք... կը բանաս խորհրդավոր արկղը, փայլուն մետաղներ կը ժպտին. երկու ժպիտ կա առջիդ. ո՞րը կ՝ընտրես... կույս և ոսկի... գիտեմ, այս վայրկենիս ընտրեցիր... վերջապես շաղփաղփությունը. ըսել կուզեմ, բարեկամ։

Ընտանիքդ լավ վիճակի մեջ է, քույրդ և պղտի հրեշտակներդ կլիմայիդ մոտեցան, անշուշտ բավական գոհ ես։

Եթե իմ վրայոքս ալ տեղեկություն կուզես, վիճակս նույնությունն է. առանձինն ըլլալու համար շատ անգամ տունիս մեկ ցուրտ խուցը մեկնած մույգ ու սառ մատներով գրիչ կը ճարճատեմ, կը մրոտեմ, կը վառիմ, աչերս խոշոր խոշոր կը բանամ, կը մրմռամ, ձեռքս ճակտիս կը տանիմ, անհամբերության հառաչ մը կ՝արձակեմ, կը խոկամ, կը ծխեմ... ասոնցմե արտադրյալն է թատերախա՜ղ[3]... հիրավի բոնի թատերագիր կամ բանաստեղծ մը ըլլալ կ՝ուզեմ, տենչ մը, որ աղքատիկ հյուղի մը անկյունը՝ քաղցի և

ցուրտ՝ սև վերմակներուն տակ վերջապես սկսամ կը մարի... Ինչ որ է, պիտի հանդուրժեմ որչափ որ կարենամ, ստակը չեմ ատեր, բայց գրիչը կը սիրեմ, սփոփ մ՝է նա ինձ այս անձուկ կացությանս մեջ, հիմակվան գործատերերը կոչ կուզեն գործածելու և աշխատցնելու, ոչ թե մարդ[4]. ես այս սկզբունքը ճակտիս վրա գրեցի— համբերել և հուսալ— այս սկզբունքը քեզ ալ կը հարմարի... տեսնե՛նք, քանի մը թատերախաղեր ունիմ, կրնամ ստակով կամ ծափով փոխանակել... աս ալ ըսեմ, ամիսի մը չափ մինչև անգամ խոնարհեցա դերասանություն ընելու[5] ընտանիքիս կարոտը լեցնելու համար, բայց Վարդովյանի (հին արկածներե մնացած ատելության կրակովը բորբոքած)[6] նախատինքներուն չկրնալով հանդուրժել[7]՝ աղտոտ անկողինս թատրոնեն տուն փոխադրեցի[8]. այս ալ ըրի ապրելու համար, անգործությունը թոթափելու համար, ինծի ըրած նախատանաց պատմությունը սոսկալի է, և ես ավետարանական հեզությամբ ներեցի... հիմա այդ անցքը հոս պատմելը անպատեհ է[9]... Դու բաժանման կետերուդ շատ կրկնեցիր, որ գործ գտնեմ. եղբայր, սա ճակատագրիս դեմ կը խոսիս... լռենք... աչերս կը լեննան... վերջացնենք... մատներս կը մսին, երթամ վարը քիչ մը տաքնալու...

Կը խնդրեմ, որ դու ալ քու վրայոքդ մասնավոր տեղեկություններ պարունակող նամակ չղլանաս բարեկամեդ... հոս ցուրտը սկսեց, ածուխի կողովներով պզտի մերկ ու մսած աղջիկներ կ՝երթևեկեն փողոցներու մեջ. հիրավի Վիկթոր Հյուկոյի աչքեն խլրտած է այս տեսարանը. հարուստները ջահերով կ՝զբոսնուն, աղքատները առկայծ հողե կանթեղով մը կը մսին... ասոնք ալ սքողենք, Վարդան—Մարտիկ—Պետրոս—նույնություն[10], մեր ճակատագիրները դպրոցի մեջ միացան և տեսնենք ի՞նչ համախմբություն մը զայն պիտի լուծե։

Ընտանիքդ սիրով քեզ կողջունե... նամակդ փութացուր. այսօր այսչափ... կը մսի՞մ...

Անկեղծ
Պետրոս Դուրյան

1870, Դեկտմ. 21
Սկյուտար

<Առ

Տ. Խորեն եպիսկոպոս Նար-Պեյ>

Գերապատիվ Տե՛ր.

Այն հանճարի և եղբայրսիրության արտափայլումները, ճակտի և սրտի ճառագայթներու այն շքեղ միացումը, որով կը սավառնիք՝ կը դրդեն զիս Ձեր Սրբազնության դիմել, Ձեզ՝ յորում տնանկին՝ հաց և դիակին կայծ տալու կազմ հոգի մը կը վառի. Աստուծո տաճարի բուրվառ մը, անդնդոց մեջ կանգնած լապտեր մ՝է այն։

Գերապատիվ տեր, Դուք Քրիստոսի ճառագայթը և միանգամայն հանճարի թևն ունիք, կույր մը չէ Ձեզ դիմողը որ աչերը բանաք, այլ մեկը որ ճակտին վրա սև ամպ մ՝ունի. հյուղի մը հառաչն է այն, հոն ուր վառարանն ամայի է և սիրտը կը մխա, հոն ուր կյանքը կը լռե և քնարը կը հեծկլտա։

Շատ անգամ հանճարի փոթորկին մեջ խարխուլ հյուղի մը տախտակը կը տարուբերի լոկ. երբ այն փոթորիկը կը դադրի, աղիտալի վերջալույսի մը մեջ վայրի ծառե մը շոր տերև մը կ՝իյնա. այն տախտակը անհուշության հողակույտը հարդարող ցուրտ թի մ՝էր, և այն տերևը գուցե համաստեղություններեն իյնող աստղի մը շուքը։

Ի՞նչ ի՞նչ հանճարներ հյուղին այն գահոսային սեմին վրա խամրեցան կամ մարեցան. հասարակաց գերեզմաննոցներու մեջ հողակույտներ կան, որոնք հրաբուխներ պիտի ըլլային, բայց կայծը սրտի թանձր խավարին մեջ առանց երբեք հրահրելու թաղված է...։ Հանճարը վհին մեջ գանկ մը եղավ, առանց մարդկության եթերին մեջ գիսավոր մը ըլլալու։

Ես ալ ժամանակե մը ի վեր այն սեմին վրա կը դողդողամ կամ կը պլպլամ առանց հանճար մը ըլլալու, այլ մարդկային հեղափոխական հրաբուխին բոլորտիքը դեգերող արյունած աչք մը որ անոր կայծերը կ՝ընդնշմարե՝ իր հոշոտած զոհին արյան կայլակները դիտող վագրի մը պես։ Ես կ՝ուզեմ այն հեղափոխական հրաբուխեն՝ այն սիրո հնոցեն՝ այն մարդկության արշալույսեն՝ Գողգոթայեն ձգտիլ մինչև այն գահոսը՝ այն գոս արմատը՝ այն մարդկության վերջալուսային տժգույն հորիզոնը՝ հյուղը։

Ալ բավ հողե կանթեղի մը հետ հսկեցի առանձին, ալ բավ սրտիս կայծերովը աստղերուն հետ ընդհարեցա անձայն, ալ բավ

քրտանց ճակտիս վրա սառիլը զգացի. կը նետեմ ոտքս ահա դուրս այն նսեմ սեմեն և նախ Ձեզ՝ Սիրո պաշտոնեիդ կը դիմեմ։

Ձեր Սրբազնությունը, նշանավոր առթիվ մը, համակրական տեսակցության մը պատիվը ինձ տալե զատ, երջանկություն մ'ալ ներշնչած է[1], որ կը նմանի խղդուկ սրտի մը արցունք մը տալու. ասի խոստում մ'է, որուն քաղցր պահանջումը պատեհ առթի մը վերապահած էի. ահա առիթը ինձ կը ներկայի։

Ներեցեք, Գերապատիվ Տեր, այն հրաբուխի սրտին, որ Ձեր վսեմ քնարին շուրջը կը դեգերի և կը պատրաստվի Ձեր սրտին մեջ շաղ մը և շիթ մը թափել։

Ընդունեցեք, կ'աղաչեմ, Գերապատիվ Տեր, իմ կանխահայտ և ամենախորին մեծարանաց հավաստին։

Պ. Դուրյան

1871 Հունվար 22

Գ

Առ
Պ. Տ. Ադամյան

Բարեկամ.

Հոս ձյունը բավական եկավ, ծածկեց հյուղերը, որուն ներքնակողմը մսող թշվառը ըսավ. «Ահա մեզ ծածկելու համար Աստուծո ղրկած վերմակը» և դողաց. պատանքի մը պես ցուրտ էր այն։ Տաքցի՛ր այս վառարանին քով և մի՛ նախատեր զայն թեև նժդե՛հ ալ ըլլա. եթե անչքավորության մեջ այդ նժդեհությունն ալ չըլլա ո՞ւր կը մնա մեր ճակատագիրը, այն ճակատագիրը, որ զմեզ միացուց մանկության մեջ՝ այն ընկերական վառարանին շուրջը, որ դպրոց կ'ըսվի. միշտ ձանձրալի է այժմյան աշխարհը, անոր համար որ ուղեղին մեջ ջահ մ'ունի. աշխարհի քաղցրությունը վայելելու համար այն դարին մեջ շնչելու է որ քուրձ կը հագնի և կը սիրե. փիլիսոփա աշխարհը ըսել կ'ուզեմ, որ արդեն ուղեղներու մեջ կը սաղմնի... Բայց հիմա սրտի ծալքերը թղթատելու ժամ չ'է...

Քու սիրալիր թերթիդ վերջը «Վարդան» կ'ըսես և հառաչելով կը գոցես. բարեկամ, երբեք պետք չ'է հուսահատիլ մեր ազնիվ

քարեկամին կացությանը վրա, որուն վրա երևցածը լոկ բնության մեկ ժամանակական ներգործությունն է[1], ինչպես երբեմն Տ... եղբայրն ալ ունեցած է վաղանցիկ կերպով[2]։ Ասի իրենց ցեղին մեկ անվնաս օդերևույթն է... շատ մեծ հույս ունիմք, որ քաջառողջ կը վերադառնա։

Այլ քու վերադարձդ ե՞րբ պիտի ըլլա, պետք է որ իմացնես եթե գիտես կամ որոշած ես, արդյոք ե՞րբ մեր նսեմ ճակատները պիտի միանան...

Քիչ մը առաջ նժդեհությունը ծաղրեցի, այլ անոր դառնությունը կզգամ հիմա. ա՜հ, բարեկամ, միթե մեր համազգաց սրտերուն հարահույզ փոթորիկները իրարու հաղորդելու համար կը բավե՞ն այս տկար թուղթերը, որոնք կրեայի չափ համբընթաց են մեր մագնիսացյալ սրտերուն կայծերը տեղափոխելու համար սրտե ի սիրտ...։

Իմ վիճակս եթե հարցնես՝ դեռ անորոշության մեջ կը ծփա, կը տեսնեմ հուսո աստղեր, որ կը շողան. շատ լավ, եթե սև ճակատագրիս թևերը չը փութան զանոնք պարածածկելու. առ այժմ այնչափ չ'եմ ցավիր իմ վիճակիս և հուսահատ ապագայիս վրա որչափ առաջ. ալ ոչինչ փույթս է, միմիայն ընտանյացս բեռ չըլլալ, այս [է] որ կը կորացնե քամակս... Դեռ խոսելիքներս ուրիշ ատեն...

Ի տեսություն

Պ. Դուրյան

5 Փետրվար 1871
Սկյուտար

Դ

Առ

Պ. Տ. Ադամյան
Սգավո՛ր։

Մի՛ թաղեր այդ անհուն հառաչը՝ սրտի այդ փոթորիկը թո՛ղ դուրս ժայթքի...։ Դու ինձ հիշեցուցեր էիր, որ իr հողակույտին վրա[1] փունջ մը ծաղիկ սփռեմ. ե՛ս դժոխք մը անեծք Աստուծո

անվանը վրա թափեցի, ավելի աղեկ չըրի՞. ծաղիկը կը թոռմի-սակայն անեծքս Աստուծո կողը խրեցա՛վ։

Ա՜հ, կը սիրեի զինքը, կը սիրեինք. իր հիշատակին վառարանն-եմ, իր կսկիծին օվկեանն եմ, իր սուգին վիհն եմ, իր գերեզմանն-եմ... Իր գերեզմանին վրա ծաղիկ սփռեմ մի՞, ո՛չ. ծաղիկը պաղ-եմ... և անզգա է, հոգիես քամված արցունքը տաք, զայն կը թափեմ, ափերով կը թափեմ...։ Աչերը կսկիծի մեջ արցունքի օվկիաններ-են, անոնք որ հաճույքի մեջ աստղեր են։

Ցինքը պաղ հողով պատեցին, մենք իր հիշատակը տաք հա-ռաչներու մեջ պլլե՛նք, պահե՛նք, վառ պահե՛նք, միշտ պահե՛նք...։

Կ'անիծես աշխարհը, բարեկամ, արդեն ինքն անիծյալ է։ Աշ-խարհ կամ Աստուծո ձանձրույթի մեկ հառաչն ըլլալու է (քաոսը բնակած ատեն), կամ դժոխոց մեկ անհամ կատակը... Ի՛նչեվիցե, ի՛նչ որ կ'ուզե թող ըլլա, բավական է որ կսկիծի դուռ մ'է։

Իմ վիճակս կը հարցնես, բավական բարվոքած եմ, նամակը գրած օրերս գեշ վիճակի մեջ էի, շատ ցավեցա որ զքեզ խռովեցի։ Առ այժմ Տ.<ոքթ> օր Քյաթիպյան դեռ կը խնամե[2], սակայն դեռ...՝՝՝... Ա՜հ, թողեք որ հոգեբուխ հառաչով մը զԱստված դղրդեմ... անհունության մեջ եմ ինկած. հարկ է որ լռեմ...

Բարեկամության վրա դիր հույսդ, կ'ըսես, դիս ավելի կսկիծի կը մղես, ո՞ւր են իմ բարեկամներս... ինչո՞ւ հեռուն ես...

Պետք է որ շուրթն առ շուրթն տեսնվինք... պիտի տեսնես որ հրդեհ եմ... Ա՜հ, շատ բաներ ունիմ...

Ի ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գ. Գուրյան

1871 Հուլիս 5
Սկյուտար

Ե

Առ

Պ. Տ. Ադամյան

Սրտակից բարեկա՛մ.

Ժամանակե մ'ի վեր է որ քեզ նամակ մի գրեցի, որ անպա-տասխանի մնաց. չցավեցա յայդ, հասկցա որ պատասխանելու կամ միջոց չ'ես ունեցած կամ կարևորություն չ'ես տված. թեպետ

գրնայի այն ատեն ես նամակ մը երկրորդել սակայն ի՞նչ գրեի. ի՞նչ կրնա գրել այն՝ որուն սիրտը դատարկ է. պիտի մակաբերես այդ յուրովի, թե քանի որ այժմ կը գրեմ՝ անշուշտ սիրտս լցուն ըլլալու է.՝՝՝... այո՛, առելի է նա սգալի հիշատակի մը արտոսրով։

Ես գրեթե խաղաղ կը նիրհեի, երբ Մայիս 21ի սև գիշերն կը քրտներ, երբ հոգի մը սրտերու և գերեզմանի մեջտեղ կը կողկողեր։

Փրտտեցան նորա ոսկերքը հիմա, հարթ և անհայտ եղավ նորա հողակույտը... Չ'էի ուզեր հավատալ թե պիտի մեռնի մինչև այն ժամանակ, երբ իր վերջին նվաղյալ նայվածքներեն մին արձակած ատեն, դեռ ինձ չհասած երկուքիս մեջտեղ ինկավ՝ մարեցավ... մինչև այն ատեն, երբ խզդուկ ձայնը տխուր «մնաս բարով»ի մը մեջ կը մարեր... Ա՜հ, հիշատակներ կան որոնք իրենց շարունա-կությանը մեջ միշտ միևնույն շանթերն են...։ Սրտիս ծալուցը մեջ միայն մեկ կորովի խորշ մը կրցի իր տխուր դամբանականը ար-տասանելու վերապահել։

Ինչպես որ տեղ մ'ըսած եմ, մարդկության վառարաններեն մեկուն՝ վարժարանի մը մեջ, սև ճակատագիրը երկաթյա պսակով մը մեր գլուխները իրարու մոտեցուց, սեղմեց, ի մի խմորեց գա-ղափարները, և մեզ՝ մանուկ հանճարներս՝ դալկահար շանթերու փունջ մ'ըրավ. և այդ սև ճակատագրիս պըլլված շաթերեն մին կը մարի ահա բոլորովին, տխուր վերջալույս մը պատկերելով իր սի-րելյաց սրտին խոր։

Տխո՜ւր խոստովանություն։

Ես Վարդանի շարունակությունն եմ։

Ազնիվ բարեկամ, ձմեռը քեզ կը գրեի թե կը մսիմ՝ արդ կը դողդոջեմ, բերնես միշտ արյուն կը հոսի, կը հյուծիմ, ճակտիս վրա կենաց շիկնոտ ծպիտը կը տժգունի։ Անդուլ կերպով քնարս կը թոթ-վեմ անհուն «մնաք բարով»ի մը համար անոնց, որոնք իրենց ծալ-քերը ինձ չը բացին, այլ միայն դուրսեն ճաճանչեցին, նախ կնո՜ջ... երևակայությանս տիրուհվույն... երազի այն երփներանգ աստղին կամ ճաճանչոտ ծաղկին... ո՛չ, ավելի՜ն, շողերու և բույրերու թա-գուհվույն...

Ա՜հ, ներա մեկ շողը երազ մը կը վառե, ներա մեկ բույրը սրտի մը մթին խորանը կը խնկարկե...։ Մեռնի՜լ թարմ և երազոտ... մեռնի՜լ առանց մարմարյա ճակտի վրա խորշոմ մը գծվելու, առանց շուրթեր համբույրով մը բորբոքելու, առանց հոգին ժպի-

տով մը հրդեհելու, մեռնիլ.՝.՝.՝ տխուր է այդ, սակայն . . .

. . . . . .

Շատ կը ցավիմ որ պիտի կարենայիր անցյալները հոս գալ, բայց դարձյալ սև ճակատագիրը արյունոտ ձեռքը կարկառեց մեզ ու խառնակեց ամեն բան։ Չ՝եմ գիտեր թե նորեն գալուդ համար միջոց պատրաստվա՞ծ է. եղբայրդ քանի մը օր է տեսած և հարցուցած չ՝եմ։

Ա՜հ, կուզեմ հետդ տեսակցիլ. դարձյալ ես նույնն եմ, միայն թե քիչ մը գերեզմանի հակած և խոկմանցս գագաթնակետը հասած եմ։ Կը հուսամ որ ալ քենե նամակ մի կ՝ընդունիմ, կամ քիչ օրեն հոս կը տեսնվինք...։

Բարեկամդ
Պ. Դուրյան

1871 Հուլիս 6
Սկյուտար

Զ

Առ

Մեծ.<ապատիվ> Ա. Էֆ.<ենտի> Լուսինյան.

Կ. Պոլիս

Եղբա՜յր իմ,

Ներեցեք։

Իրավամբ զնե հռչակել կուզեի[1], այլ զգացումներս մար և գրիչս տկար գտի նյութին վսեմության առջև... ա՜հ, միթե կարելի՞ է օվսաննա մը հեծկլտալ[2]։ Այս օրերս դարձյալ մշտնջենավոր վերքս[3] շունչ առավ կուրծիս տակ, երկնքիս այդ սև աստղը. ձգե՛ սա «նոճյաց տղուն» (իմ) օձիքը, սա «դաշնակաց բուն» որ վսեմության առջև երբեմն կ՝ապշի, որուն սրտին անդունդը կ՝ալեծփի և շուրթերը քար կը կտրին, որ միշտ իր վերքին կը նայի, ինչպես փառասերն իր աստղին... Ձգե՛ սա «մտերմաց դալկահարը»[4]...

Հանցավոր եմ... այլ ո՛չ, վերքիս մոտեցի՛ր, եղբայր իմ, սա

ահարկու անդունդին... սակայն սև ժայռը և երկնի աստղը կրնան հոն նայիլ լոկ։

Կը հուսամ որ մինչև այս տողերուն հասնելուդ ներեցիր և իմ քը կրցած հասկցուցածս դու հասկցար անշուշտ, վասնզի սրտի մը խավերը կրնա թափանցել բանաստեղծի մը խոկմանց սլաքը[5] դեռ շատ կուզեի գրել, թայց թե՛ ես անհուն եմ և թե՛ եղբայրս նամակը ուշ ձեռքս հասուց[6]. բայց նա ալ այսպես ընել ստիպված էր պարագայից բերմամբ։

Նամակիդ կ՝սպասեմ։

Ի տեսություն.

Եղբայրդ
Պ. Դուրյան

1871 Օգոստ. 13

Է

<Առ

Պ. Հ. Ճանֆեսճյան>

Մտերիմդ իմ,

Ահա՛ անհուն «մնաք բարով»ի առաջին թելը կը զարնեմ։ Ձքեզ տեսնել ուզեցի. ուզել՝ ինձ համար ծարավիլ է. դողդոջ քայլերս կարգի դրի ձեր տունը գալու, զքեզ հարցուցի և հարցունելուս հետ՝ անմիջապես կոշիկներուդ տեղը նետեցի ակնարկս. մայրդ և դատարկությունը տխուր պատասխան մը տվին ինձ.— Հոս չէ։— «Եղբայրս,— ըսի յուրովի,— հոս չէ՛...»։

Գիտեմ, կենաց դառն ներդաշնակությունը չներեց գալ տեսնել անգամ մը եղբայրդ, դալկահար և դողդոջ հյուրը. սակայն այս ճակատագրին սևությանը ի՛նչ պետք է ըսել, որ իմ տկար քայլերս չի վարձատրեց և ստիպեց զիս հոդդողդ ոտնփոխներս ներդաշնակելով մեկնիլ տխուր ու ցաված։— Ո՞ւր.— Փնտռել խորշ մը, ուր արտասվաց բոցանուտ շիթերը կը քողարկվին մարդոց աչերեն։

Իմ վիճակս հուսահատական է, եղբայր իմ. սակայն ես հանդարտ եմ և հարկավ քիչ մը տխուր. թոշնեցավ ամեն մարդկային տենչ սրտիս մեջ, տենչ՝ աշխարհի այդ ոսկեզօծումը. ամեն հույ-

սերս մոխիր դարձան, իբրև մեքենա կապրիմ գրեթե, իմացական հրահրումս կորուսի, մտածումներս կարճ են և մութ։

Սակայն մի՛ ցավիր, բարեկա՛մ, սակայն համոզվե՛, որ քու եղբայրդ գերեզմանի տեղ նոյան տապանը կը մտնե ապխարհի արյունահեղեղեն փրկվելու համար... ո՛չ, այս սև մտածումը չը կշռեր երբեք ծանր՝ հոգվույս վրա, որչափ արցունք մը աչացս մեջ։

Ո՜հ, որչա՛փ ինձ հաճոյական է քեզ առնթերակցելով դալկահար վերջալուսի մը փողփողումովն քանի մը ժամեր ծծել... սակայն գիտեմ, այս հիվանդությանս մեջ փոքր ինչ նողկալի եմ... ինձ նայողին ճակտին վրա արգահատական ծալքերու պատկերումը կը տեսնեմ ես։

Սակայն դու, սրտահոդ բարեկամ, գիտեմ որ միշտ զիս ժպիտներուս, ցավերուս, առողջությանս և հիվանդությանս մեջ առհասարակ համահավասար, անհողդողդ սիրով կը սիրես, և երբ իմ վրա գուրգուրալով ներքինս կուզես խառնել... Կուզես կմախքով մի հոգի մը խառվել... սոսկալի երազոց անդունդ մը պղտորել, որ սիրտս է, ուր մահվան լռությունը կը տիրե և այն լռությունը լուծանող երկնից արձագանքները կան միայն. դուն ալ հնչեցուր հոն քու քաղցր բարբառդ, բարեկամ, գերեզմանի մը համար նոճիի մը ձայնը բավ է, և երբ այսուհետև տեսնվինք շատ չը պիտի խոսիմ, այլ լոկ ակնարկներով պիտի գոհանամ։

Երբեք մի՛ մտաբերեր որ ես հուսահատ եմ. բնա՛վ. բանաստեղծ մը մահվանե չը սոսկար. այն ատեն իրավունք ունեի ցավելու, երբ ամենքն անմահ ըլլային, և ես միայն մահկանացու։

Այսպես համոզվե՞։

Ի քաղցր տեսություն

Պ. Դուրյան

1871 Սեպ. 5
Սկյուտար

Ը

Առ

Մեծ.<ապատիվ> Ա. Ս.<ենտի> Լուսինյան

Կ. Պոլիս

Եղբայր իմ,

Շնորհակալ եմ որ միշտ կը հիշեք զիս. «հուշը» «սեր»ի քույրն է։ Կը ցավիք անշուշտ որ ես փոխադարձաբար չ'եմ խոսիր։ Ձեզ հիշեցուցած եմ արդեն, որ ես «վսեմ»ին առջև կը պապանձիմ. պատասխանելու համար բավական կը համարիմ երբ արտոսր մը աչքիս ետևը կ'այբի, և շունչ մը շուրթերուս մեջ կը բեկբեկի, մանավանդ հիմա որ հոգվույս կենսաբույր ծաղիկը թոշնած է, և նորա տեղ վերք մը կը մխա ներսս։ Երկու տող բան չ'եմ կարող գրել, երևակայությանս մեջ ցուրտ մշուշ մը կա թանձրացած, վայր ընկան գլխուս աստղերը, սև ամպերը ծանրացան հոն։

Հիվանդությո՛ւն և անբուժությո՛ւն, գերեզմանի այդ երկու ստինքը կը ծծեմ. հուսահատությո՛ւն, գերեզմանի այդ սև կաթը կը խմեմ... Ինձ համար չկա հույս, անդունդին մեջ շյուղի մը պլլված եմ. իմ փրկությունս է աստղի մը պլլվիլ, եթե սև ճակատագրս ճերմակ բիծ մ'ունի...։

Ա՜ղնի՜վ Եղբայր, ո՞վ դրդեց Ձեզ այսչափ գորովիլ իմ վրաս, ունկն դնել անդունդ հոտող անձի մը խոսից, և զվարթ թիթեռնիկ գոլով, սիրել նոճիի մը շուքը... Ա՜ղնի՜վ Եղբայր, թիթեռնիկով մը նոճի մը սգավորությունե չը դադրիր, այլ գուցե նորա ցուրտ շուքին ներգործության ներքև գողտր թիթեռն մը թոշնի...

Ա՜հ, այնչափ մթագնած է երևակայությունս. ո՜հ, ո՞ւր եք կրակք իմ... մարեցա՜ք... մարեցա՜ք և ա՛լ չի պիտի վերավառիք. այն Շունչն անցավ Ձեր վրայեն, որ աստղերը կարող է մարել... Դեռ կուզեմ գրել, բայց կը տեսնեք թե այնչափ ուժաթափ են այս խոսքերը որքան գունաթափ է զանոնք ներշնչող հոգին... Իմ մեն մի խոսքերս Դուք Ձեր վառ երևակայությամբ մեկ մեկ գրքեր ըրեք և զիս պիտի լավ կարդաք այն ատեն, լավ պիտի սուզիք յ'իս։

Եղբա՛յր իմ, ներեցեք գրությանս աններդաշնակությանը. ի՞նչ ուղղություն կրնաս պահանջել ավրված դաշնակե կամ նվագարանե մը։

Ի՞նչ գրեչս չեմ գիտեր։

Կաղաչեմ, բավ համարեցեք չախչախ քնարի մը այլանափ հնծծանքը։

Քանի որ ժամանակներդ ներե՛ք, կ'աղաչեմ, Ձեր սիրալիր գրությունքը մի՛ զլանաք որոնք միշտ զիս պիտի հեղափոխեն ի վսեմն։

Դուք Երկրագունտներ ինձ տալ խոստացած էիք՝. եթե կարելի է զանոնք շնորհելու փութացէք, վասնզի առանց կարդալու բան մ'ունենալու՝ տունեն դուրս չ'ելնելու ստիպված ըլլալովս շատ կը նեղվիմ։

Ներա հետ ի՞նչ ունեցար[2], մինչև հիմա, կ'աղաչեմ, տեղեկություն։

Տեսնվինք։

Եղբայրներդ
Պ. Դուրյան

1871 Սեպտ. 6

Թ

<Առ
Պ. Ա. Լուսինյան>

Եղբայր իմ,

Ձեր սիրալիր տողերուն փոխարեն աստղերու հեղեղ մը կուտամ սրտես...

Օրհնյա՜լ ըլլաք, որ կուզեք Ձեր վսեմ կրակովը բռնկել սա նոճյաց դալկահար որդեգիրը, որ միշտ իր սրտին մոխիրները կը գգվե. օրհնյա՜լ ըլլաք, որ կուզեք սրտես դուրս հեղեղել թանձրամած սուգը։

Պիտի կարդամ միշտ ձեր տողերը քաղցր արտասուքներու փոգփոդումով և վեր պիտի առնեմ թաց բարձիս գամված դողդոջ գլուխս, կսկիծներուս մեջ վայրկյան մը հպարտ պիտի ըլլամ, կուրծիս հևքը վայրկյան մը պիտի դադրի՝ եղբար մը վսեմ ոգին ծծելու և իր անմահ անունը սրտիս խորերը կուլ տալու։

Ա՜հ, խիստ վսեմ կը շարժիք, եղբայր իմ, և կը ներեք միշտ վեհանձնությամբ մը թաղված հոգվույս ցուրտ լռությանը։ սակայն ի՞նչ ընեմ. սառույցե գոտի մը սիրտս շղթայած է... ո՜հ, թող Ձեր թրթռուն հոգին խոսի միշտ, թեպետև տժգույն ճակտիս վրա այնպես կերևի, որ ամեն բան կը մարի. սակայն կուրծիս տակ հեղաշրջումներ կեռա՜ն։

Խոսեցեք, եղբայր իմ. խոզին առջև չե՞ք թափեր Ձեր մարգարիտներն, Ձեր խոսքերը սառույցե ճակտիս ետև արևներ են... միշտ խոսեցեք։

Կուզեի ներա պաշտպան հանդիսանալ, կուզեի այդ Թեր—Հակա Արամը ճզմել[1], այլ ներեցեք, եղբայր իմ, գրիչս ձեռքիս մեջ կը դողա, ահա կը տեսնեք, տարտղնած վիճակի մեջ եմ։ Եվ արդեն այսչափ... իմ խոսիլ հարկ չէ։

Դաճաճին գրածին արժանիք տալ է. միակ դուք ալ գրեք, բավական է, արդեն ես այնպես կը կարծեմ, որ այդ խծբծումը շատերուն քմծիծաղին արժանացած է. այսու ամենայնիվ կուզեմ գրիչ լզող գտնել այդ մասին մի քանի տող գրելու[2]. ասկե զատ, եթե բարեբախտաբար գրելու կարողություն մը ունենայի, ներա ատենախոսությունը չըկրնալ գտնելուս համար ետ պիտի կենայի, վասընզի Արամի այդ թերաքննության մեջ ներա... խոսվածքն... անանկ... նկատմամբ... մը խոսքերուն ակնարկություններ կային, որոնք կրնային Արամին անտեղություններ ընելովն... խծբծել։ Շատ կաղաչեմ, որ այս մասին ներողամիտ լինիք, եղբայր իմ։ Ներա համակրանաց նամակը կարդացի. շիտակը սքանչացա այն վսեմ զգացումներուն արտահայտություններն տեսնելով, որոնք կուսական բերանե մը կելնեն և մեծերու հիշատակարանը կընկնին։

Այսպիսի վսեմ նյութերու առջև լռելը մեծ բան է ինձ համար. վսեմ է ինձ համար լոկ դողդոջել։

Ա՜հ, այսպես միշտ իմ վրա գուրգուրալով, կուզե՞ք որ միշտ շնորհակալ ըլլամ. ի՞նչ ըրի Ձեզի, չեմ գիտեր, եղբայր իմ։ Ա՜հ, գիտեմ, դալկահար դողդոջ ըլլալուս համար զիս սիրեցիք... բանաստեղծական մը ըլլալուս համար բանաստեղծ մը գրավվեցա՞, գիտեմ...

Եթե ճակտիս վրա վարդ ունենայի՝ կիները զիս պիտի սիրեին. ա՜հ, ավելի լա՜վ է, որ դալուկն ունիմ, և բանաստեղծները զիս կը սիրեն։

Զորեքշաբթի օր Ձեզ սպասեցի. տխուր վերջալույս մ'ունեցա։

Տեսնվինք, եղբայր իմ, գոնե Ձեզ հետ քանի մը զվարթ ժամեր ծծեմ։

կը հուսամ, որ քիչ տաղտկալի կըլլամ Ձեզ տժգույն շրթանցս թափթփուկներով։

Երեկվընե ի վեր վիճակս վատթարացավ. կաղաչեմ, մի՛ տրտմիր։

Ես տրտում ժամերուս ատողներուն կը հառիմ. Ատուծո այդ կրակներն զիս փոքր ինչ կսփոփեն։

Մնաք բարո՛վ։

Եղբայրդ
Պ. Դուրյան

1871 Սեպտ. 9
Սկյուտար

Ժ

<Առ

Պ. Ա. Լուսինյան>

Եղբայր իմ,

Ինե մեկ քանի թատերախաղերս կուղեք. բայց ես միայն նոցա ծրագիրներն ունիմ, որոնք անընթեռնելի ըլլալե զատ՝ թղթի կտորվանքներու վրա գրված են։ Մաքուր ըլլալով «Վարդ և Շուշան» անուն սիրային թատերգության խաղատետրն ունիմ քովս։ Ասի տասն և հինգ տարեկան հասակի սիրո և հանճարի հանդուգն փթթում մ'է. եթե կը հաճիք, սա Ձեզի կրնամ յուղարկել. իսկ մյուս Ձեր մասնավոր խնդրվածներուն գալով, անոնցմե մեկ երկուքին <այսինքն՝ Արտաշեսին և Անկումն Արշակունյացին տետրերը> կը խոստանամ, որ Վարդովյանը տեսնելով՝ քիչ մը միջոցի համար ուզեմ. եթե տալու հաճի, ուրախությամբ Ձեզ կը յուղարկեմ. բայց նոքա ո՛չ երթալնին չգիտցող փոթորիկներ են։

Եղբայր իմ, ի՞նչ պիտի ընեք զանոնք՝, Ձեր գրության ձևը պիս հետաքրքրության մեջ ձգեց. պետք է որ առանց ատեն անցնելու հետաքրքրությունս հագեցնեք. ինձ մի քանի ջվարճալի վայրկյաններ պիտի հավելուք. ուրեմն, պիտի աշխատիմ զանոնք Ձեզ յուղարկելու ջանալ։

Դուք քան մը ինձ կիմացնեք[2]. ես կը գուշակեի դայն արդեն. բայց դարձյալ լսած ատենս սիրուն հրճվանք մը ունեցա. ըսի

ինքներն. «Արդյոք պիտի վայելե՞մ այն օրն, ուր նոքա զբաղ պիտի պիտի տան...» մեծ պիտի ըլլա ինձ համար այն օրն... հարկ է որ հարուցած խոշոր անիվներուն յուղ քսվի։

(Արդյոք պիտի ապրի՞մ մինչև այն ժամանակ)։

Այն շնորհալի հանդեսին մեջ ես ալ շշուկ մը պիտի ունենամ, չեմ ուզեր զայս երազներու կարգն անցնել. մոռացո՛ր այդ օրն, եղբա՛յր իմ, կուզեմ Ձեր ըմպած երջանկության բաժակեն կաթիլ մը գողնալ, որ կարող է սրտիս անհուն բաժակը լնուլ։ Ձեր ադամանդյա պսակին հետ իմ սիրտն ալ պիտի ճաճանչե։ Թո՛ղ գա այդ փառազարդ օրն, եղբա՛յր իմ։

Դարձյալ սիրտս ցամքած է, չկարեմ զգացումներս ուզածս պես դուրս տալ... ո՜հ, ցամա՛ք սիրտ, ե՞րբ պիտի թարմանա, ե՞րբ առաջվան պես խնդումներ պիտի անձրևես։

Ջտեսությունենիս երկարեցավ, եղբայր իմ, Սկյուտարը մի՛ մոռնար։

Նամակներուդ տողերը քիչ մը ստվարացուր, միշտ գրե՛, եղբա՛յր իմ, եթե ես զվարթ և առողջ ըլլայի, միշտ պիտի գրեի։

Սիրո անհունություն մը կը մաղթեմ...

Եղբայրդ
Պ. Դուրյան

1871 Սեպտ. 30
Սկյուտար

ԺԱ

<Առ «Օրագիր»>

Մ.[եծապատիվ] խմբագիր.

Անցյալ ամեռ Մայրաքաղաքիս Թուրքո-Հայկական թատերախմբին հուշարար Տիգրան Գալեմճյան անուն անձը՝ իմ հեղինակությունքն եղող երկու Ազգային թատերախաղ ընդունեց ինե, որոց անվանքն են ՍԵՎ ՀՈՂԵՐ ԵՎ ԳՈՐԾԱՆՈՒՄՆ ԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ, սա պայմանավ, որ նոցա արժեքինքը անպատճառ պիտի վճարեր Պ. Տիգրան՝ հիշյալ թատերախաղաց ներկայացմանց միջոցին։ Վերոհիշյալ թատերախաղները անցյալ ամեռի

վերջերը ներկայացվեցան և, ըստ սովորության, արդ. Հայ հասարակության կողմեն ջերմ ընդունելություն գտին՝ ըստ վկայության իմ հանդիսատես բարեկամաց, վասնզի դժբախտաբար հիվանդության պատճառավ, ես ինքնին չը կրցի վերոհիշյալ ներկայացմանց ներկա գտնվիլ և ծափահար հասարակության իմ անկեղծ շնորհալիքն արտահայտել։ Պ. Տիգրան մինչև հիմա թատերախաղներս գրեթե անվճար թողելե զատ— վասնզի պահանջես դուզնաքյա մաս մ'եմ միայն դեռ ընդունած— խաղատեսերս* ալ իր ճանկը անցուցած՝ թե զանոնք ինձ վերադարձնելու և թե նոցա արժեգինքը ամբողջ ինձ հանձնելու մասին նենգամիտ դժկամություն մը կը հայտնե։

Ուստի, այս օրեն ներկայիվս կը հայտարարեմ թե առանց հիշյալ թատերախաղուց արժեգինքը ամբողջապես ինձ վճարելու՝ նոցա գալիք բոլոր ներկայացմանց իրավունքը իրավանց զորությամբ ինձ կը վերապահեմ իբրև հեղինակ, և եթե Պ. Տիգրան անիրավաբար իմ այս հայտարարության ականջ խցելու հանդգնի կամ վերոհիշյալ թատերախաղերը ինձ չը վերադարձնե և կամ նոցա արժեգինքը ինձ չը վճարե՝ պատասխանատու կը հրատարակեմ զինքը Դատաստանական բարձրագույն ատյանի առջև։

Պ. Դուրյան

30 Սեպտ. 1871
Սկյուտար

ԺԲ

Առ

Պ. Տ. Ադամյան

Բարեկա՛մ.

Չեմ գիտեր թե ի՞նչ գրեմ. ո՜հ, դժվար է խոսիլ անհունի մը համար, անհունը շուրթեր չը կրնար ունենալ, անհունն ինքն իր մեջ կը թաղվի, ինքն իր մեջ կը փողփողե։

Ես ալ առաջինը չ'եմ (թող այս խոսքը քեզ չը տխրեցնե), իմ հոգին հառած է դալկահար և անհուն աշխարհի մը, զոր երկինք կը կոչեն... Ա՜հ, բարեկամ, կուզեմ զգալ թե երկին մը կա, վասնզի դժվար է ինձ հավատալ թե աշխարհ մը կա ինձ համար... և ի՞նչ աշխարհ... Ես ըսած եմ անգամ մը, թե աշխարհ Աստուծո՝ այն գերմարդկային տիտանին ձանձրույթի մեկ հառաչն է, հառաչ մը, որ աշխարհաստեղծությենե առաջ գահոսային խառնակության մը վրա հառաջ եկավ... Աղետալի՜ փոթորիկ Աստուծո մը սրտին, անհուն անապատի՜ մը։

Դու կրսես վերջին նամակիդ մեջ. «Իբր թե յաստիս միայնակ, «ո՞ւր ես» կը գոչես ինձ. այդ հարցումդ զիս տխրեցուց, միթե սրտիդ ծալուցը մեջ անգամ չը գտա՞ր զիս»։ Ա՜հ, միթե հիշատակ կը բավե՞ ամենասիրելվո մը կրակոտ հիշատակը միթե կը բավե՞ անոր համար, որ «մնաս բարով»ի տխուր թել մ'է դարձած, որ «դալկությանց բուրաստանին» կ'որդեգրի, հանցա՞նք է միթե բարեկամ մը կարոտել, անոր հոգվույն ծարավին ըլլալ, անոր խոսիցն ու ժպիտներուն անոթին ըլլալ... ո՜չ, չը բավեր ինձ հիշատակդ, դու ինքնին միայն չը բավես ինձ. ինչպես որ ես Վարդանի[1], դու ալ իմ ցուրտու տոթարթ աչերը պիտի փակես... Մի՛ տխրիր բարեկամ... ես տխուր-զվարթ մ'եմ. ո՜չ, դողդոջ երջանիկ մ'եմ... մահու դալուկը իմ ճակտին վրա կը պլպլա իբրև մելամաղձոտ ժպիտ մը, դալկահար ժպիտ մը որ զիս երկնքի հետ կը միավորե։

Երբ լսեցի որ գարնան հոս պիտի գաս սիրտս անհուն ուրախությամբ մը զեղվեցավ... Ինչո՞ւ արդյոք ինձի ղրկած նամակովդ այս լուրը չը տվիր։

Գիտեմ որ սիրելի է քեզ կարդալ և հեղեղել ամենասիրելվո մը հիշատակը.. ուստի Վարդանի գերեզմանին ուղղյալ սա ներփակյալ տաղերգությունը ղրկեցի[2]։

Այս խոսքը թե՝ «Մեր անիծից ահավորությունը, օր մը պիտի տարտոր հարկավ այն գերագույն անգուրը, զոր մենք Աստված կը կոչենք» զքեզ ահավոր բանաստեղծ մը նկարեց իմ առջև...։

Մնաս բարյավ, ի տեսություն։

Պ. Դուրյան

1871 Հոկտ. 14
Սկյուտար

* Վերոհիշյալ երկու թատերախաղներեն զատ ՏԻԳՐԱՆ Բ. անուն երեք երկու

Ամ

Գ. Տ. Ադամյան

Եղբա՛յր իմ.

Այն վերջին սիրալիր նամակիդ փոխարեն, յորում ճշմարիտ—բարեկամական գորով մը կը հեծկլտար, ուզեցի սրտիս անդունդներեն աստղերու հույլեր դուրս հեղեղել, այլ ավա՜ղ, այն անդունդները բոլորովին ցամքած գտի։

Շնորհակալ եմ որ զիս կը մխիթարես, սակայն ես արդեն ըսած եմ, թե բնավ մահվանե վախ չ՚ունիմ, վասնզի տքնեցա ինքզինքս զզվեցնել աշխարհեն. եթե ցավ մ՚ունիմ, այն է թե զքեզ վերջին անգամ չը պիտի կարենամ տեսնել, վասնզի յանկողնի եմ, ա՛լ դուրս ելնելու կարողությունը չը մնաց վրաս. սանդուղեն վար իջնելու համար հարկ է որ հենարանին կրթնիմ։ Ալ բոլորովին հայտնի եղև (թեպետև առաջին օրեն գիտեի և միշտ, մինչև անգամ բան մը չունեցած ատենս, անդրդվելի պահեցի այն գաղափարը, թե ես «երկնքի հիվանդությունն» ունիմ։

Ափսո՜ս, շատ հեռու կ՚երևի ինձ փթթինազարդ Գարունը, ձըմբան ձյունները իմ սիրած վայրերուս հետ (ուր միատեղ շատ անգամ իրարու սիրտ կը ծծեինք) զրս ալ պատանավորել կ՚սպառնան. եթե քու գալուստդ գարնան մնա, շատ կը սոսկամ որ ո՛չ մտերմական ժպիտդ և հետևաբար ո՛չ ալ գարնան փթթումը պիտի տեսնեմ։

Ալ բոլորովին մարմնույս հետ միտքս ալ տկարացավ, մարեցան խանդերս... ո՛չ, չեմ կրնար գրել, ցամաք են բոլոր գրածներս... կուզեի շատ բաներ գրել իմ այս նվիրյալ ժամերուն... ափսո՜ս, կուզեի իբրև հավերժական հիշատակ երկտող տող մը գրել քեզ[1], սակայն իմ մեկ լավ և փայլուն ժամուս կուզեմ գրել, որպեսզի ցամաք չը լինի... իսկ եթե դժբախտաբար չը կարենամ գրել, գրված համարե զայն իմ գերեզմանի հողերուն վրա։

Կ՚աղաչեմ, եթե ժամանակ ունենաս, նամակներդ ստեպ և երկար ըրե՛, ո՞րչափ սիրելի են ինձ անոնք. մնաս բարյա՜վ... (չըլլա՜ հավերժական)... Ի տեսությո՜ւն։

Գ. Դուրյան

1871 Նոյեմ. 23
Սկյուտար

<Ամ

Գ. Ա. Լուսինյան>

Եղբայր իմ.

Ներեցեք ուշկեկ պատասխանելուս։ Թեև դարձյալ մատներս գրչիս վրա կը դողդոջեն. սիրտս զգածվելու տեղ կը մարի և ես նայելու տեղ կը փղձկիմ, բայց կ՚ուզեմ օրհասականի մը դյուցազնական ճիգ մ՚ընել և երկու տող ալ գրել.

Եղբայր իմ, Ձեր վերջին նամակը զիս մխիթարել կ՚ուզե. և կ՚ըսեք. «Մեկդի ձգե «սա հիվանդ եմ ի գաղափարը մտքեդ և բոլորովին կ՚բուժիս»։ Ա՜հ, եղբայր իմ, կուրծիս տակ հրաբուխ բռնկած է. կրակներ կ՚եռան ու կ՚այրեն զիս. Աս կրակը երկընկեց կրակին նման է, որ չ՚մարիր և չպիտի մարի, մինչև չսպառե ամեն ինչ։

Այո՜, ալ հիմա հավատացի թե կը՚ծյուրի՜մ եղեր. գիտեմ թե ալ շատ չապրիմ պիտի։ Ա՜հ, եղբայր իմ, ահա երիտասարդ մը՝ որ եկած է աշխարհ միայն իր մահն ու իր թշվառությունը տեսնելու և զգալու համար.

Չգիտեմ ինչ գրեմ. Կ՚զգամ շատ, բայց գրելու դժվարություն մը կա. կարծես թե գերեզմանին մեջեն կը խոսիմ։ Ալ մարը մտնելու վրա եղող ճառագայթ մ՚եմ. մարո՜ւմ մ՚եմ. քայքայում մ՚եմ։ Գիտեմ այս տողեր վերջինն են և վերջինը պիտի լինին. սակայն սա տարտղնած ուշս ինչպես վրա բերեմ ու խոսիմ. բանաստեղծ չեմ, բայց բանաստեղծությունը կը սիրեմ։ Ես, որ աշխարհի մեջ միայն երգերը շատ սիրեցի, կուզեմ որ իմ վերջին շունչս ալ երգ մ՚ըլլա։

Կարապն իր վերջին շունչին իր էն ներդաշնակավոր ճիչը կ՚արտասանե կ՚ըսեն։ Թող ես ալ կարապին պես անցած ըլլամ աշխարհեն։

Ձեր գրեր վերջին ատեններս ինձ մեծ սփոփանք և ախորժ նվիրեցին։ Հազիվ տերևոց և ստվերաց տակ, հազիվ Ցուակյաստարա գեղեցիկ և հովասուն դաշտաց և մարգաց մեջ մեկ քանի զվարթ պտույտներ ըրինք և ահա կրկին անկա, ա՛լ անշուշտ չ՚կանգնելու հրլսաՀատությամբ։ Բայց դուք գրեցեք, եղբայր իմ։ Ձեր խոսքեր սպունգնե՞ր են, վիշտերս կը ծծեն։ Այո՜, գիտեմ Դուք բնավ տխրություն չեք սիրեր և շատ անգամ տխրության գաղափարը ծնող դամ

զարթուցանող առարկաներ չտեսնելու համար առանձին տեղերե կերթաք։ Բայց իմ տխրությունս կը սիրեք, զի բանաստեղծական է։ Ա՜հ, քանի՜ քաղցր եկավ ինձ սա խոսքդ՝ «Ավելի կը սիրեմ Ձեր ճակտի մելամաղձոտ դալուկը դիտել, քան թե գեղեցիկի մը այտին վարդերը կամ ճակտին ադամանդը»։ Աշխարհի մեջ ապրեցա՜ և Ձեզի պես մրայն ձայն մ'ը ըլլալ սիրեցի, Ձեզի պես երգել սիրեցի։ Ով որ երգ չունի կամ երգել չգիտեր, զգալու ներդաշնակության, գեղեցկին ու սիրունին իտեականը շոշափելու քաղցրությունը չ'ունի։

Մարդուն նշանաբանը երգն է։ էն առաջին ձայնը երգն է, բնությունն ամբողջ երգ մ'է։ Այո՜ եղբայր իմ, խիստ ընտիր խոսեր էիք օր մ'ինձ թե «երգը ոչ այլ ինչ է բայց եթե ձայներու ներդաշնակավոր փունջ մը»։ Այո՜, ես ալ կ'ըսեմ.

«Երիտասարդ ըլլալ և երգե՜լ
Ծեր լինիլ և աղոթե՜լ»։

Ա՜յս է կյանքը։

Ա՜հ, գեղեցիկ կյանք մ'ալ կա. սերն է այդ. «երգե՜լ, աղոթե՜լ ու սիրե՜լ». Ա՜հ, ի՜նչ բանաստեղծական կյանք, ի՜նչ կատարյալ կյանք. դուք կ'երգե՜ք, կը սիրե՜ք ու կ'աղոթե՜ք։

Աշխարհի մեջ հոգիներու էն մեծ ախորժը սիրելն է. դուք զայս, քան զամեն մարդիկ աշխարհի, ընտիր և վսեմ կերպով գիտեք. դուք կը սիրեք և կը սիրվիք։ Կը սիրեք անդր քան զգերեզման, կը սիրվիք անդր քան զհավիտյան։ Եղբայր իմ, քանիո՜ն սիրելի՜ և տենչալի էր ինձ տեսնել Ձեր սիրո նշանավոր Հանդեսը[1]։ Եթե զայն եզակի վրա վայելելու անհուն քաղցրությունը չունենամ, Աստեղաց և Հրեշտակաց Հայրենիքեն զեփյուռի շնչով նորա մեջ հծծելու երաբ ու տենչը (ի՜նչ հուսահատ կը խոսիմ. ներեցեք եղբայր, ամեն ինչ պիտի խոստովանիմ Ձեզ թեև խառնաշփոթ) ունենամ պ'ալ։ Ա՜հ, քեզ հետ ես ալ կ'աղաչեմ և կը փափաքիմ նախախնամության, որ պահ մը հրաման տա, որ մահն ու կյանքը զինադուլ ընեն և ես ալ տեսնեի՜ տապանի թունկիկին և գիշերվան արևին աջակցումն... Ի՜նչ սրտահարույց բոպենե՜ր...

Այդ աջակցումը շանթի ու ծաղկի աջակցում մ'է։

Աքեն ու տիեզերք զույգ մը նոր երջանիկ պիտի տեսնեն։

Ձեր ճակատագիրը երջանկություն է։

Մարդիկ միայն Ձեր վրա նախանձելու չափ դմայլին պիտի։

Դուք անբիծ եք և զուտ. ով որ ի Ձեզ սե՛ ու պղտոր կը տեսնե՝ ինքն է սեն ու պղտոր։ Եթե արա՜ և Փանոսյանի Մանուշ ապագա

ուխտն իր առաջին շունչն ու ճաճանչը ի Ձենչ ընդունի պիտի. Շահնազարա չափ պարտիս սիրել զՓանոսյան։ Օր մ'ինձ ըսած էիր թեև թե՝ «Փանոսյան մեկ կողմով ինձ սկզբունք մ'է, ճշմարտություն մ'է, նա մեծ գործող մ'է»։ Հոգ չէ նա զիս ալ նախատեց[3], հոգ չէ Դուք էիք ինձ խրատողը, թե Փանոսյան երբ կերքի ելնե՝ աչքին քիրն ալ լինի Աստվածն անգամ իր առջև գա, կը կոխե կ'անցնի կամ անդի՜ն գնա՜ կ'ըսե. և այս ալ ամեն մարդու բնական է։ ՊԱՓԱԿՏՈՒՄԻ[4], ՆՈՐԱՅՐԻ և ԱՐՄԵՆԱԿԻ վրեժն[5] անշուշտ պիտի մոռնա, զի գերեզմանեն անդին, բարկութենե վերջը ամեն ինչ ներողություն է։ Ներենք ու ներվինք։ Եղբա՜յր, սոքա օրհասականի մը վերջին մրմունջներն են. ամեն ինչ անկեղծությամբ պիտի ըսեմ, զի ալ աշխարհե և խղճես կախում և նկատում չունիմ։

Եղբայր, ահա ես կ'իջնեմ կամ մոտ եմ իջնելու այն սև հատակ անդունդին մեջ՝ որո անունը գերեզման կ'ըսեն. արդյոք ինչ պիտի ըսեն ինձ գերեզմանեն անդին (անշուշտ ահա թշվառ երիտասարդ մը, որ աշխարհ եկավ և միայն իր մեռնիլն զգաց ու մեռավ)։

Մեկ քանի պատառ թուղթերու վրա արցունքոտ տողեր գրեր եմ[6]. անշուշտ բարեկամքս զանոնք պիտի պատվեն և անոնց արև տեսցնեն պիտի։ Արդյոք Զարդարյանի հետ խոսեցար վերջի հեղինակած գործույս տպագրության համար[7]։ Ուշս տարտղնած է, եղբայր իմ։

Մահվան սպանդ մ'եմ, կ'երթամ առաջի կտրչին, կը հավատամ Աստուծո, կը հավատամ այն հանդերձյալ ապառնիին։ Ով որ կը հավատա երջանիկն [է]։ Աշխարհի մեջ միայն անհավատն ապերջանիկ, հուսահատ և թշվառ է։ Թերևս բարեկամք կամ ընթերցողք զիս միստիզական կամ այլաբանական գտնան տողերուս մեջ։ Արդեն ես ալ այլաբանություն մ'եմ, խորհուրդ մ'եմ։ Էությունս է, առումս այն է։

Եղբայր իմ ինչու չես գար։ Երբ մահճիս քով բարեկամներս կը տեսնեմ, կարծես հուսո և կենաց հրեշտակներ կը տեսնեմ։

Գիտեմ քիչ ատենն պիտի մեռնիմ. արցունքի տեղ դագաղիս վրա երկու խոսք, հառաչանքի տեղ երկու շունչ աղոթք հոգվույս համար և վշտի տեղ երկու փունջ ծաղիկ գերեզմանիս վրա։ Ես ալ մեռած չըլլամ պիտի, միշտ դալար ու կենդանի մնամ պիտի։ Մի՜ տրտմիք կ'աղաչեմ սույն հուսահատ և հրհասական տողերուս։

Ա՜ղ ույժ չմնաց մատներուս վրա, կարծես թե բոլորովին ալ թալկացում մ'եմ։

Զեռքդ կը սեղմեմ գորովանոք և Ներա իմ հարգանաց հուսկ ողջույնս կուղղեմ. ծի՛ք և ծաղկի՛ք.

Ափսո՜ս։ Այո՛, Ա՜հ մ'եր սկիզբս, Վա՜խ մ'եղավ վախճանս։

Երջանիկ եք և երջանիկ պիտի ըլլաք և երբ երկինքն ալ երթամ Աստուծ. և հրեշտակաց առջև Ձեր երջանկութիւնը պիտի խնդրեմ։ Վայելեցե՛ք... Մնա՛ք բարյա՛վ։

Ա՜հ. կրկին կ'ողջունեմ զՁեզ ծերկուքդ։

Ծղբայրդ

Պ. Դուրյան

<1871 Դեկտ. 10
Սկյուտար>

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏԱՂԵՐ

Պետրոս Դուրյանը երազում էր իր երկերը, հատկապես բանաստեղծությունները, տպագրված տեսնել։ Փաստերը ցույց են տալիս, որ նա 1871-ին հրատարակության է պատրաստել իր 29 քերթվածների գրքույկը, խորագրել այն «Տաղեր» և նույնիսկ ձևավորել։ Մի քանի ամիս անց գրողը կազմել է տաղերի նոր տետր՝ առանձնացնելով 38 ստեղծագործություն։ Հենց այդ բանաստեղծություններն էլ, հեղինակի ընտրած հաջորդականությամբ, ըստ պահպանված ինքնագրերի, ներկայացված են սույն ժողովածուի «Տաղեր» բաժնում։

Իղձք առ Հայաստան— Առաջին անգամ տպագրվել է նոմահու՝ 1872-ի կեսերին լույս տեսած «Տաղք և թատերգություն» (Կ. Պոլիս) ժողովածուում։

Սիրեցեք զ'միմյանս— Առաջին անգամ տպագրվել է 1872-ի ժողովածուում։ Հավանաբար գրված է Հիսուսի այս պատվիրանին նվիրված Մկրտիչ Խրիմյանի (Հայրիկ) քարոզի առիթով, որ նա կարդացել է 1869-ի նոյեմբերի 11-ին Սամաթիա թաղի եկեղեցում և որի շարադրանքը հրապարակվել է ժամանակի թերթերում։

Պետք է մեռնի՞լ— Առաջին անգամ տպագրվել է 1872-ի ժողովածուում։

Ի պատիվարական ընտրություն ամեն. Հայրիկին— Առաջին անգամ «Զոն առ Հայրիկն Խրիմյան ազգասեր նորընտիր պատ.[րիարքն] Կ. Պոլսոյ» վերնագրով տպագրվել է 1869-ի հոկտեմբերի 2-ին Կ. Պոլսի «Օրագիր ծիլն Ավարայրվոյ» թերթում։ Բանաստեղծությունը շարժել է ընթերցողների հետաքրքրությունը և «Օրագիր»-ի խմբագրությունը, ընդառաջելով նրանց ցանկությանը, հոկտեմբերի 6-ին հեղինակի մասին տպագրել է կենսագրական տեղեկություններ։

Ի դիմավորության ամեն. Հայրիկին— Առաջին անգամ տպագրվել է 1872-ի ժողովածուում։ Գրված է Մ. Խրիմյանի Կ. Պոլիս գալու կապակցությամբ։ «Մովսեսի քենարն» արտահայտությամբ ակնարկված է Մովսես մարգարեն, որն, ըստ աստվածաշնչի, իր երգերով օգնել է իսրայելցիներին՝ փրկվելու եգիպտացիներից։ Բանաստեղծության մեջ հիշված Ղևոնդը Վարդանանց պատերազմի հերոս Ղևոնդ երեցն է, որը 449 թ. գլխավորել է շինականներին՝ Անգղ գյուղում կռտորելու պարսից մոգերին։

Հայրիկն ճայոց— Առաջին անգամ տպագրվել է 1869-ի հոկտեմբերի 27-ին «Օրագիր...» թերթում։ Գրված է բառախաղային հանգավորմամբ։

Երգ մարտին Վարդանանց— Առաջին անգամ տպագրվել է 1872-ի ժողովածուում։

Նե— Առաջին անգամ տպագրվել է 1872-ի ժողովածուում։ Դուրյանը իգական սեռի երրորդ դեմքի հոլովաձևերի գործածել է ղերանվանական «նեռ» ձևը։

Սո կայսն— Առաջին անգամ տպագրվել է 1872-ի ժողովածուում։ Դուրյանն աշխատել է բանաստեղծությունն արտաքնապես նմանեցնել տավղի, ուստի սկսել

է 16-վանկանի տողով և տող առ տող պակասեցնելով մեկական վանկ, ավարտել մեկվանկանի տողով։

Վիշտ ճայուն, Կույսն լիյալ— Առաջին անգամ տպագրվել են 1872-ի ժողովածուում։

Նայվածք մը— Առաջին անգամ «Հայեաց մի» խորագրով տպագրվել է 1871-ի հուլիսի 10-ին Կ. Պոլսի «Մեղու» թերթում։

Նվեր է տարեդարձի Ազգային սահմանադրության— Առաջին անգամ տպագրվել է 1914-ին Թեոդիկի «Ամենուն տարեցույց» տարեգրքում։ Գրված է արևմտահայերի ներքին գործերին վերաբերող կանոնագրության՝ Ազգային սահմանադրության տարելիցի առիթով։ Այդ սահմանադրությունը պատրիարքարանն ընդունել էր 1860-ի մայիսի 24-ին, իսկ Բ. Դուռը հաստատել էր 1863-ի մարտի 17-ին։

Հծծյուն— Առաջին անգամ «Հծծյուն» վերնագրով տպագրվել է 1871-ի մայիսի 27-ին «Մեղու» թերթում։

Զոնիկ, Մանուկն առ խաչ— Առաջին անգամ տպագրվել են 1872-ի ժողովածուում։

Ի՞նչ՝վ թե— Առաջին անգամ տպագրվել է 1871-ի հունիսի 19-ին «Մեղու» թերթում։

Սիրեցի քեզ— Առաջին անգամ տպագրվել է 1871-ի հուլիսի 1-ին «Մեղու» թերթում։ Բանաստեղծության տարբերակն ունի «Մնաս բարյավ» վերնագիրը։

Սիրել, Դրժել— Առաջին անգամ տպագրվել են 1871-ի հուլիսի 19-ին «Մեղու» թերթում։

Լճակ— Առաջին անգամ տպագրվել է 1872-ի ժողովածուում։ Ա. Չոպանյանը, հենվելով ժամանակակիցների վկայության, պատմում է. «Անգամ մը, արդեն ծանրապես հիվանդ, Չամըլճա կերթա վերջին պտույտ մը ընելու. ետ դարձած ատեն կը հանդիպի գինովի մը, որ անոր դժգույն դեմքը և դանդաղկոտ քայլվածքը տեսնելով կ՝ըսե. «Աս ալ երթալոց է»։ Դուրյան այս խոսքին տպավորության տակ տուն դառնալուն պես կը նստե ու կը գրե իր զմայլելի Լճակը (Ա. Չոպանյան, Պետրոս Դուրյանի կյանքն ու գործը, Երևան, 1967, էջ 201)։ Իսկ դերասանուհի Ազնիվ Հրաչյան իր հուշերում պատմում է, որ 1870-ի ամռանը մի ներկայացման փորձից առաջ «ներս մտավ պատանի մը, երկար հասակով ու երկար վզով. ուներ երկայն քիթ, գունատ էր։ Մոխրագույն ու շատ մաշած զգեստ էր հագած։ Թևին տակ կար տետրակ մը։ Երբ երեցավ, դերասանուհիները սկսան ծիծաղել, ըսելով. «Քա՛ Թերեզա, քուկիդ եկավ»։ Իսկ Թերեզան պատասխանեց. «Այնքան գունատ է, որ ինծի պետք չէ, շուտով կը մեռնի»։ Ես լսեցի այդ խոսքերը, բայց չէի կարծեր, որ պատանին ալ լսած էր։ Այդ ցնցոտիներ հագած ու գերեզմանի մոտեցած պատանին Դուրյանն էր՝ մեր բոլորիս սիրելի բանաստեղծը։ Իսկ իր թևի տակի տետրակն էր «Թատրոն» խաղը, զոր կուզեր կարդալ Վարդովյանին (Թատրոնի դերասանապետին— Ա. Շ.) և ընդունել տալ խաղացուցակին մեջ։ Երբ իր մահեն հետո կարդացի անոր բանաստեղծությունները, այն ատեն իմացա, թե ան ալ լսած էր Թերեզա Չուհաճյանի խոսքերը, քանի որ գրեր էր.

Շատերը զ՝իս մերժեցին
«Քնար մ՝ունի սոսկ»-ըսին.

Մին՝ «դողդոջ է, դուն չունի»—
Մյուսն ալ ըսավ— «կը մեռնի» («Անահիտ», Փարիզ, 1909, ապրիլ-մայիս, էջ 20)։

Թրքուհին— Առաջին անգամ տպագրվել է 1872-ի ժողովածուում։ Դրության առիթ է ծառայել հետևյալ դեպքը։ Մի անգամ Դուրյանը իր ընկերների հետ դուրս է եկել զբոսանքի։ «Քիչ մը վերջը, պալատական կառք մը, կրելով իր մեջ Թրքուհի մը խիստ գեղեցիկ, կուգա կերթա ճիշտ անոնց դիմացը։ Թրքուհին, ընկողմանած կառքին մեջ, պահ մը լաչակը մեկ կողմ կը նետե և նրբութեամբ հովհարովը դեմքը կը հովհարե։ Նույն միջոցին Դուրյան հափշտակյալ-ապեր գեղեցկությունեն, մատիտն ու թուղթը կը հանե գրպանեն և կարտադրե վարկենական ներշնչմամբ ինչ որ կը կարդամք Թրքուհի վերնագրյուն տակ» («Բանբեր Երևանի համալսարանի», 1968, № 1, էջ 152—153)։

Ներա հետ— Առաջին անգամ «Գիշեր մը» խորագրով տպագրվել է 1871-ի դեկտեմբերի 11-ին Կ. Պոլսի «Եփրատ» թերթում։

Տրտունջ— Առաջին անգամ տպագրվել է 1872-ի ժողովածուում։ Վերջին տողը հղացված է ֆրանսիացի բանաստեղծ Ալֆոնս Լամարթինի «Վերջին բան կամ տրտում է անձն իմ մինչև ի մահ» ստեղծագործության ներշնչմամբ։

Զզում— Առաջին անգամ տպագրվել է 1872-ի ժողովածուում։

Չ՚ես պաշտեմ— Առաջին անգամ տպագրվել է 1872-ի ժողովածուում։ Ենթադրվել է, որ «Ես կը պաշտեմ զ՚իմ Պ...» տողում ակնարկված է հույն (Պիստիս) կամ հայ (Պիստոս-Արաքսյա) անվամբ մի դերասանուհի, որի նկատմամբ Դուրյանը զգացմունքներ է տածել։

Կակուն-ծաղիկ կույսին— Առաջին անգամ տպագրվել է 1872-ի ժողովածուում։ Վերնագիրը, ինչպես նաև «լուսափթիթ ե՛անարև զույգ մ՚աշխարհներ», «լուսագունդեր» փոխաբերությունները վերաբերում են կնոջ ստինքներին։ Տողատակի ծանոթությունը Դուրյանինն է և առնված է նրա տաղերի ինքնագիր առաջին տետրից։

Սե՛, սե՛, Առ Մայիս, Մանիշակ, Իմ հանգիստը— Առաջին անգամ տպագրվել են 1872-ի ժողովածուում։

Նոր սև օրեր— Առաջին անգամ տպագրվել է 1871-ի հոկտեմբերի 8-ին Կ. Պոլսի «Մամուլ» հանդեսում։ Գրված է հիշյալ հանդեսում զետեղված մի շարք նյութերի անմիջական տպավորությամբ, որոնցում նկարագրված են հանրական գավառներում կատարվող հարստահարությունները, ինչպես նաև զենքի դիմելու կոչ է արվում։

Իմ ցավը— Առաջին անգամ տպագրվել է 1872-ի ժողովածուում։

Հո՞ւշ— Առաջին անգամ տպագրվել է 1872-ի ժողովածուում։ Բանաստեղծության մեջ հիշված Պաղլար Պաշին և Մատան զբոսարաններ էին Կ. Պոլսում, առաջինը Սկյուտար թաղում, երկրորդը՝ Գատը գյուղում։ Իսկ Չամըլճան Սկյուտարի ամենաբարձր բլուրն է։

Հեծեծո՞ւնք, Իմ մանը— Առաջին անգամ տպագրվել են 1872-ի ժողովածուում։

Ինչ կ՚ըսեն— Առաջին անգամ տպագրվել է 1872-ի ժողովածուում։ Գրության եղանակը պատմում է, որ Ա. Լուսինյանը, լսելով Դուրյանի համբավը, նրան պատվիրաբացրել է կրակոտ մի պատանի, սակայն ծանոթանալով ակը տեսնելուն Դուր-

յան պատանի մատաղահ և մեկամտածոտ, դալկահար և լուռ, յուր զարմանքն չկրնալով բռնել՝ կը մոտենա և կը հարցնե. «Ի՞նչ կայներ կը խորհես Դեթսեմանիի մարդուն (Քրիստոսի— Ա. Շ.) պես»... Կարծեմ Լուսինյանի տեսութենեն վերջ գրած է «Ինչ կ'ըսեն՝ քերթվածն» («Բանբեր Երևանի Համալսարանի», 1967, № 1, էջ 169)։

Ա. («Ծոնկոյան բալն կը տաղար...»)— *Առաջին անգամ տպագրվել է 1872-ի ժողովածուում։*

ԱՅԼ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պետրոս Դուրյանը տաղը գրել է դպրոցական նստաբանից, որոնք ստորագրել է իր բուն ազգանվամբ՝ Զրմպայան։ Բայց նա այդ, ինչպես նաև վաղ շրջանի գործերին կարևորություն չի տվել և չի ամփոփել իր կազմած տետրերում։ Այս բաժնում զետեղվում են ցարդ հայտնաբերված այդպիսի երեք բանաստեղծություն։ Իսկ վերջինը («Մնաս բարյավ») թեև «Սիրեցի քեզ» տաղի տարբերակն է, բայց ըստ էության ավարտուն և հիշյալից շատ բանով տարբեր ստեղծագործություն է։

(«Անա սրանայ օրն երջանիկ»)— *Առաջին անգամ տպագրվել է 1893-ին Դուրյանի «Տաղք և թատերգություն, նամականի, դամբանական, տապանագիր» ժողովածուում (Կ. Պոլիս)։ Հեղինակի միակ գրաբար ոտանավորն է։*

(«Գարնանային կենացրս մեջ»)— *Առաջին անգամ տպագրվել է 1894-ին Ա. Զոպանյանի «Պետրոս Դուրյան» ուսումնասիրություններում (Թիֆլիս)։ Հավանաբար գրված է 13 տարեկան հասակում՝ 1864-ին։*

Հայուհին— *Առաջին անգամ տպագրվել է 1892-ին հրապարակախոս և խմբագիր Տիգրան Արփիարյանի «Մեռած գրագետներ» հոդվածում («Մասիս», հանդես, Կ. Պոլիս, թիվ 3966)։*

Մնաս բարյավ— *Առաջին անգամ տպագրվել է 1892-ին Կ. Պոլսի «Արևելք» թերթում (թիվ 2516)։*

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանասիրական քննությունը պարզում է, որ Պետրոս Դուրյանը գրել է տասը թատերախաղ։ Մեզ հասած և այս հատորում ընդգրկված յոթ ստեղծագործություններից բացի նա ունեցել է նաև «Տիգրան Բ», «Կործանումն Հռոմայ» և «Շահատակությունք Հայոց կամ Շուշանիկ» ողբերգությունները։ Դրանցից առաջինը եղել է երեք կամ հինգ մասից («երեկույթ») բաղկացած մի ողբերգաշար, որոնցից յուրաքանչյուրը ունեցել է հինգական արարվածներ։ Այդ «երեկույթներից» երկուսի («Աւուդ կամ Լեզվահատն» և «Փիննա») բովանդակության շարադրանքն է հայտնի։ Մյուս գործերը նույնպես մնացել են անավարտ և չեն պահպանվել։

Վարդ և Շուշան կամ Հովիվ Մասյաց— *Առաջին անգամ տպագրվել է 1872-ին, «Տաղք և թատերգություն» ժողովածուում։ Անդրանիկ ներկայացումը տեղի է ունեցել 1869-ի փետրվարի 22-ին Կ. Պոլսի Կետիկ Փաշա թաղի Օսմանիե թատրոնում։ Ներկա հրատարակությունում Ա արարվածը տպագրվում է ըստ*

Երուսաղեմի պատրիարքարանում պահվող «Ինքնագիր» մյուսները՝ ըստ 1872-ի ժողովածուի։

Տարազիր ի Սիբերիա— *Առաջին անգամ տպագրվել է 1961-ին, Բեյրութի «Սփյուռք» թերթում (թիվ 49—52)։ Շեղատառով հատվածները ինքնագրում եղած ջնջումներն են, որոնց պատկանելությունը հայտնի չէ։ Ըստ երևույթին գրված է Միքայել Նալբանդյանի հիշատակին Կ. Պոլսում կազմակերպված թատերական երեկույթների տպավորության տակ, 1867-ի ապրիլի 11-ից հետո։ Հեղինակի կենդանության օրոք փորձ է արվել ներկայացնել այս ողբերգությունը, կատարվել է դերաբաշխում, բայց բեմադրվելու վերաբերյալ տեղեկություններ չկան։*

Սև հողեր կամ Ծոին գիշեր Արարատյան— *Առաջին անգամ տպագրվել է 1872-ի ժողովածուում։ Անդրանիկ ներկայացումը տեղի է ունեցել 1871-ի մարտի 6-ին, Օսմանիե թատրոնում։*

Թատերախաղը պատկերում է Սեբաստիայի գրավումը (1403) միջինասիական նվաճող Լենկթիմուրի կողմից։ Սև հողերը պատմական վայր է Սեբաստիայի մոտակայքում, որ այդպես է կոչվել այնտեղ կատարված զարհուրելի ոճրագործների պատճառով։ Գործող անձերից պատմական է միայն Լանկթիմուրը։ Հայ և օտար պատմագիրների աշխատություններում որևէ հիշատակություն չկա, թե Սեբաստիան գրավվել է դավաճանների օգնությամբ։ Իրողությունն այն է, որ բնակիչները հավատացել են բռնակալի խոստմանը և կամովին բացել քաղաքի դռները։ Իսկ թշնամին դրժել է խոսքը, գերեվարել ու կողոպտել քաղաքացիներին։ Դուրյանը Սեբաստիայի առումը վերագրել է մատնության, քանի որ անմիաբանությամբ էր բացատրում պատմական աղետները։

Արտաշես Աշխարհակալ— *Առաջին անգամ տպագրվել է 1899-ին, Թիֆլիսի «Լուսա» հանդեսում (գիրք Բ, հուլիս)։ Անդրանիկ ներկայացումը տեղի է ունեցել 1870-ի հունվարի 10-ին Օսմանիե թատրոնում։ Թատերախաղն ունեցել է այլաբանական մի «Վերջաբան», որը չի պահպանվել։*

Ողբերգության նյութն առնված է Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ից և վերաբերում է մ. թ. ա. 189—160 թթ. անցքերին։ Գործող անձերից պատմական են Արտաշես Ա-ն, Տիգրան Բ-ն, Միհրդատը և Վարազը, իսկ պատմական հիմք ունեն Վահրամ Վահունին և Գյուլիսոը։

Անկումն Արշակունի հարստության— *Առաջին անգամ տպագրվել է 1872-ի ժողովածուում։ Անդրանիկ ներկայացումը տեղի է ունեցել 1873-ի փետրվարի 7-ին Օսմանիե թատրոնում։ Թատերախաղի «Վերջաբան»-ը չի պահպանվել։*

Ողբերգությունը պատկերում է Արշակունի վերջին թագավոր Արտաշես կամ Արտաշիր Գ-ի գահակալության ժամանակները և այդ թագավորության վերացումը (428 թ.)։ Սյուժեի համար հիմք է ծառայել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ եղած հետևյալ վկայությունը. «...Հայոց Արտաշես թագավորը սկսեց թաղվել անչափ անառակ ցանկություններ մեջ, այն աստիճան, որ բոլոր նախարարները նրանից զզվեցին։ Նրանք եկան Մեծ Սատիճան, որ բոլոր նախարարները նրանից զզվեցին։ Նրանք եկան Մեծ Սատիճան, որ հանի մոտ, բողոք բարձրացրին և նրան էլ հրավիրեցին իրենց օգնելու, որպեսզի (Արտաշիրի) վրա չարախոսեն Պարսից թագավորի առաջ, իրենց թագավորին դեն գցեն և պարսիկ բերեն աշխարհին կառավարող» (Գիրք Գ, ԿԳ)։

Գործող անձերից պատմական են Արտաշիրը, Վռամը, Սահակ Պարթևը, Արծրունյաց Վաչե, Աշոցա Հմայակ իշխանները, Սուրմակը և Սուրեն Պահլավը։ 225—226 էջերում Սուրմակի աշխարհիկ անունն է Սմբատ, իսկ 290-ում՝ դարձել է Աշոտ։ Տարբերությունը գալիս է առաջին հրատարակությունից։

Անպատակությունք Պարսկաց ի Հայս կամ Ավերումն Անի մայրաքաղաքին Բագրատունյաց— Առաջին անգամ տպագրվել է 1872-ի ժողովածուում։ Անդրանիկ ներկայացումը տեղի է ունեցել 1871-ի մարտի 13-ին Օսմանիե թատրոնում։

Ողբերգության նյութն առնված է սելջուկյան արշավանքների շրջանից։ «Ա թվական»-ում ծավալվող գործողությունները կատարվել են 1054-ին, իսկ «Բ թվական»-ինը՝ 1064-ին։ Որպես պատմական աղբյուր ծառայել են Արիստակես Լաստիվերտցու «Պատմություն»-ը, Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրություն»-ը և Միքայել Չամչյանի «Պատմութիւն Հայոց»-ի Բ հատորը։ «Բ թվական»-ում պատկերված իրադարձությունները (Աղկանի օգնությունը հայերին, բաբանն այրելը, Որտելմեզի բռնվելն ու գլխատվելը) իրական են, բայց կատարվել են ավելի վաղ՝ 1054-ին, Մանազկերտի հերոսական պաշտպանության օրերին, երբ սելջուկ հորդաներին գլխավորում էր Տուղրիլը։ Դուրյանը Մանազկերտի դեպքերը հատուկ միտումով է վերագրել Անիին, որովհետև հայոց վերջին մայրաքաղաքի ավերումն էր խորհրդանշում պետականության կորուստը։

Գործող անձերից պատմական են կամ ունեն իրենց պատմական նախատիպը Գագիկ Աբասյանը, Թաթուլը, Տուղրիլը, Ալփասլանը, Բագարատը, Որտելմեզը, Աղկանը և Լևոնը։

Թատրոն կամ Թշվառներ— Առաջին անգամ տպագրվել է 1872-ի ժողովածուում։ Հեղինակը չի կարողացել այս թատերախաղը բեմադրել տալ, որովհետև արևմտահայ թատրոնում պատմական թեմատիկան դուրս էր մղել արդիականը։

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Պ. Դուրյանի հրապարակախոսական ժառանգությունը բաղկացած է ինը հոդվածից։ Ներկա ժողովածուում ամփոփված է չորս հոդված, որոնք արժեքավոր են գրողի աշխարհայացքի ու ստեղծագործության ուսումնասիրության համար։ Մեկացյալ ելույթներն իրենց բնույթով բանավիճային են և վերաբերում են այն տարիների ազգային ինչ-ինչ հարցերի։

Խոսարան— Առաջին անգամ տպագրվել է 1869-ի նոյեմբերի 26-ին «Օրագիր ծիլն Ավարայրվո» թերթում։ Գրված է Սամաթիա թաղում բացված խոսարանի կապակցությամբ, որը նպատակ ուներ հրապարակային քննարկման առարկա դարձնել հայ կյանքի խնդիրները՝ դրանց վրա ազգային իշխանությունների ուշադրությունը հրավիրելու համար։

1 Խոսքը Սամաթիայի Ագապյան գիշերօթիկ աղջկանց վարժարանի մասին է, որը բացվել էր 1869-ի հունվարի 6-ին։ Վարժարանի տնօրենն էր Կարապետ Փանոսյանը։

2 Թուրքական թատերական հանդիսատեսի փողոցային ներկայացումներ։

3 Ակնարկը վերաբերում է «Արևելյան թատրոնի» փակմանը (1867), իսկ «հոգի կառուցանել» արտահայտությունը՝ առանձին թատերախմբերին։

4 Ավազաղբյուրը Մշո գավառի գյուղերից էր, որ ենթարկվել էր թուրքերի և քրդերի հարստահարություններին։ Այս գյուղի մանուկներին օգնելու հարցը քննարկման առարկա է դարձել Սամաթիայի խոսարանի անդրանիկ նիստում։

5 Ֆրանսիայի Եոժենի կայսրուհին Կ. Պոլիս էր ժամանել 1869-ի հոկտեմբերի 1-ին, իսկ Ավստրիայի Ֆրանց Յոզեֆ կայսրը՝ հոկտեմբերի 16-ին։ Թերթերը պատրիարքից և պաշտոնատար հայ անձնավորություններից պահանջել են օգտագործել ապիթը, ներկայանալ նրանց՝ հայերին մտահոգող խնդիրները հուզելու համար։

6 Շուտով համանման խոսարաններ հիմնվեցին նաև Սկյուտար, Ենիգաբու և այլ թաղերում, ինչպես նաև գավառներում։

Թատրոն— Առաջին անգամ «Պ.» ստորագրությամբ տպագրվել է «Օրագիր» թերթում 1869-ի դեկտեմբերի 27-ին։

1 Հայկական ընկերությունը հիմնվել էր 1862-ի մարտին Սամաթիայում, Անձնվեր ընկերությունը՝ 1860-ին Ղալաթիայում, հետապնդում էին բարեգործական նպատակներ։

2 Արևելյան թատրոնը գործել է 1861-ից մինչև 1867-ը։

3 Ալզազարին Արևելյան թատրոնի անվանումներից մեկն է։

4 Այստեղ և հետագայում խոսքը դերասանապետ Հակոբ Վարդովյանի մասին է։

5 Օսմանիե թատրոնը գործել է 1868-ի վերջերից՝ Հ. Վարդովյանի տնօրինությամբ։

Բանասիրական— Առաջին անգամ տպագրվել է 1871-ի մայիսի 24-ին «Օրագիր» թերթում։

1 Նկատի ունի քրիստոնեական կրոնը։

2 «Կարմիր բլուրը» Երուսաղեմի մոտակայքի Գողգոթա բլուրն է, որի վրա ի կատար էին ածվում հին Հրեաստանի մահապատիժները, իսկ «լուսեղեն դիակը» Հիսուսն է, որին խաչել էին Գողգոթայում։

3 «Օրագիր»-ը հայատառ տաճկերեն թերթ էր, հրատարակվել է 1868-ից Մարիոս Աղարեկյանի, իսկ 1869-ից՝ Օգսեն Խոճասարյանի խմբագրությամբ։ Նախապես կոչվում էր «Օրագիր ծիլն Ավարայրվո», ապա՝ «Օրագիր Կ. Պոլսոյ»։ 1871-ի մայիսից «Օրագիր»-ը «կերպարանափոխվել» է՝ դառնալով ամբողջովին հայերեն թերթ։ Դուրյանը ակնարկում է այս պարագան։

4 «Մասիս»— թերթ, հրատարակվել է 1852-ից Կարապետ Ալթունյանի խմբագրությամբ։

5 «Մանզումեի էֆքյար»— հայատառ տաճկերեն թերթ, հրատարակվել է 1866-ից, Կ. Փանոսյանի խմբագրությամբ։

6 Ազգային սահմանադրությունը Պատրիարքարանն ընդունել է մայիսի 24-ին։

Բանասիրական— Առաջին անգամ տպագրվել է 1871-ի հունիսի 28-ին «Օրագիր» թերթում։

Հոդվածը գրված է հետևյալ առիթով։ 1871-ի մայիսի 30-ին Ազգային

տահմանագրության հանդեսում Դուրյանը ծանոթանում է բանաստեղծ Արմեն Լուսինյանի հետ։ Վերջինս հոնիսի սկզբին «Օրագիր»-ում հրատարակում է մի հոդված, որտեղ ողջունում է Դուրյանի «Բանասիրական» վերնագրով առաջին ելույթը։ Ի պատասխան, Դուրյանը տպագրում է այս հոդվածը։

1 Գևորգ Չոպանյան— բարեգործական ու մշակութային ընկերությունների անդամ։

2 Ակնարկը վերաբերում է 1871-ի սկզբին Պեշիկթաշ քաղաքում հիմնված Հայրենասիրաց ընկերությանը, որ նպատակ էր դրել Կիլիկիայում քացել ազգային վարժարան։

3 Խոսքը Կ. Պոլսի Ռումելի Հիսար թաղի Սանգիստյան վարժարանի մասին է։

4 Խոսքը Կ. Պոլսի Ծտի Գուլե թաղի Դազըլը Չեշմե արվարձանում 1834-ին բացված Ս. Փրկչյան ազգային հիվանդանոցին առընթեր ժառանգավորաց վարժարանի մասին է։

5 Աղավնի Վարդանյանը Ագապյան վարժարանի ազատախոհ վարժարանի աշակերտուհի էր, հետագայում ամուսնացել է Ա. Լուսինյանի հետ։

<Դամբանական>— Առաջին անգամ տպագրվել է 1893-ին «Տաղք և թատերգություն, նամականի, դամբանական, տապանագիր» ժողովածուում։ Վարդան Լուիֆյանը (1851—1871) Դուրյանի մտերիմ ընկերն էր, արքունի բժշկական դպրոցի ուսանող, բանաստեղծ, թատերգակ և թարգմանիչ։

ՆԱՄԱԿՆԵՐ

Ցարդ հայտնաբերված Պ. Դուրյանի 15 նամակներից այս ժողովածուում ներկայացված են 14-ը։ Դուրս է թողնված միայն Մատթեոս վարդապետ Իզմիրլյանին ուղղված շնորհավորական գրաբար նամակը։

Ա— Առաջին անգամ տպագրվել է 1893-ին «Մասիս» հանդեսում (թիվ 3987)։ Տիգրան Աղամյանը Դուրյանի աշակերտական ընկերներից էր, հետագայում գավառական տաճկերեն, ապա նաև «Ճերիտեի հավասի» հայատառ թուրքերեն թերթի խմբագիր։ Մահացել է 1908-ին։

1 Թղթախաղի տեսակներ։

2 Ակնարկված են կանացի սաինքները։

3 Խոսքը «Թատրոն կամ Թշվառներ»-ի մասին է, որ Դուրյանն ավարտել է 1870-ի դեկտեմբերի 18-ին և ավարտել 1871-ի հունվարի 2-ին։

4 Ակնարկը վերաբերում է Ռոդոլֆ բեյին, որի մոտ Դուրյանը անցել էր աշխատանքի (նրա որդու քերականության ուսուցիչն էր)։ Ամիսներ հետո ստիպված է եղել հեռանալ՝ խոստացված վճարը կրճատելու պատճառով։

5 1870-ին կարիքից դրդված Դուրյանը մտել է Օսմանիե թատրոնը՝ մեծ մասամբ կատարելով երկրորդական դերեր։

6 Այս առթիվ Ա. Չոպանյանը գրել է. «Դպրոցը եղած ատեն Պետրոս շարաճճի գաղափար մը կը հղանա, այն է Վարդովյանի ծաղրանկարը գծել և անոր ճամփուն երկայնքը, փողոցը պատերուն վրա փակցնել... Պետրոս, որ նկարելու բավական հարմարություն ուներ, երեք-չորս թուղթի վրա Վարդովյանի ծաղրանկարը կը շինե իր շալարարի հագուստներով, խաչի գեղդիր մը ձեռքը (Վարդովյան դերասանությունն ալ շալարար-ուրվանի հագած է)։ Հետո՝ գիշերվանց, բանի մը ընկերներու հետ լապտեր մը ձեռքն առած, կը գնայի ատոնք փակցնել պատերուն վրա այն փողոցներուն, որոնցմե Վարդովյան ամենեն հաճախ կանցներ» («Դուրյանի կյանքը...», էջ 37—38)։

7 Հ. Վարդովյանը հաճախ է վիրավորել Դուրյանին, դերասան-դերասանուհիների ներկայությամբ անվանել «ամրացու» (Պետրոսը երեխա ժամանակ երգել է եկեղեցական երգչախմբում), կրճատել աշխատավարձը։

8 Դուրյանը դերասան ժամանակ գիշերել է թատրոնում։ Դերասանություն է արել մեկ ամիս։

9 Երբ մի անգամ Դուրյանը պահանջել է իր աշխատավարձը, Վարդովյանը վիրավորել է նրան։ Զայրացած Դուրյանը նետել է. «Դուն իրավ... Սրապիոն Հեքիմյանին ըսածն ես եղեր»։ Իսկ թատերգակ Հեքիմյանը տարիներ առաջ Վարդովյանին ասել էր. «Դուն նամակի դեր միայն կրնաս կատարել»։ «Դուրյանի այս խոսքին վրա,— գրում է Ա. Չոպանյանը,— Վարդովյան կատաղած կապտակե Դուրյանը, որ կսկսի լալ» («Դուրյանի կյանքը...», էջ 36—37)։

10 Խոսքը վերաբերում է Վարդան Լուիֆյանին, Մարտիկ Պողիկյանին (բանասաղեղծի դասընկերը, նախ ուսուցիչ, ապա՝ առևտրական) և իրեն։

Բ— Առաջին անգամ տպագրվել է 1884-ին Կ. Պոլսի «Ընտանիք» հանդեսում (թիվ 12)։ Նարպեյը (1831—1892) հոգևորական գործիչ էր ու բանաստեղծ։

1 «Ի պատրիարքական ընտրություն ամեն. Հայրիկի» բանաստեղծությունը գրավել էր Նարպեյի ուշադրությունը։ Նա Դուրյանին հրավիրել էր իր տուն, խոստացել աշխատանք գտնել ու հրատարակել տաղերը։

Գ— Առաջին անգամ տպագրվել է 1893-ին «Տաղք և թատերգություն, նամականեր, դամբանական, տապանագիր» ժողովածուում։

1 Թոքախտի առաջին նշանները Վ. Լուիֆյանի մեջ երևացել են 1870-ին։

2 Խոսքը Վարդանի եղբոր՝ Տաճատի մասին է։

Դ— Առաջին անգամ տպագրվել է 1889-ին Կ. Պոլսի «Արևելք» թերթում (թիվ 1607)։

1 Այստեղ և հետագայում խոսքը Վարդան Լուիֆյանի մասին է։

2 Բժիշկ և հասարակական գործիչ Հովհաննես Քյաթիպյանն իմանալով Դուրյանի բանաստեղծ լինելը, այլևս նրանից գումար չի ընդունել և հանձնարարել է Մկյուտարում բնակվող բժիշկներ Մանուկ Աղայանին ու խալացի Գալիլային ձրիաբար բուժել նրան և մշտական հսկողության տակ պահել։

Ե— Առաջին անգամ տպագրվել է 1893-ի ժողովածուում։ Նամակում խոսքը Վ. Լուիֆյանի մասին է, մայիսի 21-ի «սի գիշերը» նրա մահվան օրն է։

Զ— Առաջին անգամ տպագրվել է 1889-ին «Արևելք» թերթում (թիվ 1607)։

1 Խոսքը Աղավնի Վարդանյանի մասին է, որը սահմանադրության հանդեսում ճառ էր արտասանել։ Կ. Փանոսյանը նրան հեռացրել էր դպրոցից, մինչև Դուրյանը մամուլում հանդես էր եկել նրա հրապարակային պաշտպանությամբ։

2 Ովանա (ովանա)— ցնծության բացականչություն, որով հին հրեաները դիմավորել են Քրիստոսին։

3 Ակնարկում է իր հիվանդությունը։

4 «Ընճյաց ոտա», «գաշնակաց բուն» և «մտերմաց գալիկահար» արտա-

Հայտնիությունները, որոնք վերաբերում են Դուրյանին, հավանաբար Ա. Լուսինյանի բառերն են։

3 Ակնարկը վերաբերում է Ա. Լուսինյանին, որը նույնպես բանաստեղծություններ էր գրում։

6 Գ. Դուրյանը ունեցել է երկու եղբայր՝ Միհրանը և Ագրիպասը։

Է— Առաջին անգամ տպագրվել է 1889-ին «Արևելք» թերթում (թիվ 1607)։ Հովհաննես Ճանֆեսճյանը Դուրյանի ազգականն էր ու մտերիմը, զբաղվել է առևտրական գործունեությամբ։

Ը— Առաջին անգամ տպագրվել է 1892-ին «Արևելք» թերթում (թիվ 2448)։

1 Խոսքը վերաբերում է «Երկրագունա» հանդեսին, որ հրատարակվում էր Նուպար-Շահնազարյան վարժարանի սաների, այդ թվում՝ Ա. Լուսինյանի ջանքերով, Կ. Պոլսի Խասգյուղ թաղում։

2 Ակնարկը Աղավնի Վարդանյանի մասին է, որի հետ Ա. Լուսինյանը ծանոթացել էր 1871-ի սահմանադրության հանդեսում և հաստատել մտերմական հարաբերություններ։

Թ— Առաջին անգամ տպագրվել է 1890-ին «Արևելք» թերթում (թիվ 1806)։

1 Նկատի ունի «Մասիս» թերթում «Արամ» ստորագրությամբ զետեղված թղթակցությունը, որտեղ քննադատված էր Ա. Վարդանյանը «ընկերական կամ քաղաքական» խնդիրներ հուզելու, «ազատություն, հեղափոխություն, հուր, սուր, փայլակ, կայծակ» բառերն արտասանելու համար։

2 Ակնարկը վերաբերում է «Օրագիր» թերթում «Աժտեր-Խան» և «Տորգ» ստորագրություններով հրապարակված հոդվածներին, որոնք Արամի ելույթի պատասխանն են։

Ժ— Առաջին անգամ տպագրվել է «Արևելք» թերթում, 1889-ին (թիվ 1607)։

1 Թերևս Ա. Լուսինյանը ուզեցել է ծանոթանալ Դուրյանի թատերախաղերին՝ տպագրելու մտադրությամբ։

2 Հավանաբար Ա. Լուսինյանն ակնարկել է իր առաջիկա ամուսնությունը Ա. Վարդանյանի հետ։

ԺԱ— Առաջին անգամ տպագրվել է 1871-ի հոկտեմբերի 1-ին «Օրագիր» թերթում։

1 Տ. Գալեմճյանը թատերական հուշարար էր և թատերգակ։

2 Դերասան, հուշարար և թատերգակ Ռոմանոս Սետեֆճյանի հիշյալ թատերախաղը բեմադրվել է 1871-ի հունվարի 16-ին Օսմանիե թատրոնում։

ԺԲ— Առաջին անգամ տպագրվել է «Արևելք» թերթում, 1889-ին (թիվ 1607)։

1 Խոսքը Վ. Լուիֆյանի մասին է։

2 Նկատի ունի «Հեծեծմունք» բանաստեղծությունը։

ԺԳ— Առաջին անգամ տպագրվել է 1889-ին «Արևելք» թերթում (թիվ 1607)։

1 Այս ցանկությունը մնացել է անկատար։

ԺԴ— Առաջին անգամ տպագրվել է 1892-ին «Արևելք» թերթում (թիվ 2439 և 2459)։

1 Այս և հետագա մյուս արտահայտությունները վերաբերում են Ա. Լուսինյանի ու Ա. Վարդանյանի առաջիկա ամուսնությանը։

2 Ա. Լուսինյանը Նուպար-Շահնազարյան վարժարանի սան էր, իսկ Ա. Վարդանյանը՝ Ագապյան Առաջին դպրոցը հիմնվել էր Կարապետ վարդապետ Շահնազարյանի կտակած գումարով, երկրորդը բացել էր Կ. Փանոսյանը։

3 Խոսքը իր հոդվածների առթիվ Կ. Փանոսյանի գրած պատասխանների մասին է։

4 Նկատի ունի իր «Պառակտում մը» վերնագրով հոդվածը, որ ուղղված էր Կ. Փանոսյանի դեմ։

5 Ակնարկը վերաբերում է այս կեղծանուններով հրապարակած իր հոդվածներին, որոնցում քննադատել էր Կ. Փանոսյանին։

6 Խոսքը իր տաղերի մասին է, որոնք պատրաստել էր տպագրության։

7 Տպագրիչ ու տպարանատեր Գևորգ Ջարդարյանը 1870-ին բաց էր արել տպարան ու կազմատուն։ «Վերջի հեղինակած» գործը «Թատրոն կամ Թշվառներ» թատերախաղն է։

ԲԱՌԱՐԱՆ

Ազն (*ազինք*) — *ազգ(եր)*
Ալի — *1. ալիք, կոհակ 2. սպիտակած մազեր*
Ակնախտիղ — *աչքը խոտացնող, շլացնող*
Աղբերք — *աղբյուրներ*
Աղեբեկ — *ալեխառն*
Աղեռարկու (*ած.*) — *աղերս մատուցող, խնդրող*
Աղիոք — *աղիքներով, լարերով*
Աղխել — *փակել, գոցել, աղխը (շըղթան) գցել*
Ամալ — *խաղընկեր*
Անդանոր — *այնտեղ, այն ժամանակ*
Անդեն — *իսկույն, անմիջապես*
Անդստին — *հենց սկզբից*
Անդր քան — *ավելի քան, ի վեր*
Անդրանկություն — *առաջնություն*
Անդրիանդի — *արձան, անդրի*
Անճուն եմ — *հնար չունեմ*
Անձկանոք, անձկավ — *կարոտով, տենչանքով, փափագով*
Անձնանորդոր — *ինքնակամ*
Անշուշտ եմ — *չեմ կասկածում,, տարակույս չունեմ*
Անոպա — *կոպիտ, անբարեհամբույր, գաժան*
Անուր — *նուրբ*
Անոք — *ոչ մեկը չունեցող*
Անտի — *այն*
Անուր — *թևատակ*
Ապամեն — *արդարև, ո՞չ ապամեն — չէ՞ որ*
Ապարուր — *տորի տակ (տալ), փոխկոտել*
Առընթերակցել — *ներկա գտնվել*
Առթել — *առիթ դառնալ, պատճառել*
Առլի — *լեցուն*
Առկայծ — *մարող*
Առցուք ման — *տե՛ս ման ընել*
Ասպար — *վահան*
Ասա — *այստեղ, յաստիս — այս աշխարհում*
Աստանոր — *ահա այստեղ*
Աստղալույց — *աստղավառ*
Ավազել — *ագալ, ողբալ, ափսոսալ*
Ավուրշեք — *օրավարձ*
Արգանատել — *գթալ, կարեկցել*
Արատել — *արատավորել*
Արի (f) — *պարսիկ(ներ), անարի(ք) — ոչ պարսիկներ*
Արիք — *վեր կացեք, եկեք*
Արտալած — *հալածված*
Արտասվաթորմ — *արցունքով թրջված*
Արտոր — *արցունք*

Բազին — *զոհասեղան*
Բալ — *մառախուղ, մեգ*
Բալթա — *վերարկու*
Բանադատություն — *քննադատություն*
Բանակեղ — *բանակատեղի*
Բարդ (*բարդել, բարդիլ*) — *դեզ (դիզել, կուտակել)*
Բարձել — *վերցնել*
Բացեն — *դրսի, կողմնակի*
Բդեաշխ (*բդեշխ*) — *տեղակալ, փոխարքա*
Բերանփոխ — *կերակուրը փոխող, փոփոխած*
Բոլորտիք — *շուրջ*

Բոտին (*ֆր.* bottine) — *կոշիկներ*
Բրցել (*փրցել*) — *պոկել*

Գանաս (*ային*) — *քաղաք(ային)*
Գաղջ — *եղկամեղկ, տաք ու սառի միջև*
Գանգյուն — *ձայն*
Գել — *ոլորված, պրկված*
Գեղ — *գեղեցկություն*
Գիրգ — *փափուկ, նուրբ, քնքուշ*
Գոգ — *1. ծոց, գիրկ, 2. գուցե*
Գոգած — *կորացած*
Գոլ — *լինել*
Գրգլյակ — *ցնցոտի, քրքրված հագուստ*
Գուլ — *բուլ, ոչ սուր*

Դալարիք — *կանաչ խոտ, դալարյա — կանաչ, խոտե*
Դաշտակ — *փոքր դաշտ*
Դեղձան — *բաց դեղին, խարտյաշ*
Դեղևիլ — *երերալ*
Դեռեվացնել — *անպտուղ դարձնել*
Դի (դեն) — *կողմ*
Դիտապատ — *դիակի պես տապալված, սպանված*
Դիք — *աստվածներ*
Դիկամակել — *դժգոհել*
Դոնչյուն — *շաչյուն, ձայն*
Դույզն — *քիչ, փոքր-ինչ*

Եղուկ — *վա՜յ, եղուկ ինձի — վայ ինձ*
Երեսկախ — *ընկած դեմքով, նոթոտ*
Երկրնկեց — *երկնքից ընկած, իջած*

Զբոսնուլ — *զվարճանալ, զբոսցնել — զվարճացնել, զբաղեցնել*
Զգեցնուլ — *զգեստ կրել, հագնել*
Զգոն — *հեզոդեն, խոհեմաբար*
Զեղուլ — *լիքը լցվել, գլխիցնել, թափվել, դիզվել*
Զվարթուն — *հրեշտակ*

Էն — *ամենից, ամենա...*
Էր — *ինչո՞ւ*

Ընդեշմարել — *հազիվ նշմարել*

Թ՛ — *թե, եթե*
Թալանալ — *ուշաթափվել, նվազել, թալկացում — ուշաթափում*
Թալկանար — *դալկահար, գույնը գցած*
Թաքալ — *թրջել*
Թափառանած — *աննպատակ շրջող*
Թերեաշիվ — *վճար՝ պարտքի դիմաց*
Թ՛ընդ — (*ի թեղոջ, թեղել*) — *թեղյուն, թունդ ելած, թեղոցնել*
Թոթվել — *թափ տալ, թոթափել*
Թոչուն (*ած*) — *թռչող*
Թոթռակ — *թրթռացող, դողացող*

Ժպիրն — *լիրբ, անամոթ, ժպրենալ — համարձակվել, հանդգնել*
Ժուռ զալ — *պտտել, շրջագայել*

Ինչվան — *մինչև*
Իս — *ինձ*
Իցի՜վ թե — *երանի՜ թե, ա՜խր էր թե*

Լեխտ — *մտքակ, խարազան*
Լմնալ — *ավարտել, կատարել, լրացնել*
Լնուլ — *լցնել*
Լուայ — *լսեցի*
Լուծանել — *խզել, ցրել*
Լույծ — *ծորուն*
«Լուսարան» — *լույսի ընդունարան, աչք*
Լուսինյակ — *սոխակ*

Խայտալ — *ցնծալ*
Խարշափել — *խշրտալ, սասափել, խշշխշալ*
Խլրտել — *հուզվել, շարժվել*
Խնծիր — *ցնծություն, ուրախություն*
Խնծղալ — *ցնծալ, ուրախանալ*
Խշրտուք — *մեղմ ձայն, խշխշոց*
Խոկ (ումն), **Խոկալ** — *խոհ, մտածողություն, խորհել*
Խորդալ — *խոկալ, խոմփալ*
Խարշյուն — *խշրտոց*

Խաֆկած — զառամած
Խրախ — ուրախ
Խրտչիլ — ցնցվել
Խուսել — խուսափել, խույս տալ, հեռանալ

Մյուրիլ — հյուծվել, մաշվել
Մոր — աղտոտ

Կազ — լուսավորության գազե ճրագ
Կայթել — ցնծությունից ոստոստել
Կանուխ (կեկ) — վաղ, վաղուց
Կառափ — գլուխ
Կարդալ — կոչել, ձայնել
Կեդրոնականություն — կենտրոնացում
Կեցե՛ք — սպասեցե՛ք
Կքոտիլ — տկարանալ, ուժասպառ լինել
Կիր (կրից) — կիրք (կրքերի)
Կլլել — կուլ տալ
Կյա՛ց — ապրի՛
Կնճիռ — դավ, խարդավանք
Կոզկոզալ — մղկտալ, մորմոքել
Կողմնական — կողմնակի, կողքին եղած
Կորնչել } — կորչել, կորցվել
Կորուսել }
Կրանիտ — գրանիտ
Կրեա — կրիա

Հազազ — շունչ
Համբուն — համակ, ամբողջությունն, խմպառ
Համր — դանդաղ
Հայել — նայել
Հայեցի — հայկական
Հայեցված — հայացք, նայվածք
Հայկարանք — հայաբնակ
Հանգույն — նման, իբրև
Հաջաղ — երեսի քող, հաջաղը վառե — ազնիվ, զարդարուն կտորով քող
Հավելուլ — ավելացնել, հավելուն — ավելացրած

Հափրեցնել — հագեցնելուց ձանձրացնել
Հեզ — թշվառ, խեղճ, տարապյալ, ճիֆof — հեզերով, ճիֆիս — հեզիս, թշվառիս
Հեղել — թափել, հեղու — թափի
Հեկեկ — հեկեկանք, հեկեկոց
Հեռուլ — հենվել, հեռու — հենվի
Հեշտ, հեշտիկ, հեշտալի — ախորժելի, դուրեկան,
Հեշտին — հեշտությամբ, դյուրինությամբ
Հեշտյավ — հեշտանքով
Հեշտություն — ցանկասիրություն, մարմնապաշտություն
Հեռ — նախանձ, հակառակություն
Հետ — հետք
Հիմենյան — հարսանեկան
Հծծել — շշնջալ, փսփսալ
Հոդել — կապել, շաղկապել
Հոլաթեել — թևերը տարածել, սփռել
Հոն — այնտեղ, հոնկե — այնտեղից
Հոպոպ — խոպոպիկներ, գանգուր մազեր
Հովանիե (ած.) — ստվերոտ
Հովանոցակ — փոքր հովանոց, հյուղերից հյուսած ծածկ՝ արևից պաշտպանվելու համար
Հովել — հով փչել, զովացնել
Հոնչյուն — հոնդյուն, ձայն
Հրատ — կրակե, հրաշտրոտ
Հրատարակել — հռչակել, հայտարարել
Հույլ — 1. խումբ (աստղերի) 2. փունջ (մազերի)
Հուշ ածել — մտաբերել, հիշել
Հուշիկ — կամաց-կամաց
Հուսկ — վերջին, ամենավերջին

Զեռնտվություն — օգնություն
Զմրահուպ — ձմռանը մոտ, ձմեռնամուտ
Զյունաքարմի — ձյան գույնի, հերմակ
Զարձ — հագուստ

Ճապաղիք — արյան վարարում, հեղեղում, հոսում
Ճեռ (f) — սերունդ(ներ), զավակ(ներ)

Մակաբերել — եզրակացնել, հետևցնել
Մական — գավազան, գայթսոն
Ման ընել — ման գալ, զբոսնել
Մանրերկրորդ — ակնթարթ
Մառ — մշուշ
Մատամբք — մատներով
Մարմանդ — դալարիք, հովասուն տեղ
Մերովսանն — մեր վարողացածին չափ
Միշնակոն — միջին, միջնակ
Մեք — մենք
Մնչել — մեղմ հեծել
Մոլար — մոլորված
Մորչ (գ.) — կանաչ ճյուղ, մորճ (ած.) — դալար
Մոտել — մոտենալ

Յամայր — տևական, երկար ժամանակ, շարունակ
Յայտ — հայտնի կերպով
Յանգիտս — անգիտությամբ
Յապտյան — ապագայում
Յաւէժ — հավերժ
Յէդակարծ — հանկարծակի, անսպասելի
Յուշ ածել — հիշել
Յօդել — տե՛ս հոդել

Նազիլ — սիգալ, պչրել
Նախախայր (իք) — առաջին պտուղ, արդյունք
Նե — նա (իգական սեռի համար)
Ներկայել — ներկայացնել
Նծդեճ — պանդուխտ
Նկատում — նկատառում
Նշանակ — նշան
Նոթի — անոթի, քաղցած

Շաղփաղփություն — շաղակրատանք, կատակաբանություն

Շառայլ — ճառագայթ, շող
Շրշել — շրշյուն հանել (շրշաղգեստի)

Ոյր — որի
Ոսկերոտիք — ոսկորներ
Որք — որոնք

Չվառ — թշվառ

Պանուճապատանք — խաղատիկնիկ
Պատերազմիկ — պատերազմող, պատերազմական
Պատրել — (պատրիչ) — խաբել, մոլորեցնել (խաբող, մոլորեցնող)
Պարածածկել — պահել, թաքցնել
Պարտիլ — պարտական լինել
Պծգալի — գարշելի, զզվելի, նողկալի
Պլլել, պլլվիլ — փաթաթել, փաթաթվել

Ջաղխել — ջախջախել

Ռազմ — ռազմիկ, զինվոր

Ս՛ — սա, այս
Սաղմնել — հղանալ
Սառ(ն) — սառույց, սառուտ — սառած, սառցե
Սառնանամուտ — սառած
Սաստ — հրաման, արգելում
Սատրինջ — շախմատ
Սարավանդ — ցցվածք, դուրս ցցված մաս
Սարսել — թնդացնել, ցնցել, տապալել
Սեպել — համարել
Սեաթորմի — սև գույնի
Սիրաբախ — սիրուց բաբախող
Սիրակաթ — սեր կաթող
Սիրանոդ — սիրով կապված, սրտակից
Սիրասուգ — սիրով սուգ մտած
Սյուվ — սև
Սանգալ — ստվերանալ, ուռչել
Սրդոդել — նեղանալ, վիրավորվել
Սրանա — սլանում է
Սուրի նստել — թանկ նստել

Ի՛— եվ, ու(շաղկապ)

Վայրիկ— վայրկյան, պահ
Վանկ— 1. հնչյուն 2. երգ
Վառ— ազնիվ, զարդարուն քաջ
Վառ արանց— այրերից վառը, վառ տղամարդ
Վարդատարփիկ— վարդ տենչացող վարդ ըղձացող
Վետ— մանր ալիք, կոհակ, վետ ի՝ վետ— ծուփ-ծուփ
Վերավառիլ— նորից վառվել
Վիրապ— խոր գուբ, հոր, փոս
Վրայոք— մասին, վրա(կապ)

Տապակեզ— տապից կիզված, վառված
Տապկտիլ— թաղտվել, թավտվել
Տատամսել— շվարել, վարանել
Տարադաս— տարբեր կարգի, տարբեր բնույթի
Տարածյնել— տարածել, հայտնել
Տարտղնած— ցրված
Տարփ— գոտու վրայի զարդարանք.
Տիպար— նման
Տիվ— ցերեկ
Տրամախոհություն— կշռադատում, տրամաբանում
Տրուպ— վերջին, ստորին
Տուք— տվեք

Ցածուն, ցածուկ— ցածր, ցածրիկ
Ցայգն գիշեր— մինչև լուսաբաց
Ցնցաստզգաց— ցնցոտիազգեստ
Ցողաբար— ցող հոսող

Ցորեկ— ցերեկ
Ցցնել— ցույց տալ

Ուլն (ոպան)— վիզ, պարանոց (վզի, պարանոցի)
Ուղխ— հոսող շուր, առու, գետ
Ուշ պիտի ըլլամ— պիտի հիշվեմ
Ուշկեկ— մի փոքր ուշ
Ուսկից— որտեղից

Փաղփուն— փայլփլող, պպզուն (աչ.)
Փանաքի— նվաստ, թույլ
Փանդիռ— եռալար նվագարան
Փթիթ (ք)— ծաղիկներ, ծաղիկներ
Փոխան— փոխարեն
Փեռեկտել— պատառոտել, ոնչատել
Փողփողիլ— փայլփլել, շողշողալ
Փրթած— պոկված, բաժանված
Փույթ— շտապով, ոչինչ փույթս է— հոգս չէ, պետքս չէ

Քաղվել— մեռնել
Քանիո՞ն— որքա՞ն, որչա՞փ
Քաշկոնել— քաշքշել, քարշ տալ
Քենե— քեզնից
Քեց— քույրերի
Քիրտ (քրտունք)— քրտինք

Օթոց— ծածկոց
Օձառում— անջատում, պառակտում, բաժանում
Օն— հապա
Օվասիս— օգուտ, գալարիք անապատում
Օրեն— օրենք

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԱՂԵՐ

Պետրոս Դուրյան (1851—1872) Ա. Շարուրյան . . . 3
Թղթք առ Հայաստան . . . 23
Սիրեցեք զ'միմյանս . . . 24
Պետք է մեռնի՞լ . . . 25
Ի պատրիարքական ընտրություն ամեն. Հայրիկին . . . 27
Ի դիմավորության ամեն. Հայրիկին . . . 29
Հայրիկն Հայոց . . . 30
Երգ մարտին Վարդանանց . . . 31
Նե՛ . . . 32
Առ կույսն . . . 33
Վիշտք Հայուն . . . 33
Կույսն լքյալ . . . 35
Նայվածք մը . . . 37
Նվագ է տարեդարձի Ազգային սահմանադրության . . . 38
Հծծյունք . . . 39
Զոնիկք . . . 40
Մանուկն առ խաչ . . . 41
Ցի՛վ թե . . . 42
Սիրեցի քեզ . . . 43
Սիրել . . . 45
Դրժել . . . 46
Լճակ . . . 48
Թրքուհին . . . 49
Ներա հետ . . . 50
Տրտունջք . . . 52
Զղջում (Օր մը վերջը) . . . 54
Չ'նե պաշտեմ . . . 54
Կոկոն-ծաղիկք կույսին . . . 56
Սև՛, սև՛ . . . 57
Առ Մայիս . . . 58
Մանիշակ . . . 59
Իմ հանգիստք . . . 60
Նոր սև օրեր . . . 60
Իմ ցավը . . . 62
Նվեր հիշատակի առ պ. Հ. Ճանֆեսճյան Հո՛ւշք . . . 63
Ի գերեզմանն ամենասիրելվո Վարդան Լուֆֆյանի. Հեծեծմունք . . . 65
Իմ մահը . . . 66
Ի՞նչ կ'ըսեն . . . 67
Ա. («Օրեկոյան բալն կը սողար բարգիլ խավ») . . . 68

ԱՅԼ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(«Ահա սրանայ օրն երջանիկ») . . . 71
(«Գարնանային կենացքս մեջ») . . . 72
Հայուհին . . . 72
Մնաս բարյավ . . . 73

ԹԱՏՐԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վարդ և Շուշան կամ Հովիվք Մասյաց 75
Տարագիր ի Սիպերիա 115
Սև հողեր կամ Նոին գիշեր Արարատյան 128
Աթոռաշեջ Աշխարհակալ 172
Անկոմն Արշակունի հարստության 214
Առպատակություն Պարսկաց ի Հայս. կամ Ավերումն Անի մայրաքաղաքին Բագրատունյաց 291
Թատրոն կամ Թշվառներ 338

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Խոսարան 399
Թատրոն 403
Բանասիրական 407
Բանասիրական 410
<Դամբանական> 415

ՆԱՄԱԿՆԵՐ 417

Մանրաբազրություններ 439
Բառարան 450

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆ

ԵՐԿԵՐ

(Տաղեր, թատերգություններ, հոդվածներ, նամակներ)

ДУРЯН ПЕТРОС

Сочинения

Стихи, пьесы, статьи

(На армянском языке)

Издательство «Советакан грох»

Ереван, 1981

Խմբագիր՝ Ռ. Բ. Բաբաջանյան, *նկարիչ՝* Մ. Ռ. Սոսոյան, *գեղ. խմբագիր՝* Գ. Խ. Գյուլամիրյան, *տեխ. խմբագիր՝* Ս. Մ. Սիմոնյան, *վերստուգող սրբագրիչ՝* Ս. Մ. Բուլաթյան

ИБ № 3621

Հանձնված է շարվածքի 28. 04. 81։ Ստորագրված է տպագրության 28. 07. 81։ Ֆորմատ՝ 60×84 1/16։ Թուղթ № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ Պատվեր՝ 751։ Տպաքանակ՝ 51 000։ 20,6 հրատ. մամ., 26,5 պայմ. տպ. մամ.։ Գինը՝ 2 ռ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.